Հ. ՊԱՐՈՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

I

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1947

1897

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ձուկ
Ձ405

ՏԱՍՆԵՐՈՐԴ - ՀԱՏՈՐ

ԽԻԿԱՐԻՆ ՀԵՏ





ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1947

А. ПАРОНЯН
ПОЛНОЕ СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ
Десятый том
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1947 г.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հ. Պարոնյանի հրատարակած «Մեղու»ի 1872—73 և «Թատրոն»ի 1875—77 տարեթվերից ենք քաղել սույն X հատորում ամփոփված նյութերը և ծանոթությունների բաժնում արձանագրել ենք յուրաքանչյուրի հրատարակման տեղն ու ժամանակը՝ մանրամասնորեն, իրենց բազմազանության պատճառով՝ ստուգումների առթիվ ծագելիք դժվարություններից խուսափելու համար։

Ինչպես նախորդ հատորների, նույնպես և այս հատորի բոլոր նյութերը, չնչին բացառությամբ, անստորագիր են, որոնց հեղինակային պատկանելության մասին կատարված ուսումնասիրություններն ընթացել են այն ուղիով, որը «երկու խոսքով» գծվել է IX հատորում։ Այս մասին նոր տեղիք չունինք։

Այս տեղ կնդրկ տարակա կարող են լինել ժողովածուի վերջում, իբր նորություն, մուտք գտած 9 տառանավորները, որոնցից «Իմ բանաստեղծությունը» վաղուց ծանոթ է Պարոնյանի ընթերցողներին, չնայած՝ մեզ հնարավոր չեղավ ստուգել՝ թե նախասկզբում որտեղ և ինչ ստորագրությամբ է տպագրվել այն։ Մյուս տառանավորներից 6-ը անստորագիր են, մեկն ունի Ապտակող, իսկ մյուսը՝ Չայլամ ստորագրությունը։ Այս բոլոր տառանավորները, անշուշտ, Պարոնյանին են պատկանում. ուշագիր ընթերցողը սկիզբ նկատի՝ Ապտակող ստորագրությամբ և անստորագիր տառանավորները միայն արտաքին աննշան ձևականությամբ են տարբերվում միմյանցից, նրանք բոլորն էլ ունեն նույն ոգին և նույն նյութը։ Իսկ այս բոլոր տառանավորներն էլ միայն իրենց արտաքին չափածո բնույթով տարբերվում են սովորական Պարոնյանից, նրանք թեև բովանդակությամբ, թեև գաղափարախոսությամբ կապված են ամբողջական

Պարոնյանին ընդհանրապես և ներկա հատորի ոչ ամբողջությամբ երկու հոդվածների հետ մասնավորապես, ինչպես որ ծանոթագրությունների փաստական նշումները ևս պիտի վկայեն այդ մասին։

Այլաւսի հատորագրությամբ ոսանավորի այլաբանական բնույթը անսովոր չէ Պարոնյանի համար. «Ծիծաղը» (V հատոր) ամբողջությամբ այլաբանություն է, այնտեղ ևս կենդանիների և նրանց ժողովների դիմակի տակ հանդես են գալիս Պաարիսբաքալանի ժողովները ու ժողովականները. այնտեղ ևս Առյուծը՝ Նեռսես Վարժապետյանն է, իսկ Արծիվը՝ Մկրտիչ Խրիմյանը. այնտեղ ևս, ինչպես այլ հատորներում, Պարոնյանի համակրանքը դեպի «Վասպուրականի Արծիվը» անվերապահ է.— ինչպես որ ծանոթագրությունների մեջ էլ մատնանշված է։

Այսպիսով, անշուշտ, չէն սպառվում Պարոնյանի չափածո գլուխգործոցները. մենք ունենք նրա այն հայտարարության՝ թե «օր մը ոսանավորները պիտի հրատարակեմ», հավանորեն խոսքը այդպես տպագրված ոսանավորների մի ժողովածուով վերնագրահարկման մասին է. ծանոթ լինելով Պարոնյանի աշխատանքի բնույթին՝ հարկ թե նա համբերություն և հայրենասիրություն ունենար իր գրվածները անտիպ պահելու.— համենայն դեպս այդ «ոսանավորները», նախապես տպագրված կամ անտիպ՝ դեռ մնում են որոնումների ենթակա։

ԽԵՂՃԻՆ ՎԻՃԱԿԸ

— Ի՞նչ լուր ունիս, Մխիթար[1]։

— Լուր չունիմ, ամիս մ'է որ վարժարաններեն դուրս ելած չունիմ։

— Վարժարաններու անուն՞ն եղար, ինչ եղար։

— Չէ, քննութիւններուն հրավիրված էի, ու գացի։

— Ի՞նչպես է վարժարաններուն վիճակը։

— Վարժարաններուն վիճակը ազեկ, բայց գլաւաոին վիճակը առաջինը չէ, ընութիւնը բոլորովին փոխեր է, բարեկենդանի դիմակավորներուն պես, ամեն վարժապետին մէջ մեյ մեկ դեմք ունի։

— Ի՞նչ կըսես։

— Ի՞նչ պիտի ըսեմ, կուսակցութիւն մը կա, որ Ոսկեբերանի[2] ճառերեն գաս գլաւաոս չընդունիր կոր. մաս մ'ալ կա, Եղիշեին[3] անդին լեզու չեն ճանչնար կոր, բանակ մ'ալ կա, որ Եղնիկին[4] անդին չեն երթար կոր, և վերջապես ամեն կուսակցութիւն իր ընդունած գիրքին դուրս դասնված բոլոր ոճերն ու շաբաթութիւններն վատած տունճի պես վարժապետին պատուհաններեն դուրս կը նետեն կոր։

— Սա ըլլալո՞ւ բան է։

— Ուամ խաբուկի[5] վարժապետին մակբայը Սամաթիո[6] վարժարանին մէջ չպղպղալ կըլլա կոր, Սելամըզի[7] դերբային Ասպետուդի[8] մէջ սեռի խնդիր կըլլա կոր, Ենի գաբուի[9] հատկացուցիչը Թոր գաբուի[10] ածականն կըլլա կոր, ամեն թաղ իրեն հատուկ քերականութիւն մ'ունի։

— Ասոր վե՞րջը։

— Մաս մը կա, որ Հայր Ասլանի[11] քերականութիւնն գեղծումներով լեցուն կողով կանչանան, մաս մը կա, որ Ծաւաքաշ-

յանի[12]) քերականութիւնը կը հալածեն, մտա մ'ալ կայ, որ փափաղանի[13]) քերականութիւնը պահպանուցած կը ծեծեն, ուրիշ մտա մ'ալ Սուբենյանի[14]) քերականութեան ականջները կը քաշեն, ամեն մարդ պրպտելին ուզած կերպարանքը կուտայ կոր, պրպտուն ալ ինչ ընես խեղճին, այս ալազակներուն ձեռքն ինկած ամեն օր գեմք կը փոխե կոր։

— Աշխարհարարը չակենք ըսելով, պրպտիը ծռեցինք։

— Ինչ օգուտ, անանկ եղավ։

— Աստ վախճանը։

— Ամեն վերջը դասատվաց մեջ ասանկ վիճաբանութեյուն մը լսելուս պես, քեզի խմաց կուտամ։ Թատրոնին[15]) մեջ կը պրես, իրավունք ունեցողը կը փառավորվի, չունեցողը յուր սխալը կը ճանչնա, ու գոռոզութեյուն չընես։

— Շատ տղեկ։

— Մնաք բարով։

— Երթաք բարով, մի ուշանար[16])։

1875

ՄԵՐ ԽԻԿԱՐՆ ԱԼ ԱԼԱՖՐԱՆԿԱ Ի ԵՂԵՐ

— Պռնժուբ, պռնժուբ մռնսիյո, քոմսո թալե վու, քոմսո վա լա սանթե[17])։

— Աստծու բարին։ Այս ինչ կերպարանք է, Խիկար, ակնոց, պասխոն, ալաֆրանկա ես եղեր։

—Էյե լոնեոր տը՞բարլե ան ֆրանսե մռնսիյո, ան ֆրանսե, ան ֆրանսե, քոմբրըն՞ե վու, ոհ, լը ֆրանսե, օ՜հ, լա ֆրանսեզ[18])։

— Խենդեցար, ինչ եղար, Խիկար։

— Ժը նը վու քոմբրան մուշու։ մը քոմբրըն՞ վու[19])։

— Բայց հայերեն խոսե, որ հասկնամ։

— Ես ալ ալաֆրանկա եղա, հա, հասկցար, և ալաֆրանկա բլողի մը համար հայերեն լեզուն քիչ կուգա։ Իլ ֆո բարլե ան ֆրանսե մոն շեր, ան մոն շեր, թիեն մոն շեր, տանն մուա տեռ մեճխիե, մոն շեր[20])։ Նայե, ինչ անուշութեյուն կա արտասանութեյան մեջ։

— Հայերենին մեջ չկա այդ անուշութեյունը։

— Չկա, հապա, օրինակի համար, ինձի երկու մեճխիե տուր։

— Վրաս չունիմ։

— Չէ՛, այսինքն՝ օրինակի համար, ինձի երկու մեծիտիե տուր, ըսես նե՝ հայերենին մէջ պաղ կուգա կոր, թանտիսք ան ֆրանսե տոնե մուա տեո մեճիտիե[21]), կարծես որ անուշութիւն մը կա։

— Մ'իտքդ ինչ է, երկու մեճիտիե կուզես։

— Չէ։

— Ինչ գիտեմ հապա. մոն շեր, թիեն մոն շեր, ահ մոն շեր, տոնե մուա տեո մեճիտիե մոն շեր կըսես նե...

— Ալաֆրանկա ղողոնները այդ խոսքերը շատ կը գործածեն ան, ես ալ իրեն օրինակ գործածեցի։

— Ըսել է որ այս ալաֆրանկա երիտասարդները դեմերնուն ելնողին սաակ կուզեն կոր։

— Կուզեն կոր, հապա, ալաֆրանկա ըլլալն ետքը ինչո՞ւ չուզեն, ալաֆրանկայի մէջ սաակ առնելն ու չառլն ամոթ չեն սեպեր կոր. բայց հայերեն լեզուով ուզես նե՝ չեն տար կոր, որովհետև հայերեն խոսիլը մեծ ամոթ կը սեպեն կոր։ Անցյալ օր աղնվական ըսված ընտանիքներուն մեկուն մէջ կը գտնվեի։ Տանտի՛ր չափ երիտասարդներ և երիտասարդուհիներ նստած իրարու հետ ֆրանսերեն կը խոսեին կոր, ես ալ խոսակցութիւնն իմանալու համար երկու խոսք ըսի հայերեն, ասոր վրա ամենքն իրարու ըսել սկսան, ահ մոն շեր, ահ մա շեր սեթ էոն սալաժ, սեթ էոն կլանթ անիմալ[22]։ Հարցուցի որ ինչ կը խոսիք կոր ինձի համար, օրիորդներեն մեկը կարմրելով ըսավ՝ թե կըսեն կոր որ դուն շատ քաղաքավար և աղնիվ մարդ մ'ես։ Այս խոսքին վրա կրակոտ երիտասարդին մեկը ուզ եղավով ըսավ, մոն շեր պեն էքքյար սերպանթիլիյին սելերիմ, պիր ինսան սերպանթ տյուշինմելի վե սեյլեմելի, շու ճիհեթլե Թիկար էշեք աստմ տըր, սիվիլիզասիոնատան պե խապար, բրոկրատեն պի պեհրե էոքյուզ միասլի պիր մախլուզ տուր քի արտպայա գոշմագատան պաշգա պիր շեյ յարամազ։

Ճեսարթիմե աֆվ էտինիզ, Թիկար, պեն տողրույու սեոյլեր պիր ատամըմ, պուննատան մատե, պիր խոսթալըզը կիզլե Թուքթաբաք ելաճընը պուլամայըզ, պուննուն իչին սենին հալինի սենատեն սագլարսագ օ հալտե գալըբսը, էվլեթ, սեն պիր ավանակ սըն, լաքին բիճա խոխրիմ կյուճենմեյին, էվիմիզե կելմիշին սանա բայիթ թիմիք պորճումուզ տուր, նասըլ քի բա-

յեթան գաւառը կիմկեցրուց պանդըմ, պիտ մխաֆիր սիվիր առամ լարըդ, շուհալտե սեն թիւրկիյեսիդ, ահմագ, յապանի, ռյուսյատան պի խապար պիր մախլուքաուն, լաքին բարատն, կյուճենմեյին, տերա սեռյինմեմեքճե տերման պուլունմազ. պեն սենի սիվախլմաճեն սեյլեցրում, պու ճյուղլե բայեթիտե էլտեն պրագմայրում, էվեթ, առամ սըրասընա կեչմեք խաթերեն, պու քըյմեթլիների տեյիշիպ, սեթրի բանեթալոն կիլիպ, կնոջ-լուք, պասիոն, քուլլանմալըսըն, էրմենիճե լաքըրտը ասլա կիմմեմելիսին, իշտե օ վագըթ, փամիլյալար իչինե կիրեցսին, մամադալլերիչեն քունուշտով կյուլիր օչնարսըն, կնգերսին, կիտերսին, կելիրսին[23]։

Ասոր պես խել մը խոսքեր ալ ըսավ, բայց ողջ ըլլա, միշտ նեղուհմ խնդրելով ըսավ և պետք եղած հարցանքներն ալ ըրավ։ Ես ալ հետևյալ առաուն շիտակ պիտի բաղար գայի մյուս հազուստներս ծախելու և առնք առի։ Դու իմին տեղս ըլլայիր նե՝ ալաֆրանկա չէ՞իր ըլլար մոն շեր, քիչեն մոն շեր, ան մոն շեր, ոտնե մոտս տես մեճմիսիե մոն շեր։

— Այնչափ անվայել խոսքեր ըսին նե՝ չբարկացա՞ր։

— Բարկոնալու ժամանակ չենս տար կոր որ, ավանակ ըսելուն պես՝ եաևնե նեղուհմ կը խնդրենք, կըսեն կոր, Ե՞րբ բարկանամ։ Ալաֆրանկան սա ազեկութիւնն ալ ունի, որ դիմացինիդ ուզածիդ չափ կը հայհոյես կոր ու ներեցեք ըսելուդ պես՝ դիմացինիդ ալ հոզը կուգա կոր, բնաւ չը բանար կոր։ Մեր մեջ ըլլա նե՝ ան անոր կը զարնե, ան անոր կակօղը կը սդմե ու կռիվ կելլա. ալ այսչափ առավելութիւն տեսնելեն ետքը ինչո՞ւ ալաֆրանկային պոչը բռնեմ, երթամ։

— Ալաֆրանկա ըլլալու համար նախ լինչ պետք է։

— Նախ պետք է հայերեն չխոսիլ, հայերեն խոսողներեն հեռու փախչիլ։

— Ի՞նչ լեզու գործածելու է։

— Ֆրանսերեն, տաճկերեն, հունարեն, հրեաերեն, չինկյաներեն, հայերեն չըլլա տե՝ ինչ ըլլա նե՝ ըլլա։ Երկրորդ՝ պետք է քիչ մը թեթև ըլլալ, իգական սեռեն հեռու չփախչիլ, կաբելի եղածին չափ տիկինները ու օրիորդները հարգել, անոնց առջև կապիկի պես ցատկռտել, կտրել, կտաբրտիլիլ երբորդ՝ ծանր չըլլալ։ Զորրորդ՝ տակից անկից տտակ ուզել, մանիֆեք առնել, ակնոց առնել։

— Դուն մնակ մը տտակ ուզեցիր։

— Ալաֆրանկա ըլլալես ի վեր տասը մեճմիսիե տվի անոր տասը։

— Դուն ալ չուզե՞ս։

— Ես նպակ մը չկրցի վարժվիլ տե, գժվալ կուգա կոր։ Հինգերորդ՝ պետք է որ ամեն առաւոտ բուտրա քսես երեսդ, սոնք չընես ալ նե՝ կըլլա, բայց թեթեւութիւնը անպատճառ ընես։ Մոռցա ըսելու, որ անուշդ ալ փրանգերեն պիտի դնես. Գեղջ ես նե՝ ժորժ պիտի ըլլաս։ Կարապետ ես նե՝ Շարլ կամ Թարլու։ Ահավասիկ այսչափ է։ Վռազա մեն շեր[24]), ան մեն շեր, թիեն մեն շեր, թիեն մեն շեր, սոնե մուա տեռ մեճիտիե մեն շեր։ Ի՞նչպես, պզնակ կընե՞մ կոր։

— Գեղ չէ։

— Նկուր քիչ մ՚ալ բոլքա խաղանք քեզի հետ։

— Փրասենյակի մեջ բոլքա կը խաղացվի՞, բանպ դնան, ձեռապիր պրիմ պիտի։

— Նկուր խաղանք, նկուր, չէ նե՝ օտապաշին կամ ուրիշ մեկը գաւիր, որ խաղամ, որովհետև այս դիշեր առաւել տանտանիթ մը կա, ես ալ հրավիրված եմ, բոլքա պիտի խաղամ, քիչ մը վարժութիւն պետք է։

— Ի՞նչ վարժութիւն պիտի ընես։

— Սա վարժութիւնը պիտի ընեմ, որ տամային ձեռքը ի՞նչպես սեմիու է, որ ուրիշները չը տեսնան։

— Ախիւթ, դուն ալաֆրանկային ճշտասիրը կողմերը սորվեր ես։

— Հիմակվան գործածվածը սորվեցայ։ Ա՛հ մեն շեր, թիեն մեն շեր, սոնե մուա տեռ մեճիտիե մեն շեր։ Ասիեռ մեն շեր, ժը վու սալյու մեն շեր, ժե լոնեռը սը վու սալ յուլե մեն շեր, վուզալե լոնեռը սը վու պեթրը սալյուե մեն շեր, և մեն շեր, սոնե մուա տեռ մեճիտիե մեն շեր[25]), սոնք են ասոր հիմակվան գործածված ալաֆրանկա խոսքերը։

— Աստված շնորհք տա։

— Մեր երիտասարդներուն[26])։

1876

ԳՈՐԾ ՉԸ ՄՆԱՑ ԱԼ

— Ախիւթ, ժողովներուն վրայով ի՞նչ լուր ունես։

— Ժողով եղած չունի, որ լուր ունենամ, ժողովական էֆենտիները շատ գործ տեսան տե՝ քիչ մը հանգստութիւն կառնեն կոր։

— Ի՞նչ գործ անասնո։

— Անանկ գործեր անասնո, որ դրսեն նայիս նե՝ կասիս որ մինչև այսօր գործ մը չանասնո, բայց ներսեն նայիս նե՝ պիտի տեսնես թե ի՛նչ գործեր անած են։ Օրինակի համար. Ուսումնական խորհուրդներո[27]) թաղային վարժարաններուն անանկ բարեկարգ վիճակի մը մեջ դրավ, որ անկից ավելի բարեկարգություն ընդմ ըսես նե՝ տակեն ձյաս կելլեն։ Տնտեսական խորհուրդը[28]) անտեսապետությամբ վարվելով անանկ գործեր տեսավ, որ անտուկին մեջ նայիս նե՝ չհավատալիքդ կուգա, որ մեկին ըսեմ, որ մեկը պատմեմ։

— Ըսել է որ ասկից ավելի բարեկարգություն ձյասակար է ապրին։

— Այո, և ժողովներն կսպասեն կոր, որ վարժարաններն նորեն ավերվին, անտուկը բոլորովին պարպվի, որպեսզի զանոնք բարեկոխեն, առոնց պաշտոնը բարեկարգել է, և բարեկարգյալ բան մը ավելի բարեկարգելու պաշտոն չունենին, ուստի և քանի որ ամեն բան բարեկարգյալ է, ժողովներն ալ բնականաբար գործ չեն ունենար։

— Ունեցած առաններնիս ալ չնային նե՝ ինչ կրնանք ըսել, ամառականավ չեն ա, ի սեր ապրին անձնվիրաբար կաշխատին կոր։

— Միջերնին կան ալ, որ կը վաստակին կոր։

— Կը վաստակին կոր, ինչ կըսես, ուրդ պագնեմ։

— Այո, կը վաստակին կոր, ինձմե քեզմե շատ աղեկ կը վաստակին կոր։

— Իրավ կըսես։

— Այո, այսինքն բարոյապես։

— Սանկ ըսե, ես նյութապես կարծեցի ոե՝ մեկեն ի մեկ դեղ եղա։

— Ինչո՞ւ ես, ապա ես, նյութապես կրնամ վաստակիլ, սա ինչ պարապ խոսք է։ Դուն անոնց միլիոնով ոսկի տաս նե՝ անոնք չեն ընդունիր, անոնք ազգասեր մարդիկ են։

— Ողջ ըլլան ոե՝ ի փառս ազգին աշխատին։

— Աշխատին, բայց հիմա գործ չմնաց, որ աշխատին[29])։

1875

— Իմացա՛ր Խիկար։

— Չիմացա՝։

— Պատրիարքարանը կնիք մը կար, ան ալ Ղալաթիոյ խմբակին[30] ձեռքն է անցեր։

— Այ թշվառականներ, ես արդեն անոնց ինչ չամչցած մարդիկ ըլլալը գիտեի։ Բանէ տարվան է այդ կնիկը։

— Ի՞նչ գիտնամ, Լբեսուն, քառասուն տարվան ըլլալու է։

— Բայց, ինչպես եղեր է, որ ասոնց ձեռքը անցած է... ո՛վ գիտե, խեղճը համոզած ըլլալու են, քեզի վարդապետ ձեռնադրել կուտանք կամ եպիսկոպոս ընել կուտանք ըսած ու խաբած պիտի ըլլան։ Աղվո՛ր բան է կնիկը գոնե։

— Աղվոր է, հապա։

— Վայ չամչցածներ, վայ...

— Այս կնիկն էրիկ չունի՞։

— Ի՞նչ կըսես, Խիկար, կնիք կըսեմ կոր, այսինքն մեռյալ։

— Սանկ ըսե, ես կնիկ հասկցա տե...

— Տէր ողորմյա...

— Պատրիարքարանի կնիքը մինչև...

— Զեր, հապա։

— Էյ, կնիքն առեր, ինչ ըլեր են։

— Առանց Պատրիարքարանի գիտութեյան գավառները նամակ կը գրեն եղեր։

— Ակեկ ա, մեր Պատրիարքարանին ալ ձրի գրագիր պետք է, ալ ինչ կուզեն, մարդիկ անձնվիրաբար կաշխատին կոր։

— Գավառացիներն ալ անոնկ կը կարծեն եղեր, որ Պատրիարքարանի կոմիտեն կը գրվին կոր ատ նամակները։

— Նամակներուն մեջ ինչ կը գրեն կոր։

— Այս ինչ մարդը նեսափոխան[31]) ընտրեցեք կըսեն կոր, և այս նամակներու թուղթն ու բոսթայի ծախսը Պատրիարքարանի անտուկեն կելլա կոր։

— Այդ մարդոց անձնականի վերաբերյալ նամակներուն բոսթայի ծախսը Պատրիարքարանի անտուկեն չելլալուն ինչ ապացույց ունիս։ Հիմա օրինակի համար Քրիստոստուր[32]) ապացույց մը գրե, որուն մեջ փինճի աղվոր մաշլախ մը զրկեցեք» ըսե նե՝ հիմա այս նամակին բոսթային ծախսը Քրիստոստուր էֆենտին քսակե՞ն կուտա, կը վայլե՞ որ տա,

քանի որ ապիկն ծառայությունը մը մատուցանելու համար մաշլախ կուզե նե՝ Պատրիարքարանին[33]) պարտքն է բոլթայի ծախսը վճարելու։

— Ըսել է որ ատկից հաքը մենք ալ նամակ մը գրենք նե՝ Պատրիարքարանը տանինք ձգենք թող անկից ելլիա։

— Քանի որ Պատրիարքարանի մեջ ատանկ խարդախություններ կըլլան, քանի որ ամենեքին հսկողություն չըլլար, Պատրիարքարանը քիչ օրեն նամակատուն կը դառնա։

— Բայց Ս. Պատրիարքն այս բանն ընողնելը քննություն հնթարկելով վնասակար ու դանելու հոգ չընե՞ր։

— Ս. Պատրիարքը ինչ կրնա ընել, անոր պարտքն է ժողովին որոշումները գործադրել։— Ըսել կըլլա, որ ժողովները որոշած են, որ ատանկ խարդախություններ ըլլան և Ս. Պատրիարքն ալ գործադրել կուտա էր զանոնք... ուրիշ ինչ կըրնանք ըսել, չիյտեմ որ։

— Սա կրնանք ըսել, որ այս խնդիրը խնդրոց կարգին մեջ գրվի, մնծամասնությամբ քննվի և լուծվի։ գուցե մեծամասնությունը իրավացի գաան այս խարդախությունները.....

Կիմանանք որ քանի մը օրեն ամեն եկեղեցիներու մեջ աղոթք պիտի ըլլա, որ անձրև չգա ա՛լ[34])։

1875

ԹՈՀԱՓՃԻ ԲԺԻՇԿԸ

— Ասանկ տեսնեմ, Միկաթ, ինչ լուրեր բերիր։

— Ի՞նչ լուր պիտի ըլլա, երեկ գիշեր աղչկանս հետ սարսափելի կռիվ մը ըրի։

— Ինչո՞ւ։

— Ամկից մեկ երկու ամիս առաջ աղչիկս հիվանդ եմ ըսավ. կոպս կը ցավի, փորս կը ցավի, ձեռքս կը ցավի, գլուխս կը ցավի, ոտքս կը ցավի, կուրծքս կը ցավի, վզնակս կը ցավի, ըսելով ինձի մոտիսքրա մը բեր ըսավ։

— Մարթա հիվանդանա նե՝ բժշկի տեղ մոտիսքրա՞ կուզե։

— Ի՞նչ գիտնամ, շատ ազեկ ըսինք, մոտիսքրա բերինք ու նոր հազուստ շինեցինք։ Ատոր վրա ելավ որ օդափոխության համար Սարը երթանք։ Ես ալ. ինչպես որ սովորություն

է ժամացույցս ծախելով, բարեկամներս փոխ տասակ առնելով ելանք գացինք։

— Աղջիկդ առողջությունը գոնէ գոնե։

— Առողջության խնդրը կըլլա, սիրական մ'անգամ գոհաւ։ Գետնին տակը անցնի...

— Ի՞նչպես։

— Կեցիր, որ պատմեմ։ Ասիկա հիվանդ եմ, ըսելով, այս ինչ բժիշկը բերիք ըսաւ։ Շատ աղեկ, ըսինք, ըսած բժիշկը բերինք ալ։ Բժիշկը սկսաւ գալ, առտուն անգամ մը կուգա, կես օրին ալ կուգա, իրիկվան նորեն կը հանդիպի, վերջապես առավօնեն մինչև իրիկուն տունեն դուրս չելներ։

— Ոչպեսզի բացակայութիւնը մէջտեղն հիվանդութիւնը չգա։

— Երբեմն ալ խրատ կուտա մեզի, որ աղջիկը օրը քանի մը անգամ ծռվելերքը պարտի, որ բացվի, մենք ալ իր հրամանները կետ առ կետ կը կատարենք կոր։ Բայց եկու տես, որ աղջիկը ըռնտանալիք չունի, ձի, կըսես, կոնակի վրա կը պառկի, բյուֆ, կըսես, երեսի վրա կիյնա, ահ կըսես, ոսոք կելլա, վահ, կըսես, կը նստի։ Բժշկին կը հարցունենք նե՝ բան մը չէ, կանցնի կըսես։

— Վերջը։

—Վերջը կընայինք որ օդափոխութիւնը աղեկ չգալ կոր։ առջի առներնիս կուգանք, բայց հիվանդութիւնը վրայեն չ'երթար։

— Վերջապես...

— Վերջապես երեկ իրիկուն սենյակիս մէջ միս մինակ նստած առներս, աղջիկս նեղս կը մտնե։— Հայրիկ, քեզի գաղտնի խոսք մը ունիմ։— Ըսե՛։— կը քաշվիմ կոր։— Մէ քաշվելը։— Զը բաղկանաս։— Չեմ բաղկանար։— Բաղկանաս նե՛։— կը բաղկանամ։—Չեմ ուզեր սը բաղկանաս։—Ես ալ չեմ ուզեր։— Բժշկը ըսավ որ։— Ի՞նչ ըսավ որ։— Ըսավ որ իրեն հետը կարգվելու ըլլամ նե։— Էյ։— Հիվանդութիւնս կանցնի։

— Ասիկա Մոլիերի[36]) կատակերգութիւնը կը նմանի կոր։

— Աղեկ ա, ըսի, եթե ասանկ էրնե՝ ինչու ելնք ամիս պարապ տեղը այնքան հիվանդութիւն քաշեցիր, այնքան ցավ քաշեցիր։— Մեկեն ի մեկ ըսելու կամենայի կոր... բայց շատ աղեկ տղա մ'է, առաւտուրն ալ տեղն է, թոռաֆճա...— Թոռաֆճի է... բժիշկ չէ՞։— Այ, թոռաֆճի է, բժիշկ չըսեի նե՝ առուն չպիտի կրնար գալ, նեղի՛ հայրիկ, մեծնալուն պարագն է նեղելը, պզտիկներուն ալ ցավունքն է նեղվիլը։—Չեմ նեղեր։— Բիչ մը տասակ առաւ, որ

ապան գրամատուրա դնեմ.— Սահմ ալ չունի.— Ձունի, մեծերուն պարտքն է ստակ տալ, պզտիկներուն իրավունքն է ստակ առնել.— Ստակ չունիմ, և չեմ ալ ուզեր, որ մնանիկ խարդախ մը իմ վեհաս ըլլա.— Ես կուզեմ.— Ես չեմ ուզեր.— Ես կուզեմ և պիտի առնեմ։

— Կառնե յա։

— Վերջապես երեկ գիշեր, ասանիկ կռիվ մը ընելին հաքը այս առաու կելլամ կը նայիմ, որ աղջիկը տունը չէ։

— Ո՞ւր է գացեր։

— Ո՞ւր պիտի երթա, իր բժիշկին քովը։

— Քանի որ մեծերուն պարտքն է ներել դուն ալ կը ներես, հարսնիքը կընես, կը լմնես, կերթաս։

— Բայց ինչո՞ւ խաբվեի...

— Բժիշկը տունդ մտած օրը վկայագիրդ ցցուր, ըսեիր։

— Դատարան մտնող փաստաբան մը չէ, որ վկայագիրդ տեսնամ ըսեի։

— Ինչ որ է, եղածը եղած է, ձայն մի հաներ, և ասկից խրատվելով մեյ մ'ալ տունդ եկողներուն ուշադրութիւն ըրե

— Աղջիկն երթալեն վե՞րջը...

— Ձգուշութիւնը ձեռքե ձգելու չէ։

— Ասկից վերջը եկողը գիս չպիտի համոզե յա, տունին մեջ ինձմե զատ մարդ չմնաց։

— Ամուսնիդ ծեր է։

— Երդեն ան ալ սիրական մը գտավ, դնաց անցյալ շաբթու։

— Ի՞նչ կրնաս ըսել, քանի որ լուսավորութիւնը ասանիկ կը պահանջե կոր եղեր[37])...

1876

---

500 ՈՍԿԻԻ ԽՆԴԻՐԸ

— Ի՞նչ լուր բերիր, Միկիա։

— 500 ոսկիի խնդիրը ծեծվիլ սկսավ։ Տամդաճյան[38]) էֆենտին Մանզուանի[39]) մեջ նամակ մը հրատարակելով կըսե թե Աչառուբ սրբազանին[40]) քովը գացած ժամանակը փոխ. Հայրը հոն էր։

— Փոխ. Հայրը ինչ կը պատասխանե։

Գրադ 2405

— Ան ալ կըսե որ Խաչատուր սրբազանին սենյակը մտած ատենը Տամդաճյանը հոն նստեր է եղեր։

— Տամդաճյանը ինչ կըսե ասոր։

— Կը պատասխանե որ սենյակը բացած ատենը փոխ. Հայրը հոն է եղեր։

— Փոխ. Հայրը ինչ կըսե։

— Ան ալ կըսե որ Խաչատուր սրբազանին քով գացած միջոցին Տամդաճյանը հոն է եղեր։

— Տամդաճյանը ասոր ինչ կը պատասխանե։

— Երկար ըրիր ան, վերը բսինք ան։

— Մեկուն Խաչատուր սրբազանին քով մյուսին առաջ եբթալեն ինչ կը հետևի։

— Սա կը հետևի, որ Խաչատուր սրբազանին քով առաջ գացողը հանցավոր պիտի ըլլա, հաքեն գացողը անմեղ։

— Առակ բան մը չբնիներ, կուզե փոխ. Հայրը առաջ գացած ըլլա, կուզե Տամդաճյանը, բավական է, որ երկուքն ալ հոն գտնվեր են և այս բանին տեղեկություն ունին։ Հիմա խնդրուն բնությունը կը պահանջէ, որ 500 ռուբլիի վրա ինչ խորհրդակցություն ըրած ըլլալնին հայտնեն։

— Առ իմ մտքես ալ անցավ. փոխ. Հոր աված պատասխանը, շիտակը կուգես նե՝ մխքս պղտորեց, որովհետև փոխանակ Տամդաճյանին նամակին մյուս կողմնակը հերքելու, մի մեայն Տամդաճյանեն առաջ Խաչատուր սրբազանին քով ըլլալը հերքիր է։ Հերքում մը, որ չբլլար ալ նե՝ կըլլար։

— Անանկ է. հիմա որ հաստատվելիքյունը իմացավ նրկուքին ալ հոն նեկիա ըլլալը, կուզե հասկնալ թե՝ այնտեղ ինչ խոսակցություն եղած է։

— Թերևս բան մը չխոսեցան և իրարու երես նայեցան։

— Թե որ բան մը խոսած չբլլային՝ ինչ հարկ կար, դուն ինձմե առաջ գացիր, ո՛չ, ես բեզմե հեռր եկա ըսելով անհանգիստ ըլլային. ըսել է թե բան մը խոսեր են։

— Ի՞նչ խոսեր են։

— Փոխ. Հոր և Տամդաճյան էֆենտիին պարտքն է այս խոսակցությունն ալ հրապարակ հանել, որպեսզի օրմն հանցավոր և օրուն անմեղ ըլլալը հասկըվի։

— Անմեղը Խաչատուր սրբազանն է։

— Ան հայտնի բան է. մարդը բարեգործություն մը ընեմ ըսեր է, տակէն չար գործություն ելնի[1]։

1875

ՀԱՅԿ ԱՍՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՐՅՈՒՐԻՆ ՏԱՍԸ

— Ողջո՛ւյն։

— Ծառա եմ, Հայր Խիկար[12]։

— Սըկե սուրճ մը կապսպնե՞ք։

— Շատ աղեկ, սուրճ մը բերե՛ք։ Ի՞նչպես եք, հայր, ինչ կընեք կոր։

— Բան մ'ալ ըրած չունիմ, ձեռքս գործ մը կաը չեղավ։

— Ի՞նչ գործ։

— Ծանոթներես մեկը անցյալներն աղաչեց ինձի, որ աղջիկ մը գտնամ իրենց։ Պատվիրեց, որ աղջիկը տասնևվեց տասն և յոթին տարեկան ըլլա։ Միջահասակ, վայելուչ, աղվոր, ուսումնական և հարուստ ըլլա։ Աշխարհական եղած ժամանակս թեև տասնի գործերու մեջ գտնված չեմ, բայց շատ աղեկ ըսելով՝ ելանք ծանոթներուս տունը պտըտիլ սկսանք աղջիկ մը գտնելու համար։

— Այս աշխատութեանդ փոխարեն բան մը խոստացան, գոնե։

— Հապա, կրոնավոր մը առանց ստակ առնելու գործ կը տեսնա, առնվելիք թրաքոմայնին հարյուրին տասը խոստացան։

— Է՛յ։

— Ինչ է նե՝ մեր բարեկամին ուզածին պես աղջիկ մը գտանք. խոսքը բացինք մորը, ըսինք թե՝ եըխտասարդն շատ աղեկ ուսյալ է, կրթութիւնը Եվրոպա առած է, ինք իր գըլխուն մարդ եղած է, այսօր սենյակ ունի, քաստ ունի, քաստային մեջ քյասեներ ունի, սպասավոր ունի, սա ունի, նա ունի, վերջապես համոզելու համար ինչ պետք էր նե՝ ըսինք։ Աղջկան մայրը, բեք աղեկ, իրիկունը մեծավորիս կը հարցունեմ ու վաղը պատասխանը կուտամ ըսավ։ Հետևյալ օրը ելանք, գացինք.— Բարև՛ Իսկուհի տուտու.—Աստուծու բարին, Հայր սուրբ.— Խոսքը բացինք աղային.— Բացի, տղան՝ անգամ մը տեսնելու եմ ըսավ։

Ասոր վրա ելանք մեր բարեկամին գայինք և ըսինք, որ աղինքն անգամ մը տեսնալ կուզեն կոր։ Բարեկամիս ալ ըսավ թե՝ ես ալ անգամ մը կուզամ աղջիկը տեսնալ և աղջիկը չտեսած՝ ինքզինքս չեմ ցցուներ։ Աղեկ ա, ըսինք, կելնենք կերթանք անոր առաջը եսքը ինչ է, աղջիկը տեսած առնող հայրն ալ քեզի կը տեսնա, կը լմնա, կերթա։

— Անանկ է յա։

— Ինչ և է, տղան համոզեցինք, առինք աղջկան տուինք տարինք, վեր եկանք, նստեցանք, քեյֆ հարցուցինք, սիկառ խմեցինք, ասինք լինելին եաքը, տեսա որ աղջկան հայրը բարկացած վերևս կոր, երիտասարդն ալ աչքերը չկրնար կոր վեր առնել։ Ինչո՞ւս պետք, ասինք իմ խառնվելու բաներս չեն ա, հորն հարցուցի որ ինչպես գտաք տղան, տղուն ալ հարցուցի որ ինչպես տեսար աղջիկը։ Ո՛չ մեկը պատասխանեց և ոչ մյուսը. և քիչ մ՚ալ նսեմնենս եաքը, երիտասարդն ել, երթանք ըսավ ու դուրս եկանք։

— Ասանկ ըլլալուն պատճառն ինչ է եղեր։

— Ասանկ ըլլալուն պատճառը վերջին սորվեցանք, որ երիտասարդը, որ ունեվոր կը կարծվի, ստակ մը չունի եղեր, աղջիկն անդիմին փոխ առնելով վրան հագուստ կը շինե և վինքը հարուստ ցցուներ կուզե եղեր, սենյակին մեջ դրած քասան ալ քերայով է առեր եղեր և քանի մը օր առաջ ալ այս մարդին գացեր ստակ ուզեր է եղեր, ան ալ չէ տվեր ու իրարու ծանոթ խոսքեր ըրեր են եղեր։

— Հոգ է թե այս գործեն օգուտ մը չեղավ։

— Ո՛չ, բայց տղան հետևյալ օրը նորեն եկավ ու աղաչեց, որ իրեն աղջիկ մը գտնեմ, թրաքոմային հարյուրին տասը առնեմ։ Ասանկ մարդու ով աղջիկ կուտա։ Ես ալ պատասխանեցի, որ կաշխատիմ քեզի աղջիկ մը գտնալու, բայց թրաքոման ես կառնեմ ու հարյուրին տասը ես քեզի կուտամ։ Ասոր ալ շատ ազեկ չըսե՞մ։ Հակցա թշվառականին խարդախ ըլլալը ոե քովեն հեռացա, հիմա պարկեշտ երիտասարդ մը կը փնտռեմ կոր, որ սա աղջիկին իրեն առնել տամ ու հարյուրին տասը ես առնեմ[43]։

1875

ԵՐԿՈՒ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՈՒԹՅՈՒՆԸ

— Ախկեր, ինչու՞ կը խնդաս։

— Անոր համար կը խնդամ, որ առջի օրը վարժարանի մը մեջ կը գտնվեի, ակնոցավոր վարդապետ մը եկավ և հոն գըտնվող ուրիշ վարդապետի մը քով գնաց։

— Ասոր մեջ խնդալու ինչ կա, երկու վարդապետ իրարու հետ չե՞ն կրնար տեսնվիլ։

— Նոր եկողին ձեռքը թուղթ մը կար, վրան նայելով հասկցա, որ կրոն. ժողովին[44]) համար ընտրելի կը պատրաստեն կոր։

— Հոս ալ խնդալու բան չկա։

— Երկուքն սկսան խոսիլ. միւն հարցուց—Արիմյանի[45]) անունը դնե՞ս պիտի.— Բավ լիցի, ըսավ մյուսը, ըլալու բան է։

— Հոս ալ խնդալու բան չկա։

— Սրվանձտյանին[46]) անունն ալ չգլես ա.— Ինձ եմ որ գրեմ, պատասխանեց մյուսը։

— Հոս ալ խնդալու բան չկա։

— Զեր[illegible]ը դնեմ, հարցուց նոր եկողը.—Մերինը ով է.— Հյունքյարպենյանցը[47]).— Աստված չընե. տաւիկա չըլլար։

— Հոս ալ խնդալու բան չկա։

— Բայց և այնպես այս անձինք ընտրելյաց ցուցակին մեջ գտնվելու էին։

— Հոս ալ խնդալու բան չկա։

— Խնդալու բան չկա նե՝ ձեռք բարով։

— Ե՞րբ խնդալու բան կըլլար։

— Այն ատեն խնդալու բան կըլլար, երբ ան երկու վաթսդապետներն քու հիշած կրոնավորներն ընտրելի առաջարկին[48]);

1876

ԲԱԲԵԼՈՆԻ ՄԵՋ ԵՂԱԾ ՁԱՆԲՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԽԻԿԱՐԻՆ ՁԱՆԲՈՐՈՒԹՅՈՒՆԸ

— Ուակի՞ց կուգաս, Խիկար։

— Ձանըրդութեյուն մը ըրի, Սահեան վաշայի հրաւառքակած ճանըրդութեյան մեջ։

— Ի՞նչ տեսար։

— Սահեան վաշային[49]) ժառանգութեյունը տեսա, աքանչելի բան, տեսնես ինչ ազվոր բան է, կարդալու ըլլաս նե՝ բնչնիդ ջուրերը կը վազեն։

— Ինձ ես, Խիկար, ժառանգութեյուն ըսածդ կը կարպացվի, տուն է նե՝ կը ծախվի, տակինները կառնվին, կուտվին, տակ է նե՝ նամանավես կուտվի, այս քու ըսած ժառանգութեյունդ ինչ տեսակ բան է։

— Դուն ժառանգ ըսելով միայն սուաճ կիմանաս, կին մ'ալ ուբիշի ժառանգ կընա իյնալ։

— Դուն բերնեդ եկած խոսքը չես դիտեր կոր. ժառանգ ըսածդ հարստութիւն մ'է, որուն մեկը օրինավոր ժառանգորդ կըլլա, այսինքն ժառանգելու իրավունք կունենա, երբ այդ հարստութիւնն յուր մեռյալ հորն, մորն, կամ եղբոր է։

— Ըսել է որ այսօր ես կինիկ մ'ունենամ ու մեռնիմ նե՝ կինիկս տուրս ժառանգ պիտի ըլլա։

— Չկրնար ըլլալ, կինիկը չժառանգվիր։

— Ուբիշի մը կինիկը ըլլա նե։

— Դարձյալ չըլլար։

— Անանկ է նե՝ դուն ոտեդ մեկն ես։ Ահավասիկ վսեմ. Սահեան փաշային՝ 1876 հունիս 1 Մասիսին[50]) 1736 թվուն երրորդ երեսին երրորդ սյունակին մեջ հրատարակված մեկ նամակն քանի մը տողեր. «Ուսաի սուլթանիկը՝ զոր մեծահիշատակ Պեյնի սրտի հատորուն հետ երկինք ինձ պարգեվեցին ի ժառանգութիւն, տպագրութիւնամբ ի լուր հանելով, աներկմիտ եմ, որ ազգին ծառայութիւն ըրած պիտի ըլլամ»։ Հիմա ինչ կըսես ասոր։

— Ըսելիք չունայ. առաջները չէր ըլլար, Ռուսինյան[51]) էֆենտիի կանոնագրութենեն եառքը սկսավ ըլլալ նե՝ ան չգիտեմ։ Ինչ որ է, պատմե նայինք սա ժառանգութիւնը։

— 1847 հունվար 20-ին Գոլսեն եկա Սամսոն գացի. քաղաքը ազգոր. երկու մզկիթ ունի, երկու մեծ աղբյուր, ժողովուրդը կոչու։ Զորս տղա պատվաստեցի։

— Վ՚ըսկը։

— Անկից եկանք Իյնեպոլի գացինք. քաղաքը աղեկ. շատ մզկիթ կա մեջը, եկեղեցի ալ կա, մարդիկը քիթ, բերան ալ ունին. ժողովուրդը անկից։ Ջառասուն հիվանդ նայեցա։

— Անկից ո՞ւր գացիր։

— Անկից Տրապիզոն եկանք. քաղաքը գեղեցիկ, կլիման դաստիարակյալ, մզկիթները քաղաքավար, եկեղեցիները քար ու կիր, ժողովուրդը բիբլա, հաղար տղա պատվաստեցի, շատ մը հիվանդներ նայեցա, դարձած ատենս նայած հիվանդներս մեկն ալ չտեսա։

— Կրթյալ հայ մը չտեսաը բնավ։

— Ոչ, բնավ չտեսա։

— Ա՞ս է սքանչելի բան ըսածդ։

— Ա՛հ է, հապա՛, որովհետև հանգուցյալ Բարունակ պեյը միայն իր հիշողության օգնական ըլլալու համար իրրև ծանոթություն հավաքելը է զանոնք, որպեսզի օր մը շահելով, շահագործելով՝ ի լույս ընծայե։ Այդ խնդիրը ինչ հանցանք ունի. շատ հավանական է, որ անդին աշխարհն բոլոր բառնա Աստիան փաշային՝ իրեն ժառանգորդ ըլլալուն դեմ, ինչպես նաև ժառանգությունն այսպես չարաչար գործածելուն դեմ։

— Ինչո՞ւ ուրեմն լսածիդ այնչափ զվեցիր այս գիրքը։

— Ո՛վ գիտե, գիրք մը, որուն առաջին երեսը աշխարհագրության դասագիրքի կը նմանի, քանի մը թուղթ դարձնես նե՝ Ալամյան ընդարձակ օրացույցին[52]) կը նմանի, քիչ մ՛ալ առաջ երթաս նե՝ դեղավաճառի խանութի կը նմանի։

— Ըսել կուգես, թե ամեն բանի կը նմանի, միայն ճանապորդության չնմանիր։

— Այո՛, ատ ըսել կուզեմ։

— Բայց ժողովուրդը լսածիդ պես կոշտ, անկիրթ է եղեր։

— Անանկ է եղեր։

— Ցավալի բան, ափսո՜ս... խեղճ հայութիւն։

— Բայց ասկից քսան տարի առաջ։

— Քանի՜ տարի առաջ մի՛, կը կարծեմ, որ հիմա այն վիճակի մեջ են։

— Չէ, ճանապորդությունը 1847-ին է։

— Անանկ է նե՝ իրրև հնություն այդ գիրքը մեծ հարգանաց արժանի է, որովհետև 1847-ին առանկ այլանդակ հրատարակություններ շատ կըլլային։

— Շատ լավ, բայց սա գիտնալու է որ, հանգուցյալ հեղինակը հավանություն կուտա՜, որ յուր գիրքը այն խեղճ վիճակին մեջ լույս տեսնե։

Քանի որ ժառանգորդն է ընողը, մեզի ըսելիք չմնար[53])։

1876

ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՑԱՎԵՐՈՒ ԴԵՂ

— Ա՛յ, այ, այ...

— Ի՞նչ կա, Թիկար, ինչ ունիս։

— Ի՞նչ պիտի ըլլա, քովս սարսափելի ցավ մը ունիմ։

— Չերթա՞ս քիչ մը փանասե առնես։

— Մանասեն ո՞վ է։

— Մանասե չէ, փանասե է. տեսակ մը դեղ է, որ շատ մը ցավերուն ազեկ է եղեր։

— Ի՞նչ կըսես։

— Ջուխաթը լրագիրները, ամենքն ալ փանասե կտրվեր են։

— Ի՞նչ, անոնք ալ քովի ցավ ունին։

— Չէ, կը հրատարակեն կոր, որ քովի, ստամոքսի, մեջքի, ազիքներու ցավերը, թանչը, քոլերա ունեցողները կարդան ու առնեն։

— Այսչափ հիվանդութիւն ունեցողը ձեռքը լրագիր կընա՞ առնել որ կարդա։

— Ցավ ունեցողը չկարդա նե, չունեցողը կը կարդա և ունեցողին կիմացուներ։

— Ո՞ր լրագրին մէջ գրված է։

— Ամենուն մէջ ալ կա, ամենն ալ փանասեով լեցված են։

— Ազեկ ա, այդ լրագիրներեն մեկը կլլեմ նե՝ չը՞լլար։

— Խելքը, կատակը մեկդի, գնա, շուտ մը առ ու խմել սկսի՛։

— Ագե՛կ, բայց այդ դեղը կոկորդի ցավիս չ՞ներսե՞։

— Կոկորդի ցա՞վ ալ ունիս։ Ինչ ելջանիկ ես, փանասեն կոկորդի ցավին ալ ազեկ է եղեր։

— Հապա ոտքիս ցա՞վը ո՞ր գնենք։

— Քիչ մ՛ալ ոտքիդ կը խմցնես. ոտքի ցավին, ստամոքսի ցավին, սկասկի ցավին ալ ազեկ է եղեր։

— Սպառեմ ուրեմն, սըվռնց ամենը մեկեն ցավիլ սկսին ան՝ ան առնեմ ուռեմ, որ ազան գա։

— Մարմնուն ճմլված, ճմլված, ճնդված, ճնշված, ճմռթկած տեղերուն վրա ալ քսես նե՝ բան մը չըլլա՞ր։

— Ճմռթկած ըսիր։

— Այո՛։

— Բանթալոնիս վրա քսեմ նե՝ կը շոկվի՞ կըսես։

— Հարցնելդ ավելորդ է։

— Ճնշված տեղե՞րն ալ կը բժշկի։

— Իսկույն։

— Ինծանկ է նե՝ գավառացի հայոց վրա ալ քսելու է, որ խեղճերը քիչ մը շունչ առնեն։

— Աբյան շրջանը կարագացնե ու բնութիւնը կը գործացընե եղեր։

— Այս ըսածներուդ ամենուն ալ պիտի հավատանք, չէ՞ նե՛ մեկ մասին։

— Ամենուն ալ։

— Չեմ կրնար հավատալ։

— Չե՞ս հավատար, բայց ըսողը անգղիացի մ'է։

— Հիմա ամենևին չեմ հավատար ա, որովհետև անոնք ամեն բանի մեջ մեր շահերն այսպես կը պահանջեն՝ ըսելենդ զատ, ուրիշ բան մը չեն գիտեր, անոնք միշտ իրենց շահերը կը պաշտպան, դուն ալ կը կարծես, որ քու ցավերդ անցունելու կը նային, խելքդ սրեմ, փանսաեն ծախվի ու անառուկը սատկ մանե տե՛ դիմացինը կուզե լժշկվի, կուզե մեռնի, ասիկա փնտռող չկա։

— Չեմ կարծեր։

— Դուն մի կարծեր, ես կը հավատամ։

— Ես չեմ, կարծեր, որ փանսաեն ասանկ ըլլա։

— Մենք ալ չէինք կարծեր, բայց անանկ է եղեր։

— Դուն սա անգամ մը լսե՛, կամ կուզես նե՛ վերջիը վրա քա՛, բացված տեղերը շուտ մը կը դոցե եղեր։

— Թող երկաթյա կամուրջին[54]) քանի ու սըվոր բացը դոցին, ինձի պետք չէ, ոչ հիվանդ կըլլամ, ոչ ալ փանսաե կուզեմ։

— Չես ուսեր նե՛ դուն ալ չես լժշկվիլը։

— Մինչև հիմա փանսաե չկար ա։

— Ասոր համար ամեն օր մարդ կը մեռներ ա։

— Թող զարճյալ մեռնին ու փանսաե չառնեն։

— Ինչո՞ւ։

— Որովհետև այդ դեղն, որ ամեն ցավեր կանցունե, ցավ մ'ալ չանցուներ[55])։

1876

ՏԱՏ... ՏԱ՜Տ... ՏԱՏԻ՛Ս...

Տատ... տատ... տատիս... քալե նայիմ, տղաս։

— Ի՞նչ կըլնես կոր, Խիկար։

— Չքե՛ս տեսնար կոր, տղա կը քալեցունեմ կոր։

— Ա՛ւ ինչպես տղա է, հիսուն տարու կա։

— Դուն անոր տարիքին մէ նայիր, տարիկա դեռ տղա է։

— Ինչո՞ւ։

— Ոչ միայն տղա է, այլ նաև չար է. ուրիշին հացին աչք կը տնկէ, առանց հանցանքի անոր ատր խանութը դոցել կուտաս, մեկուն վեց ամիս, ուրիշի մը մեկ ամիս, ուրիշի մը երեք ամիս։

— Էհ, այդ խեղճերը խանութնին դոցվի նե՝ ինչ կուտեն, ինչպես կապրին։

— Բարեկամ ունեցողը բարեկամն փոխ տակ կառնե և ապրուստը կը հոգա. չունեցողը բերանը հովին գամ կը բանա և կը սպասե։

— Էհ, այս տղան չգիտէր, որ մարդս կերակուր չուտե նե՝ կը մեռնի։

— Չգիտեր, բայց աստուծով տակիկ վերջը կը սորվի և կը հասկնա, որ ուրիշին հացը բերնեն առնելը որչափ դէշ բան է եղեր։ Տատ... տատ... տատիա...

— Անհնձք մէ կարդար... իմնոզին չդարնվիլը։

— Ինքն ալ տոքի վրա եղողներուն չէր զարներ ա. ուր որ տկարներ տեսներ, անոնց վրա կը կոխեր, կը ճղմեր...տատ... տատ... տատիա...

— Սնանկ է նե՝ դուն անոթի կեցած չուտիս, սիրտդ էրած չէ, որ հասկնաս... քալե՛, տղաս, իմ սրվովրիկ տղաս, իմ սիրուն տղաս, տատ... տատ... տատիա...

— Սաանկ քալեցնելով ձեր պիտի տանիս։

— Տեղ մ՚ալ չպիտի տանիմ, քիչ մը քալել սորվի, ինքն իր պլուսն քալել սկսի, վերջեն ուր ուզե նե՝ թող հոն երթա, իմ պիտացս չելլա տե։

— Ինչ մը ուտելիք տուր, սըվոր։

— Հոգ մի ըներ դուն, տարիկա բավական կերած է, շուտ չանոթենար։

— Հերիք պատցուցիր, գնա քիչ մը շաքար առ, որ ուտե։

— Անիկա շաքար չուտեր, որկրամոլ տղա չէ անիկա։

— Խաղալիկ մը տուր ձեռքը, որ զբոսնու։

— Անոր Թաւրոն[56]) մը տամ պիտի։

— Տղայոց Թաւրոնեն։

— Չէ, մեծ Թաւրոնեն[57]) պիտի տամ, որ կարդա ու գլաբանա[58])։

1876

— Գիշերնեկը անդյակիդ մեջ ինչ կը վառես կոր։

— Կազ կը վառենք կոր։ Ի՞նչ կա Խնկար։

— Չըլլա, որ մեյ մ'ալ վառես,

— Ինչո՞ւ, սուղ կուգա կոր։

— Չէ անցյալ շաբթու Աստղկեղի մեջ մարդուն մեկը կաղնեն մեռավ։

— Սխալմամբ չուբլի տեղ կաղ խմեր է արդյոք խեղճը։

— Ո՛չ, կեսկիր պատմեմ։ Նախ և առաջ սա ըսեմ, որ Պոլսո մեջ որչափ տունն կա, անոր քառասնաւոկիկը տանտեր կա, խիստ դժվարութեյամբ կը տեսնաս մարդ մը — բայց քանի մը, հարուստներե — որ ամբողջ տան մը տեր ըլլաս։ Տուներն ընդհանրապես չորս, հինգ կամ ավելի սյուներու բաժնված են, մեկ սյունը մեկուն կիյնա, մյուս սյունը ուրիշին, կես սյուն ուրիշին։ Այդն և տանտիրոջ ամենքն ալ տունին մեջ նստելու իրավունք կունենան։

— Դիտեմ։

— Ամավոտիկ տանտիր տան մը մեջ կը նստեր մարդուն մեկը իր ընտանիքովը։ Այս մարդուն քուլրը տունեն բաժին ունենալով ամեն առաջ յուր ամուսինովը մեկտեղ կելլա տուն կուգա և վերի հարկը կը նստի։

— Շատ տզեղ։

— Երկու շաբաթ առաջ մարդը պատկելու գացած միջոցին յուր քրոջը նստած հարկը կելլա ճամիշը մանելու։ Բնությունը, չգիտցվիր ինչ բանե զրդռալ թող չտար, որ աներձակը հոն մտնե.— Թող չտա՜ս, եղբայր.— Ո՛չ, այս հարկը ես կը նստիմ կոր, թող չեմ տար, որ հոս մտնաս, իմին աւրժանապատուեյանս կը դպչի.— Խենթեցար, քենչ եղար.— Ինչո՞ւ խենթենամ պիտի, այս ճամիշը իմ իրավունքս է, չեմ ուզեր, որ իրավունքս բռնաբարվի, տանտիրներորդ դարուս մեջ պետք է, որ իրավունքները հարգվին։

Երթալով խոսքերը կը ծանրանան, քեռայրը կպի լամպան կառնե ու խեղճին գլխուն կիջեցնե։ Մարդուն հագուստները կսկսին բռնկիլ, չորս կողմին օգնություն կը պոռան. զրացիները կը վազեն, թեպետև կը հաջողին մարելու, սակայն ինչ օգուտ, խեղճը քանի մը օրեն կը մեռնի։

— Արդյոք առաջուց բան մը չունենքին մեջերնին այս մարդիկը։

— Ինձի տրված տեղեկութեանց նայելով՝ բան մ'ալ չունին եղեր, ունենային ալ նն՝ այս մարզուն ըրածը զազանութեուն չէ՞։

— Այնպես է, և ասոր պես զազաններ ուրիշ տեղ ալ կրնան գտնվիլ, ասոր համար ասկից ետքը կազ չեմ վառեր։

— Մոմ վառելու է։

Մոմ ալ չեմ վառեր, մութը կը նստիմ, ինչ կըլլա եղեր, մոմին սուակն ալ կը վատակիմ[59]),

1876

ԿԵՏԻԿ ԲԱՇԱՅԻ[60]) ԵԿԵՂԵՑԻՆ

Տոմսակո՞վ մտնելու է։

— Մ՚հ, չկրցի ըլլալ, չպիտի կրնամ ըլլալ, գնաց։

— Ի՞նչ ըլլալ կուզես ծերկաբ։

— Ուզածս մեծ բան մը չէ, թաղականը ըլլալ կուզեմ կոր։

— Թաղականութենե[61]) ինչ կը շահիս։

— Անիկա ես գիտեմ. նախ՝ չուզած մարդս եկեղեցիեն կը վռնտեմ. երկրորդ՝ հինիկ ալ աղջիկներն ու հինիկները կը վռնտեն եկեղեցիեն, և ես հինգտես հետ մինակ ձեռով ալօթքս կընեմ։

— Թաղական մը կրնա՞ ժողովուրդը եկեղեցիեն վռնտել։

— Բայց ես Կեռիկ-Բաշայի եկեղեցվուն թաղական ըլլալ կուզեմ, հոն կրնա վռնտել։

— Ո՞վ է վռնտողը։

— Վանցի թաղական մը ու անոր հինիկը։

Անցյալ կիրակի համեստ աղջիկ մը հիշյալ եկեղեցին կերթա. հիշյալ թաղական աղային հինիկը այս աղջիկը տեսնալուն պես կըսե.

— Դուն այս եկեղեցին ինչո՞ւ կուգաս կոր։

— Ո՞ւր երթամ հապա։

— Դուբս ել, ես քեզի չեմ ընդունիր այս եկեղեցիին մեջ։

— Այս եկեղեցին ձեր տունն է։

— Հիմա էրկանս խապար կուտամ, քեզի զապթիյեներով ասկից հանել կուտամ։

— Չեմ հասկնար ըսածդ։

— Չհասկնալու ինչ կա, քովս մարդ չեմ ուզեր...

— Այսպես ըսելով աղջիկը այնչափ կը հրի, կը հրմշտէ, որ անոր թեւը կը ցավցունէ։ Այս միջոցին աղջկան մայրը կը հասնի ու խոսքը թաղականուհիին ուղղելով։

— Ձո՛ւս խաչեր, կըսէ, ինչո՞ւ աղջիկս կը վռնտես կոր։

— Կը վռնտեմ ա, ես առջի օրը քանի մը թեքերտապղի կինիկներ ալ վռնտեցի, կուգամ նէ՝ քեզի ալ կը վռնտեմ, դուն իմ աղջիկս չընդունելիր նէ՝ ես ալ քու աղջիկդ եկեղեցին կը վռնտեմ, երիկս հոս իշխան է։

— Իշխան ըլլալովը ինչ կըլլա եղեր, մենք եկեղեցի չվիճե՞ գանք։

— Ուրիշ եկեղեցի գացէք, հոս չեմ ուզեր ձեզի։

Աղջկան մայրը տեսնելով, որ թաղականուհիին հետ գլուխ եկնելու բան չէ՝ քովէն կը հեռանայ ու ուրիշ կնիկներու կը պատմէ դէպքը։

— Օհ, կը պատասխանեն մին, ձայն հանելու չգար, աւելիա իշխանի կնիկ է։

— Դեմ խոսելու չգար, անոր երիկը բանկալը կը նստի։

— Երիկն ալ ժամանակավ ուրիշ մը վռնտեց, վերջինն տունը երթալով բարտեն ըսավ, ձեռքը համբուրեց ու հետը հաշտվեցավ։ Ի՞նչ ընենք, իշխանի կնիկ է, հարկավ կը վռնտեն ալ, կը գարնի ալ։

Մինչև հիմա լսած չունինք, որ եկեղեցի մը թաղականի մը ու անոր տիկնոջը ստացվածքը եղած ըլլա, ասա ալ լսեցինք։

Հիմա կը մնա մեզ հարցունել հիշյալ թաղին թաղական խորհրդուհին, թէ աղջիկ մը կամ կնիկ մը այդ եկեղեցին գալու համար նախապես թաղական խորհուրդեն տոմսակ առնելու է, թէ եկնելեն վերջը մուտքը վճարելու է, որպեսզի կարենա առանց հիշյալ տիկնոջն հանդիմանութիւն լսելու աղոթք ընել։

Մենք կը փափաքինք, որ Թաղ. խորհուրդը կամ կանանց արդիւնէ եկեղեցի գալը և կամ հիշյալ տիկնոջ արդիւնէ վերնատունն եկլալը. որովհետև մինչև որ այս երկուքեն մին չըլնէ՝ վերնատան մեջ կռիվը պակաս չպիտի ըլլա։

Սպասենք ուրեմն տեսնելու, թէ այս երկուքեն ո՞րը պիտի ընտրե[62])։

1876

ՔԱՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՕՂԻՆ

— *Բրեհս Ֆիկար*

— *Ի՞նչ կայ*

— *Քաղաքականութեան վրա ինչ կարծիք ունիս, պինաշադրը ընդունելի՞ է*

— *Քաղաքականութեան վրա սա կարծիքը ունիմ, որ իրիկուն ըլլալուն պես տուն կ'երթաս, օղիի շիշը առջեդ կառնես, կը խմես, կը խմես, կը պառկիս, կը քնանաս*

— *Ինչո՞ւ*

— *Որովհետև ուրիշ կերպով չես կրնար լուծել այս խընդիրները. Վագըբ[63]) լրագիրը շատ իրաւունք ունի՝ եվրոպացիները անկիրճ են խօսելու*

— *Ի՞նչ ըրին մարդիկը*

— *Ի՞նչ պիտի ընեն, քրիստոնեից վիճակը բարվոքենք կըսեն, գաւառացի հայերը բերաննին չեն առներ, մ'թե Սլավաց Բրիստոսը ուրիշ՝ մերը ուրիշ է։ Լոկ քրիստոնյա ըլլալը օգուտ չունի եղեր, թե քրիստոնյա ըլլալու է, թե Սլավ և թե եվրոպական Տաճկաստանի մէջ ըլլալու է եղեր. ատ ինչ անիրաւութիւն է*

— *Մեկը անիրաւութիւն ընե՝ այդ անիրաւութեան դեմ նստելու օղի՞ խմելու է*

— *Գինի ալ կընտա խմել, բայց անոնք փորանց պինի չխմվելուն համար ընդհանրապես օղի կը գործածենն*

— *Այդ կարծիքդ ադեկ չէ*

— *Ադեկ ըլլա, չըլլա, ատ է կարծիքս Մարդկի մարդկութեան համար աշխատելու ատեն, մարդոց համար կաշխատին կոր. ամեն մարդ իր հաշվուն համար կաշխատի կոր Մեկն ալ Հունաստանը չէ՞ մի, ատ ալ եղեր Թեսալիո, Եպիրոսի հունաց բարեկարգութիւնը կուզին կոր. մարդ ատուծո, հայոց համար ալ բարեխոսութիւն ըրեն, ինչ կըլլա, բերանդ չհանիր ատ կարծես հրդեհ կա, ամեն մարդ իր տունը ազատելու կաշխատի կոր Ատենք խմատուն մարդու մը համար կլլըվելու բաներ չենն*

— *Կուզեիր որ քեզի համար աշխատեինք*

— *Ո՛չ, Տաճկաստանի ժողովրդյան բարեկարգութեանը համար*

— Մեր կառավարութիւնը կաշխատի կոր ։

— Թող կուտան կոր, ո՛չ կը բաբեկարգեն, ո՛չ ալ թող կուտան, որ մենք բաբեկարգենք, ուստի և ասոր համար ըսի, թե արդի վիճակին վրա օղիեն ուրիշ միջոց մը չունիմ[64]։

1876

ՆՈՐ ՔԸՆԵԼ Մ'ԱԼ

— Ի՞նչ կա, Մկիկո։

— Բան մ'ալ չկա, Բերայի[65]) շիտակ փողոցը շինած քընելը գացի քիչ մը։

— Ուրիշ քընե՞լ մ'ալ բացվեր է։

— Այո։

— Ղալաթիո քընելին[66]) հետ պիտի միանա, չէ նե՝ զատ պիտի բանի։

— Այս քընելը զատ պիտի բանի, բայց ասկից շատ պիտի վատակի, որովհետև կառք չունի, որ կոտրի, թել չունի որ բրդի։

— Ի՞նչպես կերթան կուգան կոր։

— Ոտքով երկար ճանբա չէ արդեն։

— Ուսկի՞ց կերթա կոր, մինչև ո՞ւր կերթա կոր։

— Բեռմյոլբճյանի սենյակին, Սարաֆյանի սենյակը։

Բառասուն քայլ հեռավորութեամբ պզտիկ ճանբորդութիւն մը։

— Ատ ընկերութիւնը ինչ կընա վաստակիլ ատով։

— Ատ ընկերութիւնը առջի գիշեր ժամվանէ մեջ չորս հինգ հազար ոսկի է վաստկեր, Բեռմյոլբճյանի սենյակը մոտեր, քսան բացեր, մեջիններըը առեր գացեր է։

— Դողութիւն։

— Կը հարցունե՞ս։

— Առանկ է նե՝ մենք ալ մեր սենյակը փորել տանք, Մկիկո, տակին բան մը չեզլա՞։

— Մի վախնար դուն, քուկին թընել ըսածդ հարուստ մարդոց սենյակներուն տակին միայն կը բանի։

— Գետնին տակը անցնի այն թընելի ընկերութիւնը, որ մեղի նոր տեսակ դողութիւն մ'ալ սորվեցնելու պատճառ եղավ։

— Ի՞նչ վնաս ունի. անցյալները լրագրի մը մեջ կարդացի,

որ եվրոպացի մարդուն մեկը մուրացկանութեան ալլհաս սորվեցնելու համար աշակերտ կը վնտռէր...

— Մուրացկանութիւնը անոնք գան թող մեզմե սորվին, անոնք թևերին վիտեն, իսկ մենք բրաքթիքով կը սորվինք տե՛ անոնցմե ազեկ կեփինք արվեստին մեջ։

— Իմ ըսելիքս սա չէ. իմ ըսելիքս սա է, որ մենք ալ դողութեան դաս կուտանք անոնց։

— Ազեկ հույն դասատու մը բռնելու է։

— Հույն ինչո՞ւ ըլլա, մեր ազգեն մեկը թող վատակի։

— Դողութեան դասատուն հայ ըլլա նե՝ հունաց արժանապատուութեանը կը դպչի, դուն այս գործը անոնց ձգե, ինչու որ մենք դողութեան դասատու չկրնանք ըլլալնես գատ, աշակերտ անգամ չենք կրնար ըլլալ[67]։

1876

— Ի՞նչ կը մամատաս, Եփկոր։

— Սա կը մամատամ, որ ասանկ առանց ատակի ինձալով՝ ինչ պիտի ընենք։ Ինձի գործ մը գտնեիր։

— Ի՞նչ գործ կրնամ գտնալ քեզի։

— Պոլսո մեջ գործ կը պակսի, բավական է, որ խելացի մարդ մը քիչ մը մամատա։

— Գործ կա, բայց չգիտեմ, որ դուն կրնաս ընել։

— Ինչու՞ չպիտի կրնամ ընել, ըսե՛ նայիմ։

— Քանի մը վրձին կատնես, բերայի շիտակ ճանբուն վրա պզտիկ խանութ մը կը բանաս, կը նսեխա։

— Վրձիննները առնեմ ինչ ընեմ։

— Բերայի փողոցները ամեն առտու կավլեն և այնչափ փոշի կը հանեն, որ բոլոր անցնողները վրան գլուխը փոշի կըլլա, դուն ալ «հրամմեցե՛ք, էֆենտիներ, մյուսյուներ» ըսելով գանոնք կը կանչես և վրանին գլուխնին կը մաքրես։

— Ա՛հ գեշ գործ չէ սա, մինչև որ ամեն մարդ սասանկ խանութի մը բացվիլը իմանա նե՝ ես անոթուելենն կը մեռնիմ։ Ինձի ուրիշ գործ մը ըսե՛ դուն։

— Օճախ կրնաս նստիլ։

— Օճախին մեջ կը նստվի մի, կայրիմ նե։

— Դալաթիո օճախը[68]), կըսեմ կոր։

— Հոն երթամ նստիմ, ինչ ընեմ։

— Հոն մարդ մը կա, քեզի գործ մը կը պտնա, միայն թե ինքը ինչ որ ըսի՝ չէ ըսելու չես։ Օրինակի համար, կը նայես՝ որ աշխարհիս վրա ամեն անառակութեան ընող, ամեն գեշութեաններու մեջ լողացող հնիկ մը կուգա քեզի կըսե «քուզում Ալիկր, ինձի պաշապանեն, քեզի ինչ ուզես նե՝ կուտամ» դուն ալ ան հնիկան ձեռքեն կը բռնես, հոն մարդ մը կա, անոր կը տանես։

— Էյ, ան մարդը ինչ կրնա ընել, անառակ հնիկ մը ինչպես կրնա պաշապանվիլ։

— Ա՛յն մարդը արդեն ուրիշ գործ չունի, իր բոլոր գործը անառակները պաշապանել է։

— Ըսել կուզես, թե աշխարհիս երեսը պաշապանվիլ ուզող օրչափ անառակ կա նե՝ բնավին բռնիմ հոն տանիմ նե՝ ինձի տակ կուտան, այնպես չէ՞։

— Ինձի այնպես կուզա, որ տակ ալ չտա նե՝ անոր հովանավորութեանը ներքև կրնաս ապրիլ։

— Սա բառնդրգ ագնի, բայց ես տանի՝ անպատիվ գործ չեմ կրնար ընել։ Ինձի պատվավոր գործ մը գտիր։

— Պատվավոր գործ ըսիր... վարժապետութեան երթ։

— Վարժապետութեան պատիվը ինացեր է, որ վարժապետութեան ընեմ, առջի օրը դուն բռած չէիր, որ սեյխանները վարժապետներեն ավելի պատիվ կը պտնան կոր։

— Բժշկութեան երթ։

— Չեմ գիտեր, ինչպես կրնամ ընել։

— Ամենքը գիտնալով չեն ըներ ա, քանի մը լատիներեն բառ կը սորվիս, կը լմնես կերթաս լատիներեն բառերն ալ շատ դյուրութեամբ կը սորվես, բառ մը ծայրը ում կամ ուս դնելուդ պես՝ լատիներեն կըլլաս։

— Բժիշկ չեմ կրնար ըլլալ։

— Լե, հիվանդ եղիր։

— Հիվանդութենեն ինչ կրնամ վաստկիլ։

— Հիվանդութենեն սա կրնաս վաստկիլ, որ անոր, սատր պարտք ունիս նե՝ չես տար, անոնք ալ փոդոյը չեն տեսնար որ ուզեն...

— Բայց ես քեզի չըսի, թե պարտքերս չվճարելու համար ճանբա մը ցցուր, այլ ըսի թե, տակ վաստկելու միջոց մը գտիր ինձի։

— Սարաֆութիւն ըրէ՛, քայմե ան, տրծաթ տուր, ոսկի տու, պղինձ տուր։

— Անոնք ունենալու համ, որ առնեմ, տամ, ես այդ քու քսածներդ շատոնց տեսած չունիմ, ինձի անանկ գործ մը ըսե, որ առանց տակի ըլլա։

— Եկուր, խրկեմ, վարդապետ մը եղիր։

— Շատ աղեկ, ըլլամ, բայց վարդապետութիւնը ձեռքես կուգա։

— Ինչու՞ չպիտի գա։

— Կրօնապիտութիւն պիտնալու է, աստվածաբանութիւն պիտնալու է...

— Ասանք վերջին կը սորվիս. հիմակուհիմա քեզի պետք եղածը՝ մէյ մը թաղել պիտնալ, մէյ մը պահել պիտնալ, մէյ մ՛ալ դամբանական խոսիլ։

— Առաջիններըը կրնամ սորվիլ, բայց վերջինը քիչ մը դժվար է։

— Հասկցա, դուն ծուլլին մեկն ես, աշխատիլ չես ուզեր, կուզես որ հանդիսաւ նստես, հերակուրը աչքիդ բերեն, ուտես, խմես քնանաս ու բան մ՛ալ չհարկիս, ատ քու բսածդ Աղթամարա կաթողիկոսն [69]) անգամ չկրնար կոր ընել հիմա[70]։

1876

ԱԼԵՔՍԻՆԱՑԸ, ՄՆՏՈՒԿՆ ՈՒ ԽԻԿԱՐԸ

— Թող տուր, աստվածդ սիրես, մարդս բաղդ չունենալին մաքը, ինչ որ ընե անօգուտ է։

— Ի՞նչ եղար Ալիքս։

— Ի՞նչ պիտի ըլլա, ունեցածս, չունեցածս տվի, ելա եկա։

— Որո՞ւ տվիր։

— Մարդուս ունեցածը, չունեցածը ով կառնե, չիյտե՞ս, քոնսուլիային տվի...

— Դուկին ինչո՞ւդ պետք քոնսուլիա խաղալ։

— Բոլիթիքայի ատք օրերն է. երթանք քանի մը բարա ալ մենք վատակինք, ըսինք։

— Կարծեցի վե՞ր էր, թե՞ վար։

— Առաջ վեր էր, վար գնաց նե՝ վեր ելավ, վեր ելավ նե՝ վար գնաց։

— Ասա ինչ ըսել է։

— Ի՞նչ ըսել պիտի ըլլա, խանը[71]) գայինք, բիացայի՛ գնովը երկու հազար հատ առինք, ասոր վրա ձայն մ՛է ելավ գավայ անառուհները կը տանին կոր, ան, անառուհները կը տանին, անառուհները բերին» այս անառուհի բաթըրաբին բիացան քառասուն բարա ինկավ։

— Ասա ինչ անառուհներ են։

— Ժենեբալ Իկնաթիեֆին[72]) իր տղայոցը զգեստները կը գրկի կոր եկեր, ոմանք ալ կարծեր են եկեր, որ Իկնաթիեֆ երթալու պատրաստութիւն կը տեսնեն կոր. ինչ է նե՝ բիացան վար կերթա կոր տեսի՝ մենք ալ ծախեցինք, որ քիչ մը բան վաստըկինք ու ճլատնիս գոյնք. մենք ծախեցինք, չծախեցինք՝ ձայն մը ելավ, թե Ալեքսինացը առնվեր է հիսուն հազար գրիվով. ասա լուրին վրա բիացան գլուխը կառնե վեր կերթա, ես ալ գլուխս կառնեմ վար կիջնեմ։

— Զգիտցած գործիդ մեջ ինչու կը մտնաս։

— Ախկ, սա Իկնաթիեֆին ալ ան ժամուն անառուհ շինել տալը բռնեց, ժամ մ՛ալ սպասե ու վերջը շինել տուր, մարթ առուծո, ըսենք որ ես եղավ, Ալեքսինացին առնվերն ինչ կըսես. այսչափ առնեն ի վեր կաշխատին չեն կրնար առնել ու երբ ես քոնսուլիա կը ծախեմ, ան օրը կառնեն, թող քանի մը օր ալ չառնեին, ինչ կըլլար։

— Հիմա քանի՞ ոսկի ճլաս ավիր։

— Կարծեմ վաթսունը չորս ոսկիի չափ ըլլալու է. Իկնաթիեֆին մեկ անառուհ շինել տալը մեր տունը ավրեց, հապա ելներ ես մարդը տուն մը շինել տար նե...

— Դնա, իրմե ուզե կորսնցուցած տահկներդ։

— Կուտամ մի կըսես, անոր աչքը միշտ առնելու կը նայիս։

— Ինչու՞ չպիտի տա, քանի որ իր անառուհները պատճառ եղած են, չտա ալ նե՝ գալ շաբթու ալ քանի մը անառուհ շինել կուտա, օր մը առաջ քեզի իմաց կուտա, ճլասներդ կը հանես։

— Ըլլա նե՝ գիշերանոց քանի մը անառուհ ես կառնեմ, դեպանատան դրան առջև կը տանիմ, կը գնեմ։

— Վնասներդ հանե տե՝ ինչպես կուզես նե՝ անանկ ըրե։

— Մնաք բարով։

— Երթաք բարով[73])։

1876

— Միկար, քեզի Պաղտատ պիտի ղրկեմ։

— Ինչո՞ւ

— Այն տեղն վարժապետ մը ուզեր են, հինգ տարվան համար ալ քոնթրաթ պիտի ընեն։

— Չեմ երթար։

— Ինչո՞ւ։

— Հոս ավելի օգտակար կըլլամ, քան թե Պաղտատ երթալով, հոս կը նատիմ ու փոխանակ տղայոց դաս տալու՝ աղնվականներուս կուտամ։

— Բոնի պիտի ղրկեմ զքեզ։

— Բոնի՞ մի, ինչ իրավամբ, Պաղտատեն նամակ հրատարակեցի[74]), որ բռնութեամբ կաբենաս ղրկել[75])։

1876

ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՔ ԼՈՒՍՆԻ ՎՐԱ

Սա սառանային ձեռքեն ալ քաշածնիս չկա, ալ չափն անցավ, այնչափ ըրածները չբավեց, հիմա ալ գայեր լուսինը կը բռներ. մինչ ալ ադեկ ըրինք ա, առջանակ պարպեցինք, հրացան պարպեցինք, այնչափ բան ըրինք, որ վերջապես պարտավորեցավ լուսինը թողնելու։

Միկար.— Ա՛յ, խեղճ մարդիկ, ինչերնուդ պետք. թող սառանան ուզածին չափ լուսինը բռնե. արդեն լուսինը մեղի համար չէ, լուսին ըլլա, թե ոչ, ֆեներով դուրս կելլենք գիշերները. ասկե զատ, շատ գեշ բան մ՛ըրիք սառանան պարտավորելով, որ ըրածը թողու, ան ալ հիմա պիտի երթա կամ Միխանին[76]) կամ Նիզոլային[77]), կամ Իկնաթիեֆին փորը մտնե։ Եւ՛ քը անոնց փորեն ինչպես հանելու է։

— Միկար իմացար, թե ինչու համար սառանան լուսինը բռներ է։

— Այո, իմացա։

— Ինչու համար է եղեր։

— Աբևելքի քրիստոնեից վիճակը բարվոքելու համար[78])։

— Ի՞նչ ըսել է, առով քրիստոնեից վիճակը կը բարվոքի։

— Սատանան ձեռքին նկածը կընկ կոր, լուսինը կը բռնե կոր։

— Հապա վեց մեծ տերութիւններն ինչ կընեն։

— Իրենց ձեռքեն նկածը։

— Գոռ, գոռ։

— Ի՞նչ գոռար։

— Գոռ, գոռ, գոռ։

— Ինչ ես եղեր, Խիկար։

— Գոռ, Սրբիմիտեսին[79]) պես ես ալ գոռա։

— Ի՞նչ, Սրբիմիտեսին փնտռած լծակը։

— Ոչ։

— Սրևելյան խնդրուն[80]) լուծումը։

— Ոչ, ոչ։

— Հապա ինչ գոռար։

— Օդն ամեն օր պայծառ պահելու կերպը։

— Ի՞նչպես։

— Օդը գոցվեցայ մի, երկինքը ամպով ծածկվեցայ մի...

— Է՛յ։

— Գո՛ռ, Բրուբի[81]) Թոմ մը կը նետես, մեյ մ՚ալ կը նայես, որ հանկարծ ամպերը կը ցրվին և արեգն երեսը կը բացվի։

— Ես ես, ինչ ես, Խիկար, անանկ բան կըլլա՞[82])։

— Ի՞նչ ըսել է, քանի մը տարբանակ պարպելով լուսինը կը բացվի նե՝ հապա Բրուբ մը պարպենք նե՝ արեգը չբացվիր[83])։

1877

ՊԱՏՐԻԱՐՔՅՈՒ ՄԸ

— Բեղի պահչանք մը ունիմ։

— Ի՞նչ է, Խիկար։

— Սա կարնո Հարութիւն եպիսկոպոսը Պաարխարք ընենք։ կարնեցիք շատ կը փափաքին կոր, որ առաջնորդնին Պաարխարք ըլլա և կարենան մինչև հոս ճանրու ծախքն ալ վճարելու հանձն կառնեն կոր։

— Ս. Պաարխարքը հրաժարականը ետ պիտի առնե, որով պաարխարքցուի պետք չպիտի ունենանք։

— Ինչ ձևաս ունի, Հարությյուն եպիսկոպոսն ալ թող պատրիարք ըլլա. երկու պատրիարք ըլլա նե՝ գործերն ավելի շուտ կը քալեն։

— Երկու պատրիարք լսված բան է, Ախիկար։

— Թող ասկից վերջը լսվի, սա Հարությյուն եպիսկոպոսը պատրիարք ըլլա նե՝ ինչ կըլլա։ Կարող մարդ մ'է, ազգին մեծ ծառայություններ կընե, հապա որչափ մեծ ծառայություն ըրած կըլլա Կարնեցոց՝ երբ անկից ելլա ու հոս գա՝ պատրիարք ըլլա։

Հարությյուն եպիսկոպոսը պատրիարք ըլլալուն պես, մեկ մ'ալ կը նայիս, որ կաբինի վարժարանները կանոնավոր ընթացք մը կառնեն, տեղվուն ազգային գործերը երեսի վրա չեն ձգար, որ մեկն ըսեմ, Հարությյուն եպիսկոպոսի պատրիարք ըլլալը Կարնեցոց մեծ օգուտ ունի[84]։

1877

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱԶԴ ՄԸ

— Ի՞նչ կը խորհիս կոր, Ախիկար։

— Կեսրիկ Բաշայի Թատրոնի[85] անօրենությյան բռնած ընթացքին վրա։

— Ի՞նչ կընեն կոր։

— Ի՛նչ պիտի ընեն՝ աւչի օրը Գալաթա փողոցներուն պատերուն վրա ազդերը չտեսար։

— Չտեսա։

— Կարդամ, մարիկ ըրե՛ «Հրամանավ Ամեն Ս. Պատրիարք Հոր և ընդ անօրենությամբ Խրիմյան սլբազանի, ի նպաստ Վանա հրիխզելոց, Հալաւաք, Հույս, Սեր և այլն»։

Ինչ հարկ կա «Հրամանավ Ամեն. Ս. Պատրիարք Հոր» գրելու, օրացո՞ւյց կը տպենք կոր։

— Աղեկ որ «ի Հայրապետությյան Տյառն Գեւորգ Կաթողիկոսի» չէ գրեր։

— Բայց, ինչպե՞ս կըլլա, որ Պատրիարքարանը քավազեները չղրկեր այդ ազդերը պատռելու. Ս. Պատրիարքի հրամանավ ինչ ըսեմ է. Պատրիարքը տպագրական անեչության պաշտոնյան է։

— Կեւեւա, որ Կեռիկ Բաշայի Թաարոնի հմմակվան անօրենութիւնը ինչ ընելիքը չգիտեր կոր. որովհետեւ երբեմն յուր ազգեցուն մէջ անանկ բաներ կը գլուի կոր, որ ազգին անպատուութիւն բերելեն զատ ուրիշ բանի չեն ծառայեր։

— Կը զարմանամ, որ առանկ անօրենութենեն ազգին պատիվ կպատահա[86]։

1877

ՊԱՐՏՔ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԸ ՀԱՐԳՎԵԼՈՒ ԵՆ…

— Ի՞նչ կը խորհիս կոր, Մխիթար։

— Ի՞նչ պիտի խորհիմ, երեսփոխան[87]) մը չկրցի ըլլալ։

— Ուրիշները եղան ա, դուն ալ անոնց պես երկրին շահերը չպիտի՞ պաշտպաններիր։

— Պիտի պաշտպաններ. բայց ես ուրիշ առաջարկութիւններ պիտի ընեի։

— Ի՞նչ առաջարկութիւններ։

— Այնպիսի օրէնքներ պիտի առաջարկեի, որ մեր ժողովրդյան վիճակին հարմար ըլլան։ Օրինակի համար, մյուս տերութեանց օրէնքը կը տրամադրեն, որ պարտքը չվճարը բանտարկվի. բայց այս օրէնքը կրնա՞ հարմարիլ անանկ երկրի մը, որուն բնակիչները ընդհանրապես պարտքերնին հատուցանելու անկարող վիճակի մէջ են։ Այս մասին ես անանկ օրէնք մը պիտի առաջարկեի, որ բոլոր պարտք ունեցողները ոչ միայն չպիտի բանտարկվին, այլ իրենց պարտատերներուն առջև պիտի վատաղորվին։

— Առանկ օրէնք մը կրնա՞ ըլլալ։

— Ա՛ս չգիտեմ, միայն սա գիտեմ, որ կամ օրէնքը բարվոքելու է, կամ ժողովրդյան վիճակը։

— Ժողովրդյան վիճակը ինչ ունի եղեր։

— Ի՞նչ պիտի ունենա, ամեն մարդ տնտեսագիտութեան համար ոչ ըլլածը գիտե կոր. ոչ դրածը։ Լասքիէ հարկողները՝ լասքիճներուն տակը ճեռսեի զարնել կուտան կոր, որ շատ գիմանան։ Ճես հարկողներեն ամանք խալփախ գործածել պիտի սկսին։ Երեկ մեկն ալ սեսա, որ բանճալոնին բաչանները բալթոյին թև կանցուներ կոր, ուրիշ ինչ կուզես, որ ըլլա։

— Ամ ըսածնիդ ալիլի շուայլութեան արդիւնք են, քան թէ ազգասիրութեան. մարդ ըսածդ քիչով գոհ ըլլալ սորվիլու է։

— Երիտասարդ և ծեր, ամենքը պարապ կը պարտին կոր. Լթէ ես երեսփոխան մը ըլլայի՝ կառաջարկեի նախ՝ որ պարապ պարտողներուն մէկ մէկ գործ գտնվի։

— Ազեկ որ երեսփոխան չես եղեր, վրադ կը խնդային։

— Ինչո՞ւ պիտի խնդային. Ալի Սուավի էֆենտիին պես տուգդարանութեան չեմ ըներ կոր ա, ժողովուրդը երբ գործ չունի, երկիրը պտուղ չունենար։

— Գլուխ կը ցավցունես կոր։

— Ինչո՞ւ պիտի գլուխ ցավցնեմ եղեր. Լրագրի պես գուշակութիւնն կընեմ կոր։

— Ամեն թերթիդ մէջ ալ Լրագրին գուշակութիւնը անպատճառ հիշելու ես[88]։

— Ան ալ ամեն թերթին մէջ գուշակութիւն կընե կոր։ Բաւ ըսա կը կրկնեմ. ամեն բանի առաջ ժողովրդյան վիճակը բարւոքելու է. հոս կամ գավառաց մէջ գործարաններ հաստատվելու են։

— Սահմանադրութիւնը հարկավ ատ բաներդ կը խորհի։

— Դանդ մինչև որ սահմանադրութիւնը ան բաներդ խորհի նե՝ պարտք ունեցողները չբանտարկվիլնե։

— Դուն ալ պարտք ունեցողներուն առեղնապետն ես, ինչ ես։

— Առեղնապետը չեմ, բայց այս երկրին համար ատ օրենքը իմ աչքիս խիստ կերևա կոր։

— Պարտք ունեցողները վաճառվոր տունելու մէջ, պահանելու մէջ, դնենք, ինչ ընենք։

— Արդարութիւնը այդպես կը պահանջե, քանի որ իրենք ոչ հեղինակ են, ոչ ալ պատասխանատու այդ հանցանքին, որու համար կը պատժվին։ Մենաք բարով։

— Երթաք բարով[89]։

1877

ԽՄԲԱԳԻՐՆԵՐՈՒ ՍՏՄՏՈՒՔԸ

— Բարի եկար, տեր Խիկար։

— Բարով տեսանք։

— Ծեյդ ավրտածի պես կերևաս կոր, Լրագիրը կարդացիր, ինչ ըրիր։

— Լսած է մի կարգամ... տեր ողորմյա... պապիենն կուգամ կոր։

— Տալիք ունենիր։

— Մեզի պես մարդիկ առնելիք տալիք կրնանն ունեննալ. մեզի ձվ տակ կուտա, որ տալիք ունենանք. Երբ տակ ունեցած ենք, որ առնելիք ունենանք, սեյիս չենք, որ առնելիք տալիք ունենանք։

— Ինչո՞ւ գայիր ուրենն պապիեն։

— Ես ալ չգիտեմ ինչու գայի, պապիենները տաղն տալին։

— Ի՞նչ ըսին։

— Ըսին որ մեկ մ'ալ լրագիր ծախած տաեղը «տանկ լուրեր կա, նանկ լուրեր կա» տեր չպոտաս, ես ալ շատ ափեկ ըսի, տար քալեցի։

— Բայց դուն լրագրածախ չես։

— Ես ալ անանկ գիտեի, որ չեմ, բայց քանի որ պապիենները տաղն տալին, լսել կըլլա, որ լրագրածախ եմ եղեր» պապիենները մեզի չափ չեյտե՞ն մեր ինչ ըլլալը։

— Զարմանալի բան։

— Սովորական բան։

— Ուրիշ ինչ լուր ունիս։

— Սա լուրը ունիմ, որ ես խմբագրական տպարանը պիտի թողում։

— Ինչո՞ւ։

— Որովհետև լսածիս նայելով երեսփոխանական ժողովը պիտի որոշե եղեր, որ խմբագիրները հինգ հարյուր ոսկիե երաշխավորություն մը ցցունեն կառավարության։

— Ատ ինչո՞ւ համար։

— Որպեսզի խմբագիրները հանցանք մը գործած տեղնին կառավարությունը կարող ըլլա անոնցմե տուգանք առնել։

— Իրա՞վ կըսեք։

— Այո, այդ երաշխավորությունը չցցուողը չպիտի կրնա լրագիր հանել։

— Բայց այդ երաշխավորությունը ցցուողը ի՞նդ է, որ խմբագրություն ընե։

— Ինչո՞ւ իննդ ըլլա պիտի, խմբագրությունը փառասեր մարդոց համար ամենեն լավ ասպարեզն է, ամենքը կը խենդենան վրան. «բարի եկար, մեծապատիվ էֆենտի, ինչպես եր, մեծապատիվ էֆենտի, շիտակը ձեր լրագիրները ամեն օր կը կար-

գամ կոր, որչափ ալ ազնիկ կը գրնէք կոր, ազգին պատիվ կը բե-րնէք կոր» ևայլն կըսեն. ընկերութեան մէջ գտնված առանձ մի-սին ազգոր կառոը քեզի կը հրամցնեն, գքեզ կը հարգեն, կը պատուեն, բայց ծոցդ բարև մը չունիս եղեր, ազ ուրիշ խըն-դիր[90]։

ԽԻԿԱՐԻՆ ՀԵՏ

— Ի՞նչ են կարդացածնիդդ, Խիկար։

— Լրագիրներդ աչքե կանցունեմ։

— Ի՞նչ կը գրեն։

— Շատ բաներ կը գրեն, բայց բան մը չեմ կրնար հաս-կընալ։

— Սվատբիս քաղաքականութիւնը առաջվան պես է եղեր։

— Այսինքն ինչ քաղաքականութիւն ունենալը հայտնի չէ եղեր։

— Զեզոք ծնողով հանդերձ պետք եղած առեն պիտի գործե եղեր։

— Ներգործակերպ չեզոք չըսե՞ս

— Այո։

— Առջի օրը հեռագիր մը կարդացի, որ կըսեր թե Ռու-սերը գնալ կարս ևս քաշված են[91]։ Ատ ինչ ըսել է, թշնամին գնալ մեր բերդերը ևս ևս հալածելը կարծեմ ազնիկ բան չէ։

— Առանցմե ևս ալ բան մը չեմ հասկնար։

— Հունաստանը Արևելյան խնդրուն սատկութիւն չտա-լու համար բանի մը չգիտեի խառնվի եղեր։

— Ողջ ըլլա։

— Պուքրեշեն եկող հեռագրին ինչ կըսես։

— Ո՞ր հեռագրին։

— Ռուսերը Իպրայիլեն մեր զրահավորներուն ռումբ ար-ձակեր են։ Մեր զրահավորներն ալ իրենց պատասխանները են։ Հիմա Թուրմանացիք կըսեն, որ չենք կարծեր, որ թյուրքերը գնչ պետավորութեամբ ռմբահոծած ըլլան Իպրայիլը։ Այս խոս-քեն ինչ կը հասկնաս. լռե՞ւմ պիտի նետենք Իպրայիլի մեջ։

— Ավելի ազնիկ ա, մենք ալ կը պատասխանենք իրենց,

որ բարի դիտավորութեամբ պիտի ամբաստանենք իրենց քաղաքները։

— Լրագրին մեկն ալ կըսե, որ Ռուսները Բալաֆաթը գրաւեր են։

— Այո։

— Բայց անցեալ օր մենք գրաւած էինք Բալաֆաթը։

— Օր մը անոնք պիտի գրավեն, օր մը մենք. լրագրները երկու կողմին ալ խաբերը կը սեպեն կոր։

— Անգլիացին ինչ լուր։

— Պառլեմանտի պատասխանութիւն։

— Հապա պետ առջի օրն էր չեզոքութիւն հրատարակեց։

— Չեզոքութիւնը չիդերուն դրած բլալոչ է...

— Ուրիշ ինչ լուր ունիս։

— Ոսքի ամաններու առատութիւն. եթէ լրագրաց ուած լուրերուն մեջ չափազանցութիւն չկա՝ թշնամին առնուած հաշիւները քանի մը տարի կը բաւեն մեզի։

— Ես ալ այնպես կարգայի։

— Ըսել է, որ բուրթուբաղուճ կը փախչին կոր։

— Այնպես կերևա։

— Կոշիկով փախչելը թերևս անանց մեջ վատութիւն կը համարվի, և անոր համար չփախած նախ կը նային կոր հոշիկին կը հանեն կոր ու վերջը կը փախչին կոր. կամ իրենց գալը չիմացնելու համար կոշիկին թևերնուն տակը առած կուգան կոր։

— Հունաստանին համար չեզոք է ըսիր. բայց անիկա սահմանը անցնելով մեր հողը կերը է։

— Այո, ավազակները հալածելու համար։

— Հիմա՞ ելավ ավազակները հալածելու, և մանավանդ մեր երկիրը հալածելու, թող անդին կողմը գըշ։

— Ուրիշ ինչ լուր կարդացիր։

— Հացին գինը պիտի իջնա եղեր։

— Աժոնաը ահ՝ առնեինք և ուտեինք։

— Ուրիշ ինչ գիտես։

— Ուրիշ բան մ'ալ չդիտեմ։

— Մնաք բարով ուրեմն։

— Երթաք բարով[92]։

1877

ՋԱՎԵՇՏԱԿԱՆ ԹԵՐԹԻ ՄԸ ՎՆԱՍՆԵՐԸ

— Գոցելու է, դադրեցնելու է, խափանելու է, այլելու է, մեռցնելու է, կախելու է սա զավեշտական ըսված անիծյալ թերթերը, ինչ է ասոնց ձեռքին քաշածնիս...

— Ինչո՞ւ համար, Խիկար, ինչ եղաւ։

— Ինչո՞ւ համար մի... դեռ կը հարցունե՞ս... այս թերթերը ազգին և սերունդին ջնջաս հասցնելուն զատ բան ըրած ունի՞ն։

— Ի՛նչ ըրած ունին։

— Դեռ ինչ պիտի ընեն. օրինակի համար, ես բարոյականին ինչ ըլլալը չգիտեմ և կուզեմ, որ դրացիս կինիանը քիչ մը քալիմ. եկո՛ւ տես, որ չեմ կրնար կոր քալել, որովհետև հետևյալ օրը Թաւրոնի մեջ կը տեսնեմ կոր լինքզինքս. սասնկ յուսահատյալ դարու մը մեջ ես ինչո՞ւ ազատութիւն չունենամ ուզած կնիկոնս քծնիլ. դարձյալ օրինակի համար. ըսենք՝ թե ես կամ կառավարութեան և կամ ազգային պաշտոններուն մեջս մեջ կը գտնվիմ և կուզեմ շատ անխրավութիւններ ընել և չեմ կրնար կոր ուզածս ընել, որովհետև Թաւրոնը խմանալուն պես՝ երբեմն ուղղակի, երբեմն անուղղակի կը հարվածե կոր, որ մեկն ըսեմ, էֆենտիմ, այս զավեշտական թերթերուն հասուցած վնասները շատ են, շատ, կրնամ ըսել, որ շատերու անոթի մնալուն, Զեյթունի քայմաքամին մարդ սպանելուն, Վանա կրակի տրվելուն, վերջապես բոլոր այս տեսակ անիրավութեանց պատճառը զավեշտական թերթերն են։

— Չեմ հասկնար, ինչ կըսես։

— Չհասկնալու ինչ կա։

— Կարծեմ ըսածդ դուն ալ չես հասկնար կոր։

— Ներեցե՛ք Հալեպլեն եկած չեմ ես[93],

— Ուսկից գալը պետք չէ ինձի, մխայն սա կըսեմ, որ մարդս յուր չգիտցած բանին վրա խոսելու չէ և թող տալու է, որ գիտցողները խոսին։

— Այդ սովորութիւնը Օսմ. Երեսփոխանական ժողովին պատճառեցաւ վերացավ հիմա։

— Լեզվիդ ծայրը բան մը կա, չխոսի՞ս։

— Ի՞նչ խոսիմ պիտի. երեսփոխանական ժողովս պատասխանատվութիւնները չես կարդար կոր. քանի մը երեսփոխաններ

զավեշտական թերթերու և անոնց խմբագիրներու պատիվը մեզ առակի են ըսեր։

— Ի՞նչ են ըսեր։

— Մեկն ըսեր է թե՝ և որովհետև զավեշտական թերթերը անբարոյական բաներ են կըսեք կոր՝ պետք է դանոնք ջնջելուըրիշ մ՚ալ իբր թե պաշտպաններ է ըսելով որ՝ եթե անբարոյական բաները վերցնել պետք է՝ նախ և առաջ Հեյալը և Մեյտան օյունին արգիլելու է. և ասով զավեշտական թերթերը Հեյալի և Մեյտան օյունին կարգը դասեր է։ Կեցցե՛ ազատութիւնն կարծեցեր...

— Հավատալիքս չկար կոր։

— Տպագրական ազատութեան անօրէն Վահմ. Մահիա պիտի ալ զավեշտական թերթերու միասակաբ ըլլալը հայտներ է։

— Զավեշտական թերթերը հիմա միասկար եղած են. եթե ի բնե միասակաբ էին՝ ինչու՞ Մահիա պիտը ասկից յետը ուրիշ տարի առաջ չխափանեց զավեշտական թերթերը և թող ապահով, որ անոնք այսպէս միասնեն հասցնեն հասարակութեան. եթե հիմա միասակաբ եղան՝ ըսել է թե իրենց միասակարութիւնը իրեն չէ, այլ անոնք իրենց ուղղութենեն շեղած են. և այս պարագային մեջ դանոնք կարգի բերել պետք էր և ոչ թե ջնջել։ Եթե հայտարարածները աղեկ հաց չծախելին հայը վերցնել պիտի առաջարկեին այդ երեսփոխանները։

— Այո, ես ասոնցմո ազոթք կընեմ, որ Վահմ. Մահիա պէյը՝ որ շատ ազատամիտ մեկն է, կըսեն, բժիշկ եղած չէ. եթե բժիշկ եղած ըլլար՝ իմ ալ գլուխս ցավեր և իրեն դիմեի՝ պիտի ըսեր ինձ. խորհուրդ կուտամ քեզի, որ կտրես այդ գլուխը, որովհետև մարմնույդ մեսա կուտա կոր։

— Ես ալ իրեն պիտի պատասխանեի. Վահմ.պէյ Մահիա պէյ, այդ գլուխը ի բնե միասակար չէր, բուժի զայն ու պիտի տեսնես, թե որչափ օգտակար պիտի ըլլա մարմնույդ։

— Ենթադրենք թե — թեպետև ենթադրելը հիմարութիւն է— ցավող գլուխը կարելու սկզբունքը ընդունված ըլլա. բայց ինչու՞ նույն սկզբունքը չցավող գլուխներու համար ալ գործածել կուզեն։ Թատրոնը երբ միասակար եղած է, երբ հասարակութեան բարոյականին դպած է, երբ ընտանեաց մեջ չբավելու խոսք մը հրատարակած է, երբ պատվավոր ընտանեաց մը պատվույն դպած է։

— Մեծ. Սեպուհ էֆենտին, կարնո երեսփոխան Մեծ. Համազասպ և Դանիել էֆենտիներն՝ կիրևի որ չկրնալով բացե՛ թ

քաց ըսել, թե մեր ազգին մէջ ձեր ըսած կերպով գավեշտական թերթ չկայ, պաշտպաններ են գավեշտական թերթերը. Մեծ. Սեպուհ էֆենտին շատ ազեկ խոսեր է ըսելով թէ՝ քանի որ օրենք կայ՝ հանցավորները կը պատժվին. ուստի և բնաւ հարկ չկայ գավեշտական թերթերը ջնջելու. Մանուկ էֆենտին միայն քիչ մը դեմ խոսեր է. բայց առջի նիստին մէջ ի նպաստ խոսած ըլլալով՝ տարակուսյս չկայ, որ երրորդ նիստին կարգը ի նպաստ խոսելու պիտի գա և նորէն պիտի պաշտպանէ գավեշտական թերթերը՝ հետևյալ նիստին մէջ նորէն դեմ խոսելու պատրաստվելու:

— Սակայն Վահէ. Մաճառ պէյը՝ որուն իշխանութեանը ներքև կը գտնվինք, բարեհաճեր է գավեշտական թերթերու խմբագիրները բարոյապես մեղմելու աշխատիլ, ըսելով թե անոնք շահախնդիր մարդիկ են և այլն. Ձտեսանք երեսփոխանական ժողովո ներքին կանոնադրութեանը, որպեսզի հասկըննայինք թե՝ հոն ամեն մարդ ազատ է խմբագիրները ուզածին պես լվալու. և թե այս խմբագիրները քան սահմանադրութեան իրավունքը պիտի չունենան իրենց դեմ եղած հարձակմանց դեմ բողոքելով ինքզինքին արդարացնելու. միայն սա տեսանք երեսփոխանական ժողովո մեջ, որ այն լեզուն, զոր գործածած է Վահէ. Մաճառ պէյ գավեշտական խմբագրաց նկատմամբ, չեն գործածած մինչև հիմա գավեշտական թերթերը, որոնց խափանումը կը խնդրեն Վահէ. Մաճառ պէյ: Ի՞նչ օգուտ կրնան ունենալ ասկից վերջը գավեշտական թերթերը, երբ անոնց խմբագիրները հանդիպելի նախատանաց և անարգանաց ենթակա կըլլան այս ժողովո մեջ երեսփոխանաց ոմանց կողմանե. Ինչպես խզճի մտոք կրնա աշխատիլ գավեշտական թերթի մը խմբագիրը, երբ իրեն հրամայողը (Մաճառ պէյ) այսչափ հակակրութեան և ատելութեան կը տածանեն իրեն դեմ. Ինչպես ինքզինքը ապահով կրնա նկատել պարտուկյա մը, երբ իր տերն իրեն հանդիպելի ըսի թե՝ դու շահախնդիր մեկն ես, դու ինչսան գաս բան մը գրած չունիս: Ինչ ա՛ռ բաց ըսենք Վահէ. Մաճառ պէյը երեսփոխանական ժողովին մեջ գավեշտական թերթերուն այսչափ աննպաստ վկայութիւնները տալեն ետքը, այսինքն ըստ յուր կարծեցյոյ՝ անոնց ջնջտակար ըլլալնուն համոզվելեն ետքը, ինչպե՞ս ուզած ժամանակ ուզած թերթը չխափանե: Տեղութեան օգուտը խորհելով անշուշտ. որովհետև եթե չխափանե՝ կամ իր տված վկայութեանները հետս կոչած պիտի ըլլա, կամ

իր պաշտոնը՝ ազնիվ չհատարկելով՝ թող տված պիտի ըլլա զա-
վեշտական թերթերուն, որ անթիվ վնասներ հասցուցեն հասա-
րակութեյան։

— Բայց և այնպես խոստովանելու է, որ երեսփոխանա-
կան ժողովս մէջ բացառութեյուն չեն գործածած. իսկ եթե ան-
բարոյականութեյուն տարածող թերթեր կան, ինչո՞ւ Տպագրական
տեսչութեյունը զանոնք չպատժէ։

— Օրինակի համար, շատ անգամ անանկ եղելութեյուններ
կը պատմեն, որոնք կրնան ահանջները վիրավորել։

— Զարմանալի բան... մարդիկ երկնչին կինիկներոյն և աղ-
ջեկներոյն թատրոն կերթան, չլսված ու քաոսնելի դեպքերու
հանդիսատես կըլլան, ոչ ականջնին կը վիրավորվի, ոչ ալ աչ-
քերնին. և դուրս ելած ատեննին բարոյական դաս մ'ալ առիմ[92]
կըսեն. իսկ երբ ամենեն համեստ լեզուով գրված անառակութեյան
դեպք մը կարդան զավեշտական թերթի մը մեջ, խստու-
թեյնին կը վիրավորվի և իրենք ալ կսկսին պոռալ. «ասա ինչ
անբարոյութեյուն է, էֆենտիմ. գրելու բան չկայ տե՛ ան գրես».
բայց կարդացածը թատրոնի մեջ առջի օրվան տեսած խաղին
ամենաթեթև մեկ կտորն է եղեր, գարձյալ կը պոռա. «խա-
փանելու է, էֆենտիմ, գադրեցնելու է, մեղցնելու է, կախելու
է էֆենտիմ»։ Եթե այսպիսի դեպքերու հրատարակութեյունը
բարոյականութեյան դեմ կը կարծվի՝ սխալ է. ընդհակառակն՝
նուիրնիկ բարոյականութեյուն է. ինչպես ամեն թատերախաղեր՝
որոնք անբարոյական դեպքերով լի են, բարոյականութեյան
հիմն ունենան։ Ավազ, որ հասարակութեյունը վարձացնելով անոր
իրավունքները պաշտպանող, անոր դեղձումները ուղղելու նպա-
տակ ունեցող օգտակար թերթերու արժեքը ճանչցված չէ տա-
կավին, ոչ թե ռամկին՝ որ այնչափ սակ չէը տար մեզի, այլ
քանի մը երեսփոխաններեն և Տպագրական տեսչութեյան անօ-
րեն Վահէ. Մաճիա պէյին։

— Իրավունք ունիս։ Մենք բարով։

— Ի՞նչ օգուտ, ուժ չունիմ։ Երթաք բարով[94]։

1877

ԱԶԳ. ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

— *Խնկեր, ուրբաթ օրը Ընդհ. ժողովին[95]) պիտի երթանք։*

— *Չէ, պարապ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ։*

— Ինչու՞ պարապ ըլլան, կը բողոքեն, կառաջարկեն, բանը կելլենեն, առևտրատնտեսություն կըսենն, գուն ձախակողմյան ես, ես աջակողմյան եմ, խոսքս սխալ արձանագրված է, շուկեցեք, ավըեցեք՝ ըսելով...

— Ազգին ծառայություն կըսենն, այնպես չէ՞, արդյոք երեսփոխան էկենալները գոնե հիմա սկսան ամչնալ համոզվելով, որ տասնյոթը տարին ի վեր խեղճ ազգի մը գլուխն անցած՝ չնչին և տպավորիչ խնդիրներով զբաղելով՝ ազգին մեջ դատախազության ծավալման արգելք եղան. համոզվեցան արդյոք, որ տասն և յոթը տարվան մեջ ազգին ամենամեծը ծառայություն մը ըրած չենն:

— Անոնց հոգն անգամ չէ, աշխարհ կործանի, աշխարհ վերականգնի նե՝ հարյուր տասնյոթը տարի ալ այսպես պիտի շարունակենն[96]:

1877

ԿԱՆՈՆԱՎՈՐՆԵՐՈՒՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆԸ

— Բարի եկար, Խիկար, վանեն կուգաս:

— Չէ, վանեն չեմ գար, բայց ինչու հարցուցիր:

— Գլուխդ ֆես և ոտքդ ոտքի ամուն չեսար ու կարծեցի, որ վանեն կուգաս:

— Վանեցիները ֆես ու ոտքի աման չեն հագնիր:

— Չէ:

— Գլուխ չունեն, ոտք չունեն:

— Ինչու պիտի չունենան. Վանեցիները մեր ազգային իշխանությունը կարծեցիր. գլուխ ալ ունեն ոտք ալ ունեն, բայց գլուխնին բաց պտրտիլ սկսան...

— Ալաֆրանկա ըլլալու համար...

— Ոտքի աման ալ չգործածել սկսան...

— Ոտքի ամաններու վրա ալ ու՞րք դրվեցավ թե կառավարությունը հարուստներու ձիերը առած ըլլալով՝ ոտքամաններն ալ ոտքի ամաններըը տալու որոշում տվին:

— Ոչ մին և ոչ մյուսը:

— Ինչո՞ւ ուրեմն առանց ֆեսի և ոտքի ամանի կը պտըտին:

— Որովհետև վանա մեջ գտնված կանոնավոր զորքերը զեմերնին երդողներուն ոտքի ամաններն ու ֆեսերը կը հափըշտակեն և իրենք կը զործածեն եղեր։ Գյուղերը մտնելով գաղձնին կառնեն եղեր. գաստառուներուն փայտ կրել կուտան եղեր։

— Կանոնավոր զորքերը...

— Աբանց և կանանց, ծերոց և տղայոց ամեն տեսակ չարիք կընեն եղեր։

— Կանոնավոր զորքերը...

— Վանեն գրված նամակի մը նայելով, մարդ չհամաձակիր եղեր դուրս ելնելու։

— Կանոնավոր զորքերը։

— Այո, կանոնավոր զորքերը։

— Կանոնին այսչափ ճշտանալը տեսնվելն հաքը, ինչու. կանոնը չեն վերցներ այդ զորաց մեջինն։

— Ով դիտե։ Բայց ինչպես կըլլա, որ տեղական կառավարությունը թող կուտա որ...

— Տեղական կառավարությունը հոն է մի։

— Հոն է, յա...

— Ի՞նչ գիտեմ, այդ լսածներդ լսելի նե՝ կարծեցի, որ տեղական կառավարությունը այդ զորաց ձեռքն է։

— Չէ, բայց կը զարմանամ, թե կառավարը ինչպես ձայն չհաներ։

— Ինչպե՞ս գիտես, որ այդ խեղճին ալ ոտքի ամաններն ու ֆեսը չեն առած։

— Բայց ինչու ձայն չհաներ։

— Ինչպե՞ս գիտես, որ զորքերը անոր ձայնն ալ չեն առած, քանի որ կըսես՝ թե ամեն գաղձնին կառնեն ու կը տանին։

— Ներեցեք, Եփկար, ձեզի բան մը պիտի հիշեցնեմ, որովհետև քու հիշողությունդ տկար է։

— Պարտքի մասին տկար, իսկ առնելիքի մասին խիստ զորավոր է, կըսեր առնոք Սոկրատը ծաղրող կատակերգուն[97]։ Հիշեցուցեք։

— Կը խոստովանիք ուրեմն, թե պարտքի մասին տկար է հիշողությունդիդ...

— Այո, ըստ տիրող սովորության։

— Ուստի ես ալ ձեր մեկ պարտքը պիտի հիշեցնեմ ձեզ...

զի, այն է, թե լեզունիդ քիչ մը չափավորեցիկը և այնպես խոսեցիկը։

— Ես ամիս մը խորհեցա և գործածելիք լեզուս որոշեցի, և ինչ ըսի որ։ Վանեն Մանզումեի գլուխ նամակի մը ըսածները պատմեցիր ինձի, ես ալ անոնց վերյուշ հարցուփներ ըրի։

— Այո, բայց և այնպես...

— Սանասարեանդ որ Հայաստանի մեջ գործված անիրավութիւնները Օսմանյան երեսփոխանական ժողովին մեջ ալ վավերացվեցան միաձայն հավանութեամբ։

— Այո, բայց և այնպես...

— Ցավերնիս հայտնելու ենք, որ բարեխնամ կառավարութիւնը իմանա և հարցուփն վանա կուսակալին, թե ինչ կընեն ան տեղը։ Եթե ասկից առաջ ունենայինք խոսելու հիմակվան ազատութիւնը, զոր Սահմանադրութիւնը շնորհեց մեզի, այս հարստահարութիւնները շատուց կը վերնային։

— Այո, բայց և այնպես... ինչ հարկ կա... ըսե ինձի, եթե վանեն չես գար՝ ինչ եղան ուրեմն ֆեսդ ու ոտքի ամաններդ։

— Երեկ իրիկուն մեծ ընկերութեան մը մեջ վիճատ խաղցեր, բաներեմ։

— Հասկցա, աղնվական չերքեզներու հանդպելը եա։

— Այո, միաք բարով։

— Երթաք բարով, չորեքշաբթի կսպասեմ։

— Կու գամ[98]։

1877

ԽԻԿԱՐ Վ...ԻՆ ՀԵՏ[99]

— Բարև, վախմափայլ պեյ։

— Բարի եկար։ Սա աստղերը...

— Շատ ուրախ եղա իմանալով, որ նորեն խմբագրական աստիաբեղ իշնալով ձեր քաղաքական խորհրդածութիւններով պիտի լուսավորիք զմեզ։

— Ո՞վ կարող է պիտնալ երկինքի երկայնութիւնը, լայնութիւնն և խորութիւնը. ով գիտցած է, թե որչափ աստղ կա երկինքի երեսը և որչափ երկինքի կռնակը։

— Հիմա ամեն մարդ հայտ խնդիրով զբաղած ըլլալով՝ ուր որ քաղաքական լուր մը կամ հոդված մը տեսնեն՝ աչքը հոն կը դարձնեն։

— Ո՞վ կրնա ըսել, թե այդ աստղերը մեր բնակած աստ-

դէն պզտիկ են թէ մեծ. ով կրնա դիտնալ, թէ այդ աստղերը բանիթալոն կը հագնին թէ շալ վար։

— Հարկավ այս օրերս Ամսաբոխ և Ռումանիոս բռնած ընթացքին վրա ազովը դիտողութիւններ կընենք։ Անտրասի [100] ինչ վիճակի մէջ է։

— Քանի՞ մխիթար տարի է արդյոք աշխարհիս առեղծվիլը. ոմանք սա չափ կըսեն, ոմանք նա չափ, իսկ ես կըսեմ, թէ աշխարհիս առեղծվելն շատ առաջ է աշխարհիս առեղծումը։

— Ժողովրդյան վիճակը իրավ շատ անտանելի է, ամեն մարդ իրիկվան հացը կը խորհի. սա հաւաստիքյան լուրերու վրա ինչ կարծիք ունիք։

— Ժամանակին ալ ժամանակն առաջ է. հրամմեցէք, ըսեք, ինձի, նայինք, ժամանակը որ ժամանակ եղած է, ժամանակը աշխարհն ելած է, թէ աշխարհը ժամանակն, թէ երկուքն ալ իրարու մէջ են։ Այդ, քանի որ ասոնք լուծված չենք մենք ալ...

— Ձորս դուբուշեն վար չպիտի կրնանք ուտել հացը, այնպես չէ՞։ Կոլչագոֆ [101] իշխանը ինչ ջուրի վրա է։ Լորա Տերպլին [102] ինչ քաղաքականութիւն պիտի բռնե։

— Քանի որ այսպիսիներեն հայհոյութիւնը չվերնա, այս երկիրը չբարեկարգվիր. մեր կառավարութիւնը հիմա պատերազմի հոգը և ուրիշ գործերը թողլով, այսպիսիներեն հայհոյութիւնը վերցնելու է, և եթե չհաջողի վերցնել՝ Բարիզեն ակադեմիայի անդամները և կամ ուրիշ կրթյալ և գիտնական մարդիկ բերելու և այսպիսի ընելու է, մեր ազգս երջանկութիւնը այսպիսիներեն, բարեկարգութենեն կախում ունի. և եթե այսպես չըլլար՝ ինչու այսչափ կարևորութիւն պիտի տայի այս խնդրոյն և չորս սյունակ պիտի գոհի, քանի՝ որ չորս տող իսկ ալիլորդ էր։

— Հայհոյութիւն ընողին տուգանք առնելու է։

— Շատ անիրավութիւններ եղած են։

— Ներեցեք, մինչև որ երկինք աստղերուն թիվը չգիտցվի, մինչև որ այսպիսիներու հայհոյութիւնը չվերնա, չեմ կրնար ուրիշ խնդրո վրա խոսելով ժամավաճառութիւն ընել, աստղ և այսպիսի. ասոնք միայն կրնան դմեզ խաբել։

— Ջարմանալի եք, պէյ, ժամանակավ Մեհմոդայի [103] մէջ հայհոյեցիք, հայհոյեցիք, գործերնիդ լիցուցիք և հիմա չեք ուզեր, որ ուրիշները նույն ազատութիւնը վայելեն։ Կրնաք ըսել, թէ շատերուն դասագիրք մը եղած չըլլա հին Մեհմոդա-

նները։ Երկրորդ՝ հայհոյութիան համար տուգանք առաջարկելու հարկ չկա, որովհետև արդեն կա. ով որ դինքը մեկն մը անպատվական կը կարծե, հայհոյողին դեմ դատ վարելու և պատժել տալու իրավունքն ունի։ Կըսեն թե՝ զեղծում մը տուգանքով չվերցվիր, այլ դատախարակութիամբ և այս ըսվածը դուք ալ ընդունած եք, քանի որ այուբյուճինները, խայբխճինները մեջ շատ կը գտնեք այս ախտը։ Թողունք հիմա այուբյուճինները և խայբխճինները ու...

— Հապա ատաղձը, ատաղձը...

— Ատաղձուն գալով՝ անոնք ալ մեղի հետ մեկտեղ ստեղծված են, ատաղձուն թիվն ալ այնչափ է, որչափ որ օրինակ կը գտնվի հոդվածներուդ մեջ։

— Իրավունք ունիս, ես օրինակը շատ կը գործածեմ. երկու խոսքին մեջ օրինակ մը կուգայ կուտամ. աս իմ սովորութիյունս է։ Հապա այուբյուճինները։

— Այդ գործը դուք ինձի ձգեցեք, և սկսեցեք ձեր քաղաքական խորհրդածութիյանց։

— Սա այուբյուճիններուն օձիքին բռնե և թող մի տալ մինչև որ առանց հայհոյելու խոսիլ սորվին։

— Շատ լավ[104]։

1877

— Ո՞վ է մեղավորը։

— Աստատուր սրբազանը[105]։

— Չէ, Թիկար, այս անունով տեսարակ մը եղած է, չկալ պացիր։

— Չկարդացի, մեղավորնիքը գրած է մեջը։

— Այո։

— Անանկ է նե՝ Պողոս վարդապետն[106] ալ հոն ըլլալու է։

— Մեղավոր կանանց վրա գրված է, անոնց պճնասիրութիյան և անպարկեշտութիյան վրա գրված ազգոր տեսարակ մ'է, բայց նկու տես, որ Պողոս կինիկներն հարվածելու տեղ Բարիզի կնիկներն հարվածեր է։

— Թերևս Պողոս մեղավոր կնիկներեն վախցեր է, կամ թերևս Պողոս մեջ մեղավոր կնիկ չկա։ Ի՞նչ գիտես, գրողին հարցուցիր։

— Ո՛չ։

— Հարցուր, անանկ է նե։

— Շատ ապրէ, ով պ. Հ. Ա. ինչու համար մեր ազգին կանանց վրայօք չես խոսիր ու Բարիզի կանանց վրա կը խոսիս[107]։

1875

ՍԱՆՐ ԼՈՒՐԵՐ

— Ի՞նչ են տարինները, մայրիկ։
— Անգիի աշխարհին սուբհանդակները։
— Ի՞նչ կը տանին կը բերեն։
— Անցյալ սուբհանդակը Բնբյուբլիքը բերաւ, վերջին սուբհանդակը Նապոլեոնը[108] տարաւ։
— Հապա նոր երկու սուբհանդակը ինչ բերաւ։
— Դեռ անոր չանթհանները չբացվեցան։

* * *

Անցյալ շաբթու եբեսթոխանական ժողովը ցրվելեն առքը երկու երեսփոխանք կամուրջին վրա կեցած կը խոսեին։
— Սա պաարլիաքին շրջանակեն դուրս ելնել ուզելուն վրա ինչ կարծիք ունիս. որ կոմմեն ես դուն։
— Ես Իւսկիւտարեն[109] եմ։

* * *

1872-ը վոխանակվելիս մը քաշիր է *1873*-ին սա խոստումով։ Թվականես երկու ամիս պայմանաժամով հաճեցիք վճարել եպիկոսոս մը առ պ. Պուբրա և իմ հաշվույս անցուցիք։

1872

* * *

— Տիեզերական տարեցույցը[110] կարդացիր։
— Կարդացի։
— Օսմանյան կառավարութեյան ըրած վոխառութեյունները երկու թուղթ գրաված են։
— Ուրիշ մեջդ չկա՞ր դանդաղ քիչ մը համառոտելու։
— Այո, տակը շաբունակելի մը գրվելու էր։

* * *

(ՕՐԹԱԳԵՂԻ ԹԱՏՐՈՆԻՆ ԱՌ ՊՏՈՒՓԵԻՆ ՄԵՋ)

— *Հայրիկ, այս զանգակը ո՞ւսկից կը քաշեն։*

— *Թատերաբեմեն։*

— *Ինչո՞ւ համար։*

— *Հանդիսականաց իմաց տալու համար, որ վարագոյրը բացվելուն ժամանակը եկած է։*

— *Ա՛նանկ է նե՛ հայրիկ, դուն ալ զանգակ մը տո՛ւ, շնային մեջ կախե, թե՛ն ալ մինչև հոս երկնցուր, ես ալ երբեմն ասկից կը քաշեմ։*

— *Է՛յ, քաշելով ինչ կըլլա, ինչո՞ւ համար պիտի քաշես։*

— *Իմաց տալու համար, որ վարագոյրին բացվելուն ժամանակին եկած է։*

* * *

Ծանուցումներու ջրհեղեղ մը կը գուշակվի այս տարի։

Մոտ օրերս այնքան շատցան, որ Մասխ[112]) լերան մինչև երբորդ երեսին սկիզբը բարձրացեր են։

Շատ հավանական է, որ քանի մը օրեն ջրհեղեղը սասանկանա։ Ասոր համար Մեղուն[113]) հիմակվընեն տապան[114]) մը պատրաստած է։

Մեղուի տապանը Մասխի գագաթը նստելուն պես, հասկըցեր, որ ծանուցումներու ջրհեղեղեն Մասխի Ռաղաքականը, Ազգայինը, Բանասիրականը խեղդվեր և միայն գագաթը կը մեռնվի։

* * *

ՎԱՐԾԱՊԵՏԻ ՄԸ ԲԱԼԹՈՆ ԽՄԲԱԳՐԻ ՄԸ
ՊԱՏՈՒՏԱՒ ԲԱՆԹԱԼՈՆԻՆ ՀԵՏ

— *Շնորհավոր նոր տարի, պարոն բանթալոն, աստված շատ տարիներու հասցնե։*

— *Նամա... հավատա... նապես ձեզի ալ։*

— *Տարին անցուցիր, թշվառականի[115]);*

1873

— *Վարժապե՛տ, ինչո՞ւ մեր լեզվին բառերը սեռ չունին։*

— *Ունին, տղա՛, կինը իգական է, այրը արականն։*

— Բայց ուրիշ ազգերը հոգի չունեցողներուն ալ մեկ տեղ հաւակացուցած են

— Մենք ալ հաւակացուցած ենք, ըսե ինձի հոգի չունեցող մը և ինչ տեղ ուենալը ըսեմ։

— Քաղաքական ժողովը[116]) ինչ տեղն է։

— Իգական է, տղա։

— Հապա Կրոնական ժողովը[117])։

— Արական է։

— Ասոր համար է ուրեմն, որ ասոնց երկուքն միանալուն պես՝ խառն ժողով կը ծնի։

* * *

— Հայրիկ, երեկի մարդ մը ըսեր է՝ թե սատկը ամեն քան կընե, հապա բան մը չընողը ո՞վ է։

— Ընդհանուր ժողովն[118]) է, տղա։

* * *

(երկու գաղղիապետաց մէջ)

— Էսքեքը վուդրեք լը բրոբրիեթեր աը վոթրը բառոլ։

— Նո մոնսիէ ժան, այուի լը լոքաթեր[119])։

* * *

— Ըսե ինձի Մելոս, ինչ տարբերութիւն կա Օսյան[120]) և Պեկյան[121]) երես վոխան էֆենտիներու մէջտեղը։

— Ասկե դյուրին ինչ կա. առանցինը առանց խոսելու կը խորհի, իսկ երկրորդը առանց խորհելու կը խոսի։

* * *

(21 թիվ ՇՈԳԵՆԱՎԱՒՆ ՄԵՋ)

Պիլեթճին.— Պիլեթ չե՞ք առներ, տուտուս։

— Պիտի առնեմ։

— Ո՞ւր պիտի երթաք։

— Ես ինչ գիտնամ։

— Ո՞վ գետե հապա։

— Շոգենաւը։

— Ինչո՞ւ։

— Հապա առջի օրը կամուրջին[122]) նատա Գալաթիա[123]) ձրիաւոր համարս, շոգենաւը Բուրս չեմ[124]) տարաւ։

— Այն օրը ծովը կատաղած էր և չկրցաւ մյուս նաւամատոյցներուն մօտենալ։

Ամեն անգամ շոգենաւը ուզած տեղերնուդ կը ձգեր ձեզի, տարին անգամ մ'ալ իր ուզած տեղը ձգեր է նե՝ մե՞ծ բան է մի։

* * *

Գագղիական թերթերուն մեկուն մեջ սա ծանուցումը կը կարդացուի.

«Մարդուն մեկը կնիկը կորսուած ըլլալուն՝ մեկ ոսկի կուտա գայն չգտնողին»։

Այս մարդը չհանգչիլանա նե, ազեկ։

* * *

Մանզումեի մեջ Իւթիւֆյան ստորագրութեամբ «Արեգակնային դրութիւն» վերնագրով հոդված մը կը կարդամք։

Սուրն հոդվածին հառաջաբանը այսպես կսկսի.

«Երբ գլուխնիս վեր վերցնենք՝ երկնից երեսը աստղեր կը տեսնենք, որ մոլորելնուն համար մոլորակ կըսենք, ևայլն»։

Վերջաբանն ալ սա է.

«Եվ արար աստված զմարդ ի պատկերի յուրում»։

Մարդուս աստուծո պատկերը կրկը՝ արեգակնային դրութիւն է եղեր։

Ավելորդ է ըսել, որ մարդուս աստղերուն ունեցած հեռավորութիւնը չափ հեռու է սուրն հոդվածին վերջաբանը հառաջաբանեն։

Հառաջաբանը երկրիս երեսն է, վերջաբանն ալ երկրիս վրա։ Մի՛ացուր սրվոնք տեսնենք, ո՞վ մոլորակդ Մանզումեի ճրկինից։

* * *

Վարժապետ.— Ծո՛, կարմպետ, անանկ գոյական անուն մը պիտի ինձի, որ մինակ երևակայութիւնս մէջ գոյութիւն ունենայ։

— Գոմ, վարժապետ։

— Ի՞նչ է։

— Ստակ։

— Վայ, թշուառական ուսկի՞ց գտար առիկա։

— Մկրտիչին տէրեկին մէջ գտա, վարժապետ[126]։

1873

Առաջի օրը Թրամվեյի աշջեվէն վազողներուն մեկուն տաքը տահելով՝ մտածեցայ, որ Թրամվեյին տակը պիտի մնայի։ Ընկերութիւնը այս մասին ալ անհոգ չէ, այս խնդիրներուն ալ մեզի է. և տանկ կառքերուն տակէն վազելով՝ օր մը չէ օր մը կառքերուն տակը պիտի մնայի։

— Ի՞նչ է տար ճարը։

— Կառքերուն հետևէն վազելու են որպեսզի իյնան նե՝ Թրամվեյի տակը չերթան։

* * *

Մասիս անցյալ շաբթու քաղաքականութեան հորիզոնին վրա սև կետեր տեսեր է եղեր։

Թող Մասիս փառք տա աստուծո, որ այդ կետերը սև են եղեր, որովհետև եթե ճերմակ ըլլային չպիտի կրնար տեսնել զանոնք։

* * *

— Տղաս, ճւր է ոտքի ամաններդ։

— Մայրիկ, Ալամպրայի աշջեվէն անցած առենս ցեխերուն մեջ կորսնցայ, փնտռեցինք, փնտռեցինք չկրցանք գտնալ։

* * *

— Ո՞ւր կը վազես առանկ։

— Տոքթոր Ֆիշերի։

— Ի՞նչ պիտի ընես հոն։
— Աչքերս պիտի ցցունեմ։
— Աչքերդ բան մը չունին։
— Ի՞նչպես չունին, հանգամանագիտության մասնակցեցա և ցուցակին մեջ անունս չեմ կրնար կոր տեսնել։

* * *

— Ի՞նչ տարբերություն կա կույրի մը և նայողի մեջ։
— Սա տարբերությունը կա, որ առաջինը չի տեսներ. ինչ որ ամեն մարդ կը տեսնե, իսկ երկրորդը կը տեսնե, ինչ որ և ոչ մեկ մարդ մը կը տեսնե։
Ոլ եղիշե[126]) բնականը համբուրեմ։

* * *

— Թագաքահան ժողովը ինչ ըրավ մինչև հիմա։
— Անոր ասոր առատ առատ շնորհակալության քվե ավավ։
— Զըսե՞ս, որ իրեն համար շնորհակալության քվե չմնաց։

* * *

— Ամուսնության կըսեն նե՝ ինչ է հայրիկ։
— Տրամաբանական ձեռնարկություն, մ՚է, աղա, որուն առաջին նախադասությունը այրն է, երկրորդը՝ կինը, ավելորդ է ըսել, որ եղրակացություններն ալ զավակներն են։
— Ըսածնիդ սխալ է, հայրիկ, մեկ ձեռնարկութենեն քանի՞ եղրակացություն կելնե։
— Մեկ եղրակացություն կելնե ամա... իմաստակները չլինեն մի յա, անոնց հետ գլուխ կելնվի՞ մի, երբեմն մեկ ձեռնարկութենեն երկու եղրակացություն կը հանեն[127])։

1873

ԽԱՂԱՄՈՒԹՅՈՒՆ

Հայերը այս ախտին մեջ ալ բավական հառաջադիմություն ըրին։ Տուներու մեջ, արձարաններու մեջ, ամեն պիշեր պանդա կը բացվի, ամեն պիշեր կռիվ կըլլա։

Այս ախտին ազատելու համար մի ջոց մը կա մեայն, այն է, ստակ չունենալ։

Կը բավեմազրենք ուրեմն, որ մեր խաղամոլ ազգայինք քոլոր ստակնին կորսնցնեն՝ որպեսզի այս ախտին ազատին։ Կը վստահինք նաև, որ չեռազցող ազգայինք ալ ստակ չվաստըկին, որպեսզի այս ախտին չբռնվին։

Պ. Կիրակոսը եղեւելի ընտանիքե և ազնիվ բնավորութեան տեր մարդ մ'է, իր մեկ հանցանքը խաղամոլութիւնն է։

Պ. Կիրակոսը առջի գիշեր ժամը վեցին միջոցները բարկութեամբ տուն կը մտնե։

— Ինչո՞ւ բարկացեր հա, սիրելի ամուսինս, կը հարցնե կնիկը։

— Ձգե՛, ասովածդ սիրես նե՝ երկուքնոց մը բանալու ըլլար նե՝ հարյուր ոսկի պիտի վաստկեի, տուր սա բանալին։

— Սնտուկին մեջ բան չկա, բանալին ինչ պիտի ընես։

— Տուր կըսեմ նե՝ հարկավ բան մը գիտեմ։

Պ. Կիրակոսը բանալին կառնե, սնտուկը կը բանա և մեջեն արծաթեայ նաղկեզե մը կառնե, կերթա։

Պ. Կիրակոսը ժամե մը կը գառնա։

— Ո՛հ, կնիկ, թե որ չորսնոց մը բանալու ըլլար՝ երկու հարյուր ոսկի պիտի վաստկեի։

— Ըսել է որ երկուքնոց չորսնոց չկա թուղթախաղին մեջ։

— Ձգե՛, ասովածդ սիրես նե՝ սա անգամ հինգնոցի պիտի քաշել տամ, տուր սա բանալին։

Պ. Կիրակոսը սնտուկը կը բանա ու մեջը սամուր քյուրք մը գտնելով՝ ան կառնե կերթա ու մեկուկես ժամ հոքը կը գառնա։

— Ա՛ս անգամ ալ չորսնոց ելավ թշվառականը։

— Ալ մ'երթար։

— Ձերթամ մը, հապա ատ ստակները։

Պ. Կիրակոսը պանքան տանելու ուրիշ բան չգտնելով՝ ինք կերթա և բալթոն ու բանթալոնն ալ հոն ձգելով՝ տուն կը գառնա։

— Ի՞նչ է սա, սիրելի էրիկս, գարձյալ չորսնոց ելավ։

— Ա՛յս անգամ երկուքնոց ելավ, մեկը բալթոս և մյուսը քանթալոնս։

Պ. Կիրակոսի ազգականներեն ոմանք գինքը այս վիճակին մեջ տեսած ըլլալնուն՝ հետևյալ օրը կնկանը կը հարցնեին.

— Ի՞նչ էր երկանդ երեկ պիշերվան վիճակը։

— Բան մը չէ, երկուքնոցին գլխուն տակն է։

Գ. Կիրակոսը քանի մը օր է դուրս չելներ եղեր, հետևապես խաղամոլութենն ևս կեցեր է եղեր։

Գ. Կիրակոսը Թող բարի օրինակ ըլլայ մյուս խաղամոլներուն[128]։

1872

ԽՆԴՐՈՑ ՄԵՌՅԱԼՆ Ի ՏԵՍԼՅԱՆՆ ՄԵՂՈՒԻ

Ընթերցող ես ալ երազ կը տեսնեմ, և շիտակը հասկնալ կուզես նե՝ երկու անգամ կը տեսնեմ, մեկը արթնութեյանս մեջ և մեկալը քնութեյս մեջ։ միայն սա պայմանով, որ արթնութեյանս մեջ ուզած երազներս կը տեսնեմ, այսինքն զվարթ և մարդս երջանիկ ընող երազներ։

Երեկ իրիկուն անկողին մտնելուս պես՝ դեռ չքնացած՝ սկսա երազել։ Բազդը անանկ բերավ, որ այս երազիս մեջ, չեյտեմ ինչպես եղավ՝ մի լիոնավոր լիրաներ վաստկեցա։

Նախ հացագործ Զաքար աղային աղջին առնելիքը վճարեցի։ վերջը Ներսեսյանը կանչեցի, հազար ոսկի ալ անոր տվի։ ատ ատ ոսկինները, և Իճատիեի[129]) դպրոցին վրայեն ջնջե քու անունդ և իմինս փորել տուր։

Այս գործն ալ լմնցնելեն ետքը, շիտակ Բերա[130]) երթալ։ Փողոցները ցեխոտ ըլլալուն՝ չկրնալով մեկ կողմեն միսյոի կողմը անցնել, քամիխոնին առակ ավի, որ մեծ փողոցին մեջ քանի մը կամարջ շինե, որպեսզի մեկը կարող ըլլա մեկ խանութեն անոր դիմացի խանութը անցնելու։

Այս մեծագործութեյունն ընելեն ետքը՝ շիտակ գերեզմանատունը վազեցի, անոր շուրջը խակուշ անառիկ բերդերուս պես քարէ պատ մը քաշեցի։ Մեջը մատ, եկեղեցին ի հիմանե նորոգելով՝ գմբեթավոր և ընդարձակ եկեղեցի մը շինել տվի։ եկեղեցիին գրան վրան ալ այսպես փորագրել տվի «Շինեցավ արդյամբ Մեղուի ի թվականին տեսլյանն Մեղուի»։

Հայերը ատ տեսնելուն պես, ինձի վազեցին. աշխարհս մինչև վերջը ինձի երախտապարտ ծնալու երդում ըրին։ Մեկը ձեռքս կը համբուրեր, անդին ուրիշ մը ի ծունր իջած կը խնկարկեր զիս, ուրիշ մը ոտվընտս պլլված՝ չէր թողուր որ

քալեմ, ամենքը կուպային բալթոյին բեհլիը համբուրելու, անանկ որ, ճարս հատավ, բալթոս հանեցի և ծառի մը կախեցի, որ հոն երթան համբուրեն, ապա պրեցի ալ, որ համբուրելեն վերջը վրայի տիրմիրն ֆրչայով մը սրբեն։

Հասարակութեյան կողմե տրված այս երախտագիտական ցուցդերով ալքշիս՝ սկսա թռչիլ ու վեր բարձրանալ, այնչափ բարձրացա, որ վերջապես գետնին տակը մտա։

Ինսայեր էի, և գեղ երազները՝ պանդուխտ հալու երազնեին իսկ շատ տհանելով՝ դիս մեռելոց մեջ տարած էին։

Ոսկրենեու տոնավաճառին մեջ կը գտնվի. չէի խոսեր, չէի տեսներ, մնած էի

Կմախքները դիս մեռյալ տեսնելնուն վրա սրտմտած՝ ամենը մեկեն վրաս վազեցին և ըսին, զարթիր, և ըսե՛ մեզ, մեր հանգստութեյունը խռովելո՞ եկար հոս, ըսե՛, չէ նե՝ հիմա զքեզ կը բզքտա... ըսելնուն չծնաց շուտով նոր հոգի զգեցա, չէ նե՝ իրավ պիտի բզքտեին։

Ո՜հ, ըսին ամենքը միաբերան, հայրենիքե աքսորյալ, լեռներու, ձորերու մեջ թափառյալ, անոդոք բազդեն հալածյալ՝ թշվառ կյանք մը անցնելնես հետո գերեզմանին ալ պիտի աքսորվինք[131]։ Ուրեմն գերեզմանին մեջ ալ չիք հանգստութեյուն հայոց համար. բայց ոչ, ոչ, եկե՛ք կենդանի հայերը մեռյալ են, մեռյալ հայերը դեռ կենդանի են . . . . . .

. . . . . .

Մեռելոց համար լրագրական տեսչութեյուն չըլլալուն[132] ուրիշ շատ խոսքեր ալ ըրին, բայց մեր... մեր... մեր միտքը չգիտցա։

Մեր միտքը չգիտցած խոսքերը ըսելեն հետո՝ երբ բաժնըվելու վրա էին, մեկը եկավ ատոնց մեջ կայնեցավ։ Գրպանեն յոթը ութը քսակ ոսկի հանեց. չգիտեմ, որ իմ ոսկիներե՞ս գողցած էր, չէ նե՝ ան ալ ինձի պես երազ տեսած էր։

Ոսկինները ցուցյ տալով՝ ըսավ իրենց, թե որ ատոնք տալու ըլլամ նե՝ դուբս կելնե՞ք։ Մեկ մասը այո, ըսավ, մյուս մասը՝ ոչ, և ինչպես որ ամեն կռիվ այսեն և ոչեն կելնե՝ մեծ պատերազմ ծագեցավ իրենց մեջ։

Վախես կը զգայի։

Պատերազմի միջոցին պատահաբար մարդ մը եկավ զրոշ ի ձեռին, զրոշին վրա գրված էր. կրոնքը արծաթասեր չէ. ատոր վրա կռիվը դադրեցավ և ամենքը մխաբանեցան։

Մեռյալ հայոց միաբանութեանը վրա զգացած ուրախութենես ալեծնյա և տեսա որ՝ ոչ Զաքար ազան ոտակը առեր է, ոչ ալ Բերայի մեջ կամուրջ շինվեր է. հելի գերեզմանին շուրջը քաշած պատս և շինած եկեղեցիս չկրցան ինչպես եղեր՝ անհայտ եղած են։

Թող ըլլան, հարկավ մոռ օրերս երազ մ՚ալ կը տեսնեմ և առջի շինածես ավելի հաստատ կը շինեմ։

Մի խնդաք, հարուստներս, եթե իմ երազներս ձեզի համար իրողութիւններ չեն, ձեր իրողութիւններն ինձի համար երազներ են. և ժամանակը եթե իրողութիւնները երազի կը դարձնէ՝ հարկավ օր մ՚ալ երազները իրականութեան կը դարձընե[133]։

1882

ՀԵԼՎԱՃԻԻՆ ԼԱՊՏԵՐԸ

Զգուշացիր, ընթերցող, չըլլա որ ծխախոտ առնելու գացած առենդ՝ ածուխ առնես և ետ դառնաս, չըլլա որ հելվա առնել ուզած ժամանակդ, հելվաճիին լապտերն առնես ու երթաս։

Անցյալ չորեքշաբթի օրը ժամը իրիկվան մեկուկեսին առներները մեր բաբեկամներեն մեկը տունեն դուրս կելնե ու Սելամսըզ[134]) կերթա հոն կայնող հելվաճիներուն մեկին հարյուր տրամ հելվա առնելու։

Իրեն ծանոթ հելվաճիի մը առջևը կը կայնի, և շունատան յուզ սիրտ հելվա վեր ըսելով[135]), ոտակը կուտա, և փոխանակ հելվան առնելու՝ թապլաչին վրա եղող լապտերը կառնե ու կսկսի քալել։

Հելվաճին կը տեսնե, որ իր մյուշթերին տալըընութեամբ լապտերը առեր կերթա հոնեն կսկսի պոռալ.

— Ցահոո, պանա պաքտանա յանլըշ ալաընըզդ։

— Ներսես յանլըշ, աղամ, հեր աքշամքի մյուշթերիների քանը՞մայորմուսուն։

— Յոք ճանըմ, յանլըշ սեյորում։

— Նե, ըմմնկլի՞ մի սիր։

— Յոք ա քուզում...

— Ուզուն կիտեն հնա[136]), ըսելով՝ մեր բաբեկամը կառնի

կը քալէ։ Հելվաճին ալ եկող մյուշթեբինները չփախցնելու համար թասլային քովը կը վազէ։

Մեր բաբեհամը տունն մտնելուն պես՝ լապտերը ամուսնուն կուտայ, վեր կելնէ ու սեղան կը նստի։

Կերակուրնին ուտելեն ետքը կարպը հելվային կուգայ։ Մեր բաբեհամը ամուսնուն դառնալով կըսէ.

— Բնը նայինք։

— Ի՞նչ բնբեմ։

— Աս գիշեր ինչ տվի ես քեզի։

— Հիմա սըրան է, կեցի սեղանեն ելնենք վերջը կը բնբեմ։

— Քեզի հիմա բե՛ր, կըսեմ կոր։

— Թող Տիգրանը երթա բնբե, դրանը քով կեցեր է։

— Դրանը քով ձգեցիր։

— Հապա, պյուրոյին վրա չպիտի գնեի յա։ Հայտե՛, Տիգրանիկ, գնա բեր, տղա, նայե որ չկոտրես։

— Նայե, որ չիյնաս։

— Ինչպես կընե անանկ բեր։

— Ինչը ինչ է, հելվան խո՛ւլը ալ ունի։

— Ի՞նչպես հելվա։

— Դուն ինչ հասկցար հապա։

— Ինչ պիտի հասկնամ դուն այս գիշեր ֆեներ մը առեր եկեր էիր, հելվա մելվա չունեիր հետդ։

— Մեր բաբեհամը բարկութեյամբ սեղանեն կելնէ և հելվաճին կը վազէ։

— Պե աաամ, պու ֆեներվի հելվա տեյի էլիմին աքըշաբը՞ մտաան նե չըքա՛[137]։

— Ա, քուզում, սանա տուր տեյրուս, սեն ֆեների ալմըշ քաչըյրսուն, էյի քի թասլայըտա քալըրմասըն։

Այս խոսքերն ըլլալեն ետքը մեր բաբեհամը հելվան կառնե, և մոքթուն ետ դարձած տանը՝ իր տունը կաթնելով ուրիշի մը տունը կը մտնե։

Դիպլոմածն ալ անանկ կը բերե, որ նույն տունեն նույն գիշերը անծանոթ հյուրի մը կը սպասեին, որովհետև տանը տերը առտուն դուրս ելած տեղն ըսած էր, թե այս գիշեր հյուր մը պիտի գա, և թե իրմե կանսալ գալու ըլլա նե՝ բարի ընդունելութեյամբ պատվին։

Տանը մեջ եղողները հա մխաթիրնիս եկավ ըսելով խոթթուխեները մտան և վեր հրամցուցին։

— Շատ սպասել ստիք մեզի։

— Բարեկամս չըլլար նե՝ տասա ուշ կը ճնայի, և թե որ ուրիշ մը ըլլար նե՝ այս դիշեր հելվա չպիտի կրնայինք ուտել։

— Ինքը ոնւր ճնաց, ինչո՞ւ չեկավ։

— Ինքը Սելամսըզ կեցեր է։

— Ինչո՞ւ կսպասես հոն։

— Մարդը հելվանեըը չծախած կերթա մի յա։

— Հելվա մի։

— Հելվա, յա։

— Ինչպես հելվա։

— Թախըն հելվասի իշտե։ Կնիկ դուն ալ խոսք չես հասկընալ կոր։

— Կնիկ մի, երաս ազիկ նայե՛, դուն ով դիտցար զիս, ես անանկ կնիկներեն չեմ։

Մեր բարեկամը այս խոսքին վրա ուշը՝ զոր նույն իրիկունը թափեր էր, իսկույն կը ժողվե և վերջապես կը հաջողի հասկնալ՝ թե տալըընությամբ ուրիշի տուն է մտեր։

Ուտած առանց ժամանակ անցնելու ներուսն կը խնդրե և տուներն դուրս ելնելու չմնաբ, դրանը դուրսը կեցող երիտասարդե մը զավազանի երկու հարված կուտե։

— Ինչո՞ւ կը զարնես, ով ես դուն։

— Ես շատուց ի վեր խոլլամիշ կըշնեի կոր քեզի, հելե աս դիշեր ձեռք անցուցի ըսելով՝ հարված մ'ալ կուտա։

— Բայց ով ես դուն։

— Իմ ով ըլլալս քեզի պետք չէ, դուն ամեն դիշեր աս տունը կուգաս կոր եղեր և իմ քորթիկիս հետ սիրահարություն կընես կոր եղեր ըսելով՝ հարված մ'ալ կուտա։

— Պե տատա, սիրահարություն չէ, հելվան, լապտերը . . .

— Չա իշտե, առանց լապտերի կուգաս կոր, որ չճանչցվիս։

— Չէ, քուզում սխալմամբ . . .

— Հարկավ սխալմամբ պիտի ըսես, ըսելով հարված մ'ալ կուտա։

Այս միջոցին տուներն դուրս կելնեն, ճրագին լույսովը սիրահարը կը տեսնե, որ իր հակառակորդը չէ եղեր։ Ուստի նեղութենն խնդրելով։

— Նեղեցե՛ք, պարոն, իրավ որ ձեր ըլլալը գիտնայի նե՝ չէի զարներ։

— Էյ

— Սանքի շատ պզտիկ ինկա ձեզի հետ այսպես վարվելուս համար։

— Էյ։

— Սանքի ափ կընեք։

— Բան մը չէ, ես անանկ բաներուս չեմ բարկանար։

Մեր բարեկամը ուրիշ փորձանքի մ'ալ չհանդիպելու համար՝ վազելով տանը ճամբան կը բռնե, տուները կը հասնի և տուներն ներս մտնելով։

— Կնիկ մեր տունը ա՞ն է մի։

— Չի՛յո՛ւ։

— Դիտեմ ամա, սխալ չըլլա։

— Հելվան ռէր է։

— Հելվան մինակ կերա այս գիշեր, ա՛հ, սա լապաները։

Մեր բարեկամը սանդուխին վրը հինելուս առեն կալոշները հանել կուզե, և մեծավ զարմանոք կը տեսնե, որ կալոշ չկա ոտքը։ Կալոշները գացած տունը մոռցեր էր։ Ուստի պոթինները կը հանե ու վեր կելնե, ու կատակերգության վերջին արարվածն ալ կը պատմե յուր ամուսնուհյն ու կերթա պառկելու։

Մարդկային միտքը սեղանավարներու և վաճառականներու կը նմանի, առևտուր եղած առեն կը հարստանա, չեղած առենը կը սնանկանա։

Ուստի քնավ մարդ անցնելու չէ, քե չափազանցություն կա պատմությանս մեջ։

Զգուշացեր, ընթերցող, չըլլա որ Պոլիս[138]) երթալ ուզած առենդ Բեյա հինես, և հելվա ուտել ուզած առենդ ծեծ ուտես[139])։

1872

ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆՔ ՄՈՏԱՅԻՑ

Կանանց փխառնները ավելի երկար պիտի ըլլան և անոնց բեռները երկինները կհանգչեցնեն առնելով պիտի տանին։

Կանայք երեսուն մեկ կոտրը ճերմակ, մյուս կոտրը կարմիր պիտի քսեն։ Քթերնուն ծայրն ալ սև կետ մը պիտի դնեն։

Գլխարկներուն վրա մեկմեկ կապիկ պիտի դրվի։

Երիտասարդաց բանթալոնները խիստ նեղ պիտի ըլլան և գրպան պիտի չունենան։

Պոթիննները ընդհանրապես քիչ մը պատռտած պիտի ըլլան։

Բանակները գրեթե բոլորովին պարապ պիտի ըլլան։

Առնելիքի տեր մը պիտի ամչնա երթալու յուր առնելիքը ուզելու։

Կանայք քալած առեններին մեջքերնին կոտրելու տեղ գըլուխնին մեյ մը ալ, մեյ մը ձախ միշտ պիտի շարժեն։

Ձմեռվան բալթոները անցյալ տարվան բալթոները պիտի ըլլան. բայց թերս պիտի հագվին։

Վիճենայինն աղջկանց համար մոտացներ պիտի գան, Բուրիզին ալ երկտասարդաց համար։

Աղջիկներուն ոտանք սեկարայի տեղ նարկիլե պիտի խմեն. ոտանք ալ օդիի դեմ լսմ։

Տեսեին մեկը յուր լապենը ծոցը դրած՝ իբրև ծխախոտի քսակ պիտի գործածե։

Թատրոնի Սպինքսը[140]) Ղալաթա Բուլեսկի[141]) հասարակ յամբ պատմոն պիտի գործածե[142])։

1876

ԲԵՐԻՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

Կիմացուներն մեզ, թե Իսկիւտարու Տ. Գ... քահանան անցյալ շաբթու ժողովրդյան ծանուցում մ'ըրած է։

Հիշյալ ծանուցումը հրատարակելով՝ արդո հասարակութեյան ուշադրութեյանը կը ներկայացուներնք։

Ա.հավասիկ.

«Երբեմն երբեմն կը պատահի, որ ձեր խաչները չըացված և մեկ կողմեն չծակված ըլլալով հանդերձ կը պարպվին։ Հայտնի է որ, եթե գոգերը պարպած ըլլային կամ բացած և կամ ծակած պիտի ըլլային խաչն։ Բարեպաշտոն ժողովուրդ, դիտնալու եք, որ բերիներ կան, որոնք խաչները առանց բանալու, առանց ծակելու, անոնց մեջեն ոսկիները կառնեն և անհայտ կըըլլան։ Ասանկ բերի մը այս օրերս բարեպաշտոն մեկու մը խաչն պարպած ըլլալուն համար՝ այսօր լալագին տերողորմյա մը պիտի ըսվի։ Ձեր ասպած ձեր խաչները այն բերիներեն ազատ պահեք. ամեն»։

Բանի որ բերիները Տ. Գ... քահանային գլուխը չըացած

ու չծախած կալոզացիը են անոր ուղեղը առնել տանիլ, Բանայրի դեպքին չհավատալու իրավունք մը չունենք։ Միայն թե հիշյալ քահանան քերիի տեղ եթե ֆանտազիտ բառը գործածեր՝ ավելի տրամաբանական, ավելի զավեշտական կըլլար ու ժողովուրդն ալ ավելի կը խնդացուներ [143])։

1877

ԱՂՋԿԱՆՑ ՊԱՇՎԸՏԻԼԸ

Դեռ Կ. Պոլսո այլ և այլ կողմերը կը գտնվին եղեր մեկեր խավարյալ աղջիկներ՝ որք երիտասարդի մը անցնիլը տեսնելնուն պես, դուռը կամ պատուհանը կը գոցեն և ներս կը փախչեն եղեր։

Երիտասարդին մեկը առջի օրը տասնկ դեպքի մը չհատնեսես ըլլալով՝ մեզի ազաչեց, որ այդ խավարյալ աղջիկները հարվածենք։

Մենք ոչ թե միայն չենք հարվածեր, այլ նաև չենք հարվածեր։

Կը զովենք իրենց այդ պարկեշտ ընթացքը, և կը խրատենք, որ շարունակեն կայն։

Եվ ինչո՞ւ չպիտի պահվըտին. մեկեն թռչուն մը որսորդ մը տեսնելուն պես չը՞ փախչիր։

— Կը փախչի, որպեսզի չբռնվի։

— Ուրեմն աղջիկներն ալ փախչելու են, որ բռնվին [144])։

1872

ՀԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ ՄԸ

Ազգային դաստատուներին մեկն, որ շաբթուս բոլոր օրերը ազգային վարժարանաց մեջ դաս տալով կանցունե, անցյալ կիրակի վարսավիրայի մը խանութը կը մտնե մազերը կտրել տալու։

Խանութին մեջը ուրիշ մը ածիլելու զբաղած ըլլալով՝ կը հրամայե աշակերտին, որ հիշյալ դաստատուին մազերը կտրե։

Աշակերտը որ մազ կտրելու մասին շատ հաջողակ չէր

մկրատը կառնեն և ծառի մը ճյուղերը հատելու պես երկար մա-
ղերը կակռ կտրել այնչափ անկանոն կերպով, որ վարպետը
կատիպվի ուրիշ մը ածիլած մինչդեռ հրահանգ տալ այսպես.

— Քիչ մը ասդին ան, քիչ մը անդին կտրե, աս կողմը
կարճ է, ան կողմը երկար է, մկրատը քովընտի բռնե՛, սանտրը
ուղիղ բռնե՛, եաևեն քիչ մը կտրե՛, ականջին եաևի մազերը
ան, կամաց, ականջը չկարե՛ս, և այլն։

Դատաւորն ան հրահանգները լսելով կըսե.

— Լուր օրերը գլխուս մեջեն բան մը կը սորվին, կիրյակի
օրերն ալ վրայեն[145]։

1875

ԿԱՆԱՅՔ ԵՎ ԱՆՁՐԵՎ

Ինչացին այն է, ըսավ օր մը Գ. Օտյան[146]) էֆենտի Ընդ-
հանուր ժողովո մեջ, որ գիտե պարագաներեն օգուտ քաղել։

Այս ճշմարտութեյան կամացուկ մը հենլով՝ ես ալ ավելցը-
նեմ թե աշխարհիս երեսը գոնվող էակներուն մեջ ամենեն
խելացին գեղեցիկ սեռն է, որ պարագաներեն օգուտ քաղելե զատ
ուրիշ զրաղմունք չունի։

Ամառվան տաք օրերուն մեջ կը տեսնենք որ այս սեռը
յուր կուրծքը բոլորովին կը բանա արդո հասարակութեյան և
բարակ պիւրիւնիկով մը իրենց կուրծքը հասարակութենեն
ծածկել կը կեղծեն. բայց և այնպես իրենց կուրծքը զարձյալ կը
տեսնվի պիւրիւնիկի տակեն, ինչպես որ լուսինը թափանցիկ
ամպոց եաևեն։

Երբ որ ձմեռը գա և փողոցները քիչ մը տղմուտ ըլլան,
շրջազգեստնին մինչև ծունկերնին վեր կը վերցնեն, որով հա-
սարակութեյան ուշադրութեյունը իրենց գոլպաներուն վրա կը
հրավիրեն։

Ահա գեղեցիկ սեռը, ինչպես որ կը տեսնենք, պարագա մը
չվախցներ, ուսկից օգուտ չքաղե։

Մենք ուրեմն խելացի ըլլալու համար պարագաներեն
օգուտ քաղինք և պտոտանք։

Կեցցե ամառ, կեցցե ձմեռ[147])...

1872

ԳՈՐԾՔՈՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Նկատելով՝ որ դադրած թերթերը երկրորդ անգամ հրատարակվելնուն ավելի ընդունելութիւն կը գտնեն արդ հասարակութենեն, նկատելով՝ որ լրագրական տեսչութիւնը անփույթ գտնվեցավ մեր Եփրատը[148]) դադրեցնելու, մենք հաստատվեցանք զայն դադրեցնել ասկե երեք չորս ամիս առաջ։

Նկատելով՝ որ չկրնայինք զայն կանոնավոր կերպով հրատարակել, ստիպվեցանք կանոնավոր կերպով դադրեցնել։

Մենք կը փափաքինք, որ մեր բոլոր գործերը կանոնավոր ըլլան։

Մեկ խոսքով անանկացավ Եփրատ. յուր մեծ բաժանողդացը պարտական միաց. չհուսահատեցավ տակաւին. և ահա իրեն տեղ Մեղու լուրհելով կսկսի հին պարտքը վճարել, նոր պարտքեր պատրաստելու համար։

Առանց պարտքի թերթ չկրնար ըլլալ, քանի որ ամեն օր պարտք և իրավունք կաղաղակեին։

Այս խոսքերն ընդելով՝ կուզենք հասկընալ բոլոր թերթերուն, որ եթե օր մ'ալ իրենք անանկանալ բարեհաճին, չմոռնան իրենց պարտքը վճարել։

Գալով Եփրատա Մեծ. բաժանողդաց, երեք չորս ամիսի չափ պիտենք առանց թերթի թողած ըլլալնուս համար ներումն խնդրելով՝ կը խոստանանք, որ Մեղու պիտի կրնա այս անգամ պիտենք ավելի դոհ ընել ի շնորհս պ. Դոգոյես Իմիի[149])՝ որ ղվարճախոս լրագրի մը համար անսպառ նյութոց գնայուն աղբյուր մ'է։

Դարձեալ փիլիսոփային մեկը կըսե «ժամանակը կանցնի կըսենք, բայց կը սխալինք, ժամանակը կը կենա, մենք ենք, որ կանցնինք»։

Որչափ ատով, անչափ ալ ճշմարտութիւն։ եթե չես հավատար գիտնիներուն հարցուր, որ իրենք կը կենան, փողոցները, տուներըը և պատկող շուներըը կը քալեն։

Եթե ասոր ալ չհավատաս՝ Օսմանիե թատրոնը[150]) գնա և տեսարանին վերևը դրված ժամացույցին նայե. միշտ երեք է,

ոչ առաջ կերթա, ոչ ալ ետ, թատրոնը հինգին ալ սկսի նե՝ իրեքին սկսած կըլլա[151]։

1872

ՊԶՏԻԿ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԸ

— Աբրահամ էֆենտի, ուրիշ գործ մը գտա՞ք։

— Ի՞նչ ըսել կուզեք։

— Այսինքն դեռ պարապ կը պըտռիք կոր, չէ նե՝ գործ մը սկսած եք։

— Ցեր ողորմյա, ես գործ չունիմ։

— Ներեցե՛ք իմացա, որ Պաարխարքարանը ավելորդ պաշտոնյաները պիտի ճանըն եղեր, անոր համար հարցուցի։

— Չէ՛, ես գործիս գլուխն եմ։

— Ինչ որ է, բայց կարծեմ որ, այսօր Թատրոնի խըմբագրատունը մեկը երթալով հայտներ է, թե երկու հարյուր հիսուն ղուրուշ ամսականավ ձեր պաշտոնը ձեղի չափ կատարելու պատրաստ է[152]։

1876

— Տոքթոր, գլխուս ցավուն համար ծավ մտիր ըսեր էիր, ես ալ մտա, և հիմա եկա հարցուննելու՝ թե ծովը աղեկ եկե՞ր է ինձի, թե չէ։

— Գլխուդ ցա՞վը ինչպես է չիյտե՞ս կոր։

— Դուք բժիշկ եք, որչափ ըլլա նե՝ ինձմե աղեկ գիտեք։

— Ձեզմե աղեկ գիտեմ նե՝ գլխուդ ցա՞վը անցած է, բայց քիչ մը ուղեղդ ջլատված է։

— Մաեխս ինչո՞ւ համար լրագրի մը տված լուրը երկու օր ետքը կուտա։

— Որպեսզի կարդացածնիս չմոռնանք[153]։

1875

— Հիվանդնիդ ինչպես եղավ։

— Առաջվան պես է, բոլոր գիշերը չքնանար, մինչև առաւոտ կը հազայ։

— Հազալուն համար չքնանար կոր, չէ նե՝ չքնանալուն համար կը հազա կոր։

— Հայտնի է, որ չքնանալուն համար կը հազա կոր, քնայող մարդը կը հազա։

— Քնանալու համար այնչափ դեղ տվի, օգուտ մը չըրաւ։

— Զըրաւ։

— Բնաւ չքնանար կոր։

— Ամեհնևին։

— Անանկ է նե՝ ավիկա Ուսումնական Խորհրդո[154]) անդամ ընել ավեք։

— Ասիկա մենք ալ խորհեցանք ամա, կը վախնանք կոր որ ան աաեն ալ բնաւ չարթննար[155])։

1875

— Կիրակոս աղա, որսի կերթանա կոր։

— Հրամմեր եք, Մկրիկեր աղա, անցյալ շաբթու գացի։

— Ի՞նչ զարկիր նայինք։

— Որսի շունս։

— Կաբասպետ աղա, սա մեր տղան քովդ առնելը ու ժամագործութիւն սորվեցնելը։

— Դպրոց գացած է։

— Այո։

— Ի՞նչ սորված է։

— Թրանսերենեն ուռճկիրենի, ուռճկերենե ալ ֆրանսերենի թարգմանութիւն կընե։

— Արվեստ սորվելու վախտը ունի։

— Չէ՛, թարգմանութիւն ընեմ, կըսե կերթա։

— Ես ատ տեղն ինչ թարգմանել ուամ։

— Ժամերը ալաֆրանգայեն ալաթուրքայեն, ալաթուրքայեն ալ ալաֆրանգայեն թարգմանե։

— Պարոն փաստաքան, ընկերոջս հետ դատ մը ունիմ։

— Ի՞նչ է դատերնիդ։

— Հաշիվները տեսանք հիսուն ռուբլի ինձի պարտական կը ձգա կոր։

— Էյ, չտաքր կոր։

— Հիսուն ռուբլի դուն ինձի պարտական ես կըսես կոր։

— Անանկ է։

— Ես ալ ան հարցուհներուս ակա ձեզի,որչափ ըլլա նե՝ դուք պատասխան եք, մեզմե աղեկ գիտեք, հիմա հիսուն ռուբլի որքան ինձ պարտական ենք արդյոք։

— Բուկին տասնեւլեզգ ըլլալն չես գիտեր կոր։

— Բնե, գիտնայի նե՝ այսպեղ ինչ գործ ունեի։

— Տղաղ ինչպես եղավ, Թորոս աղա։

— Ինչպես պիտի ըլլա, վարպետ կերթա, կաշխատի, բայց չկրնար տակ ավելցնել։

— Ինչ է պատճառը արդյոք։

— Զգիտեմ, երկու յախտն իրարու քով չկրցավ բերել գնաց։

— Դալաթիո երկաթյա կամուրջին պես, չըսե՞ս։

— Բարև։

— Աստծու բարին։

— Այսօր աստակ պիտի տայիր։

— . . .

— Զպիտի տաս նե՝ չպիտի տամ ըսե, ես ալ երթամ արզընայ ընեմ, որովհետև ալ ատասելու ժամանակ չունիմ։

— . . .

— Ինչո՞ւ չես խոսիր կոր, աղբար։

— Ախոր համաբ որ ես հիմա իմաստասիրության տված եմ ինքզինքս, և փիլիսոփան կըսե, որ Սակավ խոսացը, լուր բազում։

— Բայց և այնպես փիլիսոփան չէ ըսեր որ ուրիշներուն տտակը կլլես։

Աղեկ ա, մեր տտակներն առնելեզ եթաքդ ինկավ իմաստասեր ըլլալը։

— Թորոս աղա, այսօր ինչ ըրիք, նայինք, Խավյար խանի[158]) տրիք չէ նե՝ ծախեցիք։

— Ախինք ալ, ծախեցինք ալ։

— Վաճառեցիք դոնե։

— Չէ՛, կորսնցուցինք։

— Ինչ եկավ տակիդ, աղա։

— Ինչ պիտի ելլա, մենք ելանք խաններն[157])։

1875

— Տղաք ի՞նչպես է, Մարկոս աղա։

— Մի՛ հարցուներ, ծանր է։

— Ինչո՞ւ ուրեմն անգամ մը Ընդհ. ժողովին չես երթար, եղբա՛յր։

— Ընդհ. ժողովին երթամ ի՞նչ ընեմ։

— Տղուդ համար Տերդոքմյա մը ըսել կուտաս։

— Ընդհ. ժողովը առանկ բաներ կընե՞ մի։

— Անցյալ շաբթու չէ՞ր, որ առենապետին պահպանիչ ըսավ։

— Տղաս անգամ՝ մը առնեմ տանիմ անանկ է նե։

— Տղան առնես տանիս նե՝ խնդրո կարգին մեջը կը դնեն ու մինչև որ Տերդոքմյայի կարգը գա, տղադ հոգին կուտաս։ Դուն մինակ գնա։

— Շատ աղեկ, չնորհակալ եմ, գալ շաբթու կերթամ[158]։

1875

— Պոթին կալոշներս չենեցի՞ր։

— Այո՛, չենեցի պատրաստ են։

— Քանի՞ դուրուշ պիտի տանք։

— Երեք հարյուր դուրուշ պիտի տաք։

— Ի՞նչ կըսեք։

— Երեք հարյուր դուրուշ պիտի տաք։

— Առաջուց իմաց տայիք նե՝ գործը կը փոխվեր։

— Առաջուց իմաց տայի նե՝ ի՞նչ կընեիր։

— Ինչ պիտի ընեի, 300 դուրուշի կերթայի էշ մը ծախուձ գառնեի։

— Էշ մը ծախուս կառնեիք, բայց գիտնալու եք, որ էշերը կիրակի օրերը չեն աշխատիր[159]։

1877

Այս Ղազարը այս տարի հավանոց մը առնել չը կընալուն համար, անձրևի օրերը դրացիին դռնեն դուրս ելնելուն կըսպասեր և անոր մեծ հավանոցին տակը անձրևեն ինքզինքը կը պաշտպաներ։ Դրացին ալ բան մը չէը ըսեր։

Այս Ղազարը առջի օրը դրացին դիմացիկ մը խանութեը տեսնելով քովը կերթա։

— Ի՞նչ գործ ունիս հոս, կը հարցնեն։
— Բանքալոն մը շինել կուտամ կոր։
— Կարգաչեմ, քիչ մը լայնակի շինել տուր, որ երկուքնիս մեկին հագնինք, կըսե ա՛նանկ ի վար ու կերթա։

— Ջեզվի գպտանի խոզք մը ունիմ։
— Ըանք։
— Ջաակի օրերը հագնելու համար ձեր բարեբաստ ինձի փոխ կուտա՞ք։
— Սիրով կուտայի, բայց ես բարեբաստ ասջի օրը ծախեցի, հացագործին հաշիվը մաքրեցի։

— Յումուրճախ, ինչո՞ւ նամեր ես, չե՞ս հայ ատնես, որ ուտենք։
— Ոչ։
— Առաբվին պերի բան մը չկերանք, տրաքը անոթի ենք։
— Վնաս չունի։
— Մեզի անոթութենեն մեռցնել կ՚ուզե՞ս։
— Ոչ։
— Ինչո՞ւ ուրեմն հայ չես բերեր կոր։
— Դիտմամբ չեմ բերեր կոր, որ ձեզի անոթութեյան վարժեցնեմ։
— Ինչո՞ւ համար։
— Զիմացայը երեսփոխանին ըսածը. հարկ ըլլա նե՝ անոթի կը մնանք, բայց ի՛նքս կը պաշտպանենք, Թարատապին բան մը չենք տար ըսավ։
— Գնա, դուն սա հայը բեր, տասը ըսածը մեզի համար չէ, մենք շատունց վարժված ենք անոթութեյան[160]։

1877

ՔԱՆԻ ՄԸ ԽՆԴՐՈՑ ԼՈՒԾՈՒՄԸ

— Թըննելը ինչո՞ւ համար շինվեցավ։
— Պոլսո ժողովուրդը գերեզմանի վարժեցնելու համար։

— Հերթայի վաճառականներուն՝ իրենց մաղազաներուն մեջ կնիկներու ձեռքով առուտուր ընելն ինչի՞ կը նմանի։
— Զկնորսներուն ձուկերուն կեր նետելուն կը նմանի։

— 13 թիվ շոգենաթռչ ինչ օգուտ ունի։
— Համբերութեյան գործնական դաս կուտա Իսկիւտարցիներուն։

— Կնիկներն պարապ ըլլան նե՝ ինչ կընեն։
— Հայելիին առջև կանցնին, անոնք կգրոսնուն։

— Արտոնութեյամբ գողութեյուն ընողներն ինչպէ՞ս են։
— Հարուստները։
— Ի՞նչպես կը գողնան։
— Վեթիով, բռեֆայով։

— Ազգ. վարժարաններու մեջ ի՞նչ դաս կուտան։
— Ժամավաճառութեյուն։
— Անանկ է նե՝ ուրիշ ժամավաճառութեյունը պիտի սորվի նե՝ ժամագործի մը քով կը դնեմ։

— Սերահարներն ինչու համար մազերնին կտրելով իրենց կուտան։
— Որովհետև սերահարութեյունն ալ առևտուր մը ըլլալով՝ դուխը պարզ բռնել պետք է։

— Կնիկներեն ինչու երեսիդեան չընարվիր։
— Որովհետև խնդրոց կարգը միշտ մոտաց կըլլա։

— Անգղիան ինչու համար Բուսիայի նըման չընգուենց։
— Անոր համար, որ Բուսիայի մուզիգան Անգղիո ականջին պաղ կուգա։

— Կնիկները երբ չկրնան էրիկնին բանի մը մեջ համոզել ինչ կընեն։
— Կակաչին լալ։ փասաերնին օգուտ չընելուն պես, արցունքով ի գուէթ կը շարժեն։

— Հարուստներեն ոմանք ինչու հայերեն լրագիր չեն կարդար։
— Հարուստ չեղող մարդոց խոսքերուն կարևորություն չտալու համար։

— Խրըխնիներուն առուտուրը ինչպե՞ս կերթայ։
— Երբ որ օմնիպյուսները վերցան։

— Երկաթյա կամուրջներն երբ պիտի անցնինք։
— Երբ որ ղրահավորներըն անիկա անցնելե դադրին։

— Ո՞ր պատուղներեն են անոնք, որ մեծ դժվարությամբ կը ժողվվին։
— Կեռասն, ելակն ու համբուլըը։

— Պոլսո մեջ ամենեն մեծ ընթերցարանն ո՞րն է, որուն մեջ ամեն մարդ մինչև իրիկուն նստի, լրագիր կարդա։
— Գալեմ Օտասիներու մեջ գտնվող էյաքիպներուն հարցուր։

— Առուտուրները երբ պիտի բացվին։
— Երբ որ տերութեանց առուտուրները գոցվին։

— Ի՞նչ է մկրտութիւնը։
— Աշխարհիս թատրոնը մտնելու համար վճարված տուրք[161])։

1876

ԽՈՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱՆԱՆՑ ՄԵՋ

— Ուր՞ը կերթաս կոր, քուրուկ։
— Մայր եկեղեցի կերթամ կոր։
— Զըլա՛ւ որ դասին մեջը մտնաս կայնիս։
— Ինչո՞ւ, թատրոնը կը գրե՞ տեյի։
— Չէ, անտեղը տերպապա մը կա, առջի օրը դասին մեջ կայտողնեբուն անանկ խոսքեր ըսավ, որ ես ամչցա։
— Ի՞նչ ըսավ, քա՛։
— Ի՞նչ պիտի ըսե. «Չե՛ք ամչնար, չե՛ք խղնիր, սասանկ հագվելը, սգվելը, ինքզինքնիդ տիրացուներու ցցունելու համար դասը կը մտնեք կոր, չըսե մի։ Դասին մեջը գտնվող կնիկներուն ու աղջիկներուն երեսները կաս կարմիր կարեցան առ խոսքին վրա։ Ինքզինքա ցցունել պարե մի՛քա՛ն անցներ։ Հայաստե ըսենք քի պատվի կնիկներ ու աղջիկներ ալ ինքզինքնին ցցունելու համար դաս կը մտնեն, տերպապայի մը սասանկ խոսքեր ընել կը վայլե՞ մի։
— Բուրուկ, չվայլեր ամա, սանքի մեր ըրածն ալ չվայլեր, մենք դասի մեջ կայտինք կոր նե՝ մեկու մը չենք նայիր կոր ամա, տեղիխանըլներուն աչքը մեր վրան կըլլա կոր տե՛ աղոթք չեն կրնար կոր ընել։
— Նայելով ի՞նչ կըլլա եղեր, ալաֆրանկայեն մեջ անանկ բաներ չինտուվիր։
— Չինտուվիր ամա, քիչ մը չինտուելու է. դերե անցյալ հինգշաբթի օրը երիտասարդին մեկը այնչափ տալմիշ եղեր էր աղջկան մը քի, երեսը հիչ խորանին չդարձուց։
— Հոգի, Մայր եկեղեցիին մեջ սասանկ բաներ չըլլար, դուն անկիա գերերու մեջ չինտուե՝։

— Վարպետը վրան խոսք մը զուրցել չտա տեղի, քահանաներն ալ փուխերներին չկորնցնեն տեղի, բերաններին բանալով երկու խոսք չեն ըներ կոր։

— Ի՞նչ ընեն խեղճերը, շահերնին այնպես կը պահանջե կոր։ Ինչ որ է, երթամ, իլաճը առնեմ, ուշ տանիմ։

— Բա հիվանդը ո՞վ է։

— Իշտի մեր դրացիին աղջիկը, ան օրը դասին մեջն էր տես, տերպապային առ խոսքերը ծանր եկեր է իրեն, քեֆը ավրեց։

— Ան տերպապան ով է նե՝ պարտ սրեչարի մը խանութը մտնե, հոն խոսի, որ իր խոսքերեն հիվընդցողը շուտ իլաճ առնե ու բոլընտան։ Տեր ողորմյա...

— Մնաք բարով։

— Շնորհակալ եմ[162])։

1877

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Անանկ ժամանակի մը մեջ կապրինք, ուր քաղաքավարութիւնը և շողոքորթութիւնը նուէնանիշ բառեր եղած են։

Դեպքերու դիմենք։

Առջի օրը յոթնանասուն տարու հարուստ կնիկ մը՝ իր ծանոթներեն մեկուն կըսեր.

— Դեռ կընամ երիտասարդի մը սիրտը գրավել, այնպես չէ՞։

— Այո, տիկին, դուք ինքզինքնիդ ծերի տեղ դրած եք, բայց կը սխալիք, ես քեզի հարյուր աղջկի չեմ փոխեր։

Հարցնեք հիմա ասոր, թե ինչո՞ւ այնպես խոսեցավ։

Պիտի պատասխանեմ.

— Քաղաքավարութիւնն այնպես կը պահանջե։

Երեսփոխանական ժողովս չկրնամ որ նիստին մեջ երեսփոխանին մեկը երկու ժամ շարունակ խոսեցավ, արյուն քըրտինք թափեց, և դժբաղդաբար միտքը չկրցավ հասկցնել։

Այս երեսփոխանը առյանը գոցվելեն վերջը՝ իր ընկերներեն մեկուն հարցուց.

— Ի՞նչպես խոսեցա։

— Շատ աղեկ խոսեցաք, իրավ որ ես չէի հուսար քենե այսչափ պերճախոսութիւն։

Հարցուր թե ինչո՞ւ այսպես պատասխանեց։

Պիտի ըսե.

— Բաղաքավարութիւնը այսպես կը պահանջե։

Հիվանդ կըլլաս և բժիշկ մը կանչես։

Բժիշկը սենեակին մեջ կը մտնե և հիվանդին ով ըլլալը չճանչնալով՝ բուն հիվանդը կը ձգե և բազմոցի վրա նստած՝ նիհար մեկու մը քով կերթա, երակները կը քննե, օ՜հ, դուն շատ հիվանդ ես, ցաւերուն զգուշացիր, կըսե, լուծողական դեղ մ՚ալ կը գրե, կերթա։

Հիմա հարցուր հիվանդին, թե ինչո՞ւ բժիշկին սխալմունքը հրեսին չզարկավ։

Պիտի պատասխանե.

— Բաղաքավարութիւնը այսպես կը պահանջե։

Թրամվէյի մեջ կը նստիս, մարդուն մեկին ալ կուգա և նստելու տեղ մը չգտնելով՝ քիչ մը տեղ բացե՛ք, կըսե, դուն ալ քիչ մը տանկ կը շարժիս, իմացնելու համար՝ թե տեղ չկա, որ բանաս։ Դիմացինդ քու այս շարժումիդ այնպես կը հասկնա՝ որ իրեն տեղ բացեր ես, կուգա ծունկիդ վրա կը նստի, և միշտ սա խոսքը կը կրկնե.

— Կաղաչեմ, անհանգիստ մ՚ըլլաք, չեմ ուզեր, որ իմ պատճառովս նեղվիք։

— Ի՞նչ ըսել է, ես շատ հանգիստ եմ։

Հարցուր թե ինչո՞ւ այդպես կը խոսի։

Պիտի պատասխանե.

— Բաղաքավարութիւնը այսպես կը պահանջե։

Մեղուն ալ սա ամենը կը տեսնե և կը խոսի։

Հարցուր թե, ինչո՞ւ։

Պատասխանը արդեն տըւեցաւ։

— Բաղաքավարութիւնը այսպես կը պահանջե[163])։

1873

— Պզտիկ հանըմը քանի՞ տարու է։

— Տասնը վեց։

— Մաշալլահ, մաշալլահ, տահա պզտիկ կը սեպվի։

— Զոճուխը բարչալը է տե մեծ կը ցցունէ, ամա տահա տասնըվեցին մեջն է։

— Է՛յ, հրամանքնիդ սուտ ըսելու չ՚ենք յա, հելպեթտե ա-նանկ է։

— Աղա, ամեն մարդ իր մալը մեթ կընե ամա, իմս ա-նանկ չէ, ես շիտակը կը զուրցեմ։

— Ճանըմ հանըմ, աշխարհն ալ բեք ածայիսլ է, երեկ առտու... ոդայինն առունը պզտիկ հանըմին խոսքն եզավ տե՝ ըսին քի՝ քսանը վեց տարու է։

— Մեղա, մեղա, չէ՛, ամա չէ նե՝ շիտակը մեզաց տեր կըլլան, զավակս տահա բիլճե է։

— Իշխե հանըմ, անոնք ալ ըսին քի քյուչյուկ թավուշ հեր կյուն բիլճե է[164]։

— Ամա աղաս, զավակս ամեն օր բիլճե է։

— Իշխե անոնք ալ անանկ կըսեն կոր յա։

— Անանկ է նե՝ քյուչյուք թավլուքս ինչ է։ Աղիկա առե-թա փասլ ընելէ, ով որ ըսեր է հեմեն բերանը չօրնա։

— Հրաման ընեիք, զավակ մը ջուր բերեին։

— Աղաս, հրամանքիդ համար չեմ ըսեր, գիտեմ քի հր-րամանքդ փասլ չունիս, հեմ փառք աստուծո աչքովդ ալ տես-սար։

— Հաթտա ես ալ ըսի քի՝ այդչափ ըլլալու չէ։

— Ճանըմ իշտե ըսի յա, վիճուռը մաշալլահ ունի, բեք բարչալը է տե՝ տեսնողին աչքը պիլտեն պիլուն կը խածնե։

— Տեր ողորմյա, տեր ողորմյա։

— Սանքի ըսել կուզեմ քի խոշոր կերևնա։

Երեսին բեպեռները, տահա բառըլ, բառըլ կը վառին կոր, անանկ պապի հանըմներուն պես պուտուտ մուտուտ չէյտե։

— Բուտուտա ըսիք տե՝ աղեկ միտքս էնկավ։ Պզտիկ հանը-մին ձերմակուէյսանը համար բեք մեռաք ըրեր են տե՝ մախ-սուս բուտուտաճի Առաքել աղան կանչեր հալըուշեր են քի՝ (ձեր տունին համար) բուտուտա կառնե՞ն մի։

— Աճապա ան ինչ է ըսեր։

— Ես ան տունը պաղի կերթամ ամա, հիչ բուտուա առած չունինն ըսեր է։

— Է՛յ, շիտակը Առաքել ապան անանկ մյուտահանե, սուտ լախըտաը չըներ։

— Աղեկ ամա, չեն հավատացիր, չյունքի Առաքել ապայինն համար կըսեն պոշպոպոշ չէ, էվելոք սըտ կը պահե տե՝ անոր համար էխտիպար վատուած է։ Հանըմս, աշխարհքին բերանը չի բռնվիր, ամեն մարդ, որը պոյին, որն ալ լայնքին կը քաշե։

— Ամուած չնորհք տա, ինչ ըսեմ, լույսի պես, բիլիճի պես աղջիկս ալ զահեր տասնկ տարոք է, պոյալը է տեյի փասլ ընեն նե՝ զահեր տարոքներն ու պոյալընները մարդու երես էլ-նելու չեն։

— Հանըմս իշտե ըսի յա, հալխին բերանը կրնամ մի բռնել։

— Պոյը, պոսը քալվածքին ինչ պիտի ըսեն, աճապ մա-հանա մըն ալ անոր կրնանն գտնել։

— Չէ՛, չէ՛, շիտակը պոյուպոսին, քալվածքին համար բան մը ըսող չկա, հատթա անցած օր առջիզ ձգեր ժամ տալեր ես նե՝ տեսնողները մաշալլահ ըսեր են։ Չյունքի բեք խվռա, բեք քոքեթ կը քալե կոր եղեր։

— Շիտակը աղջիկս է տեյի մեթ չընեմ ամա, աս ըսած-նին շիտակ է։

— Հանըմս, աճապա խոսքը, խորաթին նամըլ է։

— Հիմակվընններեն է։

— Աճապա զաղրներեն գիտե՞ մի։

— Պաղի, պաղի կը կարդա ամա՝ չիչտեմ քի կը հասկնա մի։

— Հելսեթաե կարդացողը կը հասկնա։

— Ապաս, ակ կընես ամա, հրամանքնիզ որ թարաֆին-նեք։ Չյունքի աղջիկտեսի համար առաջուց չա տեր պատանները կուգան կը հասկնան, խոպար կը տանին, կը բերեն, չա չէ նե մանչուն թարաֆի հանըմներեն կուգան։ Հրամանքդ տասա բան մը չըսեր, ամա, աղջիկտես գալու հանըմները որ գիտիլիասին են։

— Ճանըմ, գիտիլիան ինչուզ պետք, հիմա աղջիկը փե-սացուին քանի՞ ղրուշ էմանեթ պիտի տա։

— Էմանեթը ինչ ըսել է, սանքի թրախտմա՞...

— Աստված չընե, մենք թրախտմա խապուլ չենք ըներ, հեմ հիմա թրախտմա կա՞ մի։

— Էմանեթը ինչ ըսել է հապա։

— Ճանըմ, աղջիկը ունեցած ատակը վեռայլին էմանեթ կըլնե ան՝ վերջեն ուզած ատենը կառնե։ Այդ էմանեթը քանի՞ ղրուշ է։

— Ագջիկս փուլ մը չունի։

— Անանկ է նե՝ մանչը էմանեթըզ աղջիկ չառներ։

— Աղջիկս ալ էմանեթ ուզող մանչ չառներ։

— Անանկ է նե՝ աֆ կընենք, գլուխ ցավցուցինք։ Բայց աղջիկը կես տուն ունի կըսեիք կոր, իշտե այդ կես տունը էմանեթ տա։

— Արդեն մենք անիկա ուրիշին էմանեթ ուված ենք ան՝ ատակ առեր ենք։

— Անանկ է նե՝ էմանեթը որու ուվեր ես նե՝ աղջիկդ ալ անոր տուր։ Կեցի՛ք բարով։

— Երթաք բարով[165]։

1875

ՓՉԵԼ ԲԱՌԻՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ

— Պ. Վարդան, Բամազանի[166] գիշերները հիչ դուրս ելա՞ք։

— Ելա զահեր։

— Ինչի՞ անդամ ելաք և ձեր պարտեցաք։

— Խելքիս փչեց մեկ անդամ ելա։ Անցյալ երեկո շուկային գարձած ժամանակս բարեկամի մը հանդիպեցա, քիչ մը խոսակցեցյուն ընելես վերջը, եկու սըկի մեկ մեկ հատ փչենք ըսավ...

— Լ՜յ։

— Մեյ մը ըսըլնիքեն՝ փչեցինք ու փչեցինք...

— Լ՜յ։

— Էյը ինչ է, մինչև գիշերվան հինգը փչեցինք։

— Վերջը՞։

— Վերջը բարեկամիս հետ ձեռք ձեռքի տալով ճանըա ելանք։

— Վերջը։

— Ճանըան ալ մեկզմեկ փչելով մեկ պատեն մյուսը, տանը գուռը գարկինք։

— Էյ վերջը՞...

— Մեր կնիկն ալ հասկցավ, որ մենք շատիկ փչեր ենք՝ ան

ալ մեղի փչելուն պես՝ դուրսն առջևը կռնակի վրա ինկանք։

— Աստուծմե եղեր է, որ նուշն գիշերը հով չկա եղեր՝ որ փչելով ձեզի ֆռլլուխին առջևը վարեր[167]։

ՓԶՈՂ.

ՇԱՀԵՆ ԶՎԱՍՏԿՎԱԾ ՄԻՋՈՑԻՆ ԾԱԽՍԵՆ ԿԸ ՎԱՍՏԿԻՆ

Ծերերը, նա մանավանդ հարուստ ծերունիները կըսեն թե՝ մենք հարուստ եղած ենք նե՝ հարստութիւնը ծախսեն ավելցուցած ենք և ոչ թե վաստակեն։

Ծերերուն այս խոսքը վերջերս ամեն տեղ մեծ ընդունելութիւն գտնել սկսավ։

Վաճառականն իր գրագիրն կանչեց ու ըսավ.

— Պարոն Մխրան, ամսականդ երկու հարյուր դուրուշ պիտի կտրեմ, որովհետև շահ չկա, ծախսեն վաստկելու եմ։

Պարոն Մխրանը իրիկունը տուն գնայ ու կնիկը կանչելով ըսավ.

— Տիկին, շրջազգեստդ երկու կանդուն պիտի կտրեմ, որովհետև շահ չկա, ծախսեն վաստկելու եմ։

(Այն օրվընե ի վեր է, որ վերցան այն շրջազգեստներն, որ շատ երկար էին ու գետինը կավլեին)։

Տիկինը խոհանոցը գնայ ու վարպետին ըսավ.

— Վարպետ, ձեզի տրված հարյուր դուրուշին հիսունը պիտի կտրեմ. քանի որ շահը պզտիկցավ, ծախսն ալ պզտիկնալու է։

Վարպետը՝ որ կոշիկարի մը երեսուն դուրուշ պարտք ուներ, իրեն գնայ ու ըսավ.

— Եղբայր, քեզի ունեցած երեսուն դուրուշ պարտքիս քառանը պիտի կտրեմ, շահը պզտիկցավ, ծախսն ալ պիտի պզտիկցունեմ։

Կոշիկարն ալ մսավաճառի մը տասը դուրուշ պարտք ուներնալով իրեն կերթա.

— Բարեկամ ձեզի ունեցած տասը դուրուշ պարտքս պիտի կտրեմ, ինչու որ շահս քիչցավ։

— Ո՞րչափ պիտի կտրես։

— Մեկեն ալ պիտի կտրեմ։

Ինչպես որ կը տեսնվի այս դրութիւնը քիչ ժամանակի

մեջ հաճայտքագրել հառաջ գնացը։ Ամեն տեղ ամառականներին դեղչել սկսան, ոմանք պզտիկ դեղչում ըրին, ոմանք ալ մեծ։ Մեծ դեղչում ընդունելին պարտքերնին բնաւ չվճողներն եղան։

Հաջող Պատրիարքարանը մխայն այս դրութիւնը լուր դունեն ելլու չէր մտցուցած և անա առենը եկաւ, որ ան ալ դունելը քանա դեղչման դրութեան և այս դրութիւնն ալ հանդիսաւոր կերպով ջնջու մտնեն։

Այո, Պատրիարքարանի պաշտոնեաներուն ամենն ալ դեղչման դրութեան պիտի ենթարկվին, որովհետև Պատրիարքարանը մուտքը չուզելով ելքին հետ հաշուի, ստիպվեցանք ելքը մուտքին առնիլ ու հաշուեցուցնել։

Ծախքը մուտքին պիտի հաւասարեցուննենք, ուստի եթե այսօրվան մուտքնիս հինուն դրուշ ամսական կրնա տալ, բոլոր ամսականները հիսունի պիտի վերածենք. եթե ստացած չընենք, մուտքը վաղը մյուս օր բոլորովին պակսի՝ ամսական բնաւ չպիտի տանք։ Աղբյուրն որչափ ջուր տա նե՝ այնչափ պիտի խմենք, աղբյուրը ցամքի նե՝ ջուր խմելու սովորութիւնը մեկդի պիտի դնենք։

Բայց, պաշտոնյա մը կրնա անոթի կենալ կամ իրեն տըրված ամսականովը կրնա ապրիլ։

Անհատական խնդրոյն վախուկ կետը։

Բայց Պատրիարքարանի պաշտոնեաներուն ամենուն ալ կարողութիւնը կը համապատասխանե՞ արդյոք իրենց տրված ամսականներուն դումարին։

Անհատական խնդրոյն ամենավախուկ կետը։

Քաղցը է հուսալ, որ Վարչութիւնն[168] այս երկու և իւրաքանչիւր վախուկ կետերն ուշադրութեան կառնե և զեղչումը այնպիսի կանոնաւոր կերպով մը կը տնօրինե, որ պաշտոնյաք ոչ անոթութենե կը մեռնին և ոչ ալ կրնան ստակ ավելցնել[169]։

1875

ԳԻՇԵՐՆԵՐԸ ԱՌԱՆՑ ԼԱՊՏԵՐԻ ՊՏՂՏՈՂՆԵՐԸ ՊԻՏԻ ԲՈՒՆՎԻՆ

Այս պատուիրին վրա տիկին Մարգրիտը ուրախութենեն խելքը թռցուց առջի օրը, որովհետև իր երիկը իրիկունները անպառճառ թաղին բոլոր գինետուններուը պտըտելու սովորութիւն

քրած ըլլալով՝ պիշերվան ժամը երեքին հազիվ աուն կը դառնար գլաորնկով։

Երեկ իրիկուն ըստ սովորականին էրիկը աուն դառնալուն պես կնիկը դեմը ելավ և ըսավ։

— Այս իրիկուն վերջին իրիկունն է, ասկից վերջը կանուխ պիտի գաս, այնպես չէ՞։

— Ինչու համար։

— Անոր համար, որ պիշերնակը առանց լապտերի պըտըտողները պիտի բռնեն։

— Կնիկ, ազնիկ որ ըսիր, վաղը առտու շուկա երթալնիքդեն լապտերը հետս տանիմ։

— Ճանըմ, ինչու հետդ տանիս պիտի, տեսնողը ինչ կըսե, ամոթ չէ՞։ Ձեմ տար լապտերը, պարապ տեղը իս պռոտալ մի տար։

— Ազնիկ ըսիր, կնիկ, ամոթ է, անանկ է նե՝ անկողինս Աբոսթոլին մեչկանեն ղրկե, պիշերնակը հոն կը պահվիմ մինչև ցնոր կարգադրություն, ըսավ Պապիկ աղբարը[170]։

1877

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անցյալ ուրբաթ պիշեր քանի մը գողեր Թոփհանե[171]) շաքարագործի մը և նպարավաճառի մը խանութները կը մտնեն բայց հիշյալ խանութներուն տերերն արթուն գտնելով՝ առանց բան մը փախցընելու ինքզինքնին կը վախցուներն։

* * *

Անցյալ հինգշաբթի պիշեր Թոփհանեի կոմմերը, սան մը մեջ գողեր կը մտնեն ու կշխռով թեթև բայց գնով ծանր բաներ գողնալով կը փախչին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցյալ օր, գողին մեկը Բերա Գալյոնճու Բուլուք[172]) տուն մը երթալով՝ տանտիրոջը քնացած սենյակին այցելությունն կընե ու իր տանելիքին չափ կարասի վերցնելով կը մեկնի։

* * *

Բերային Բանկալթի կամ Բանկալթիեն[173]) Բերա տանող

փողոցին մէջ երկու դող, մարդու մը վրա կը հարձակին բայց մարդն իրենցմէ ավելի քաջասիրտ տեսնելով իրեն ներուին կը խնդրեն ու ետ կը դառնան։

ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

Վարպետօղլին մեկը Բերաբնակ հարուստի մը երկար նամակ մը գրելով իր ձեռաքը կը տանի ու պատասխանն առնելու համար վարը կսպասե։

Նամակին վերջը սա պես գրած էր այս վարպետօղլին.

«Դուն այս նամակը կարդացած ժամանակդ, ես վարը ինչ որ գոնամ առնեմ երթամ պիտի»։ Նամակը կարդացողն այս տողերը կարդալուն պես, սպասավորներովը մեկտեղ վար կը վազե, բայց դողն հատատամիա ու պատվավոր մարդ ըլլալով՝ բերնեն ելած խոսքը ետ չառնելու համար՝ վարը գտածները առեր տարեր էր։

* * *

Ասկից հինգ օր առաջ, տիկինին մեկը Բերա մոտխեթրայիմ մը խանութեն երթալով՝ վեց ոսկիի արժողութեամբ մետաքսեղեն կը գնե ու խանութին ծառաներեն մեկուն կըսե, որ տունը գա ու առակն առնե։ Այս խոսքը դրսեն դող մը կը լսե ու ինքզինքն տիկնոջ սպասավոր ձևացնելով կսկսի խանութին ծառային քովեն երթալ։ Տուն մտնելնուն պես՝ դողն խանութին ծառային ձեռքեն մետաքսեղենը կառնե ու վեր երթալով տիկնոջ կուտա ինքզինքը խանութին տիրեքթուրը ձևացնելով։ Տիկինը խնամքը կառնե ու սառկինեն իրեն կը հանձնե։ Դողն սառկինեն առնելուն պես վար կիջնա ու մարդուն կըսե, որ քանի մը վայրկյան սպասե։

Մարդը մինչև այսօր կսպասե եղեր։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Անցյալ ուրբաթ քանի մը դողեր Բաշա Պազչեսիի[174]) Բուլվարին կը մտնեն, բայց բան մը չկրնալով գտնել, նուկինակ տասիկան մը, պարապ ետ կը դառնան[175])։

1876

ՇԱՔԱՐՆ ՈՒ ԺՈՂՈՎԸ

Կուզես հավատա, կուզես մի հավատար, ես կը պնդեմ, որ մեր լրագիրները տղայոց կը նմանին։

Օր մը չորս հինգ տող պատցոնելու ատեն։

Առնցմէ մին պարտեզի մը կամ փողոցի մը մէջ շաքարավաճառ մը տեսնելուն պես եթե համարձակ ըլլայ, թե շաքար կուզեմ, անմիջապես յուր մյուս ընկերքեն ալ քսարուս եանէ՛ի ըսեն.

— *Ես ալ կուզեմ։*

— *Ինձի ալ տվեք։*

— *Ես ա՛ս տեսակեն կուզեմ։*

— *Ես ասկից կուզեմ։*

Մեր լրագիրներուն մէջ ամենեն ւէնց տղան Պիտանպուլն է[176]։

Սթանպուլն օր մը չգիտեմ ուր Սահմանադրութիւն մը տեսնելով պոռաց.

— *Սահմանադրութիւն կուզեմ։*

— *Աստ եանէն սկսան գլխէն յատ լոլոր ընկերնիքը պոռալ.*

— *Ես ալ կուզեմ։*

— *Ինձի ալ տվեք։*

— *Ես ա՛ս կերպով կուզեմ, պոռաց Պասիլիքը[177]։*

— *Ես անկից չեմ ուզեր, անկա՛ թող քեզի ըլլա, ապաշակեց Նուրպիը[178]։*

— *Ես ասանկ կուզեմ, ըսաւ Սապահ[179]։*

— *Ես անանկ կուզեմ, գոչեց Վաքըֆ[180]։*

— *Կատը մ՛ալ ինձի տվեք, ըսաւ ուրիշ մը։*

Ինչպես հայտնի կերևա, ոչ միայն ուզեցին, այլ յուրաքանչյուրն ճաշակին համեմատ ուզեցին։

Ուզեցին առանց գիտնալու սակայն, թե տղա մը շատ անգամ անկարելի բաներ կուզե, առանց գիտնալու, թե տղու ամեն ուզածը չտրվիր։

Տղայոց այս ուզածին շահավոր կամ վնասակար ըլլալուն վրա առանց կարծիք հայտնելու, կըսենք՝ թե տղայք սպասելու են սա վստահութեամբ որ, ինչ որ կարելի է կը տրվի իրենց։

Մեր տղայք ոչ թե միայն այս չըրին, այլ շաքարը չը տեսած՝ ես աղկից կուզեմ, դուն ասկից կուզեսի վիճաբանու-

քյամբ սոխպեցին տղագրական սեսչությունն իրենց հայտարարել, որ խելոք նստին ու եվելյու վրա եղող բանին վիճաբանություն չմտնան։

Այս հայտարարության վրա տղայք լեզունին քաշեցին և հիմա խազազություն կը տիրե լրագրաց մեջ, ոչ միայն խազազություն այլ նաև ճշմարտություն — այս մասին միայն տրտնջան քանի մը շարաթե ի վեր լրագրության հրիվոնը պիսավոր սուտերով զարդարված է։

Սպասենք ուբեմն, տեսնենք տրվելիք բանն ու վերջը կարծիք հայտնենք։[181])։

1876

ԱԿՆԱՎԱՃԱՌՆԵ՛Ր, ԿՆԻԿՆԵՐԵՐԵՆ ՉԳՈՒՇԱՑԵ՛Ք

Լսել չեմ ուզեր, թե մյուս մարդիկ կնիկներեն չզգուշանան, բայց պատմելիքս ակնավաճառներու վերաբերյալ ըլլալուն համար, անոնց ուշադրությունը հրավիրեցի։ Ահավասիկ դեպքը, որ Բարիզի մեջ տեղի ունեցած է։

Ադեկ հաղնված կնկան մեկը, օր մը կելնե բժիշկի մը տունը կերթա։

— Ի՞նչ կուզեք, տիկին, կը հարցունե բժիշկը։

— Տղա մ՛ունիմ, որ քանի մ՛օրե ի վեր հիվանդ է։

— Ի՞նչ է հիվանդությունը։

— Խելագարություն եկած է վրան։

— Ինչե՞ն հասկցար խելագարություն եկած ըլլալը։

— Սըկիզ հասկցա, որ ելած տեղը կամ ադամանդներս տուբ, կամ երևսուն հազար ֆրանքա տուբ, կըսե կոր։

— Անգամ մը ըսր տեսնեմ պինքը։

— Շատ աղեկ։

Տիկինը բժիշկին տունեն ելնելուն պես ակնավաճառի մը խանութը կառնե շունչը.

— Հրամմեցե՛ք, տիկին, կըսե ակնավաճառն։

— Քանի մը բաներ կուզեմ ծախու առնել։

— Շատ աղեկ։

Ակնավաճառն տիկնոջ ուզած բաներն կը հանե, կը հավնեցունե և սակարկության ընելով՝ երեսուն հազար ֆրանքի գոհարեղեն կը ծախե։

Տիկինը գոհարեղեններն առնելով կըսե ակնավաճառին, որ հետը գա այս անուն բժիշկին տունը և ատակն հոն առնե։

Ակնավաճառը կը հավանի, երկուքը մեկեն բժշկին տունը կերթան։

Տիկինը ակնավաճառը բժշկին ներկայացնելուն պես սենյակեն, եւ թե՝ ալ առնեն դուրս կելնեն, կծիկը կը դնեն։

— Նստե՛, տղա, նստե՛, կըսե բժիշկը։

— Շատ աղեկ։

— Ի՞նչ կղզաս կոր։

— Բան մ՚ալ չեմ զգար կոր։

— Ախորժակդ ինչպես է։

— Շատ աղեկ կուտեմ կոր, բայց դուբ պես հիվանդ կաբծեցիք։

— Ինչո՞ւ հիվանդ պիտի կարծեմ, տղա, մի խռովիր, հանդարտ կեցիր։ Վերդ տաքութիւն մը կուգա՞ երբեմն։

— Առանկ խոսքերուս պատասխան տալու ժամանակ չունեմ, երեսուն հազար ֆրանքս տուր, ելթամ։

— Աղջկան մը տատիկ սիր տված էիր։

— Ինչ կըսե՛ք, երեսուն հազար ֆրանքս տուր ելթամ, սենյակը գործ ունիմ։

— Աղջիկը քու սերդ մերժե՞ց։

— Կատակի տաեն չէ, ձգե՛ տասմածդ սիրես, երեսուն հազար ֆրանքս տուր, ելթամ, կամ գոնաբեղեններս լնձի դարձուր։

— Ծեզմ տղա, այդ աղջկան համար երեսուն հազար ֆրանքի՞ ելար, ուրիշ բան մը չտվի՞ր իրեն։

— Ի՞նչ կըսեք կոր, հետս կղբոսնուբ, երեսուն հազար ֆրանքս կուզեմ ես, կամ հիմա գըեղ կը խղդեմ։

— Թշմեռ տղա, ուսկի՞ց ալ այս հիվանդութիւնը վաստըկած ես։

— Ի՞նչ կըսեք, հնկան մեկը մեր սենյակը եկավ, երեսուն հազար ֆրանքի գոհարեղեն առավ և քու անունդ տալով ըսավ՝ թե հետս եկուր, որ տատկն անկից առնես. տատկներըը կուտանք, չէ՛ նե՝ ընելիքս ընեմ։

Բժիշկը կամաց կամաց կսկսի հավատալ, որ գողութեան մը անմեղ միջնորդն է եղեր, ակնավաճառն ալ կը հասկնա, որ բժիշկը հանցանք չունի, տուներն դուրս կելնեն գողուհին փնտռել տալու համար։

Թող այս դեպքը կարդացողները աղեկ համոզվին, որ կանանց խոսքին հավատալու չէ[182])։

1876

ԹԱԴԵՈՍ ԱՂԱՅԻՆ ՋՈՒՐԵՐԸ ԵՐԹԱԼԸ

— Թադեոս ապա, ապաքներդ քանի օր է կուլան կոր, ել լանք այսօր Սարը Յար երթանք, անկից ալ Ջուրերը կելլանք իրիկվան նորին կը դառնանք։

— Ջլլար, կնիկ, տեղդ նստաւ, Ջուրերը երթալու ժամանակը չէ հիմա։

— Երթանք, հոգիս, երթանք։

— Ջլլար։

— Երթանք, Միհրան, Լեւոն, Ազատիկ, շուտ ըրեք, հագուեցե՛ք, Ջուրերը պիտի երթանք։

Թադեոս ապան չկրնալով կնկան խոսքը կտրել քթախոտի տուփը կը բանա և քթախոտ մը քաշելեն ետքը՝ շատ ազնիկ կըսե ու կերթա կառք մը վարձելու։

— Շուտ ըրե՛ք, կառքը հիմա կուգա։

— Տուտուս, բոթիննելու ձէր դրեր ես։

— Տուտուս, շապիկիս խոթճանները բեր։

— Տուտուս, բուտրայի խուրձին ձեր պահեր ես։

— Ճանըմ, դրած սեպետնիդ չկայնիք, չերթիք տունիք, թող ալեք, որ հագուիմ. տեր ողորմյա, թող չենք տար, որ մարդս մաղերը սանտրի, գլուխը շուկէ, երեսը ազմոր մը քսվի։ Ինչ պատուհաս զավակներ են։

— Տուտուս իչտոնիս ձեր է։

— Գլուխդ անցնի։

Կ ո ռ ո ռ ո ռ ո ռ ո ռ ո ռ ո ռ

Ջաթ, չաթ, չաթ . . . կ ո ռ ո ռ։

— Հայտե, եկեք։

— Կուգանք կոր, եկանք, արապաճին թող սպասե քիչ մը, բարեյովը չէ՞ մի։

— Տուտուս արապան շատ չսպասեր, կուզեք նե՝ ես կերթամ, շուտ ըրեք։

— Փա, ա ինչ յումուրճախ մարդ է եղեր։

— Շուտ ըրեք, ըսինք։

— Միհրան, Լեւոն, Ազատիկ, դուք պատրաստ եք։

— Մենք պատրաստ ենք, հայրիկ, կուգանք կոր։

Երկու եղբայր և քույրերնին հետը կուգան, կառքը կը

մանեն, Թադեոս ագա կը պոռա.

— Ճանըմ, չդա՞ս, ինչ կըլնես կոր։

— . . .

— Ձայն ալ չտար, մարդը կը ճաթեցունես, չի գա՞ս . . .

— . . .

— Ճանըմ, ո՞ւր գնաց աս կնիկը, որ չգար։

— Ի՞նչ կը պոռաս կոր մարդ, քեզ֊ինչ չեմ նայիր կոր ա, ձայն չի տան նե՝ կը հասկնան, որ գործ ունիս, եկա իշտե, սա պոհճան ձեռքդ առ։

— Տուր նայինք, մաքո՛ր։

Ցիկինն ալ կառքը կը մտնե, կառքը չորս հոգիեն ավելի չառներ։ Թադեոս ագան պոհճան ձեռքը կը տա։

— Ի՞նչ կը նայիս կոր, դուն ալ արապաճիին քով նստե, իշտե։

— Ես քովս մարդ չեմ ուզեր, թող կառքին եաւնեն գա, կըսե կառավարը։

Կառավարն յուր տեղն անցնելուն պես, կառքը կսկսի արագութեամբ երթալ։

Թադեոս ագան կառքին եաւնեն վազելով կըսեր. «Ես գիտեի ասանկ ըլլալիքը... կնկան խոսքին հավատցեցանք... ասաված պէկանին տա... կես ճամբեն կա դառնալու է, որ սորվին... ամենքն ալ գետնին տակը անցնին կայլե»։

Կես ժամ եղավ, չեղավ կառքը Խիին Խանի[183]) հասավ, մեջիններըվար իջան սպասելու համար. Թադեոս ագան ալ կես ժամ ետքը հեվալով եկավ.

— Հավեցա՞ք ըրածնուդ։

— Ձավալլը մարդ, կարծեմ քի հոգներ ես, որչա՞փ ալ քրտնած ես։

— Թադեոս ագա, մեճիտիեն տուր, երթամ, ըսավ կառավարը։

— Ա՛ռ։

— Իրիկվան գամ հոսկից առնելու ձեզի։

— Շնորհակալ ենք, չենք ուզեր։

— Բա զավալլը մարդ, դուն ալ թոհաճի ես, ինչքա՜ սասնկ վազեր ես։ Ինչ է նե, եղածը եղած է, հիմա երթանք շոգենավ մտնանք։

— Պալեցնիք կարծեմ աս է։

— Չէ, մյուսը ըլլալու է։

— Մխիթան, Լևոն, վրան չկարդա՞ք։

— Չկարդացվիր կոր։

— Ջորս տարի է, որ փրանսեթեն, տաճկերեն կը կարդաք կոր տեւ, սա տախտակի վրայի գիրերը չե՞ք կրնար կոր կարդալ։

— Հայրիկ մյուսը կելլա կոր։

— Շուտ ըրեք, անդիինն է։

— Սա շոգենավեն անցնինք, երթանք, քալեցնիք, կելլա կոր։

— Կեցե՛ք, առաջ ես անցնիմ, եկուր, Ազավնի, հիմա ալ դուն, Լևոն...

— Թուրքը հեյթ...[184]։

— Տուր ձեռքդ, Մխիթան... հոր... եկուր, տիկինն... ձեռքդ Աբրինյուր։

— Ի՞նչպես ցատկեմ։

— Կերթանք կոր, ցատկե՛։

— Բա ինչպես ցատկեմ։

Շոգենավը կը մեկնի։

— Բաքթան, կեցիր, մեր տիկինը առնենք։

— Բաքթան քեզի կըսենք կոր։

— Աստված փորձանքնիդ տա, ձեզի հետ չպատահիլ համար երդում ըրած էի, հիմա ինչ պիտի ընենք նայինք։

— Հայրիկ, հոգ մի ընար, մենք կերթանք, մայրիկն ալ մեկը կը գտնե, կենան կուգա։

Տղայք իրավունք ունենին, որովհետև իրենց Սաթը Յար հասնելեն ժամ մը վերջը մայրերնին ալ եւեի շոգենավով հասավ, երկանը մեկ բարեկամին հետ։

— Բարև, Թադեոս աղա, տիկինը ինչո՞ւ ձգած էիր։

— Շատ շնորհակալ եմ, Համբարձում աղա, այս ըրած բարիքդ չպիտի մոռնամ։

— Աա ինչ խոսք, է մեր պարտքն է։

Թադեոս աղան կնիկը գոած ըլլալուն վրա ուրախանալով՝ քթախոտ մ'ալ կը քաշե ու իր ընտանիքովը մեկտեղ կը սկսի դեպի Ջուբերը երթալ։

— Էշնե՞ֆ...

— Բահվաճ էշեֆ...

— Էշեֆ իսթիեճ...

— Աք կիպի հշեք...

— Վայ յավրում հշեք...[185])

— Տիկին, հշ կը հնծնա՞։

— Տեր ողորմյա, ինչո՞ւ չպիտի հնծնամ եղբը, անցյալ շաբթու Մարթա սուտուն ալ նստեր էր։

— Դուն սա հշը առ, Լևոն դուշ ասդիինին գնա, Մխրձեն, դուն ալ անդիինին, Ազավնի դուն ալ այս հշին վրա նստե։

Կարապանը կսկսի երթալ, տիկինին հշը հաղիվ թե հասյուր քայլ առած էր, շունչը կտրկտով մնկեն ի մեկ կը նստի։ Տիկինը վար կիջնա, ոտմուկ մ'է կը բռնի։ Թադեոս ագան հշին վար կիջնա, տիկնոջը օգնելու կուգա։ Տիկինը ոտք կելլա, տըզաքն ալ հշերուն վար իջնալով կսկսին քալել։ հինգ վարկյանեն Քեսթանե սուկ[186]) կը հասնին։

— Նստեցե՛ք, նայինք, քիչ մը հանգիստ ընենք, ոեֆ, աս ինչ փոքճանքներ են այսօր գլուխնուս կուգա կոր։

— Շեֆերլի՞ մը ոլուն։

— Շեֆերլի[187])։

— Թադեոս ագա կազաչեմ, սիկառ մը շինե՛ ինձի։

— Մեկ կողմդ ցավցուցկը, տիկին։

— Թեվս ցավցուցկը եմ, բայց ճաասակալը բան չէ։

— Ինչ մը բան ուանենք նե՝ կանցնի։

— Պաֆսանա... այոյ... յաՒու... չեն լակը որ... պիրատեր... չիմանար որ... ֆահվեճի... չահնար որ... պուրթայա կելսենե... չկաը անառակը որ... աֆուզում... տեր ողորմյա... ֆիմ վար Ortա...[188])

— Ալեսքա. ես իսքեյօրսուն։

— Պիր ազ չիրոզ, ազ պիր պեյնիր, սուճուբ պիրազ... էֆմեբ, սու...

— Բեմ էյի։

Ինչպես որ սովորությունն է հոն, մարդը մեկ ժամեն եռքը կը բերե ապսպրված բաները։ Թադեոս ագան, տիկինը, տղայք կուշտ ու կուռ կուտեն, ազվոր ջուր ալ կը խմեն, վրայեն սուրճ կը խմեն, սուրճին վրա շաքար կուտեն, շաքարին վրա սալոր, սալորին վրայեն մռեհալեպի, մռնեալապիճ վրայեն տանճ, վրան ալ մեյ մեկ տոնտուրմա կուտեն ու խսիրին վրա կերկննան։

— Հայրիկ փոքս կը ցավի կոր։

— Կարծես որ սիրտս կը խառնվի կոր, հայրիկ։

— *Տեր ողորմյա, ինչ եղավ չոճուխնեռաւն, սա բան մ'ալ չկերան քի ըսեմ որ դպավ։*

— *Անանկ է յա, ինչ կերան որ...*

— *Արդյոք մսեցան կըսես։*

— *Ցուրտ ալ չէ, որ մսին։*

— *Վայ փորս, այ։*

— *Վայ, սիրտս... ուֆ...*

— *Թագեոս ապա, իմ փորս ալ ցավիլ սկսավ, արդյոք դըպչելու բան մը կերանք կըսես, ամա չէ, մեր ստամոքսը ցագիք է ճանըմ, ամեն բան չկերցներ, չիլոզը դպած ըլլալու է։*

— *Ուֆ, ուֆ... վայ փորիկս։*

— *Ելե՛ք երթանք, սիկին։*

— *Հիմա երթանք նե՝ ինչ կըսեն։*

— *Ձերթանք նե՝ ինչ կըսեն։ Տղաքը պոռան ատանկ։*

— *Բանվեցի պուրայա կել։*

Բանվեցին ինչպես որ սովորություն է հոն, մեկ ժամեն կուգա։

— *Նե՞ տիր պորճումուզ։*

— *Տեորք մեհիտիե, էֆենտիմ։*

— *Զոգ տեյիլ մի, իբի մեհիտիե վերսեբ օլուր մու։*

— *Այրպ տեյիլ մի սիզե։*

— *Մեղա, նիչին այրպ օլաճամըշ, պազարլըբ էթմի՞ֆ այրպ մը, ըսավ սիկինը բարկությամբ։*

— *Ալ ֆուգում տեորք մեհիտիե, պիր տաճա պիզի պուրտա կեորիւրսեն իբի օլսուն[189]։ Ելեք երթանք, գեռնին տակը անցնելիքներս։*

— *Քա ճանըմ կանուխ է։*

— *Ելե՛ք։*

Թագեոս ապան կը հայհոյի հնիկը համոզել, ապաքն ալ մեկտեղ առնելով և այս անգամ քալելով Սարը Ցար կիջնան։

Երկու ժամու չափ հոն շոգենավուն կսպասեն, շոգենավը կուգա, կը մտնեն կամուրջ կուգան։

Էմին էֆենտին մեծկակ կառքի մեջ կը նստին և ժամը իննին մի քանիները աուտոբուսին կերթան։

— *Ասկից վերջը ջուրերը սակորի մեջ պիտի տեսնաք։*

— *Ճանըմ, չոճուխնեռաւն ինչ եղավ, չնայիս, երեքն ալ պառկեր են, բան մը կերած ըլլային նե՝ կըսեի որ անկից եղավ։*

— *Ինչեն եղավ նե՝ եղավ, հիմ իրենց եղավ, հիմ մեր քսակին։*

— Ինչո՞ւ կայները ես, չերթաս բժիշկ կանչելու, տղաքը կը մեռնին կոր։

— Թադեոս աղան բժշկի կը վազե, կը գտնե, տուն կը բերե, վիզիթաճ կուտա, կերթա դեղերը շինել տալու, երկու մեհիտիե ալ դեղերուն կուտա, կելնե տուն կուգա։

— Դեղերը խմցուցի՞ր։

— Խմցուցի։

— Ինչպես են հիմա, քիչ մը աղի՞կ են։

— Աղիկ են փորընդուն ցավը անցեր է։

— Շատ աղիկ, հասկցար ա. ասկից վերջը ինձի մեկ մ'ալ ջուրերը երթանք մի ըսեր, ջուրի խոսք ալ մի բանար, որովհետև ջուր բառը կը լսեմ կոր նե՝ խելքս գլխես կերթա կոր։

— Ի՞նչ եղավ, մեք աղեկ կերանք, խմեցինք, մեք աղեկ ալ պիտի զվարճանայինք, աղայոց փորի ցավը չբռներ նե։

— Բերանդ գոցե, կնիկ, մի ատիպեր գիս խոսելու, ինչու որ բերանս բանամ նե՝ շուտ մը չեմ գոցեր։

— Անանկ է նե՝ մի բանար բերանդ։

Թադեոս աղան վերջնական կերպով կոլուշն, որ մեկ մ'ալ դժոխք ալ երթալու ըլլա նե՝ ընտանիքը հետը չառնե ու միս միևնակ երթա[190]։

1876

(ՄԱՍՆԱՎՈՐ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՔ ԹԱՏՐՈՆԻ)

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆ

Բարեկամ, անցյալ գիշեր երազիս մեջ Ջենե գիր մը առի, որով կը խնդրեիք օրհան խնդիրներու վրա ձեր լրագրին թղթակցություններ ղրկել։

Սակայն այսօրվան օրս անուրանալի ճշմարտությանց կարգն անցած բան մըն է, որ հայոց լրագիրներուը որու հետ և ինչ բանի վրա խոսելիքնին չը գիտեն և շվարած գործ կը տանին։ Փունջ[191]) իրեն հետ կը խոսի, Մասիս Ծանուցումներու հետ, Մանդումե Հերսեքովինի հետ և Լույս[192]), որ ի խավարի կա, բոլորովին շվարած, մարդիկը կը մոռնա և ոչխարներուն հետ բարոյախոսություններ կընե, հնազանդելով Հիսուսի խոս-

քին. «Արաձյա զգաւոնս իմ», այսպիսի վիճակի մը մեջ, իրաց այս վիճակին մեջ, գրելու ու խոսելու համար գերբնական զորութիւն մը պետք է, և մենք [193]) չենք, որուն համար կըսեն, թե գերբնական զորութիւն ուներ, քերթվածներ, պատմվածներ, բանաստեղծութիւններ ընելուն. փառք աստուծո, ես իմ չափս կը ճանչնամ, և չեմ կրնար այդ զորութիւնը փափաքիլ, բայց կը նեղվի ինձի անշուշտ այստեղ հիշեցնելու, որ [194]) ամարթին այդ գերբնական զորութիւնը ունեցած է յուր մոր արցունքով, զոր խեղճ կինը յուր որդվուն վրա կը թափեր, երբ նա տակավին այնչափ ջերմեռանդ էրոնասաեր մեկը չէր, ուրեմն սպասելու եմ, որ անկրոն մեկը ըլլամ, մայրս լա և այն առեն... զորութիւնը դու Սակայն ես կը կարծեմ, թե բանը մայրի կամ արցունքի վրա չէ, այլ մանավանդ թե կնոջ ազդեցութեան վրա:

Ուրեմն այվազ քահանայ, հոր պէր հետաբ[194]) առնենք կինը... ինչ կը խնդաս, մխաքս առ չէր, ըսել կուզեմ կնոջ վրա խոսինք, նայինք գրիչս ազդեցութեան մը կը կրի՞. էհ, հայ կնիկներո՞ւ վրա խոսելով, չեմ հուսար ժամացույցիս պես ջանչան ջանչան, թըք, թըք, թըք խոսիլ, ձայնելնին եւած տեղերնին բարձրացունելի զատ, խըղունչի պես (սայլանկեղ) ունեցած չունեցած զգեստներնին ի ցույց մարդկան վրանին կրելե զատ, արձագանքի պես լսածնին, իմացածնին նույն ժամուն անմիջապես ուրիշներուն հաղորդելե զատ, ֆիւտանի ու շաբխայի վրա խոսելե զատ՝ հայ կիները ինչ գիտեն, որ ինչ ազդեն. առնց ազդածն է իրենց վիճակին վրա ցավակցութիւն:

Ո՞ւր կը փնտռես անանկ կնիկ, որ ժամացույցն օրինակ առնելով՝ կարգով, կանոնով, ժամանակով գործ տեսնե, որ խըղունչին պես քիչ անգամ տունն դուրս ալնե, որ արձագանքի պես ամեն բարի խոսք և խրատ ըմբռնե և ըստ այնմ շարժի, մեր կնիկները ամեն բանի գեղ կոդմեն օրինակ կառնեն, բաներեմա, և մեզ հիշել կուտան պարսկական առածը, որ կըսե.

Կնիկները իրենց երկան փուքանք են:

Բայց առնները առնց կնկան առնչանք են:

Եվ հիրավի ալ. Թատրոն, մարդ կը շվարի, թե այս առածին որ խոսքը ընդունելու է: Ես թեև կիներուն այնչափ քար զարկի առաջ, կընդունիմ զայն, չեմ կրնար կինը, քալ լիցի, իբր անարդ, անօգուտ էակ համարիլ, իմ խոսքը ընդհանրապես հայ կիներուն արդի ցավալի վիճակին վրա էր, և այս առաջին տողը անոնց

հարմար տեսնելով էր, որ մէջ բերի. եթէ Հայ կիներէն բնավ այդ ցած խոսքին արժանի լինելու պակասութիւններ չունենային, չէի հիշեր. բայց ես նորին կանանց արժէքը բացահայտ ցուցնելով նուէն առածին մէջ, մեղադրանքն ազատ կը մնամ: Ձեմ կրնար ուրանալ կնոջ բարձր ու վսեմ ազդեցութիւնը ընտանեկան կեանքի վրա, բայց չեմ կրնար ուրանալ հայ կնոջ ազգած ցած և տոկոր ազդեցութիւնը, չեմ կրնար ուրանալ, որ երբ երեկոյին տուն երթալով կինս վրս ողջունեն, որպիսութիւնս հարցունեն, օրիս բերէ, լսապիրներս կարդա բարձրաձայն, երաժշտութիւն մը կզգամ, բայց չեմ կրնար ուրանալ նաև, որ ամեն առտու դիս պիտի խլացունեն, նեղացունեն, դլխարկ, ֆիտտան, պոթին, հովանոց ուզելով՝ ըստ նոր եկած մոտային: Մանաւանդ իրաց այս վիճակին մէջ, ուր մարդոց քսակը ընդհանրապես դատարկ է, երբ առտուսր չկա, երբ ոսկի չկինա...

Ոսկի՛:

Ո՞ւր կը փնտռես, բարեկամ, այս աշխարհքը ոսկի շահող (հայկուն մէջ) չմնաց:

Բայց չըսես, ինչ մնաց, որ ոսկի շահող մնա:

Կնիկները խելք ու միտ իրենց զարդերուն տված՝ վազվզան կյանքը խորհող մայր մը չմնաց:

Ամեն մարդիկ միայն իրենց շահուն նայելն, ազգին վրա մտածող մարդ չմնաց:

Հարուստաը տղմա, փիլաֆ, քեպապ կը թխե փորը, խեղճ աղքատը մտածող չմնաց:

Վաճառականները միշտ խաբելով գործ կը տեսնան, ուղիղ ըսե՛, անկուր, անխռան գինի մնաց:

Ճշմարտութեան տեղը սուտը գործ կը տեսնե, մինչև Օրագլին[195]) մէջ իսկ ճշմարտութիւն մնաց:

Առած մը կա՝ էշը իշուն քով կապես՝ յա առոց կառնե, յա փառոց,— առանկ ալ մարդը մարդուն նայելով՝ իրարու վրա վստահութիւն մնաց:

Օֆ, օֆ, խնդրեն ալ շեղեցա, եթե Ընդհանուր ժողովին մէջ ըլլայի նե՝ ինչ պիտի քաշեի արդյոք:

Հա, մինքս ընկալ, ըսեմ, այդ ժողովին մէջ գործ տանելու շենք ու շնորհք մնաց:

Ո՛չ բարեկամ, ոչ, վանքերու մէջ իսկ բարի մարդու տեղ սև ազվեռներ եղան: Հիսուս Քրիստոսի ճիշտ աշակերտ երկու հատ ալ չմնաց:

Մեծ ու պզտիկ Շարայի[196]) պես միայն սատանքանին կը պաըարեն, գիր գրելու, գիրք կարդալու տրեմ վարձք չմնաց:

Ամեն պատանի ինքզինքը Սողոմոն[197]) կարծեց, իմաստա-
վով լեցավ Պոլիս, իմաստուն մ'ալ չմնաց։

Ոճրագործը սրբացավ, Վանցի Պողոսին և Ագթամարցի Խաչատուրին վրա բնավ հանցանք մը չմնաց[198])։

Երկուքն ալ սրբացան, արդարացան, վախ, որ կրոնական ժողովին մեջ արդարութիւն չմնաց։

Թերևս ապարանիք մեջ ալ չմնաց, արդյն քովս ալ ասկե ավելի գրելու կարողութիւն չմնաց, ուստի առայժմ կը վերջացուցնեմ նամակս, քանի մը օրեն գրելու խոստումով[199])։

1875

ԱՊՏԱԿՈՂ[200])

ԿԱՆԱՑՔ ԾՈՎՈՒ ԲԱՂՆԻՔԻՆ ՄԵՋ

— Ոաքդ պատկեմ, քուդում Թաթիկ տուտու, սա դիմացը հանվոզ կենձը ձվ է։

— Ջճանչցա՛ր։

— Պիտի ճանչնամ, բայց միտքս չգար կոր տե՝ անոր հետ մը հարցուցի։

— Դուն ալ բնաւ սեբսեմ բան ես, քանի մը անգամ հետը տեսնված ես, չես ճանչնար կոր, Թադուհին է։

— Ք՞ա, ձը Թադուհի՞ը։

— Մեր դրացիին նշանածը։

— Ոաքդ պատկեմ, թեվեքեվլի չէ որ էրիկ մարդիկ կնիկներին կը ձգեն կոր. քա վույ մեղքիս, աս որչափ ճերմակ պոյա կը քսվի եղեր, որ այնչափ ճերմակ կերևար։ Հիմա նշանածը հոս ըլլա տեսնա նե՝ ինչ կըսե։

— Ի՞նչ պիտի ըսե, հիմա պոյա չքսվոզ աղջիկ խիսա քիչ կը գտնվի։

— Ախեկ որ աղջիկտեսը ծովու բաղնիքներու մեջ չըլլար կոր. եթե անանկ ըլլար, աղջիկներուն շատը տունը պիտի մնար։ Վայ Թադուհի, վայ։

— Մյուս կենձն ալ Թադվոր աղային կնիկն է, դուրսը տեսնաս նե՝ շիշման կնիկ մ'է կըսես, բայց չէրոզի պես կերևա կոր։

— Ի՞նչպես կը շիշմաննան կոր։

— Ի՞նչպես պիտի ըլլա, տունի մեջ բաթաներեն բամպակները կը հանեն կը հանեն, չորս թաթաղինուն կը լեցուննեն կը շիշմաննան։

— Իրավ որ սա էրեկմարդիկ բեք սերսեմ բաներ են, միշտ կը խաբվին ու կը խաբվին։

— Մարի, եկուր հոսկից մոլը։

— Չէ, ասկից պիտի նեռվիմ։

— Տեր ողորմյա, տեր ողորմյա, տահա ինչեր պիտի տեսնանք, խաբելայով ալ ծով մտնալ տեսած չունեին։

— Մի պռոար, ինչ ընե կենցը, գլուխը մազ չունի, խաբեան չհապռե նե՝ բերուհան գլխեն կելլա։

— Մազ չունի գլուխը։

— Չունի, հապա։

— Թերեզա, խուշիկս, արթըխ ելիր, տես, պեչնըդ սոլ-միշ եղավ, հիվանդ կըլլաս։

— Բժիշկը ըսավ, որ մինչև որ չմսխս, չելլաս։

— Քա տուտուս, բոթիններով պիտի մտնամ ես։

— Զըլլար աղչիկս, տեսնողը ինչ կըսե։

— Որձու հոգ, ինչ ըսե նե՝ ըսե, բեք կը սեպեմ տե, տաքերս մաքուր չենս։

— Ելլաս նե՝ ինչ պիտի հագնիս։

— Տունենն մյուս բոթիններս բերել կուտամ։

— Էհ, մարի, բայց նայե, որ մեկուն ոտքը չկոխես։

— Թերեզիկ տուտուս, ապվոր կը լողամ կոր։

— Մաշալլահ, աղչիկս, խուշիս, մազերդ ալ ծովը բռնած են, աս ինչ փլիճի պես ալ մարմինն ունիս եղեր, հեմեն աստված խայըրլը խոմեթ մը տար տե։

— Քիչ մը անդին գնա, քա, արթըխ փլիճի պես մարմինն ունիս ըսին տեր, ուրիշը պահուդիւր չեն ըներ ա։

— Ես քեզի ինչ ըրի։

— Ի՞նչ պիտի ընես, գլուխս կելլաս կոր։

— Ասդին եկուր, խուշիս, ասդին, քիչ մը մեթ ըրինք տեր խըսխանմիշ եղան։

— Ըհհհ, բեք հոգս էր որ խըսխանմըշ ըլլամ. մազերը երկար են եղեր, ինձի ինչ, սանքի բեք նատիտե բան մ'է տե՝ խըսխանմըշ ըլլամ պիտի, իմ վիճուտաս անոր վիճուտեն ադեկ է, լեքե չունիմ, բան չունիմ վրաս։

— Քեզի ալ չիլքին ըսող չեղավ ա։

— Չեղավ տեր, թող քիչ մը անդի երթա հոն լողա։

— Ամոթ է Լուցիքա, ամոթ, ատանկ խոսքեր մի ընեք։

— Թող չըսեն քի չլսեն։

— Որդի սա սանսարը տուր, սապոնն ալ տուր, որ գլուխ վըլամ պարի։

— Սա անդիի կենճը ալ է, քա՛։

— Չիյտեմ։

— Քեզի՛կ պաճախլը բան մ'է։

— Ոտքերը որչափ մեծ են։

— Մատվըները ինչ չիրքին են։

— Կարծես քի, քիչ մ'ալ խամպուր է։

— Քիթն ալ ինչ անշնորհք է։

— Բերանն ալ մեծ է։

— Վայ առնողին գլխուն։

— Ա՛ս ոըվեն կնիկն է աճապ, միսոյով կը մտնա կոր։

— Պես պեղլի քիպար ըլալու է, չնայիս խըչըլըն ալ չէ հաներ։

— Մայրիկ, մայրիկ, տես, ծովուն ջուրը կասկասիլը եգավ։

— Ինչ պիտի ըլլա, ամենքն ալ կարմիր քսեր քսեր, հոս եկեր են, հիմա մյուսներն հավկիթի պես կարմիրի պոյանմիշ պիտի ըլլան։

— Ա՛ս էրիկ մարդիկ մեզի համար ինչ ըսեն նե՝ հալա ուզինե։

— Թատրոնը հիմա հոս ըլլար տե՝ տեսնար։

— Զգի՛, տա յումուրճախը, կանանց պոչն է փակեր, ամեն օր կը գլե։ Ո՞վ պիտի կնիկները կամ աղջիկները երեսը չեն նայիր նե՝ ան ալ բարկությունը գըրիչեն կառնե։

— Ամա տեսնաս ինչ պաղ բան է, փառի պես մեկն է, սերսեմին մեկն է. ինչպես եղերեքի, գաղթիա կը կոխե կոր, պարի գլածներն ալ բան մը ըլլան, իրեն պես պաղ բաներ։

— Ըըմպլին մեկն է։

— Որչափ ըլլա նե՝ դրսեցի է, շեհիր ուշադը չէ։

— Ամա ինչ խոսար. դրսեցի ըլլալուն չի նայիր տե՝ եկեր հոս ալ լրագիր կը հանե. քաշիր քաֆալը։

— Դուք ալ արթըլս բեք վար կը գարնեք կոր, հանըմներս, ձեզի պաղ է երևցեր տե՝ անոր համար առանկ կըսեք կոր։ Բեք ալ սիրուն, բեք ալ տաք, բեք ալ կրթյալ, բեք ալ ծանր երիտասարդ մ'է*)։

— Արթըլս աչ կընես, մեզիկսի մեջ մտնա նե՝ սա չգաս-

*) Քալ լեցկ, տուիկա ձեր ազնվությունն է։ Ծ. Ա.

կը, չպռատար, չխաղար։ Սա բուտրայի խուխին տուր, քա։

— Ելար գուրուկ, սրբվե՛ տե՛ր երթանք։

— Մա հավլուննլը տպին բեր։

— Մ՛ռ, շուտ ըրե՛ հապվե՛։

— Կը հապվիմ կոր իշտե. սա պուտրա իլեն կարմիր պոչան կամացուկ մը տուր, որ քավիմ տե՛ր երթամ։

— Տունը քավե՛, դուն ալ արթըխ։

— Զըլլար, բենիս կը փոխվի։

— Մնաք բարով Թաթիկ տուտու։

— Երթաք բարով, Մանիկ տուտու, կելին հանըմին մախաուզս խաթըը կը հարցնեմ։

— Հայտե՛, մենք ալ փախչինք, աղչիկ։

— Երթանք ամա, կարապետը դար տտակ պիտի բերվը, տահա չեկավ։

— Երթանք, Արուս, յումռըճախը տունը դա նե՝ որչափ ձայն ունի նե՝ կը պոռա։

— Երթանք։

— Վաղը իրիկուն կանուխ կուգանք, հետևնիս թյություն, խահվե ալ կը բերենք, մեկ երկու ժամ կը նստինք։

— Օզի ալ կը բերենք, կը կլլինք, Թաթիկն ալ ձայնը քող կուտա, ազվորիկ մը էյլեմիշ կըլլանք։

— Շատ աղեկ։

— Թատրոնը չիմանա, հա։

— Չենք իմացունե՛ր[201]։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ

(Գինետան մը մեջ)

— Ծո՛, Գրիգոր, գնա սա Թորոսին տտակ ուզե, ամիսե մը լ վեր խմեց խմեց, երկու երեք օր է չերևար կոր։

— Վարպետ, անիկա կեռնիւլլիւ գլվեցավ։

— Վարպետին գնա ուզե։

— Ան ալ կեռնիւլլիւ գլվեցավ։

— Ի՞նչ կլլտես, շուտ ըրե՛, գոնե սա կիբտիոսը գոբը, տտակ ուզե, ան ալ չկլլա գլվի։

— Ան արդեն գլվեցավ։

— Ինչո՞ւ կեցեր ենք, անանկ է նե՛ գնա, մեխանեն ալ կեռնիւլլիւ գլուխ տուր տե՛ր կլլանք հետևնիդին երթանք։

— Ինչ ճանըմ, քաղաքին շիշեն առնել ձուր կը տանին կոր, իրիկունը սալաթայի վրա ինչ պիտի անցուընենք։

— Թող տուր, տիկիններուն քոմբեթեն պիտի տանիմ։

— Պարոն Թումիկ, խմացար, որ զապթիե պիտի գրվիս եղեր։

— Ո՞նչ ընեմ, աղբար, պարտքի համար զապթիեներու ձեռքեն խալըսելու համար զապթիե ըլլալ որոշեցի։

— Զապթիե ըլլաս նե՝ ինչ պիտի ընես։

— Ինչ պիտի ընեմ, պարտք ունեցողները տանիմ բերեմ պիտի։

— Ինքդինքդ ալ մոխուղ, չըսե՞ս։

Լրագրի մեջ կը կարդանք։

«Պատերազմին տեղն երթալու համար տեղվույս ոստիկանութեյան զորաց կարգերեն պահեստներուն թիվը 5000ի կը հասնի, որոց թիվը քրիստոնյաներեն և հայերեն պիտի լեցվի մեծ մասամբ։

Մեղք, որ հայերը հերիւրիկոս մնացին...

— Մայրիկ, ես ալ զինվոր կը գրվիմ կոր։

— վայ գլխուդ։

— Ինչո՞ւ։

— Անցյալները շուկային մեջ սոճիթանները տեսնելնուն պես լեզուները փախչողնեուն առաջինը դուն չէ՞ր։

— Ո՞նչ կելլա ասկից։

— Ըսել կուզեմ, որ դուն վախկոտ ես, շուտ կը փախչիս։

— Աղեկ ա, կռիվեն փախչելու համար ալ զինվոր պետք է կառավարութեյան. Թշնամին վախավ կըսեն նե՝ ինչ ըսել է։

— Հասկցա, ուրտս, հատկապես փախչելու համար քանի մը վաշտ զինվոր ըլլա նե՝ մյուս զինվորներն փախչելու հոգը ձեզի կը թողուն, իրենք գործերնուն կը նային Ապրիմ։

— Ճանըմ, ինչո՞ւ նստած ես, չերթա՞ս դուն ալ կնոնիւլիւ գրվիս ու տեղուիթյան ծառայես։

— Կնիկ, վաթսուն տարու մարդ կնոնիւլիւ կրնա՞ գրվիլ։

— Ինչո՞ւ չպիտի կրնաս գրվիլ։

— Երթալուս պես թնդանօթին բերանը կերթամ, կը մեռնիմ նե։

— Սվելի ազեկ ա, պարբի ես ալ ուրիշի մը հետ կը կարգվիմ և քիչ մը օր կը տևոնամ։

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ

Ռուսկ.— *Մատիսի խմբագիրն իր էֆենտիներուն առջև ծխելու համար այս ապրանքին բավական ծախու առած ըլլալով՝ գինը բարձրացած է։*

Խանվե.— *Սրճարաններու մեջ սիսյան գործածվելն ընդհանրացած ըլլալով՝ այս ապրանքը երեսն ընկած է։*

Զեզոռիւթյուն.— *Տերություններուն ամենքն ալ առին, Հունաստան և Բումանիա կը մնատուն կոչ, բայց չեն կրնար կոչ գտնալ։*

Խըչլըխ.— *Տիկիններուն քամլթեն՝ բամպակը վաթկա շինելու համար շատկեկ գնած ըլլալով՝ ասկից վերջը այս ապրանքեն չպիտի կրնանք գտնալ։*

Խավյար.— *Գինը շատ բարձր ըլլալուն՝ բժիշկներու կողմե ստամոքսի ճպռասակար դասվեցավ։*

Ափիոն.— *Գիշերվան պեֆնիները բարձր գնով ծախու կառնեն կոր։*

Սրաբմաչեք.— *Այս օրերս լուսնկա ըլլալով՝ գիներն իննկան*

Օճառ.— *Եգիպտոսի գործքերը մայլաքաղաքս գալեն ի վեր գինը բարձրացավ։*

Ֆարֆիւցա.— *Ծովու բաղնիք մանոզներուն ուքերուն նայ*[202]։

1876

ԽԵՂՁ ՍԻՐԱՀԱՐ ՄԸ

— Բարև՛, էֆենտի։

— Ասածու բարին։

— Թատրոնի խմբագիրը դո՞ւք եք։

— Այո՛։

— Ձեզի հոդված մը գրել պիտի ուզեմ։

— Ազգային՞ն։

— Չէ։

— Բանասիրակա՞ն, տնտեսակա՞ն։

— Չէ՛, չէ՛, իմ վրայօքս բան մը պիտի գրել ուզեմ։

— Ի՞նչ է։

— Ո՜հ խմբագիր էֆենտի, եթէ դուք իմ տեղս ըլլայիք մինչև հիմա կը մեռնէիք. անհրաժեշտության մը զոհ գացած եմ։

— Գո՞ւթդ ձեռքիդ հափշտակեցին։

— Չէ՛, աղքատությունը ինձի հանցանք է եղեր։

— Կաղաչեմ, ըսե՛ք, ձեռագիր պիտի գրեմ, սպասելու ժամանակ չկա։

— Ի՜հ, մեծապատիվ խմբագիր էֆենտի, կուզեմ որ թեր-թիդ մեջ ազդու մը լվաս սա բռնավորը։

— Զլուացե՛։

— Աշխարհի առջև ծաղր ու ծանակ ընես սա գազանը։

— Ըսե՛ք։

— Նվազկոտ աչքերով, բարձր հառաչով, սևեր հագած աղջիկ մը տեսա անցյալները իւսկիւտար. վինքը սիրեցի և սիրելս ալ իմացնելու համար նամակ մը գրեցի իրեն։

— Է՜յ։

— Նամակիս մեջ իմացուցի իրեն, թե գիշերները չեմ քնանար կոր, ցերեկները գործի չեմ երթար կոր, իրեն համար կը մեռնիմ կոր։ Ա՜հ, մի խնդար վրաս, կաղաչեմ էֆենտի, դուն ալ տեսնաս նե՝ վինքը կը սիրես։

— Չեմ խնդար կոր։

— Քալվածք մը ունի որ հարյուր ազջիկ կարժե, նայվածք մը ունի, որ հազար աչք կարժե, աչք մը ունի, որ միլիոն նայվածք կարժե. ոտքերն ալ պուտիկ են... ա՜հ...

— Նամակիդ ի՞նչ պատասխան գրեց։

— Նամակիս պատասխան չգրելուն պատ, անցյալ շաբթու նստած տունին առջևին անցած ատենս, նամակս բրիկ բրիկ ընելով գլխուս նետեց։

— Է՜յ, ի՞նչ ընենք։

— Ի՞նչ պիտի ընենք, երբև ազգային խմբագիր մը ատիկա նյութ ընելու գրելու եք։ Աղջիկին անունը Թ... է. պզտիկ եղբայր մ'ալ ունի, որ մոտերս գրասեն եկավ։

— Ասիկա մեզի վերաբերյալ խնդիր մը չէ։

— Սիրուհյս վրա ոտանավոր մ'ալ գրեցի, կուզեք նե՝ կարդամ։

— Թո՛ղ մեռ։

— Կաղաչեմ, ոտանավորն ալ հրատարակեցեք։

— Կը խնդրեմ, անոնք առաջարկությունները մի՛ ընդունիր ձրիաբար եմ։

— Ըսել է, որ անհոդվածական խմբագիր մը չեք։

— Ի՞նչ կուզեք, որ ընեմ։

— Կուզեմ որ խեթա հոգված մը գրեք և իմայնեք օրիորդ Թ...ին, որ ըրածը անդթություն է, գազանություն է, վայրենություն է։

— Իրավունք չունինք բանալու։

— Դուն ըսե՛, մի՛ վախնար, թերթդ առնեմ իրեն երեսը պիտի նետեմ, որ կարդա։

— Երկար ըրիք, կարճ ունիմ։

— Ըսե՛ ինձի, սա աղջիկն ըրածը կը վայլի՞։

— Ժամանակ չունիմ, ըսինք ա՛։

— Խմբագիր մը ամենուն ցավերը լսելու պարտավոր է. ի՞նչ իրավամբ իմին սերս կը մերժե կոր։

— Ինձի ի՞նչ, գնա՛ իրեն գլուցե՛, մարդ ասածո. թող տուր գիրս գրեմ։

— Ձիս կը վռնտես կոր հեհ... շատ ադեկ. ես ուրիշ լրագրի ալ կրնամ երթալ և ցավերս հայտնել. եթե անոնք ալ մերժեն՝ այս բանին համար հարցապնդում մը ընել պիտի տամ երեսփոխանական ժողովին մեջ։ Այո՛, կուզեմ որ այս գործս վիճաբանության գրվի, քննվի, ուրշվի ու վճռվի։

— . . . . .

— Ձե՞ք խոսիր։

— . . . . .

— Պատասխան չեք տար... և կըսեք ալ թե ազգին ծառա-

յություն ընելու համար լրագիր կը հանեք, վա՛յ այն ազգին որ ձեզմէ օգուտ կը հուսա, գոնե սա ոտանաւորս հրատարակեցէ՛ք։

— Ձեմ չլինար, ըսինք։

— Գոնե մեկ տունը դնեիք։

— Չըլլար։

— Գոնե կարդայի, մտիկ ընեիք։

— Մ՛ւ կը ձանձրացնես կոր։

— Երկու տող բան մը կը գրե՞ս ա՛։

— Բանդ գնա՛, կը գրեմ։

Այս պատասխանին վրա մեր սիրտառը գոհութեյուն հայտնելով մեկնեցաւ։

կը հուսանք, որ ուրիշ անգամ չդար մեր գլուխը ցավցնելու[208]։

1876

ՍԱՐԱՖ ԲԱԲԱԶԻՆ ԴԵՊՔԸ

Եթէ սարաֆներու մէջ բարեզութեյուն ընող չկա՝ բարեզներու մէջ սարաֆութեյուն ընող կը գտնվի եղեր։

Իւսկիւտարի մէջ աղքատ կնիկ մը՝ երկու շաբաթ առաջ նեղութեյան մէջ իյնալով՝ իր քահանային կը դիմե ու իր ցավերը կը բանա՝ մխիթարութեյուն գտնելու համար։

— Տեր պապա, կըսե լալով, երկու գիշեր է, որ գավիզնեբովս անոթի պառկիր եմ։

— Ի՞նչ ընենք, օրհնած, հիմա ամեն գիշեր կերակուր ո՞վ կերած ունի. համբերելու է։

— Ի՞նչպես կրնամ համբերել, տեր պապա, անոթի կապրըվիմ. չեմ կրնար աշխատիլ, որ ուրիշներու տունը երթամ աշխատիմ ու հաց ճարեմ։ Մուրալու կամչնամ, բայց անոթի մընալն ալ չեմ ուզեր։ Ճար մը գտնայիր, տեր պապա։

— Ի՞նչ ճար կրնամ գտնալ։

— Մեկ երկու թինճխրին սահան ունիմ, սըվոնք առ մեկու մը ձեռքով ծախել տուր ա...

— Օրհնած, առուտուր չկա հիմա, թինճխրին ու սահանը ով կառնե։

— Դուք ուզեք նե՝ կրնաք բան մը ընել։

— Օրհնած, սաանկ գործերու մէջ մտնալ չեմ ուզեր, ինչու որ հոգին ամէն մարդ մէյ մէկ բան կըսէ։

— Ի՞նչ պիտի ըսեն։

— Որը լայնքին կը քաշէ, որը երկայնքին. անոր սոսր քով ալ կը բամբասվիմ։

— Հոգ մի՛ ըներ դուն, տեր պապա, ինձի խնդացուներս նե՛ սատված ալ քեզի կը խնդացուներ։

— Տո՛ւր նայիմ, սա թենեքիներդը ու սահաններդը։

— Առավասիկ հոս են, առե՛ք։

— Սա՛ մէկ չէյլնք ձերմակ մեճխիին տ՚ո հիմակուհիմա, պետքերդ հոգա՛, ես ինչ կընեմ կընեմ, բան մը կընեմ։

— Շնորհակալ եմ, տեր պապա, վաղը առաու կամ իրիկուն կուգա՞ս ինձի խաթար մը բերելու։

— Ի՞նչ ըսել է, հարկավ պիտի գամ, դուն անհոգ եղիր։ Մնաք բարով։

— Երթաք բարով։

Որուն մտքին կանցներ, որ տեր պապային մճաֆ բառովը ուլթիմաթում մ՚է եղեր, որովհետև այն օրեն ի վեր խոշ կնկան երեցած չունի եղեր։

Կը հուսանք, որ կանանց հետ սաանկ սարաֆութիւն ընող տեր պապան կը բարեհաճի կամ առածները եւ դարձուներ կամ անոնց սուակը, դի մի լեցի բանն հասարակութեան, թէ տեր պապաները միշտ կլլելու կը նային։

— Ա՞ս էր սարաֆ բաբադին դեպքը ըսածդ։

— Աս էր, դուս ի՞նչ կարծեցիր հապա։

— Ես կարծեցի, որ...

— Ի՞նչ։

— Կարծեցի որ...

— Ըսե՛ս։

— Թող մնա հիմա, վաղը կամ ուրիշ օր մը կըսեմ։

— Հրատարակվելո՞ւ բան է։

— Կըսեմ ըսի ա՛, թող մնա հիմա[204])։

1876

Անցյալ կիրակի քարոզչին մեկը խոսելին եռքը խուցը մտավ, հոգնած ըլլալով՝ թաշկինակը հանեց ու սկսավ քրտինքը

ապրել։ Նույն միջոցին երիտասարդ մը, որ քարոզը մտիկ ըրած էր, քարոզիչին խոսքը մտալ ու սկսավ վրայի հագուստները նետել։

— Ի՞նչ կընես հարցուց քարոզիչը, ես քարոզ ալ հոգնեցա, դո՞ւք ինչ ըրիք։

— Ի՞նչ պիտի ընեմ, ես ալ քարոզդ մտիկ ըրի, անվեց հոգնեցա... չնայիս արյուն քրտինքի մեջ պիտի խեղդվիմ։

— Իրա՞վ կըսեք։

— Սուտ ինչո՞ւ պիտի խոսիմ. բայց շատ ուրախ եմ, գալ շաբթու եղբայրս ալ պիտի բերեմ, որովհետև խեղճը ամիսե մը ի վեր հիվանդ կը պառկի. բժիշկները ամեն ճիգ թափեցին դինքը քրտնցնելու, բայց չհաջողեցան. հոս կուգա, ձեր քարոզը մտիկ ընե՛ նե՛ ազիկ պիտեմ, որ կը քրտնի ու կը բացվի[205])։

1876

Երիտասարդին մեկը օր մը թագի մը դպրոցին վրա դիտողությունն ըրած առնը հանդիմանելուն դինքը ըսելով՝ Թե դուն այս թաղին չես, մեր գործին չես կրնար խառնվիլ։

Գանի մը օր ետքը՝ նույն թաղին մարդուն մեկը ծովը կիյնա ու բանտը անանկ կը բերե, որ հանդիմանություն լսողն ալ, որ լավ լողալ գիտեր, հոն կը դանվի...

— Ծովը չնեռվի՞ս սա մարդը ազատես, կըսեն իրեն։

— Ես այս թաղին չեմ, կը պատասխանե երիտասարդը[206])։

1876

ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՆԽԻԿ ՋԱՌՆՈՂ ԽԼԱՎՈՒԶԸ ՎԵՐՋԵՆ ԲԱՑԸ ԿԸ ՄՆԱ

Ամիս մը առաջ տիկին մը յուր զավկին աղջիկ մը գտնելու համար, Լյուպկեն[207]) կկլնե և Իսկիւտար վանքին թաղը խլավուզի մը տունը կերթա։

— Բարև ձեզ։

— Աստծու բարին, բարի եկաք, սանկ հրամմեցե՛ք, նստեցե՛ք։

— Շնորհակալ եմ, ի՞նչպես եք, ադե՞կ եք։

— Սանկ, նանկ։

— Ի՞նչ կա, ի՞նչ չկա, ձեռվընուդ տակ ադվոր ադչիկնեը կա՞ն։

— Կը գտնվի, հիմա ադչիկին շատ ի՞նչ կա, գլխուս մազեն ավելի։

— Բուղում, ճանըմ, մեր էֆենտիին համար ադվոր ադչիկ մը պիտի՞ք։

— Այո, պիտինք, Սելամսըզի[208]) կողմը մեկ ադվորիկ ադչիկ մը կա, կուզեք նե՝ երթամ անդամ մը խոսիմ։

— Բուղում Գեորգ ադա, դուն դիտես։

Ալավուզը շուտ մը կելլա և ադչկան տունը կերթա։

— Բարև ձեզ հանըմներ։

— Աստծու բարին Գեորգ ադա, ինշալլահ խեր է։

— Ներ չըլլար նե՝ կուգայի, ձեզի ադվոր փեսա մը գտա, թոփիկ, կլորիկ, սև աչքռվ, սև ընչքվիով...

— Թամ մեր ուզածն է, քուզում Գեորգ ադա, դենսաթը ի՞նչ է։

— Ջյաֆիխ է, ամիսը վեց ոսկի կառնե, թեմպել չէ, համան չէ, սա խըսմեթը մի փախցուներ։

— Քանի մը օրեն պատասխանը կուտանք քեզի։

Ադչկան քուլբը հեռվեյ առտուն խալվուզին տունը կերթա և անկից ալ խալվուզին հետ մեկտեղ մանչը տեսնելու կերթա, կը տեսնե մանչը, կը հաճնե, մեր մախալուզն է կըսե, և Գեորգ ադային խաթրը էվելոք խոշ ընելու խոսքեր ընելով՝ մըտնաք բարով կըսե, կելնե կերթա։

Գեորգ ադան, որ ավելի ադչկան մը մանչ, կամ մանչու մը ադչիկ գտնելու մեջ հաճույք կզգա, քան թե այս արվեստին ստակ վաստակելու մեջ, քանի մը օր լրագրավաճառությունը մեկդի կը դնե և այս առևտուրը եվելու կաշխատի և կհնե։ Կոլոշվի որ Սուբբ Սարգիսի շաբթուն ալ հարսնիքը ըլլա։

Հարսնիքի իրիկունը մանչը դռնեն ներս մտնելուն պես՝ հարսին քուլբն է կսկսի ոտքերը գետինը զարնել և պռռալ խըլավուզին երեսը։

— Սա այլադը բերիր, քյոչա հետ գլուխ գլուխի ալիք, ծո՛ Գեորգ, հիմա քեզի կատ կատ ընեմ նե՝ իրավունք չունիմ։

Հարևանները կուգան և մեր Գևորգ ադան հարսին քը-
րոջը ձևոքեն կը խլևնեն Ջմռռնանք ըսելու, որ Գևորգ ադան
պզտիկ կազմով մեկը ըլլալուն՝ մեծ հարմարություն ունի ծեծ
ուտելու։

Երկուշաբթի օրը խլավուզ Գևորգ ադան աղջկան տունը
կերթա իրավունքը ուզելու։

— Նազիկ հանըմ, մեր հախը ավեք, ձեզի փեսա գտանք։

Նազիկ հանըմը նորեն խլավուզի վրա ծեծի կը վազե. խը-
լավուզը ծեծ չուտելու համար բուրդ ու բապուճ կը փախչի։
Հետևյալ օրը խլավուզը բոլոր թաղերը կը պտըտի ու մանչուն
պատվավոր ըլլալուն համար վկայադիր մը սոորագրել տալով՝
նորեն աղջկան տունը կերթա։

— Հրամմեցեք, նայեցեք, Նազիկ հանըմ, մանչուն պատ-
վավոր ըլլալուն համար ամեն մարդ կը վկայե կոր։

— Նայեցեք սուրաթըննա, ուռ սա քսաննոց թուղթը ու դնա,
նրևտ չտեսնամ։

Գևորգ ադան նայելով, որ գեմ դնե՝ ծեծ պիտի ուտե՝
տունեն կելլա և շիտակ մեր ոտպատանը կուգա, կը խնդրե մեզ-
մե ծանուցանել բոլոր խլավուզներուն՝ թե կանխիկ ստակ չա-
ուած՝ ոչ մանչերուն աղջիկ զոնան, ոչ ալ աղջիկներուն մանչ։

Տեսնենք, մեր այս հոդվածը աղջիկներուն ու մանչերուն նը-
կատողության պիտի առնվի, թե ոչ[209]։

1877

ՔԱՂՈՒՄԻ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆ

*Երեքշաբթի՝ Զատկին երրորդ օրը աղքատ և ծեր հայ մը
կը վախճանի Բերա։ Ընդհանրապես աղքատ աննշեյալներու
թաղման հանդեսը մեկ քահանայով կատարվելուն՝ աննշեյալին
կնոջը ազգականները՝ որ աննշեյալին կնոջ պես ազգայնոց հոռո-
մեական մասեն կը վերաբերին եղեր, չուզելով անշուք կերպով
կատարել թաղման հանդեսը, կորոշեն չորս հինգ հոռոմեական
վարդապետ բերել և անոնց ձեռքով վերցոնել տալ մեռելը։
Աննշեյալին ազգականները իրենց պարիկությունն կը համարեն
այս որոշումը և կուգեն, որ աննշեյալն ըստ օրենի իր եկեղե-
ցիին կրոնավորներուն ձեռքովը թաղվի և վայելուչ կերպով.*

ուստի և ասոնցմե մին Բերա Ս. Երրորդութեան եկեղեցին կերթա, ավագերեցը կը գտնայ։

— Օրհնյա՛, տեր հայր։

— Աստված օրհնե։

— Աղքատ մեռել մը կա, չորս քահանա և սիրացու ըրկեցեք, որ վերցնեն։

— Չորս քահանայի համար չորս քանոնոց թուղթ պիտի տաք, օրհնած։

— Շատ աղեկ։

— Մինչև որ չորս քանոնոց թուղթը հոս չգա՝ քահանաները սըկի հունա չեն երթար, օրհնած։

— Տեր հայր, դուն ըրկե գնանք, վերջը ես կուգամ կուտամ։

— Չըլլար, օրհնած։

Թաղական մը—հարյուր վաթսուն դուրուշ ալ սիրացուներուս համար պիտի տաք, բուլ մը պակաս չըլլար, բրի ֆիքս։

— Տեր հայր, օրենք է, որ ստակը կանխիկ չառած քահանաները չերթան։

— Այո, օրենք է, Զատկի օրերը մեկ քանոնոց թուղթի քահանա գտեր ես տե՝ չես հավներ կոր։

— Բանոնոցին պակաս չը՞լլար։

— Կըլլա ամա, մեռելը ուզածնուդ պես չթաղվիր. թաղել կա, թաղել ալ կա. ուճուղ էթին չորպասը առթսըդ օլուր կըսեն[210])։

— Տեր հայր, շուտ ըրե, սա քահանաները ղրկե, չէ նե հոռմեական վարդապետները պիտի վերցուներն, ամոթ է, պզտիկութիւն է մեզի։

— Ուղեն նե՝ հրեաները վերցուներն, որին բանուածը, քանոնոցները դալու են, օրհնած։

Մարդը քահանային այս անվայել վարմունքին դեմ սրդուած՝ շիտակ Ս. Պատրիարքին առունը երթալով գործը կը պատմե։ Նորին սրբազնութիւնը երկու տող գիր գրելով կը հրամայե, որ անմիջապես չորս քահանա և քանի մը սիրացու ղրկվին։ Քահանան այս գիրը կարդալուն պես կը պոռա.

— Ս. Պատրիարքը իր գործին խառնվի Թող, մեր եկեղեցին խառնվելու իրավունք չունի։

— Չրամմեցեք, տեր հայր, առեք ուղածնիդ և ղրկեցեք քահանաներն ու սիրացուները, կըսե մարդը ու տուն կերթա։

կես ժամեն նաքը կը տեսնա, որ մեկայն երկու դարեկ քահանա կուգան. ատոր վրա նորեն եկեղեցի կերթա և ավագերեցը դառնալով.

— Ձորս քահանա պետի ղրկեիք, երկու հատ ղրկեր եք, կըսե։

— Ի՛նչ ընեմ, քահանա չկա, կուզեք նե՝ ես դամ, բայց դիս չեք կրնար կշտացնել, ես օլուր օլմազ ավագերեցներեն չեմ։

Շատ մը դժվարություններեն նաքը, խեղճ մարդը կը հաջողի քահանա մ՚ալ առնելով տուն տանելու ու մեռելը վերցնելու։

Այս դեպքը կրկն. ժողովո ուշադրությանը ներկայացնելով կը խնդրենք, որ արժանն տնօրինե, որպեսզի նմանօրինակ դեպքեր՝ որ դժբախտաբար միշտ կը պատահին, ուրիշ անգամ տեղի չունենան։

Ընթերցողաց գալով՝ անոնց ալ կըսենք, որ ակռանին քիչ մը սխմեն ու չմեռնին մինչև ցնոր կարգադրություն կրոնական ժողովո[211]։

1877

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԸ ՏԵՍՈՒԶԸ

Ժամանակավ Սանուց ընկերություն մը կար կարին։ Այս ընկերության նպատակն էր օգտակար գիրքեր ծախու առնելով թանգարան մը հաստատել։ Այս ընկերությունը տեսուչ մը ուներ, որուն ալ նպատակն էր ընկերության համար հավաքած դրամները անկողմնակալությամբ ուտել։ Այս Սանուց ընկերությունը օր մը կը փափաքի յուր պյուճեն աչքե անցուներ, ուստի կը հրավիրե տեսուչը, որ հաշիվները ներկայացունե։ Հաշիվները ներկայացնելու երես չունենալով՝ տեսուչը առջի բերան կարևոր չգտավ անոնց ներկայացվիլը, բայց եաքեն կը դիջանի ընկերության ազատնաց և անոր խնդիրքը կը կատարե։ Հաշիվները երկու հազար դուբուշի բաց կը ցուցնեն։

— Երկու հազար դուբուշը ճիշ է, կը հարցնե ընկերությունը տեսուչին։

— Հոն է, կը պատասխանե տեսուչը, ընկերության տետրակին մեջ անցած է։

— Տեառակին մեջ անցած է, բայց անառակին մեջը չկայ։

— Ինչ, կուզեիք որ անառակին մեջն ալ ըլլար, այն դուռմարը ևս իմ հաշվուս անցուցեր։

— Ո՞ր հաշվուն։

— Պախալին, քաւապի հաշվուն։

— Թանգարանին մեջ պախալին բանիր առիր գրիր, մեր ընկերութեանը կանոնագրութեանը մեջ պախալինի, քաւապիեի վերաբերյալ հոդված մը չկայ։

— Այո, չկայ, ան գուռմարը ևս կերթա, բայց դեղ մտոք չկերթա։

— Ի՞նչ ըսել է։

— Այսինքն թե՝ կերած ժամանակս մաքիս դեղութիւն մը չանցուցեր։

— Անձնանվիրութեամբ կերար ըսել է։

— Այո, այո։

— Մենք քեզմե առանկ բան չէինք հուսար։

— Ես կը հուսայի։

— Անառակ է նե՝ դուրս ելեք հրամանքնիդ։

— Դուրս կելնեմ ես, բայց ինձի պես տեսուչ մը չեք կրնար գտնալ, որ քիչ առնելան մեջ երկու հազար դուրուշ շահ գոյացնե ընկերութեան։

— Ո՞ւր է այդ շահը։

— Իմ ծախք ըլած է ան, Բայց դուք իմ ուսուլուս ինչ կը նայիք, բավական է, որ այդ շահը գոյացեր է։

— Շնորհակալ ենք։

Այս շնորհակալութեան վրա տեսուչը կը նայի, որ ալ կարին նստելը իր գործին չգար, կելնե Տրապիզոն կուգա։

Կիմանանք, որ հիմա ալ հոն ընկերութեան մը հիմնելու կաշխատի եղեր։

Աստված առանկ ազգասերները պահաց չընե, որ ազգերնուս մեջ ընթերցասիրութիւնը տարածվի[212]։

1877

ԱՂՋԿԱՆՑ ՀԱՍԱՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մեկ կանգուն երկու զուտ երկարութեամբ, երկը բուռ լայնութեամբ երիտասարդ մը կարզվիլ կը փափաքի։

Հիշյալ երիտասարդը՝ թուխ գույնով, լայն դեմքով, բարձր քիթով, աև աչքերով, կամքիր ընքվիներով, երկու տեռնյում ճակատով, մոխրագույն մազերով օժտյալ ուսուհնական մ'է։

Հիշյալ երիտասարդը ոտակ մը չունի, բայց կը խոստանա իրեն ամուսին ըլլալիք աղջկան ոտկե օրևը ցցնել։

Կը փափաքի կարգվիլ այնպիսի աղջկան մը հետ, որ իրեն կրկին բարձրութիւնը ունենայ, գեղին մազեր, նվագկոտ աչքեր ունենայ, սարի պես ճերմակ ըլլա, կլոր դեմք ունենայ, բերանն ու քիթը պզտիկ ըլլա, ավելի գոհ կըլլա եթե բերան բնավ չունենայ։

Շատ կը փափաքի, որ այդ աղջիկը տուն մը և երեք չորս հարյուր ոսկիի չափ գրամ ունենայ, հայր, մայր, եղբայր և քույր չունենայ, կենացը մեջ բուտրա կամ կարմիր քաշած չըլլա և պարել չգիտնայ։ Երիտասարդը շատ երախտագետ պիտի ըլլա՝ եթե նշանուքի օրը աղջիկը բարեհաճի իր ոսկիները նշանածին հանձնելու։

Այս երիտասարդը կանխավ կը ծանուցանի՝ թե գիշերները պատկառ սովորութիւն չունի, կերակուրին կես ժամ ետքը երբեմն ալ սեղանին առջև քունը կը տանի, թե երբեք չկրնար կինիկը թեւը առնելով՝ զայն հասարակութեան ցցնելու համար բիացայի վրա պատելու թեթեւութիւնն ընել։ կը պահանջե նաև, որ իր կինիկը լավ կերակուր եփել և լաթ լվալ գիտնայ։ Կուզե որ իրկիւնը տուն դառնալուն պես կինիկը գինքը գիմավորե, գգվի, շալ և առքի ամաններըը հանե, բազմոցի վրա նստեցունե և անմիջապես օդին բերե։ կը կարծե թե կինկանը մեկ պակասութիւնը տեսնելուն պես՝ անոր երեսին քանի մը ապտակ իջեցնելով արդարութեան պարագ մը կատարած կըլլա։ Ջմռնաար նաև հիշել, թե կինիկը երբեք չպիտի ըսե իրեն. «մի խմեր սա օդին», սանկ խոսք մը կռնի նշան կը համարե։ Իսկ երբ տունը գինով մտած ժամանակը կինկին իրեն ըսե թե՝ «տեսա՞ր, այս գիշեր քիչ ես խմեր, ամեն գիշեր սանկ գաս նե՝ ինչ կըլլա» սիրտ հավելման նշան պիտի համարե։ Հիմակվընան կը հայտարարե, թե կինկանը հետ մինակ նստած ժամանակը կինիկը իրեն չպիտի ըսե՝ թե «այսօր ինչ ըրիր նայինք, ոտակ վաստկեցա՞ր» կամ «շուկան ինչ կա, ինչ չկա, բերանդ գաց ան՝ ինձի հետ ալ երկու խոսք ըրե, ինչ կըլլա» այլ պարտավոր պիտի ըլլա այն տանեն միայն խոսիլ երբ իրեն բան մը հարցվի։

Արդ, այսպիսի երիտասարդի մը պետք ունեցող և ավելի

մանրամասն տեղեկութիւն ուզող ապջիկնեերը կը հրավիրուին Թատրոնիս գրասենեակը գալ և մեյ մեկ խոհվի խմել[213]։

1877

ՋՈՒՊՈՒԽԻ ՄԸ ԿՐԱԿԻՆ ՎՐԱ ԿՌԻՎ ՄԸ

— *Սա շեշ, սա տյու։*

— *Բեզի կըսեմ կոր հնիկ, չելնե՞ս սա չուպուխիս կըրակ մը բերես։*

— *Ճահար ու սեր։*

— *Բենճ ու ևք։*

— *Բանի՞ անգամ ըսենք, կըրակ մը տուր ըսինք։*

— *Իքի պիր։*

— *Մարս կըլլաս կոր։*

— *Ճանըմ, կըրակ մը չբերե՞ս։*

— *Սպասը ըրե քիչ մը, սա բարթին լմցուննենք ատ՝ վեր-ջը, բաթլամիշ չեղար ա։ Շեշ ու տյո՞ւ էլ...*

— *Ա՛յո՛, տիկին։*

— *Թավլո՞ւ խաղաս տեղի առի ես քեզի, հնիկ։*

— *Ո՛ւֆ, աման, երկար ըրիր։ Ի՞նչ պիտի խաղայի՞։*

— *Սե ևք, դուռ մը պիտի առնենք։*

— *Բեզի կըսեմ կոր, հնիկ...*

— *Տյուպիշ...*

— *Շուտ ըրե կըս...*

— *Բենճ ու սեր։*

— *Բեզի կը...*

— *Շեշ պիշ, մեկ հատը վախուցինք։*

— *Կրա...*

— *Տյուպարա։*

— *Հիմա կելնեմ թավլուն գլուխդ կը փարատեմ, հա։*

— *Աֆ կըննեք ամա, համբարձում ադա, աս ըրածնիդ ալ չվայլեր, մարդ մը իր հնկանը ասանկ խոսքեր չըններ. թող տուր սա բարթին լմցննենք, ելնե կըսակը տա։*

— *Ես քե...*

— *Սֆ կըննեք, ասանկ պարկեշտ և ազվոր հնկան մը դուք*

ոտքերը լվալու և ջուրը խմելու պարտավոր եք։ շիտակը ևսքեղի չվայելեցուցի, ի՞նչ մեղքս պահեմ։

— Դուն ի՞նչ կը խառնվիս կոր...

— Մարդկութիւնը պարտք կը դնե իմ վրա ըսել, թե հրամանքնիդ արժանի չեք աս կնկանս։

— Դուն սըկսիլ կելլաս տունդ կերթա՞ս մի նայիմ, սըվոր նայէ՛ մեյ մը, արժանի չեմ եղեր... ձեղի պես թեթևներն են պատճառ, որ կնիկները երեկնին չեն սեպեր կոր։

— Կը հերքեմ այդ խոսքդ։

— Կնիկ, կրակ բեր։

— Ո՛չ չպիտի բերե, սկզբունքի խնդիրը է աս, և ես ազատութեյան վրա գրված բոլոր գիրքերեն կրնամ վաստեր ցոյտնել, որ կնիկդ այս պարագային մէջ պարտական չէ չուղուխիդ կրակ տալու։

— Այո, հիչ պարտք չունիմ ես քուկին չուղուխիդ կրակ բերելու, մյուսյոտ Բարլոին ըսածը իրավ է։

— Ա՛յ գեամինը անցնելու կնիկ (մեկուսի) տեր աստվածդուն մեղք մի գրեր, (բարձր) աստկելու կնիկ, (մեկուսի) մեղա, մեղա։

— Իրավունք չունիս կնկանդ այդպես խոսքեր ընելու։

— Այո, իրավունք չունիս կնձի այդպես խոսքեր ընելու։

— Այո, իրավունք չունիմ ձեղի այսպես խոսք ընելու։

Խիկար[214])։— Քահանային ըսելու էիք, որ ձեղի պսակած աստենը հարցուներ կնկանդ, որ երիկդ չուղուխին կրակ ուզե նե՞ տա՞ս պիտի։ Քանի որ այս հարցապնդումը չէ եղեր պսակի մէջ և քանի որ սահմանադրական ազգ մ՛ենք, կնիկդ ինչ որ ըսե իրավունք պիտի ունենա[215])։

1877

ՀԱՄԱՐԱԿԱԼՆԵՐՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մարդս ստակ վաստկելու և մեկեն ի մեկ վաստկելու համար համարակալ ըլլալու է, որովհետև համարակալ մը հազար միջոց ունի ստակ վաստկելու և մեկ միջոց չունի ստակ կորսընցունելու, և ես, եթե հարյուր զավակ ունենայի՝ հարյուրն ալ համարակալ կընեի, որպեսզի թշվառականները թվանշաննե-

ցով զրաղելին ու մարդ ըլլային։ Մարդս մարդ ընողը թվանշանն է, և այս ըսածնուս ապացույցն է քանի մը համարակալնեբուն պատմութիւնն, որ բերան բերան կը պարտի այս օրերս։

Շնորհութեան մեջ համարակալութեան պաշտոն վարող չարս հինգ անձեր, օր մը տեղ մը գումարվելով ժողով կը կազմեն և գիսկոսին երջանկութեան համբան գտնելու միջոցներուն վրա վիճաբանիլ երկար վիճաբանութենեն մը ետքը մեր ժողովականները միջնորդին կը համաձայնին և յուրաքանչիւրն ինչ ընծաքն ալ մը սորվելով իրարմե կը բաժնվին։

Քանի մը օր ետքը համարակալներեն մին յուր տետրակին մեջ հետևյալը կը գրեր.

Հինգ հազար ոսկիի պյուս այս ինչ շենքին համար։

Ժամ մը ետքը ընկերն ալ յուր տետրակին մեջ հետևյալը կանցուներ.

Այն ինչ շենքին համար դրկված հինգ հազար ոսկիի պյուսին կրռոդնեմ՝ երեք հազար ոսկի։

Կես ժամ ետքն ալ մյուս ընկերն յուր տետրակը կը զարթարեր հետևյալ տողերով.

Այն ինչ շենքին համար դրկված հինգ հազար ոսկիի պյուսին էշերուն վրա բեռցնողնեմ հազար հինգ հարյուր ոսկի։

Քառորդ մը ետքն ալ չորրորդ ընկերնին յուր տետրակը կը հավատարմագրեր հետևյալով.

Այն ինչ շենքին համար դրկված հինգ հազար ոսկիի պյուսին էշերեն վար իջեցնողնեմ հազար հինգ հարյուր ոսկի։

Քանի մը օր ետքը մեր համարակալները երկրորդ ժողով մ՚ալ կը գումարեն ու կարծիքնին իրարու հաղորդելեն ետքը կերթայ մը այդ դրկված պյուսին ետևակը և ծախսը կտեսնեն՝ ուսկից որ առնել պետք էր։ Հարկավ պետք առնեն, պյուսին ետևակը իրենց քսակեն չպետք տան ու։

Օրեր կանցնին, ամիսներ կանցնին և վերջապես օր մը վերջաւորութեան միտքը կիյնա տետրակները աչքե անցունելու։ Ջանոնք աչքե անցուցած միջոցին պյուսի հաշիվն աչքին կը դարնին, չհամաձայնիքը կուգա. աչցին ադեն ու բիծը ի բաց կը պարզե և այնպես կը նայի դի մը միարքն՝ որ զբրոքն շղայցնեն, ինչպես կըսե եզնիկ, արգել հայելոց ի հասակութեան հաշվո լեցին [216]։ այլ ինչ օգուտ, դարձյալ չկրնար պյուսյան հաշվուչն հավատք ընծայել, որով կտեսիլի մեկը կանչել և հարցունել.

— Այս ինչ շենքին համար հինգ հազար ոսկիի աղյուս եկա՞վ։

— Ո՛չ,

— Սա համաբակալնևրը կանչեցեք։

Համաբակալնևրը կուգան, քավե քոմ կը շաբվինն։

— Դո՞ւք եք, եկա՞ք։

— Մենք ենք, եկանք։

— Դուն հոս գիւր ես, որ այսինչ շենքին համար հինգ հազար ոսկիի աղյուս պրկվիր է։

— Այո։

— Եւ սակայն չէ գացեր։

— Մենք պրկեցինք, չէ՞ գացեր, ա՛յ Թշվառական, մեզի կերթամ ըսալ։

— Գացած ըլլալու է, էֆենտիմ, գացած չըլլար նե՝ կրոզչեքի ծախս կը գրե՞ր. գացած է, բայց ով գիտե մարդու տեսնըված չէ Թերևս։

— Դուն ալ էշերուն վրա բեռցնողչեք անցուցեր ես տեսակիդ մեջ։

— Այո, անցուցի, աղյուսնևրը մենք չպիտի կրեինք ա։

— Դուն ալ էշերին վար իջեցնողչեք գիւր ես։

— Էֆենտիմ, այգքան բեռը էշերուն վրա չպիտի պահեինք ա, հարկավ պիտի իջեցնեինք։

— Տեսար էֆենտի, աղյուսն առնված չըլլար նե՝ կը կրվեր։

— Զը կրվեր նե՝ էշերուն վրա կը բեռցվի՞ր։

— Զը բեռցվեր նե՝ էշերին կիջեցուցվի՞ր։

— Էֆենտիմ, աստված չընե որ խարդախություն ընեմ, ու չառնված մեկ բանը առնված ցուցնեմ։

— Ես ալ չեմ ընդունիր, որ չառնված մեկ բանը կրնե՞ տամ։

— Կյանքիս մեջ բնավ մաքիս անցած չէ, որ չկրված մեկ բանը էշու վրա բեռցուցնեմ։

— Հապա ի՞նս, կրնամ չբեռցված մեկ բանը վար իջեցնել։

— Ես պատվավոր համաբակալ մ՚եմ, չեմ ընդունիր, էֆենտի, որ կասկածիք վրաս։

— Ես ալ չեմ ուզեր, ես էֆենտիին օրինակին կը հետևիմ, և օր մը օրանց...

— Իմ վրայոքս անանկ բան մը լալը է մինչև այսօր։

— Ես ալ նոր կը լսեմ առանկ կասկած մը...

— Այս ամենը ապեկ, բայց այդ աղյուսները չեն գոյած այդ շենքին։

— Մեզի ինչ, էշերը բռնելու ոստիկանության տալու է, կրնա ըլլալ, որ ուրիշ անդ մը տարած ըլլան, բավական է, որ մենք աղյուսները գրկեցինք։ Էշերեն իմուհնապես չպիտի ուզեինք ու։

— Ո՞ւր գրկեցիք։

— Այդ շենքին համար։

— Ո՞ւր իջնցուցիք։

— Այդ շենքին մեջ։

— Այդ շենքը որն է։

— Որ շենքին համար բեռցվեցավ նե՝ այդ շենքն է։

— Չի՞ք ամչնար դուք։

— Ինչո՞ւ պիտի ամչնանք, աղյուս առինք գրկեցինք, հոս ամչնալու ինչ կա, դուն ալ այսչափ բան առեր գրկեր ես նե՝ ամչցիը ես, տեր ողորմյա։

— Ինձի ինչ, աղյուս մ'էր, ես բեռցուցի, առնողին ըսե։

— Ես ալ բեռը վար առնել ավի, ինձի ինչ, բեռցնողին ըսե։

— Դուք երկքնիդ դուրս գացեք, մեկերնիդ միա, անոր հետը խոսիմ։

Համարակալներեն երեքը դուրս կելնեն, մին կը միա էֆենտիին քով։

— Տղաս, ձեր ըրածը պարզապես գողություն է, ձեզի պիտի վռնտել տամ, պիտի պատժել տամ։

— Ես անմեղ եմ, ընկերներս ալ անմեղ են։

— Սակայն հայտնի գողություն մ'է. ուրիշ ոչ կա հետեւելիք։

— Մարդ չկա, մենք գող չենք, համարակալ ենք։

— Դուք տասնկ բան ըրած չունեիք, ձեզի սորվեցնող մը կա, ոչ է ատ, ոչ է ձեր մեծը։

— Գ...[217])

— Լռե, լռե։

— Լռեցեք։

Համարակալները կուլան։

— Մենք բան մը ըրած չունինք։

— Մեյ մ'ալ չըլլա, որ այսչափ աղյուս առնիք գրկիք այն ինչ շենքին համար։

— Ձենք առներ, էֆենտի, ապրելն դժոտմամբ չատկեկ առնենք, որ ամեն օր առնել հարկ չըլլա։

— Ուրիշներուն ալ բան մի ըսեք։

— Ո՞վ կըսե։

— Թոյժերնուդ նայեցեք, աշխատեցեք։

— Շնորհակալ ենք, էֆենտի։

Այսպես ահա չորս համարակալներն իրենց ապագան կը պատրաստեն այն մկրճոցով, որով միայն կրնա մարդս հաստատել ներկա դարուս ու մայրաքաղաքիս մեջ։

Համարակալ եղիր, խելոք մահկանացուի, եթե կուզիք ապագա պատրաստել ձեզ[218]։

1875

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ[219]

Վարչական մեքենանիս զարմանալի հատկութիւն մը ունի, Աստուծոյ շնորհիվ, մեքենանելուն պես ժամ մը կը դառնա, չորս ժամ կը կայնի։ դարձած ժամանակն ալ ճիշտ հիշյալ մեքենանելուն պես տղմուռ կը հանե, բայց շոգենավը ուր է նե՝ հոն է, և եթե երբեք ճանըա առնելու ըլլանք՝ ան ալ ժամ-ալան մը ճանըան ամսվան մեջ կառնենք վազելով։

Բնավ չըսելը կամաց քալելն դեղ ըլլալով՝ բնականաբար քալեցնելու աշխատելու ճանըան շուտ քալեցնելու աշխատելու ճանըեն ավելի դժվարութիւններ կունենա։

Ցմուռ չկա, մեքենան ավրված է, ուսկից պիտի հասկնանք, որ նավապետ կա, որ ալ մեքենավար։

Սրբազան Պատրիարքն անձնական ակարութեան պատճառավ վերջապես անկարող կը գտած զինքն նավապետութեան պաշտոնը վարելու, ուստի և կը հրաժարի, չընդունելով յուր կողմեն ոչ տեղապահ և ոչ փոխանորդ։ Թող. Ժողովն Պեշիկթաշլեանի լեզվեն սիրտը վիրավորյալ, յուր սիրտը Հոլլուեի սպեղանիով զարմանելու զբաղած է, որով չը կրնար մեքենավարութեյան պաշտոն վարել։ Այս վիճակի մեջ Դալաթիո խմբակին[220]) գըլխավորները Բրխատոսուր[221]) և Բաբազյան[222]) էֆենտիները իրարու ականջն ի վար կըսեն.

— Պատրաստվե նայինք, Թող. Ժողովո անդամ ըլլալու։

— Ո՛ւֆ, դարձյալ աղլին ծառայութիւն մատուցանելու է։

Սամաթիայեն[323]) ալ ատոնք լսելով՝ Հանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, նոքին պատասխանելու է կըսեն։

Եպիսկոպոսներն ալ արդի վիճակին բոլորովին անտարբեր չեն. այս օրերս ավելի ընթերցասեր կըլլան և լրագրաց դպրասենյակները երթալով կըսեն.

— Մեծապատիւ էֆենտի, ձեր թերթը շատ կը սիրեմ, որչափ ալ ազատ կը գրէք, կը վախնաքեի երեք տարվան համար բաժանորդ գրվիլ ձեզի։

— Շատ աղեկ, Հայր։

— կը խնդրեմ, որ ընկալապիրն այս իրիկուն անպատճառ ղրկեք, նա մանավանդ թերթը, որպեսզի ձեր ընծայի հոգվածնեբը կարդալու հաճուքն չղրկվիմ։

— Գլխուս վրա։

— կարծեմ խմբագրական տպարիզը շատ նեղութիւններ ունի։

— Այո, սրբազան։

— Ինչի անդամներ ըսած եմ ա. Հարց, որ խմբագիրները քաջալերելու ենք, մանավանդ ձեր թերթին համար, հիմա երեսդ ի վեր ղրուցել չըլլա, շատ աղեկ կը գրեք։

— Առիկա ձեր Սրբազնութեյան մեր վրա ունեցած համակրութեենն հառաջ կուգա։

— Ամենևին, ես շիտակը ղրուցող մարդ մ'եմ։

— Շնորհակալ եմ։

— Օրհնած, իրավ է, որ Ս. Պատրիարքը հրաժարականը եւս չառներ կոր։

— Իրավ է։

— Ո՞վ պիտի դնենք Պատրիարք, ալժանավոր եպիսկոպոս չունինք։

— Ես ձեր Սրբազնութեյունը ընտրելի պիտի ցցունեմ։

— Աստված չընե, ես անարժան եմ, իմ ձեռքես չը գար... խոսքի բռնվելով սա ընկալապիրները գլխու չմոռնանք... եւ չեմ կրնար պատրիարքութեյուն ընել, բայց շատերն ալ քեզի պես կըսեն, թե կրնամ։

— Այո, սրբազան, պատրիարքութեյան ալժանի ձեզմե ուրիշ մեկը չկա, եայլն, եայլն, եայլն։

Սակայն ուշիմ և հայրենասեր հայն, անոր հետ նաև ալ-

պային անտուկին, երբեք չեն ուզեր ընդունիլ ս. Պատրիարք հոր հրաժարականն, ոչ ալ Բազ. ժողովինը և իրավունք ալ ունինք, ինչու որ ս. Պատրիարք հոր հեվանդության դիւրը չսիջսիված ըլլալով՝ հուսալի է, որ բժշկական ճարտարութիւնը քիչ օրեն բոլորովին ջնջէ զայն և Նորին Սրբազնութիւնը մինչև այն օրը կրնա խորհրդականով մը գործել առանց աշխատելու ու միտք հոգնեցնելու։ Քաղաքական ժողովին զալով՝ ասոր ալ վերաբերեալ սիրտը զարմանալը շատ դիւրին է, ասկից վերջը ըլլալիք հարցումները ավելի կոկիկ, անուշ, փափուկ և քաղաքավարական խոսքերով ընելով։ Այդ հարցումներուն ինչպես գրվիլը երեսփոխանաց ոմանց հասկցնելու համար հարցապնդում մը կընենք հոս, որպեսզի այդ լեզվով գրվին մյուս հարցապնդումներն ալ։

Ահավասիկ մեր հարցապնդումը.

Արդյոք Բազաքական ժողովո պատկառելի անդամները արտոնութիւն, առանձնաշնորհութիւն, ազատութիւն, համարձակութիւն կը շնորհեն մեզ հարցապնդել նոցունց պատկառելիութեյանց թեև՝ ինչ քնքուշ և անուշ պարագաներե տախլալ, թեև ինչ մեղրային ու շաքարային նկատողութեյանց համար պատիվ ունեցած է ազգային պարտուց միացած մասին՝ որ երկու բառերար անձանց աված ատակովը վճարվելցավ, հաշիվը չէրատարակելու բարեկաղդութիւնը վայելելու պատիվը ունենալու բախտաճակելու շնորհ ըլլեր է։

Ահավասիկ մեր հարցապնդումն, որ բավական անուշ է և եթե Աչառուր սրբազանի անկյակին համար եւիված սուրճերուն մեջ գրվի, ազգային անտուկը ամիսը երկու հարյուր գրուշ միայն շաքարեն կը վատակի։ Ահա հարցապնդումի լեզվին օրինակ մը, որ թե Բազ. ժողովը չվիրավորելու կը ծառայե և թե՛ ազգային անտուկին ալ օգուտ ունի։

Արդ, կը հուսանք, որ ուշիմ և հայրենասեր հայուն, ազգային անտուկին կամքը հաղթող կելնե, այս հրաժարականներն ետ կառնվին մեյ մ՚ալ չարվելու պայմանավ և ազգային վարչական մեքենան բանիլ կսկսի, նավը կը քալե և վարչական տագնապը մինչեհեն կը վերնա ի խնդութիւն ողջամիտ մասին և ի սրամտութիւն Դալաթիո խմբակին...[224])։

1875

Դարձյալ հարուստ ըլլալու մէջոցներուն վրա...[225]) Բարեկամ, անտեսապիտութիւնը հարստութեան մէջոցներուն առաջինն է. ուստի մարդս որչափ անտեսագէտ ըլլա, այնչափ հարուստ կըլլա։

Եվ ի՞նչ է անտեսապիտութիւնը։

Շատերն այս գիտութիւնը սորվելու համար Ֆրանսա, Ալմանիա և ուրիշ տեղեր կերթան։ Ավելորդ ծախսեր են ասոնք, մարդս կրնա հոս ալ տնտեսապիտութիւն սորվիլ, հոս ալ տնտեսագէտ ըլլալ։

Տնտեսապիտութեան սկզբունքն է քիչ ստակով շատ ստակով ըլլալիք գործ մը տեսնել. օրինակի համար, տնտեսագէտ կը համարվի այն մարդը, որ լաթէ բանթալոնի մը համար երկու հարյուր դուբուշ տալու տեղ տասը դուբուշի թուղթէ բանթալոն մը շինել կուտա ու կը հագնի։ Առաջին կարգի տնտեսագէտ է այն մարդը, որ մեկ ոսկիի կաշիեն պոթին մը շինել տալու տեղ հարյուր փարայի ամերիքացով դույդ մը պոթին կը շինե ու գործը կը տեսնե. հմուտ տնտեսագետ կը համարվի այն անձը, որ քարուկիր շինք մը շինելու համար քարին ու կիրին հազարներով ոսկի վատնելու տեղ քարի տեղ մուխավա և կիրի տեղ բուրբալ կը գործածե։

— Բայց այդ կերպով շինված բաները կը գիմանա՞ն։

— Դիմացկունութեան վրա չէ մեր խոսքը, տնտեսապիտութեան վրա է, դիմացկունութեան վրա ալ պիտի խոսինք ժամանակին։

— Ես քու ըսածիդ պես տնտեսագետ ընալ տեսած չունիմ։

— Ես տեսած ունիմ։

— Թուղթե բանթալո՞ն շինելը, հագնե՞լ է։

— Կեցցե՛ պատմեմ, բարեկամ, կեցցե՛։

Շինութեան մը մէջ...

— Դարձյալ շինութեան մէջ...

— Այո՛, բարեկամ, հոն եմ և այս տարի հոն պիտի մնամ։ Շինութեան մը վերատեսուչը՝ որ առաջին կարգի տնտեսագետ է և որ գործավորներու շաբաթականն կարելով ստակ կը հավաքե և այդ ստակն իր քսակին հանածի պես ցցունելով ստով

շենքի մը նկատուած կը կապէ, որ գործավորներու դժբաղդութեան պատճառ է, ասկից առաջ քանի մը շենքեր շինել կուզէ։ Նպատակը ըլլալուն պատճառով ժամերն մը մեջ ամէն արհեստ կը սորվի և արհեստավորներուն տակ տալե ազատելու համար ամէն բան ինք կը անօթինն և օր մը այդ քանի մը շենքերուն առջև երթալով կը կայնի և կուգէ յուր անհետագիտութիւնը փայլեցնել։

— Ա՛ս երկաթները ինչպես են, կը հարցունէ գործավորներեն մեկուն։

— Շատ ապեկ է, էֆենտի, բարմախլըղ պիտի ըլլա, անանկ չէ՞։

— Չէ՛ ճանըմ, խանութներուն մեջը պիտի դնել տամ, որ շենքը բռնեն։

— Չըլլար, էֆենտիմ, բարակ են, կը ծռին։

— կը ծռին մի, ձվ ըսավ քեզի, որ կը ծռին, հարկավ քեզի ըսող մը ևզեր է, սրտոր անունը տուր ինձի...

— Էֆենտի, ձվ պիտի ըսե՛, հայտնի է որ բարակ են, կը ծռին, վերջին շենքը վար կուգա։

— Ուսկիցի իմացար բարակ ըլլալը, ինչին գիտցար ծռելիքը. հիմա քեզի կը վռնտեմ...

— Չծռիր, էֆենտիմ, չծռիր, բարակ չէ, ասկից հաստ երկաթ չկրնար ըլլալ, վրան ուզածիդ չափ ծանրութիւն կրնաս դնել։

— Եթե կը ծռի ըսեիր՝ խոստան պիտի վռնտեի քեզի։

— Չծռիր, էֆենտիմ, խոնդ են որ ծռին, քանի որ ձեր մեծապատուութիւնը գիտե որ ապեկ են։

— Կանչեցե՛ք գործավորները սա երկաթները գնեն։

Գործավորները կը կանչվին, երկաթները կը դրվին։

Քանի մը շաբաթ կանցնի չանցնիր, երկաթները կը ծռին, շենքերն իրարու վրա կը պառկին։

Գործավորները վազելով կերթան էֆենտիին իմաց տալու.

— էֆենտի, էֆենտի, երկաթները ծռեցան։

— Ծռեցան մի, ինչո՞ւ, ինչո՞ւ պիտի ծռին։

— Պատճառը չըսին, էֆենտիմ, միայն սա գիտենք, որ ծռեր են։

— Անանկ ինչո՞ւ պիտի ծռեին, երկաթները երևնց հալին չձգեցիք որ, դուք համոզեցիք, որ ծռին։

— Շենքերն ալ կը փլին կոր, էֆենտի։

— Կը փլին կո՛ր մը, աստո՛ղնք ալ գլուխ կը քաշեն կոր. եւ դիտեմ գլխավորներն են այս բաներին ընդդիմացողը, գայե՛ք, ըսենք այս շենքերուն, որ չփլին, վերջը դամ նե՝ գործերնին դեղ կըլլա։

Գործավորները կերթան. վերատեսուչն ալ քանի մը ժամեն կերթա և շենքերն այդ վիճակին մէջ տեսնելով կսկսի գոռալ.

— Այս երկաթները ո՞վ ծռեց։

— Էֆենտի, մենք առաջ քեզի ըսինք, որ անոնք չեն դիմանար։

— Անկարելի է, այդ երկաթներն իրենք իրենցմէ չեն ծռած, եւ անոնց բնավորութիւնը դիտեմ, ըսե՛ք ինձի ո՞վ ծռեց։

— Էֆենտի, ո՛վ կրնա ծռել, ինչո՞ւ տասնիկ խոսքեր կընես։

— Ի՞նչ դնելու է հիմա անոնց տեղ։

— Հաստ երկաթներ կան, անոնցմե առնենք։

— Անոնք սուղ են, չըլլար...

— Անտանկ է նե՝ թել դնենք, էֆենտի, երբեմն, երբեմն մասալընեղով կը չլես ալ։

— Ծո՛, ես կրնամ չալել, ինչ կըսեք։

— Չեղնե գաս ո՛վ կրնա չալել, էֆենտի, ձեր մասալընները վարժ են։

— Չըլլար. հիմակուհիմա սա շենքերուն փլած կողմերը շտկեցե՛ք, աժընկել երկաթ առնենք ու դնենք։

— Հայտե, տղաք, փլցուցեք ասոնք, նորեն պիտի շինենք։

— Տեսա՞ր հիմա բարեկամ, անտեսապետութեան մէկոցները. այս ճամբով տնտեսապետ մը հարուստ չըլլար ան՝ ինչ կըլլա։

Աշխատեա դուն ալ տակիդ վերջը քեզի հանձնվելիք գործերն այս կերպով կատարել, եթե չես կրնար՝ տնտեսապետ ըլլալու հոգյդ ալ կարե, և քանի որ տնտեսապետ չես կրնար ըլլալ, տակի երես ալ տեսնել մի՛ հոգար։

Այսօր ալ համարդ տոքվի և նորեն քովս եկուր հարուստ ըլլալու ուրիշ միջոցներ ալ տո՛ւելու[226]։

1875

ԹԸՆԵԼԻ ԿԱՇԻՆ

Եթե ես ամեն բան ծանուցում չեմ ըներ և ամեն լսածս չեմ գրեր նե՝ պատճառը սա է, որ հասարակութիւնը խաբել չեմ ուզեր։

Թընելը բանիլ սկսած ժամանակին երբ ամեն մարդ կը կասկածեր թե՝ կառաքիլ կաշին երդի նե՝ վտանգ կ'ելլայ, այն ատեն լրագիրներըը պռռացին՝ թե կաշին երդի ալ նե՝ վտանգ չպիտի ըլլա եղեր, կառքը գտնված տեղը պիտի կայնի եղեր, թընելի մարդիկն ատոր վորձը ըրեր են եղեր։ Ամենն ալ սուտ, թընելի տակի վատակիցնելու համար դիտված սուտեր։ Սուտ ըլլալուն ապացույցն սա է, որ անցյալ իրիկուն կառաքիլ կաշին կը երդի և վեր եկնող կառքը փոխանակ եղած տեղը կայնելու պիծին վրայեն Ղալաթիա եկեր է ի գիր։

Մեջը գանվողներն, աթը և կանայք, ծերք և տղայք, իրենց ազատականերով թնդացուցեր են գժոխոց գմբեթը։ Կնիկներեն ոմանք մաբեր են, ոմանք լնկեր են, թեպետև կորուստ մը չէ եղեր, բայց վախն մեծ է եղեր։

— Ասկից հարը մեյ մ'ալ չեմ մտներ։

— Ինչու՞ չպիտի մտնաս, կեցցե, նայինք թընելի անօրենութիւնն կաշին երդելուն պատճառները լսմացունե։

— Պատճառներն ինչ ընեմ, և ինչ պիտի ըտե որ. խել մը պատմութիւններ պիտի ընե ըսելով թե՝ «կաշին հատ է, բայց խոնավութենեն երգած է. թե՝ դգուշութիւն չէ եղած. թե՝ կառքերը որչափ որ գտնված տեղերնին կենալու պարտավոր էին նե՝ այս կառքը նոր ըլլալուն՝ իրեն տասնկ պատվեր մը եղած չըլլալով՝ չկրցավ կայնիլ. ուստի կը հուսանք, որ արդի հասարակութիւնն այս վտանգը իրեն անհրաշարութեամբը բոլորովին մոռնալով, նորեն կը բարեհաճի Հեվեստոսի[227]) հողեն ճամբորդութիւններին շարունակել, որպեսզի մյուս կաշիներն ալ չվհատին, չծուլանան ու չերդին»։ Ահա ըսելիքնին սա չէ՞ մի։

— Ինչ է նե՝ վերջապես պատճառ մ'է։

— Ես մեյ մ'ալ չեմ մտնար։ եղբայր, դուն ինչ կուզես նե՝ ըրե՛։ Ինչքն գիտեմ, որ օր մ'ալ կամարը վար չպիտի գա։

— Ըլլալիք բան է։

— Ջըլլալու ինչ կա, կամարը երկինք պիտի ելլա չըսի, որ կը զարմանաս կոր, վար կուգա ըսինք։

— Անանկ է նե՝ ես ալ չեմ մտնար։

— Էյ, դուն չես մտնար, ես չեմ մտնար, ով պիտի մտնա։

— Թող թընելի տնօրենը, մեքենավարները, պաշտոնյաները մտնեն ու պրծտին։

— Անոնք ալ վախնան նե։

Այն տաեն մեջը մարդ չմտնար, կառքերը վեր կը քաշեն, վար կիջեցունեն։ Վնաս ընել չուզեն նե՝ միայն բեռ կը կրեն։ Բերա այչափ ապրանք կելլա, թընելը զանոնք թող կրե, բայց միշտ զգուշանալու է, որ մեջը մարդ չդռնվի։ Աւտոմոպիլ փլիր կործանի ալ նե՝ մեծ վնաս մը չըլլար[228]։

1875

ՄԻՆԱՍՅԱՆՑ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մայրիկը... մայրերը... մայրեր... դարձյալ մայրերը... ձեզի կըսեմ, ով մայրեր, մայրեր։

Եթե կուզեք ձեր փոքրիկ երեխաները փորի ցավերե ազատել։

Եթե կուզեք ձեր փոքրիկ երեխաները — երեխաներուն մեծն ալ կըլլա եղեր — փորհարուրենե ազատել։

Եթե կուզեք ձեր փոքրիկ երեխաները ակռա հանելու ժամանակը վտանգե ազատել։

Եթե կուզեք ձեր փոքրիկ երեխաները կաթ ուտելե ազատել։

Եթե կուզեք ձեր փոքրիկ երեխաները ակռա հանելե արգելել։

Եթե կուզեք ձեր փոքրիկ երեխաներն փորերնին ելլալե ազատել։

Եթե կուզեք ձեր փոքրիկ երեխաներն շունչ առնել տալե ազատել։

Եթե կուզեք որ ձեր փոքրիկ երեխաները դիշերը ցերեկ բնակիրթ ըլլան։

Եթե կուզեք որ ձեր փոքրիկ երեխաները շուտ մեծնան։

Մայրիկը, մայրերը, դարձյալ մայրեր։

Եթե կուզեք, որ ձեր սիրելի երեխաները փորի ցավ չունենան, փոր ալ չունենան, դիշերը ցերեկ գործածեցեք ձեր երեխաներուն համար միսիլ ուինսլոշ սուքինկ սիրըք կոչված դեղը։

Բյուրավոր մայրեր այս դեղեն գործածած են իրենց զա-
վակացը համար և անոր օգտակարութիւնը կը գովեն։ Այս մայ-
րերը այսօրվան օրս Ամերիկա կը գտնվին. եթե չեք հավատար՝
Ամերիկա գացե՛ք, իրենց հարցուցեք, թե միսիլ ուիճնսլոշ սու-
քինկ սիրըք ըսված դեղը ո՛րչափ հրաշքներ գործած է։

Օ՜ն, ուրեմն, ով մայրեր... մայրեր, մայրեր, ժամանակն
հասած է, վայրկյան մը կորսնցնելու չգալս, գործածեցե՛ք, ան-
գադար գործածեցե՛ք, գիշեր ցերեկ գործածեցե՛ք զավակներնուդ
համար միսիլ ուիճնսլոշ սուքինկ սիրըք, զավակնիդ ուզեն չու-
զեն, փորի ցավ ունենան չունենան, թե քունն ըլլան թե արթուն,
լեցուցեք անոնց կոկորդն ի վար միսիլ ուիճնսլոշ սուքինկ սիրըք։
եթե չուզենաև ընդդիմանան՝ ահ մայրեր, մայրեր, մի նայիք ա-
մոնց, վի ոչ գիտեն գիշէ գործեն։ Չուզած ժամանակնին ալ ա-
վելի լեցուցեք անոնց կոկորդն ի վար միսիլ ուիճնսլոշ սուքինկ
սիրըք։ իբր այն թե՝ աղեկ բանները միշտ կը հալածվին։ Եթե
զավակնիդ անգիտակար չընդունին ու մերժեն՝ այն ատեն,
ահ մայրեր, շիրինկայով կոկորդն ի վար իջեցուցե՛ք. խակ երբ
դուբս տան՝ մի նայիք անոնց լացին ու աղաղակին և խնթիւա-
ցով ներս մղեցե՛ք միսիլ ուիճնսլոշ սուքինկ սիրըք։

Վերջապես, մայրեր, մայրեր, եթե կուզեք ձեր սիրելի
երեխաները վերոհիշյալ ցավերեն փրկել, իբր վերջին միջոց կը
ծանուցանեմ ձեզ, թե միսիլ ուիճնսլոշ սուքինկ սիրըքը փոքրիկ
կաթսայի մեջ լեցնելով զավակնիդ անոր մեջն ընկղմեցեք։

Մայրեր, մայրեր, խոսքս կը կնքեմ ըսելով՝ թե քանի որ
մեր ազգին բարօրութիւնը հաջորդ սերունդին կախյալ է, գի-
շեր ցերեկ աշխատեցե՛ք, բան՝ մը մի խնայեք և լեցուցե՛ք ա-
նոնց կոկորդն ի վար միսիլ ուիճնսլոշ սուքինկ սիրըքը, որպես զի
հաջորդ սերունդն աճի, բարգավաճի և իթարու ձեռք տալով ի
միասին գիշեր ցերեկ աղաղակեն և կրկնեն, կեցցե՛ սիսիլը ուիճնս-
լոշ սուքինկդ սիրըքը, կեցցե՛ եղբայրութիւն, կեցցե՛ ազատու-
թիւն։

Կը ծախվի ի Ղալաթիա գիշեր ցերեկ[229]։

1875

Բյուրավոր մայրեր այս դեղէն զրկուած են իրենց զաւակացը համար և անոր օգտակարութիւնը կը զովեն։ Այս մայրերը այսօրուան օրս Ամերիկա կը գտնուին. եթէ չէք հաւատար՝ Ամերիկա գացէ՛ք, իրենց հարցուցէք, թէ միսիլ ուինսլոշ սուրիճին սիրբը ըսուած դեղը ո՛րչափ հրաշքները գործած է։

Օ՜ն, ուրեմն, ով մայրեր... մայրեր, մայրեր, ժամանակն հասած է, վայրկեան մը կորսնցնելու չկայ, գործածեցէ՛ք, անդադար գործածեցէ՛ք, դիշեր ցերեկ գործածեցէ՛ք զավակներնուդ համար միսիլ ուինսլոշ սուրիճին սիրբը, զաւակիդ ուզէն չուտէն, փորի ցաւ ունենան չունենան, թէ քուն ըլլան թէ արթուն, լեցուցէք անոնց կոկորդն ի վար միսիլ ուինսլոշ սուրիճին սիրբը. եթէ չուզեն և ընդդիմանան՝ ահ մայրեր, մայրեր, մի նայիք ատոնց, դի ոչ դիտեն դինչ գործեն. չուզած ժամանակնին ալ ատկէ լեցուցէք անոնց կոկորդն ի վար միսիլ ուինսլոշ սուրիճին սիրբը. իբր այն թէ՝ աղէկ բանները միշտ կը հալածվին։ եթէ զաւակիդ անպիտաբար չընդունին ու մերժեն՝ այն ատեն, ահ մայրեր, շիրինկայով կոկորդն ի վար իջեցուցէ՛ք. իսկ երբ դուբս տան՝ մի նայիք անոնց լացին ու աղաղակին և խնիֆուճով ներս մղեցէ՛ք միսիլ ուինսլոշ սուրիճին սիրբը։

Վերջապես, մայրեր, մայրեր, եթէ կուզեք ձեր սիրելի երեխաները վերոհիշեալ ցաւերեն փրկել, իբր վերջին միջոց կը յանուցանեմ ձեզ, թէ միսիլ ուինսլոշ սուրիճին սիրբը փոքրիկ կաթսայի մէջ լեցնելով զաւակիդ անոր մէջն ընկղմեցէք։

Մայրեր, մայրեր, խոսքս կը վերջեմ ըսելով՝ թէ քանի որ մեր ազգին բարօրութիւնը հաջորդ սերունդին կախյալ է, դիշեր ցերեկ աշխատեցէ՛ք, բան մը մի խնայէք և լեցուցէ՛ք անոնց կոկորդն ի վար միսիլ ուինսլոշ սուրիճին սիրբը, որպես զի հաջորդ սերունդն աճի, բարգաւաճի և իբրու ձեռք տալով ի միասին դիշեր ցերեկ աղաղակեն և կրկնեն, կեցցե՛ սիսիլը ուինսլոշ սուրիճինդ սիրբը, կեցցե՛ եղբայրութիւն, կեցցե՛ ազատութիւն։

Կը ծախվի ի Ղալաթիա դիշեր ցերեկ[229]։

1875

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՓՈՐՁԱՆՔ
Ե Վ
ԲԱՐԻ ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մեր լուրջ լրագիրներն նոր տարվույն առթիվ իրենց ընթերցողներուն ուղղած ողջույնի վանեմութեան մը տալու համար քանի մը շաբաթ առաջվընե բանաստեղծական դարձվածքներ կը պատրաստեն և անոնցմով սկիզբ կուտան յուրաքանչյուրն իրենց հոդվածին։

Մին կըսե.

1875-ն ալ սահեցավ, թավալեցավ, գլորեցավ, հալածվեցավ ու դնաց հավիտենականութեան անդունդին մեջ թաղվեցավ։

Ուրիշ մը սակս կսկսի.

1875-ն ալ ժամանակին անխիղճներուն սակը ճնաց — տար աստված, որ թևը չկոտրվը —

Անդինն ուրիշ մը այսպես կը խոսի.

Մինչդեռ 1876-ի սեմոց վրա կեցած ենք — շատ մը կայնիր հոն, որովհետև սեմին վրա կայնողը զրպարտութեյան կը հանդիպի կըսեն — ավելորդ չըլլար, կարծենք, հետահայաց նայվածք մը արձակել անցկուցն պատուհաններուն վրա։

Զորրորդ մը սա լեզուն կը գործածե.

Թե մարդկային կյանքը ինչ շուտ կը սահի, ահավասիկ անցկուցն տարինեըուն վրա տարի մ'ալ բարեցավ, 1875-ն ալ դնաց անցկուցն մեջ պահվիլ, քնանալ։

Ես ալ լրջախոս պաշտոնակիցներուս ինձի տված այս բանաստեղծական կաղանդչկներն ընդունելով կը խնդամ ու կը գվարճանամ։

Թողունք ուրեմն մեր պաշտոնակիցներուն բանաստեղծական եռանդն՝ որ իրենց հոդվածին առաջին տողին մեջ կը փայլի, ու դառնանք մեր ընթերցողաց ըսելու, որ 1875-ը դնաց ու տեղը 1876-ը եկավ։

Եթե «Որդի հարազատ բերե գնմանութեյուն հոր յուրո» 1876-են բարօրութեյուն ու երջանկութեյուն ապասելու չենք։ Հորմեն ինչ տեսանք, որ զավկեն ինչ հուսանք։

Ձենք ըսեր, թե 1875-ը չար էր, քավ լեցի. բարի էր, բա-

թեզործ ըլլալ կուզեր, սակայն հանգամանք մը միայն ուներ, ստակ չուներ, սուտ խոսած չենք ըլլար՝ եթե ըսենք, թե յուր բոլոր կյանքը չքավորութեյան մեջ անցուց։

1875-ը որչափ չքավոր՝ այնչափ ալ շատ էր. կանայք ամեն ամիս նոր հագուստ շինելու չմոռցան. էրիվարդիկ մեծածախ եկեղեցիներու մեջ զվարճացան, ժողովուրդը զրոսավայրերը պարապ չթողուց, քալելու վիճակ ունեցողն, ֆուրեի մեջ նստելէ ետ չկեցավ. վերջապես, ամեն աստիճանի մարդիկ իրենց աստիճանին մեջ ապրիլ չուզեցին։

1875-ը յուր չքավորութեյան աստանդը ազգային անստուկին մեջ ալ փայլեցուց։ 1875-ը ինչ ինչ խնդրոց մեջ յուր նախորդներուն ու հաջորդներուն դեմ վարվեցավ, արդարացնելով քանի մը եկեղեցականներ՝ զոր նախորդ տարիները դատապարտած էին ու հաջորդներն ալ պիտի դատապարտեին։

1875-ը մեր ազգին համար կրոնավոր մ'եղավ, — կրոնավոր մը, որ ձիպիթներու մեջ դաստիարակված է — և բոլոր հանգամանք եկեղեցականները հայրապետաց գովը նստեցուց։

Թողուենք 1875-ը, չքամրանանք դինքը ու յուր տղուն 1876-ի ծնունդը շնորհավորենք։

Աչվընիս լույս, բարեկամք, 1875-ը տղա մը ծնաւ... տեսա՛ք, ինչ տղոր է, ճիշտ յուր հորը կը նմանի կոր, կաթծիր անոր քիթեն կիներ է, հորը պես բարի է, հորը պես ստակ չունի ու հորը պես հագուիլը, պզիլը, ուտելը, խմելը կը սիրե, ինքդինքը բոլորովին գվարճութեյան տված է.— ասանկ վերջը բաբի ընես... 1875-ը անձրև էր, 1876-ը կարկուտ է։

— Դեռ տղա է, անոր ինչ ըլլալիքը հայտնի չէ տակավին, ուսան անոր վրա խոսելն ալ ավելորդ է։— Շատ աղեկ, ամեն տաբվան պես սկսինք ուրեմն մեր բարեմաղթություններն ընելկը բարեմաղթեմ.

Մատենթրաններուն ապուշ կնիկները,

Բժիշկներուն երեսակայական հիվանդները,

Քահանաներուն առատ առատ հարսնիքներ,

Սրճարանապետներուն պարապ պարտտղներ,

Վաղութաճիներուն հարուստ ալեվրաձներ,

13 թիվ շորնավով գացողներուն համբերություն,

Երեսփոխանական ժողովին օրակարգին մեջ եղող խնդիրներուն բարի ազատում,

Փաստաբաններուն կնճռալի գործեր,

Թունելով եկեղեկոդներուն քաջասրտություն,

Նենգ Մուսթաֆային կարծյաց ազատութիւն,
Հաշվագիտներուն խարդախյալ անտրակներ,
Վեց թիվ շոգենավուն քենքեին յամաներ,
Ընտիրխոնանց ոմանց խելք ու ամօթ։

Այս բաներմադիմութիւններով մտանք 1876-ի դռնին — Մասխ տակավին սեմին վրա կեցած է, որու կապատ չգիտեմ — և ազդեցիկ որ Թաւրոնիս վարագույրը այս տարի չգոցվի, շարունակենք մեր նիհարացուները[231])։

1876

ԿԱՂԱՆԴԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԸ

Իսկիւտարու վարժարաններեն մեկուն մեջ կաղանդին օր մը առաջ հետևյալ ծանուցումը եղած է։

Վաղը՝ որ է կաղանդ, այն աշակերտները մխայն թող գան, որոնք որ իրենց վարժապետներուն ստակ պիտի բերեն։

Ստակ չբերող աշակերտները ինչու չգան իրենց վարժապետներուն նոր տարի շնորհավորելու. Ազգ. վարչութիւնն աղքատներուն արդիւնց նոր տարի շնորհավորելը, չէ նե՛ նոր տարին միայն ստակ ունեցողներու համար է, կամ առանց ստակի շնորհավորել չըլլար մի։

Այս ծանուցումն ընողն ով որ ալ ըլլա, պետք չէր որ աղքատ տղաքներուն սիրտն վիրաւորեր այնպիսի պակասութեան համար, եթե երբեք պակասութիւն կը համարվի աղքատութիւնը, որուն ոչ պատճառն իրենք են և ոչ ալ հեղինակն։

Այս ծանուցումն հերիք է ապացուցանել, որ ծանուցանողն դաստիարակութենե հեռի գտնվելով՝ ավելի դաստիարակելու պետք ունի քան թե դաստիարակելու, ուստի հաւանալի է, որ հիշյալ վարժարանին տնօրենը այդ ծանուցումն ընողն աշակերտաց քովը կը նստեցունե և կրթութեյանը հոգ կը տանի։

Այս ծանուցում ընողին անունն սորվինք նե՝ երբև հազվադեպ դաստիարակ մը թերթերնուս մեջ պիտի հրատարակենք[232])։

1876

ՆՈՐ ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Ձավեչտական թերթերը, կըսե տպագրական տեսչութեան կողմանե հրատարակված ազդարարութիւն մը, կառավարութեան բոլիթիքային դեմ, այլևայլ կրոնից դեմ, բարոյականութեան դեմ ծաղրանկարներ հրատարակելնուն համար, ասկից վերջը պարտավոր են իրենց հրատարակելիք ծաղրանկարները նախ տպագրական տեսչութեան ներկայացնել ու հրատարակելու արտոնութիւն առնալեն ետքը զանոնք ի լուս հանել։

Հնազանդելով հանդերձ այս ազդարարութեան, պատիվ ունինք ծանուցանել, որ անոր մեջ հիշված հանցանքներեն և ոչ մին գործած է Թատրոնը։

Թատրոնը մեր բոլիթիքաև ծաղրած չէ, մանավանդ թե շատ անգամներ գոված է, ոչ թե անոր համար որ մերն է, այլ անոր համար, որ մեր բոլիթիքաև ծաղրելու բան մը չունի։

Նմանապես տպագրական տեսչութենեն ավելի մեր կրոնքին պաշտպան ըլլալով — սա ալ բնական է — քնավ երբեք մեր կրոնքը ծաղրած չենք, ու շատ անգամներ զայն ծաղրողներուն դեմ խոսած ենք։ Ուզեի ազատութեան քիչ շատ սիրահար ըլլալով՝ ուրիշներու կրոնքին ալ երբեք դպած չենք ու դպչելիք ալ չունինք։

Երբորդին գալով՝ կըսենք, որ Թատրոնի նպատակը անբարոյականութիւնն հարվածել ըլլալով՝ անկարելի է, որ բարոյականութիւնն ծաղրանկարով հարվածե ու առաջին երևոներուն մեջ պաշտպանածը վերջինին մեջ հարվածե։

Թատրոնի պահանջն, որ մերն է, այս տողերով պաշտպանելնես ետքը պարտավոր ենք Տպագրական տեսչութեան կողմե ծանուցված ազդարարութեան հետևիլ առանց ուրիշ որևէ պիտոյութեան[233])։

1876

ԿԵՂԾԵՆ ՉԳՈՒՇԱՑԵՔ

Դրամական տագնապը որչափ որ կավելնա, գողութեան կամ մուրացկանութեան արվեստն ալ այնչափ առաջ կերթա կոր։

Այս օրերս շատ մը մուրացկաններ եկած են, որոնք ինքնինքնին պատեհապաշտին դարձած վիլայեթյալ զորք ձեվացնելով անոր ասոր դուռը շարժելով՝ ստակ կը քաշեն կոր։

Ցեսակ մը մուրացկաններ ալ կան, որոնք ուրիշի ստորագրությունը կեղծելով՝ նամակներ կը գրեն կոր և ստակ հափշտակելու փորձ կը փորձեն կոր։

Առենցմե մին առջի օրը Օրթագեղի մղկթար Մեծ. Հակոբ աղա Սահատճյանի ստորագրությամբ նամակ մը կը գրե և օտապաշըի մը կը տանի։

— Հակոբ աղան, հատկապես բարև ըլլալ, ինք չկրցավ գալ, սա նամակով դիս զրկեց, որ իրեն հարյուրանոց ղրուշ թուղթ տաք։

— Շատ աղեկ, կեցիր նամակը կարդալ ատամ ու...

— Ի՞նչ հարկ կա, ես կարդացի յա, կուգես նե՝ անգամ մ՚ալ կարդամ, բայց շուտ ըրե՛, Հակոբ աղան կտպատե ՝կոր, ստակը տուր, ես երթամ, դուն վերջը նամակը կարդացուր։

Կեցիր նայիմ ըսելով, օտապաշին ստակը տալու կը պատրաստվե, երբ երիտասարդ մը նույն միջոցին վրա կուգա և կաթենցնե օտապաշին՝ որն որ կը հարցնե նամակաբերին։

— Հակոբ աղան ո՞ւր է հիմա։

— Դուռն է ճանըմ, Դուռն է ըսինք, ալ շուտ ըրե՛, տուր ստակը երթամ։

— Ես կերթամ Դուռը իրեն կուտամ. բարև ըրե։

— Ճանըմ, դուն չես կրնար գտնալ, անոր տեղը ես գիտեմ, տեր ողորմյա, քեզի խաբելու չենք ա։

— Դինա դուն, ես կը տանիմ իրեն կուտամ։

Այս պատասխանին վրա գողին ճարը հատնելով կը մեկնի և օտապաշին երիտասարդին շնորհիվ՝ հարյուրանոց երկը իրեն ձեռքն կը խլե։

Այս դեպքը պատմելով՝ հասարակությունը կզգուշանա այս տեսակ գողերեն, որք այս օրերս սովորական թիվն ավելցած են[289]։

1876

ՀԵՐՍԵԿՈՎԻՆԻ ՎՐԱ ՕՏԱՐ ԼՐԱԳՐԱՑ ԱՆՇԱՍԿՆԱԼԻ ԿԱՐԾԻՔԸ[235])

Երկու հինգ շաբաթն ի վեր լրագրնեըն միայն Հերսեկովինի խնդիրով կզբաղին։

Հերսեկովինի խնդիրն Մառիսի մեջ առաջ Ներքին լուսնըտուն տակն էր, հիմա Քաղաքականի տակ ալ անցավ, ով գիտե, վաղը սահարականին տակն ալ անցնի թերևս։ Օրագրի մեջ միայն ներքին լուսերուն տակն էր, հիմա ծանուցմաներուն տակն ալ անցավ։

Այսպես ահա, լրագրաց որ երեսն որ բանաս Հերսեկովինի կը գտնաս, և շատ անգամ լուսերու տեղ դյուցազներս, քաղաքնեըս անուններ կը կարդաս, որով աշխարհագրությունն ալ կը սորվիս քիչ մը։

Մենք ևս մեր ընթերցողաց վախտն հատնցնելու համար արժան դատեցինք այս օրվան թերթերնուս մեջ օտար լրագիրներեն քաղվածք մը ընելով հրատարակել։ Ընթերցողն այս քաղվածքեն պիտի հասկնա, թե ինչ է խնդրույն հիմը, ինչէ խըղճույն չինքը, ինչ է խնդրույն դռներն ու պատուհաններն։

Նասիոնալ Յայթունկ[236]) երկու ոտքը կոխելով կը պնդե, որ Կ. Բյուֆե[237]) ծանուցած ըլլա յուր պաշտոնակցաց՝ թե պատճառ մը չկա հավատալու՝ թե Հերսեկովինի դեպքերն կնճիռ մը հառաջ գա։ Բայց Նոյե Ֆրայե Բրնեե[238]) կը ծանուցանե՝ թե Ավազաժողովը ախուր պարագայի մեջ բացված է։ Իսկ Ալկեմայնե Յայթունկին[239]) գալով, իրաց կացութիյունը վտանգավոր չէ կըսե, մինչդեռ Բալիթիշե Քորեսբոնտենց[240]), Կլազ Զերնոյա[241]), Ռուսքի Մել[242]) կը հրատարակեն, որ Օյնիքայե, Կացկայե, Տևեսինեների, Քոսթայնիձայի, Տուպնիձայի մեջ կռիվներ տեղի ունեցած են, բայց հաղթութիյունն որու քով մնացած ըլլալը որոշված չէ։

Նուվել Բրեա Լիպրե[243]) ալ կըսե, որ խաղաղութիյունը հաստատ պահելու վախտն օր ըստ օրե կը շատնա կոր, մանավանդ որ հավատք չեն ընծայեր այն դրույցներուն, որոնց թե ի հարկին խնդիրն այսպես կամ այնպես ըլլա։

— Հասկցար հիմա ընթերցող, խնդիրն ինչ է եղեր ու ինչ եղեր է։

—Բան մ՚ալ չհասկցա, Թաղորոն։

— Լսել է որ Մասխի, Օրաբըի գրածներեն ալ բան մը չես հասկնար կոր։

— Ո՛վ ըսած թե կը հասկնամ կոր։

— Ես այդպես կը կարծեի և անոր համար գրեցի. բան մը չհասկցվիր կոր նե՝ հոգվածս հետս կը կոչեմ[244])։

1875

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԵ՛ՅՈՒՆ…

Ս. Պապն ալ Հերսեկովինի ապստամբութեան զսպվելուն համար աշխատողներեն և խաղաղութեան վերահաստատվելուն միջոցներն մնկն է եղեր մեկիկ։

Որո՞ւ մտքեն կանցներ։

Ս. Չինորսկին[245]) հայհոյեցը «Խաղաղութեան ամենեցուն» ըսելով՝ ապստամբութեան մեծամասնութիւնը զսպվելեն անմիջապես հաքը, կաթոլիկ եպիսկոպոսներուն նամակներ կը գրե, որ ապստամբութիւնը զսպելու աշխատին։

Այս նամակներն եթե քիչ մը առաջ գրված ըլլային՝ թերևս մեծ օգուտ ընեին, բայց հիմա որ տերութիւնը ապստամբութիւնը զսպած է, եպիսկոպոսները ինչ պիտի զսպեն. հիմա զսպելու բան չմնաց ասոնց։ Եպիսկոպոսաց բան մը զսպել տալու համար նոր կռիվ մ՚ալ հանել չըլլար ա։

Ս. Պապին այս պատվերը կը նմանի այն մարդուն պատվերին, որ կրակը մարելեն առքը կրակ մարել կը պատվիրե։

Ինչ և է՝ զարմանալ չնորհակալ ըլլալու ենք Ս. Պապին, որ հաճեցավ այս խնդրույն մեջ չեզոքութիւն պահել և խաղաղութեան աշխատիլ, եթե այսպես չվարվեր շատ հավանական էր, որ ապստամբութիւնն մինչև այսօր յուր սոսկութիւնքը մեջ շարունակեր[246])…

1875

Կ Ո Ւ Վ

Ալկեմպեն Յայթունկ Լինտեբանտտոնս Պլե[247]) *Բալեթիչե Բրևսպռնտոնց, Թայմզ*[248]), *Ամբներ*[249]), *Տեյլի Նեուս*[250]), *Ֆիկարօ*[251]), *Նոյս Ֆրայե Բրեսե, Բեե*[252]), *Նուվել Բթես Լիթըր*[253]), *Կոյոս*[254]), *Ամենտոոռ*[255]), *Լընոր*[256]), *Թակլպլաթ, Թալպլկաթ*[257]),

և աւտոտանուէրյուններին դժվար ուրիշ քանի մը լրագիրներ կը գրեն թե՝ խաղաղութիւնը հաստատ պիտի ըլլա, թե՝ խաղաղութիւնն ապահովյալ է, թե՝ Սերբիան հզոր տերութիւնոց խրատներուն լսելով իր վհասպետին դեմ ձեռք վերցնելու դիտավորութենեն ետ պիտի կենա[258]), և եթե ետ չկենա... օ՜հ այն ատեն...քոլոր հզոր տերութիւնները միանալով... դէմացեն հանդիսաւոր պիտի ըլլան։

Միլան իշխանը[259]) վերոհիշյալ լրագրաց մաքսարեութիւնները կարդալով՝ ինքնիրմե կը խնդար ու ըսէր.

«Դուք տակավին խմին ինչ տղա ըլլալս չեք գիտեր»։

Այսպես ըսելով՝ պատերազմի պատրաստութիւններ կըներ։

Բ. Դուռը[260]) Միլան իշխանին սուրն պատրաստութիւնները տեսնելով հարցուց.

— Միլան։

— . . .

— Միլանիկ։

— . . .

— Ձայն չե՞ս տար, Միլան... սա Միլանիկը հոս բերի՛ր։

— Հոս եմ, հոս։

— Ի՞նչ կընես կոր հոն։

— Տղաքները կը ծեծկվին կոր, ես ալ դրան առջև նստած կը նայիմ կոր։

— Դուռը գոցե՛ ներս գնա՛։

— Ես բան մը չեմ ըներ կոր։

— Այդ ձեռքիդ դանակն ինչ պիտի ըլլա։

— Ինքզինքս պաշտպանելու համար։

— Դու տակավին տղա ես, դանակը վար ձգե՛, ներս քաշվե՛, համարդ սերտե՛,

— Ես համարս սերտեցի։

— Ո՞վ սորվեցուց։

— Եաևի դրան դեմը դրացի մը ունինք ան սորվեցուց[261])։

— Եմ քեզի հպատակիրեցի՛, որ սա դրացիեն դաս չսերտես, անոր հետ չխաղնվիս։

— Պատվիրեցիր։

— Ինչո՞ւ ուրեմն դարձյալ անոր գացիր։

— Գացի։

— Մեյ մ՛ալ չերթաս, հա՛։

— Չեմ երթար։

Պում...

— Ա՛ս ինչ ձայն է, ներս քաշվե՛,

— Կը քաշվիմ։ Բամ...

— Գնա, կըսեմ կոր։

— Կամաց, կամաց։ Բում... պըմ... բում...

Այս խոսակցութեան վրա, Միլանիկը սահմանեն դուրս ելավ և իր մեծին դեմ ապատամբեցավ։

Ի՞նչ պատահեցավ այն օրեն ի վեր։

Այն օրեն ինչ պատահած ըլլալը ճիշտ գիտնալու համար պատերազմի դաշտին վրա ըլլալու է, իսկ ինչ պատահած ըլլալը ճիշտ չգիտնալու համար Պոլսո մեջ ըլլալը աղեկ է։

Եթե Պոլսո լրագրաց մեկ քանիին խոսքին հավատալու ըլլանք՝ կայսերական զորքերն այսօր Պելկրատի մեջ ըլլալու են։ Սերվիացիք ալ Նիշի մոտ։

Հետապիր մ՚ալ կըսե թե՝ Սերվիացիք Թուրկաներուն շատը զենքեր բաշխեցին, բայց Թուրկաները այդ զենքերն կառավարութեան հանձնեցին։ Եթե այս հետապիրն ստույգ է՝ ըսել է, որ Սերվիացիք մեր հողին վրա կը գտնվին, արդյոք Պաստրեթին ետ գրած մարդիկը ձրընդ էին։

Այս լուրերեն՝ եթե ստույգ են, սա կը հետևի, որ Սերվիացոց միտքը պատերազմիլ չէ, այլ տեղերնին փոխելով՝ խաղալ մեր զորաց հետ։

Ինչ որ ալ ըլլա, սա ստույգ է, որ մինչև այսօր տրված լուրերն իրարու հետ հակասական են, ինչպես որ Տպագրական տեսչութիւնն ալ մեր այս ըսածը հաստատած է հետևյալ ծանուցումը հրատարակելով։ «Լրագրաց մեջ պատերազմի վերաբերյալ հրատարակված լուրերուն վրա թե որ Տպագրական Տեսչութենեն հաղորդված է խոսքը չգտնվի՝ այդ լուրերն իրրև առաս պիտի նկատվին»։

Այդ, և այս կերպով հակասական առաջը լսել ու կարդալ պիտի ազատինք։

Բանի որ այս այսպես է մեծ հույս ունինք, որ քիչ օրեն լրագրաց մեջ հետևյալ լուրերը պիտի կարդանք.

«Սերվիացիք ետ քշվեցան։

Գարատաղցիք մեծ կորուստ ըրին։

Խաղաղութիւնը վերահաստատվեցավ»։

Մեր ուզածն ալ սա է[162]։

1876

ՀԱՍԿՑԱ՜Ա՜Ա՜Ա՜ԱԱԱԱՆՔ

Բանի մը շաբաթե ի վեր է, որ ամեն օր Աթենքեն հեռագիր կուգա մայրաքաղաքս թե՝ Հունաստան Թուրքո-Սերվիական պատերազմին մեջ չեզոքություն պիտի պահե։

Զհասկցող կա նե՝ թող հասկնա, չլսող կա նե՝ թող լսե, Հունաստան չեզոքություն պիտի պահե Թուրքո-Սերվիական պատերազմին մեջ։

Իմացնք խուզի՛ա, հասկցնք, ժորժիկ[263]), չեզոքություն պիտի պահես եղեր, շատ ապեկ, մենք ալ՝ քեզի նեղդրծակատություն պիտի պահե չենք ըսեր կոր ա. շնորհակալ ենք. ասանկն օր դպրոց չպիտի երթամ, դպրոց չպիտի երթամ ըսող տղոս մը պես՝ ոտքերդ գետինը զարնելով՝ ես չեզոքություն պիտի պահեմ պոռալն ինչ պիտի ըլլա։

Փառք աստուծո, խոսք չհասկցող մարդիկ չենք, դուն չեզոքությունդ պահե՛, կուզես նե՝ անտուկիվոջ մեջ պահե, ու սընտուկն ալ կղպի՛, որովհետև այդ թշվառական չեզոքությունն Սերվիան ու Թարատարն ալ պահել խոստացան, բայց վերջեն կրունցուցին։ Նայե՛, որ դուն չկրանցնես։

Ռումանիա ալ քու պահելիքեդ պիտի պահե, բայց քեզի պես աշխարհ տակն ու վրա չըներ կոր, միայն սահմանները վրա դորք կը ղրկե կոր, որպեսզի չեզոքությունը պահպանեն։

Այս չարաճճի չեզոքությունը պահելն ալ ճշտավ դժվար է եղեր...

Չե՛, պասերնիս չմոռնանք. Հունաստան չեզոքություն պիտի պահե, չըլա որ մոռնաք[264]),

1876

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԽՆԴԻՐը

Հավելվածներուն վերջը եկավ։

Բանի մը լրագրաց ալ վերջը եկավ։

Մոռցանք ըսելու, որ Կովկասյան պատերազմն ալ վերջացավ։

Ուրանք կըսեն թե՝ քանի մը խմբագիրներ քաղաքին պարտապետներուն պես հավելված կը հանեն եղեր ու ժողովըրդյան ծառայություն ընելով՝ անոր ստակը կառնեն ձեղր։

Անպրէն...

Կեցցէ՛ Մամլո ազատութիւնը...

Կեցցէ՛ ազգասիրութիւնը...

Յամէ է մեզ ըսել՝ թէ եթէ խափանչալ լրագրաց խմբագիրներն չկարենան ինքզինքնին արդարացունել, իրենց ճակտին վրա անջնջելի ամօթ մը դրոշմած պիտի ըլլան։ Ուստի ազօթենք, որ ինքզինքնին արդարացնելու հաչողին և մաքրենք, որ ուրիչի մը խաբնութեան զոհ գացած ըլլան, և ոչ թէ, ինչպես որ կըսվի քանի մը ռակի շահելու համար ժողովրդյան մոլուքին խնդալով՝ անոր ատակն առնելու նպատակավ իրենցմէ առաւել հնարած ըլլան։

Հիմակուհիմա ռակից ավելի չխոսելով կը դառնանք դարձեալ լրագրաց խմբագրաց Գաղ. ժողովին ուած պատասխանները հոս գրել՝ ցուցց տալու համար՝ թէ որ ատոիճան ստուդ են իրենց ուած լուրերը։

— *Լրագրի*[265]*) խմբագիրը դուք կը։*

— *Այո։*

— *Երևանեն նամակ առած կը ձեզ։*

— *Այո։*

— *Կրնանք տեսնալ։*

— *Ես չտուի, բարեկամներես մեկն առեր էր։*

— *Այդ նամակը դուք տեսաք։*

— *Ո՛չ, բարեկամս անոր ընդօրինակութիւնը ղրկած էր ինձի։*

— *Նամակագրին անունն ինչ է։*

— *Չեմ հիշեր։*

— *Բարեկամիդ անունը կրնանք պիտնալ։*

— *Անունը ես ալ չեմ գիտեր։*

— *Շատ ադեկ, շնորհակալ ենք։*

— *Էֆենտի, Նորագրի*[266]*) խմբագիրը դուք կը։*

— *Այո։*

— *Զեզի Ռուսաստանցի մը ձեկր է։*

— *Այո։*

— *Կը ճանչնաք այդ Ռուսաստանցին։*

— *Չեմ ճանչնար։*

— *Անունը ինչ է։*

— *Ասքանազյան։*

— *Այդ անունով մարդ չեն ճանչնար կոր Ռուսաստանցիք։*

— Ինչո՞ւս պետք։

— Զճանցած մարդուդ ինչպես հավատարմություն ըրիր ու խոսքին հավատացիր։

— Պատվավոր մարդ է։

— Ինչքա՜ն հասկցար։

— Ինքը ըսավ։

— Ո՞ւր է հիմա այդ մարդը։

— Գիտեմ։

— Ո՞ւր կը նստի եղեր։

— Պեոյուք տերե[267])։

— Ո՞ր փողոցը։

— Ըսավ։

— Գետ եղած առեն կրնանք գտնալ գինքը։

— Գիտեմ։

— Ի՞նչ գիտես։

— Աբգանազյանը ըսավ ինձի, և քանի որ Լբագիրն ալ առանկ լուրեր կուտար կոր, իբրև խմբագիրը ես ալ տվի։

— Շատ ազեկ, շնորհակալ ենք։

— Էֆենտի, Մեճմուայի[268]) խմբագիրը դո՞ւք եք։

— Այո, ես եմ։

— Կովկասուս պատերազմը ուսկից իմացաք։

— Երկու հոգի եկան պատմեցին։

— Կը ճանչնա՞ք գիրենք։

— Չեմ ճանչնար։

— Ի՞նչ ելավ առկից

— Ի՞նչ պիտի ելլա, երկու վկայով ամեն բան կը հաստատավի։

— Այդ մարդիկը քե՞ որ տեսնալ հարկ ըլլա։

— Ցեսնալու է. ես ալ ձեր տեղը ըլլամ նե՝ տեսնալ կուզեմ։

— Ո՞ւր տեսնալու է, ձեր կը գտնվին։

— Ամենա չգիտեմ։

— Զգիտցած մարդուդ ինչո՞ւ կը հավատաս կոր։

— Ես կը հավատամ։

— Չիմա, ապացուցանել հարկ ըլլա նե՝ ի՞նչ պիտի ըսես։

— Երկու մարդ եկավ և...

— Շատ ազեկ, շնորհակալ ենք։

— Հայր Տրմոքիոս, Լույսը[269]) գրած էր, որ ձեր Աբժա-

նապատվութիւնը Նորին Արժանապատուութեան իմացուցած է եղեր Կովկասու ապստամբութիւնը։

— Բավ լիցի, ես ատանկ բան մը չըսի, և շատ ցավեցա, որ Լուսյի մեջ այդպես դրված է։

— Կովկասու մեջ խռովութիւն մը կա։

— Ամենևին, բան մ'ալ չեմացա ես։

— Շնորհակալ ենք, Հայր։

— Տեր Հայր, Լուսյի համբագիրն ևիմով։

— Ո՛չ։

— Կովկասու մեջ հայոց կողմն հրատարակված հայտարարութիւն մը ունի եղեր քովը, ղրկե՞ր է։

— Բավը չէ եղեր, ձեռք բերելու ըլլա նե՝ պիտի ղրկե ձեղր։

— Շատ ազեկ։

Ասոնք են ահա այդ լուրերն հավելվածներով հրատարակող խմբագրաց տված տեղեկութիւնները, որոց աղբյուրներուն որքան հավատարիմ ըլլալն ընթերցողաց դատողութեանը կը հանձնենք[270]։

1876

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Երկու տարվան մեջ որչափ փոխված են էրերը ու մարդ երը... Թատրոնը չգոցված Միլանը իշխան էր, մինչդեռ այսօր թագավոր է։

Զարմանալի բան, որչափ կը հաղթվի կոր, այնչափ պատվո կը հասնի կոր[271]։

Ճիշտ ավետարանին ըսածը.

Որ խոնարհեցուցանի զանձն յուր, բարձրասցի։

Պեղկրաթը առած օրերնիս Միլան տարակույս չկա, որ հայոց պիտի հրատարակվի։

Այս Միլանը տղայոց թափին կը նմանի կոր, որչափ ուժով գետին զարնես, այնչափ ավելի կը բարձրանա կոր...

Ոսկեդեն դարն ալ անցավ և անոր հաջորդեց թղթադրամի դարը։

Ոսկեդեն դարու մեջ մարդիկ երջանիկ կապրեին, թղթադրամի դարուն մեջ ավելի հանգիստ պիտի ապրին։

Ի՞նչ է բոլոր չիթթուքյանց, կոնֆետներու պատճառը.— Ոսկին։ Ի՞նչ է այսչափ մարդոց բանտերու մեջ ձգվելուն պատճառը.— Ոսկին։ Ի՞նչ է մարդս դող, ավազակ ու անբարոյական ընողն.— Ոսկին։ Ի՞նչ է մեր վարժարաններուն առաջ չերթալուն պատճառը.— Ոսկին։ Վերցուր ուրիշ ոսկին, տես ինչպես կը վերնան մոլութիւններդ։

Անոնք, որ ոսկիին մեջտեղն վերնալուն կը գանգատին, չեն խորհիր, որ հրապարակի վրա ոսկի չգտնվելուն համար է, որ Ղալաթիա առաջվան պես դողութիւնները տեղի չեն ունենար։

Ըստ իմ տկար կարծյաց, քշե՛ ոսկիները Եվրոպա, թո՛ղ Եվրոպացիք խրարու գլուխ պատուեն և մենք խաղաղ կյանք վարելով ըսենք.

— Ներե՛ մարդիկ, ոսկի համար կը կռվին կոր։

— Եկեր է։
— Կուգա կոր։
— Պիտի գար։
— Եթե գա։
— Եկավ։
— Չէ եկեր։
— Քանի մը օրեն կուգա։

Եթե սա մարդը բարկությամբ չգա՝ նախնիքներն ինայած մեկ ավանդությունը սուտ պիտի հանեն։

Մոտերս պինադադար մ'ալ տեսնելու հավանականություն կա։

Արդեն այս պատերազմին մեջ ավելի պինադադար տեսանք քան թե կռիվ։

Փափաքելի էր, որ այս պինադադարի մեջտեղն ալ Բալատապի

իշխանը թագավոր չէրառաւարկվեր, որովհետև ասոնք առանց գործի մեալու վարժված չըլլալով՝ պարապ նստելնուն պես թագավոր կըլլան կոր...

ՄԵԿԴԻ ՔԱՇՎԵ՝ ԸՆԹԵՐՑՈՂ

«Դիվանագիտական կաթսան սաստիկ եռման մէջ ըլլալով՝ պայթելու վրա է եղեր, կըսե Մասիս։

Հավատիսի չոճուքսան ալ[272]), կըսե առածը։

«Ձեմ կրնար ըսել, թե խաղաղութիւնը բացարձակապես հաստատ է։

ԼՈՐՏ ՏԵՐԲԻ[273])

Վստահ եմ, որ առանց արյունահեղութեան խաղաղութիւնը կը տեսնենք։

ԼՈՐՏ ՏԵՐԲԻ

Հետևութիւն.

Խաղաղութիւնը կամ կը հաստատվի, կամ չհաստատվիր»։

Մեր խոնարհ կարծիքն ալ ասե է[274])։

1876

Մարդս քաղաքականութեան արդի վիճակին վրա խորհած ժամանակը ինքզինքը Գարագեզի կամուրջին[275]) վրա կը կարծե կոր, կառավարութեանց բռնած ընթացքն ալ տեսնելով կամուրջի վրա գտնված մուրացկանները կը հիշե կոր։ Մեկուն տասը բառա ողորմութիւն տվիր, չորս հինգը մեկին ձեռվընին բացած հասնեդ կը վազին ողորմութիւն ուզելու։

Հոնաստանն, որ իր հեղոքութիւնովը նշանավոր եղած էր, այս օրերս ան ալ ձեռքը բացեր մեր եռևեն կը վազե։

— կասը մը բաներկարգութիւն ալ մեզի տվեք, եղբայրնեռս տանիմ պիտի։

— Մանրուկ չունիմ։
— Պոռնայիկ, Հերսեքլին ու Պուլղարիայի պիտի տաք եղեր
— Սուտ է։
— Մեռելներուդ հոգվույն համար ըլլա, ավելք։
— Չեմ կրնար տալ, ըսի ես։
— Կաղաչեմ, պարապ մը դարձնենք ինձի։
— Երկար ըրիր։
— Դուք բարի մարդ մ'եք, բարեսիրտ եք, առատաձեռն եք։
— Ժամանակ չունիմ հիմա։
— Ձեր տունեն աղքատ մը պարապ դարձած չէ, կաղաչեմ։
— Այն ժամանակները անցան։
— Ձավակներուդ սիրույն համար ըլլա։
— Կորի սըկիլց։
Հազիվ թե աս կը հեռանա, Ռումանիա կը հասնի։
— Ոտքերուդ տակը նայեցիք, էֆենտի։
— Ի՞նչ կա։
— Մենք ալ աղքատ մարդիկ ենք, ասանկ օրերու կսպասենք, որ քանի մը բարա սեպեղլեմիշ ըլլանք։
— Հիմա ժամանակը չէ։
— Կաղաչեմ։
— Կորի սըկիլց։
Մարդս ողորմություն տալու միտք ալ ունենա՝ մուրացկաններու բռնած այս ընթացքեն կը զզվի ևոչ մեկուն չտար։
Ես ալ ըլլամ՝ չեմ տար. բայց ձեռվընուն խաբելու համար միշտ գրպաններս խառնելով՝ տալու հոժար կը ցցուկեմ ինքզինքս և ետևես բերել կուտամ դանդաղ, մինչև որ հոգնին, հույսերնին կտրեն ու ետ դառնան։
Շատ անպաճույճ այսպես խոլտած եմ ես մուրացկաններու ձեռքեն։

Մոզոր գինադադար մը... գինադադարներու նահապետ մը... վեց ամիս գինադադար։
Մեզմե մեկ շաբաթ ուղեցին, վեց ամիս տվինք. եթե խելք ընեին վեց ամիս ուղեին՝ վեց տարի կուտայինք, ցույց տալու համար՝ թե մենք կռվո մարդ չենք, թե իրենցմե ավելի խաղաղության կը փափաքինք։

Վեց ամիսը շատ սղակ է. որովհետև աս տերությունները ամսվան մը մեջ խոսք հասկնալու մարդիկ չեն։

Այո, մեկ ուզեցին՝ վեց ամիսք։

Նայինք ավածնիս պիտի ընդունին. աս ալ մենք պիտի մոմատնենք։

Հավանականաբար ոչ։

Որովհետև այս մարդիկ միշտ քիչ կուզեն կոր, շատ չեն ուզեր կոր և քանի անգամ որ իրենց ուզածեն ավելին տալ խոստացած ենք, մերժեր են։

Բարեկարգության ուզեցին, ընդհանուր բարեկարգություն պիտի ընենք ըսինք. ոչ պատասխանեցին, մեր ուզածը քիչ բան մ'է, ան տուր հիմակուհիմա։

Ուստի, ատոնց այս ընթացքը կարծել կուտա մեզ, թե վեց ամսվա զինադադարի համար հետևյալ պատասխանն պիտի ընդունենք։

— Շնորհակալ ենք ձեր առատաձեռնությենեն, բայց մեզի մեկ ամիս պետք է, հինգ ամիսը ձեր քովը ձեռ։

Իսկ եթե ընդունվի՝ տարակույս չկա, որ խաղաղությունը պիտի վուլթա յուր դրոշը փնտռելու, և եթե գտնա՝ պարզելու։

Եվ սակայն բոլոր աշխարհ փափաքներով լեցված են։ Այս փափաքները ուր դնենք։

Օրինակի համար, լորտ Բըսըլ[276]) Թուրքիո բարեկարգելության կը փափաքի եղեր և ոչ թե Ռուսիո Պոլսո ներքսնելուն։

Լորտ Կլատսթընը[277]) Պուլղարիո անկախության կը փափաքի եղեր։

Լորտ Տերպին ընդհանուր բարեկարգության կը փափաքի եղեր։

Պիզմարքն[278]) ալ սա անցած դարձած բաներեն օգուտ մը քաղել կը փափաքի եղեր։

Պ. Գըռմունսուրոսը[279]) Եպիրոսի, Թեսալիո բարեկարգության կը փափաքի եղեր։

Բրենս Կոլչաքովը[280]), իբրև արտաքին գործոց պաշտոնյա Հիսուսի, Քրիստոնեից ազեկ վիճակ ունենալուն կը փափաքի եղեր, ատանց Հայաստանի քրիստոնյաներուն նայելու։

Մեր Բրենս Խիկարն ալ, անշուշտ Հայաստանի հայոց բարեկարգության կողմեն անհամբեր։

Ինչպես հայտնի է, ամեն մարդ իր կարապետը կուլա կոլը՝ և մեծ այսչափ փափաքներ կընային քիչ միջոցի մեջ կատարվել, անշուշտ ոչ, ուստի լայնածավալ գինադարձ մը կբնա այս գործերը կարգադրել։

Իրաց այս վիճակին մեջ հրեաները չեկա՞ն Երուսաղեմին ծախու առնելու։

Ի՞նչ կըսեք։

Ի՞նչ պիտի ըսեմ։ Տես Փոխնջը ինչ կըսե.

«Եվրոպա գտնվող Հրեական ընկերության մը կողմանե մեկը մայրաքաղաքս պիտի զրկվի եղեր, Սիբիր կուսակալության վիճակը ծախու առնելու և Իսրայելյան թագավորության անդամոր վերահաստատելու համար»։

Ծախողը ո՞վ է, որ ասոնք այդ վիճակը ծախու առնելու եկեր են։ Եվ եթե ծախվի, թեպետև մաքե անցուդնելը հիմարություն է, քրիստոնյայք կը թողո՞ւն, որ հրեայք առնեն այդ կողմերը։

— Բայց հրեայք այդ տեղերը առնեն ինչ պիտի ընեն, թագավորություն պիտի հաստատեն։

Այդպես կըսեն. բայց ես չեմ հավատար։ Շատ հավանական է, որ ածան ծախու առնեն ու բարձր գնով վերջեն ուրիշի մը ծախեն։

Իրաց այս վիճակին մեջ, ինչպես կըսե Մասիս, սրեֆյուլաեիոնի եղեր են Թշվառականները, ինչպես կըսեր Լրագիր[281]։

1876

Էնթերե... սթաթյու քուո... քոնֆերանս... բրոբոզիցիոնե... օթոնոմի... բալլամենթո... արմիսթիցիա... լիպերթե... բինֆորմ... տրուա[282]...

Տարի մ'է՝ որ գլուխնիս այս բառերն ուռեցավ։ Եթե բառերնամ կառավարություններ մեզի լեզվափաություն պիտի տային՝ թող հաճին այս բառերը փոխել, որովհետև մարերնուն արգանդը եղող տղայք ալ գոց ըրին գնանք, այնպես որ այսօրվան ծնած տղան ըղա... ըղա... պոռալու տեղ... էնթերե...

սթաթիւտքուս հայլն ըսելով՝ մորն ալքանդրէն ի լույս կուգա կոր, մայրը ըսես նե՝ քոնֆերանս, բրոբոզիցիոնե ըսելով՝ տղուն կաթ կուտա կոր, հայրը օթոնոմի, բարլամենթո մըմռալով՝ տըղան կը սիրե կոր, տղախինը՝ արմխթիկա, լիպերթե ըսելով՝ տղան կորսրե կոր. տղան ալ ընփոյմ, տրուտ ըսելով՝ անոնց պատասխան կուտա կոր։

Աւսը վքըչը։

Քանի՞ տարի տակավին պիտի սերտենք այս բառերը, համարձակ ըրբ պիտի փոխեն։

Մեր սթաթիւտքուն պիտի պահէն եղեր. արդէն մենք մեր սթաթիւտ քուէյեն խալաթ չունինք, քոնֆերանս պիտի ընեն եղեր, թող ընեն։ Օթոնոմի կուզեն եղեր, չենք կրնար տալ, արմխթիա կուտանք, կուզեն նե՝ առնեն։ Լիպերթե կուզեն, ըֆորմ տալ կը խոստանանք, չեն հավատար։

Այսպիսյաց շատ հարմար կուգա լսոիններեն սա տողերը.

Բուէմ ժիւոիքաս՝ սի թու նոն վիս ժիւոիքարի։ Լիպերթաթեամ բոնթիւլաս, տա լիպերթաթեամ[283]։

Ըսածս չելմվ։

Ռուսիա չէ բարեհաճեր մեր վեց ամսյա նվէրն ընդունելու։

Ինչո՞ւ, արդյոք նվէրնիս չնչին քան մ՚էր ու անո՞ր համար չէ ընդուներ։

Եթե չնչին էր՝ թող իմաց տար, վեց տարվան պինդտադար մը կուտայինք իրեն։

Մենք պինդտադարե փախչող մարդիկ չենք, բավական էր որ արդյունքը մեզի նպաստավոր ըլլա։

Լրագրաց գլուխին նայելով՝ մյուս կառավարութիւններե ոմանք ընդուներ և ոմանք ընդունելու սրամտիր են եղեր։

Ոմանց ընդունելեն և մեկուն չընդունելեն ինչ պիտի ծաղի արդյոք։

Քանի մը օր սպասեցնք։

Ցաւ այու Պոսֆոր լրագիրը, որ Բ. Դրան հրամանավ խափանյալ էր, վերստին երևալու արտոնութեան առացավ։

Պասիրեթ լրագիրը, որ Բ. Դրան հրամանով հրատարակված էր. մեզ մ՛ալ չհյուսաբակվելու համար արտոնութիւն սաացավ։

Առաջնուչ անմեղութիւնը չենք գիտեր, երկրորդին հանգանքը իսկամ ժողովուրդն ի գեն հրավիրելն էր։

Գոհ ենք, որ Պասիրեթճի ծննեալ Ալի Էֆենտիին հրավերին արձագանք չտավ ժողովուրդը։

Ալի Էֆենտին արդարև կերակուրի սպասեզին մեջ երևելի ժեներալ մ՛է — արդեն միլիոնավոր բերանները չուր դալին կեր տված է — բայց և այնպես խմբագրական սպասարեզին վրա պաշի պզտուկ գինվոր մը ըլլալով՝ շատ անիրաւութիւններ դոբծած էր...

— Լորա Տերպիին չուր առեւնարանութիւնը դեռ չվերջացուց, որ անոր վրայօք քանի մը պզտիկ դիտողութիւններ ընենինք։

Այս տարվան առեւնարանութիւնները քիչ մը երկար կը քշեն կոր։ Սառաջները երկար առեւնարանութիւնները ժամանակ կը կորնցնեին կըսեին, մինչդեռ հիմա երկար առեւնարանութիւնները են, որ ժամանակ կը վատնեին։

Ուրեմն շատախոսութիւնն ալ ունի եղեր չուր օգուտները. ասկից վերջը ո՞վ կը համարձակի շատ խոսողի մը համար գէշ ըսել։

Եթե մենք Լորա Տերպիին տեղն ըլլայինք, բարեւտեղին վերջամոյա առեւնարանութիւն մը կառաջարկեինք...

Վիեննայեն.

«Գինևորը ինկած են.

Ոակին նորեն կը փնտռվի»։

Դառնաք նե՝ մեր կողմեն ալ բարև ըրեք, զրուցեցեք իրեն, թե մեզի այչափ ալ մոռնալ կըլլա մի։

Խոսքը մեջերնիս, Սերվիացիք ալ բնավ շիտակ չեն խոսիր

կոր. հաղթութիւնը միշտ իրենց կառնեն, պարտութիւնը մեզի կուտան կոր։

(Առենով սուտ խոստումներուն լեզուն կը կտրեին. եթե այս սովորութիւնը նորին մտնի՝ քիչ մարդ պիտի տեսնենք, որ բերնին մէջ լեզու ունենա)։

Սլավ ազգային եկած վերջին լուրերը դարձյալ հաղթութիւնը Սերվիացոց կուտան. սակայն մենք հոգ չենք ըներ, որովհետև ազգ գիտենք, որ քանի մը օրեն մեր ազգայիններն գալիք լուրերն այդ հաղթութիւնները Սերվիացոց ձեռքեն պիտի հափշտակեն և մեզի պիտի տան, ինչպես որ օրեն է։ Թող այսօր անոնք ուրախանան, վազը մենք պիտի հրճվինք[284]։

1876

— Ուֆ... ուֆ... ուֆ... ալ գլուխ ցավցուցիր դիաւեռ. ինչ պետք երկար բարակ խոսքեր. սա լսե մեզի, գործիդ կուգա, պիտի կրնաս տալ, թե չէ։

— Չեմ կրնար տալ։

— Ի՞նչ կրնաս տալ։

— Անանկ բան մը ուզիցիր, որ...

— Ալբանքդ ձեռքդ չառինք ա, բան մ'ալ դուն ըսե. սակարկութիւն կըսեն սորը, հինգ վայ, հինգ վեր կը հարմարինք։

— Ի՞նչ կըսեք, այդ ալբանքները մեզի շատ սուղ նստեր են։

— կարծեմ դուն ալբանքներդ ծախելու միտք չունիս։

— Ծախելեմ ինչ պիտի ընեմ, բայց վար դնով տալու ըլլամ նե՝ վարպետս ծեծ կուտեմ։ Բիչ մը ժամանակ տվեք ինձի մտմտամ։

— Սպասելու ժամանակ չունինք, գործ ունինք։

— Դուք գացեք, ձեր մարդը ղրկեցեք, մենք անոր հետ կը հարմարինք։

— Շատ աղեկ։

— Մնաք բարով։

— Բարի եկաք, մեզի չմոռնաք։

— Աստված չըննե։

Զորս կես-պաշտոնական թերթեր (մեր հաշվով երկու պաշ-

տոնական թերթ) կը կարծեն եղերը հուսալ կամ կը հուսան եղերը կարծել, որ դիվանագիտական բանակցութիւնները խաղաղական լուծում մը հառաջ պիտի բերեն եղերը։

Տար ասոված, որ առոնց կարծիքը սխալ, կամ հույսը պատրաստ չընկնի ու դիվանագիտական դեղերը կարող ըլլային լուծում մը տալ, որպեսզի չտիպլնկինք ահավոր գրեհներով հառաջ բերել այդ լուծումը։

Այս արևելյան խնդրույն փորը որչափ պինդ է եղերը, ինչ համառ փոր է եղերը, որ այսքան տաբևներու հետ չկրցավ լուծվիլ։

Քաղաքականութեյան Տյառն ընդ առաջն ալ անցավ։

Վարժապետնիս եկավ։

— Ո՞նչ ծրագիր պատրաստեց արդյոք այս տարվան համար, վարժարանիս դասախոսութեյունները պիտի ավելցունե՞, թե պակսեցունե։

— Լաւծնուս նայելով բաղաքական տարրալուծութեյուն պիտի ավելցունե եղերը։

Համոզվեցանք հիմա, որ սխալած ենք եղերը։

Ի սկզբան անտի մենք գիտեինք, որ Ռուսիան ազատասեր, խաղաղասեր ու շահեկիր կառավարութեյուն մ'է, բայց վերջերս լրագիրը այնպես հավատացուցին մեզի, թե բոլոր այս խնդրոց չլուծվելուն պատճառը Ռուսիան է։

Այսօր կոհ սրտիվ կը տեսնանք, որ արդարութեյունը ամեն բան հայտնեց, Ռուսիո անմեղութեյունը երևան հանեց և հանցավորը ցցուց։

Բոլոր այս բաներուն պատճառը Ռուսիո կառավարութեյան՝ Պելկրատի մեջ գտնվող Պ. Գոզրոֆ անուն հյուպատոսն է եղեր, ասոուծմե գտնա։ Այս Թշվառականն է եղեր Զերնայեվին[285]) առաջարկողը, որ զինագրել չընդունի. այս չարաճճին է եղեր ժողովուրդն ի զեն հրավիրողը։ Վերջապես այս մարդը յուր առած հրահանգաց դեմ կը վարվի եղեր, այսինքն խաղաղութեյուն ըսե՛ ըսեր են նե՝ կռիվ է ըրեր, կռիվ ըսե՛, ըսեր են նե՝ խաղաղութեյուն է ըրեր։

Ուսաի և այս հանգամանքը համար այսօր ևս կանչված է. քայց մեջն այս պատիժը բավական է։

Ուրիշներու օրինակ ըլլալու համար ավելի խստությամբ երկրորդ անգամ մ՚ալ ևս կանչելու է այս Պ. Գոզլոփը, որպես-զի սորվի Պ. Գոզլոփը, թե ինչ ծանր հանցանք է հրամանաց դեմ վարվիլը։

Խոսքը Պ. Թիեբրինն է[286]։

«Տերությունք խաղաղության պահպանության մեջ շահ ունին, որովհետև անոնց մեջեն ոչ ոք կա, որ վստահ ըլլա, թե պատերազմեն օգուտ քաղէ»։

Հետևցնելը Բրենս Միլաբինն է։ Քանի որ տերություն միշտ իրենց շահուն համար կաշխատին, ինչպես որ քանի մը անգամներ իրենց ընթացքը հայտնած են. քանի որ տերությունք խաղաղության մեջ շահ ունին, ապա ուրեմն խաղաղությունը չպիտի վրդովի։

Խաղաղությունն ամենեցուն[287]։

1876

Զինադադարի պայմանաժամը դեռ որոշված չէ։

Վեց շաբաթե ի վեր տերություն իրարու հետ կը խորհրդակցին, թե սա զինադադարի պայմանաժամը վերց շաբաթ պիտի ըլլա. երեք, թե վեց ամիս, և տակավին այս կետին վրա համաձայնած չեն։

Զինադադարի պայմանաժամ որոշելեն առաջ, զինադադարի որոշման պայմանաժամ մը որոշելու էին, որպեսզի պիտնայինք՝ թե քանի ամիս պետք է, պայմանաժամ մը որոշելու համար։

Երկար զինադադարի հակառակ կողմերը, կարծենք այս անգամ ալ մինչև նոյեմբեր զինադադարի պայմանաժամ որոշելու խնդիրով պիտի զրպեցուենն դեպ և կամ այն ատեն զինադադար պիտի որոշեն, երբ երկու կողմը շատ մարդ կորսնցնելով ալ կռվելու կարողություն չունենան։ Բիչ մ՚ալ սպասենք, քանի որ ուրիշ բան չենք կրնար ընել։

Մենք գեաեինք, որ սուտ խոսող լրագիրը մինակ մեր Մեհմուան է, Ամերիկայի մեջ ալ կը գտնվի եղեր ատանկ լրագիրներ, որոնց գով Մեհմուա քանի մը տարի աշակերտութիւն ընելու է, սուտ խոսիլ սորվելու համար։

Այս լրագիրներուն մին կըսե՝ Թե Բարձր. Աբրահամ բաշա Երամյան Պեյդողլին[288]) մինչև Իրիա ճամբա մը բանալ ուզեր է եղեր, դետնին տակեն, ուսկից մինաք ունի եղեր անցունել... հիշյալ լրագրին Թղթակիցը... չէ, չէ, սխալեցա, ուսկից շատ օտար գործեր պիտի գան եղեր, մայրաքաղաքիս մեջ պիտի լեցվին եղեր հայլն և այլն։

Ըստ մեզ, ավելի աղեկ կըլլար՝ Եթե արդի Թղթակիցը ատանկ սուտ մը Ամերիկայի սրվևատահանդեսին զրկեր էր հազվագյուտ սուտ մը...

Խազրխեն ինչ կըսեք էֆենտիներ։

Տրապիզոնի մեջ հարյուրապետ մը տուրք հավաքելու նոր մէջտղ մը գտեր է, պարտքերնին չվճարողը խազրխի մը...

— Վրա՞ կը նստեցնեն եղեր։

— Ոտքս մի կտրեր ա, էֆենտիմ, խազրխի մը կը կապեն եղեր։ Ուզեն դեղացիները տեսնելով, որ բարեկեցիկ կառավարութիւնը բոլոր ուժով և զորութիւնեմբ կը մերժե պարտք ունեցողները խազրխով պատժելու սկզբունքը, հաղարապետին կը դիմեն և գթութիւն կը հայցեն։ Հաղարապետը՝ հարյուրապետին այս տնօրինութիւնը Քերի գտնելով՝ անմիջապես հրաման կընե, որ պարտք ունեցողները իրենց խազրխներեն քակեն և ամեն մեկը երկու խազրխի կապեն։ Մենք այս լուրը կարդալնես անմիջապես ետքը, փաստաբանի մը դիմեցինք, հասկնալու համար Թե պարտք ունեցողներու համար խազրխի կապելու պատիժ կա՞, որպեսզի, եթե կա, խազրխ մը առնենք, գրասենյակնիս երթանք և ինքզինքնիս կապենք։ Ինչպիսի կարծեմ. և սակայն հնդալու խոսք մը չըսի. եթե, ասոված չընե, այս սկզբունքը ընդունվի՝ հիմակվընե սկսելու է մարդաքաղաքիս չորս կողմը մեկ խազրխ տնկել և բոլոր անցորդները առանց հարցնելու մեկիկ մեկիկ կապել։ Եթե պատժուն Թեհեուեթյանը ու ծանրութեյանը համեմատ պիտի որոշվին խազրխները, այն ատեն հանուրդին հատուեթյամբ խազրխներ պիտի ըլլան տնտկացյալները կապելու համար. և ոչ պիտի գտնանք ատանկ խազրխներ։

կարծենք թե հարյուրապետն և տասն անգամ հարյուրապետը այս զժվարութիւնները նկատողութեան առնելով խազքնեարեն կը լուծեն մեր բարեխնամ ժողովուրդը։

Երբեմն տղայոց մեջ անանկ խելացիները կը գտնվին, որ մեր նրնսփոխան էֆենտիներու մեջ չգտնվիր։

Առջի օրը Արաբատի խմբագիր Այվատյան[289]) էֆենտի Ղալաթիայեն կանցներ։ Քոյան քայլ հեռավորութեամբ, անոր հետևեն կուգար Մասիսի խմբագիր Իւթիւճյան էֆենտի։

Տասներկու տարու տղա մը՝ Արաբատը կանցնի կոր ըռավ ինքնիրմե ու Այվատյան էֆենտիին Մասիսը ցուցնելով՝ սկսավ ըսել։

— Քըս, քըս, քըս... ձյու, ձյու...

Այվատյան էֆենտին բնականաբար բարկացավ ու տղուն ծուռ ծուռ նայեցավ։ Տղան անտարբերութեամբ կը շարունակեր յուր վանկերն ու կըսեր։

— Քըս, քըս, քըս...

Իւթիւճյան ալ նկատելով, որ տղան կանպատրաստ կոր Այվատյանը, կոնակը պատին տվավ, պեխերը կրծելով կը խնդար։ Իսկ մենք, վախնալով որ Այվատյան էֆենտին տղուն խոսքերեն գրգռվելով Մասիսին վրա կը հարձակի և մեջերնին կռիվ մը կը ծագի, ճամբանիս շարունակեցինք, շարունակ խորհելով, թե ինչ կը նշանակե տղուն այս անվայել գործը։ Շատ չանցավ, հետաքրքրութիւնիս փարատեցավ։ Սրճարանի մը մեջ մտա ու Արաբատի մեջ հետևյալը կարդացի։

— Ժողովուրդը հոտ է և լրագիրները այդ հոտը պաշտպանող շուներ են։

Ատոր համար է ուրեմն, որ Այվատյան միշտ կը հաչե, ըսի ինքնիրենս — մենք քիչ պահեմ — ու մեկդի նետեցի Արաբատը։

Փորձառութիւնը կը ցուցնե, որ հարստահարութեանց հետևին շատ իյնալու չէ, ինչու որ մեկ տեղեն հալածելուդ պես

փախչելով ուրիշ տեղ կերթա կոր։ Անատոլուեն վերցուցինք ընինք, հիմա Բուամելի ալ անցավ։

Խորհրդի մեջ հայ ազգ մը թյուրքի մը սպանվիլն ամեն մարդ խմացավ լրագիրներեն, ինչպես նաև Խորհրդի բանբեռնամ ժողովրդյան, մանավանդ երբոր առաջնորդին փոխանորդ արժանապատիվ Գեորգ վարդապետին այս մասին բռնած ընթացքը։

Այս վարդապետը ուրիշ շատ մը առաջնորդաց պես սպանյալ ազգն փողոցի մեջ ձգելով չվազեց Պատրիարքարան հեռագրելու, թե հայ մը սպանեցին, չեք հավատար նե՝ եկեք, նայեցեք, բարեհնամ կառավարութեյան ուշադրութեյունը շուտ մը հրավիրեցեք, անմիջապես թաքրիր գրեցեք, կայլն կայլն, այլ, ինչպես որ արդարութեյունը կը պահանջե, զոհը եկեղեցի տանելով՝ հոն քանի մը բժիշկներուն վկայութեյամբը խեղդամահ ըլլալը կը հաստատե և մարդասպանը բռնոտ դնել կուտա, ուր կսպասե հիմա յուր վճիռն ընդունելուս։

Արժ. Գեորգ վարդապետին այս գործը գովելով՝ կը մաղթենք, որ գավառաց բոլոր առաջնորդներն իրեն հետևող ըլլան և այն գործը, որ իրենց պարտքն է կատարել, Պատրիարքարանի վրա չբեռնավորեն։

Ըստ Ալպատատա, Լևվանթ Հերալտի և ըստ Մեհմուայի՝ Լևվանթ Հերալտի խոսքին նայելով՝ ժննեբալ Իկնաթիեֆ[290] երկու գլպանեներուն մեջ ֆըստըխի պես առաջարկութեյուններ լեցուցեր է եղեր։

Երկու գլպանեներուն մեջ լեցնելն չկարծենք, թե շատ առաջարկութեյուններ ունի, ահ, առաջարկութեյունները երկու տեսակ ըլլալուն համար է, որ մեկ տեսակը մեկ գլպանին մեջ, մյուսը մյուսին մեջ դրեր է, թեպետև կարծիք ալ կա, թե վինքը բերող շոգենավը առաջարկութեյուններով լի է եղեր։

Այդ առաջարկութեյուններն առաջին տեսակը խաղաղասիրական և երկրորդ տեսակը կռվասիրական է եղեր։

Մյուս կողմեն կա թյուրքի կը պնդե, որ ժննեբալ Իկնաթիեֆ միմիայն խաղաղասիրական առաջարկութեյուններով եկած է։

Սա սուտ լուրերեն սա անտառուղութեյունը կելնե, որ կա

Թյուրքին ժննեռալ Իկնաթիեֆին մեկ գրպանը խառնելով իր ուզածը առնելուն պես՝ մյուս գրպանը խառնելու հարկ չէ տեսեր, առեր քալեր է, մինչդեռ Լեվանթ կամ Լըվենթ անգղիական պաղ արյունով երկու գրպանն ալ խառներ ու վերջը գացեր է։

Կը հավատամք դուք, որ ժննեռալ Իկնաթիեֆին իր գրպանները խմբագրաց բացած ըլլա և Թող տված ըլլա իրենց, որ ուզածնուն պես խառնեն զանոնք։ Մեծ ժննեռալ Իկնաթիեֆ իր քաղաքականութիւնը գրպաններուն մէջ կը կրե։

Առանց և ոչ մեկուն հավատալու՝ քանի մը ամիս ալ սպասելու է, որ ժննեռալ Իկնաթիեֆին ինչ քաղաքականութիւնէ ելած ըլլալը հասկնանք։

Ամառկանի տեղ կնիկ...

Ա՛ս ալ կարգացինք լրագրաց մէջ. բայց ոչ հավատացինք, ոչ ալ չհավատացինք։

Չհավատացինք, որովհետև եթե բոլոր Թյուրք զորաց պուլղարի կնիկ տրվեր ամառկանի տեղ, Պուլղարիո բոլոր աղջիկները չպիտի բավեին ատոնց ամառկաննները վճարելու կարող գումար մը գոյացնելու։ Հավատացինք, որովհետև Երուսաղեմի մէջ Թյուրք զորականի մը քով պուլղար աղջիկ մը գտնվեր է։

Ա՛ս ալ ապեկ մը հասկնալու համար, սպասելու է[291]։

1876

Վերջապես զինադադարը այս օրերս պիտի կնքվի։

Շատ կը փափաքեի սա վեց շաբաթվան զինադադարի մըկըրտութեյան հանդեսին ներկա գտնվիլ։ Ի՞նչպես պիտի կնքեն արդյոք այս երախան. երախան ինչ պիտի պահանջե. տղան պաղ ջուրի մէջ պիտի ընկղմեն, թե տաք։ Անհավասիկ ատոնք կուզեի գիտնալ։

Բայց ամենեն հավանականը սա կերևի ինձի, որ Ռուսիան երախան գիրկը պիտի առնե և երբ կնքող քահանան հարցունե իրեն, թե՝

— Երախան ինչ կուզե։

— Չերսեք, Պոսնա և Պուլղարիա, պիտի պատասխանե կընքահայրը։

— Ասա ինչ ըսել է. երախա ըսածդ հավատաք, հույս և սեր ուզելու է։

— Մեր երախան ատանկ բաներ չուզեր։

— Զարմանալի բան... երախային անունը ինչ է։

— Զինադադար։

Այս պատասխանին վրա մկրտիչ քահանան երախան կընքեքահոը գլխին պիտի առնե, տաք ջուրին մեջ պիտի խոթե ու աղան պիտի խաշե։ Այս գործողությունն ընելեն ետքը, կնքահոր պիտի դառնա ու ըսե.

— Այս երախան խաչեցավ. հիմա պետք է, որ ուրիշ երախա մը կնքենք։

Ասոր ինչ պիտի պատասխանեն կնքահայրը։

Ասա չգիտեմ, բայց սա գիտեմ, թե մինչև որ կնքահայրը չփոխվի շինք շնորհք կնունք մը տեսնալիք չունինք։

Հարցունելը ամոթ չըլլա, եթե մեկը հունաց թագավորը պնտռելու ըլլա՝ ուր կը գտնա։

Հազիվ թե հեռագիր մը կուգա և անոր այսինչ քաղաքը հասնիլը կը ծանուցանեն, հասեն ուրիշ մը կուգա և այդ քաղաքեն մեկնիլը կիմացունեն։ Տեղ մը չնստիր կը հասնի, ձիեն վար կիջնա, սուրճ մը կը խմե. ձիերը պատրաստեցեք կըսե. ու կիլա կերթա։

Սըդյոք, կըսեք, իր չեղոքությունը լեռներու, դաշտերու ու ձորերու հաղորդելու համար է, որ տեղ մը չկրնար նստիլ ու այսպես կը թափառի։ Ո՛վ գիտե, անպատճառ բան մը կա, բայց չհասկցիր։

Հիմա ուր կը գտնվի։

Ժամ մը առաջ Պրինսիպոի եկած էր, հիմա ուր գտնվիլը չգիտեմ։

Ինդամ կուտես, զվարճանալ կուզես... այս օրերս հայ խմբագիրներուն վիճակը ատանկ քննե։

Տրապիզոնի խազրխը այնչափ վախցուց դիրենք, որ խազրխի խոսքը լսելնուն պես՝ փախչող փախչողի կըլլան կոր։ Եթե

Չես հավատար՝ օր մը ձեռքդ չինծու նամակ մը բռնելով խմբագրի մը սենյակը մտնես ու ըսես.

— Խմբագիր էֆենդի, ձեզի ազաչանք մը ունիմ։

— Հրամմեցեք։

— Տրապիզոնեն նամակ մը ունիմ, կը հրատարակեք։

— Տրապիզոնեն նամակ մի... նամակ մի... խազըխ մի... հիմա քեզի գպտիեի կուտամ իբրև մարդասպան... դուրս ելիր, պե մարդ, վիս մեղսնելու եկար։

— Ներեցեք, մենք ինչ ըսինք որ։

— Սակից ավելի ինչ պիտի ըսեիր... չըսած խոսքդ չճնաց... ոճրագործ... չգիտես որ այդ բառերը մեր ջիգերուն կը դպչին։ հրամմեցեք, դուս բռնեց, տեսաը հիմա։ Ծո, ով կա դուրսը, շուտ ըրե՛ք, սրկից լիմոնաթտա մը բերեք...

— Ներեցեք, էֆենտի, ես չէի գիտեր կոր։

— Դուք ալ ներեցեք, էֆենտի, ասանկ կատակ չըլլար, ամեն բանին ճանըան կա։

— Ներեցեք, ճնաք բարով։

— Երթաք բարով։

Թերևս հարցուներես, թե ինչո՞ւ համար ասանկ կը վախնան կոր։ Որովհետև կըսվի Թե, կըսե Մասիս, Արարատ ու Մեծ-Մուայի խմբագիրները Թևվերնին եռևնին կապված տարվեր են ոստիկանութեան դուռը։

— Մ'իմե...

— Սըսթ... մաղը ծակ է։

Ավատրիա՝ Բլեքի նավահանգիստը մեզի գոցելեն ետքը հիմա նորեն բանալու մտաք ունի երեւր։

Ինչո՞ւ գոցեց, ինչո՞ւ պիտի բանա։

Երբ որ մենք իրեն կաղաչեինք ու կըսեինք. «Բաց մեզ տեր, դուռն ազոյմութեյան, որ ողբալով կարդամք առ քեզ» ինքը դրան եռևեն անտարբերութեյամբ կը պատասխաներ. «Ոչ ճանաչեմ զձեզ... զի այս դուռն տյատն է և արդարք մտանեն ընդ սա»[292]).

Մենք ալ այս պատասխանին վրա ճանըանիս փոխեցինք։

Հիմա Ավստրիա ելեր մեր եռևեն մեզի կը կանչե ու կը պռոտա։

— Եկայք, օրհնյալք Հոր իմոյ։

Ինչի՞ տանք այս փոփոխութիւնը. արդյոք Ավստրիո շահերը այն տեն գոր ու հիմա բան կը պահանջեն կոր, եթե այդպես է՝ Ավստրիո շահերը շատ փոփոխամիտ են եղեր։

Ծեներալ Իվնաթիեֆի լեզվին վրա ինչ գաղափար ունիքդ անուշ է, թթու է, կաթճ է, երկար է։

Նոռ[293]) լրագրերը կըսե, որ շատ բարեխառն ու անուշ է։

Ուլթիմաթումի բնավ հանգամանք չունի եղեր. մանավանդ ապահովապես վեց շաբաթ զինադադարին ու վերջերս բոլոր տերութիւններեն ընդունված ծրագրին ընդունվելուն վրա պիտի պնդեր եղեր։

Բայց, թե որ այդ ծրագիրը չընդունվի՝ Իվնաթիեֆի լեզուն այն տեն ինչ հանգամանք պիտի ունենա։

Այն տեն Ռուսիա և Թուրքիա դեմ առ դեմ պիտի գան եղեր. բայց Իվնաթիեֆի լեզուն այն տեն ալ ուլթիմաթումի հանգամանք չպիտի ունենա։

Լեզուն սիրեմ[294]);

1876

Ոավընիդ պագնեմ, պատերազմի խոսք մի ընեք. ծայրը ամենուս ալ պիտի դպչի։

— Ի՞նչ եղեր է։

— Ինչ պիտի ըլլա. նյու Յորքեն եկած հեռագիրը չկարդացիր. տես ինչ կըսե կոր.

«Եվրոպացին եկած այն լուրերը, որք մոտալուտ պատերազմ մը կը ծանուցանեին, հոս մեծ հուզում պատճառեցին։ Նյու Յորքի մեջ շատ վաճառականներ սնանկացան»։

Հասկցաք հիմա, մարդոց գործը կարգին է եղեր, բայց պատերազմի լուրի մը վրա վախցեր ու սնանկացեր են։

Տեր ասաված, ինչ օրերու հասանք, վախեն դիտեինք, որ մարդուս արյունը կավըվի, լեղին կը բրդի, կամ սրբանց կըլլա բայց բնավ լսած չունեինք, որ վախեն մարդ սնանկանա։

Իրավ կը զարմանամ, որ ինչպես Ռասգեղի շոգենավները մինչև այսօր չեն սնանկացեր։

Եթե Հունաստանը չըլլար՝ ինչ պիտի ըլլար Թուրքիո վիճակը, աստված իմ։

Հունաստանը չէ՞, որ Հեղոքութիւն պահելով՝ ապստամբութիւնը սահմանափակեց։

Մենք այնպիսի դիրք մը բռնեցինք, որ՝ կըսեն Հելլենք, ընդհանուր խռովութեան առաջքն առինք։

Ոչ ըլլաք, շնորհակալ ենք, մենք ալ ձեզի բան մը բաց չունինք ա։

Ի՞նչ պիտի ըլլար աշխարհին վիճակը, կըսեն, եթե Հելլենք չըլլայինք։

Ի՞նչ պիտի ըլլար... ի՞նչ պիտի ըլլար... դողութիւններըը պակաս պիտի ըլլային Ղալաթիայեն։

Հերիք, ալ այս լռազրաց խոսքին ականջ կախելու չէ։

Երկու երեք ամիսե ի վեր անանկ լուրեր կուտան, զորս մարդ կարդալով՝ բարկութիւն կզգա։

Այն օրը, որ Ռուսիո կայսրը խաղաղասեր կըլլա՝ կայսրուհին պատերազմ կուզե. կայսրուհին կը համոզվի, կայսրորդին ոաք կելլա, կայսրորդին խաղաղասեր կըլլա՝ Կորչաքոֆը չհավանիր, Կորչաքոֆը կը զիջանի ժողովուրդը ոաք կելլա, ժողովուրդը կը նսաի, Միլանը կը ցասկե, Միլանը կը հաճոզինք, անդրեին Զեղնայիքը կը փրփրի։

Եթե այս ամենը հշմարիտ են, կառավարութիւնք Թուրքիան ապստամբաց հետ համաձայնեցնելե առաջ սա վերջիննեբուն մեջ համաձայնութիւն մը գոյացնելու աշխատելու են, որ խաղաղութիւնը քիչ մը հավանական երևնա։

Սակ մեր խոնարհ կարծիքն է, կառավարութիւնք զարձյալ ազատ են ուզածնին ընելու. չենք ուզեր. որ վերջնեն ելնեն բանին, թե Թատրոնը ճնշում բանեցուց կառավարութեանց վրա...

Թուրքո—Սերվիական պատերազմը Ռումանիո գործին շատ աղեկ եկավ։

Շոդեկառքերը անդադար կը բանին. ռուս զինվորները հա-

կառավարիչ իշխանին կամաց, կուգան, կերթան, իշխանը քսակը կը դիրցունէ և երբեմն ոսկինները խառնելով կը պառա.

— Ինչո՞ւ Քող կուտաք, որ ուուս գինվորները անցնին, չգիտե՛ք, որ ասիկա մեր չհպազբութեան կը վնասե։

— Վնաս չունի իշխան, բավական է, որ գանձուն չվնասե։

— Ան ալ կա յա, աշխատեցեք, որ միշտ իմ կամացս հակառակ անցնին զորքերը։

— Շատ աղե՛կ ասեր, դուք անհոգ եղի՛ք։

Աղեկ չհպազբութեան...

Թայմըզ քանի մը տեղեն ի վեր Պիզմարքը իշխանին տաքն է ինկեր, կաղաչէ, որ մի ջամուռութեան մը ընե։

— Դուք գործին մէջ մտնաք նե՝ կըսե Թայմըզ, խազազութեան կըլլա, խըյանեք։

— Ինչ կուտաք ինձի, գործին միջամտելու համար, կը հարցունէ իշխանը։

Այս խոսքերն կը հայտնվի, որ եթե Պիզմարք իշխանին հարյուրին տասը ֆոմիխոն մը տանք, պիտի բարեհաճի գործին մէջ մտնալու։

Մեր վաստակն ինչ է, որ ելնենք ֆոմիխոն ալ տանք[295]։

1876

Անիծյալ ըլլան, նզովյալ ըլլան, թե՛ անիծյալ և թե՛ նզովյալ ըլլան այն քառասունը չորս ժամերը, զորս ասկից երկու օր առաջ անցուցինք։

Ինչ մտատանջութեան, ինչ տագնապ...

Ամեն մարդ գործը երեսի վրա ձգած՝ ձեռքը ժամացույցի մը բռնած վրան կը նայի ու կը նայի։

— Եղբայր, սա ժամացույցդ ծոցդ դիր քիչ մը խոսինք քաղաքականութեան վրա ինչ կըսեն, ինչ կը լսես։

— Ինչ որ ըսեմ ու լսեմ՝ սուտ է. ամեն բան քառասունը ութը ժամեն հայտնի պիտի ըլլա։

— Գանի՞ ժամ մնաց տակավին։

— Երեսունը ութը անցալ՝ տասը ժամ մնաց։

Մենք մէկ գրիչներս լզեցինք, ժամացոյցիս հանեցինք ու ակսանք ժամերը համրել։ Դէհ չէ, ըսինք, երբ որ մեկը թիֆտւսի բոնվի օրերը կը համրեն, մենք ալ բոլիքիֆայի համար ժամերը կը համրենք։

Այս թշվառական ժամերն ալ, գիտե՞ք ինչ խոսք չհատկցող բաներ են. եթէ ըսես՝ շուտ քալեցեք, կամաց կերթան, եթէ ըսես՝ կամաց քալեցե՛ք, կը վազեն։ Երանի այն թշվառաց, որոնց ժամացուցիները առաջ կերթան։

Հայտնի է, որ տաղնապի մէջ ժամերը շատ կամաց կերթան։ Ժամացոյցս կը գոցեմ, կը բանամ, ժամերը կը համրեմ, կը հաշվեմ, կը դուարեմ, կը բաղմապատկեմ. ի զուր։ տասը ժամը չանցնիր։ Ալեքսինաչ ու Տելիկրատ կառնվին, պինդապարը կընդունվի, տասը ժամը չանցնիր... վերջապես կը բարկանամ, դայրանալու որշում կուտամ, ժամացոյցս կոտրելու կելլամ, բայց եաքեն մեծ կըլլա զարմանքս երբ կը տեսնեմ, որ կը տեսնեմ, որ...

— Ի՞նչ։

— Ժամացոյցս առջի գիշերվընե մոռցեր եմ եղեր լարելու, ան ալ կայներ է։

Մ'րդ, իմ ժամացոյցիս հաշվովը այդ քառասունը չորս ժամերը անցած չեն տակավին։

Ավսարիո համար բան մը պիտի ըսեի, մոռցա. այս երկու երեք օրե ի վեր որո՞ւ պղուիը խելք մնաց որ։

Չե, միաքս եկավ։

Լրագրաց մէջ կը կարդանք, որ Ավսարիո մէջ մեծ ժաս մը կա, որ մեզի համար զինվելու պատրաստ է եղեր. մեծ մաս մ'ալ կա, որ ալավաց համար կռվելու պատրաստ է եղեր։

Ադեկ. բայց Ավսարիո համար ո՞վ պիտի զինվի, եթե հարկ ըլլա։

Աստր խոսքը չկա։

Գեսցե Ավսարիո տերությունը, ինքզինքը ճնշվես սիրցուցեր է իր ժողովրդյան, որ բացի յուր կառավարութենե ուրիշ ամեն կառավարությանց օգնելու կը պատրաստվի կոր։

Կառավը մեկի. այս խեղճը շվարեր մնացեր է։ Անցյալ շաբթու գիւղի դուռը բանալու, գոցելու զբաղած էր, այս շաբթու

ալ Իտալիո լրագիրները իր երկրին մեջ չմոցնելու պրպտած է։ Տեսնենք գալ շաբթու ինչ պիտի ընեն։

Մտածես դեսպանաժողով մը պիտի ըլլա ու այս դեսպանաժողովին մեջ պիտի առաջարկվի եղերը, որ Ռումանիա թագավորություն ճանչցվի։

Ի՞նչ հարկ կա առաջարկելու. ուղղակի Զեփնայեֆին գրեցու է՝ հապա մը ուզելու է. քովը չկա նե՝ հիմակուհիմա Միլանիկը թող առնե, ասղին գրկե։

Զեփնայեֆ բան, մեծ մեծ ֆարդելը միտքս ինկավ։ Ա՛ս չէ՞ր, որ կըսեր, թե Պոլիս սիկարա պիտի խմեմ։

ՀԱՆԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԳՐԱՑ

Ինչպես հայտնի է, Մեհեմուայի Հավատիս ու Հայրենիք լրագրաց խմբագիրները չորեքշաբթի ավուր շոգենավով և Դրան հրամանով Տրապիզոն ուղեվորեցան առուզելու համար Տրապիզոնի գյուղերեն մեկուն մեջ պատահած խազգխի դեպքը, զոր իբրենց լրագրաց մեջ հրատարակած էին։

Ե և եթե առնց տված լուրը առա էր էր... էր... էր... աա ա արդեն... իրենց... խա՜խա խափանմամբը...

Ինչման պետք խմեն...[296]։

1876

ԵԿՈ՛Ի, ՍԱ ՍԻԿԱՌԱՍ ՎԱՌԵՄ

Դաշնադրություն դաշնադրությանց վրա։

Անցյալներեը մարդ մը մեկնուն բանը երկու հոգվի մեկեն ծախած էր, երկուքեն ալ սատկ առած էր։ Երբ այս դեպքը իմացանք, բավ կան լնդացինք։

Հիմա ալ կընանք լնդալ տեղի ունեցած, կամ ունենալիք դաշնադրությանց վրա։

Գերմանական լրագիրները կառաջարկեն պիղմարք իշխա-

նին, որ դաշնագրություն մը կնքե Անգլիո ու Ավստրիո տերությանց հետ։

Սակայն, Գերմանիա ասկից առաջ Ռուսիո հետ դաշնագրություն կնքած էր. Ավստրիա ըսես նե՝ տերություն չմնաց, որու հետ դաշնագրություն ըրած չըլլա. մանավանդ վերջին դաշնագրությունը կնքած միջոցին այնչափ ալ պատվեցավ մարդը և հիմա ինչպես եղնե Անգլիո հետ ալ պատավի։

Ինչնե գիտնա, որ Գերմանիո հետ պատաված միջոցին գինքը չպիտի խածնեն։

Համբույրը խաղալիք չէ. բերնեն ելածը գիտնալու է մարդ։

Կըսեի, ըսի, կըսեմ և պիտի ըսեմ, ամեն մարդ իր շահը կը նայի։

— Սակայն ըսիր, Պալսկաստանի Շահը ինչ կը նայի։

Ամիկա խելոք նստած է, միտքը բան չգգենք։

Այո, ամեն մարդ իր շահը կը նայի։

Անցյալ օր, մայրաքաղաքիս դեսպանները զարձյալ ժողով ըրին։ Ի՞նչ խոսեցան դեսպանները՝ հայտնի է. յուրաքանչյուրն յոր շահուն վրա խոսեցավ։ Ո՞ր դեսպանն ելավ ըսավ թե՝ միջոց մը խորհինք, որ Թատրոնը ամեն օր կարենա հրատարակվիլ, թե անոր բաժանորդներեն ոմանք ընկալագիրը ընդունած առեններին բաժանորդագինը վճարեն, թե Թատրոնը տասը հազար օրինակ տպվի, թե՝ անոր գրասենյակը ավելի մեծնա և այլն և այլն. և ոչ մեկը, այլ ամեն մեկը իր շահուն վրա խոսեցավ։

Թանի որ այս այսպես է, աս տարիներու մեջ ուրիշներեն օգուտ սպասելը պարապ բան է։ Հիմակվան շահերը չեն ներեր եղեր ուրիշներու շահերը պաշտպանել։ Եվ ասիկա շատ ճշմարիտ է. միթե Թատրոնը ուրիշներու շահերը պաշտպանելուն համար չէ՞, որ աստանկ անշահ միացեր է[297]։

1876

Ո՞վ ռվ ռվ...
Թըք, Թըք, Թըք...
— Ո՞վ է ան։

Թըք, թըք, թըք…

— *Ո՞վ ես դուն։*

Թըք, թըք, թըք…

— *Թըք, թըք, հասկցանք. ով կըսեն քեզի։*

— *Էդո խմե, օ քիրխոս Ռումոնատուրոս էլենոս, մինխաթրոս Ղեորղիոս վասիլեոս…*[298])

— *Թշվառական, ոս վերջավորութեամբ բառ չէ թողուցեր, առեր եկեր ես։*

Թըք, թըք, թըք…

— *Ի՞նչ կուզես, է քիրխոս Ռումոնատուրոս էլենոս մինխաթրոս Ղեորղիոս վասիլեոս, ըսե՛, ինչ կուզես։*

— *Տեն գնորիդո Ամենիքա*[299])։

Թըք, թըք, թըք…

— *Երկար ըրիր, ով քիրխոս Ռումոնատուրոս և այլն։ Ի՞նչ կուզես, ըսե՛, որ բանամ։*

— *Բե՛ մի ըմանքա*[300])։

— *Ի՞նչ ըսիր։*

— *Թի՛ լես*[301])։

— *Որին տունը կը հարցնես։*

— *Տեն քաթալամվանու էդո էհո էքաթո իքուսի հիլիատես պահնասի զորքոս, բենինտա հիլիատես քրտնատայն քառանտա տարեկանոս, քրտնատա հիլիատես քառանտայն բենինտա տարեկանոս գումարտոս 200000 հոգիոս*[302])։

— *Կեցցե՛ս, օ քիրխոս Ռումոնատուրոս էլենոս մինխաթրոս Ղեորղիոս վասիլեոս։*

Հասկցաք ընթերցող, Հունաստանը 200000 զորք ունի եղեր… զորաց թիվը բնակչաց թիվին ավելի է… իբր մեկ ու կես միլիոնե ալ պակաս բնակիչե 2000՜0՜0՜ զորք։ Շատ աղեկ, բայց թե որ թշնամիդ ալ այս հաշվով զորք հանե՝ ինչ կըլլա վիճակդ, ով օ քիրխոս Ռումոնատուրոս, չըլլա՝ որ խաբվիք, չըլլա, որ Մեծան իշխանին թվաբանութեամբ համրած ըլլաս զորքերդ։

Փոխե՛, օ՛հ փոխե՛, կամ թվաբանութեանդ, կամ ընթացքդ ով օ քիրխոս Ռումոնա. մնացածը հաչորդ թերթով։

Իրավունք չունիմ այսպես խոսելու, այս մասին ձեր կարծիքը ինչ է, ով բրենս Շարլը Հոհենցոլերն[303])։

Դուք ալ ուրիշին խոսքերուն հավատալով՝ միտք ունիք եղեր չեզոքությունն այս օրերս ճանաչելու։ Ի՞նչ չարիք տեսաք չեզոքութենեն, ի՞նչ բարիք պիտի տեսնաք ներգործութենեն։

Իմացա, որ շատ մը զինքեր գնած եք. սակայն չկրցի ազեկ մը հասկնալ, թե պզտիկ շահով մը զանոնք ծախելու համար առիք, թե որսորդության համար, չեզոքությունը պահելու, թե վռնտելու համար։

Իմ փափաքս այն է, որ ինչպես որ Տյուք Տըգազն[804]) ալ կըսե, չեզոքությունը ազվոր մը պահեք, ինչու որ, Հոհենցոլերնիկս, դուք ժամանդակ բայ մ՚եք և ժամանդակ բայերը միշտ մյուս բայերուն օգնության կերթան, անոնց եղանակները և ժամանակները կը շինեն, անոնց գործը կը լմնցունեն և իրենք բան մը չեն շահիր։

Ռուսիո պանձային պաշտոնյան պատերազմի հրաման չտար եղեր։

Ահավասիկ անտուկ մը՝ որ Ռուսիո կառավարութենեն ավելի խաղաղասեր է։

Բայց անտուկը ի՞նչպես պիտի գոհացնե պատերազմ ուզող կուսակցությունը։

Առջի բերան պիտի հոյզորսե և երբ չհաջողի համոզել, հրաժարականը պիտի տա և յուր տեղը պիտի նստեցնե իր պզտիկ անտուկը...

Ո՛վ անտուկդ հաշտասեր, ով հրեշտակ խաղաղության, ուրախ եմ, վերջապես տեսնելով Ռուսիո մեջ բան մը, որ թուրքիո մեջ գտնված բանի մը հետ համամիտ, եղբայր ու ձեռք ձեռքի տված է։

Շուտ ըրե՛ք, պատվիրե՛ք իրարու հետ, ով անտուկներ, եթե խաղաղությունն տեսնենք՝ ձեր երեսին պիտի տեսնենք։

Ո՛վ, ով, ով... մինչև վերջը այսպե՞ս պիտի երթանք այսօր ով թատրոն։

Ի՞նչ ընեմ, ով ընթերցող. երբ միտքը անանկ կը պահանջե, գրիչը պարտավոր է կատարել։

Հայրենիք ու Մեծմայր Հավատիս լրագրաց խմբագիրները հոս են, թե գնացին։

Հայերեն գացած են, բայց ֆրանսերեն հոս են։

Ատ ինչ է։

Ինչ պիտի ըլլա, հայերեն լրագիրք գացին կըսեն, ֆրանսերեն լրագիրք հոս են կըսեն։

Դուք ըսեք մեղի, ով Մարգարյան և Մելիքյան[305]) էֆենտիներ, հոս եք, թե գացած եք, եթե հոս եք՝ ինչու՞ չեք երթար, եթե գացած եք՝ ինչո՞ւ չեք գար։

Բրենս Պիսմարքին քաղաքականության ինչ ըլլալը իմացած։

Այս մարդը խաղաղությունը ապահովելու պիտի աշխատի ևղեր, եթե Ռուսիա Թուրքիո դեմ պատերազմ հրատարակե՝ այս իշխանը թող չպիտի տա ևղեր, որ մյուս տերություններ միջամտեն։

Ըսել է, որ եթե մյուս տերություններ Ռուսիան Թուրքիո հետ հաշտեցնելու համար ալ միջամտություն ընել ուզեն՝ Պիսմարքը թող չպիտի տա, որպեսզի խաղաղությունը չվրդովի։

Շնորհակալ ենք[306])։

1876

Մեծ ավետիս հունաց թագավորը վհատողներուն ու չգըտնողներուն...

Երկար ճանըրդուեցինք մը եաքը Գեորգ թագավորը. վերջապես Աթենք հասավ, վազելով պալատը գնաց, պատըշգամը ելավ և թաշկինակովը ճակտին քրտինքը սրբելով՝ ժողովրդյան դարձավ ու ըսավ.

«Հու յսերնիդ ապուռծո վրա դրեք, որ ձեր խնդիրքը պիտի կատարե»։

Այս վճռաղական պատասխանեն ինչ կը գուշակեք։

Ես այնպես կը գուշակեմ, որ թագավորը ապուռծո հետ Հունաստանի դործերուն վրա խորհրդակցելեն եաքը, անոր հետ դաշնադրություն մը ըրած է սա պայմանավ, որ եթե խնդիրքը չը կատարե՝ բարեհաճի վճարել իր ճանըրդուեցյան ծախքը։ Ան-

պատճառ այս ընթացքը բռնած ըլլալու է, ինչու որ Գևորգ Թաղավորը դիտեր անշուշտ, որ Զևրնայեֆի սանն ալ քանի մը ամիս առաջ իրեն պես ըսած էր, բայց վերջին, չդիտենք ինչ պատճառով, աստված չկատարեց անոր խնդիրքը։

Կը զարմանամ և կուզեմ որ դուք ալ զարմանաք, թե ինչպես կը հանդիպին այս մարդիկ ժողովրդյան առջև իրենց գործակից ներկայացնել զաւակած, որ քաղաքական գործերուն մեջ միշտ չեզոքութեան պահած է և կը պահե...

Այս օրերս ամեն տեղ գեսպանաժողովի մը խոսք կըլլա։

Մին գեսպանաժողովին համար հարմար քաղաք մը կը փնտռեն ճիշտ այնպես, ինչպես որ դուն տուն մը կը փնտռես ու կը նայես, որ թե աժան ըլլա, թե հարմար, թե օդասուն և թե՛ թե ծովահայաց։

Ուրիշ մը գեսպանաժողովին անունը լսելուն պես, Բալքան[307] պես ցտեսիլ կսկսի. այդ անունը իր ջղերուն կը դպչի։

Երրորդ մը կընդունի գեսպանաժողովը՝ բայց թեռւթյամբ մը։

Չորրորդ մը ոչ կընդունի, ոչ չընդունիր։

Իսկ ճապացոնները թուղթին կը մրոտեն, կը դրեն, կավրեն ու ծրագիր կը պատրաստեն այս գեսպանաժողովին՝ որուն ըլլալիքը, կամ ոչ ըլլալիքը դեռ հայտնված չէ։

Ահա այս ըլլալիք գեսպանաժողովին մեջ համաձայնություն մը պիտի գոյանա ու խաղաղությունը պիտի թագավորե երեր։

Նախ և առաջ խաղաղությունը պիտի վախնա այդ գեսպանաժողովին մեջ մտնելու...

Այս Ֆրանսան ալ մեր մորուքին կը խնդա, ինչ կընե։

Փարիզեն եկած հեռագիր մը կը հռւսա երեր, որ դիվանագիտությունը պիտի հաշտի Ռուսիո և Թուրքիո մեջ համաձայնություն մը գոյացնել։

Շնորհակալություններս կը հայտնենք այդ դիվանագիտության, որ տարին մ՚ի վեր միշտ նույն խոսքերը կրկնելով Ռուսիո և Թուրքիո մեջ անհամաձայնություն գոյացուց։

Զորս միլիոն չորս հարյուր հազար ֆրանք...

Գործը սաոր Միաց. այս գումարը ճանկլուռն պիտի պատերազմական պատրաստութիւնները պիտի ամբողջացնեն եղնէ Ռումանիոյ պատերազմական գործոց պաշտօնեայներ։

Ազգ. ժողովը մանաւանդ մը կազմեր է, որ չորս թվանշանով սկսող այս գումարին վրայոք վիճաբանի։

Կերևի, որ Ռումանիոյ անտուէին ալ խաղաղասեր է ու պատերազմ չուզեր։

Ամատիայեին արևելյան խնդրույն վրայոք խոսք մի բանար ու ինչ կուզես ըրիր։

Վենիզելոսեն եկած հեռագիր մը կըսեր, որ Ազգային ժողովը արևելյան գործոց վրայոք բացված վիճաբանութիւնը վերջացուց։

Տես, այնչափ վախցեր է, որ Ազգային ժողովույն մեջ անգամ չուզեր այս խնդրույն վրա խոսվիլը։

Սա մեր ժողովուրդն ալ շատ հետաքրքիր է։

Քանի մը օր առաջ կը հարցուներ. Ժենեռալ Իգնաթիեֆը ինչո՞ւ եկավ։ Այսօր ալ կը հարցունե. մայրաքաղաքիս Գաղղիական դեսպանը ինչո՞ւ գնաց։

Դեսպաններն ալ չվարեցան Միացին. գան, թե երթան։

Ինչ որ ալ ըլլա՝ մեր ընթերցողները գոհացնելու համար Գաղղիո դեսպանին երթալուն վրայոք քանի մը տեղեկութիւններ տալ պարտք կը համարենք։

Ոմանք կըսեն, թե հոս տեղի ունեցածիք դեսպանաժողովին ներկա չգտնվելու համար գնաց. ոմանք ալ կըսեն, թե միտքը գրով տեղ չկրնալ հաղորդելուն համար բերանացի խոսելու համար գնաց. ըսողներ ալ կան, թե ինչ բանի համար գացած ըլլալը հայտնի չըլլալուն համար գնաց։

Ըստ մեզ ամենեն հավանականը վերջինն է[308]։

1876

Օր մը Լորտ Պիքոնսֆիլտ[309]) տան մը մեջ նստելե ձանձ-

բացած դաշտը ելավ քիչ մը պտըտելու։ Դաշտի մեջ ասդին նա-
դին բավական ժուռ գալեն հոգը լերան մը ստորոտը գնաց, քիչ
մը քրխտոնեից վիճակին բարվոքմանը վրա խորհելու։ Նստելով
հոն, գլխարկը հանեց, թաշկինակովը ճակտին քրտինքը սրբեց,
սիկառ մը շինեց և սկսավ քաշել։ Սիկառը լմցնելեն հոգը քթա-
խոտի տուփը ծոցին հանեց և քթին ծակերը քթախոտով այն-
չափ պարունակորեց, որ սկսավ փռնգտալ։

— Հեսիշու։

— Շու, պատասխանեց արձագանքը։

— Հեսիշու ու ու ու...

— Ու ու ու, կրկնեց լեռը։

— Ո՞վ ես դուն։

— Դուն։

— Թշմառակին։

— Ակին։

— Կը ծաղրե՞ս կոր գիս։

— Կոր գիս։

— Աներամ։

— Իրամ։

— Բռնավոր։

— Ո լ։

— Գաճան։

— Ճան։

— Ա՛րջ։

— Ա՛րջ։

— Երկար ըրիր, գիտե՞ս։

— Տե՞ս։

— Թող չպիտի տաս, որ քրիստոնեից վրա քիչ մը խորհի՛մ։

— Հիմ։

— Մինչև վերջը իմ դատս պիտի պաշտպանեմ։

— Պաշտպանեմ։

— Եթե հարկ ըլլա պիտի պատերազմիմ։

— Եթե հարկ ըլլա, պիտի պատերազմիմ։

— Արդարութեան համար։

— Շահուդ համար, պատասխանեց արձագանքը, կարծես Պի-
քոնաֆիլտի խոսքը ոգեկ մը չհասկնալով։

— Շահճեա համար։

— Համառ։

— Շահուդ համար դուն կը պատերազմիս։

— Բազմիս։

— Էհեհե, էհեհե...

— Էհեհե, էհեհե...

Լորա Պիքոնսֆիլտը նկատելով, որ սարսափելի ընդհիմանքան մը հանդիպեցավ, գլխարկը գլուխը դնելուն պես, շիտակ քաղուհվուշն գնաց։

— Թագուհի։

— Ի՞նչ կա։

— Հոս, լերան մը եռևը պահված մարդ մը կա, պիս ծաղրից և Թող չտալ, որ քրիստոնեից վիճակին բարվոքմանը վրա քիչ մը սահանայութիւնները խորհիմ։

— Ի՞նչ ըլավ։

— Ի՞նչ պիտի ընես, բոլոր ըրած խոսքերս ինձի դարձուց։

— Ի՞նչ խոսքեր էին անոնք։

— Զըսվելիք խոսքեր, Թագուհի, չըսվելիք խոսքեր։ Այնպես որ լոռա կլատրաթիւնը հոն չէր, եթե հոն ըլլար՝ ուրախութիւնն վը պատեր և վերջնն ով կընար անոր բերանը բռնել։

— Եթե այդպես է, առաջ դուն անոր դեղ խոսքեր ըսելու չէիր, որ ան ալ քեզի չըսեր։ Զը գիտեիր, թե այս աշխարհիս մեջ ինչ որ ըսես՝ նուէրը կը լսես, ինչ որ կընես նուէրը կընէն քեզի։

Սա Անտրասի[310]*) կոմսին բոլոր քաղաքականութիւնը դէպի նապոլեոնեան վրա կը կայանա կարծես։*

Այս մարդը մեջքին քանի մը բանալի կախած՝ Բլեքի նահանգիսին դրան առջև սիթոռ դրած՝ վրան կը նստի ու դուռը բաց եղած աեռնը գոցելով՝ գոց եղած աեռնը բանալով, Ամսարիս շահերը կը պաշտպանեն։

Միւս քաղաքագետները իրաց վիճակը ծանր տեսնելուն պես կամ պինդ բանակական պատրաստութեանց կը դիմեն, կամ ընդիմաբանութիւններու և կամ դեսպանաժողովներու, մեր քաղաքագետը ինքզինքը վատգի մեջ տեսնելուն պես՝ յուր բանալիներուն կը դիմե, որոնցմե մեր դռնապան քաղաքագետը ավելի օգուտ կը քաղե՝ քան թե ուրիշ մը յուր ընդիմաբանութիւններեն։

Նուվել Բրեսլ[311]*) իր մեկ հոդվածին մեջ կըսե, որ եթե*

Կոմս Անտրասին հաջողի Ռուսիո ազդեցութենեն փրկել Ավստրիո քաղաքականութիւնը՝ բոլոր Ավստրիո ժողովրդյան սիրելի պիտի ըլլա։

Ա՛ս հայտարարութեան վրա շատ հավանական է, որ մեր կոմսը քանի մը նոր բանալինելու շինութեանը հրաման տված ըլլա, որպեսզի եթե հիմակվանները ավլվին՝ առանց բանալիի չմնա։

Դալով Ավստրիո կայսեր՝ որուն առաջին երևսը Ռուսիա կը պագներ և երկրորդ երևսը Բրուսիա, քանի մը շաբաթեն ի վեր պագված չունի։ Չը մոռնանք ըսելու, որ Նորին Վեհափառութեան քաղաքականութիւնն ալ սիրո մեջ է, համբուրներու վրա կը կայանա։ Նորին Վեհափառութիւնը վերջերս դինքը համբուրողին դաշնակից եղավ, բայց որովհետև սիրո մեջ եղած խոսքերը երաշխավորյալ չեն կրնար համարվիլ, Ն. Վեհափառութիւնն ալ ըրած խոսքերուն մեկն ալ չբռնեց։

Կեցցե՛ն ուրեմն համբույր և բանալի, պաշտպանք Ավստրիո շահուց։

Հունաստանի զինյալ չեղոքութիւնը Ազգային ժողովին մեջ վիճաբանութեան ենթարկվեր է։

Տելի Ղեորղիոս Հունաստանի բռնած ընթացքը քննադատեր է։

Տեսա՛ր ամենեն խելացին։

Պ. Քումունդուրոս Ղեորղիոսին համամիտ դտնվեր է։

Ապրի։

Պ. Քոնթոսթավլոս ալ խաղաղասիրական քաղաքականութիւնը պաշտպանելով՝ պատերազմի պատրաստ դտնվելու պետքը զգացուցեր է։

Ահա բուն Ղեորղիոսը սա է։

Մոմ վառեցի՛ք, մոմ — կազ ալ կրնաք վառել — պատեհ ըսած չպիտի ըլլա... Ավստրիո լրագիրները, որ Չարլ լեզուն մեզմե աղեկ կը հասկնան, մխաբերանն կը պնդեն, թե Ռուսաց կայսեր ըրած հայտարարութիւնը խաղաղասիրական է։

Ահավասիկ հյուսիսի կայսեր խաղաղասիրական խոսքերը.

« ... Օ՜հ, եթե դեսպանաժողովը չհաջողի իմ իղձերս պսակել՝ գիացած եղբ, սուբս պիտի մերկացնեմ և պիտի պատերազմիմ»։

Վեհապետի մը բերնեն ելած չէ երբեք խոսք մը, որ այսչափ խաղաղասիրական ըլլա... Նորին Վեհափառությունը առիթ ավելի հարմար լինչ խոսք կրնար գտնալ յուր խաղաղասիրական ըլլալը հասկցնելու համար։

Փափաքելի էր, որ մյուս տերություններն ալ Նորին Վեհափառության պես խաղաղության հայտարարություններ ընեին, որպեսզի մենք ալ ընելիքնիս գիտնայինք։

Պասիրեթ լրագիրը, որ ժողովուրդն ի զեն հրավիրած ըլլալուն համար խափանյալ էր, վերստին հրատարակվիլ սկսավ։

Այս լրագիրը մեղացը թողության գտնելու համար հանցանքը յուր կրնկին վրա նետելով՝ հետևյալ կերպով մեղա մը խմբագրեր է։

«Ի՛մ ազանի ֆեյֆությունով բան մ՚էր ըրինք»։

Պասիրեթին այս մեղային վրայոք առ այժմ բան մը չենք կրնար գրել, բայց կը խոստանանք թե այս ևթե խազ՚ըխին մասին Մեծ Պահոց մեջ հրկարօրեն խոսիլ[311]։

1876

Ինչպես որ խավարին լույսը կը հաջորդե, փոթորիկին հանդարտությունն, ոսկեին դրամաթուղթ, այնպես ալ կռվին դեսպանաժողով մը հաջորդեց։

Ամեն մարդ օժիտը պատրաստված աղջկան մը պես ձեռք ձեռքի վրա դրած գալիք հյուրերուն կսպասե, որոնց մեկ մասը արդեն ճանբա ելած է, մյուս մասն ալ ելլելու վրա է։

Բարի եկան, հազար բարի...

Գիտեք, այս հյուրերը ինչ ընելու համար պիտի գան հոս. մեր վիճակին բարվոքմանը վրա պիտի խորհրդակցին... Լինչ բարի մարդիկ...

Եթե դեսպանաժողովը կարող էր Քրխատոնեից վիճակը բարվոքելու՝ ինչո՞ւ այսչափ տաեներ ի վեր չգումարեցին, կամ

չբազմապատկեցին զայն ու զմեզ կոտորակի վերածեցին, մանաւանդ տասնորդական կոտորակի...

Ինչ որ է, առ այժմ մեր պարտքն է այս հոյակերտը սիրով ընդունիլ և ազոթել,— ինչպես որ Աւետեան[313]) բաշայինն կարծիքն ալ է,— որ մնչիւրնին համաձայնութիւն մը գոյանա, Զարին իղձերը եթէ չպատկերին՝ գոնէ նշանվին՝— վերջին նշանը ետ ընելը դիւրին է — որպեսզի սա պատերազմի երկյուղը վարատի։

Ազոթենք, ազոթելով ազոթենք՝ որ Հայոց ալ Քրիստոնեա ըլլալը Զարին ականջը դրվի և գործադրվի հոն արդարութիւնը, որ իր բացակայութիւնքը անդուրեշտ պիտի փայլի հոն...

Հրամմեցնեք ուբեմն, լրտեսներ, մարքիզներ, կոմսեր, դերկոմսեր, դուքսեր, արխիդուքսեր, եթէ Պոլիս չեք տեսեր, եկէք դուք ալ տեսէք... ամեն տեսն քրիստոնեից վիճակը տասնիկ չըլլար...

Քրիստոնեից վիճակի բարվոքում կրսեն կերթան, իբր թէ Բելգայի մեծ փողոյին վիճակը քրիստոնեից վիճակեն աւելի բարլար, երբ թէ կղզի ու խաղդող բանող շոգենաշէնքսուն վիճակը քրիստոնեից վիճակեն աւելի ցաւալի չըլլար, իբր թէ հրեից վիճակը նախանձելի բան մ'ըլլար, իբր թէ Փունջին խմբագրին վիճակը Ռուսիո կայսեր ուշադրութիւնը գրաւելու չափ խելոք չըլլար... յուր ծանուցմանը նայելով՝ պանիր հայոյ կապրի եղեր. բայց մանրամասնորեն չէ հայտներ՝ թէ Հոլանտայ՞պանիրսյ, թէ բուլումի։

Աբէ, պետք է, ամենեն առաջ պետք է, որ Փունջին այս վիճակը դեսպանաժողովի մնջ քննութեան ենթարկվի, վրան վճռաբանվի, անոր պատճառները վերցվին, որպեսզի մնջառեղեն վերնա նաև... Փունջը։

Ո՛վ խմբագրութիւն, ուր կերթաս... ով Փունջ, ուսկից կուգաս... եթէ պանիր հայոյ կապրիս՝ ինչո՞ւ հրաժեշտ չես տար այդ տոպարեղին... և չես ընտրեր անանկ տպաւորեղ մը ուր կաբենաս տպրիլ տպուխտ հայոյ։

Խմբագիր մը որ պանիր հայոյ կապրի...

Ճաթելո՞ւ բան... և սակայն չենի(ք) ճաթիր կոր... ըսել կըլլա, թէ ճաթելու հատկութիւն չունիի(ք)։

Քանի որ լրագրաց վրա խոսք բացվեցավ, ասիթին օգուտ քաղելով կը ծանուցանենք, որ Մամուլ[314] զավեշտական թերթը շաբաթը մեկ անգամ իր առջի գիրքով հրատարակվելով՝ մյուս օրերը հայերեն ուսուերով տաճկերեն հրատարակվիլ սկսավ քաղաքական թերթի մը պահանջած գիրքով, լեզվով և լուրերով։ Նուշնակաս Մխոս[315] զավեշտական թերթն ալ լուրջի փոխվելով նոր Դար անվամբ ամեն օր հրատարակվիլ սկսավ Խմբագրութեամբ Օրագրո Խմբագիր Օգսեն Էֆենեան Ծոճասարյանի և բանախոսութեամբ Նուբյանի։ Փունջն ալ ամեն օր հրատարակվիլ սկսավ տասը փարայի։ Մասիսի Բուզամեն արզեն կը շարունակվի։ Այս ամենուն հաջողություն մաղթելով՝ պախալներուն կը ծանուցանենք, որ այս տարի շատ պակիր ծախու առնեն չվճռան վասն զի ձյաս չեն ըներ, քանի որ խմբագրաց ապրուստը պանիր է։

Դուք ալ, ընթերցասեր աղգայինք, երբ տեսնաք որ ասոնցմե մին իր կամաքը դադրած է (թեպետև հիմա չեն թողուր, որ խմբագիր մը իր կամաքը դադրի) դիտցած եղեք, որ պախալներու քով պանիրը հասեր է։

Հունաստանի կառավարությունն ալ ուզեց Բիբիոս մը ղրկել այս դեսպանաժողովին, բայց չհաջողեցավ խեղճ տղան։

— Ես ալ պիտի երթամ, ես ալ պիտի երթամ ըսավ՝ ոտքերը գետին զարնելով։

— Չէ՛ տղաս, դուն նսաե ըսավ Անդղիան։

— Ինչո՞ւ պիտի նստիմ եղեր։

— Հոն երթաս ի՞նչ պիտի ընես, տղաս, պիտի ձանձրանաս ու քնանաս։

— Ինչո՞ւ քնանամ պիտի։

— Հոն գացողները, մեծ մարդիկ են, քեզի հարմար մարդ չկա, որ հետը նստիս, խոսիս ու ժամանակ անցուընես։

— Ես ալ մեկ կողմ կը քաշվիմ, մարիկ կընեմ։

— Անոնք չպիտի խոսին որ... Թուղթի պիտի խազան... Թուղթին ալ չես հասկնար, որ քովիրենին նստիս ու նայիս։

— Ի՞նչ պիտի խազան։

— Զիրար կթելու խազը պիտի խազան։

— Դուն կթես նե՛ ինձի՞ ալ բան մը կուտաս։

— Դուս էղն ըսան ըրիր ա...

— Ինչո՞ւ երկան ընեմ պիտի, ամենն ալ սա խաղեն քանմը վրցունել կը նային կոր, ինձի ծնկակապ մը տվին, ոտքս կապեցին։

— Է, է՛, խելոք նստիս նե՝ ծնկակապ մ՚ալ առնեմ կուտամ ես քեզի...

— Ի՜նչ դժբաղդութիւն է, որ մեր քաղաքականութիւնը մեր ծունկին վեր չելավ գնաց։

— Դուն իմ խոսքս մտիկ ըրե ու...

— Կը խնդրեմ ծունկի վեր մի ելլար, կըսե անշուշտ մըտքին, թագուհվույն հակառակորդը։

Ռուսիո գանձային պաշտոնյան ալ թուքակիվ պես երկու խոսք է սորվեր միշտ կը կրկնե։

Ինչ են այդ խոսքերը։

Ահավասիկ։

— Ջաբ, գանձը հրաման չտար կոր պատերազմ ընելու, կովուն հետևանքը վնասակար պիտի ըլլա։

Հասկցանք, խմացանք, գանձը հրաման չտա՞ր կոր պատերազմ ընելու. շատ ադեկ, գանձը կայսր հրաժարակեցե՛ք սա գոլծերն ալ լմննան երթան։

Ա՛ս չը՞կրնար ըլլալ. ապա ուրեմն ատ խոսքը մեկ մ՚ալ մի ընեք, մանավանդ որ կայսրը զքեզ իր գանձուն պաշտոնյա կարգած է և ոչ թե անոր վեճակը քրիստոնեից վիճակին պես բարվոքելու համար։

Դուն ինչ կըսես, ընթերցո՛ղ։

— Իրավունք ունիս։

— Շնորհակալ եմ[316])։

1

Ամեն մարդ չորս աչքով քաղաքագիտական բժիշկներու խորհրդակցության կսպասե, որոնք միանալնուն պես՝ պիտի ըսկսին խորհրդակցիլ։

— Դուք ինչ գտաք։

— Մեր պաշտոնակիցը ինչ կըսե։

— Հրամանքնիդ ինչ կարծիք ունիք։

— Ձեղի ինչպէս կերևա։

— Ինձի այնպես կերևա, որ ընդհանուր դարման մը ըլ-լալուն պես՝ բան մ'ալ չմնար։

— Ես կը պնդեմ որ, կըսե անդրեն գաճաճ բժիշկ մը, հի-վանդին մեկ ոտքը, մեկ ձեռքը կտրենք, իրմե բաժնենք։

— Ո՛չ, կըսե անդրեն ուրիշ մը, ես առորակութիւն տալած եմ անոր անդամներուն ամբողջութիւնը պահելու։

— Այդ կտրած ոտքը ես առնեմ ծոցս չպիտի դնեմ ա, դարձյալ թող իրեն մնա։

— Շատ աղեկ խոսեցար մեծապատիվ պաշտոնակիցս, ես ալ իրեն համամիտ եմ, քանի որ մյուս անդամներն ալ միևնույն ցավերն ունին, դարմանն ընդհանուր ըլլալու է և ոչ մասնա-վոր։

— Մասնավորին դեմ եմ ես։

— Ես ալ ընդհանուրը չեմ ընդունիր։

— Առանց օքերասիոնի պետք է այս հիվանդը դարմանել։

— Ո՛չ օքերասիոն մը անպատճառ պետք է, այնչափ պատ-րաստութիւններ տեսանք, մեր բոլոր գործիքները հանեցինք։

— Դուք ինչ կըսեք, տեր բժիշկ։

— Ի՞նչ պիտի ըսեմ, իմ կարծիքս այն է, որ բժիշկ մը իր վիզիթան կանխիկ առնելու է։

— Ես կը հուսամ, որ իմ ցուցյ ալած միջոցներովս քիչ ժամանակին բարվոքում կըլլա։

— Ես ալ կը հուսամ, բայց օքերասիոնով։

— Ո՛չ, առանց օքերասիոնի։

Ահա այս է ամենուն հակնկալ ուզածը. այս խնդիրը օքե-րասիոնո՞վ պիտի ըլլա, թե առանց օքերասիոնի։

Քանի մը օր ալ սպասենք։

Մասիս պատմական լրագիրը Մելքայել Մելիքոֆ զորավա-րին ուրս բանակի մը սպարապետ կարգվելուն առթիվ կըսե թե՝ Մելքայել Լորու Մելիքոֆ, որ անունով միայն հայ է, կյումրիի բանակին սպարապետ կարգվելը է ևայլն։

Ցեղով ինչ է արդյոք այս մարդը, Սլաւ է։ Զըսեց Մասիս, առավոտները ինչ կուտե, իրիկունները ինչ կը խմե, շաբաթը քանի՞ անգամ լաթ կը փոխե. այս ամենը գրուցեց, որ Մելիքո-ֆին վրա պատմական տեղեկութիւն մը տալած ըլլաս։

Հայ գործավոր մը անվան հրապարակի վրա պոռթկալը ազգին պղտիկութիւնն անպեցիր, որ շուտ մը ելար ըսիր թե ատի կա Հայ չէ և ազգը չկրնար ընդունիլ այդ անպատուութիւնը։

Ինչո՞ւն գիտես սրտով ինչ ըլլալը, մարդը գործավար ըլլալով հանցավոր գտնված եղավ, որ այսպես վինքը կը թշնամանես։

Իսկ եթե միայն անունով Հայ եղողները թշնամանել է միտքդ՝ ինչո՞ւ չես գար մեծապատիվ, ինձմե չես ուզեր այդ մարդոց ցուցակը։

Ի՞նչ կը նշանակե ամեն օր կրկնելով ըսել «Մելիքոֆը, որ անվամբ Հայ է, ապարապետ կարգվեր է։ Մելիքոֆը, որ անվամբ հայ է, գործատնդես մը ըրեր է։ Մելիքոֆը, որ ինչպես հայտնի է, անվամբ հայ է, Ազնքատնդրուպոլ գայեր է։ Մելիքոֆը, որուն անվամբ Հայ ըլլալը նախորդ թիվերուն մեջ ըսած էինք, քիչ մը հիվանդ է։ անշուշտ կը հիշեն ընթերցողք անվամբ միայն Հայ եղող Մելիքոֆը, այս մարդը Տփղիս է գացեր կայլեր։

Աստված թշնամիս Մասիսին ձեռքը չձգե...

Ռուսիա մեջ Հոսքոլի... չէ, Ռոֆչիհաս, ատ ալ չէ, Հոսբրոքո... ատ ալ չէ։ ատ ուրա անուններն ալ մարդուս միտքը աղեկ մը չեն տպավորվիր որ... Ռոթերու... չիս... օֆ... հոս... բոր... ատ ալ չէ, վերջապես ատոնց նման անունի մը տեր մեկը կըսե եղեր, թե ինքը ատուծո կողմե ղրկված է եղեր...

— Դեսպանատոդովի՞ն։

— Չէ, Սլավյան ազգը փրկելու համար։

Ահավասիկ ատ մը։ եթե ատված ճնշյալները փրկել ուզեր՝ նախ և առաջ հայերը քյուրտերու ձեռքեն կը խլեսեր և ետքն ալ լրագրաց վրայեն փուլը կը վերցուներ։

Այնպես չէ՞, ով աղատախոս լրագրաց մեծապատիվ խմբագիրը։

1876

Հարուստ կենան մեկը, օր մը երկու մուշտակագործ կը կանչե և անոնցմե արջու մորթ մը կուզե, իմացնելով, թե պատրաստ է վճարել, ինչ գին որ ուզեն։

Երկու մուշտակագործները՝ որոնց մեկն Թ... և երկրորդը Ա... պիտի կոչենք, գրամատան սափնապի մեջ գանվելով՝ կընե-

դուներին հնկան այս առաջարկութիւնը. սակարկութիւնը կընեն և մեջերնին կորոշեն անոտառ երթալ ու արջ մը սպաննել։

Այս որոշման վրա այս երկու բարեկամները օր մը գաշտ կելլան, անտառի մը մեջ կը մտնեն և ծառի մը հետը կը պատվըռեն, որ արջը տեսնելուն պես՝ հրացանով սպաննեն։ Քանի մը վայրկյան կանցնի չանցնիր, արջը իսկոյն խառնչկունն վախնալով՝ հովիտի մը խրճիթին մեջ կը մտնի և դուռը կը գոցի։ Թ... փախչելու ժամանակ չգտնելով՝ խիուչն գետինը կը պառկի, շունչը կը բռնե ու վարպետութեամբ ինքզինքը մեռեալ կը ցցուներ։ Արջը, որ նուչն մեջերնին մտածած էր, պառկելին քովը կերթա, կը հոտըռտա ու տեսնելով որ մեռեալ է կը ձգե կերթա — այն առենվան արջերը սովորութիւն ունեին, որ մեռած մարդու չէին դպչեր, և Ա... այս չէր պատե— Ա... որ միշտ գրան ծակեն դուրս կը ձգէր, արջուն հետանալը տեսնելուն պես՝ դուռը կը բանա, դուրս կելլա և իր ընկերոջ կը հարցունե.

— Արջը ինչ ըսաւ ականջդ ի վար։

— Ըսաւ, որ միշ մ'ալ երկդիմի մարդու հետ արջ սպաննելու մը երթաս։

Բառդյական.— Ով որ Սվսարիո խոսքին կը հավատա միշտ մինակ կը մնա[317]։

Այս Սերվ բացինեըու հետ ինչպես գլուխ պիտի գնենք՝ հա ալ չեմ գիտեր։

Առաջ պատերազմ կուզենք ըսին, ըրինք. հաքը գլան քիչ մ'ալ դինադադար կուզենք ըսին, ալինք. հիմա ալ ելեր երթանց ուզած դինադադարը իրենք կտվրեն։

Հետագիր մը լուր կուտա թե, ասանք դինվորական փոխանորդաց որոշած սահմանագծեն ապին անցած են։

Ապրեն... կերևի թե. ինչ որ պատերազմի մեջերին չէին կրնար ընել, դինադադարի մեջերին ընել որոշած են... խոհեմերը նկատելով, որ պատերազմով ոչ միայն չպիտի կրնան իրենց սահմանեն դուրս ելնել, այլ նաև պիտի սակավին իրենց երկրեն նեբս քաշվելով՝ Պելկրատ լեցվին, որոշած են գոնե դինադադարի մեջերին քիչ մը ճանրա առնել, որ վերջեն ետ քաշվելու տեղ ունան։

Ապրիլն... ինչ տղեկ կը կովին եղեր Սերվիացիք... պինադաբի մէջտեղին... Տղեկ եղեր է ուրեմն, որ Ռուսիան վեց ամիս պինադաբը չէ ընդուներ. եթե ընդունած ըլլար՝ Սերվիացիք այդ մեջտեղեն բավական կը հառաջանային։

Առաված միամտի կողմեն է, կըսեն նե՝ իրավ է եղեր։

Այս ամենը տղեկ բայց Չերնայեվը ձեր նասի։

Ահա օրման խնդիր մ'ալ։

Այս մարդուն Ռուսիա մտնելը արգիլեցավ, Թուրքիա մըտնելն ալ չուղեց, որովհետև մեր զորքերը բավական գյուղ այրեցին իրենց ռումբերովը, որպեսզի Չերնայեվը յուր սիրական վառոտ ու պարսավեզը չհոգնի... Գոնիս գալու համար։

Ո՞ւր երթա հիմա աս մարդը. ինչ հանցանք ըրավ, որ Ռուսիայեն ելլե մըթվի։

Առաջին և ամենամեծ հանցանքը սա է, որ... սա է, որ... սա է, որ... ձրն է ա... իրավ ես ալ չգիտեմ, բայց անպատճառ հանցանք մը գտնելու է, որովհետև սովորութիւնն է հաղթվոդ զորավարներուն անպատճառ հանցանք մը գտնել. մինչև այսօր չէ եղած զորավար մը, որ հաղթված ըլլա ու հանցանք մը ունեցած չըլլա. արդ, ասոր ալ հանցանքը սա է, որ... հաղթվեցավ։

Սահեն կոմ մեծ պատասխանութիւններ,— ամեն կոմ խաղաքաղաքական խոսքեր .. եթե խոսքերուն նայիս՝ խաղաղութեան նիս տեսնելիք չունիներ. ասոնց երկուքեն զրեն հավատանք։ Խոսքերն, թե գործքին։

Ըստ մեզ՝ ամենեն հավանականը սա է, որ այս մարդիկ լծվով խաղաղութեան պիտի պահեն ու գործքով խաղաղութեունը պիտի խանգարեն. պատերազմի մէջտեղին ալ վիճեննալի լրագրիրք պիտի ըսեն։

«Ռուսերուց շահերուն խաղաղութեան պահպանութեանը նպաստավոր կերևնա... այս ինչ զորաց հաղթվիլը խաղաղութեան պահպանութեանը իրըև երաշխավորութեուն կը նկատվի հոս... պրեմ, պրեմ դիվանագիտութեունը կը կարծե, թե խաղաղութեունը չպիտի վրդո ի.. պրեմ... պրեմ... պատերազմի մը երկուղները փարատել սկսան... և այլն։

Ի՞նչ կրնաս ըսել, դիվանագիտութեան մը պոչն ենք բռներ, կերթանք կոր, տեսնենք ձեր պիտի տանի զանե։

Տրապիզոնի խազրխի խնդրույն քննութեան համար Բ. Դըբան կոչմեն քննիչ ղրկված Մենմուտա ու Հայրենիքի Մեծ. խըմբագիրները երկուշաբթի օրը մայրաքաղաքս հասան[318]։

Հարցաքննութիւնները կատարվիր են, և ամեն բան... ամեն բան...

— Էյ, վերջը՞։

— Ամեն բան...

— Ի՞նչ է եղեր ամեն բան...

— Ի՞նչ պիտի ըլլա, ամեն բան...

— Ամեն բան... ամեն բան... ինչ է եղեր։

— Սա եղեր է, որ ամեն բան... չըսվիր[319]։

1876

Ես ձեզի բան մը ըսեմ, Մեծապատիվ խմբագիրներս, դուք բարեկարգութիւն բառը ասկից վերջը քիչ գործածեցեք, կամ գոնավ մի գործածեք։ Բարեկարգութիւն բառեն գալիք օգուտը չենք ուզեր մենք։

Գիտեք լո՞չու չենք ուզեր։

Գիտեմ, որ չենք գիտեր, որովհետև ձեր մեջը անանկներ կան, որ ոչ գլուծնին գիտեն և ոչ ալ կարդացածնին։ ուրեմն թող ալեք, որ ըսեմ ձեզի, թե ինչու չենք ուզեր։

Բարբարոս գյուրտերը ձեր գրած բարեկարգութիւնը լսելով՝ երբուու կըսեն։

— Մուսուլս բարեկարգութիւն պիտի ըլլա և ալ չպիտի կրնանք Հայոց ճակտին քըրտինքովը ապրիլ — այս մարդիկ Սատվածաշունչ կարդացած չըլլալով՝ չեն գիտեր, որ մարդս յուր ճակտին քըրտինքովը միայն ապրելու է։ — ուստի եկեք Հայոց սառցվածքը կողոպտենք, Հայերը չարչարենք, սպաննենք և մեր ապրանք պատրաստենք։

Եվ այս ըսելով՝ ամեն անգթութիւնները կը գործեն։ Վկա կը կոչեմ Մանդուժեի հինգշաբթի օրվան թերթը, եթե երբեք ընդունելի է քրիստոնյա լրագրի մը վկայութիւնը։

Հասկցաք հիմա, Մեծապատիվ խմբագիրներս, որ պետք չէ այդ բառը գործածել եթե հակցաք ըսածս՝ գործադրեցեք և թող ալեք, որ ես խոսիմ այդ գյուրտերուն։

Ազնիվ գյուրտեր։

Լրագրաց գրածին մի հավատաք, Թուրքիո մեջ բարեկարգութիւնը անկարելի է։ Լրագիրներեն ոմանք բառիս արգելքը բառը եթե միշտ կը կրկնեն, մի կարծեք թե զձեզ ձեր ապահով անդորրութիւններեն զրկելու համար կը գրեն, այլ մեր ընթերցիները քնացնելու համար կը գրեն։ Աղնիվ քյուրտեր, վատահ եղե՛ք, որ դուք հավիտյանս հավիտենից ազատ պիտի ըլլաք հայերը արդի ծեղով երբեմն ձեր հողը հերկելու, անոնց հատերը քշելու, անոնց ստացվածքը կողոպտելու, պատիվը բռնաբարելու և կյանքն առնելու։ Օհ աղնիվ քյուրտեր, մի խաբվիք լրագրաց խոսքերեն, ինձի հավատացե՛ք և վատահ եղե՛ք, որ Թուրքիո մեջ բարեկարգութիւն չպիտի ըլլա։ Եթե իմ ըսածս չհլլա՝ այն ատեն հոս եկե՛ք և ինձի դեմ դատ բանալով՝ ձեր ջնասը պահանջեցե՛ք, Ձեզ տեսնեմ աղնիվ քյուրտեր, խոսքս մտիկ ըրիք և այս մասին վերստին խոսելու մի ստիպեք զիս։

կեցցեն քյուրտերը...

Լրագրաց խոսքեն դարձյալ սկսա բան մը չհասկնալ։

Բելճայկն առնված լուր մը կիմացնե, թե Թուրքիա վերջնական կերպով որոշեր է պատերազմ բանալ։

Ս. Բեթերսպուրկեն կիմացնեն, թե Թուրքիա վերջնական կերպով որոշեր է խաղաղութիւնը հաստատ պահել։

Այդքան Բելճայի մեջ պատերազմ բանալով՝ Ս. Բեթերսպուրկի մեջ խաղաղութիւն պիտի պահե կըսես։

Ես ալ մեն կրնամ ըսել և ալ մյուսը

Երուսաղեմի կառավարիչն ալ տեղը մնա։

Սիոնի[320]) մեջ կը կարդանք, որ այս կառավարիչը հայ ննջեցյալ մը Բեթլեհեմեն Երուսաղեմ, Երուսաղեմեն Բեթլեհեմ պարտցնել տալով ամբողջ երեսուն ժամ անթաղ պահել տվեր է զայն։

Ինձ ննջեցյալը հանցավոր է. մեռնելեն երեք չորս օր առաջ իմացունելու էր կառավարիչին, որ եթե մեռնի ժամուն երթալու ըլլար՝ մեռնելու ալ հրաման չէր տար։

Ձեր ժողովրդյան ըրածը լրբութիւն և էտեպսիզութիւն է, կըսեմ, երուսաղեմի Ս. Պատրիարքին Արժ. Թարգմանին, որ հանդուն Ս. Պատրիարքին բողոքելու գացեր է իրենց։

Ի՜նչ ազիզ լեզու... ինչո՞ւ այս մարդը Պոլսո վարժարաններուն մեկուսն մեջ չեն դներ, որ բարբոյական դաստիարակութիւն ընե։

կառավարիչին գործածած լեզուն մենք այնպես կը գուշակենք, որ այս մարդը ավելի կառավարվելու համար ըրկված է երուսաղեմ՝ քան թե կառավարելու համար։

Աչվընիդ լա՛ւ... հյուրերուն ծայրը բրդավ։

Շուտորթի[321]) կոմսը եկավ։

Բարի եկաք, Շուտորթի կոմս... հրամմեցե՛ք, շաքարո՞վ կը խմեք խանվեն, թե առանց շաքարի։

Է՜ Շուտորթի կոմս, քանի որ Պոլիս եկաք, մեր հյուրասիրութիւնը կը պարտավորեն ըմեզ ձեր կոմսութեյան քանի մը հրահանգները տալ։

Նախ՝ աշխատեցե՛ք, որ դիսպանժողովը Սատնապոլի կողմը չըլլա, որովհետև անձրևի օրերը կը պարտավորվիք շատ վողոց-նեբու շալակով անցնիլ։

Երկրորդ՝ կամուրջին անցած ատենները, զգուշացե՛ք զայն նորոգելու ղրաղող գործավորաց կացինեն։

Երրորդ՝ վարտա մը լսելնուդ պես՝ առանց հետևուդ նայելու՝ փախե՛ք։

Չորրորդ՝ փողոցի շունեբուն հետ խաոութեյամբ մի վարվիք, եթե ոչ կը ղշյաք վերջը։

Ընդունեցե՛ք, վսեմ. կոմս, խորին հարգանացս... հրահանգները։

Քիչ մը շուտ քալեցե՛ք, Մարքի տը Սալիզպըրի[322]), կաղալեմ, շուտ ըրե՛ք, ձեզի կը նայինք կոր. ոտքի վրա սպասել մի տաք զմեզ։

Լսածնուս նայելով՝ Ձեր վսեմութեյունը օրը հազար ոսկի եկամուտ ունի եղեր. Ո՜հ, ոբչափ գոհ կըլլայինք, եթե Ձեր վը-

անմոռացությունը միշտ հոս մնար, որովհետև մենք խոնարհ ծառայքս դեսպանաժողովին ավելի ձեռի պես Մարքիզներու պետք ունինք։

Կը կրկնեմ, շուտ ըրեք, Մարքի որ Սալիզպըրի, եկեք դեսպանաժողովը բացեք ու խաղաղությունը հաստատեցե՛ք, առանց Պիզմարքի խոսքին ականջ կախելու, որ դեսպանաժողովը հաջողության վստահ չէ։

Թեպետև մեզի չի՛նար ձեզի խրատ տալ, բայց խոնարհաբար սա խրատը կուտամ ձեզի, որ աշխատիք դեսպանաժողովին դրան քովը Ամսարիա դեսպանը չնստեցնել, որպեսզի դուռը հապար անգամ չբանա, չը գոցե։

Պարսկաստանի Շահն ալ իր սահմանապահությունը պրպք ըլլալ չեղոքության պահելու համար։

Պարսկաստանի Շահն ալ անշուշտ այն առեն պատերազմի պիտի մասնակցի, երբ յուր թեմպեհիներուն շահը վնասվի։

Ինձի այնպես կը թվի, որ եթե կռիվ մը ծագի՝ շահը չը վնասված սերմերյուն մը չպիտի կրնանք գտնալ։

Ամսարիա Բլեքի նավահանգիստը նորեն գոցեր է[323]։

1876

Կրկնությո՛ւն... կրկնությո՛ւն... ի տես... ի տես...

Ինչ առևտրական գործունեություն չատ սիրեցեք, ով Պիզմարքը, կը խնդրեմ, որ եթե ձանձրությունն չըլլար՝ անգամ մ՚ալ կրկնես ատ ըրած խոսքերդ։

Կրկնությո՛ւն...

Սըսսսթ... լռությունն... մարիկ ընենք։

«Հայկազնիդ քոլորովին մի՛ կարիք, կրնա ըլլալ որ խաղաղությունը պահվի»։

Լեզուդ սիրեմ, շարունակե՛։

«Իսկ եթե պատերազմ հրատարակվի, հավանականաբար Ռուսիա ու Թուրքիա քիչ առենն պիտի հոգնին, այն առեն

պիտի միշտ եմ և պիտի հաղթիմ ավելի արդյունք ձեռք բերել»։

Իմ կարծիքս ալ այս է. չհաղնած մարդու խոսք հասկցնելը քիչ մը դժվար է, Շարունակե՛, կաղաչեմ։

«Այսօր Ռուսիո խրատ տալը անօգուտ է»։

Այդպես է, խոսք չհատկնար։

«Եթե Ավստրիա տասիլի կովուչն մտանուկըլլ ու իր դռյությանը վրա մը տեսնվի՝ իմ պատճառս է, իմ բարեկամ Ավստրիո ապագան ապահովելո»։

Խեղճին անանկ ապտակ մը զարկիր, որ մասերնեիցդ նըշաններըը փրանսուա Ժոզեֆին[924]) երեսներուն վրա դնե կնցած են, Շարունակե՛,

«Ավստրիա չէ այնչափ տկար, որչափ որ կը կարծվի»։

Այ՛, այնչափ տկար է, որչափ որ չկարծվիր...

Դեռ առվի օր այս իշխանը Ռուսիո համակիր ըլլալը կը հայտներ, այսօր ալ Ավստրիո՝ իր բարեկամին ապագան ապահովելու խոսք կուտա։

Իր բարեկամին, Ավստրիային ապագան պիտի ապահովե... Պիզմարքը... սա Պիզմարքը... մեր ճանչցած Պիզմարքը...

Այս խոսքը Ավստրիո համար բարեդուշակ չէ. արդյոք խեղճին ապագան խնդրոց կմրգը կուզե անցունել Պիզմարք-.. Դուն ինչ կըսես, եղբայր Անտրասի։

Ե՞ս ինչ կըսեմ, ես կըսեմ, որ Պիզմարքին սա ապագաս սո ու պահե՛ ըսելը դինեմոլի մը սա օդին սո ու պահե՛ ըսելեն մազի չափ տարբերություն չունի։

Պասիրեթ, որ անվամբ միայն լրագիր է, այս օրերս նորեն րամազանի մասավ, որովհետև նորեն սկսավ առանց խորհելու և դատելու խոսիլ։

Պլաք պեյը պարտավոր է, կարծենք, այս Պասիրեթին օրացույցեն կամ րամազան ամիսը վերցունել, կամ բամազանի մեջ Պասիրեթը վերցունել. որպեսզի իր պաշտոնը հավատարմաբար կատարած ըլլա... Պլաք պեյը։

Պասիրեթ լրագրին անՊասիրեթ խմբագիր Ալի էֆենտի Տրապիզոնի ծանուցյալ խոզրխի վրա հոգված մը հրատարակելով՝ առանց կարմրելու կըսե, թե հանցավոր պաշտոնյան միայն ապտակ մը

զարկած է և աւելի բան մը ըրած չէ, մինչդեռ քննութիւնը հաստատած է, որ խազգխոյ մասին գլուածները ստուգ են։

Պասիրեթի այսպես խոսելովը ճշմարտութիւնը չհաղթվիր, միայն Հայ ժողովրդյան մէջ սա համոզումը կը գոյանայ՝ թէ Տպագրական Տեսչութիւնը ճշմարտախոս Հայ խմբագիրները կը պատժե ու ստախոս թիւրք լրագրաց աչք կը դոցե։

Փափաքելի էր, որ Տպագրական Տեսչութիւնը ժողովրդյան մէջ ծագելիք այս համոզումը ժամ առաջ մեռցուներ...

Ասոնցմէ սիրես, շիտակ դրուցե՛, Պ. Կլաուսթըրն, սա Պուլղարաց վրա հրատարակած տետրակիդ քանի՞ հազար ոսկի վաստակեցար։ Մի պահեր ինձմէ, համոզված եմ ես, որ աղեկ ստակ կոտրնցեր. որովհետև, եթե ինձ ըրած ըլլայիր՝ հիմա ալ Հունաց խնդրուն վրա բան մը գրելու չէիր պատրաստվիր։

Ս.Թենքի համալսարանի անօրեն Պ. Քոքինոսին գրված նամակիդ մէջ հետևյալ տողերը կարդացի։

«Կապահովեմ զձեզ, թե ձեր խնդիրը հուժ կզբաղեցունեմ իմ միտքս։ Միտք ունիմ այս նկատմամբ բան մը գրել և կը հուսամ՝ թե պարապ տեղը աշխատած չվիտի ըլլամ», ու միտքես ըսի։

— Եղբայր Կլաուսթըրնը քանի մը հազար ոսկի ալ մեզի պիտի նետե։

Պ. Կլաուսթըրն, Հունաց վրա գրելիքդ գրե՛ լմնցուր, ու Հայոց վրա ալ բան մը գրե՛։ Ակիլց տեղեկութիւններ կուտամ ես քեզի, բայց բաժին մ՛ալ ինձի տալու ես։ Եթէ գործերնուս գա նե՝ Հքեից վրայէդ ալ տետրակ մը կը հանենք, քիչ մ՛ալ անկից կը շահինք, բարի եկար, հազար բարի։

Եթե գործերնիս հաջողի՝ մեկ տղին վրա երկերկու տետրակ կը հրատարակենք, ամեն օր կը հրատարակենք։

Այս մասին խորհե՛, Պ. Կլաուսթըրն, և կարծիքդ ինձի հաղորդե՛, որ սա խնդիրները չվերջացած, քիչ մը գործ աւեանենք։

Ջերքեսներն ալ Ասիա փոխադրվելու են եղեր...

Ջարը չմոռնար այս խոսքը կրկնելու ամեն անգամ, որ քրիստոնեից վիճակին բարվոքմանը վրա խոսիլ կը հաճի, բայց կը մոռնա ըսելու, թե Ասիո Հայերը ջուր փոխադրվելու են։

Եթե Ջարը բարեհաճեր պնտնալ, թե Հայերն ալ քրիստոնյա են՝ այս առաջարկութիւնը չպիտի ըներ, որովհետև անով ավելի չերքեսներուն վիճակը բարվոքած կըլլա, քան թե քրիստոնեից։

Արդյոք Տերն մեր Հիսուս Եվրոպայի քրիստոնեից վրա ավելի համակրութիւն ուներ, որ յուր երևելությանը, Ջարը միմիայն Եվրոպայի քրիստոնեից վիճակը նկատի կառներ։

Հարկավ դեսպանաժողովին մեջ այս կետն ալ պիտի պարզվի։

Պուկրարիսի նախարարութեան անդամները գործերնին դադցող մարդիկ են եղեր. անանկ հանցանքներ գործած են, որոնց համար դեռ պատիժ մը սահմանված չէ եղեր Օրինապրքին մեջ։

Հունասատան... ահա քեզի հանցանք գործելու քաղաք. եթե մեր պաշտոնյաներեն ոմանք առաջուց գիտնային այս գաղտնիքը՝ Հունասատան կը լեցվեին ու հոն պաշտոն կը վաբեին։ Հիմա ալ կրնան երթալ, որովհետև, ո գիտե, որչափ պատիժներն չսահմանված հանցանքներ կան տակավին հոն, որոնք տակից վերջը պիտի գործվին և չպիտի պատժվին։

Նեղվի մեզ հարցունեն, թե արդյոք կաշառակերութեան համար պատիժ սահմանված է Հունասատանի մեջ[328])։

1876

Ի՞նչ եղար, Պ. Տիզրաէլի... երեսիդ գույնը ինչո՞ւ մեկեն ի մեկ շըշկեցավ, երեսդ ի վեր մռուկ մը ցատկեց, թե քանդ կըսաբվեցավ։

Սա Պիզմարքիդ պատասխան մը չունա... անանկ առեհնաբանութիւն մը բրավ, որ առեհնաբանութեան չի նմանիր։ Բանասատան անգամ կարդացի զայն, որպեսզի եղրակացութիւն մը հանեմ. հոգիս ելավ, եղրակացութիւն չելավ։

Վերջապես շատ մը աշխատելեն վերջը, որպես կրցի բացատրել այդ առեհնաբանութիւնը։

Ես կռվի մարդ չեմ... չեմ կարծեր, որ ծագի անանկ կռիվ մը, որ անհրաժեշտ է. թող չեմ տար, որ Անգղիա Թուրքիո օգ-

նե... և եթե չկարենամ թող չտալ, ես ալ այն առեն Ռուսիա պիտի օգնեմ։ Իմ անուշիկ Ամասրիայիս մորուքը իմ ձեռքս է... մեկը անոր բան մը ըսելուն պես պատասխանը ինձմե պիտի առնես... կռիվ պիտի ըլլա, բայց չեմ կարծեր որ խաղաղությունը ավրվի... թող պիտի տամ՝ որ Ռուսիա և Թուրքիա իրարու գլուխ պատռեն... հավանական է, որ Անգղիա և Ռուսիա իրարու մեջ գոյացնեն համաձայնություն մը՝ որ հավնական չէ... կարծեմ թե միտքս աղեկ բացատրեցի... մեզի համար խնդիր չկա... բայց եթե մեկը Ռուսիո և Ամասրիո գործին խառնվի, այն առեն մեր միջամտությունը պետք է։ Չեմ կարծեր որ մեր միջամտությունը պետք ըլլա. եթե ըլլա՝ հայտնի է, որ պետք եղած է, եթե պետք չըլլա՝ ավելորդ է ըսել՝ որ պետք եղած չէ։ Կրնա նաև պատահիլ, որ պետք ըլլալիք միջոցին պետք չըլլա։

Շետակը սա Պիզմարքը շատ հատակ խոսող մարդ ա՛ է, միայն հանգանք մը ունի, որ բնվեռադիր կը գործածե...

Տարին մը ի վեր կըսեինք Պիզմարքին.

— Ինչո՞ւ չես խոսիր կոր... այս խնդրուն մեջ ինչո՞ւ ուշացար, չը գիտես այն առակը, որ կըսե թե կանուխ ելնող որդուն մեկը օր մը քսակ մը գտեր է։

— Այդ քսակը կորսնցնողը գտնողեն կանուխ ելած է, կըսե առակը, կը պատասխանեն ևզեր մտքեն Պիզմարքը։

Պատասխան տուր, ով Տիզրայելի, ինչո՞ւ կը մտմտաս, քանիդ կորսնցուցիր։

Երեկ գիշեր ձեր էիք, Շոտլանդի կոմս, կեցակուբնիդ ձեր կեցաք, ձեր խմիցիք նայինք։

Դուք անցյալ գիշեր ձեր էիք, Մարքի տը Սալիսպըրի։ այս գիշեր ձեր հրավիրյալ եք, աղվորիկ գինիները ձեր պիտի անկեք։ Մեղի կես բերան ըլլա հրամմեցեք մը չկա։

Ողջ եղեք, ու կեցեք, խմիցեք, խնդացեք, բայց սա ըսեք մեզի, որ դեսպանաժողով մը գումարելու համար քանի ամիս կերուխում կըլլա ըստ օրինի։

Եթե ձեր դեսպանաժողովընեն միշտ այսպես կսկսին, ըսել կըլլա, թե մենք հոս ամեն օր դեսպանաժողովներ կըներնք եղեր։

Ժողովուրդը շատ անհամբեր է, դեսպանաժողովին մեջ խոսդության հրեշտակը կուզե սեռնալ։ Կը վախնամ, որ ժողո-

վերջյան փափաքը կատարվի, բայց չեմ կրնար հասկնալ՝ թե ձեր մէջ հրեշտակ ինչպես կրնա ապրիլ։

Հունաց թագավորին ալ քանի մը օրե ի վեր քաշածը ատելած գիտեք, վայրկյան մը հանգստութիւն չունի։

Առտվանց անկողինեն ելնելուն պես՝ մեկը կուգա։

— Վեհափառ, Բումունտուրոսը հրաժարականը ձեր վեհափառութեանը կը ներկայացնե։

— Շատ աղեկ, ես զինքը կը սեպհամ անգամ մը։

Քանի մը վայրկյան կանցնի, չանցնիր, ուրիշ մը կը ներկայանա։

— Պաշտոնեութիւնը հրաժարականը կուտա։

— Թող ճիա հիմա։

Եւևեն ուրիշ մը կուգա։

— Բումունտուրոսը հրաժարականին վրա կը պնդե։

— Շատ աղեկ, առէք հրաժարականը, ըսելու չմնաը, ուրիշ մը կը մտնա։

— Բումունտուրոսին տեղը ձվ դնենք։

— Տելի Յորկին դրեք։

Եվ կուգե քեչ մը բան ուտել. հազիվ թե պատառ մը բերանը կը տանի, մեկը կը մտնա։

— Տելի Յորկին չուզեր կոր։

— Բոնթոսթավլոսին տվեք։

— Շատ աղեկ։

Թագավորն կը կարծե, թե հրաժարականի խնդիրն լմընցավ, բայց պատառը բերանը նետելու միջոցին մեկը կը ներկայանա։

— Բոնթոսթավլոսն ալ չուզեր կոր։

— Տելի Յորկին ինձի դրկեցեք։

Թագավորը սեղանեն ելնելու կատիպլի ու սենյակին մէջ պալտիլ կսկսի։

Դուռը նորեն կը բացվի։

— Տելի Յորկին չգալ կոր. Բումունտուրոսին տեղը մեկը քնարեցեք շուտ մը։

— Բայց Տելի Յորկին ըրածն ալ խնդութիւն է, ինչո՞ւ չընդունիր կոր։

Թագավորը բարկութիւնը անցունելու համար վար կիջնա, պարտէզին մէջ կը պտըտի։

Մարդ մը կ'ելլա դիմացը։

— Բռւմռւնտուրոսին տեղը պարապ է։

Դուն գնա, նստէ։

Չեմ ընդունիր։

— Տէլի Յորկին ինձի դրկե։

Թագավորը պահկելու կ'երթա. հաղիւ թէ աչքերը կը գոցե, ծննյակին դուռը կը զարնվի, թըք, թըք, թըք։

Թագավորը դիշերազգեստով կ'երթե անկողնեն ու կը հարցունե.

— Ի՞նչ կա զարձյալ։

— Տէլի Յորկին չի կրնար կոր պալ. տեղը պարապ պիտի մնա այս գիշեր։

— Թող այս գիշեր անանկ անցնի, վաղը բան մը կ'ընենք։

— Ինչո՞ւ թագավորը քիչ մը հանգիստ չեք թողուր, կը պռռա անդիեն թագուհին։

Ծառայոտ կ'ելլա, թագավորը կ'ելլա և ինքնիրեն կ'ըսե.

— Նայինք այսօր քանի նախատած պաշտոնի պիտի կոչենք ու պիտի հրաժարեցնենք։

Այս խոսքը դեռ բերանն է և ահա Տէլի Յորկին կը նկատէ յանկարծ։

— Ո՞ւղղու համար չեք ընդունիր։

— Չեմ կրնար։

— Նոր պաշտոնեութիւն մը կ'ազմե։

— Չեռքես չգալ։

— Կաղաչեմ, բան մը ըրե՛, լմնցուր ու ան ու աս մէկ գլուխը վրաս։

— Չեմ...

— Կը հրամայեմ։

— Ըրեք հապա, սիրտը կը հատնի կոր նե... կ'ըսե թագուհին։

Տէլի Յորկին վերջապես կ'ընդունի պաշտոնեութիւն կազմելու պաշտոնը և թագավորը շունչ կառնե։

Կը բարեմաղթենք, որ Տէլի Յորկին կազմելիք պաշտոնեութիւնը խելացի ըլլա։

Մեքայիլ Մելիքոֆի զորավարը, որ ինչպես կըսեն Մասիս անվամբ միայն Հայ է, կ'ըմբիտներ երթալով՝ վեհ. կաթողիկոսին հետ տեսնվելու է։

Մեքայիլ Մելիքոֆի զորավարը, որ ինչպես կըսեն Մասիս, անվամբ միայն Հայ է, վեհ. կաթողիկոսին հետ ճաշելեն ետքը, Նորին Վեհափառութեան առջև զորահանդես մը ըրեր է։

Մեքայիլ Մելիքոֆի զորավարը, որ, ինչպես կըսեն Մասիս, անվամբ միայն Հայ է, զորահանդեսեն ետքը մեկներ է։

Սա Թրանսվալին լուռթյունը ձեղի զարմանք չը պիտճառելու կոր։

Աշխարհ տակն ու վրա կըլլա կոր, անոր հոգն անդամ չէ, բայց ինչ կըսես կոր նե՝ դեմ ալ չկար կոր։

— *Թրանսվա, դեսպանաժողովին մարդ մը ղրկի՛ քու կողմեդ։*

— *Ոլովհետև իմ կողմես մարդ մը ուղեցիք, թող մեկը երթա։*

— *Մարդ չենք ուզեր։*

— *Շատ ապեկ, մարդ չերթա։*

— *Թուրքիա և Անգղիա քրիստոնեից վիճակը բարվոքելուց կաշխատին կոր։*

— *Այո՛, կաշխատին կոր։*

— *Դուք բան մը չեք ըսեր կոր։*

— *Այո՛, չենք ըսեր կոր։*

— *Ինչո՞ւ չեք ըսեր կոր։*

— *Ոլովհետև չենք ըսեր կոր։*

— *Շատ ապեկ։*

— *Այո՛, շատ ապեկ։*

— *Շատ ուրախ եղա։*

— *Կրնաք ըլլալ։*

— *Կարծեմ դուք արվեստահանդեսի համար կը հոգնիք կոր։*

— *Կարծեցե՛ք։*

— *Ձեմ կարծեր, որ քրիստոնեից վիճակին բարվոքմանը մեջ շահ ունենանք։*

— *Մի՛ կարծեք։*

— *Ձեր շահը արվեստահանդեսի մեջ է։*

— *Մեջ է։*

— Միգի թիչ մը ատաք չէք կրնար տալ կարծեմ։
— Չենք կրնար։
— Մնաք բարով։
— Երթաք բարով։

Ահա չիզոքութիւն մը, բարին ամենաընդարձակագոյն նշանակութիւնը։

Ազոթենք, որ սա արևելյան խնդիրը վարպետութիւնմ յօր քիթը արվեստանոցներին մեջ խոթելով՝ անոր ալ շահուց չդպչի, որպեզի Ցրանսայի չեզոքութիւնը արվեստանոցի մեջ կարենա դրվիլ իբրև յօր անսակին մեջ հազվագյուտ բան մը[326]։

1876

Ըսեք լնձի, Ջարը քրիստոնեից վիճակը բարվոքելու համար պիտի պատերազմի, թե յօր զորաց սուրը Գեորգա պատվանշան բաշխելու համար։

Եթե Ջարին առջի օրը յօր զորաց ուղղած խոսքերուն նայինք, այնպես կը հասկցվի, որ զորքերը իրմե պատվանշան ինդրելիր են և Ջարն ալ նկատելով՝ որ բան մը չեղած պատվանշան տալը անտեղի է, որոշիր է, զորաց սիրտը չհոտոտելու համար պատերազմ հրատարակել, որպեզի քրիստոնեից վիճա... ոչ, ոչ, որպեզի իր զորաց սուրը Գեորգա պատվանշան առնե։

Թող զորականք բարով վայլեն իրենց ապագա պատվանշանները, մենք աչք չունինք, սակայն կը կարծենք, որ շատ անհամեմատ ժամանակի մեջ ելան պատվանշան ուզելու. այնպիսի ժամանակի մը մեջ՝ ուր Ջարը խազազութեան պահպանութեանը համար պետք եղած բոլոր... բանակներըը կազմելով՝ դեսպանաժողովին լծնալուն կապասի։

Դեսպանաժողովին մեջ Ջարին առաջարկութիւնները իբրև վերջին խոսք պիտի նկատվին եղեր, սա բրի ֆիքսեին պետ ոչ ավելի պիտի ըլլա եղեր, ոչ ալ պակաս։

— Երեսունը ինը բարա տանք նե՝ չըլլաք։

— Ո՛չ, ես մեկ խոսք կընեմ, ես Անատոլիսի չեմ, որ հարյուր դուրսը ուզեմ ու տասնըհինգի տամ։

— Կոտրեցի՛ք պզտիկ բան մը։

— Չեմ կրնար կոտրել, գործիդ կուգա նե։

— Այդ առաջարկութիւնդ շատ սուղ է։

— Սուղ է, բայց շատ կը դիմանայ։

— Ինչ կը դիմանայ չգիտեմ, կը հիշեմ, ես քեզմէ առաջարկութիւն մ'ալ առեր եմ ժամանակով...[327]։

— Այ՛, կը հիշեմ։

— Ամենևին չդիմացաւ, քիչ առենեն կոտրեցաւ, ալբլեցաւ։

— Մտակը կանխիկ չուիլը, առուր համար։

— Ինչ է նե՝ քիչ մը բան տանք ու հարմարինք, դարձեալ իրարու երես պիտի նայինք ... ես քուկինն ամեն օրվան մյուշքերիդ եմ։

— Ողջ եղիր, գործիս գա նե՝ կը թողուեմ որ երթաս...

— Ինձի ուրիշ տեղ մի դրկեր...

— Ուր երթաս նե՝ չուս հարյուր տարմը մեկ օխա է, աժան կառնես՝ բայց աս ապրանքը չես կրնար առնել, վերջին գարձեալ կուգաս ինձի և ավելի պին կուգեմ։

— Մնաք բարով։

— Երթաք բարով։

Այսչափ պնդել Պոն Մարշեի մեջ անգամ չկա...

Բայց միշտ հուսանք, որովհետև քաղաքականութեան մեջ բրի փիեսով առևտուր չըլլար...

Հունաց թագավորը, որ ինչպես հայտնի է, առաջարկած էր Տելի Յորկիին, որ նոր պաշտոնեութիւն մը կազմե։

Տելի Յորկին ընդունելով այդ առաջարկութիւնը կը կազմե այդ պաշտոնեութիւնը, որ կես ժամու չափ պաշտոն վարելեն ետքը՝ կը հրաժարի։

Ինչո՞ւ։

Որովհետև Ազգային ժողովը այդ պաշտոնեութիւնը չէ վավերացուցեր։

Տելի Յորկին հիմա պտրիկ իյնալով՝ երդում ըրեր է մեյմ՛ալ Գեորգ Թագավորին չվանովը հորը չիջնալ. և իրավունք ալ ունի, ինչու որ ժողովին ընտրածը թագավորը կը մերժե, թագավորին ընտրածը ժողովը կը հրաժարեցնէ։

Այս վիճակին վերջ տալու համար մենք կառաջարկենք, որ թագավորն իրեն համար ուրիշ պաշտոնեութիւն մը ընտրե

ՆԹԵ ԱՆՀՆԱՐ Է ԱՅՍ՝ ԹՈՂ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ ՔԻՉ ՄԸ ԱՌԵՆ ԱՌԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՒՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ։

Հրեայք ալ ուրիշ ազգաց պէս խոսք չհասկցող են եղեր... առանց ըսվեցյալ անցյալներըը, թե դուք ալ ուրիշ ազգաց պէս իրավունքներ պիտի սանանաք. մինչև անգամ Թատրոնին մէջ ես ալ ըսի, թե խելոք նստեցեք, դուք ալ պիտի մասնակցիք Թուրքիո մէջ ըլլալիք բարեկարգմանց. այնպես ըսի, որպեսզի խոսք մը պակաս ըլլա։

Առնք զմեզ մարդու տեղ չդնելով այս անգամ Իսրայէլյան ընկերութեյան մէջոցով Ֆրանսայի կառավարութեյան կը դիմեն և նորին կը խնդրեն, ինչ որ արդեն՝ իրենց խոստացած էինք։

— Ուրիշ ազգաց տրվելիք իրավունքեն մեզի ալ տրվի։

Հասկցանք, ուրիշ ազգաց տրվելիք իրավունքեն մեզի ալ պիտի տրվի։ Մի կարծեք, որ ուրիշներուն տրվելով իրավունքները կը հասնին ու մեզի չմնար. փառք աստուծո, հիմա իրավունքեն շատ ինչ կա, ամենուս ալ կը բավե։

Եթե ես կառավարութեյան տեղն ըլլայի՝ ամեն օր մեզ ալ կուզեի խոսքեն բարկանալով՝ կը դառնայի կըսեի.

— Հպատակաց մէջ խտրութեյուն չկա, ամենքնիդ ալ հավասար եք իմ առջև և այս հավասարութեյունը չավրելու համար որոշեցի, որ և ոչ մեկուընուդ իրավունքնեը տրվին. բանեցնիդ գացեք։

Պիզմարքի առենարանութեյունը Անգլիո մէջ ալ գոհութեյուն պատճառեր է, մինչդեռ միայն հոն գժդոհութեյուն պատճառելու էր։

Անգլիա սկիզբեն ի վեր մեզի պաշտպան կը կանգներ, Պիզմարքն առենարանութեյան մէջ կըսեր, որ թուրյ չվնասի ոա Անգլիո՝ Թուրքիո օգնել. այս խոսքին վրա Անգլիա գոհութեյուն կը հայտներ։ Ըսել է թե Անգլիա մեզի օգնելու հաժարութեյուն չունի եղեր, բայց հայտնապես ըսելու ամչնալուն համար սպառնալիքի մը կսպասեր եղեր, որ վինքն արդարացնե ըսելով.

— Ինչ ընեմ, ես կուզեի օգնել, բայց Պիզմարքը թող չտալ։

Շնորհակալ ենք։

Սա պաշտոնական գրութեանց մէջ անանկ ձևեր կը դրծածվին, որ մարդս տարի մը շարունակ կը խնդացուներ։

Այս դիվանագէտ ըսածներըը երբեմն իրարու անանկ նամակներ կը գրկեն, որոնց մէջն պահանջուներով անուղղակի դիրար կը նախատեն և վերջը կատարագրեն։

«Կը խնդրեմ, բարեհաճեցեք ընդունիլ իմ խորին հարգանացս անկեղծ հավաստիքը»։

Այնպես մը ըսել, որ եթե ատոնց մէն մի արտացոլ անկեղծ հավաստիքը չընդունի՝ խաթրերը պիտի ջնա։

Շիտակը ուզես... եթե ես դիվանագետ մ'ըլլայի պարզապես կըսեի. ընդունե՛, իմ խորին նախատանացս անկեղծ հավաստիքը, ան ալ կուզես նե՝ ընդունե, ինչպես որ ասկե առաջ մի քանիներուս գրած եմ։

Մարդու գլուխը կտրել և վերջէն դիակին առջև ծունկ չոքելով ըսել.

— Ընդունե՛, կաղաչեմ, չըլլա որ չընդունիս, ընդունե՛ իմ բարեկամական անկեղծ զգացումներս, մեր վաղեմի բարեկամութիւնը միշտ հաստատ պիտի ջնա։

Իմ ընելու բանս չէ... Ատոնց [28]։

1876

Պոլիսեն Նէրոպա զրկված լուրերուն նայելով՝ Պոլսո լուրերը գոհացուցիչ են եղեր...

Մարքի մը Սալիսպըրի և Ժոնեալ Իվնաթիեֆ խոսած ատենները իրարու կը խնդան եղեր. հաճաբար երկուքն ալ դիջումներ ընելու հակամետ են եղեր... Ավելորդ չէ ըսել, որ երբ այս երկու դիվանագետները խնդալե ճաթին, այն ատեն խաղաղութիւնը կատարյալ պիտի ըլլա. իսկ երբ ախորժութիւնը ատոնց դեմքերուն վրա յուր սև թևերը տարածե — բանակատեղծութիւն ալ քիչ մը պետք է — այն ատեն, հն այն ատեն վըստահ եղեք, որ խաղաղութիւնը մեր ձեռքը թողվելով՝ վճռաբարով պիտի ըսե։

— Ո՞ւր կերթաք, ով խաղաղութիւն, քիչ մ'ալ նստեցեք, մեզի այսչափ շուտ թողուլ երթալ ինչ պիտի ըլլա։

— Ջեմ կրնար ջնալ։

— Մեյ մ'ալ ե՞րբ կրնաք գալ։

— Երբ որ Իկնաթիեֆի ասիկից երթաս։

— Չի կրնար ըլլալ, որ երկուքնիդ ալ հոս մնաք։

— Անկարելի է, իրարու դեմ հակակրութիւն ունինք հոսան ինձմէ չատ ուժիր, ես ալ իմս։

Որչափ աղեկ կըլլար, եթէ մատնաւոր դեսպանաժողով մը կազմվեր, որուն պաշտօնն ըլլար խաղաղութիւնն Իկնաթիեֆի հետ հաշտեցունել...

Լսածնուս նայելով դեսպանաժողովին կիյմ մ'ալ տվեր են ու տասնը հինգ օր ետ մղեր են... խեղճ դեսպանաժողով...

Բայց ինչնիւ այսչափ խոստութեամբ վարվիլ անոր հետ, սանին մարդ պիտի, որ վերը աստված վարը դեսպանաժողով մը ունենք կըսեր առաջի օրը բարեկամներուս մին. արդյոք դեսպանաժողովին պետք չունինք ալ։

Շատերուն, որոնց մէջն եմ նաև ես, կարծիքն այն է, թէ նախնական դեսպանաժողովին մէջ, մխիթարեան հարանիքը պիտի ըլլա, ուր Ռուսիա և Թուրքիա իրարու ձեռք բռնելով՝ հավիտեան հավիտենից սիրով ապրելու ուխտ պիտի ընեն։

— Տե՞ր ես։

— Այո, տեր եմ։

— Իմնալ կա, ելլալ կա, տե՞ր ես։

— Տեր եմ։

— Առնելիք կա, պարտք ալ կա, տե՞ր ես։

— Տեր եմ, ըսինք ա։

— Ոսկի ալ կա, դրամաթուղթ ալ կա, տե՞ր ես։

— Տեր եմ։

Ներկա դտնվող վկաներն ալ բարեմաղթութիւնները ընելով պիտի ըսեն.

— Մեկ բարձի վրա ծերանան։

վ.ԼՍՉԵՆ Ֆրանսայի ու Բրուսիո վկաներուն դառնալով՝

— Տարոսը ձեր գլուխը պիտի ըսեն։

— Կեցէք, նայինք, մինչ տակավին պզտիկ ենք։

Ձեր շահուց սիրույն համար ըլլա, ըսեք ինձի, ով դիվանագիտաք, երբ պիտի կատարվի այս արարողութիւնը. ըսեք, որովհետև հետաքրքրութենես զիշերները քունս կը փախչի կոր. տասնները ուշ կալընենամ ու գործես ետ կը մնամ կոր...

Վազըք լրագիրն ալ սկսավ հսկայագործ հառաջդիմութիւն ցնել, առջի օրվան ըսածը երկրորդ օրը հետս կչելու մեջ։

Զուրեքշաբթի օրը կըսեր.

«Մեր առած տեղեկութիւնքը նայելով՝ օսմանյան զորաց թիվը 800.000 պիտի ըլլա եղեր»։

Կարծենք, վազվան առուց պղըյուրներե առած ջուրեքը առջի ըսած ջուրերը պիտի հերքեն։

Սա Անգղիո հասարակաց կարծիքը իմ հովանոցիս կը նըմանի կոր, հովը քիչ մը սաստիկ փչելուն պես՝ մյուս կողմը կը դառնա կոր...

Ներեցեք, այս նմանութեանս, աղնիվ Անգղիացիք, բայց զրուցեցեք ձեր հասարակաց կարծյաց, որ քիչ մը հաստատութիւն ըլլա և ար դերեո շահ տեսնա՝ այն կողմը չդառնա... օրը հազար անգամ։

Հազիվ կարդացած լինցուցած էի այն հեռագիրը, որ կը ծանուցաներ, թե ձեր հասարակաց կարծիքը մեր կողմը դարձած է, ձեռքս տվին ուրիշ հեռագիր մը, որ կը հայտներ, թե ձեր հասարակաց կարծիքը նորեն բարեհաճեր է Ռուսիո կողմը դառնալու։ Հիմա կիմանամ, որ ձեր հասարակաց կարծիքը երեսը մեղի, կենակը Ռուսիո դարձուցեր է, պատվիրեցեք իրեն, որ միշտ ասանկ ինա, ինչու որ մեզմե չարիք մը տեսած չէ, և մենք ալ սիրով կուզենք տեսնել յուր երեսը։

Բայց շատ անգամ ձեր կարծիքը այնպիսի դիրքով մը կը նայի, որ իր երեսը թե մեզի դարձած կըլլա և թե Ռուսիո։ Ա՛րդ, կպատչխա՛մ, ըսեք ինձի, ձեր հասարակաց կարծիքը Ցանոսի[820]) տղան է և եթե է՛, որչափ կը նմանի յուր հորը։

Ասոնց ամենն ալ պարապ խոսքեր են, ընթերցող, մենք նայինք, որ սա քրիստոնեից վիճակը ժամ առաջ բարվոքի և գրպանտուս մեջ քանի մը ոսկի տեսնանք։

Երբ ձեռքս գրպանս կը խոթեմ և ունայն դուրս կը քաշեմ, կըսեմ. քրիստոնեից վիճակը շատ գեշ է, հայր կոլչաքոֆ։

Ոչ ոք կը խորհի մեր գրպաններուն վիճակը բարվոքելու,

որ քրիստոնեից վիճակն ավելի պետք ունի բարեկարգության։

Եվ մեզի կըսեն. ապացեք և հուսացեք։ Ինչ օգուտ, որ հացագործ Մարգարը տգետ ըլլալով՝ դրագիտական լեզուն չհասկընար կոր...[330]։

1876

Իմացեք սա բարբարոս կրակին վանա մեջ գործած անիրավությունները. ամբողջ շուկան մոխիր դարձուներին հետը՝ շատ մը ապրանքներ առեր փախեր է։

Կրակին այրելու հատկությունը գիտեինք, բայց դողնալու հատկությունը չէինք գիտեր. այդյոք քյուրտերը իրենց փոխանիրդ կարգեցին կրակը և անոր միջոցավ պետի գործեն ատկից հետը։

Չկրցինք տակավին ստույգ տեղեկություններ քաղել պետնալու համար, թե այս նորահնար կրակը ուրիշ ինչ անիրավություններ ըրած է։ Պոլիս հասած հեռագիրները կըսեն՝ թե շուկանխա այրեցավ, ապրանքնիս կողոպտվեցավ, չըլլա, որ նորին մեզի ապրանք կամ ստակ ղրկեք, մեր ապրուստին համար պահեցե՛ք, ինչ որ ունինք հոն։

Հետագրաց այս լեզուն ոմանց հետաքրքրությունը կը շարժե։ Հրկիզյալ մարդ մը գրամ ղրկեցե՛ք, որ ինքզինքը հոգամ կըսե, հրկիզյալ վանցին բան մ՚ալ մի ղրկեք կըսե։

Ահեմոթյունը կը հրամայե մեզ՝ այս մասին ասկից ավելի չգրել և ապասել գալիք նամականերուն, որոնք միայն կըրնան լուսավորել հետագրաց այս անհասկնալի լեզուն. սակայն կրակին ապրանք դողնալու հատկությունը պարտք կը դնե մեզ վրա իմաց տալ հասարակության, որ գիշերները դուրս նետած աաեններին կրակ չթողուն տունեըներնին, որպեսզի տան մեջ եղածները չառնե տանի... սիկառ ծխելու առեներին ալ գրպաններին այրեն, որ գողություն մը չպատահի...

Բայց, ինչ որ ալ ըլլա, վստահ եմք, որ վանա բարեկամ կառավարությունը առանկ չարաբարոս կրակները պետի ձերբակալե... ձեռքով ալ չբռնվիր, որ ձերբակալե... առանկ չարաբարոս կրակները պետի... պետի բանտարկվե... ինչ ըսեմ, ես ալ շվարեցա մնացի։

Վանեցոց գալով՝ առնց ալ խրատ կուտանք, որ չեն, այլ

քաջ ըլլան, գժբախտութեյան կուրծք տան և հաղթելու աշխատին։ Անցյալէն օգուտ քաղելով մեյ մ'ալ կրակին դոհ չըլլալու համար խանութենին թող ծովու վրա չինեն... ինչ ըսեմ հապա։

Դեսպանաժողովո նախնական նիստերը շարունակվելու վրա են։

Այս նիստերու մեջ տեղ ունեցած բանակցութիւնները թեպետև գաղտնի կը պահվին, բայց շատ խաղաղասիրական են, կըսեն լրագիրը։

Եթե գաղտնի են՝ ինչպես գիտեն, որ խաղաղասիրական են, ինչ որ գաղտնի է խաղաղասիրական կը կարծեն, թե իրենց ընթերցողները լուրը չզրկելու համար դուշակութիւն ընելու կսխալվին։

Հիշյալ լրագրաց և իրենց ընթերցողաց թողլով այս հանելուկին լուծումը՝ կը բարեմաղթենք, որ համաձայնութիւն մը գոյանա։

Եվ ինչ է համաձայնութիւնը։

Բառերուն խոսքի մեջ բանելիք տեղերը և իրարու հետ կանոնավոր կերպով կապվելու եղանակը սորվեցնող արհեստ մը, որ կը պատվիրե նաև իրարու շահուն չդպչիլ։

Այս դեսպանաժողովին մեջ մեկ սեռի խնդիրը կա, հինգ բայ կա, ամենուն ալ աչքը սեռի խնդիրին վրա է, մինչև անգամ չեզոք բայերն ալ ներգործականի դառնալու միտք ունին՝ եթե պզտիկ շահ մը ցույց տրվի իրենց. հատկացուցիչ կա, հատկացյալ չկա, բացահայտյալ կա, բացահայտիչ չկա։ այս պարագային մեջ սեռի խնդիրին քաշածը միայն ատոված գիտեր։ Ներքային սեռի խնդիրին քիչ մը անդին գնա, կըսե. ներգործական բայերին մեն՝ սեռի խնդիրին գլուխը կեցած՝ տեղեղ չվիտի երթալա կը պոռա. չեզոքը՝ մի դպչիր, ուզածնին թող ընեն, կըսե. հատկացուցիչը սեռի խնդիրին պչեն բռնած՝ թշվառացնեն, չգթա, դուն իմ հատկացյալն ես, կըսե. վերջապես՝ իրաց այս վիճակին մեջ համաձայնութիւն մը այն աստեն պիտի գոյանա՝ երբ համաձայնութեյան կանոններըը բռնաբարվին, ինչպես որ ասկից առաջ Լրագիրը գուշակած էր... համաձայնութեյան կանոններուն բռնաբարումը... Լրագրի մեջ։

Գրավելու զուլյնեւեն ալ բան մը չեմ հասկնար կոր։

Ի պահանջել հարկին Ռուսիա երբ Պուլղարիան գրավե, Ավսարիան ալ Պոսնան պիտի գրավե եղեր։

Եթե ամեն տերութիւն մեյ մեկ տեղ գրավելու պատրաստվոր է, կը խնդրենք, տեղ մ՚ալ մեզի ցցունեն, որ մենք ալ գրավենք։

Սա Ավսարիային ալ ինչ կըսես, ինքզինքը գրավելու կարողութիւն չունի, ելեր Պոսնան գրավել կուզե։

Ռուսիո մեջ պատերազմի պատրաստութիւնները մեծ փութով հառաջ կը տարվին։

Հրաման տրված է, որ կովկասու բանակը Աթոռ կողմեն հարձակվուն պես՝ Դանուբյան բանակն ալ եվրոպայի կողմեն հարձակի։

Էյ, մենք որ կողմեն պիտի հարձակինք հապա...

Նուհնպես հրաման տրված է Իկնաթիեֆին, որ ամեն բան իր գլխավորին չհարցունե ու ժամ առաջ գործը լմնցունե։

Կը թվի, թե կորչաքոֆ ինք ալ սկսավ ձանձրանալ յուր հյուծողական քաղաքականութենեն։

Մոռնալու չէ նաև, որ Ռուսիան մեծ զոհողութիւն մը ըրած է, անանկ զոհողություն մը, որ Ռուսիայեն չէր սպասվեր. այս զոհողությամբ Ռուսիան կը պահանջե, որ գոնե չեզոք տերություն մը գրավե նա Պուլղարիան։

Ինչ մեծ զոհողություն... պատերազմելու համար[331]*։*

1876

Վանեն հետզհետե հասած հեռագրալուրք այնպես կը լուսավորեն Վանա խնդիրը, ինչպես որ խտառն փիթիլն կը լուսավորե դրացվուց Քոնիզման՝ երբ ներս հասնի մեջը։

Կառավարութեյան սասցած հեռագրալուրց նայելով՝ զորաց ոչ թե պատիժ՝ այլ մեյ մեկ պատվանշան տալու է, որովհետև անոնք անձնվիրաբար բոլոր խանութները պարպեր ու մեջի ապրանքները տաեր տարեր են, որ կրակի զոհ չըլլան։

Որչափ ազեկ կըլլար, եթե շուկան ալ առնեին տեղ մը տանեին։

Պատրիարքարանի ընդունած լուրերուն նայելով՝ զրպարտը ուրիշներու հետ միասին սրբով, չուկան կրակի տվեր են ու վաճառականներն կապտեր են իրենց ապրանքին։

Ըսո մեզ՝ ասիկա փորձ մ՚է, զոր ընել անհրաժեշտ էր կամ իսմանալու համար, թե զորքերը ինչպես պիտուց՝ այնպես ալ ավարառուներ մեջ ըստ կարի հաջողակ են և պիտի կրնան թշնամվույն քաղաքները մտած առենին թշնամին կողոպտել, ինչպես որ օրեն է ամեն տեղ, և կամ թե՝ առաված չընայ եթե քաղաք մը պարպել հարկ ըլլա՝ պիտի կրնան դյուրավ գլուխ տանիլ իրենց այս տեսակ պարտավորություններ։ Այս երկրորդին ալ ըլլա, կրնանք ըսել, որ զորքերը գոհացուցիչ կերպով հաջողած են այս փորձին մեջ. ժամվան մը մեջ վանը պարպեր լմնցուցեր են։

Փորձին ըսելիք չունինք, բայց տեղը գիշ ընարեր են։ որովհետև այն տեղը միայն Հայ և Իսլամ եղբայրներն բնակված ըլլալով՝ ինչպես ոչ թե թշնամվույն՝ այլ Հայ և Իսլամ եղբայրներուն վրա կը ծանրանա, քանի մը օրեն հավասար իրավանց տիր ըլլալիք եղբայրներուն վրա։

Կառավարության ուշադրությանը նկիկայացնելով բարեխնամ ժողովրդյան այս դժբախտությունը՝ կը հուսանք — ինչպես որ կը հուսանք միշտ — որ հանցավորները պիտի պատժվին, ինչպես որ պատժվեցավ Զեյթունի գայմագամը։

Իսկ մեր կողմեն վանեցվոց խրատ տալն ավելորդ համարելով՝ Նոր Դարին կը թողունք, որ վանեցի եղբարք, բարեպատոն ժողովուրդով սկսած քարոզներովը շարունակե, հոգևորապես մխիթարել վանեցի եղբայրները. և եթե պիտք է՝ անոնց վրայ եղած ապրանքներուն հոգվոյն համար եռվոցն հանգուցյոց մ՚ալ ըսե իր գացած տաճարին մեջ՝ ուր Նուբյան էֆենտին ալ կը հաճի անշուշտ սարկավագություն ընելու։

Դեսպանաժողովը ճըշտ պիտի դումարի։

Հերթիք հարցուցիր, եղբայր, հերթիք...

Եթե սովորություն ունիմ լրագրաց գրածներուն հավատալ՝ Դեսպանաժողովին այսօր յուր առաջին նիստը պիտի ընե։

Մինչև այսօր ինչու՞ չնստիր կոր։

Մարքի սը Սալիսպըրիին վազը դիշեր խնճույք մը պիտի տար, խոսք բացվի նե՝ կը հարցունեմ. իմ այսօրվան դիտցածս

ոա է, որ Ավստրիո կոդմեն դրկված Պ. Գալիսը յուր տեղուեին-նեն գալիք քանի մը թուղթերուն կապասե եղեր. այս թուղթե-րըն երեկ հոս հասած ըլլալով՝ դեսպանաժողովը այսօր պիտի նստի։

Դիտեցիք, թուղթերը Պ. Գալիսեն ավելի կարևորութիւն ունին և եթե Պ. Գալիսեն տեղ թուղթերը եկած ըլլային՝ մին-չև այսօր ամեն բան կը լմնար։

Եղածը եղած է, ազոթենք, որ սա թուղթերուն դլուխը փոր-ձանք մը չդա։

Սերվիացիք հրացան նետելու վարժվելու համար կարծես Ավստրիո շոգենաձիերը նշանի կը բռնեն կոր։

Առջի օրը Պելիկրատի բերդեն հրացան պարպվեր է Ավս-տրիո մեկ շոգենավուն վրա։

Այս գործողութենեն ետքը Միլան իշխանը յուր ցավը հայտներ է ճիշտ այն մարդուն պես, որ քեզի դեմ դարնվելով ոսկորներդ ջարդ ու փշուր ընկեր՝ ետքը՝ ծիծաղով մը բարտոն կըսե և քեզի մեծ բարիք մը ըլլած պես՝ կառնե կը քալե։

Միլան, ցավ հայտնելուդ համար շնորհակալութենիս կը հայտնենք, բայց՝ ըսե մեզի, ինչ կուգես սա մարդուն շոգենավ-ներեն։ Եթե դիպվածով կըլլա կոր ըսես՝ չենք հավատար, որով-հետև առջի անգամը չէ ու բեռ աքըշընա պեճգեմիյոր[332]։

Շոտորաթի դեմքին վրա բարկութիւն մը կը տեսնամ կոր, ալըշոք աճապարանոք Պոլսո կոմը անցնելու միջոցին կամուր-ջը բացվեցավ կըսեք՝ Ո՛չ, տեսեք թե ինչ է.

Օրինակի համար, ես հիվանդ չեմ ու ինձի կըսեն, առ սա դեղը... առ սա դեղը... այս դեղը քեզի շատ ազեկ պիտի գա... մենք քուկին ազեկութեանդ կաշխատինք կոր։

Բանի որ պետք չեմ դդար, այդ դեղը չեմ առներ. ասոր համար բարկանալը ինչ պիտի ըլլա։

Ասդին կը գառնամ և ահա ուրիշ մը դիմացս կելնե ըսելով՝ ինչո՞ւ չես առներ կոր սա դեղը, քեզի սա կըսեմ կոր նե՝ հար-կավ բան մը գիտեմ կոր, քչիկ մը ա՛ռ սա դեղեն...

Ձեմ ուզեր... ձեզի ինչ... զեղը ես խմեմ, ուրիշները բժըշկի-վին, ինչ ըսել է աս։

Պատած զրուցյուներուն նայելով՝ Դուբը[333]) պիտի մերժե այս ինքնակոչ բժիշկներուն տված թնդանօթաձև զեղը, որի ծայրը չպիացվիր, թե որու պիտի դպչի։

Հասկցաք հիմա Շոտորախի և յուր պաշտոնակցաց բարե-կեցության պատճառը։ Ուզածնին ընես նե՝ քեզմե ազեկ մարդ չկա, չըլլիր, զեղ մարդ ես, սիվիլիզե չես։

Ո՜հ, կարի է առասպել։

Կոլչաքոզը[334]) քանի մը օրե ի վեր շատ անհանգիստ է, դիշերները քնացած չունի, ախորժակը բոլորովին զդցվեր է, սաս-տիկ մտատանջության մեջ ինկած է։

Մենք առջի օրը զինքը տեսանք երազնուս մեջ և հարցու-ցինք.

— Ի՞նչ կը խորհիք, մեքենըներդ շատ զբաղյալ կը թվի։

— Այո, ինչպես չմտամտամ. անանկ բան մը եղավ, որ դրծո խառնեց։ Հայը, հուդան և հրեայը միանալով ըսեր են, թե ինչ որ ուզվի Պոսնայի, Հերսեգբի և Պուլղարիո մենք ալ կու-զենք. ես ալ՝ որպեսզի աստոց սիրտը չկոտրի, որոշեցի, որ և ոչ մեկ զաւառին ինքնօրինության տվվի. շիտակը՝ չեմ ուզեր, որ Հայոց խաթրը ձիա, ոչ ալ հունաց և հրեից։

— Ի՞նչ ընեն այն խեղճերն ալ... անոնք ալ հարկավ կու-զեն, որ իրենք ալ քիչ մը խնդան։

— Այո, ինձի համար արդեն խնդիրը լմնցած է, բոլոր գա-վառաց մեջ թող հավասար բարեկարգություն ըլլա, լմնա եր-թա. ես ոչ պիտի պատերազմիմ, ոչ ալ տեղս պիտի երեսամ։

Աբթնցա և ցավեցա, թե ինչու այս ազգերը անանկ առա-ջարկություններ կընեն, որ հրազի մեջ միայն ընդունելի կըլ-լան[335])։

1876

Սիրտերնիդ հանգիստ եղավ, բարեկամք։

Ծնավ անավասիկ երկար տարիներե հետե հղացված Սահ-մանադրության[336]), ուսկից պիտի ծնանի ազատություն, հա-վասարություն և եղբայրություն։

Մինչև այսօր խորհելու ազատությունն ունեինք, բայց խոսելու ազատություն չունեինք. ասկից առաջ այս ազատությանց երկուքն ալ պիտի ունենանք։

Օրինակի համար՝ երբ անձրևի օրերը մարդիկ չալակով անցնելին փողոցներեն, պիտի ըսեմ Պոլսո քաղաքապետությանն. «Մարդ աստուծո, հավաքած սակնկող ինչ կընես, ինչու համար փողոցներուն քիչ մը հոգ չես տաներ»։

Երբ տեսնամ, որ գառ մը տասը տարիե ի վեր չվերջանար՝ պիտի ըսեմ դատավորին. «Դուն այս տեղը գառերը չլիցնելու համար նստած ես. Ցերեկյանը անոր համար քեզի ամսական կուտան, որ գառերը երկնցնես, որպեսզի մուպաշիրները պարապ չմնան»։

Բայց ինչ օգուտ, տասնկ անկարգությունները չպիտի կըլլանամ տեսնել, որովհետև Սահմանադրությունը պիտի վերցունեն գոնեն։

Առաջվան պես թերություններն չպիտի ըլլան։

Կարգ ու կանոն ամեն կողմ տիրելով՝ թող չպիտի տան, որ թաղրոնը դեղծում մը տեսնե ու հարվածե, թաղրոնն ալ դեղծում մը չգտնալով՝ պիտի սոխվի կանոնները հարվածել։

Չիմակ ու հիմա սպասենք և խանձարուրքի մեջ եղող Սահմանադրության վրա ասկե ավելի չխոսինք։

Սևբասախայի դեպքին ինչ կըսեք։

Գանի մը թյուրքեր կամ քյուրտեր Թմբուկով եկեղեցի կը մտնեն ու պատարագիչ քահանային մորուքը ածիլելով եկեղեցվույն մեջտեղը կը խաղցունեն։

Ահա դեպք մը, որուն հարաբաներություն անունը չենք կրնար տալ, որովհետև գործին մեջ ոչ գանակոծություն կա, ոչ ալ սպանություն, այլ ինդության և ցնծություն։

Բայց քահանային մորուքը ածիլելը քիչ մը անվայել թվեցավ մեզ, ուստի և պետք է որ ածիլողներուն ալ մորուքները ածիլվին, որպեսզի չելլան վարդն ալ ոտք կոխեն, թե ըոլոր սեբաստացիներն մորուք թող տալու են։

Պատրիարքականի գալով՝ կը խրատենք զինքը, որ այս դեպքեն օգուտ քաղելով՝ մորուքին ածիլվելիք կրոնավորները ասկից առաջ Սեբաստիա զրկե։

Առևտուրներու նախազգեցիկն ամեն մարդ Ընդհ. ժողովին անդամ[337]) ըլլալու կը պատրաստվի կոր. և եթե ամենքն ալ հաջողին՝ Պոլսո բոլոր բնակիչները երեսփոխան պիտի ընտրվին։

— Ջեզի աղաչանք մը ունիմ, Թորոս աղա, կըսեր երեկ Համբարձում աղան։

— Ի՞նչ է աղաչանքդ։

— Շուկայի մեջ ունեցած խանութներդ իմ վրաս դարձուր։

— Ինչու, ես զավակ ունիմ։

— Զավակներդ քեզի ձեան, խանութներդ քանի մը օրվան համար վրաս դարձուր։

— Ինչու։

— Որպեսզի կարենամ երեսփոխան ընտրվիլ, որովհետև առաջվածք չունեցողները չպիտի կրնան ընտրվիլ։

— Աղեկ ա, ես կըլլամ երեսփոխան։

— Բայց դուն լեզու չունիս բերնիդ մեջ։

— Օրենքը չըսեր կոր, որ լեզու չունեցողը երեսփոխան չպիտի ընտրվի, այլ առաջվածք չունեցողը։

Համբարձում աղան այս պատասխանին վրա ատոում, աքլաւը առնը կերթա և բարկութենն հինիկը կը ծեծե։

Ծախս հարիք... նախնական դեսպանաժողովին յուր նիստերը լմնցուց։

Հիմա վերջնականը պիտի սկսի այսօր կամ... երեկ։ Նախնականը՝ որ այսչափ մեր սիրտը հատցուց, վերջնականը արդյոք ինչեր չպիտի ընե։

Պատասխ պրուկցներուն նայելով՝ նախնականը լինքնիրենը փեսա եղեր է, ամեն բան լմնցուցեր է, դործը ձեացեր է յուր սիրտը ապչկան բանալ։

Նախնականին մեջ Տերութիւնք փոխանակ Ռուսիան Թուքքիո հետ համաձայնեցնելու, իրենց մեջը համաձայներ են։

Շիտակը՝ աղեկ միջոցներու դիմած ենք եղեր։

Ուրախ ենք, որ ընդհանուր բարեկործութենց միջոցին ձիերուն և էշերուն ալ վիճակը նկատողության առնվելով՝ որոշվեր

է, որ ձիերը ուրբաթ օրերը և Տշխրը կիրակի օրերը գործ քաշվելով հանգիստ ընենու

Հանգիստ ընկերնուն վրա ըսելիք մը չունինք, նամանավանդ շատ անգամ մենք ալ առաջարկած ենք գայն. բայց մյուչն համար ուրբաթ և մեկալին համար կյուրակե օրերը հանգըստյան օր սահմանելը կարծենք կենդանյաց չափնն ավելի ազատություն տալ ըսել է. որով կյուրակե օրը բռնող էշը կրնա վաղը պնդել, որ մեր ուրիշ կյուրակիներուն ալ մասնակցի, մեր տոնախմբությանց ալ խառնվի, մանավանդ որ Ծագկազարդի պատմությունը անգամ մը իմանա նե՝ գլուխը կարես՝ նե՝ շաբաթներով տեղն չշարժիր և հավանական ալ է, որ անցեալուչն վառավոր հիշատակներովը հպարտացած՝ ամեն կյուրակե առտու տիրոջը հետ ընկերաբար եկեղեցի պ՝ Ա.Րի մոկ ընե[338]։

Ավելորդ չենք համարեր հիշեցնել, որ այս որոշման մեջ հավասարության դեմ ալ գործված է։

Հրեայք, որ ուրիշները ծաղրելու առիթ կը փնտռեն, կյուրակե օրերը դիտմամբ էշերու քով պիտի երթան և պիտի ըսեն.

— Թշվառակներ, այսօր ձեզի կյուրակե է, հեհե... աստված տա... քրիստոնեություն է...

Հրեից այս երգիծանքեն խալսելու համար խոնարհաբար կառաջարկենք, որ դուն ջորիներն ալ շաբաթ օրերը հանգիստ ընեն, որպեսզի իրարու ըսելիք չունենանք և հավասարությունը պահպանվի մեջ իսկ տիրե[339]։

1876

ՄԱՐԴ ՄԱՐԴՈՒ ՀԱԼԸ ԶԻՅՏԵ
ԿԵՍ ԳԻՇԵՐՎԱՆ ԺԱՄ ԿԸ ԿԱՆՉԵ

Մեր մտրաքը բռնկեր՝ մեկ մը ասոր մեկ մը անոր պատասխան տալեն գլուխնիս քերելու ժամանակ չունինք, անդիեն Պրազիլիայի կայսրը աճապարանոք հեռագիր կը զարնե Բ. Դրան ազաչելով, որ յուր շնորհակալությունները հայտնե վեհ. Սուլթանին այն պատիվներուն համար, զորս գտած է Թուրքիո մեջ։

Շնորհակալ ենք Պրազիլիայի կայսեր երախտագիտական

զգայուհիներեն, որք արևելյան խնդրույն լուծումեն հաքն ալ կրնային հայտնվիլ։

Իրաց այս վիճակին մեջ՝ մեզի շնորհակալութիւն հայտնելը՝ հինգ վեց հոգիի հետ կռիվի բռնված մարդու մը բերեն քաշելով «քեզի խոսք մը ունիմ, անցյալ օր ձեր տունը ինձի եկած խահվեդ որչափ համով էր, շնորհակալութիւնս կը հայտնեմ» ըսելու կը նմանի։

Շնորհակալութիւնն ալ ունի կամ ունենալու է կարծեմ երբեն հայտնվելու ժամերը։

Ծարը բրդավ։

Հեռագրի մը խոսքին նայելով՝ Մոսկվայի մեջ ժողովուրդը խլրտիլ սկսած է։ Սպին անդին թուղթեր փակցուցեր են խնդրելով՝ որ իրենց ալ Օսմանյան Սահմանադրութեան նման Սահմանադրութիւն մը տրվի։ Տեզական ոստիկանութիւնն ալ առեք ձեզի Սահմանադրութիւն ըսելը ու շատ մը անձեր ձերբակալելը է։

Ի՞նչ կըսեք, մեր վիճակը սկսավ նախանձելի ըլլալ հեհե... Ռուսիան պարապ տեղը մեր վիճակը բարվոքելու կաշխատի։

Սըր Հենրի Էլիոթ[340]) անգղիական քաղաքականութեյան պոչեն բռնած՝ իրեն կը քաշե։ Մարքի սը Սալիսպըրին ալ անոր գլխեն բռնած՝ իրեն կը քաշե, հետևապես անգղիական քաղաքականութիւնը երկու թուրի մեջ մնացած է, որ կողմ դառնալը ինք ալ չէյտե։

Մարքի սը Սալիսպըրին՝ եթե մեր դեղահատները չկլլեք պատեբազմ հրատարակած կըլլաք, կըսե, Սըր Հենրի Էլիոթը նույն միջոցին Օսմանյան զրահավորները աչքե անցուներու կերթա. մին խոտութեյամբ կը վարվի մյուսը անուշութեյամբ։ արդյոք մեկը Անգլիո քաղաքականութեյան խիստ կողմին և մյուսն ալ անուշ կողմին ներկայացուցիչն է։

Ինչ որ ուզեն թող ըսեն Զերնայեֆի[341]) թշնամիները, մար-

դը մեծ քաջութիւններու գործեր է, յուր քաջութեանց ամենեն մեծը ի նպաստ գործոց հավաքած դրամը իր կոկորդն անցուներն է։

Ասկից աղեկ պատերազմ կըլլա, ասկից աղեկ հրամանատարութիւն կըլլա։

Ինքը ուրչափ քաջ, Սերվիո գործքերն ալ այնչափ տկար են հոգիը, եթե ասոնք քաջ ըլլային՝ թող չէրնա տար, որ այդ դումարը Զերնայեվիը հափշտակե։

Գանի որ քաջերը վարձատրել պետք է, բարկանալու չէ, երբ Զերնայեվիը ինքզինքը վարձատրած է։

Ո՞վ գիտե, Միլանին ալ բաժին հանած չըլլալը։

. .

Տոն Քարլոսնիս[342]) ալ մեկ երկու օրեն մայրաքաղաքս պիտի գա։

— Ի՞նչ ընելու համար։

Գալիս եկողը ինչ բանի համար կուգա. կամ Իյուլոհի հաւշտակելու համար, կամ պաշտելու համար։

Խելք ըներ ու հետը քանի մը տոն[343]) ալ բերեր...[344])։

1876

Խաղաղութեան երկյուղները կամաց կամաց վերանալ կը սկսին։

Խաղաղութեան հրեշտակները ամիսի մը չափ մայրաքաղաքիս մեջ ուռեցին, խմեցին և զվարճանալեն ետքը, քիչ օրեն պիտի մեկնին։

Մարքի ալ Սալիսպըրին հրաման ընդունած ըլլալով, որ քանի մը օրեն անպատճառ Լոնտրա գտնվին, շուտ երթալու համար հատկապես երկու շոգենավ բերել տվավ։

Իշնաթիեֆ[345]) զորապետն ալ յուր ճամբորդութեանը համար բերել տված շոգենաւներուն մեջ մտնելով՝ քանի մը օրեն պիտի երթա. եթե դեսպանաժողովը քիչ մ'ալ երկննար՝ Ռուսիո բոլոր պատերազմական նավերը մայրաքաղաքս բերել պիտի տար։

Գերմանիս կողմեն եկած — բարով խերով չգար — Տոք-

թոր Պոշն ալ, որ եփվելու վրա եղող սակարկութիւնը ավրեց՝ մեկ եղկու օրեն պիտի երթա։

Երթան բարյաւ, մեծապես շնորհակալ ենք, որ աղվորիկ մը պատահեցան Պոլիսը, Մեծ Կղզին երթալով՝ Պորտոյի գինիով ատրիտյա կերան. իրարու խնճույք տվին և դեսպանաժողովի մեջ վճռաբանեցին կեցուածքներու վրա։

Երթան բարյաւ, շնորհակալ ենք, որ իրենց լուսանկար պատկերը քաշել տալով՝ մեզի թողուցին, որպեսզի հիշենք զիրենք.— ուշ ափ ազեկ կըլլար, եթե իրենք ընաւ չգային ու լուսանկար պատկերին կամ այցեատոմսին գրկեին դեսպանաժողովին։

Երթան բարյաւ...

Սահմանադրութեան թնդանօթները Բրենս Շարլը Հոհենձոլերնի արժանապատուութիւնը վիրաւորեցին։

Բրենս Շարլը Հոհենձոլերն սահմանադրութեան քանի մը կէտերուն վրա դիտողութիւն ընելով հարցուց.

— Ծառազ ալ թուրքիո ինքնակալութիւնը կազմող գաւառներեն կը սեպվիմ։

— Հրամմեր ես, ատոնցմե կը սեպվիս։

— Ես չեմ ուզեր ատոնցմե սեպվիլ։

— Ես կուզեմ, որ ատոնցմե սեպվիս։

— Իմ Ազգային ժողովս մեծամասնութեամբ պիտի որոշէ, որ Բումանիա այդ գաւառներեն չսեպվիլ։

— Իմ Ազգային ժողովիս ապագա երեսփոխանները արդեն իրենց քուեով որոշեցին, որ Բումանիա ալ այդ գաւառներեն սեպվիլ։

Ասոնց վրդ կը սիրես, Բրենս Շարլը Հոհենձոլերն, դուն ա գլխուդուս փորձանք մը ըլլար. գիտես ա, թնդանօթներն են, ո հիմա քեզ կուտան։

Ձեմ հիշեր երազիս մեջ թե չէ, Փունջի մեջ կարդացի, ո Տրապիզոնի գեղքին քննիչ կալեգված Մարգարյան և Մելիքյա էֆենտիները, որք Տրապիզոն երթալով և իրենց հրատարակած հոն վավերական գործողութիւններով հաստատելով՝ քանի մը շաբա

առաջ մայրաքաղաքս դարձած են, իբրև զրպարտիչ պիտի պատ-
ժըվին եղեր։

Եթե առաջուց գիտնայինն մեր պաշտոնակիցները, որ դեպք
մը հատատառող իբրև զրպարտիչ կը պատժվի, անշուշտ չէին
աշխատիր իրենց գրածն սպացուցանելուս

Դաղջը է մեզ հուսալ, որ քաղեհնամ կառավարութեյան
կոչմև թող կը տրվի մեր պաշտոնակիցներուն՝ երկրորդ անգամ
Տրապիզոն երթալ և աշխատիլ, որ գրածնին սուտ հանեն։

Գոհութեյամբ կիմանանք, որ լրագրաց բուլը պիտի վերնա։
Իսկ եթե չվերնա՝ որոշած ենք մեր թերթերուն յուրաքան-
չյուրին երկերկու բուլ փակցուներ։

Նախ՝ գանձուն մեծ ծառայություն մը մատուցանելու հա-
մար, եթե բուլի նպատակն է գանձը հալստացնել։

Երկրորդ՝ մեր արժանի պատիժը կրելու համար, եթե բուլի
նպատակն է խմբագիրները պատժել։

Եվ այս ծառայութեյանց փոխարեն ինքզինքնիս ընտրելի
պիտի առաջարկենք գեւմարելի երեսփոխանական ժողովին։

Շատերը կը հարցունեն մեզ, թե այս տարի նոր անօրի-
նութեյուն մը չպիտի ընենք թերթերնուս նկատմամբ,

կատաչենք, որ այս հարցումը չընեն մեզ, որովհետև եթե
նոր անօրենութեյուն մը ընել հարկ ըլլա՝ թերթերնիս դադրեց-
նելու անօրենութեյուն մը ընելու պիտի պարտավորվինք։

Երեք զավեշտական թերթ գոգրեցան առ ի չգոյե ընթեր-
ցողաց և կը հուսանք, որ Թատրոնը չորրորդը և վերջինը պիտի
ըլլա։

Թերթերնուս պարունակութեյանցը մասին դիտողութեյուններ
կըլլան. իրավացի են այդ դիտողութեյուններըս։ Մենք ևս կզգանք,
որ Թատրոնը շատ թերութեյուններ ունի և չհրատարակվիր այն-
պես, ինչպես որ կը փափաքի Թատրոնի խմբագրութեյունը։

Բայց այդ թերութեյանց պատճառը խմբագրութենեն ավելի
ժողովրդյան քիչ ընթերցասեր ըլլալն է։ Եթե մեր ազգայինք
ընթերցասիրութեյան մեջ քիչ մ՚ալ առաջ գացած ըլլային, կըր-

նային զավեշտական ընտիր թերթերու տեր ըլլալ և թող չտալ որ օտար թերթերէ ծաղրանկար մուրալու չափ խոնարհեինք։

Ասով չենք ուզեր մեր ազգայնոց սիրտը վիրաւորել, այլ ճշմարտութիւնը խոստովանելով՝ ցաւոք սրտի ծանուցանել, որ մեր բաժանորդաց պարտքերնիս վճարելն հաքը՝ պիտի ստիպվինք թերթերնիս դադրեցնել, հետանալ այս տապարեզեն՝ որ մէ շատ անտանելի ըլլալ սկսաւ։

Այս առթիվ կը ծանուցանենք, որ այսօրվընէն բաժանորդագրութիւնը դադրեցուցած ենք. նուէրնախ նորին թերթ ղըրկելը պիտի դադրեցնենք այն բաժանորդաց՝ որոց պայմանաժամը կը լրանա[346]։

1877

Վահ, վահ, վահ...

Իննաթիւեին սիրտը կոտրեցինք...

Դեսպանաժողովին առաջարկութեանց չընդունելուն վրա ինչքան արցունք թափեց խեղճը...

Իննաթիւեի կայր ի սուգ անմխիթար ընդ չու դեսպանաժողովո և չարաբաստիկ առվշին թվերնմա դեսպանութիւն[347]։

Շատ ցավեցա, կըսե Բ. Դրան յուր վերջնագրով, դեսպանաժողովո առաջարկութիւններն չընդունելուն վրա. չհուսացի, որ ինձի պես մտերիմ բարեկամի մը խոսքերը մերժեիք. բայց որովհետև մերժեցիք, ալ ուրիշ բանիք չմնար ինձի, բայց միայն ազոթել, որ այդ ըրածնուդ վրա չզղջաք։

Ցավակցութիւն հայտնելն հաքը՝ պատասխանատվութիւնն ալ մեր վրա կը ձգե, ճիշտ այն մարդուն պես՝ որ ուրիշի մը իրավունքը կապտել ուզելով կըսե անոր.

— Քու բարեկամութիւնդ համար կառաջարկեմ, որ տունդ իմ վրաս զարձունես։

— Ինչու՞։

— Որովհետև մարդկութիւնը այսպես կը պահանջե, որովհետև քու տունդ ինձի պետք է։

— Ինչու՞ համար։

— Ինչու՞ համար... Տեր ողորմյա, քրիստոնեից վիճակին բարվոքման համար։

— Չեմ ընդունիր։

— Առանկ է նե՝ պատասխանատուվութիւնը քու վրադ կը ձգա. ես անմեղ եմ աշխարհի առջեւ։

Ի՜նչ անմեղութիւն...

Հա, հա, հա, հա, հա, հա...

Երբեք այսչափ խնդացած չէի կենացս մեջ... Հասկցաք, ինչու համար կը խնդամ կոր։

— Լրագրի քաղաքական հոդվածներեն մեկը կարդացած ըլլալու ես։

Ձեմ լար կոր, ընթերցող, կը խնդամ կոր։ Ծեսեք ինչու կը խնդամ կոր։

Մեր կառավարութիւնը բոլոր դեսպաններուն մեյ մեկ ոսկեզօծյալ Սահմանադրութիւն նվեր ըրեր է։

Ի՜նչ աղվոր պատասխան դեսպանաժողովո առաջարկութեանց...

Հիմա՝ այս դեսպաններուն յուրաքանչյուրն իրենց կառավարութեան ներկայանալուն պես իրենց պիտի հարցվի։

— Ի՞նչպես եղավ, որ չհաջողեցաք բանի մը կապելու ձա խնդիրը։

— Մինակ մը կա կապվելու...

— Բան մը չկրցիք ձեռք բերել։

— Օսմանյան կառավարութիւնը մեզի մեյ մեկ հատ ոսկեզօծյալ հապ... հապը ինչ էր... ոսկեզօծյալ Սահմանադրութիւն տվավ։

— Ուրիշ։

— Ուրիշ բան մ'ալ չտվավ։

— Ա՛յ, անպիտաններ, այ, այսչափ ծախք ըրինք ձեզի հոն ղրկեցինք նե՝ մեյ մեկ սահմանադրութեան տետրակ առնելով Ձա դառնալու համար էր։

— Ա՛ռ ալ չոար նե՝ ինչ պիտի ընեինք։

— Ըսել կուզեք, որ առով շառանանք հիմակուհիմա՝ Միսաֆիր ումտուղութեու եմմեզ, պուլտուղութեու եր կըսեն, հա[348]։

— Ա՛ռ քիչ կուգա նե՝ երթամ Սահմանադրութիւն մ'ալ առնեմ դամ...

Ինքզինքնին փիլիսոփա կարծող սա եվրոպացիներուն ձեռքը մեյ մեկ Սահմանադրութիւն թխմելով տեղերնին ղրկելնիս խնդալու բան չէ՞... դոնե առժամանակյա կերպով։

Եվ սա մարդոց մայրաքաղաքես երթալը շատ ալեկ եղավ, հոս եղած առևտրին կարծես նեղություն մը կը տիրեր Պոլսո մեջ։

Ասոնց երթալն անմիջապես հաքն էր, որ սաստկացուներ հոգմերը դուլ և անձրևները դադար առին. սա մարդիկ թող չէին տար, որ արևը և լուսինը իրենց տպարանքեն դուրս ելնեն։ Ասոնց օրոնի էր, որ կամուրջը առավոտները մեկ երկու ժամ կը բացվեր և հասարակություն ետ կը ձնար. թող չէին տար առոնք, որ կամուրջը գոցվի և ամեն մարդ գործը նայի։

Ասոնց օրոնի էր լրագրաց վրա բուլ դրվեցավ... կարծեմ սխալ ըսինք... բուլր առաջ էր... վերջապես ասոնց օրոնի չէ՞ր որ հացագործները օր մը մեզի անոթի պահեցին...

Ասոնց երթալն անմիջապես հաքը բանսալիտե ալ սկսավ օդապարիկի պես բարձրանալ, եթե այս մարդիկը հոս չգային՝ հավանական էր, որ քոնսոլիտը մինչև քառասուն բարձրանար։ Թող չէին տար խեղճը։ Բոնսոլիտը իսկավ. այո, շատ իսկավ, բայց անպատճառ պիտի բարձրանա օր մը, քանի որ ինքզինքը պղտիկցնողը մեր բարձրացած է և կը բարձրանա։

Եկավ վերջապես Տոն Քարլոսը... Սպանիո գահը նոսեելու համար այնչափ արյուն թափել ավող Տոն Քարլոսը... և պարապ տեղը աշխատող Տոն Քարլոսը... գլխուն մեջը դրածը կատարել ուզող և չկրցող Տոն Քարլոսը։

Ա՛հ, օր մը փողոցի մեջ սըվոր հանդիպեի և երկու ականջներեն քաշելով հարցունեի.

— Ա՛, Տոն Քարլոս, ինչո՞ւ պարապ տեղը, անբերավ տեղը այսչափ մարդոց արյունը մաար. ինչո՞ւ։

Այո, հարցունեի, և եթե գոհացուցիչ պատասխան մը չառնեի՝ բռնեի գլինքը լայն տոնի մը մեջ խոթեի. տոնին քերանն ալ ապրլոլիկ մը գոցելով մեջը խղդեի, որ տոնի մեջ Տոն մը տեսնալ ինք և Սպանիացոց ալ տոն մը ցցուներ...[349])։

1877

Անգղիս թագուհվույն խոսած ճառեն բան մը հասկցաք։ Թագուհին մեծ ցավ զգացեր է եղեր դեպանաժողովո ա-

պարդյուն ըլլալուն վրա։ բայց չհայտնել՝ թե այս ցավը մարմնուն ալ կողմը կզգա, որպեսզի պետք եղած դեղերը ղրկեինք ու ցավը անցուներնք։

Թագուհին հուլս հայտներ է, թե եվրոպական տերութեանց միաբանութիւնը պիտի հաջողի առանց պատերազմի վերջ տալ արևելյան խնդրուն։

Թագուհվուն այս խոսքերուն ականջ կախեինք։

Ֆառասուն տարին անգամ մը կինկան խոսքը մտիկ ընելուս է, կըսեն։

Լավընթ Հերբլտին[350]) գրածներին ալ բան մը կը հասկնաք կոր։ Շիտակը ես բան մը հասկցած չունիմ և հասկնալիք ալ չունիմ։

Ֆանի մը օր առաջ Միհտաթ փաշան[351]) ծանր հանցանքներով զարդարելով անոր աքսորվիլը կիմացուներ։ քանի մը օր եաքն ալ՝ կսկսեր սա պես գրել։

Միհտաթ փաշային դուրս ղրկվիլը աքսոր չհամարվիր։

Պատիժ ալ չհամարվիր։

Առժամանակյա կերպով Եվրոպան պարեելու գնաց։

Նորին պիտի վերադառնա, կայլն։

Լավընթին այս խոսքերին ես սա կը հասկնամ, որ Միհտաթ փաշա՝ Տերութեյան մեծ ծառայութեյուն մը մատուցած ըլլալուն համար՝ ի վարձատրութեյուն յուր աշխատութեյանց, օգտակարութեյան համար Եվրոպա ղրկվեցավ։

Սրդ, ըստ Լավընթինին, ով որ Տերութեյան ծառայութեյուն մը մատուցանե, Եվրոպա պիտի ղրկվի օգտակարութեյան համար։

Լավ, Միհտաթ փաշային զատ Տերութեյան օգտակար ուրիշ փաշաներ ալ կան, ինչո՞ւ այդ խեղճերը հոս պահել և վհատեցուցնել, զանոնք ալ Միհտաթ փաշային հետ մեկտեղ ղրկելու էր։

Բայց գլուխ կելլա՞ այս դործը, վերջին վաշաներուն ամենն ալ մեկիկ մեկիկ դուրս ղրկել պետք պիտի ըլլա, որովհետև ամենն ալ ծառայութեյուն մատուցած են, կամ պիտի մատուցանեն։

Ի՞նչ ըսիր, Լավընթ եղբայր, չըլա որ դուն ալ Անդլիո մեծ ծառայութեյուններ մատուցած ըլլալուդ պատճառավ օգտակարութեյան համար հոս ղրկված ըլլաս։

Պատասխան տուր, եթե չունես Լա Թյուրքիեն փոխառութիւն մը ըլլի, ինչպես չունի, Լա Թյուրքին այնչափ փոխառութիւն ըրած է քեզմէ։

Լեվ՛նթ... Լեվ՛նթ...

Այս Հավասս և Պորտեանո[352]*) ըսված մարդկերը իրարու հետ մըցելու համար, այսինքն լուրերը շուտ տալու համար, շատ անգամ մեզի սուտ լուրեր կուտան կոր, և մեր Մեծ. խմբագիրներըն ալ ապուշի պես կը հավատան ու կը հրատարակեն կոր։*

Հեռագիրը անցյալ օր լուր բերավ, թե Ս. Պապը վերջնական կերպով մեռավ — որովհետև այս Պապին մահը մեր դեպանաժողովո վերջին նիստերուն կը նմանի, մինչև այսօր հարյուր անգամ մեռավ — օր մը եաքը լուր եկավ, թե Ս. Պապը չմեռավ։

Ասոր պատճառն այն է, որ Ս. Պապը քիչ մը հիվանդացած ըլլալով՝ Հավասս Պորտեանոյին առաջ լուր տված ըլլալու համար դայն մեռած հրատարակեց, առանց մտքեն անցունելու՝ թե Ս. Պապը կընա դինքը պզտիկ ձգել։

Հավասին մեկ ուրիշ գործն ալ պատմեմ, որպես զի հասկընաք, թե այս մարդը լուրերը շուտ տալու համար՝ ինչ հանդըգնութիւններ կընե։

Սերվիո մեջ գտնվող այս Հավասին գործակատարը, Հերսեքի ապստամբութիւնն տաք ժամանակները, իմանալով, որ Միլան իշխանին տիկինը հղի է, կելլա օր մը իրեն կերթա։

— Իշխանուհի, կըսե, ձեզի բան մը պիտի ազաչեմ։

— Կրնաք ազաչել։

— Ներեցեք, ընեվիք հանդդնութիյանս, բայց մեր գործը կը պահանջե, որ քիչ մը հանդուգն ըլլամ։

— Ի՞նչ կուզեք։

— Ձեզի բան մը պիտի հարցունեմ։

— Հարցուեցեք։

— Իշխանուհին ինքը պիտի հաճի աշխարհ բերել յուր զավակը։

— Կը կարմըցնեք զիս։

— Կազաչեմ, ըսե՛ք... կը վախնամ, որ Պորտեանոն ինձմե առաջ կուտա այդ լուրը և ես հացես կը զրկվիմ։

— Զարմանալի հարցում մը կընեք։

— Շատ երախտագետ պիտի ըլլայի ձեզի, եթե ըսեիք՝ թե քերելիք զավակներդ մանչ է, թե աղջիկ. թեպետև ձեզի համար մեծ նշանակություն չունի, բայց քաղաքականի կերպարանք ունի ձեր զավակին գալիք օրը առաջուց գիտնալը։

— Բանի որ քաղաքականի կերպարանք ունի, Միլան իշխանին հարցուցեք, քաղաքական խնդիրները ան ապեկպիտեր։

— Շատ լավ, կըսե ու Միլանին քովը կանչե շունչը։

— Կը խնդրեմ, իշխան, բարեհաճիք ինձ ըսել ձեր զավակին գալիք օրը, որովհետև բոլոր աշխարհի հետապիր պիտի քաշեմ։

— Շնորհակալ եմ, կը հուսամ, որ ամիսն մը կուգա։

(Ինչպես եղեր է, որ Միլան կորչաքոֆին չհարցուցած վըճռողական կերպով պատասխան մը ավեր է, որովհետև կորչաքոֆին չհարցուցած՝ բան մը չխոսիր)։

— Կրնամ՝ վստահ ըլլալ ձեր խոսքին և իբրև սուրբ պարբյուրեր քաղված լուր մը ըմբռնել ձեր ըսածը, չըլլա՞ որ խաբեք գիս, իշխան։

— Վատահ եղիր։

Ամիս մը վերջը Հալաս հետևյալ հեռագիրը կուտար. «Միլան իշխանը զավակ մը ունեցավ։ Եվ այս հեռագրեն չորս օր հաքը Միլանը զավակ մը կունենար։

Հասկցա՞ք հիմա այս մարդոց հանդգնությունները։

Տանիկնիկի տախ, տախ, տախնիկի ո՛ւխ,
Բարասրգ տա գալտըք, վախ, վախ, վախ.[353])։
Աւոր վ՛իրջը…

Գիտի մը աստեն ի վեր գլուխնիս ուռեցավ այս երգեն. չկա մեկը, որ առատն ելնե և Նարեկ[354]) կարդալու պես այս խաղը չկանչե։

Ծողովուրդը մեծ սիրով կը կանչե այս խաղը, մեծ սիրով ալ մտիկ կընե — բացի գանձուց պաշտոնյաներն։

Բոլոր խնճուքներու մեջ, երեկույթներու մեջ այս խաղն է, որ կը կանչվի. շատ հավանական է, որ մոտերս եկեղեցիներու մեջ ալ երթվի այս խաղը, որ տալի կը նմանի, մանավանդ՝ որ թուրքիո հասարակաց կարծիքը կը ներկայացնե։

Այո, բարասրգ գալտըք վահ, վահ, վահ և ասանկ կերթանք

նէ՝ բարասըզ տա ֆալաճադըզ, ոչ միայն բարասըզ տա ֆալաճադըզ, ոչ միայն աճ ֆալաճադըզ այլ, այլ, այլ նաև աճ ֆալաճադըզ[355]։

Ճարտասանական ձև մը գործածենք խոսքին սաստկություն տանք ըսինք, բայը միացինք, ուրիշ աճ ֆալմագնե ավելի ծանր բան մը չկա, որ գրենք։

— Ինչո՞ւ չկա... չըպ|աֆ ֆալաճադըզ[356]։

— Կառավարությունը թող չտար, մուհիլը էտեպ է[357]) չըպ|աֆ չենք ճար, բայց հագված ալ չենք կրնար ճար։

— Ի՞նչպես պիտի ճանք անանկ է նէ՝ — Ինչպես... չիյտես... Տերողորմյա[358]։

Մնամք խորին հարգանք*)

1877

Կովկասյան ճակատամարտ.— Վանա սահմ սաստկացաց և պահապանաց ճամբելին և անոնց տեղ հայոցմէ ոսոխիկան ու պահապան դրվիլը.— Մեծ բարեկարգիչ մը.— Հրազրական ասպարեզին մեջ տոլանաբրճի մը.— Նեղկատակ մարգարե մը։

Վերջապես հաջողեցանք մեր ծիծաղը զսպել, և այսօր կուգանք, ինչպես արդեն խոստացած էինք, ինքզինքնիս պաշտպանել Հրազդի[359]) երեքշաբթի ավուր թվույն հարձակմանցը դեմ[360])։

Թերևս հարցվի մեզ, թե ինչպես հաջողեցանք Հրազդի այն հոդվածին վրա խնդալնիս բռնել։ Կը պատասխանենք, որ խելքեմաքե չանցած մի ջոջայ մը մեկին ի մեկ խնդալնիս անցավ։ Հրազդի թարգմանությունները կարդացի, լավ եկավ և խնդալս անցավ։

Առիթեն օգուտ քաղելով բժշկաց մասնավորապես կը հանձնարարենք Հրազդի թարգմանությունները՝ որք կրնան անսխալական դեղ ըլլալ այն սաստիկ հիվանդությանց, որ շարունակ խնդալ կը պատճառեն մարդոց։ Հրազդիը կրնա առաջին թերթ մը ըլլալ խնդեցրու համար և կը ցավինք, թե ինչպես Մոնճերիի տեսութենեն վրխակը է Հրազդիը և անոր խմբագիրը։

---

*) Անոթության մեջ։

Նիկողոս մարգարեն, ինչպես որ հայտնի է, ժողովրդին դրամ հավաքելու համար՝ անցյալները Երևանեն քանի մը նամակ առանալով Կովկասեւ մեջ ապատամբություն մը հարուցած էր Ռուսիո կառավարության դեմ, և այդ ապստամբության շնորհիվ քանի մը լրագիր կըցած էր կլլեցնել ժողովրդյան։ Այս Նիկողոս մարգարեն նկատելով՝ որ լրագիրը ժողովրդյան կլլեցնելու համար գլուխոր սուտեր հրատարակել պետք է, 15 մարտ երեքշաբթի օրը հետևյալ հոդվածը կը հրատարակե.

«Վանեն գրված նամակե մը հետևյալ գոհացուցիչ տեղեկութիւնն ի՛ն առանալով՝ կը փութամք մեր ընթերցողաց հաղորդել»։

Աղաբեկյան Մարկոս[361]) էֆ., որ Վանա կուսակալին խորհըրդականն է, յուր պաշտոնատեղին հասնելուն պես՝ իսկույն փութացեր է հարկ եղած անմիջական բարվոքմանց ձեռնարկելու։ Բազաքի բոլոր տաճիկ ոստիկանաց վրայեն զենքերն առնելով, իրենց տեղը ճամբըներ են իբր պարզ քաղաքացի, և ոստիկանության ինչպես նաև հասարակաց ապահովության և բարեկարգության պահպանության հսկողությունը հայոց հանձնվեր է, ասոնցմե նոր ոստիկանություն մը կազմվելով, և զենք — սուր և բըլնդըքը — տրվելով այս նորակազմ հայ ոստիկանաց։ Գիշերվան պահապաններն ալ՝ որք տաճիկ են եղեր՝ ասոնց տեղ նույնպես զինվորյալ հայեր դրվեր են»։

(Տես Լրագիր 351)

Թատրոն տեսնելով, որ Նիկողոս մարգարեին այս ընթացքը պարզապես տղայնտրրնիություն է, և եթե լրագրական ապարեզին դուրս ըլլար՝ իբրև տղայնտրրնի մը կը պատժվեր, քիչ մը կամթեել արժան դատեց Նիկողոս մարգարեն հետևյալ տողերով.

«Մեր երկիրը բարեկարգվելու համար Նիկողոս Թյուլկենճյաննեւրու պետք ունի, հետևապես երկիր մը չը կրնար բարեկարգ վիճակի վերածիլ, եթե չունենար իր մեջ Թյուլկենճեի մը»։

«Իմացանք, վանա մեջ Թյուլկենճյանի ըրած բարեկարգություններեր։

«Նախ և առաջ քաղքին բոլոր տաճիկ ոստիկանաց ձեռքեն զենքերն առեր է, և հայոցմե նոր ոստիկանություն մը կազմելով՝ հասարակաց ապահովության ու բարեկարգության պահպանությունն ու հսկողությունը ասոնց հանձներ է։ Երկրորդ՝ զի-

չերվան բոլոր տաճիկ պահապաններն ալ ճանըթեր և անոնց տեղը հայեր դրեր է։ Երբոր՝ պատվեր հրամանի տվեր է, որ 12-են հաթը խանութները գոցվին և դուրսը մարդ չդնավի»։

• «Կեցցե Թյուլկենճյան էֆենտին»։

«Մ. Ազաբեկյան էֆենտի վան հասնելուն պես՝ այս բանակարգութիւններն ըրեր է, կըսե Լրագիր։ Իսկ մենք կըսենք՝ թե Ազաբեկյան էֆենտի վան չհասած ըրեր է այդ բանակարգութիւնները, որովհետև հիշյալ էֆենտին հազիվ այս օրերս հասած է հոն»։

«Ուրախ ենք, որ Կովկասյան պատերազմին հեղինակը այս անգամ ալ վանը բարեկարգեց, երանի թե քիչ մ'ալ ինքզինքը բարեկարգեր... և սքեհյուլասիոնի եղնելու համար յուր ընթերցողները չխաբեր...»[363])։

(Տես Թաւրոն 241)

Նիկողոս մարգարեն այս կամիթին վրա փոխանակ կարմըրելու և լուռթյամբ յուր հանցանքը խոստովանելու՝ կը կատղի, ինչպես որ առյանաըբճի մը կը կատղի երբ կը ձերբակալվի, և մեկ կողմեն հայհոյելով մյուս կողմեն փախչելով հոգված մը կը հրատարակե Լրագրի 357 թվով։

Ի խայտառակություն մեր խեղկատակ մարգարեին, կը պարտավորվինք բառ առ բառ հրատարակել անոր այն հոգվածը՝ մեր պատասխաններովը ընդմիջելով գայն։ Ահավասիկ.

«Կը թվի թե Թաւրոնն ալ, Նոր Դարու ախտեն պլշակեւով՝ Լրագրի կամիք մը տալ ուզեր է, ախորժը հագեցնելու համար։ Վանա բարեկարգութիւնները ծանուցանելուն մեջ Լրագրի առաջինն ըլլալը շատին փորը ցավ ձգած ըլլալով, զարմանալի չէր, որ Թաւրոնն ալ այդ երկունքին բռնվի, քայց գոնե ասկե ավելի հիմնավոր առարկություն մը կսպասեինք, քան թե տեսնել դինքը՝ որ Նոր Դարու խմբագրին հետ իմաստակության մասին մրցելու եղնե»։

Թաւրոն ոչ թե Նոր Դարու ախտեն պլշակվելով Լրագրի կամիթ տալ ուզեց, այլ Լրագրի առյանաըբճիության ախտեն մյուս խմբագիրները զգուշացնելու համար կամիթեց Լրագիրը։ Թաւրոն զավեշտական թերթ ըլլալով՝ նամանավանդ ամենօրյա չըլլալով՝ չկրնար լուր տալու մեջ առաջնության ունենալ, ուրովհետև յուր պաշտոնը լուր հաղորդել չէ, այլ տրված լուրերուն մեջեն ծաղու արժանի եղողները, ինչպես օրինակի հա-

մաբ՝ կովկասյան պատերազմը, վանա մեջ տաճիկ ոստիկանաց հանդիմելը ծաղրել է։

«Զավեշտական թերթերուն ակնարկություններն ու դիտողությունները պատասխանվո չեն արժեր, կըսեն»։

Այո, մանավանդ երբ Նիկողոս էֆենտի Թյուլպենճյանի հեղինակվի անանկ թերթ մը, թեպետև մեր մարզաբերին լուրջ դիտողություններն ալ պատասխանվո չեն արժեր։

«Ասի ստույգ է, երբ ակնարկության ու դիտողության նյութն ու առարկան զավեշտական է, բայց երբ այս ակնարկությունը դիտմամբ զոք անվանարկելու կամ հասարակաց կարծիքը մոլորեցնելով խաբելու կը ձգտի՝ հարկ է անպատասխանի չթողուլ, լուրջյունը պարտութենեն հառաջ գալով, ինչպես կըսեն առածը»։

Եվ ահա մենք ալ այս նպատակավ է, որ հոժարեցանք պատասխան տալ ձեր այդ հոդվածին. որովհետև երբ գրության մը, որուն նպատակն է մխիթարյան խարեբայությամբ առակ կորզել ժողովրդեն, հարկ է լուրջյուն չպահել այն առեն, թեպետև պարտությունը մեր լուրթենեն հառաջ գալով, ինչպես կըսեր առածը։

«Նոր Դարու խմբագիրն իրեն արժանի պատասխանն առավ ու դնաց լուրյան մեջ թաղվելու»։

Առաված լուսավորեսցե հոգին։

«Կը ՚ուսաբ թատրոնը, բայց ասոր ալ պատասխանելի առաջ՝ կուզեինք իմանալ նախ՝ թե թատրոն զորավոր փաստ մ՚ունի՞ ձեռքը վանա բարեկարգության համար սուտ է ըսելու, թե այս անգամ իրեն ալ հավեսին եկեր է Նոր Դարու մեջ թավալոլ իր պաշտոնակցին իմաստակության հետևելու, Լրագրի դեմ եղած անարդ նախանձու հարձակում մը երկրորդած ըլլալու համար»։

Այո, շատ զորավոր փաստեր ունինք։ Բայց քանի որ դուն պատասխանելե առաջ կուզես եղեր իմանալ այդ փաստերը, ես ալ կուզեմ որ պատասխանելեդ եառքը իմացունեմ իմ փաստերու իմ խոսքս պիտի ըլա. հապոն հառա՞ջ...

«Արդարև շատ դժվարին բան է թերթ հրատարակել ազատ ժողովրդյան մը մեջ, որ չունի ընտրողություն և որոշողություն»։

Շատ իրավունք ունիս, փառք տուր աստուծո, որ ժողովուրդը ընտրողություն և որոշողություն չունի. եթե ժողովուրդը այդ ըսածներդ ունենար՝ խեղճ մարդ, դուն խմբագրություն

կրնայիր ընել։ Միթե ժողովրդյան ընտրողութեյուն և որոշողութեյուն չունենալուն կենդանի պատկերը չես։

«Բայց իմաստակ խմբագիրներու մեջ միայն ալ ամենեն ավելի անտանելի և անհանդուրժելի բանն է»։

Այդպես է... մանավանդ իմաստակ խմբագրի մը հետ վիճաբանութեյան մտնելը ինձի ավելի ծանր կուգա։ Բնավ երբեք չէի զիջանիր այսպես ամեն մեկ խոսքիդ պատասխանել, եթե դու անամոթութեյանդ սահմանն անցնելով չդրդռեիր ժողովուրդը ինձի ըսել, թե քու պարտավորութեյունդ է ժողովուրդը այդ խարդախ լրագրի դգուշացնել։

«Վանա բարեկարգութեյանց վրա մեր աված տեղեկութեյանց անհիմն ըլլալը — ինչպես կը ջանային ցույց տալ նախանձորդք —»։

Ինչպես կը ջանային ցույց տալ ճշմարտախոսք։

«Հաստատելու համար, մեր այդ տեղեկութեյունները քաղած աղբյուրներեն դատ ուրիշ երկու նամակներ ալ ցույց տվինք»։

Ես ալ այնպես կը հավատամ, որ Վանա բարեկարգութեյանց վրա ձեր աված տեղեկութեյանց անհիմն ըլլալը հաստատելու համար է, որ այդ երկու նամակները ցույց տվիք, թեպետև ձեր միտքը հերքելու համար էր... խոսք չհասկնալդ դիտեինք, հիմա հասկցանք, որ խոսք չալ չես կրնար հասկցնել... դժբախտութեյուն դժբախտութեյան վրա... Ասոս նայինք Պարոն խմբագիր։

«Երկու նամակներ ալ ցույց տվինք այլ և այլ տեղերե այլ և այլ անձանց հասած, որոց մեկը փետրվար 16 թվականավ կըսեր՝ թե»

Փետր. 16 թվականավ ըլլալեն ետքը, ալ տարակուսյս չէր մնար, որ Լրագրի աված տեղեկութեյունները սուտ էին։ Ինչ որ է, Թողունք հիմա Նիկողոս մարգարեին մինչև հոս ըսածներն և առած պատասխանները, Ստեփան փաշայի պես խնդիրը ամփոփենք, որպեսզի ընթերցողք ադեկ մը թափանցեն Նիկողոս մարգարեին նախ՝ ստախոսութեյան, երկրորդ՝ հնաոս կռչման, երրորդ՝ փախստյան, չորրորդ՝ պարտութեյան և յուր երևակայական հաղթութեյան։

Նիկողոս մարգարեն կրսե թե «Վանա բարեկարգութեյանց վրա մեր աված տեղեկութեյանց անհիմն ըլլալը — ինչպես կը ջանային նախանձորդք ցույց տալ — հաստատելու համար (հերքելու համար ըսել կուզե) երկու նամակներ ցույց տվինք»։

Ի՞նչ էին Նիկողոս մարգարեին աված տեղեկութեյունները որոց համար սուտ են ըսինք։

Նիկողոս մարգարեն լրագրի 351 թիվով ըսած էր՝ թե Ազաբեկյան Մարկոս էֆենտին Վան հասնելուն պես քաղաքին բոլոր տաճիկ ոստիկաններն ու պահապանները ճանըկելով անոնց տեղը հայ ոստիկաններ ու պահապաններ դրած է։ Այլեւս, Այլեւս Մենք ալ Թատրոնի 241 թիվով երեւան հանած էինք Նիկողոս մարգարեին այդ տեղեկութիւնները։ Հիմա Նիկողոս մարգարեն կըսե, թե լրագրի ուած ե Թատրոնի սուտ հանած տեղեկութիւնները ստուգութիւնը հաստատելու համար, այսինքն Ազաբեկյան Մ. էֆենտիին Վան հասնելուն պես տաճիկ ոստիկանները ու պահապանները ճանըկելը և անոնց տեղ հայոց ոստիկան ու պահապան դնելը հաստատելու համար երկու նամակ ցուցց տվինք, որոնց մին կըսե թե, կըսե՝ Ի՞նչ կըսեն եղեր նայինք հիմա սա նամակները։ տեսնենք ինչպես կը հաստատեն Ազաբեկյան էֆենտիին վերոյիշյալ բարեկարգութիւնները։

Մտիկ ընենք։

«Որոց մին փետր. 16 թիվականով կըսեր, թե Վանա կուսակալը արդարասեր է և հայասեր է, թե ինչ ինչ նոր բարեկարգութեանց ձեռնարկեր է և բռնավոր տաճիկ երեւելիներն ալ պրկըն դնել սկսեր է։ (Հա, հա, հա) Մյուս նամակն ալ (հա, հա, հա) կարծենն ուզղյալ՝ այս շաբաթ որ Մասիս կը հրատարակե, որո մեջ ըսած է թե՝ (հա, հա, հա,) Վանա մեջ բարեկարգութիւնն ու ապահովութիւնը վերահաստատուեր է շնորհիվ նոր կուսակալին, որ իր անաչառ արդարասիրութեամբը և կորովի բռնավորութեամբը հաջողեր է մեծ ու փոքր բռնավորներն ու հարստահարիչները զսպել և մեր ազգայնոց շունչ առնել տալե։ Այս երկու վկայութիւններն բավական են հաստատելու թե մեր տված տեղեկութիւնները ստուգ են և հիմնավոր։

Շիտակը խոսելով՝ այս երկու վկայութիւններեն հայտնի կը տեսնվի, որ Ազաբեկյան էֆենտի Վան հասնելուն պես բոլոր տաճիկ ոստիկանաց ձեռքեն զենքերն առնվեր հայոց տրվեր են, Ամանաւոր զինելով պահապաններն ալ՝ ինչպես կըսե Լրագիրը, որք տաճիկ են եղեր, ասոնց տեղ զինվորյալ հայեր դրվեր են։ Մենք կը կարծենք, որ նմին Նիկողոս մարգարեն ամչնալու մեջ քիչ մը մոլություն ունենար, (մոլություն բառը գործածելուս համար մի մեղադրեր ոչ, ընթերցող, որովհետև չամչնալը խըմբագրաց ոմանց քով մեծ առաքինութեյուն կը համարվի) ոչ այս տողերը կը գրեր և ոչ ալ հետևյալները։

«Դալով Հայոցմէ դինյալ ոստիկան և գիշերային պահապաններ հաստատելու կէտին, որ շատին անհավատալի կերևի բոլոր վանեցիք ալ գիտեն և կը վկայեն այսօր, թե վանս հրդեհեն հետո կազմված հանձնաժողովո օրեն սկսյալ՝ տասնիկ պահապանաց հետ զինյալ հայ պահապաններ ալ ըլներ տվեր են մխաեղ կատարել հսկողությունները, Հայ ժողովուրդը վստահացնելու և բարեկարգության մասին տպահովություն տալու համար իրենց»։

Սուտ է ուրեմն տասիկ ոստիկանաց ճանըվիլը, սուտ է անոնց տեղ հայ ոստիկաններ դրվիլը, սուտ է նաև տասիկ պահապաններուն ճանըվիլը։ Ինչ կըսենք, Նիկողոս մարգարե՝ այս բոլոր ծանեցիքդ իրրև խոստովանանք ընդունելով աղօրմեցցիկ ըսե՞մ չէ նե տակավին պիտի համառիս։

«Ահավասիկ ասոնք են մեր ձեռքի փաստերը և ունեցած վկայություններս, պնդելու և հաստատելու համար, թե մեր տված այդ լուրն սուտ էր»։

Սուտ էր, ըսել կուզեք՝ թե տանոնք սուտ էր, բայց հիմա չէ։ Սակայն այդ լուրն ըսելով՝ ձեր լուրը հաստատել կուզես, հիմա լուրերն եղան երկու, ձերը որմե վկայությունն կը բերես կոր։ Տասիկ ոստիկանաց ու պահապանաց տեղ հայ ոստիկան ու պահապան դրվիլը սուտ է, թե քանի մը գիշերային հայ պահապան ընկեր տրվիլը սուտ է։ Ո՞րը սուտ չէ... Լեզո վախըստական... քիչ մ՚ալ խոսե նայինք, դբոսնունք։

«Բայց տեղ կամ ընդդիմաբանել ուզողներ կան եղեր, լավ տանոնուն գիտցած բանն է, թե Լրագիր վիճաբանութենեն խուսյ չտար, միայն թե տուկե ճշմարտություն և տուղղություն մը գա երևան. բայց վիճաբանության մտնելու համար ալ փաստի դեմ փաստ, վկայության դեմ վկայություն կը պահանջենք»։

Կեցցե՛ս, մենք ալ վիճաբանութենեն չենք փախչիր երբ օգտակար ըլլա այն, մենք ալ փաստի դեմ փաստ կուզենք, ինչպես նաև վկայության դեմ վկայություն։

Աբդ, տասիկ ոստիկանաց և պահապանաց տեղ հայ ոստիկաններ ու պահապաններ դրվելու լուրը, զոր մխիթարյան ժողովուրդը խաբելով անկե ատակ հավաստակելու համար տված լրագիրը, սուտ հանելու վկայություններ և փաստեր ունինք։

Նախ՝ բոլոր վանեցիք այսօր կը հերքեն տասիկ ոստիկանաց և պահապանաց ճանըվիլը ու անոնց տեղ հայոցմե ոստի-

կան ու պահապան դրվիլը։ Երկրորդ՝ տաճանինները դարու մեջ հրաշք չըլլալը մեծ ապացույց մ'է, որ այդ լուրը սուտ է։ Երրորդ՝ Լրագրի տածին պահապանաց ձեռ զինյալ հայ պահապաններ ալ ըսկեր տրվեր են խոսքը զորավոր փաստ մ'է Լրագրի այդ լուրը հերքելու։ Զորրորդ՝ ամենեն զորավոր և անհերքելի փաստս Լրագրի հանրածանոթ ստախոսությունն է։

Կը հրավիրենք, ուշ, ականջներ քաշելով կը բերենք հոս Նիկոդոս մարգարեն, որ կամ այս վկայութեյանց ու փաստերու դեմ խոսի, կամ ավելի բացահայտ կերպով խոստովանի՝ թե տաճիկ ոստիկանաց և պահապանաց ճանրվիլը սուտ է ինչպես նաև անոնց տեղ հայ ոստիկաններ ու պահապաններ դրվիլը։ Թե իր շահուն համար միայն տառնիկ սուտ մը հեղինակած է։

«Իսկ վերջանակ փաստի ու վկայութեյան, ցուցմ կամիքներս, անհամ կիցեր, ու Կովկասյան պատերազմին հեղինակ հայերի պես անտեղի սիտզոռներս տալը՝ զուտ խմաստասիրութեյուն մըն է, որ վիճաբանութեյան տեղի չթողուր, և զոր ուրիշ բանի համար զործած չըլլար թատրոնը՝ բայց եթե Նոր Դարու իր պաշտոնակիցը առանձին թողած չըլլալու համար խմաստասիրութեյան և նախանձոտութեյան կրկեսին մեջ»։

Չենք կրնար պատասխանել այս տողերուն, որոնք ուղղակի թատրոնի պարունակութեյան դեմ հարձակում ըլլալով՝ անոնց դեմ ինքզինքս պաշտպանելու համար պարտավոր պիտի ըլլանք ըսել, թե կամիքները ցուցմ չեն, կիցերը համեղ են. և մենք այս երկու խոսքը արտասանելու քաջութեյունը չունինք։ Թող այս տողերուն պատասխանե Նիկոդոս մարգարեն և մենք ի տեսություն ըսելով՝ վերջացնենք հոդվածնիս, որ բավական երկար եղավ և որ պետք էր այդպես ըլլալ լրագրութեյան և պաշտպութեյան արատ քերող թերթ մը խայտառակելու համար։

1877

Վերջին լուր

Լոնտոյեն Շաֆանս Հավասի մեկ հեռագիրն կը ծանուցանե թե Թուրքիան բարեկարգելու պաշտոնը պիտի հանձնվի Մեծ. Նիկոդոս էֆ. Թյուլպենտճյանի[363]։

Վանեն գրված նամակի մը, հետևյալ գոհացուցիչ տեղեկությունները ստանալով՝ կը վռազամք մեր ընթերցողաց հաղորդել։

Աղաբեկյան Մարկոս էֆ. որ Վանա կուսակալին խորհրդականն է, յուր պաշտոնատեղին հասնելուն պես, իսկույն փութացեր է հարկ եղած բարվոքմանց ձեռնարկելու Բաղաքին տաճիկ ոստիկանաց վրայեն գինքերն առնվելով՝ իրենց տեղը ճանբվեր են իբր պարզ քաղաքացի, և ոստիկանության ինչպես նաև հասարակաց ապահովության և բարեկարգության պահպանության հրամայողությունը հայոց հանձնվեր է, ասոնցմե նոր ոստիկանություն մը կազմվելով և զինք առեր և ըրվելվը — տրվելով այս նորակազմ հայ ոստիկանաց։ Դիշերվան պահապանները ալ՝ որք տաճիկ են եղեր ասոնց տեղ նուչնպես գինվորյալ հայեր դրվեր են։

Այս երկու վկայությունները բավական են հաստատելու, թե մեր ազգ տեղեկությունները ստույգ են և հիմնավոր։

Գալով հայոց գինյալ ոստիկան և գիշերապահ պահապանները հաստատելու կերպին, որ շատին անհավատալի կերևի, բոլոր Վանեցիք ալ դիտեն և կը վկայեն այսօր, թե Վանա հրդեհեն հետո կազմված հանձնաժողովս օրեն սկսյալ՝ տաճիկ պահապանաց հետ հայ պահապաններ ալ ընկեր տրվեր են, միատեղ կատարել հսկողությունները, հայ ժողովուրդը վստահեցնելու և բարեկարգության մասին ապահովություն տալու համար իրենց։

Ահավասիկ ասոնք են մեր ձեռքի փաստերն և ունեցած վկայություններս, պնդելու և հաստատելու համար, թե մեր ազգ լուրն ստույգ է։

Լրագիր թիվ 351

Լրագիր թիվ 357.

Նիկողոս մարզպետն եթե կը փափաքի որ այս դիակը մեջտեղեն վերնա՝ պարտավոր է ընդունել Թատրոնի առաջարկությունները՝ որք են.

ա. Եա կանչել վանա մեջ կազմել ուսած հայ ուսուիչանաց և պահապանաց խուռմբերը։

բ. Անմիջապես բարեկարգութիյանց սկսիլ իր Լրագրին ամեն հյուղերուն մեջ։

գ. Աստուածանիլ, թե մխիթայն չահու բարի նպատակով հրատարակած է այդ լուրը, ինչպես որ հրատարակած կը կալիքայան ապատամբութիյունը։

դ. Հաշտարերիյուն կինքել ամչնալ բայլին հետ։

ե. Աստուածանիլ գարձյալ, թե Թատրոնի համար գործածած կից բառը ավելի Լրագրին կը հարմարի, ինչպես նաև ազգ և համատակ բառերը։

զ. Ասաք ասել, որ մեյ մ՚ալ Ալեքսարերին, Հարյանն, Լեվանթին և ուրիշներուն բանագործութիյուն չպիտի ընե, ինչպես նաև տոլանմորընիութիյուն չպիտի ընե սատա լուրեր տալով հասարակութիյան։

Մինչև որ այս վեց առաջարկութիյունները չընդունի Նիկողոս մարդարեն՝ մենք ալ վերի դիակը չպիտի թաղենք [364])

1877

ԼՐԱԳՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ ՄԵՋ

— Ծրիչ, հոս եկուր։

— Ամբաղիր, հոս եկա։

— Երեկվան Թիլեն ճեաց։

— Ըրչամ կուտես... արդեն չծախվեցավ որ։

— Իրավ որ շատ ապերախտ է սա ազգը, ինչ բարիք որ ընես, չճանչնար։ Վան քաղաքին մեջ այնչափ բարեկարգութիյուններ ըրի, տաճիկ ուսուիչներուն տարին ալ ցրվիցի ու հայոցմեն ուսուիչներ կպտմցի, քանի մը տաճիկ ալ բռնել տվի տարից, և գարձյալ ազգը իմ ըլյամբս չդիտնար կոր։ Ո՞ր խմբագիրը տասնկ մեծ ծառայութիյուն մատուցած է ազգին։

— Ի՞նչ կրնաս ընել, մեր ազգն ալ տասնկ ազգ մ՚է։

— Եթե առջի օրվան ըրած բարեկարգութիյանս վրա քիչ մը քաջալերութիյուն գտնայի՝ այսօր ալ Մուշը կը բարեկարգեի։

— Ինչ օգուտ որ...

— Կովկասու մեջ հեզափոխութիյուն հարուցի, այնչափ բանտերը կպտմել ավի, և Ռուսիո զորաց տասկալիչ ջարդ մը տվի, քանչ վատակեցաւ։

— Այն օրերը բավական թեթեւ քշեցինք, երկար մը ընկերս:

— Այսօր ինչո՞ւ չկարենամ քշել:

— Որովհետեւ ժողովուրդը մեզ մը խարվեցավ, ալ չկրնար կոր մեր առաջարկն Սպարեկյանը ատ, նա ըսեր է վանա մեջ, գրած ես, մինչեւ այդ տողերը գրած ատենդ Սպարեկյանը դեռ վան հասած չէր:

— Ի՞նչ վնաս ունի, կրնար ըլլալ, որ հասած ըլլար:

— Ճամբկ ոսոխականներուն ուղ հայ ոսոխականները դրված են ըսեր ես, և պոչավոր աստ մը հրաստարակեր ես: Կարծեմ ազգը ոչ ապուշ է, ոչ ալ քու խաղալիքդ:

— Ի՞նչ ընելու է այս ազգին. ճշմարտութիւնը կը խոսիս չեն ուզեր, սուտ կը խոսիս դարձյալ չեն ուզեր:

— Ասոր դյուրին ճանրան կա, ոչ ճշմարտութիւնն կը խոսիս, ոչ ալ սուտ, բերանդ կը դոցես, բան մը չես խոսիր, և այն ատեն սեւ Լուսիկը ինչպես առաջ կ'երթա:

— Ահ պարոն, որչափ կը սիրեք հավկիթը, բայց ափսին մը երկաստարդի մը, որ թեթեւաբարո էր քիչ մը:

— Զգուշեք, որ նմանն դնմանն սիրի, պատահականեց ափսիոջ ամուսինը կրկաստարդին դատը պաշտպանելուն:

— Ի՞նչուռ առպրակը դուն կը տանիս կոր:

— Ի՞նչ ընեմ հապա:

— Համալի մը սուբ, թող տանի:

— Անցյալ տարի համալի մը ալի առպրակ մը, որ սուն տանի, առավ առպրակը դնաց, մեյ մ'ալ չերվցավ:

— Ո՞ւր էր թե այն առպրակին ուղ իմ կնիկս ըլլար:

ՁԱՐՆ ՈՒ ԾԱՈՐ

— Պարոն, կաղաչեմ, քիչ մը զավս պայիր ու ինձի նոր հավաստիաներ տայիր, դուն ֆրանսերեցա զգլխաներ կը կարգաս նոր բան մը կա՞ այսօր:

— Կա, մոսկվպասիոն տը Թրոպ կա Ռուսաստան:

— Ռուսաստան թմբուկը մի կա, ըսիը…

— Ա. մոն չեր, ըսել ուզեցի, որ զորքերը շարժման վիճակի մեջ են։

— Ա. ահվկնթլի, սանկ չըսես մի յա, ըսել կըլա՝ քի կռիվը մոտ է, հա՜…

— Զարին մանիֆեստը նայինք ինչ է։

— Որին մավի ֆեսը ըսիը… կարծեմ մավի բյուտքյուլ պլիսի ըսիը ան՝ յանըլմիշ եղար։

— Չէ, մոն չեր, մեր աչքը հիմա Զարին վրա ըլլալու է մնչա։

— Ո՞ր ծառին վրա։

— Տեր ողորմյա։ Զարին վրա ըսի ա, ձարը որիննն է։

— Ծառին վրա նայելով ինչպես կհասկցվի կռիվ ըլլալիքը, կամ չըլլալիքը։

— Անկից շուտ մը հայտնի կըլա։

— Ըսել է, որ այս ծառը շատ մեծ է։

— Ատ ալ խոռոք է։

— Ինչի՞ ծառ է։

— Տեր ողորմյա, Ռուսիո ըսինք յա։

— Ի՞նչ կուտա այս ծառը։

— Անցյալներըը բըռնծոքոլ մը չավիվ։ Իշտե ան ձարն է։

— Ես ոչ տեսա, ոչ ալ կիըա։

— Արդեն ուսվելու բան չէ, որ ուսեիր։

— Զյուբյուկ էր, ըսել է քի։

— Ալ չիյտեմ։

— Կտիվ ըլլա նե՝ այն ծառին վրա յաֆթամ կը փակցունեն սանքի։

— Չէ, անոր բերնեն կելնե, խաղաղություն կամ կռիվ…

— Այն ծառը բերանն ալ ունի։

— Տեր ողորմյա, բերան ալ ունի խոռոք է, ճիշտ ան ալ ինձի քեզի պես կը խոսի, կապրի, կը կարգվի, գավակներ կունենա։

— Հա, իրավ, անցյալներըը ատոտ կըսեր կոր քի, ծառերն ալ մեզի պես կապրին, ներեցեք սխալեցա։

— Մինչև հիմա ինչ կը հասկնայիք կոր Զար ըսելով։

— Ծառ ըսելով ինչ պիտի հասկնայի նե՝ ան, փառք աստուծո, լեռներն չեկանք ա, ծառին ինչ ըլլալը չգիտցող չկա, Թեպետև ծառ կա ծառ ալ կա. բացի ասկից, ծառ կա, որ խո-

Նայ տեղ կուգան, որ չսիրվին, ծառ ալ կա որ արևե կուգան, որ չհիարանան։ Ծառերը շատ կը սիրեմ ես, մանավանդ երբ որ ձյուղեր արձակեն՝ մարդը կը պահպանեն, միայն թե ծառեր կան, որոց հովանիւն տակ պառկիլ քնանալը թմրութիւն կուտա մարդուս։

— Բավական է, որ մարդս դուշանա և ամեն ձարը իրեն պաշտպան չճանչնա։

— Այ, եթե այսօր սուակ ուենեայի՝ տանս չորս կողմը ծառեր կը տնկեի։

— Ձեր մի կը տնկեիր, եթե այսօր սուակ ուենեայիր նե։

— Այսօր ըսի նե՝ հետեն այսօրվան համար չըսի յա, փեշերվարին կամ խասըմին կը տնկեի։

— Ախչիդ գլուխդ ժողվե, ձեր մի կը տնկեիր. դուն ձարին քանթալոնին բաչային մեկ կտորն անդամ չես կրնար ծախու տանիլ։

— Բանթալոնն մի... ձեր ծառերը բանթալոնն ալ կը հագնին կոր։

— Անոր մորուքին մեկ թելը պիւն չես կրնար տանիլ։

— Մորթեք ալ ունեն ձեր ծառերը։

— Ատ ալ ճո՞ւք ե, դուն ինչ կը հասկնաս կոր ազգեր, ձաբ ըսելով։

— Ինչ պետի հասկնամ, ծառ իշամե. պառուղ կուտա, տե՝ կուտենք նե՝ ան իշամե, դուն ինչ կըսես կոր յա...

— Ձար տեի Մոսկոֆին թագավորին կըսեն։

— Հայ ատամած պիլաղ ատ, ատիկա առաջ չըսեիր, երկու ժամ իրաւոք գլուխս չցավցուննինք նե չէ՞ր ըլլար երկու խոսքին մեյ մը մեկ ֆրանսըզմա բառ խոթելը ինչ պետի ըլլա, ճնճղ ապտլաթանք պետի քաշել ատա։

— Մե մոն շեր...

— Վազ անցնիլը, այ եֆենտիմ...

— Ձար...

— Ձարն ալ քեզի ըլլա, մոն շերն ալ... ատ ինչ պեհնատագ ձարդ է, ալե...

— Մի բարեհանաք, մոն ամի։

— Մնաք բարով ազա, մնաք բարով, մինակ դուն չես, քեզի պես շատերը կան, որ...

— Բարատն...

— Բարատնդ ալ գետնին տակը անցնի, դուն ալ... գնա

ուրիշին հետ խոսե՛... մենք ալ քեզմե հավատիս պիտի առնենք, հմե... երկու սահաթին պիրի ծառ մը բռնեցինք...

— Տեսա՞ր դուն ալ տաճկերեն բառեր կը գործածես կոր...

— Երկար ըրիր ա... խապահաթը իմինն է, որ քեզի պես մարդոց հավատիս կը հարցնեմ... մոդիլիա, Թրուլ, չիյտեմ ինչ, սանքի ատոր գնա՛ տուն շահե, կամ զավզավաթ ծռ ըսենք

— Ես ատանկ կը խոսիմ, կուզես նե՛

— Ձեմ ուզիր, այլ, հայտե գործդ գնա՛

— Ատիես [365]։

1877

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ

— Լֆենտի՛, քանի մը անգամ ըսի քեզի, որ այս վարպետը փոխենք։

— Ինչո՞ւ։

— Վրան գլուխը ադաուտ է, ոտաքները չեն կրնար կոր անոր կեցակուռները ուտել։

— Ավելի աղեկ ա՛, ատանկ վարպետ մը հիմա խունկով մոմով կը փնտռվի։

— Ինչո՞ւ։

— Անոր համար, որ քիչ կեցակուռ կուտվի։

— Ի՞նտոր ես, աղեկ ես, Մարկոս ագա։

— Շատ աղեկ եմ, արյուշնս մաքրելու դեղ կառնեմ կոր։

— Հիմա ծախս ընելու ատեն է մի յա։

— Չէ, ես ալ քիչ ծախս ընելու համար դեղ կառնեմ կոր։

— Ի՞նչպես։

— Բժիշկը ըսավ թե՝ եթե կուզես որ դեղը օգուտ ընե՝ հացը քիչ ուտելու ես։ Դուն ինչ կընես կոր։

— Հիմակուհիմա բան մը ըրած չունիմ, բայց միտքս կը փոխեմ կոր։

— Ի՞նչ պիտի ընես։

— Ի՞նչ պիտի ընեմ, ատանկ ծոմ բռնելեն ետքը գոնե քահանա մը կըլլամ։

— Սա ալ դեշ խելք չէ։

— Ի՞նչ կը մտմտաս կոր, բարեկամ,

— Ի՞նչ պիտի մտմտամ, գիշերները առանց լապտերի պտըտողները պիտի բռնեն տեյի գիտեի ամա, վրան առակ ունեցողներն ալ պիտի բռնեն տեյի չէի գիտեր։

— Ի՞նչ պատահեցավ։

— Ի՞նչ պիտի պատահի, առջի օրը, երբ կիսվան ժամը կեսին չանթայով տուն դառնալիքեն երկու հոգի գտա ելան, դիս բռնեցին, չանթա ձեռքես առին և վախան։

— Որչա՞փ առակ կար մեջը։

— Ցօթը հարյուր դուրուշի չափ։

— Ըսել է, որ առակով պտըտիլն ալ արդիւված պիտի ըլլա։ Գոզերը բռնվեցան գոնե։

—Փնտռվելու վրա են, բայց գտնվելու վրա չեն դեռ։

— Աստուծմե գտնամ, մարդ, պոթինները առեր ձեր տարեր ես։

— Գախալին տարի սա յաղը ասի։

— Սա յաղը պոթիններուս տեղը կը բռնե՞. սա յաղը կըբռնամ ոտքերուս դնեմ։

— Ես ալ պոթիններըը կրնամ տպայոց բերանը դնեմ։

— Ի՞նչ ըսել կուզաս։

— Ի՞նչ ըսել պիտի ուզեմ, հիմա ավելի տպայոց բերանը գրվիլիքին վրա մտմտալու ենք, քան թե քուիլեն ոտքերուդ գրվիլիքին վրա։

— Այս հաշվով վաղը շապկաս ալ պիտի ծախես։

— Շապկատ արդեն առջի օրը տարի ես։

— Իլավ, իլավ, իլավի՜ր...

— Հոս եկո՛ւր։

— Շուտ ըրե, իլավի՜ր, երթամ պիտի։

— Շուտ ընեմ, բայց կը խաբեք կոր, հին փտտած լուրերը նոր տեյի կուտաք կոր, աս ալ անոնցմե չըլլա։

— Չէ, իլավի՜ր, շուտ ըրե՜...

— Նայիմ, հավնիմ նե՝ կտռնեմ, (շուտ մը կարդալեն հաքը) ա՜ռ, բան չկա մեջը, ազնա՛ր։

— Բան չկի մի՜... առանց առակ տալու լուր առիր հիճե։

— Ամեն օր գոնե առանց լուր տալու սուակ կառնեիր, օր մ՛ոլ մենք առանց սուակ տալու լուր առնենք, ինչ վնաս ունի [366]։

1877

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Վիեննա 5 հոկտ.

Պոլսեայի արժեթուղթերը թուլցան։ (Տաքին անանկ կըլլա, յուբաը սկսի նե՝ նորեն կը կարծրանան)։

Բարիզ 6 հոկտ.

Նազադութիւնը հաստատ պահելու համար պետք եղած հաւաքը կը կարդացվին կոր։ Անհոգ եղիր։

Պելգրատ 6 հոկտ.

Մենք բան մը ըրած չունինք. տղաքները խելօք չեն նստիր վոր, դրացին տունը քար կը նետեն կոր։ Իշխանը խաղաղասիրական է։ (Ապրի)։

Լոնդրա 6 հոկտ.

Այսօր պանքային 2 միլիոն ոսկի մտավ։ (Անոր համար է, որ մենք այստեղ ոսկիէն երես տեսած չունինք ա)։

Պերլին 6 հոկտ.

Եկեղեցական առյանը եպիսկոպոս մը պաշտոնեն ձգեց։ (Մենք ալ հոս վեց ամսվան քահանայի մը փիլոնը պատժեցինք) [367]։

1875

Կորչաքոֆ իշխանը Բ. Դոնեն բացատրություն պիտի պահանջի՝ լուսնի խավարմանը համար։

Աքենք 28 փետր.

Լուսնի խավարման դիշերը քաղաքիս մեջ պղտություններ պատահեցան։

Կառավարությունը չնդոք պիտի ձնա լուսնի խավարման խնդրույն մեջ։

Փարիզ 28 փետր.

Դիվահ ազնատց ակումբներու մեջ չկարծվիր, թե լուսնի խավարումը խաղաղությունը վրդովե։

Լոնտրա 28 փետր.

Լորա Տերպի լսավ, թե կառավարությունը պատրաստվոր է լուսնի ամբողջությունը պաշտպանել, անոր ամբողջական խափանումն ևաքը [368]։

1877

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 5 մարտ

Կոիվը յորդանքի վրա է եղեր, Բարիզի դաշնադրությունը ավրվելու ըլա նե՝ Ռուսիա իր զորքերը խաղաղական վիճակի մեջ պիտի դնե։

(Ղրիմյան եղած ատեն չզսպվիր կոր նե՝ շղթաները ոտքեն հանեն՝ ինչպես կը զսպվի)։

Պերլին 5 մարտ

Ինչպես որ Լրագիր զուշակած էր, Իննաթիւնի զօրավարը այսօր ալ. Պիզմարքի հետ կը տեսնվի կոր, իրիկունն ալ Պիզմարքի տունը պիտի երթայ աչքին դիղ ընելու համար։ Ռասիլիք կնպատուներուն և խմիլիք ըմպելիքներուն տեսակները անմիջապես կիմացնեմ։

Վիեննա 5 մարտ

Կը հաւատայի, որ տաքերը սկսելուն պես, արևելյան խընդիրը քիչ մը լուծվի։

Աթենք 5 մարտ

Մեր քաղաքականութեյան չիլցանք ուղղութեյուն մը տալ։ Ինչ ընելիքնիս մենք ալ չենք գիտեր կոր։

Պուքրեշ 5 մարտ

Կըսվի, թե Ռումանիա Ռուսիո հետ դաշնադրութեյուն մը ըրած է, կըսվի նաև, թե տասանկ բան մը ըրած չէ։ Ըստ իս երկուքն ալ հավանական են, այն որ ավելի շահավոր ըլլա՝ Ռումանիա անոր պիտի հարի։

Հիմակուհիմա Ռումանիան ալ չգիտեր կոր բոնելիք ընթացքը։

Գանձուն պաշտոնյան հրաժարական ամամ անտուվիլին մեջ տասի չգտնվելուն պատճառով։

Լոնտրա 6 մարտ

Իննաթիւնի զորավարը ուր որ ուզե, թող հոն երթա, զորձերը թագուհվուչյան ուզածին պես պիտի կարգադրվին։

Նամարաք. Թուրքիո ամբասդրութեյունը պաշտպանելու պարտավոր ենք. վայ անոր, որ այդ ամբաստդութեյան դիմաց արտունել կուզե։ Մնաք բարով [359]։

1877

Վիեննա 6 մայիս

Ռուսաց զորքերը Քալաֆաթ մտեր խաղ կը կանչեն կոր։ (Թող կանչեն, վախն ալ պիտի պաշեն)։

Լոնտրա 7 մայիս

Անգղիա ճիշտ Եկեարին պես պատասխանեց Կոբշաքոֆի շրջաբերականին, հայտնեց՝ թե Եվրոպա համամիտ չէ Ռուսիո քանած ընթացքին։

(Ռուսիան ալ արդեն համամիտ չէր Եվրոպայի բռնած ընթացքին)։

Բարիզ 7 մայիս

Ֆրանսան խիստ չեզոքութիւն մը պիտի պահե։

(Ախտ չեզոքութիւնս... կերևա որ աչքերն ալ պիտի փոցի, որ բան մը չտեսնե)։

Պասրեթ 7 մայիս

Զրույց կա, թե Ռուսերը Պայազիտի ափերը կեն։

(Հավատալու չէ. որովհետև Պասրեթը այնչափ սուտ խոսեցավ, որ ճշմարիտ ալ զրույցն ևս՝ մարդ չպիտի հավատա)։

Լոնտրա 5 մայիս

Կըսվի թե լորտ Սալիսպըրի պաշտոնն պիտի քաշվի։

(Այս խնդիրը քոնֆերանսեն առաջ ընդը նե՝ ավելի ապեկ չէ՞ր ըլլար)։

Աթենք 3 մայիս

Կառավարութիւնը Բ. Դրան հետ միշտ բարեհամութեան մեջ է։

(Անանկ է) [370].

1878

Վիեննա 8 մայիս

Երեւույթին նայելով հզոր տերութեանց քաղաքականութեանը փոփոխութեան մը կրած է։
(Տար ատոմած որ վերջինը ըլլալ)։

Ս. Բեքթաուրկ 8 մայիս

Կարչաքոճ իշխանը չպիտի պատասխանէ Լորտ Տերպիի պատասխանին։
(Խոսք մը պակաս կըլլա)։

Աթենք 9 մայիս

Թուրքիա մեջ խռովութեան հանելու հանցանոք՝ քանի հոգի բանտարկեց կառավարութեանը։
(Ազդենք, որ կառավարութենն ալ օր մը այն բանտերն մեջ չմտնե)։

Պելգրատ 8 մայիս

Մեծ հուրմուզը կը տիրե հոս, անանկ խռմերը կը կաղմըվին, որք ծանր գնդեր հարուցանել կսպառնան։
(Փախչելու մասին ուրիշներու հետ մրցելու գնդերը թերևս)։

Լոնտրա 9 մայիս

Մանշի Անգլիական նավատորմը Մալթա պիտի երթա։
(կարևորութեան չունի, վասն ալ Մալթային կենեն Մանշ կերթա։ Օրինակները շատ են։ Այս հետադիմը չհայտներ, թե ետրա կատրաթըն դեռ կը խոսի կոր, թե լռեց)։

Պուքրեշ 8 մայիս

Թող Թուրքիան մեզի հետ թշնամաբար վարվի, մենք խոհեմութեանը ձեռքն չպիտի ձգենք։ Բայց եթե մեր այս ընթացքը բանի տեղ չդրվի՝ ան ատեն մեր երկիրը պիտի պաշտպանենք։

(Ընչաք ներողամիտ է նզիր Ռուսահայոց... յուր սահմանադրութիւնքեն առամբք կարձակվին և ինք կը ցուցուն թե խոհեմութիւնը ձեռքէ չպիտի ձգեն եղեր...)։

Թալթաֆ 8 մայիս

Երեկ վիրաւոն ամբակոծեցին մեզի, բայց վնաս մը չեզաւ, միայն առուն մը պատուհանին մեկ ապակին քիչ մը ճաթեցաւ։

(Եթե առաջուց խոհեմութիւն ընեյոլ այն պատուհանին թուղթ փակցուցած ըլլայիք՝ այս կորուստը չէիք ըներ)։

Բիշնեփ 2 մայիս

Մենք (Ռուսերը) շարունակ հառաջ էինքանք կոր առանց թուրքերու հանդիպելու։

(Դիմավորելու պիտի գայինք ձեզի)։

Երբերն բնակիչները (Ռուսահանիայիք) համակրութեամբ կը վարվին կոր հետերնիս։ Մենք Դանուբի երկայնութեամբը շատ մը դիրքեր բռնեցինք։ Թուրքերը բան մը ըրած չեն դեռ։

(Այնպես է, բան մը ըրած չեն նիք։ Դանուբը անցնել ուզած առենին պիտի տեսնեք մեր ընելիքը)։

Ծոզովըչան փորեն 8 մայիս

Հոս ալ պատրաստ է, կռիւ մը հայց առանց արգելքներու հանդիպելու շիտակ հոս կուգա կոր։ Սգիքները պաշարման մէջ են, հավանական է, որ քիչ օրեն կամ անձնատուր ըլլան կամ հրետանիներու փորերու մեջ պաշտոն վարելու հանձնառու ըլլան։ Հոս մեր մտցուցնելը արգելված է մինչև ցնոր կարգադրութիւն[371]։

1877

ՆՈՐ ՏԱՐԻ

Այս օրվան օրս չկա հայ մը՝ որ մեզի հետ համաղված չըլլա՝ թե երկու շաբթի օրը նոր տարի է, և թե նուն օրը ուրախութեան օր մ'էր ամբողջ ազգին համար։

Վայրկյան մը խոհելու ըլլանք նե՝ պիտի տեսնենք՝ որ ուրախանալու իրավունք ունինք։

Որովհետև, երբ անցյալին վրա նայվածք մը նետենք, պիտի տեսնենք տնտնկ օրեր՝ որ շատ երկնցեր են. և օրերուն երկնցալը տեսնելով՝ մենք ալ երկնցեր՝ պատիր ենք. և հիմա արթննալով՝ կը զարմանանք, թե ինչպես կրցեր ենք առտնկ քնանալով՝ գիտ ողջ ձմեր. և այս զարմանքը մեզ փերիբություն կը պատճառե։

Տարիները միշտ կը հոլովին տատնիկու հոլովի վրա, բայց ամենքը մեկ կերպով չեն հոլովիր, ոմանք կանոնավոր են, ոմանք անկանոն։

Մինչև հիմա հայերը անկանոն հոլովներըը կը հոլովեին. ապրենով ասուեծո, որ 1873-ը կանոնավոր հոլով մը ըլար մեր ազգին համար. սկսինք մեր բարեմաղթությանց։

Սրբազան Պատրիարքին՝ առողջություն կը բարեմաղթեմ։

Թաղաքական ժողովին՝ Պրուսայի անձնակ հավատ մը։

Փոխանորդ հոր՝ ամուսիններուն բաժնվողներ։

Փոստաբաններուն ալ՝ երկու անգամ երկու ինչ կընան չդիտցող վաճառականներ։

Թրամվեյի ընկերության՝ մատակարարման օրեր։

Գերեզմանական խնդրույն [372]) բարի ճանապարհություն։

Սնանկանալ փափաքողներուն՝ դյուրին միջոցներ։

Շատ խոսելու փափաք ունեցող երեսփոխանաց՝ խոսելու ունկնդիրներ։

Բժիշկներուն՝ քալերա։

Հայրենիքին՝ [373]) կղերին օրհնություններ։

Փունջին՝ ատուեծո շնորհքը։

Մանդուխին «...գամ մնքենափիղե պիր լիրա ինան լեթափղինի մաթևնգքիւրի ադիմ» ներ [374])։

Ազգային պատուոց վճարումը՝ Զաքար աղային առնելիքին հետ մեկ բարձի վրա ծեքանան։

Սահմանադրության վերաքննությունը ատենի շատ տալնեներու հասցնեն։

Կաթողիկոսական խնդրույն տեր ատենի երկար օրեր պարգևեն։

Ով ատենի, սա խնդիրներու վրա ժպիտ մը չպի՞տի կըբերեմ քաղել քու պեռեթներդ [375])։

1873

ԿԵՂԾԵՆ ԶԳՈՒՇԱՆԱԼՈՒ Է

Շատերը կուզեն հասկնալ թե ինչ է այն կռիվն, որ քա-նի մը տասնն ի վեր բացված է Արդարութեան և Յառն ժողո-վին [370]) մէջ և թե ինչ է պատճառն, որ Յառն ժողովն արդա-րութեան դեմ պատերազմ հրատարակած է։

Պատճառն սրբզ և հայտնի է։

Յառն ժողովն օր մը զբաղած միջոցին Արդարութեանն Յառն ժողովին հետ տեսակցելու և բարեկամութեան հաստա-տելու համար—որովհետև մինչև այն օրը իրարու հետ տանջա-ված չըլլալով դիւրաւ չէին ճանչնար—Յառն ժողովին դուռը կը զարնեն.

Թըք. թըք։

— Ո՞վ է տան, կը հարցնեն ներսեն Գեր. տասնապետաւ։

— Արդարութեան եմ և կը փափաքիմ ձեզի հետ տանջա-վիլ։

— Ժողովս հիմա զործեր ունի տեսնելու, խնդիրներ ունի լուծելու, մարդիկ ունի կապիլու (բանադրիլու), մանաւանդ ին-ծի դարձ կարդն ալ չկրնար ավրել։

— Ե՞րբ կրնամ զձեզ տեսնել։

— Գրաւոր առաջարկութեան մը կընեք, եթե ժողովը միաձայն հավանութեամբ հաճի զձեզ ընդունիլ, այն տասն խնդրոց կարգին մեջ կանցնուհն և կընդունի զձեզ գործ չեղած օր մը—որովհետև Յառն ժողովն ներքին կանոնագիր մը ունի, որով խնդրս մը վճռաբանութեան միջոցին ոչ ոք նեղս կընդունի, ոչ իսկ արդարութեանն։

Յառն ժողովին այս անվայել պատասխանն արդարու-թեան գժվարը կուգա ու պատրիարքարանն կառնե կը քաշե։

Այս գեպքին վրայն երկու երեք ամիս կանցնի և օր մը Յառն ժողովն տեղ մը արդարութեան կը հանդիպի և սա լեղ-վով կը խոսի իրեն։

— Արդարութիւն, ինչու՞ օր մը մեզի չեք հրամմեր, ինչու՞ ձեր ներկայութեամբը զմեզ չեք պատվեր։

— Դուք մեծ մարդ եք, իսկ ես պզտիկ...

— Սա ինչ խոսք է, տեսիկա չենք ընդունիր։

*Այս խոսակցութենեն հայտնի է, որ Յառն ժողովն իր պա-տասխանին մեջ, այսինքն իր գործին մեջ արդարութեան դեմ որչափ խիստ կը վարվի կոր նե՝ պատասխանեն դուրս ալ այնչափ անուշ

կը վարվի կոր։ Արդարութիւնը սիրել, անոր համար հոգին տալ կը ցոյցն կոր։

Բաղաքավարութիւնն ալ արդեն ասս չը՞ պահանջեր։

Արդարութիւնն Խառն ժողովին այս խոսքերուն կը հանգնա, որ Խառն ժողովն հետը ղբոսնուլ կուզի, ոչ գործելու։ քանի մը ծանր խոսքեր կըշեն անոր։ Խառն ժողովն ալ այդ խոսքերը չը-կընայով մարեր, ասով հակակրութիւն մը կը զոյանա երկու-քին մէջ, հակակրութիւնը մեծնալով կալի կնրպաքանք կառնի և Խառն ժողովը զոլոր ուժով Արդարութիւնն կսկսի հալածել։

Դիտողութեան արժանի սա կետը կա, որ այնինչ Խառն ժողովն արդարութիւնը կը մերկանար, Պողոս վարդապետն [177] ալ արդարութիւն մը կը փնտռեր հագնելու. և որովհետև այս արդարութիւնն ալ Խառն ժողովին խոստացված էր իրեն, Պողոս վարդապետ Խառն ժողովին կնըթա ու կը հարցնէր.

— Ինձի արդարութիւն պիտի տայիք, ըը՞ է։

— Սպասն քիչ մը, կը շինվի կոր։

— Շինված հատ մը ունէք, երթամ։

— Շինվածը քեզի չդար, Պողո, համբերն, քանի մը ամիսն ջուկինդ կը լմննա։

Խառն ժողովին անդամները—ի բացառյալ մեկ քանիներուը—սահնայն արագութեամբ կսկսին բանիլ և որսոյալ մկրտոցին մեջ նոր արդարութիւն մը կը շինեն, արդարութիւն մը, որ մինչև հիմա գործածված արդարութեան բնավին չնմանիր, արդարութիւն մը, որ բոլորովին նոր է։ Պողոս վարդապետը կը կանչեն և նոր արդարութեամբ կզգեստաւորուին նորին արժանապատուութիւնը։

Ո եղավորներն՝ որ դասուս մեջ մեծ բանակ մը կը կազմեն, իրարու կը հարցունեն։

— Իրավ է, որ Պողոս վարդապետն արդարացած է.

— Ճշմարիտ է, որ Ռափայել վարդապետը ծեծած չէ։

— Անանկ կըսեն կոր, Պողոս վարդապետը ծեծվելը է Ռափայել վարդապետին։

— Անանկ է նե՝ Ռափայել վարդապետը ինչու մեռեր է։

— Ըստ Խառն ժողովի նոր որոշման զարնողը կը մեռնի եղեր և ոչ զարնվողը։

— Պողոս վարդապետն արդեօք...

— Այո՛։

— Բայց ինքը խոստովանած է եղեր ան ու ասս ծեծելը։

— Մեկը ծեծ ուսե նե՝ մեռնելու է, Թող Հակոպողոսյանց

վաստաբանն առաջարկեր, որ Պողոս վարդապետն զինք պաշտպանող անդամներուն մին ձեռնէր, և մենք ալ տանեինք որ ձեռ ուտողը քանի՛ օր կրնա ապրիլ։

— Պողոս վարդապետն ձեռնվիլն ձվ կընդուներ, հայտնի ճշմարտութեան մը նորէն հայտնելու համար մանր մ՚ալ մեկնաբանելու է։

— Պողոս վարդապետ հիմա ալ քարոզութիւնն պիտի երթա՞։

— Հիմա՞ վառ պիտի երթա՞։

— Այսինքն հաջորդ առաւօտ ալ քարոզութիւնն պիտի ժառանգե՞։

— Թանի որ Յառն ժողովին արդարացում հարկավ գժանք չպիտի երթա՞։

— Անանկ է նե՞ մենք ալ երթանք Յառն ժողովին։

— Ի՞նչ ընենք, ինչ ընենք։

— Համձնաժողովական նամակ մը կառնենք, մեկնինք նե՞ քարոզութեան դուռը կը զարնենք։ Պետրոս առաքյալը [378]) նեքսեն կը հարցնեն, ձվ ես դուք։—Մենք ենք, քարոզութեան պիտի մանենք։—Քարոզութեան մանելու ինչ փաստեր ունիք։—Փաստ չունինք, Յառն ժողովին կողմեն հանձնաժողովական մը ունինք։—Տվէք նայիմ։—Առնէ։ Պետրոս առաքյալը նամակը կառնէ և կը կարդա, «Նեբկադնեզար ձեզ կը նեբկիայեա Յառաստուր սրբազան [379]), կաթողիկոս Աղթամարայ, որուն համար ժողովս մեծամասնութեամբ որոշեց, որ հանդգնիք չունենա Յառն ժողովս նկատելով՝ թե գրաբերս յաւ անբիծ վարքն քրիստոնեութեան պարծանքն եղած է, կը խնդրեմ ձեր առաքելութենեն, որ քարքյութեան մեջ իրեն տեղ մը ցցունեք ի վարձատրութեան յաւ առաքինութեանց. բայց նայեցե՛ք, որ Նիկողայոս եպիսկոպոսին ժառը չդնեք։

Աղթամար
Պատրիարքական կնիք

Պետրոս առաքյալն այս նամակը կարդալեն ետքը կընայ Պաւրիարքարանը կտաբեր, նեբս հրամմեցնէք կըսեն, կը մտնա կերթա։

— Յառն ժողովին դիմենք ուրեմն, Յառն ժողովին՝ որուն չնորհիվ մեղավոր մարդ չպիտի մնա այս աշխարհիս երեսը։

Մեղավորները կը միանան և կսկսին հանրագութեան մը սարքերել։ Այս հանրագութեանը քիչ օրեն Յառն ժողովին պիտի մատուցանեն եղեր։

Սրբազութեանն այս եղելութեանեն իմանալով՝ անանց զիմ կը բողոքե և հետևյալ ծանուցումը կը գրկի մեջ.

Նկատելով, որ Ծառն ժողովո անդամներեն ոմանք իմին վրեժ շինելով իմ տեղս կը գործածեն կոր, նկատելով, որ ասիկա իմ պատիվս և վարկս կուտրեվեն գաս շատերուն մեծ վնասներ կուտա, պարտավորեցա արդի հասարակութեյունն զգուշացնել այս վրեժ ալդաբութեենեն։

Անոնք՝ որ դիս գործածելով օգուտներս տեսած են և կուզեն դալձյալ գործածել, դիմելու են առ խմբագրատունն Թատրոնի, ուր կը գտնվիմ միշտ և երբեք չեմ ծախվիր։

Ստորագրություն
ԱՐՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս ծանուցումը հրատարակելով կը ծանուցանենք Ծառն ժողովո անդամոց ոմանց, որ իրենք ալ անգամ մը բուն ազգարութեյունը գործածեն և տեսնեն թե որչափ օգուտ պիտի քաղեն անկից [380]։

1875

ՉԸԼԼԱ ՈՐ ԽԵՆԴԵՆԱՔ

Սա Քաղաքական ժողովը պաշտոնի անցած օրեն ի վեր անընդհատ կաշխատի, բնավ պարապ չնստիր. և եթե յուր ժրութեյունը այսպես շարունակելու ըլա՝ ազգային գործերը քիչ օրեն պիտի լմնան, և չդիտեմք թե անկե ետքը ինչով պիտի զբաղի։

Անցյալ շաբթվան նիստեն մեջ ալ խել մը որոշումներ տված է՝ որոց գլխավորներուն վրա կուզենք քիչ մը խոսել, եթե նորեն ժրացան Քաղաքական ժողովութեյունը չբարկանա։

Քաղաքական ժողովը՝ հիվանդանոցի ընակչութեյունը չափն ավելի չշատցնելու համար անկարներն, որբերն և անզգաստները ընտրանոք պիտի ընդունի եղեր հիվանդանոցին մեջ. այս ընտրութեյունն ալ պատշաճ քաղաքական փոխանորդ հայրը պիտի ընե եղեր։

Ինչ ըսել է ընտրանոք ընդունիլ. արդյոք Քաղաքական ժողովն ասոնք Վիեննայի արվեստանոցն՝ պիտի գրկե, չէ՝ նե՝ անզգաստութեյան մրցանակ պիտի բաշխե։

Ենթադրենք՝ թե ես վախուչի, և անհնար է, որ ինձ ժողովո այս որոշումները կարդալով չվախցնեմ, վասնզից եթե չվախցնեմ՝ կը ճաթիմ, եթե չճաթիմ՝ կը վախցնեմ, ուստի երկու չարյաց վտքրագույնը ընտրելով՝ պիտի ստիպվիմ վախացնել։ Ենթադրենք թե վախուչի, և հետևյալ օրը վոխանորդ հոր առջև ներկայացա, որն որ ինձ հարցուց.

— Ի՞նչ կուզեք։

— Ի՞նչ պիտի ուզեմ, երկիր Քաղաքական ժողովո որոշումները կարդացած առենս վախուչի։

— Շատ ազնիվ ըրեր եք։ Թեպետև հիվանդները ու խելագարները ընդունելու միշտ պատրաստ է հիվանդանոցը, սակայն դուք դեռ խելագար չեք, գացեք քիչ մ՚ալ ավելի վախուցեք և անանկ եկեք։

— Բայց մինչև ձեր աստիճան վախցնելու ըլլամ նե՝ հիվանդանոցի արժանի կրնամ ըլլալ։

— Շղթայով կապվելու խնդիր ըլլալու եք՝ որ ընդունվիք։ Ա՛ռ քեղի իրավանց բռնաբարում։

Տասնևինն երրորդ լուսավորյալ դարուս մեջ հայն ալ ուրիշ աղգաց պես խենթենալու և հիվանդանալու իրավունքը վայելելու իրավունքն ունի. և մինչև հիվանդանոցի պատսպարելոց Թիվը չափեն ավելի չսավարացնելու համար, պիտի ջրկվինք սանկ քիչ մը խելքերնիս վախցնելե։

Այս կտորը խենթ Մուստաֆային ուշադրութեանը կը հանձնենք և կը դառնանք մյուս կտորին։

Քաղաքական ժողովն որոշեր է նաև թե՝ իր ըրած տնօրինութեանցն հրատարակվելու արժանի դասվորները լրագրաց միջոցավ հրատարակե։ Սքանչելի որոշում. ահա այս վերջ կտորը հրատարակելու չէր, վասնզի հասարակութեանը զայն կարդալով կպի վախցնել, որով խենթելու Թիվը չափեն ավելի կսավարանա, հետևաբար հիվանդանոցն ալ այդ Թիվը յուր մեջ պատսպարելու անկարող կըլլա [381])։

1872

ՔԱՂ. ԺՈՂՈՎԻՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄԵՆ ԵՏՔ

Ընդհ. ժողովնիս ասկից ամիս մը առաջ Բաղ. ժողովին մեկ երկու հարցապնդում ընելով՝ անոր հետ այնպես վարվեցավ՝ ինչպես որ մարդ մը յուր պզտիկ տղուն հետ, և ինչպես որ մայր մը յուր պզտիկ տղուն կը հարցուներ, տղա՛ս, ո՞ւր գացիր. ուսկի՞ց կուգաս, առանց ինձի հարցուներու ինչո՞ւ դուրս ելար. ֆեսդ ո՞ւր է. նիմա էեզի ծեծե՞մ մի և այլն. այսպես ալ Ընդհ. ժողովնիս, որ Վարչութիւնն իբրև յուր զավակը կը սիրե, հարցուց իրեն.

— Բաղ. ժողով, տղաս, պլուեեն ինչո՞ւ ինձի չհարցուցած կը գործադրես, ինձի չհարցուցած ինչո՞ւ Պատրիարքարանի նոր պաշտոնյանները կարգելով առանց մեծկակ ամսականներ կուտաս, հիմա բանիմ քեզի ծեծեմ նե՝ հանցանք ունիմ, չարաճճի:

Բաղ. ժողովն այս խիստ լեզվեն վիրավորվեցավ և սկսավ լալ: Քանի մը շաբաթ լալեն եաքը Ընդհ. ժողովնիս գնաց իրեն սիրտն առնելու ըսելով.

— Մի լար, տղաս, ես քեզի շաքար կառնեմ, գիշեր մ՚ալ կը պատրաստեմ քեզի, մի լար ու պատասխան տուր:

— Լեզուդ փոխե՛, որ պատասխանեմ, ըսավ Վարչութիւնը [382]*:*

Այս պատասխանին վրա հարցապնդողին լեզուն դատապարտվեցավ, բայց չփոխվեցավ: Բաղ. ժողովն ալ իրեն եղած թախանձանաց չկրնալով դիմանալ արտասուքը սրբեց և սկսավ շարունակել յուր պաշտոնը:

Ի՞նչպես:

Առաջինեն բոլորովին տարբեր կելպով, այնպես որ Ընդհ. ժողովին չհարցուցած նիստ ընելու անդամ վախենալ սկսավ:

Պատրիարքարանի պաշտոնյաներուն ամսականները զեղչելու կը վախնա, որ չըլլա թե վաղը Ընդհ. ժողովը ելնե հարցունե իրեն թե՝

— Ինձի չհարցուցած ինչո՞ւ համար ամսականները զեղչեցիր:

Եթե չզեղչե՝ նորեն մտմտուք կառնե գինքը, թե վաղը Ընդհ. ժողովը կելնե իրեն կը հարցունե.

— Ինչո՞ւ համար ինձի չհարցուցած ամսականները չես զեղչեր:

Այս վիճակին մեջ է ահա Բաղ. ժողովնիս. ամեն բան

Ընդհ. ժողովին հարցնելեն եաքը ան օրինելու սկզբունքն ընդունած է։

Առջի օրը Քաղ. ժողովս անդամներեն մին փոնգաալու վրա էր, երբ անդամներեն ուրիշ մը տեղեն յաուկելով քովը գնաց քիթը բերանը բունեց ու փոնգաալն արգիլեց ըսելով.

—Էֆենտի, էֆենտի, հերիք է, գլուխնիս փորձանքի պիտի հանդիպացունես, ախ, թող չհնաք տաս, որ Ընդհ. ժողովին չհարցուցած փոնգաաս, և Ընդհ. ժողովն նորեն հարցապնդում մ'ալ ընեն՝ թե Քաղ. ժողովն ինչու՞ Ընդհ. ժողովին չհարցուցած կը փոնգաաս։

— Փոնգաալս եկավ նե՝ ինչ ընեմ։

— Քիթդ կանոնագրութեան հարմարցնէր, էֆենտիմ։

Ջորս հինգ օր առաջ ալ Պատրիարքարանի պաշտոնեաներեն մին մարելու վրա է եղեր—անոթութենե ըլլալու է—և երբ ուրիշ մը չուր բերելու կը վազե եղեր, Քաղ. ժողովին անդամներեն մեկը օձիքեն բունելով ըսեր է.

— Ուր կը վազես, թշվառական։

— Մարդը կը մարի կոր, մարեցավ, քիչ մը չուր բերեմ, խեր է։

— Ընդհ. ժողովին չհարցուցած ինչու՞ առանկ բաներ կընես, տեղդ նստե՛։

Այս զեպքերն առիթ կուտան մեզ հարցնելու, թե հարցապնդումներուն սահմանը մինչև ուր կընդարձակի։ Ընդհ. ժողովն ասոնց սահմանը ցույց տալու է, որ վարչության ալ չուր ընելիքը գիտնա և ըստ այնմ դործե[383]։

1875

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՏՈՒԿԻՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ազդային անտուկինս նորեն քեյֆը ավրեց։

Բնականին քիչ մը հիվանդ ըլլալուն՝ քիչ մը պագ կամ տաք առնելուն պես խնուչն կը հիվանդանա կոր։

Այսչափ վարպետ բժիշկներ նայեցան, երակները քննեցին, կռնակը ծեծեցին, կուրծքը մտիկ ըրին, մասմունդ մեջ բան մ'ալ չգտան—գանձապետնիս ալ գտած չունի արդեն։

— Եթե բան մը չգտան՝ ինչ է ուրեմն հիվանդությունը։

— Հիվանդությունը ահավասիկ բան չունենալն է, և այս հիվանդութենե շատ մը անուռւկներ բռնված են։

Վերջապես ծագած քաղաքական ժողովո առենապետ վսեմ. Սիմոն պեյ Մաքսուեյան՝ բերեք ա հիվանդն անգամ մը բարձր. Աբրահամ բաշայի և բարձր. Սալվիս պեյ Պալյանի տանիմ ըսավ և առավ տարավ։

Այս բժիշկները հիվանդը քննեցին. իրարու հետ խորհրդակցեցան և դեղ մը ալին։ Դեղին վրա հիվանդնիս աչքերը փայլատ. բայց ինչ օգուտ. դեղը լմնալուն պես հիվանդությունը նորեն եկավ։

Հիվանդությունները կան՝ որոնցնե դեղը պահպանելուդ պետք կը սասականան։

Մեր անուռւկին հիվանդությունն ալ դժբախտաբար ատ հիվանդություններեն է, դեղը պահպանելու չը գալ կոր.

Բայց ամեն ատեն դեղը ուսկից գտնալու է. անուռւկին ձեռքեն բռնած գարձյալ այն բժիշկներուն առնելու տանելու է. ատ չըլլար Առանց դեղի ձգելու է. ատ ալ չըլլար՝ ինչ ընելու է ուրեմն։

Դեղ ճարելու մեջցնեը խորհելու է։

Ազգային սրտց վերաբերյալ շատ մը առաջարկություններ եղան ասդին անդին, որոց նայելով՝ ազգը տարին չգիտեմ քանի մլիոն պետի վատակեր։ Այս առաջարկություններն եթե օգտակար էին՝ ինչու չընդունվեցան, եթե չէին՝ ինչու դանոնք առաջարկողները հիմարանոց չղրկվեցան։

Հուսանք, որ Վարչությունն այս խնդիրն նկատողության առնելով անուռւկին վիճակը պետի բարվոքի։

— Ինչո՞ւ չը հուսանք, ինչո՞ւ հուսալու իրավունքեն զրկվինք։ Հուսալով ինչ կը կորանցնենք։

— Ժամանակ։

— Հուսալով ինչ կը վաստկինք։

— Ժամանակ։

— Անանկ է նե՝ հուսանք, ընթերցող, հուսանք, մեզ հնք... [384]։

1875

ՊԱՐԳԵՎԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Անցյալ կիրակի տեղի ունեցավ Օրթագեղ Բարեսեր ընկերության թատրոնը [385]), Օրթագեղի Ս. Թալզմանչաց վարժարանին աշակերտաց պարզևաբաշխության հանդեսն ընդ նախագահությամբ Ամեն. Ս. Պատրիարք հոր և ի ներկայության գեր. եքզարքի և Սրբ. վարդապետաց, քահանայից և աշակերտաց ծնողացը և բազմաթիվ հաղեցվոյ։

Հանդեսն սկսավ Խորեն եպիսկոպոսին [386]) «Օրհնյալ որ սիրեք զՀայաստանն» անուն ոտանը ողբովն, զոր Տիգրան էֆենտի Զուհրաճյան [387]) իր վարժ մատենիներովն դաշնակի վրա եղանակեց և աշակերտք ձայնիվ հետևեցան անոր։

Հետո ի դիմաց հոգաբարձության մեծ. Պ. Սըլտյան էֆենտին կարդաց վարժարանին վիճակը ներկայացնող տեղեկագիրը մը, ուսկից, ինչպես նաև աշակերտաց իրենց ուսմանցը մեջ ըրած հառաջադիմության համար առացված նիշերեն, որոնք հրապարակավ արտասանվեցան, կը հասկցվեր, որ հոգաբարձությունն հակառակ յուր առջև ելած դժվարությանց հաջողած էր քիչ միջոցի մեջ վարժարանն բարեկարգ վիճակի մեջ դնել։

Տեղեկագրին ընթերցումեն ետքը դպրոցին հառաջադեմ աշակերտներեն ալբ. Պ. Ասրունի, Պ. Փեշտմալճյան և Հ. Սանասարճյան մեյ մեկ ճառ կարդացին, առաջինն հայերեն, երկրորդն ֆրանսերեն և վերջինը տաճկերեն լեզվավ և հանդիսականաց բուռն ծափահարությանց արժանացան։

Աշակերտաց այս դոհացուցիչ վիճակին համար Մեծ. Տիգրան էֆենտի Ծուսուֆյան ի դիմաց Թաղ. խորհրդո շնորհակալություն հայտնեց Հոգաբարձությանն։ Ետքն Ամեն. Ս. Պատրիարք հայրն ալ յուր շնորհակալություններն հայտնելով քաջալերեց զհոգաբարձությունն, Թաղականն ու Թաղեցին և օրհնությունները զրեց հանդեսն և ծնողք լի ուրախությամբ մեկնեցան [388])։

1875

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐը

Մայր Աթոռին իրավունքներն ալ մազ ճնաց, որ ձեռքե վեպային կոր, եթե Սրբ. Ամբրոսիոս [389]) ու Իղմիրլյան [390]) վարդապետներն, Բրիստոսատուր [391]) ու Բաբազյան [392]) էֆենտիներն չհասնեին։

Ամենասարսափելի Ս. Պատրիարքն երկու ամիս խափելեն ետքը Երուսաղեմա վոսանորդ գնը. Սիմեոն եպիսկոպոսն ու գնը. Յուդեն նար Պեյ եպիսկոպոսն իրեն խորհրդական կարգեց, առաջինին՝ բաղ ժողովին ու վերջինին՝ կրոնական նախագահելու պատասխանություն տալով ժողովո կամ դիվանին որոշմամբ։

Մայր Աթոռին պաշտպան երեսփոխաններեն գնը. Սիմեոն եպիսկոպոսն ամբաստանել կը փափաքին իբրև հակառակ Մայր Աթոռի ու ձայներնին այնչափ կը բարձրացուներն, որ առենապետն կտիպվի ատյանը գոցելու, ու բացվելիք օրն որոշելու առանց ժամանակ ուներնալու։

Այն օրեն ի վեր ուր Հովվյանցը հայտնեց թե էջմիածնա պուճեին մեջ նշանակված է Պոլսո քանի մը լրագրաց վերաբաուին կողմե զրկված սակին գումարն՝ զոր էջմիածնա միաբաններեն մին այս անգամ Մեղու Հայաստանիի [393]) մեջ հաստատած է, կարծես թե Բրիստոստուր ու Բաբազյան էֆենտիներն ավելի ուժով սկսան պաշտպանել Մայր Աթոռը ու իրենց բերնին մեջ գոծիք ընել գայն։

Կըսվի թե, անցյալ շաբթու Բաբազյան էֆենտին հյուրի մը առջև ածականներով կը հանդիմանե եղեր աշակերտներեն մին, վարժարանին մեջ ծուլ ծուլ նստելուն համար։ Հյուրը հարցուցեր է իրեն.

— Էֆենտի, ինչ հանցանք գործած է։

— Էֆենտիմ, Մայր Աթոռին իրավանց դեմ կը վարվի կոր, պատասխաներ է Բաբազյան էֆենտին։

Մայր Աթոռը ճշնամի չունի, արդյոք ատոնք որու դեմ կը պաշտպանեն կոր այդ Աթոռին իրավունքները [394])։

1875

ԷՋՄԻԱԾՆԱ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՕՁԱԽԻՆ [395]) ՇԱՀԸ

Թող ինչ ուզեն ըսեն, մեզը եղավ Մայր Աթոռին իրավունքներուն, ես ան գիտեմ։

Երուսաղեմի վոսանորդ գեր. Սիմեոն եպիսկոպոս, Ս. Պատրիարքի խորհրդական անվանվելով՝ պետք եղած թուղթերն ստորագրել սկսած է։

Հայտնի է, որ Գեր. խորհրդականը քանի թուղթ որ առաբագրեց, Էջմիածինն (Օճախեն) այնչափ իրավունք հափշտակեց, եթե Գեր. Սիմեոն եպիսկոպոսին տեղ կամ Աւժ. Ամբրոսիոս վարդապետն և կամ Աւժ. Իդմիրլյանն անվանվեր՝ Էջմիածնին (Օճախի) ամենաիոքր մեկ իրավունքին չէր դպչեր. ամեն թուղթ օրինավորությամբ կատարվեր և Էջմիածինն (Օճախն) ամեն օր կը վաստկեր... այսինքն իր իրավունքներն—կաղաչեմ, ուրիշ բան չհասկնաք...—Եվ ահա ասոր համար էր, որ Օճախի անդամները իրենց բոլոր զորությամբը դեմ կեցան Գեր. Սիմեոն եպիսկոպոսին խորհրդական ընտրվելուն, պրոտեցին, բարկացան, սպառնացան, այլ, ափսոս, իրենց սպառնալիքը հաջող արդյունք մը չունեցավ։ Հիմա կիմանանք, որ այս օրերս սկսեր են ժողովներ կազմել խորհրդակցելու համար սա կետին վրա թե՝ կամ Ս. Պատրիարքէն յուր պատրիարքությունն քանե և կամ հրաժարի։

Ալ շատ աղեկ հասկցեցավ, որ—կալծենք վեհ կաթողիկոսն ալ աղեկ հասկցավ ու համոզվեցավ—այն բանն, որ Օճախին շահուն կը դպչի, Էջմիածնին ալ իրավունքին կը դպչի եղեր... և Էջմիածնա իրավանց դպած չըլլալու համար պարտավոր ենք եղեր Օճախին անդամներն ապրեցնել և իրենց ստակ վաստըկցնել հանցավորներն արդարացնելով և ամեն չարիք գործելով։

Ի՜նչ ծանր դործ է եղեր քու իրավունքներդ պաշտպանել, ով Աթոռդ Էջմիածնա [396]։

1876

ԹԵ ՔԱՀԱՆԱՅՔ ՈՒՐ ԳՏՆՎԵԼՈՒ ԵՆ

Զգիտենք, չկրցանք գիտնալ, գիտնալու հույս ալ չունինք թե՝ ինչու համար գրեթե բոլոր թաղերու մեջ քահանաներին ամանք ժամերգության միջոցին թաղական խորհրդարանը կերթան կը նստին, կամ ոտքի վրա կը կայնին, կամ սիկառ կը ծխեն, կամ քթախոտ կը քաշեն, կամ բարձրաձայն կը խոսին, կամ կը կռվին. չկրցինք գիտնալ՝ թե թաղական խորհրդարանեն դուրս եղնել չուզած առենները ինչու համար ժամերգությունն ալ թաղական խորհրդարանին մեջ չեն կատարեր, որպեսզի ժողովուրդն ալ հոն գա, փնտռած քահանան գտնա, խոստովանանք ըլլա, ադրամեսցի ըսել տա, կայլն։ Չկրցինք գիտնալ

պնապ, պիտանալիք ալ չունինք, պիտանալն հայոյել սերնդին Թողլով՝ գառնանք Խազդյուղ Ս. Սահմանոց եկեղեցվուչն մեջ վերջերս տեղի ունեցած մեկ դեպքը համառոտիվ պատմելով՝ կրոն. ժողովին՝ եթե կա, ուշադրությունը, եթե ունի, հրավիրել՝ եթե գա։

Հաղորդվելիք անձինք քահանա կը փնտռեն, որ ադորմեցի լսել տան. ապին կը նային. քահանա չկա, անդին կը նային քահանա չկա. պահարան կը մտնեն, քահանա չկա. պահալանեն դուրս կելնեն, քահանա չկա. կը բարկանան, մեզք չգործելու համար կը համբերեն, հաղորդության ժամը կը մոտենա, մեկ մասը կը զայրանա և հաղորդվելե կը հրաժարի. մյուս մասը վարդապետին առջև ծունկ չոքելով ադորմեցի լսել կուտա և կը հաղորդվի. ժողովուրդը կը գայթակղի հայլնի։

Ո՞ւր էին ուրեմն այս քահանաները. հոն՝ ուր որ ըլլալու չէին. եկեղեցիեն դուրս։

Ժողովուրդն ավելի ևս կը զայրանա և կորոշե Արժ. քաղաքիչին դիմել. վերջին ամանք կը հորդորեն, որ ետ կենան։

Այս մասին Թազ. խորհրդո անդամներն ավելի հանգամանք են թազ տալով քահանայից ոմանց, որ ժամերգության միջոցին առանց պատճառի գան Թազ. խորհրդարանը նստին, ծխեն, խնդան ու խոսին։ Թեպետև այս տեսակ քահանայից թիվը խիստ փոքր է, թեպետև հանցանքն ալ ոչիր մը չէ, բայց ապագային մեջ այս թիվն չմեծցունելու և եկեղեցիներն Թազ. խորհրդարանները մեջ չփոխադրելու համար, հիմակվընե ամեն զգուշություն ձեռք առնելը խոհեմություն է։

Ձենք կարծեր, որ Թազ. Խորհրդո անդամներն անխոհեմ ըլլան [397]։

1876

ՍԱՄԱԹԻՈ [398]) ԿՈՒՎԸ

Սա վերջին տասնեակ տազային բոլոր խնդիրները բանորայայի գալձան. յուրաքանչյուրը ոք ուզած ապակիեն կը նայի և ուզածին պես կը պատմե։

Սկեպտիկյան գրությունը սկսավ մեր մեջ ալ մուտ գտնել։

Գնա, այսօր Պատրիարքարան և հարցուր. ամբաստանյալ Թազականի մը վրա հարձակվիլը օրինավո՞ր է, թե ապօրինավոր։ Պատրիարքարանը քեզի պիտի պատասխանե. կրնա ըլլալ որ օրինավոր ըլլա, կրնա ըլլալ, որ ապօրինավոր ըլլա։

— Բայց մենք հարձակեցանք և թագավորը դուրս հանեցինք։

— Կրնա ըլլալ, որ հանած ըլլաք. կրնա ըլլալ, որ հանած չըլլաք։

— Սորբրդարանին բանալին ալ ձեզի բերինք և դուք ալ առիք։

— Կրնա ըլլալ, որ առած ըլլանք, կրնա ըլլալ, որ առած չըլլանք։

— Աղեկ ըրինք, թե դէշ։

— Կրնա ըլլալ որ աղեկ ըրած ըլլաք, կրնա ըլլալ, որ դէշ ըրած ըլլաք, որովհետև ամբաստանյալ թագավոր մը դուրս ընելը օրինավորութիւն է Սելամըզի [399]) մէջ, իսկ ապօրինավորութիւն է Սամաթիո մէջ։

Ո՛վ քերթողահայրդ կատակերգվաց, [400]) ձեր ես։

Ակնհայտ է ըսել, որ Բադաքական ժողովը խնդրուն իրեն հաճո երևցած կողմերը միայն կը դիտէ, ակնհայտ է ըսել, որ Մեղուն ալ խնդրուն Բադ. ժողովո անհաճո երևցած կողմերը միայն դիտել կուտա։

Ահկե իբր ամխա մը առաջ, մեծ. Կրճիկյան էֆենտի Մասիսի մէջ կամբաստաններ իր ընկերներուն մին, իմաստասերի մը խնդրուն նկատմամբ։ Երբ թագավորի անդամ մը՝ ժամանակ անցնելեն առքը հրապարակով կամբաստանե իր ընկերը, ինք ալ հրապարակով կամբաստանվի։ Եթե այն ընկերը իրրև գող կամբաստանե, ինք ալ իրրև գողակից կամբաստանվի՝ նույն դողութիւնը ժամանակին հայտնած չըլլալուն համար։

Ըստ օրինաց ասանկ է. բայց ըստ Կրճիկյան էֆենտիի օրինավորութեան՝ ասանկ չէ եղեր. կրնա ըլլալ, որ ասանկ ըլլա, կրնա ըլլալ, որ ասանկ չըլլա։

Սամաթիացիք այսօր Կրճիկյան էֆենտիի վրա ամբաստանել բայը կը խոնարհեն. Կրճիկյան էֆենտին խոնարհիլ չուզեր։ Տեսնենք Պառլամըքարանը թագեցին պիտի խոնարհեն, չէ նե՝ Կրճիկյանը պիտի հոլովե։

— Ի՞նչ կըննես, ասավածդ սիրես նե՝ քերականութիւն կը կարդաս։

— Կրնա ըլլալ, որ քերականութիւն կը կարդամ, կրնա ըլլալ, որ չեմ կարդար։

— Էյ, հիմա նոր Թագավոր խորհուրդ պիտի ընտրվի յա

— Կրնա ըլլալ, որ ընտրվի, կրնա ըլալ որ չընտրվի։

— Ի՞նչ կըսեք, Թաղաքական ժողովը իրավունքը զորեցուցած չէ՞ մի։

— Կրնա ըլլալ որ զօրեցուցած կրնա ըլլալ որ չզօրեցուցած։

— Բայց Պատրիարքարան չունինք։

— Կրնա ըլլալ որ ունինք, կրնա ըլլալ որ...[401])

1872

ՔՈՒՄ ՔԱՔՈՒԻ[402]) ԴՈՒՐՍԻ ԹԱՂԱԿԱՆԸ

Այս օրերս Թաղականներու մէջ շարժում մը կա կարծես Թե խորհրդարանին դէպի դուրս։

Մեկը կը պոռա՝ Թե հաշիվները պատրաստված չեն, քանի մը ամիս պայմանաժամ ունէք, որ պատրաստեմ։ Մյուսը կըսե Թե՝ պարապաները շատ գնդուԹյուն ըրին Սամաթիոյ, պարապաները գիրար հրապարակավ ամբաստանեցին, ուստի պարապաներուն վրա կասկած կա, Թող ունէք ամիս մը միանգամ, հաշիվները շակենք և վերջը ելնենք։ Իսկ Քում Քաքուի գործէն Թաղականը, բան մը չըսեր խեղճը, հաշիվները պատրաստ են, Թվանշանները ադեկ գրված, տեսարկները մաքուր, միայն Թե այդ հաշիվներեն ոչ ինքը բան մը հասկնա կոր, ոչ ալ գիմացինը. այս խեղճին ալ պակասութիւնը այս է ահա. չէ նե՝ ան չըլլար նե՝ Թաղականներուն մէջ առաջին մրցանակը շատուց առած էր։

Ճակատագիրը՝ այս Թաղականն ալ այսպես հարվածեր է. ինչ կրնանք ըսել։

Թաղեցիք այս հաշիվները հասկնալի ընելու համար մասնաժողով մը կազմեր են՝ որն որ քանի մը շաբաԹե ի վեր անով կզբաղվի, երբեմն առանձին, երբեմն Թաղականի անդամոց ընկերութիւնը։

Մասնաժողովը անցյալ շաբԹու Թաղականի մեկ քանի անդամները կանչելով կըսե.

— Պե ճանըմ, ձեր հաշիվներեն բան մը չենք հասկնար կոր։

— Մենք ալ չենք հասկնար կոր, ինչեն եղավ սանկ չէյտանք. ուրիշ առեն կը հասկնայինք։

— Հոս գրված է Թե՝ կարապետին 1000 դուրուշ տված է։

— Գրված է նե՝ տրված է, կամ Թե տրված է նե՝ գրված է։

— Ա՛ս կարապետը ձվ է։

— Ցրված է նե՝ հեղութեր չայանեի չէ։

— Ինչո՞ւ համար ցրված է այդ սառկը։

— Կանչելու հարցնելու է, անանկ է չա, մենք ալ գիտենալու ենք, ինչո՞ւ համար առեր է ատ սառկը։

— Երկու հարյուր դուբուշ ալ չարշին նստողին տրված է։ աս ո՞վ է։

— Չարշին երթալու է, որչափ մարդ կա նե՝ ամենուն ալ մեկիկ մեկիկ հարցնելու է։

— Հարյուր դուբուշ ալ շալվար հագնողին տված է։

— Որչափ շալվարաւոր կա նե՝ ամենուն ալ հոս կանչելու է. գոնալու է, էֆենտիմ, աս ինչ խայտառակութիւն է։ Ձայն ձուն չհանելով վնասելու է, որ չըլլա քի մարդը շալվարը հանե ու բանթալոն հագնի։

— Հիմ ձեր անտուկը բաց է։

— Բանկիքն ալ վրանն է մի։

— Բաց է կըսեմ, բաց։

— Դանձապետը մոտկր է գոցելու գահեր, թեկուզ ուռնեք նե մարդը... ինչ է նե՝ գոցելու է, բայց ձգել չըլլար ա, մեջը խուղեր կան։

— Գե ալրանը, դուք խոսք չեք հասկնար, ձեզի բացն ի բաց անտուկը բաց է կըսեմ կոր։

— Ազիկ ա, ես ալ քեզի գոցե ի գոց գոցինք կըսեմ կոր։ Այս մէջտեղին գանձապետը նեղս կը մտնե։

— Հա, ընկերնիս եկավ, մարդ սատռծո, ինչո՞ւ համար ուշադրութեան չես ըներ։

— Ի՞նչ է եղեր որ...

— Սանդրի չկայես...

— Ես ճեպս սառկ մը գրած չեմ, հասկցաք, ես հասկցա քու բսելիքդ։

— Լաւ, բսելիքս ան չէ, անտուկը բաց ես ձգեր։

— Ես անտուկը բաց չձգեցի, բանկիքն ալ քովս է, թե որ կոտրեր բացեր են նե՝ ատոր բսելիք չունիմ։

Ատոր վրա մանաւոդուլը ատյանը կը գոցե. թաղականք կերթան։

Մենք չենք հուսար, որ անտուկը բոլորովին դոց ըլլա, կամ թե բոլորովին բաց, այլ սանկ քիչ մը արաւելս. այն արաւելքն ալ փոտուելու ըլլա նե՝ ամեն անտուկներու մեջ կը գտնվի [403])։

1872

ՔԱՐԱԿԵՄՐՅՈՒԿԻ [404]) ԿՈՒՎԸ

Ինչպես հայտնի է ժամանակի մը ի վեր քանի մը թաղեցւոց մէջ բարի սովորութիւն մը եղած է կիրակնօրյա վարժարաններ բանալով՝ ուսման և դիւութեան պետք ունեցողներուն ձրիաբար ուսում և դիւութիւն տալ։

Քարակեմրյուկի երեսատարերներուն խումբ մ՚ալ, այս բարի սովորութեան հետեւելու համար, ասկից քանի մը ամիսներ առաջ թաղին թաղականեն կը խնդրեր, որ կիրակի օրերն վարժարանին դռները բանան իրեն, որպեսզի դասախոսութիւն ընեւ թաղական խորհուրդը հոգաբարձութեան վրա նեւելով, հոգաբարձութիւնն թաղականին վրա նեւելով, վերջապես անհնար կըլլա վարժարանին դռները բանալ Վերջերս Թաղ. խորհրդո անդամոց երեքին հրամանովն այդ երիտասարդաց խումբը՝ որ Վարպետյան անուն անձնանվեր ընկերութեան [405]) մը մեկ ճյուղը կը կազմեր, կսկսի յուր դասախոսութիւններն ընել խորհրդարանին մեջ։ Լսածնուս նայելով՝ անցյալ կիրակի քառասունի չափ ջրհանկիրներ խորհրդարանը կը մտնեն, աշակերտաց վրա հարձակին և խեղճերուն մեկին գլխիկը կը կոտրեն, մեկալին կը հարձակին և ամենն ակռնջը կը վիրավորեն, մյուսին գլուխը կը պատռեն և ամենն ալ խորհրդարանեն դուրս կը հանեն։ Վիրավորյալներն այժմ ալ խորհրդարանեն դուրս կը հանեն։ Վիրավորյալներն այժմ ալ ստոիկանութեյան բողոք ըրած ըլլալով՝ խնդիրը ստոիկանութեյան ատյանը եկած է։

Անշուշտ դժուք մը, որ կտեսնէ մարդս քնով բարեգործութիւն չընել, որովհետև բարեգործութեյանց տակեն ավելի վնաս եղյալ սկսավ քան թե շահ։

Կը հուսանք, որ Գրիգոսատուր էֆենտի՝ որ Քարակեմրյուկի վարժարանին տեսուչն է, իբրև խաղաղութեյան հրեշտակ վարվելով, թաղին մեջնեն սատնկ կռիվներն անպակաս ընեւ [406])։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ [407]) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՒԱՄՎԻԼՆ

Սալմաթեմրյուկի [408]) ու Քարակեմրյուկի ազգայիններն իրարու հետ միշտ սիրով ու եղբայրաբար կը վարվեին, բայց երբ Գրիգոսատուր էֆենտին հիշյալ թաղերը ոտք կոխեց, զանոնք երկուքի բաժնեց։

Զարմանալի և շատ զարմանալի է... այս անձնանվեր մարդը նավ մը նստի նե՝ խկուչն երկուքի կը բաժնե պայմասոր համար է, որ շատերն ատոր մտած նավեն դուրս կելենե։

Եթե Քրիստոսուս էֆենտիին այս բաժնող դրօւթյունը Գալաթեղի կամուրջի [409]) պաշտոնյաներն դիտնային՝ ինչ հարկ կը մնար կամուրջը բանալու համար հարյուրավոր մարդիկ երկու ժամ չվանդերով քաշելու։ Քրիստոսուս էֆենտին կը կասկածունեին բացվելիք մասին վրա և կամուրջն խկուչն երկուքի կը բաժնվեր... բայց վերջին երկու մասն նորեն միանալով կամուրջն կը դոցվեր...

— Աուիկա չդիտեն, բայց եթե որ չդոցվեր, ան ատեն ալ Գալաթիո խմբակը [410]) կը բնդեն, ան կը դոցեր։

Ինդիրեն շեղեցանք, եթե Երեսփոխանական ժողովին մեջ ըլլայինք՝ շատոնց ի կարգ հրավիրված էինք։

Հայտնի է մեր ընթերցողաց, որ ասկից առաջ վաստուրական ընկերութեյան անդամներն կիրակի օրերն ձրի դասախոսութեյուններ ընելու համար Քարակեմրյուկի վարժարանն ուղած էին, որուն համար թաղին մեջ կռիվ ծագելով խնդիրն Թուլումպաճիներեն ձեռ կերած էին։ Այդ դիպքեն ետքը թաղխորհուրդը հաճած էր քանի մը անգամներ զպրոցին դռներն անոնց բանալու։ Իսկ հիմա կը լսենք, որ Սալմաթոմրուքեն քանի մը տոբաղրութեյամբ թուղթ մը ղրկված է թաղ. խորհրդուն պատվիրելով, որ զպրոցին դռները գոցեն վաստուրական ընկերութեյան անդամոց։ Հարուրեյուն էֆենտի Գասպարյան այս թուղթը Քաղ. ժողովին պիտի ներկայացնե, և եթե արժան դատե՝ անկից ալ ոստիկանութեյան ղրկել պիտի տա եղեր...

Ըստ մեզ՝ թաղ. խորհուրդն ասանկ թուղթերու կարևորութեյուն չտալով՝ թող տալու է ոչ միայն վաստուրական ընկերութեյան անձնանվեր անդամներուն՝ որ ձրիաբար դասախոսութեյուններ կընեն, այլ նաև ամեն անոնց, որ ասանկ բարեպաշտակ և ազգօգուտ գործերու կը ձեռնարկեն։

Հարուրեյուն էֆենտիին գալով կըսենք թե՝ յուր պաշտոնն ոստիկանութեյան դուռը բանաբերկված ազգայնոց վրա հսկել և զանոնք, եթե հնար է, բանտեն պաշտել և ոչ թե բանտեն դուրս եղողներն ոստիկանութեյան մատնել [411])։

1875

ՄԵՄԵՑԻ՞ՆՔ ԹԵ ՄԵՄՎԵՑԱՆՔ

Քարակեռմրյուվի և Սալմաթմրուքի ուսումնական ընկերությունները՝ ուսումնասիրությամբ վառյալ ամիսն անդամ մը իրարու դուռը կը պատռեն, ինչպես որ ծննդյան շաբթուն ալ իրարու գեմ կռվեցան։

Այս կռվուն մեջ հաղթանակը որ կողմն մնացած ըլլալը հայտնի չէ տակավին, ինչու որ թաղական խորհուրդը՝ հունվար 4 թվականավ պատրիարքարան ղրկած տեղեկագրին մեջ կըսեր թե՝ Սալմաթմրուքցիները Քարակեռմրյուվցիները ծեծեցին, մինչդեռ հունվար 9 թվականավ ղրկած տեղեկագրին մեջ, զոր Բրխատատուր էֆենտին գրած է, կըսե որ Քարակեռմրյուվցիները Սալմաթմրուքցիները ծեծեցին։

Եթե ասոնց երկուքն ալ սուտ են՝ ըսել կըլլա թե երկու կողմն ալ հաղթող ելեր են։ Ապրին...։ Բայց որովհետև երկուքն ալ սուտ չկրնար ըլլալ, ըսել կըլլա թե՝ մեկ կողմը ծեծեր, մյուս կողմը ծեծվելր է։

Արդ, ո՞վն է ծեծողը և ո՞րը ծեծվողը։ ասիկա կռվողներն ալ չեն գիտեր կոր և ամեն օր իրարու կը հարցնեն կոր։

— Ծեծեցինք մի, ծեծվեցանք մի։

— Ի՞նչ գիտնանք, եղբայր, թաղ. խորհրդին հարցնելու է, ան մեզմե աղեկ գիտե։

— Առջի տեղեկագրին նայիս նե՝ մենք ծեծեր ենք եղեր։

— Երկրորդին նայիս նե՝ ծեծվեր ենք եղեր։

— Երրորդ տեղեկագրին սպասենք անանկ է նե, ատոր մեջ ալ ծեծելու կարգը մերն է անշուշտ։

— Բայց մենք ծեծեցինք։

— Ոչ, մենք ծեծեցինք։

— Մենք ծեծեցինք։

— Ո՛չ, դուք չծեծեցիք։

Հիմա ալ մեմֆ ծեծեցիմֆի դուռ ծեծեցիմֆի համար ծեծկըռվելու կը պատրաստվին եղեր երկու կողմեն։

Ապրի Բրխատատուր էֆենտին, որ թմրյալ երեսատաղտությունը կռվի մեջ մտնելու կը վարժեցնե կոր [412])։

1886

ԱՆՏՈՆՅԱՆՑ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԷՆՖԻԵՃՅԱՆՑ ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հակառակուելյան ազգայնոց երեսփոխանական ընտրութեանց ժէջ Անտոնյանք մեծամասնութիւն կազմած ըլլալուն համար ընտրութիւնները ապօրինաւոր են եղեր... Էնֆիեճյանց համար. այս ընտրութիւնները օրինաւոր ըլլալու համար Էնֆիեճյանք մեծամասնութիւն կազմելու են եղեր, որ երեսփոխանական ժողովին մէջ շարունակ փոնգտալով ուրիշներու խոսելու ժամանակ չձգեին։

Ի՞նչ է եղեր այս ընտրութեանց ապօրինաւորութիւնը։

Առաջին ապօրինաւորութիւնն, ինչպես ըսինք, Անտոնյանց մեծամասնութիւն կազմելն է, մինչդեռ ըստ Էնֆիեճյանց՝ պարտաւոր էին փոքրամասնութիւն կամ ոչնչութիւն կազմել երես. ժողովին մէջ։

Երկրորդ ապօրինաւորութիւնն ալ տուրքերնին չվճարած անձանց երեսփոխան ընտրված ըլլալն է եղեր։

Արդարև, ընտրողներն այստեղ սխալած են իրենց ընտրելիք անձանց հաշվի առարկներն նախապես երթալով աչքի անցուցած չըլլալնուն համար, կամ իրենց ընտրած անձանց ավելի կարծեցած քան թե քահին կարևորութիւն տված ըլլալնուն համար, բայց այս սխալն այնքան թեթև բան մ'է, որ զայն ուղղելու համար իրար անցնելու, ժողովուրդն ատկն ու վրա ընելու հարկ չկա. ընտրյալ անձանցմէ պատրաստերնին կը խնդրվի, կը վճարվի և ամեն բան կը վերջանա, ինչպես նաև Էնֆիեճյանի խաղերն, որոնցմով շատ իսկ զբաղեցան մեր Հռոմեական ազգայինք [413]։

1876

ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ [414]) ՀԱՐՑՄՈՒՆՔԸ

Խորեն եպիսկոպոսը լսելով, որ Թաուն ժողովը Նորին Սրբազնութեան անունն ալ իմմիրի առաջնորդական ընտրելյաց ցանկին մէջ անցուցեր է, նամակով մը հետևյալ հարցումներն ուղղած է եղեր Ազգային վարչութեան։

1. Այն տեղի աղջիկները դասի մէջ կը կայնին՝ չէ նե՝ վերնատունը։
2. Վերնատունը խաֆես ունի, թե չէ։
3. Իմմիրի օդը ինձի ինչպես կուգա։
4. Իմ բանաստեղծական խանդս կը վառի, թե կը մարե։ (Թշվառական Մասիս [416]), տես, ինչպես կը խնդա)։

5. Ան տեղի ժողովուրդին մէջ հին ու մին լաթերով պանդուխտներ ալ կան՞ն, թե չէ։
6. Ձեռքս քարի մը կտոր առնեմ ու Ֆրխտոսի գերեզմանին քարի կտորն է ըսեմ նե՝ ան տեղի ժողովուրդը կը հավատա՞, թե չէ։
7. Ան տեղը կաթ կը գտնվի՞, թե չէ։
8. Թե որ հետս մի քանի ընտանիք տանելու ըլլամ նե՝ ան տեղի առաջնորդարանը տեղ կո՞ւ, թե չէ։
9. Իմ խաբու օղլանիս ձվ պիտի ըլա՞ւ. ըլալիք անձը բանթալո՞ն կը հագնի, թե շալվար։
10. Իզմիրցոց գավազանն իմ հատակիս աղեկ կուգա՞, թե չէ։
11. Բուտլան և բոմատան ան տեղի կլիմային ի՞նչպես կուգան. և եթե ատ տեղի կլիմային հոն տանիմ նե մաքս կառնե՞ն։
12. Էշմիածնա թղթատարը հոն ալ կը հանդիպի՞ մի։
13. Ան տեղի լրագիրներն ալ հոս տեղի Մեղուին պես ամեն ըրածներուս տըրտըր պիտի խոսի՞ մի։
14. Ալշալուեան [416]) ալ Մասիսի պես հարդին տակեն ջուր կը քաշեցնե՞ մի և պ. Մամուրեանն [417]) իմ ամեն մեկ քայլիս առջև մամուռ պիտի դնի՞ մի։
15. Ան տեղի լուսինները ատ տեղի լուսիններուն պե՞ս են և գիշերնե՞րը մի կերևան։
16. Ան տեղի աղչիկները հայր մերը ալմանակա՞ն, թե հայկական եղանակավ կըսեն։
17. Իզմիրի գեղերը իրարմե Պեշիկթաշին Օրթաքեոյի՞ չափ հեռու են, թե չէ, և թե այն գեղերը պատեհու համար Բալաբանոս էֆենտին ինձի համար օմնիպուս պիտի պատրաստե՞, թե չէ։
18. Այն տեղի ձիերուն գուշը կարմի՞ր է, թե ճերմակ։
19. Այն տեղի կանայք ծեքծեքումի վարպետ ունի՞ն, թե չէ։
20. Իս առնելու համար գալիք հրավիրականերն միայ պիտի ըլա՞ն, թե կին, քանի՞ հարյուր հոգի պիտի ըլա՞ն. և այլերը սև բանթալո՞ն, ճերմակ ժիլե, ձեռնոց պիտի դնե՞ն, թե չէ։
21. Մամլո [418]) խմբագիր մեր այվազն ալ հետևես (*) հրամե՞ պիտի, թե չէ։

(*) Հոգ մի ըներ, կը հրամմե. մաքերևալեսթ է։ Ծ. Խ.

Մինչև որ այս հարցումներուս պատասխանս չառնեմ, և անոնց ինձի հարմարվելուն վրայոք չհամոզվիմ՝ տեղս չեմ երթար։ Ես աս տեղը ազեկ եմ. Թե որ Իզմիրցինները ոաք կոխեն իս ուզեն նե՝ ան առեն... ան առեն... է՜հ, ինչ ըսեմ... ան առեն թող անոնք հոս գան [419]։

1872

ԹաղԱկանի մը շաշիվը կամ շաշվո մը թաղԱկանը

Նախնիքներեն մնացած բարի սովորութիւն մը կա՝ որ թաղական մը իր պաշտոնեն հրաժարած առենը՝ Տնտեսական խորհրդի ձեռքով հաշիվները իրեն հաջորդին կը հանձնեն։

Աչիկա՝ ինչպես որ ըսինք, բարի սովորութիւն մ'է—նախնյաց որ սովորութիւնը գնշ է որ—բայց կերևի Թե՝ աս ալ ուրիշ խել մը բարի սովորութիւններ պես վերնաբուժ ճամբուն մեջ մոնել կուզե։

Պատմենք։

Անցյալ շաբթու՝ Տնտեսական խորհրդին մեկ քանի անդամք թաղականի մը կը ներկայանան և կըսեն.

— Հաշիվները կուռանք այսօր։

— Ի՞նչ հաշիվ։

— Պաշտոնե հրաժարած չէք։

— Գործը դիտեր Թե որ Բաղ. Ժողովին անդամց կեսին հարցնեք նե՝ հրաժարած ենք, մյուս կեսին հարցուեք նե՝ հրաժարած չենք. Թե որ մեզի հարցնելու ըլլաք նե՝ Թե հրաժարած ենք և Թե հրաժարած չենք։

— Անանկ է նե՝ մենք ալ հոս Թե եկած ենք, և Թե եկած չենք։

— Է՛յ, ինչ կա, ինչ չկա նայինք, օդևրն ալ անձրևուս կերթան կոր, հա։

— Կաղաչենք, հաշիվները տայէք տե՝ երթայինք, դեռ ուրիշ գործեր ալ ունինք ընելու։

— Ան չէ ամա, շուտեն Թրամվայ պիտի քալեցնեն կըսեն կոր նե՝ իրավ է մի։

— Կաղաչենք, մեզի սպասել մի տաք, աս հաշիվները...

— Չե՛, ապեկ ըսիք, խորհուրդս միտք ունի այս օրերս հաշիվներուս ծրագիր մը պատրաստել և Ցնտեսական խորհրդին ներկայացնել. թե որ հավնըվի նե՝ մաքուրը կառնենք կուտանք. չըհավնըվի նե՝ ուրիշ ծրագիր մը կը պատրաստենք. այդ մասին դուք անհոգ եղիք, խորհուրդս իր մտքին մեջ շատ մը ծրագիրներ պատրաստած է, որը հավնըվի նե՝ ան պիտի տա։

— Է՛յ, ՝ըրբ կը լմննա աոիկա։

— Մեկ երկու ամիսեն ծրագիրը կը պատրաստվի, չորս հինգ ամիսեն ալ կը գրվի, ոըովհետև գրագիրնիս հիվանդ է. անարաձներն ալ հիվանդի պես են. գրասենյանը կոտրած է. ավելորդ չէ ըսել նաև, թե օրերն ալ խիստ կարճ են։ բայց դուք անհոգ եղիք այդ մասին։

— Ըսել է, որ ամառվան երկար օրերուն սպասելու է...

— Ձեզնք ալ ըսեր՝ թե մինչև ամառվան երկար օրերը...

— Ըսել է որ մեկ քանի ամիսեն...

— Ձեզնք ալ ըսեր՝ թե մեկ քանի ամիսեն...

— Հապա քանի՞ ամիսեն...

— Ձեզնք ալ ըսեր՝ թե քանի ամիսեն... բայց ձըչափ կասկածոտ եք, դուք հանգիստ եղիք, մերաք մ՚ընեք։

— Պե՛ճանըմ, առածնիդ տվածնիդ գրված չէ՞ մի։

— Գրված է ամա, աս հաշիվը ձեզի չդարը Ցորհուրդս կը փափաքի իր հաշիվները կրկնաոուժարի եղանակով տալ. բայց հաշիվը բաց է եղեր, գոց է եղեր, աոիկա խորհրդին գլխանալու բանք չէ, բավական է, որ տեսակները կանոնավոր ըլլան. դուք անհոգ եղիք, սեպհկեք, թե հաշիվները առած եք, մերաք մ՚ընեք։

Ցնտեսական խորհրդո անդամներն այս խոսքին վրա կելլեն կերթան։

Հետևյալ օրը Քաղ. ժողովին անդամներեն մի քանին ասոնք կը տեսնեն ու կը հարցնեն.

— Հաշիվները ի՞նչպես են։

— Շատ ապեկ են, ձեզի ալ հատկապես բաներ ըրին։

— Ինչո՞ւ հետերնիդ չբերիք։

— Բիչ մը հիվանդ էին, դուք անհոգ եղիք։

— Ե՞րբ կրնան բժշկվիլ։

— Ո՞րչափ կասկածոտ եք, դուք հանգիստ եղիք, մերաք մ՚ընեք։

— Ե՞րբ պիտի դան։

— Սեպհկեք թե հաշիվները առած եք, մերաք մ՚ընեք։

Մեկու մը՝ սա բանը մ'ըներ ըսես նե՝ ավելի կըննե Քաղ. ժողովն ալ հիմա շատ մերաք կըննե եղեր հաշիվներու հե-վանդութեան համար։

Իսկ մենք ընալ մերաք չենք ըներ. որովհետև Թաղականը՝ իր հրաժարած ըլլալը կամ չըլլալը հաստատապես չիյաեւ, որ քան այնմ վարվի։

Դուն ալ մերաք մ'ըներ ընթերցող [420]։

1872

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԴԱՏ ՄԸ ԵՎ ԱՆՈՐ ՊԱՇՏՊԱՆԸ

Ձքեզ կը հրավիրեմ, Մուսա [421]), ոչ թե ինձի ներշնչելու համար, այլ շատ անգամ քեզմե ներշնչված բանաստեղծի մը տաղաչափութեյունը մտիկ ընելու համար։

Ինդիրը բանաստեղծականն է, քիչ մ'ալ բանասիրականն։

Կրոնավորի մը համար կըսեինք, թե կրոնավոր ըլլալուն համար է, որ կրոնավորները կը պաշտպանե, այսօր ալ պիտի կրնանք ըսել հիշյալ կրոնավորին համար՝ թե կնիկ ըլլալուն համար է, որ կնիկները կը պաշտպանե։ Հայտնի է թե ոչ. այլ սա պիտի բսենք, որ Նորին Սրբազանութեյունն ամեն դատին մեջ միշտ տկար կողմը պաշտպանելն իրեն սկզբունք դրած է, և որովհետև քառ բանաստեղծութեյան կնիկն ալ տկար էակ մ'է, հարկավ ինք ալ միշտ կանանց կողմը պիտի գտնվի, ոչ թե տուիչ բանի համար, այլ իր սկզբունքը պաշտպանելու համար։

Նորին Սրբազանութեյունն յուր այս տկար սկզբունքն պաշտպանելու համար՝ ամեն հանդգնութեյուն կընե. սկզբունքին կամքը տեղը տանելու համար շատ անգամ ստութեյան ու նենգութեյան կը դիմե, Դատաստանական խորհուրդն [422]), Կրոնական ժողովն, Քաղաքական ժողովն, Ատեն ժողովն ու Պատրիարքարանը մատին ծայրը կանգուներ ու կը դարձնեին։

Պատմենք։

Պատվավոր ամուսին մը յուր կնկանը ընթացքեն կասկածելով՝ ասկից առաջ կը հաջողի զայն գտնալ այնպիսի հարաբերութեյանց մեջ՝ ուր գտնվելու չէ հավատարիմ ու պարկեշտ կին մը։ Խաբված ամուսինն այս հայտնութեյան վրա աղերսագիր մը կուտա Դուռը [423]), որն որ, ինդիրն ամուսնական ըլլալուն պատճառավ, Պատրիարքարան կը հանձնե գործին քննութեյունը։

Պատրիարքարանի կողմե յոթը հոգիե բաղկացյալ մասնաժողով մը կը կազմվի Բերա, քննութիւնները կսկսին, կը շարունակվին, կը վերջանան սա եզրակացութեամբ, թե կնիկը շնացող է։ Յառն ժողովն՝ Մասնաժողովին տեղեկագրին վրա յուր վճիռն արձակելու համար՝ երկու կողմը կը հրավիրե, որ եթե ուրիշ ըսելիք մը ունին՝ ըսեն. ամբաստանողն ու ամբաստանյալն ալ բան մը չեն ըսեր, միայն Գեր. Նար-Պեյ [424]) եպիսկոպոսն կառաջարկե, որ մասնաժողովին տեղեկագրին ոչինչ համաձայնի ու այս խնդիրն Դատաստանական խորհրդո մեջ նորեն քննվի։ Նորին Սրբազանութեան այս առաջարկութիւնն, Նորին Սրբազնութեան ուրիշ առաջարկութեանց պես չընդունվիր ու Յառն ժողովը կորոշե տեղեկագիրն Դատաստանական խորհրդո հղել, որպեսզի անոր եզրակացութիւնը հիմ բռնելով, իւրամբ պատասխան, երկու կողմին ըսելիքները մտիկ ընելեն ետքը։

Յառն ժողովո այս որոշումն Ս. Պատրիարքի կողմե Գեր. Փախ. հոր կը հաղորդվի, ուսկից ալ ամբաստանողին ու ամբաստանյալին. և երբ անցյալ շաբթու երկու կողմն ալ Դատաստանական խորհրդո կը ներկայանան, շնացող կնիկն կըսե՝ թե Յառն ժողովն որոշած է, որ այս խնդիրը նորեն քննվի. և եթե չեք հավատար՝ ահավասիկ, կըսե ու ծոցեն թուղթ մը կը հանե ու Փախ. տեր. հոր կուտա։ Շնացող կնկան ծոցեն ելնող թուղթը Նորեն Սրբազանի անունը կը կրեր և կառաջարկեր, որ ըստ իրեն Յառն ժողովո որոշման—երկու Յառն ժողով ունինք եղեր—Դատաստանական խորհուրդն այս գործը նորեն քննե, եթե ոչ ծանր պատասխանատուութեան տակ կը մնա։ Դատաստանական խորհուրդն Գեր. Նորեն եպիսկոպոսին նենգութեանն ու ստախոսութեանն գիտնալով հանդերձ—որովհետև Յառն ժողովո որոշումն Ս. Պատրիարքեն հաղորդված էր իրեն—փոխանակ ճշմարտութեանը՝ այսինքն Ս. Պատրիարքին կնիքն հարգելուն՝ ստախոսութեանը՝ այսինքն Գեր. Նորենի կնիքը կը հարգե ու գործը կերկարաձգե։

Ահավասիկ պատմութեանն. ահավասիկ մեր դիտողութիւնները։

Մարդս կը զարմանա, որ Յառն ժողովո ամեն մեկ որոշումն և անոր գործադրիչ Ս. Նախագահին ստորագրութեանն այսպես արհամարհել ու անպատվել կը հանդգնի կլոնավոր մը։ Իսկ մարդուս հավատալիքը չգար, որ Դատաստանական խորհուրդն Յառն ժողովո նախագահին ստորագրութեանը հավատք չընծայելով զայն անպատվե և նենգողի մը ստորագրութեանը հարգ տալով՝ Ս. Պատրիարքն լռելյայն նենգող խոստովանի։

Եթե Գեր. Նար-Պեյին մեկ սառաչքութիւնը կարող է Ասան ժողովո որոշումը ջնջել, ինչու ուրեմն Ասան ժողովն աշխատ կանչեր ու որոշումներ կուտար. եթե Նար-Պեյին սառաչքութիւնն վերադասելի է Ս. Պատրիարքին սառաչքութեան, ինչու ուրեմն Ս. Պատրիարքն կսառաչքի և ասանկով իր կինքն անպատվել տալով ազգի մը պատիվն Գեր. Պեյի մը ոտնակոխ ընել կուտար եվ եթե Գեր. Նար-Պեյն այս անգամ հաջողի այս նենդութեանը մեջ, ինչպես վատահ ըլլանք, որ վաղը Գաւառատանական խորհրդո տված վճիռն ալ չպիտի ոչնչացնե, այն որ կը հաջողի Ասան ժողովո որոշումն գործադրել չտալ, մթեն չիլնար ուրիշ բոլոր ժողովներու որոշումները մեկ վայրկենի մեջ ոչնչացնել։

Հիմա կը մնա մեզ տեսնել՝ թե Ս. Պատրիարքն ու Ասան ժողովն իրենց որոշման գործադրութեյունն Նար-Պեյի մը նամակով եա մնալը լսելով՝ իրենց որոշումը պիտի հարգել տանի, այսինքն Խորեն սրբազանի նենդութեյունն պիտի խայտառակեն, թե անտարբեր մնալով նենդութեյան իլամն իրենք պիտի հագնին։

Սալամանք [425]։

1876

ՏԱՐԵԴԱՐՁ

Ազգ. Սահմանադրութեյան տասնևվեցերորդ տարեգարձը խիստ շքեղ կերպով կատարվեցավ անցյալ կիրակի Ազգ. հիվանդանոցին բակդեմ պալատեղին մեջ։

Հանդիսին ներկա գտնվող ժողովուրդը, որուն թիվը ըստ ոմանց չորս հազար և ըստ ոմանց քսան հազար, առևնաբաստութեյուններ և ազգային երգեր մաղիլ ընելով նույն օրն անմել զվարճութեյամբ անցուցին։

Շոգեկառքին նույն ավուր հասուցիը ըստ ոմանց հարյուր հիսուն հազար դուրուշի հասեր է, ըստ ոմանց քսան հազար դուրուշի։

Ազգ. լրագիրը ժողովրդյան թվուն ու շոգեկառքին հասուցին վրա թեպետև համաձայն չենք, բայց ամենքն միաբերան են խոստովանելու՝ թե հանգեսն կանոնավոր և փառավոր կերպով կատարված է։

Մեր ուզածն ալ այս է [426]։

1876

Գեր. Տէր Մատթեոս քահանայապետին [427]) նոյնընտիր կրոն. ժողովին դուռս մնալը սև գլուխներին շատերուն բարկութեան առիթ տվավ։

Ինքզինքը ձախակողմյան անվանող միաբանութիւնն ալ մասնակցեցավ այս բարկութեան։

Բան մնզ, Միաբանութենեն ավելի Գեր. Տէր Մատթեոս քահանայապետն իրավունք ունի բարկանալու, ո՛չ թե քահանայապետ ըլլալուն համար, այլ անոր համար, որ Միաբանութենեն առած խոսքին վատահանալով՝ անառուկները պատրաստեց և երեք ու կես օրվան մեջ էջմիածին գնաց ու եկավ, որպեսզի առենապետութիւնը ժառանգեն։ Այո, Տէր Մատթեոս քահանայապետը իրավունք ունի բարկանալու Միութեան դեմ, որ զինքը խաբեց, բայց իրավունք չունի բարկանալու առենապետութիւնը ժառանգած չըլլալուն համար, որովհետև մեծամասնութիւնը վրդռվով հատատաեց, որ նորին քահանայապետութիւնը օրինավոր գահաժառանգ չէ։

Բայց կղերականաց բարկութեան պատճառն ինչ է։ Առանք համագումար ժողով գումարելով ու քանի մը արժանավոր կրոնականներուն անուններուը դուռս ձգելով՝ ընտրելոց ցուցակ մը պատրաստեցին։ Ս. Գաբրիէլեան երբ այս ցուցակին մեջ անթրավութեան տեսավ ու պատճառն հարցուց՝ Ս. հայրերն պատասխանեցին թե՝ իրենց խղճին համաձայն պատրաստած են ցուցակը։ Սուրբ պատասխանին վրա ընտրելոց ցուցակը Ազգային ժողովին ներկայացվեցավ, կրոն. ժողովո անդամներն ընտրվեցան։ Այս ընտրութեան վրա եղնել բարկանալն պարզապես իրենց խղճին հակառութեան մեջ գնալ է, կամ իրենց խղճը լեզուներուն ծայրը կրել ըսել է։

Եթե մեր Ս. հայրերն առարկեն թե՝ կրոն. ժողովին առնախատեր եպիսկոպոս ըլլալու է, թե՝ քանի որ մենք ալ պատրաստած քահանայապետ մը ունենինք ան ընտրվելու էր, իրենց այս առարկութեանը կը պատասխանենք թե՝ հիմա եպիսկոպոսութեան առաիճան առնելու պես դյուրին ինչ կա, և ինչեն գիտեն մեր Ս. հայրերն, որ Աբժ. Խորեն վարդապետ Մխիթարյանը քիչ առենեն էջմիածին չը պիտի ղրկվի եպիսկոպոս ըլլալու։

կը փափաքինք, որ ինքզինքին խաղաղութեան պաշտոնյա

և Քրիստոսի աշակերտ անվանող կրոնականներն իրենց բարկ ոճ թյունը սահմանափակեն, հուսալով թե՝ օր մ'ալ Տեր Մատթեոս քահանայանապետը կրնա կրոն. ժողովո առնետպետ ընտրվիլ։

Կրոն· ժողովին գալով՝ կը շնորհավորենք անոր արժ. անդամները, հաջողություն կը բարեմաղթենք իրենց, քաջահույս ըլլալով, որ իրենց հակառակորդաց կուրծք տալով առանց վհատելու պիտի շարունակեն իրենց պաշտոնն և ժողովրդյան համակրությունն նուրեն իրենց վրա պիտի հրավիրեն [428]։

1876

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ԳՐԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ ԻՆՉՈ՞Վ ԳԱՑԻՆ

Այս հարցումը կընեն այսօր մեր ազգայինք։

Ձիշտ վեց օր է, որ Պատրիարքարանը կարին, կարս և ուրիշ քաղաքներ հեռագիր գրեց Կովկասյան Լնդրուշ վրայոք աոուդ տեղեկություններ առնելու համար, և մինչև այսօր այդ հեռագիրներու պատասխաններն հասած չեն։

Արդյոք Պատրիարքարանը այդ հեռագիրները ըսթայիվ գրկեց, չէ նե՝ Պատրիարքարանի հեռագրներն ալ Պատրիարքարանի գործերուն պես դանդազ կը շարժին։

Այս գիտնալու համար, երեկ երեք հազարի չափ ազգայինք Ղալաթիո եկեղեցին գումարվելով Ս. Պատրիարքեն պատասխան ուզեր են։

Ս. Պատրիարքը երկդիմի պատասխաններով դժբախտաբար ժողովրդյան կասկածները հաստատեր է։

— Ս. հայր, խոսք տված էիք մեզի, որ մինչև ուրբաթ սպասեցեք և ձեզի տեղեկություն կուտամ. ահա այսօր ուրբաթ է, ըսիք մեզի, այդ լուրերն սուտ են, թե չէ։

— Ձեմ կրնար բան մը ըսել։

— Սուտ են։

— Ձեմ կրնար ըսել, թե սուտ են։

— Ճշմարիտ են։

— Ձեմ կրնար ըսել, թե ճշմարիտ են։

— Ի՞նչ են հապա։

— Ես բամ մը չգիտեմ։

— Հեռագիրներուն պատասխանները չեկա՞ն։

— Կրնա ըլլալ, որ եկած ըլլան, կրնա ըլլալ, որ եկած չըլլան։

— Որոշ պատասխան մը չէ՞ք կրնար տալ։

— Չեմ կրնար տալ։ Սպասեցե՛ք։

— Մինչև ե՞րբ սպառնանք։

— Մինչև որ պատասխանները գան։

— Պատասխանները ե՞րբ կուգան։

— Հայտնի չէ։

— Կրնա՞ ըլլալ, որ պատասխանները մինչև այսօր եկած չըլլան, քանի որ անդիի աշխարհեն մեկ ժամվան մեջ հեռագիր կուգա կոր։

— Չեմ կրնար բան մը ըսել։

— Ժողովուրդը հետաքրքիր է գիտնալ թէ...

— Դուրս գացեք, կուգամ կըսեմ հիմա։

— Շատ աղեկ։

— Կառավա՛ր, կառքը բե՛ր։

— Պատրաստ է, սրբազա՛ն, մտե՛ք...

Կռռռռռռռռռռ։

Ահավասիկ սրբազան հոր պատասխանը. կռռռռռռռռռռ։ Այս կռռռռռռ-ին վրա ժողովուրդը դալկայլ գոհ չըլլալով՝ կը մեկնի։

Ս. Պատրիարք հոր այս ընթացքը քիչ մը մեզագրելի կը թվի մեզ։ Ս. Պատրիարքը քաղաքագիտական ուրիշ ընթացքով մը կրնա յուր գիտցածը ժողովուրդեն ծածկել առանց անոր կասկածներն ավելցնելու։ Մինչդեռ այս ընթացքովն չհավատացնողներն ալ հավատալու կը հրավիրե [428]։

1876

ԻՐԵՔ ԱՄԻՍ ԱՂՈՒՔ

Ընդհանուր ժողովո վերջին նիստին մեջ ջերմ վիճաբանութիւններ եղան հարստահարութեանց բարձման համար։

Վասիմ. առենապետ փաշան [430] հարստահարութեանց վրա բավական լուսաբանելով՝ սկսավ գանգատ ուշի ուշով քննել։ անանց բազկերակները քննեց, լեզուներուն նայեցավ, կուրծքերնուն զարկավ և վերջապես հետևյալ դեղագիրը գրեց.

«Ընկալ քաղցրութեամբ — 4 տրամ
Հավատով խոստովանիմ — 10 տրամ
Եկեսցե ի վերա իմ — 6 տրամ
Տեր ողորմյա — պնդք եղածին չափ
Ամանե, ու 360 դեղահատ շինե,
Օրը չորս հատ պիտի կլլվի ու երեք ամսեն պիտի լմննա,

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆՅԱՆ՝

Իրեք ամիս այս դեղեն ուտվելուս ըլլա նե՝ հարստահարութիւնները կը վերնան եղեր։

Վասն. առնետապետ վիշային բժշկութեան մէջ ունեցած համբավը իրավունք կուտա մեզ հավատալու՝ թե ազգը հիշյալ նապերեն կլլել սկսած օրեն օգուտը պիտի տեսնե. եթե ընդհակառակն՝ օգուտ մը չտեսնվի՝ ազգը վեց ամսվան քերթիպ մ՚ալ կառնե ու սա հարստահարութիւնները կը վերնան։

Կեցցե արվեստ բժշկութեան, տես որչափ ընդարձակ ճյուղեր ունի եղեր... Երբեմն որ առնետապետ վիշան բժշկութեան հարստահարական ճյուղին մէջ շատ առաջ գացած է։

Զենք կարծեր, որ առնետապետ վիշան ազգին այս ողորմելի վիճակին մէջ առնետապետութեան աթոռին վրա նստած, ազգին հետ զբաղնուս. այլ կը հավատանք, որ մինչև հիմա նստած բոլոր հիվանդներուն տված դեղագիրներն վերոգրյալ դեղատերին պես բաներ են [431])։

1876

ՁԱՆԱՊԱՐՀ ԲԱՐԻ...

Աղթամարա կաթողիկոս նախորդը սպանող, Նիկողայոս անզապահը գերեզմանին մէջ զրպարտող վեհափառ Խաչատուր կաթողիկոսն այս օրերս դեպի յուր աթոռը պիտի ուղևորի եղեր։

Ամբաստիներեն ոմանք կը պատրաստվին նուն օրը շապիկ հագնելով՝ ճանապարհ բարի երգելուս Նորին Սրբազնութեյունն ալ կը պատրաստվի եղեր նուն օրը մերացուս խըմբագիրներուն պախշիշ տալուս։

Լսածնուս նայելով՝ Փունջի և Հայրենիքի խմբագիրները

վերան պիտի բռնեն եղեր, Մասիսի խմբագիրն ալ բուրվառով պիտի խնկարկէ եղեր Նոբլին վեհափառութեանը։ Ավելորդ է ըսել, որ նուէն օրը Մըսիր չարսըսին խուռնդ չպիտի ճնայ, որովհետև Մասիսի խմբագիրն ի վաղուց անտի խուռնդի մեծ վաճառականն մ'է...

Ինչ որ ալ ըլլայ՝ սա ճշմարիտ է, որ Նոբլին վեհափառութեանը յոթը տարի Պատրիարքարանի մեկ սենեակին մեջ նստեցավ առանց մեկը ապտնելու տալու։ Ասիկա մեծ պատիվ բերավ Նոբլին վեհափառութեան. մինչև անգամ յուր այս համբերութեան համար Հոր երանելի [432]) սիրտդոսին արժանացավ ոմանց կողմանե։

Մենք ևս կը չնորհավորենք պինքը այս նոր սիրտդոսին համար և կը բարեմաղթենք, որ յուր աթոռը փշուռ չը գնայ՝ լավ կարենա անոր վրա հանգիստ բազմիլ։ կը փափաքինք, որ ամեն բազմելուն մարախի պես չոստոսան յուր աթոռին վրա...

ԽՈՀԵՄՈ՞ՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ Է. ԹԵ ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՀԵՄՈՒԹՅՈՒՆ

Հարսանեսւթեանց տեղեկագիրն ինչ եղավ։

Ընդհ. ժողովին մեջ կարդացվեցավ, երեսփոխանաց և ուրիշներէ ժողովրդյան կողմն սիրով մտիկ ըլլըվեցավ, ծալլըվեցավ պատրիարքարանի դիվանատան մեկ անկյունը դրվեցավ. ա ինչ կուզեիր, որ ըլլար։

— Հապա վիճաբանութեյուն մը կար, թե՝ Թագաւորական ժողովի թե՝ Ընդհանուր ժողովի կողմն Դրան մատուցվի։ այդ վիճաբանութեյունը ինչ էր։

— Վիճաբանութեյունը վիճաբանութեյուն մ'էր. և որովհետև Ընդհանուր ժողովին մեջ, անպատճառ վիճաբանութեյուն մը պետք էր, նուէն օրը առանկ վիճաբանութեյուն մը բերին։

— Այդ տեղեկագիրը հիմա Բ. Դրան չպետի՞ տրվի։

— Ինչո՞ւ տրվի, այն տեղեկագիրը գիտեք որչափ դժվարութեյամբ պատրաստվեցավ, ինչ չարի աշխատվեցավ առոր վրան... հիմա ուրիշ տեղեկագիր հիմնութեյուն չէ՞ հիմա առանկ մեկ հազվագյուտ տեղեկագիր մը ձեռքն հանել։ Այդ տեղեկագիրը մեծ խնամքով պահելու է։ Դուն ուզե նե ալ, աշխատելու է, որ չտրվի։ Անիկա մեր դիվանատան զարդն է։

— Ըսել է, որ չպիտի տրվի։

— Նկատելով՝ որ մինչև հիմա տրված չէ, նկատելով՝ որ վերջին ընդհանուր ժողովին մեջ՝ որու կողմե տրվելիքին վրա խոսք ալ բացված չէ, թատրոնը կը վճռե, թե չպիտի տրվի։ Թերևս երեք ամիս ազոթք լինենք նե՝ ազոթքի զորությամբ տեղեկագիրը սկսի քալել ու միս մինակ Բ. Դուռը երթա։

— Ընդհանուր ժողովո կամ Բազաքական ժողովո ի դիմաց ինչու՞ չտրվիր կոր. ինչ էր այնչափ իրարանցում, ինչ էր գլուխը ցերեկի խառնելով տեղեկագիր պատրաստելնին։

— Ըսել կըլլա, որ խոհեմություն չեն համարիր կոր իրաց ծանր վիճակին մեջ տեղեկագիր տանել բերելու։

— Խոհեմությունը համբերել է։

— Բայց խոհեմությունը համբերությունն է։

— Ճիշտ Ընդհանուր ժողովին ու Բազաքական ժողովն այս կեսին վրա չեն կրնար կոր համաձայնիլ [433])։

1876

ԱՆՈՐ ՏՎԻՔ ԵՍ ԱԼ ԿՈՒԶԵՄ

Նիկողոս Եպիսկոպոսը, Սսո անկյալ կաթողիկոսը, Խաչատուր սրբազանի դասընկերը, որ կաթողիկոսությենե ձգվելով Աբմաշու վանքը ղրկված էր, հապաշխարություն և ի քավություն մեղաց, անցյալ շաբթու մայրաքաղաքս եկեր է։

Այս Սրբազանը Բազաքական ժողովո ներկայանալով՝ Սսո խղճալի վիճակը անոնց նկարագրեր է և հրաման ուզեր է Սիս երթալ, հոն գործերը կարգադրել և վերադառնալ։

Այս խոսքերուն բուն նշանակությունը մենք սապես կը հասկնանք։

— Երկար մը ընեք, Աղթամարա կաթողիկոսին հրաման ավիք, ինձ ալ ավե՛ք, լմննա։ Անոր հետ մեկտեղ եկանք, մեկ տեղ երթանք, որպեսզի եթե նորուն կանչվինք, երկուքնիս մեկեն ձեռք ձեռքի տալով գանք։ Ձիս Աբմաշ պահելով ինչ կը վատնիլ։ Սիս ղրկեցնք, ձեր գլխեն ալ փորձանք մը պակաս կըլլա։

Քազ. ժողովը նկատողություն առնելով Նիկողոս սրբազանին առաջարկությունները խորհելը և արժանը խորհիլ և տնօրինություն մը ընել։

Ի՞նչ է ըլլալիք տնօրինութիւնը։

Թեպետև չգիտենք, բայց Աղթամարա կաթողիկոսը արգա-
ւ ցնելէն ետքը Սիսո կաթողիկոսը սրբոց կարգը դասելու է,
եթէ սրբոց կարգը պատրաստ տեղ չկա՝ հրեշտակաց կարգը դնելու
է [434]։

1876

ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿ

Թատրոնի ընթերցողները կը հիշեն անշուշտ, որ այս վեր-
նագիրը շատ անգամ մեր դիտողութեանցդ՚նկատ եղած էր, վասն-
զի մեր ազգային սնտուկն ալ ուրիշ շատ մը սնտուկներու պես
յուր հավասարակշռութիւնը կը կորսնցնէր ու չէր կրնար գոնել։

Գոհունակութեամբ իմացանք այս օրերս, որ Տնտեսական խոր-
հուրդը որ պաշտոնի անցած օրեն իրեն գործն ըրած էր ազ-
գային սնտուկը հավասարութեան մէջ դնելու, անխոնջ ջա-
նքով աշխատելով Պատրիարքարանի պաշտոնեից քիչ մը ան-
հաճո եղունալն և սնտուկը գոհացուցիչ վիճակի վերածելեն
ետքը հաջողեր է նաև քանի հատար դուրուշ վճարել նախորդ վար-
ձքը հաշողեր է նաև քանի հատար դուրուշ վճարել նախորդ վար-
ձքի ձգած պարտուց հաշիւնն համար։

Հուսալի է, որ Տնտեսական խորհուրդը արդ մասին յուր
ըրած նոր անօրինութեանց շնորհիվ քիչ ատենեն սնտուկին վի-
ճակն ալ ավելի բարվոքելով կը հաջողի հին պարտքերը բոլո-
վին վճարել, եթէ ազգայինք ալ, ինչպես որ կը հուսանք,
իրենց վրա դրված տուրքը սիրով հանձնեն սնտուկին։

Հաջողութեան բարեմաղթելով Տնտեսական խորհրդոյ, կը
հուսանք, որ ինք առաջինը պիտի ըլլա սնտուկը մշտնջենապես
գոհացուցիչ վիճակի մէջ պահելու եղանակը գտնող և իր հաջորդ-
ներն ալ իրեն հետևելով կենսական խնդիր մը լուծված պիտի
ըլլա [435]։

1876

Այս առածը կարծես մեր թագավանաց կամ հոգաբարձվաց ոմանց ձեռքը հզոր փաստ մը գարձված է, իրենց ուզած մարդոց գլխոցներու մեջ պաշտոն տալու համար։

Սխալած չենք ըլլար՝ եթե ըսենք, որ Ռում-Քաբուի թագավան խորհուրդն ալ կամ խորհուրդին մեկ մասն ալ այդ թագավանաց ցանկին մեջ մեծ տեղ մը բռնած է, և երբ իրեն դիտողություն կըլլվի Տեր Մեսրոպին համար՝ անմիջապես կը պատասխանեն.

— Առանց փուշի վարդ չըլլար, առանց Տեր Մեսրոպի ալ Ռում-Քաբուի վարժարան չըլլար։

Թագվցին քանի մը անգամներ դիտողություն ըրավ այդ փուշին վրա, հայտնելով՝ թե այդ փուշը աշակերտաց բարոյականը կրնա խայթել։ Թագավանը լուռ մնաց։ Այս անգամ թագեցին նորեն ոտք կելլա և կը փախաբի, որ այդ քահանային տեղ ուրիշ մը բերվի։ Թագավանը նորեն լուռ կմնա։

Ի՞նչ է Տեր Մեսրոպին հանցանքը։

Տեր Մեսրոպը կրնա շատ մաքուր սիրտ ունենալ, բայց և դուն՝ որով պիտի ուսուցանեն և պիտի խրատեն, պետք եղածին չափ մաքուր չէ։ Եթե ընդունինք այդ ճշմարտությունը՝ թե լեզուն սրտին թարգմանն է, այն ատեն Նորին Արժանապատվության սիրտն ալ դատը կը կորսընցնե։

Օրինակի համար՝ դասախոսության միջոցին, կամ երբեմն պահի արարողության միջոցին, այնպիսի խոսքեր կը գործածե, որք երկդիմի նշանակություններ կուտան։

Ուսուցիչ մը կամ քահանա մը երկդիմի նշանակություն ունող շարադրություններն զգուշանալու է։

Եթե միայն այս ըլլար Նորին Արժանապատվության թերությունը, թերևս նեղվեր իրեն, բայց շատ անգամներ քահանայի մը ոչ դասատուի մը բերնին մեջ չվայելվիք բառեր կլսե տասանեն. և ես կը կարծեմ, որ խոստովանանք եղած ատենս եթե իրեն ըսեմ թե, Տեր հայր, սխալմամբ պահքս ավրեցի, ինձի պիտի պատասխանե երևս ի վեր պռոտալով.

— Ավանակ, էշ, քանի մը օր ալ համբերեիր նե՝ կը ճաթեիր, կորչ սրկե, որկրամոլ, անպիտան... բաներ ճնեիրս ուտեիր...

Դժբախտաբար դաս տվածի միջոցին ալ, միշտ այս ոճով կը խոսի եղեր աշակերտացը հետ։

*Ինչպես ըսինք, Տեր Մեսրոպ կրնա շատ մաքուր սիրտ

ունենալ, բայց լեզուն մաքուր չէ, և այս՝ դասատուին համաձնծ և աննեբևլի պակասութիւնն մ'է, և ճիշտ ասոր համար է, որ թաղեցին այս անգամ նորին կը խլտան։

Կը փափաքինք, որ Թաղ. խորհուրդը այս անգամ զոնե նկատողութեան առնելով թաղեցիին բողոքը, կը բարեհաճի պետք եղածը տնօրինել և «առանց փուշի վարդ չըլլար»-ը մեկդի նետելով՝ Քուռ-Քաքուի վարժարանը առանց վարդի փուշի չնմանցուներ [436]։

1877

ՊՈՆՈՑԻ ՄԸ ՊՏՈՒՅԶԸ

Ինչ որ ուզեն թող ըսեն. եթե ես կամ Գալ. ժողովը և կամ Թաղ. խորհրդո մը մեջ աթոռ ունենայի՝ ուրիշներու նման հովիվի պես երջանիկ և թագավորի մը պես փառավոր կյանք չէի կրնար վարել։

Թերևս հարցնեք ինձ՝ թե ինչ կընեի։

Ինչ չէի ըներ որ, քսակս լեցնելու համար պետք եղած ամեն բաները կընեի. բայց չեի հավդուիր, քթիս ըներևս կը դարձնեի, կը ձգեի վար։

Օրինակի համար. երբեկ կնկան դատ մը կը ներկայանար Առն ժողովին։ Առանկ դատ մը ներկայանալուն պես բնավ չէի հոգներ հասկնալու համար, թե իրավունքը ո՛ր կողմն է. այլ կը հոգնեի հասկնալու համար, թե դրամը ո՛ր կողմն է։ Առիկա հասկնալուս պես կսկսեի գործել։

Առաջին նիստին մեջ դրամ ունեցողին կողմը կը միտեի առանց վերջնական կարծիքս հայտնելու. ինձի այնպես կը թվի, թե սա մարդը իրավունք ունի կըսեի, և կամ չեզոք դիրք մը կը բռնեի, բայց կաշխատեի, որ ժողովն իր վճիռը չարձակե այս նիստին մեջ։

Իրիկունը տուն դառնալուս պես՝ գրիչը ձեռքս կառնեի և կսոր մը թուղթի վրա կը գրեի։

«Ստորագրյալս պարտավոր է ապրիլ մեկին քսան ոսկի վճարել այս թուղթը ինձի բերողին»։

Այս պոնոն գրելս եաքը կստորագրեի։

— Կաղաչեմ, ինչ կստորագրեիր։

— «Ի՞նչ կստորագրեիր» ինչ ըսել է։

հասկցվի, (մինչև որ պռնոս ընդունվի) անիրաւ է, անիրաւ է այս մարդը։ Իրաւունքը անդին կողմը կը տեսնեմ կոր այսօր։ Հաւընդհ պահնեմ որոշում մը տաք, քանի ոսկին պիտի հանեք դիս։

Ժողովը որոշումը կատարեր, պռնոս չկտրտրդը դատը կը վատակեր, բայց ես դարձյալ չէի հանգստանար և կը պտռայի։

Այս խնդիրը մինչև ընդհ. ժողով պիտի հանեմ, մինչև Շուբայի Տնվլեթ [437]) պիտի տանիմ, եթե հարկ ըլլա, բռնփեռանոս մը պիտի ընել տամ Պոլսո մեջ, որ այս մարդը անիրաւ երևի այս դատին մեջ։

Մեկ մ'ալ կը տեսնեի, որ բառակ մը չկրնալ փրցուներես դատ Թաարոնի մեջ կը կարդայի ինքզինքս և քանի մը օր, հաքը խմբագիր մը կը ներկայանար ինձ իմ պռնոս ձեռքը քռնած՝ և կըսեր։

— Էֆենտի, սա պռնոն վճարեցեք։

Ի՞նչ կըսեք, սա ազվոր խաղ չէ՞ մի։

Եվ անա սասնկ խաղի մը չհանդիպելու համար է, որ ազգային պաշտոն վարել չեմ ուզեր [438])։

1877

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐՈՒ ԱՊԱԳԱՆ

Կիրակի օրը վարժապետանեղուս վիճակը տեսնվելու բան էր։ Մայրաքաղաքիս բոլոր դպատուններըը առտուն կանուխ ելած Ղալաթիո եկեղեցին կերթային։

Մին հովանոցը թևը զարկած՝ սրունքներուն նետածին չափ քայլ ատնելով կերթար. մյուսը՝ առանց բարև առնելու և տալու ճամբան կը շարունակեր. ուրիշ մը՝ ոաքի ամանները թևին տակը առած՝ հնալով կը վազեր. չորրորդ մը՝ ուշ չմնալու համար ձիու մը վրա հեծած՝ կը հառաջանար։ Մեկ քանինեը ալ՝ չորս հինգ հոգի մեկ եղած, մյուսներուն պես աճապարանոք կերթային։

Ի՞նչ է եղեր պատճառը։

Պատճառը սա է եղեր, որ Ռւսումնական օժանդակ խորհուրդը հրավիրած է եղեր զիրենք վարժապետաց ապագային վրա հետևելին խորհրդակցելու համար։ Վարժապետներն ալ այս լուրն իմանալնուն պես՝ վերջապես Ռւսումնական խոր-

հուբդը մեր արժեքը ճանչցավ ըսելով՝ փութացեր են այս հրա-
վերն ընդունելու։

Անոնցմե ոմանք ճանրան գացած առեննին իրարու հետ
կը խորհրդակցեին։

— Ես կարծեմ թե՝ պաշտոնե քաշված դատաուներուն եթե
հազար դուբուշ. ամսական չկտավլի՝ անոնց ապագան չկրնար
ապահովել։

— Այդպես է. եթե Ուսումն. խորհուրդը չորս հինդ հարյուր
դուբուշ. ամսական որոշի՝ չըլլա որ ընդունինք հո։

— Ո՞վ կընդունի, խմենք ենք։

— Հեմ, էֆենտիմ, հիմա դատաուներուն մեջ անանկնե՛ր
ալ կան, որ շատ խեղճ կապրին կոր, անոնց ալ բան մը կա-
պելու է Ուսումն. խորհուրդը։

— Իրավունք ունիք. հիմա հոն երթանք նե՝ կը խոսինք
այս կետերուն վրա։

Ժամը վեցին Ուսումն. օժանդակ խորհուրդը առյանը կը
բանա. դատաուները նեբս կը մտնեն։

— Գիտե՞ք, ձեզի ինչո՞ւ համար հոս հրավիրեցինք, կըսե
Օժանդակ խորհրդո անդամներեն մին, խնդիրը ձեր ապագան
ապահովելու վրա է։

— Շնորհակալ ենք, բայց նախ և առաջ նեբկան ապա-
հովելու էինք, կը պատասխանե դատաուներեն մին։

— Ուսումնական խորհուրդը մինչև հիմա ինչ ըրավ, դա-
սատուները նախատուեցան, ծեծվեցան և ինքը անտարբեր կեցավ։

— Ակնից եաքը այնպես պիտի չըլլա. դատաուներուն ալ
իրավունք պիտի տրվի ուբիշները ծեծելու։ Հիմա մենք կուզենք,
որ ձեր ապագան ապահովենք։

— Շնորհակալ ենք. ելևէջսապատ կըլլանք ձեզի։

— Ձեր ապագան ապահովելու համար որոշեցինք, որ ձեր
ամսականին հարյուրին տասը վար դնենք, որպեսզի ծերանաք
նե՝ անոթի չմնաք։

— Ի՞նչ, մեր նեբկայովը պիտի ապահովեք մեր ապագան-
դիտնալու էիք, որ եթե դասատվաց նեբկան աղեկ վիճակի մեջ
ըլլար՝ անոնց ապագան ալ երջանիկ կըլլար և...

— Այո, բայց, որովհետև, քանի որ այսպես որոշած ենք
մենք... դուք ալ խորհեցեք, հարյուրին մեկ կամ երկու ուիք։

— Առածնիս ինչ է որ, ինչ պիտի տանք։

— Վերջապես խորհեցե՛ք...

— Դուք ալ խորհեցե՛ք, մենք ալ կը խորհինք, անոնք ալ թող խորհին...

— Մենք կը խորհինք, դուք ալ կը խորհիք, անոնք ալ կը խորհին...

— Շատ լավ, պատասխանելով կը մեկնին դասատուները, բայց ոչ առավոտ պէս ուրախութեամբ և սրտագութեամբ։

Քանի որ ներկան ապագային դիտել հարկ է, քանի որ հիմա պաշտոն վարող դասատուները ներկան կը ներկայացնեն և պաշտոնե քաշված ծեր դասատուները ապագան, կառաջարկեմ, որ դասատվաց ամսականները ոչ թէ հարյուրին երկու կամ երեք՝ այլ անոնց ամսականները ամբողջ առնելու է և պաշտոնեն քաշված ծեր դասատուներուն տալու է, որ ապրին։ Այսպէս թեպետև հիմակվան դասատուները ներկային մեջ անոթութենեն կը մեռնին, բայց ապագային մեջ երջանիկ կեանք մը կը վարեն։

Ուսումնական Օժանդակ խորհուրդը կամ մեր այս առաջարկութեյունն ընդունելու է և կամ ապրեցնելու ուրիշ միջոց մը գտնելու է պաշտոնեն քաշված ծեր դասատուները՝ որոնք իրավունք ունին բոլոր ազգայիններու համակրութեյունն վայելելու [439]։

1877

ԴՌՆԵՆ ԴՈՒՐՍ ԵԼՆԵԼՆ ԱՐԳԻԼՅԱԼ Է

Այո, ամենուս գիտցած ճշմարտութեյուն մ'է, որ դռնեն դուրս ելնելն արգիլյալ է, որովհետև դուռ մը անոր համար կը շինվի՝ որպեսզի անկից մտցվի և ոչ թէ ելնվի. բայց նոր սերունդն այս ճշմարտութեյունը չը գիտնալուն՝ Քրիստոսատուր [440] էֆենտին բարկացուցեր է։

Հայտնի է, որ Քրիստոսատուր էֆենտին անօրեն կարգված է քանի մը վարժարաններու, որոց թիվը չորսի կը հասնի և որ քիչ առեներն քանը չորսի պիտի հանգիր։ Այս վարժարաններուն մեկուն մեջ քանի մը աշակերտներ, կեսօրին տուն կերթան ճաշերնին ընելու համար։ Քրիստոսատուր էֆենտին հիշյալ վարժարանին անօրենն եղած օրն, դպրոցին բարեկարգութեյանը ձեռք կը զարնե և նախ սա կանոնը կը դնե.

«Դռնեն դուրս ելնելն արգիլյալ է»։

Այս կանոնը դնելեն անմիջապես ետքը տնտեսին կը պատ-

վիրե, որ հետօրին դալոցին դռները գոցեն։ Տնտեսը կը հնազանդի։

Կես օրին դուրս եկնող աշակերտներն, որոնք հարկավ քանակով պատճառ մը ունին դուրս եկնելու, տեսնելով որ դռները գոց են, դալոցին պատուհաններն վար ցատկելով տուներնին կերթան, կերակուրնին կուտեն և դալոցին պատուհաններն անցնելով՝ դալոց կը մտնեն։

Տնօրենը կխմանա, տնտեսը կը կանչէ ու կը հարցուներ.

— Տնտես աղբար, իրավ է, որ երեկ երկու երեք աշակերտ տուներնին գացեր են։

— Ես դռները ադեկ մը գոցեցի, դռնեն դուրս եկնող չհտավ։

— Ուսկից եկեր գացեր են անանկ է նե։

— Պատուհաններեն ելան կարծեմ։

— Տեսար դուն։

— Հրամմեր եք, աղա, տեսա։

— Ինչու թող ալիր, տնտես աղբար։

— Ծառա եմ, աղա, դուք ինձի ապսպրեցիք, որ դռնեն մարդ թող չտամ, պատուհաններուն վրայք բան մը չապսպրեցիք, ես ալ կարծեցի, որ պատուհանեն դուրս եկնելն արդելյալ չէ։

— Մեյ մ'ալ թող չտաս, հա, հասկցար։

— Բեք ադեկ, աղա։

Հետևյալ օրը նորեն կսկսի պատուհանի գործողությունը, ուրուն վրա տնօրենը կրակ կը կտրի ու հրաման կարճակե, որ պատուհանները գոցվին։

Պատուհանային սույն գնդքը պատմելով՝ դուրս չեկնելու համար տրված պատվերին ինչ տատիճանի կարևոր կամ անկարևոր, իրավացի կամ անիրավ ըլլալը հասկցնել չէ միտքերնիս. այլ հասկցնելիքնիս սա է, որ երբ տնօրեն մը յուր հրամանները գործադրել տալու համար այսչափ դիմադրություն կը տեսնե, ըսել կըլլա՝ թե դուրսի է տակավին այն հանգամանքներն, որովք տնօրեն մը սեր և երկյուղ միանգամայն ազդելով աշակերտաց զանոնք իրեն կը հնազանդեցուներ։

Այս ըսածներս հաստատելու համար կընայինք մեջ բերել ուրիշ քանի մը դեպքեր ալ որք մեղի հաղորդված են, սակայն ինչ-ինչ նկատումներու համար ստիպված ենք սպասել, որ գործերը խոսին և թաղնցիք աչքովնին տեսնեն ու համոզվին[441])

1875

ՋՈՒՐՍ ՄԻ՛ ՊՂՏՈՐԵՐ

Սամաթիո Սահակյան վարժարանը բացված օրեն ի վեր, մարտ ամսու օրերուն պես մեյ մը կը բացվեր, մեյ մը կը գոցվեր. մեյ մը կը խնդար, մեյ մը կուլար. բայց սա մեկ երկու ամսեն ի վեր շարունակ կուլար։

Տնօրենն ալ թաշկինակ ի ձեռին առտվընե մինչև իրիկուն կը սրբեր անոր արցունքը, որ լալը չտեսնվի. սակայն անցյալ հինգշաբթի ժամը հինգ ու կեսին միջոցները անանկ լացիր է, որ տնօրենը չէ կրցեր սրբել. ուստի և սկսեր է պոռալ վարժարանին մեջ աշակերտաց առջև.

— Պարոն կառավարիչ, պաշտոնդ ինչո՞ւ չես կատարեր. ոտքի ման գողցված է վարեն։

— Տղա գողցված է, ըսիք։

— Ոտքի ման գողցված է ուրիշ զույգ, ասոր պատասխանատուն դուն ես։

— Աշակերտ գողցված չէ յա։

— Հեմ ալ, ոտքի մանանները իրենց տեղերնուն կարգավ չեն կայնիր կոր։

— Աշակերտները կարգավ կը կայնին կոր։

— Գիրքերը պատռտած են, անոնք կազմելու տաս պիտի, դպրոցըատ վնասը տուժելու պարտական չէ։

— Ես կազմարար չեմ։

— Դպրոցին մեջ բոլոր անկարգությունները քուկին գլխուդ տակեն են. երեկ աշակերտին մեկը բասքըմա է կերեր, անհանգիստ է եղեր, դուն ասանկ բաներու նայելու չէիս մի։

— Կը խնդրեմ, պարոն տնօրեն, կիրքերնիդ զսպեցեք։

— Ի՞նչ, կիրքս զսպե՞մ մի, դուն իմին կիրքիս ինչ կը խառնվիս. առջի օրն ալ սուճին տունը ջուր չբերավ, ասոր ալ պատասխանատուն դուն չես. ըսե նայիմ, անկիրթ, (աշակերտը կը խնդա)։

— Անկիրթը դուք եք։

— Անկիրթը ես եմ մի՞, չուտ, վար իջիր։

Կառավարիչը տեսնելով, որ տնօրենին անխոհեմությունը, ծանր հետևանքներ պիտի արտադրե, կառնե կը քալե։

Այս դեպքը Սամաթիացոց աչքին առջև դնելով՝ կը հատանք՝ որ իրենք թաշկինակին առնելով՝ պիտի փութան դպրոցին այս արցունքը սրբելու, որովհետև ինքզինքը կառավարել չկրցող տնօրենի մը դպրոցի կառավարությունը հանձնելը ազգասիրության դործ չէ [442])։

1872

ՍԱՄԱԹԻՈ [443]) ԹԱՂԱԿԱՆԸ

Սամաթիան ալ ուրիշ թաղերու պես ուներ ժամանակավ իր թաղական խորհուրդը. բայց անդութ ճակատագիրը օր մը ոսոխդութեյան եղնելով՝ պատրաստեց յուր հրացանը և ցիր ու ցան ըրավ այս թաղականը կազմող թռչուններըւ

Թռչուններուն մեկը միայն՝ կամ հրացանին ձայնը չառնելով՝ և կամ ոսոխդը համբակ կարծելով՝ տեղեն չկրնցաւ

Այսպէս հանդուգն թռչուն մը դեռ տեսնված չէ պատմութեյան էջերուն մեջւ

Ճակատագիրը զայրացավ. օրինավորութեյան դիմեցւ Օրինավորութեյունը առավ իր հրացանը և կոթովը հրեց այս անշարժ թռչունը: Թռչունը փոխանակ իր թռիչքն առնելու և խուսյս տալու, տեղը փսխեց և սկսավ անքթիթ աչօք օրինավորութեյան երեսը նայելոււ

Օրինավորութեյունը քահ քահ մը փրցուց. Մեղուն այս քահ քահը լսեց և գոլծին տեղեկացավւ

Այս թռչունը կրճիկյան էֆենտին է. օրինավորութեյունն ալ թաղեցի էֆենտինւ

Կրճիկյան էֆենտի կը վախաքի, որ ազգային բոլոր պաշտոնները ինք միայն վարե: Կրճիկյան էֆենտի այս օրվան օյս Թաղաքական ժողովո անդամ, երեսփոխան, թաղական և դպրոցի տնօրեն մ'է, մ'էր, գոնե սա պատրիարքութեյան պաշտոնն ալ վրան առնե երթաւ

— Այդ պաշտոնները իրեն հանձնվեր են նե՝ ընդունելու չէ՞ր:

— Ընդունելու էր, բայց այդ պաշտոններն իրմե ուզված ժամանակին ալ ետ տալու էրւ

Եթե Կրճիկյան էֆենտի հանցանք մ'ունի ան ալ սա է թե՝ օրինավորութեյան սովածը շուտով կառնե, ուզածը շուտով չի տալւ

Է՛հ, ասանկ ալ առուտուր չըլլարւ

1872

ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԵՂՈՒԻ ԱՌ ՍԱՄԱԹԻԱՑԻՍ

Տյարբ իմ և տիկնայբ
(ծափահարություններ)

Օգսեն էֆենտի Խոճասարյան [111]) (ծափահարություններ) ինձ ակի օրը ժամը տասներկուքին միջոցները ատենապահությունը ըրավ հայկական զրոսարանի մեջ (այո, այո)։ Շատ ունկընդիրներ կային հոն, այլ քիչ ուշադիրներ։ Ես ալ հոն էի, ավելորդ էր ըսել, որ Օգսեն էֆենտին ալ հոն էր, քանի որ խոսողն ան է (այո, ան, այո ան)։ Կաղաչեմ, մի ընդմիջեք խոսքս։ Ես լսեցի Օգսեն էֆենտիին ձայնը, անոր համար բոլոր ուժով կը պնդեմ, որ խոսողը Օգսեն էֆենտին էր. բայց Օգսեն էֆենտիին իրոք հոն ըլլալուն կամ չըլլալուն վրա բան մը չեմ կրնար ըսել (հասկցանք, հասկցանք, շատ աղեկ, շարունակեցեք)։

Ատենապանը Սամաթիա կռիվներուն վրա խոսելով՝ ըսավ թե, Սամաթիացիք չեն ուզեր կռվիլ, բայց պարագանները անանկ բերին, որ կռվին, (շարժումներ ունկնդրաց կողմեն, աֆոո չըկրնալ դանելով՝ ոտքի վրա ցնծալուն համար)։ Ես ալ կը հաստատեմ, որ Սամաթիացիք բնավ հանցանք չունին. հանցանքը ան դեռնին առիը անցնելիք պարագաներուն է։ Ուստի այդ պարագաները պատժելու է, որ մեյ մ'ալ չըլնեն։ Եվ կը ճանչնանք այդ պարագաները, մեզի պես երկու ոտք, երկու ձեռք ունին, այդ պարագանները օդի ալ կը խմեն, այդ պարագանները, տյարբ իմ, կիրակի իրիկունը սեղանի մը առջև հավաքված օդի խմողներն էին (Սամաթիո հրաժարյալ և չհրաժարյալ թաղականաց կողմեն բարկության ցույցիը) այդ պարագաներն էին, որ քվեատուփը կոտրեցին, և այդ պարագաներն են, որ քվեատուփը կոտրեցիք, ըսին, (փոթորիկ)։

Պատմութենեն հալածյալ՝ ապագայե անհնձյալ այդ պարագաներն են, որ գիրար հրապարակավ ամբաստանեցին. այդ պարագաներն են, որ ամբողջ Սամաթիացիք ամբաստանվեցան գեռ առջի օրը. այդ պարագաներն են, որ ձեր գլուցները տակն ու վրա ըրին. վերջապես այդ պարագաներն են, որ ձեր աղջըկանց սուրբ ճակատը իրենց պիղծ մատներովը արատեցին, հալածեցին անմեղ կուսանքը. և այդ պարագաներն են, որ այսօր երկու գավաթ օդի պարծելով՝ «մենք հաշտվեցանք ալ» կըսեն և ձեր մորուքին կը խնդան, (ուսկունդրաց երեսին վրա

թանձր ամպիր կը դիզվին. կուսանք և մանկունք կանձրևեն-պարագանները կը խնդան ու կը պարեն)։

Սամաթիայցիք, եթե այս ըսածներս կը հասկնաք և դղպաք ի գործ վազեցիք, ապա թե ոչ, վերուցե՛ք ձեր վարժարաններեն բարբարական դասերը՝ որովհետև խիղճ չունիք բարին ու չարն դատելու. վերուցեք պատմութիւնը՝ որովհետև միտք չունիք անցյալեն խրատվելու, վերուցեք արամաբանութիւնը՝ որովհետև միտք չունիք խորհելու, վերուցեք ճարտասանութիւնը՝ որովհետև սիրտ չունիք զգալու։

Ինդայենալու պարտավորյալ բերան մը ասկից ավելի չկըընար իր պարտավորութիւնը մոռնալ, հետևապես կտրիվվի իր ամամանեն մնջը մոռնալ (ուսկեդրաց դիշերն երկարե, պարագային տիվը կարճանա)։

Օգտեն էֆենտին ըսավ նաև թե՝ Սամաթիո կռիվը կրնար երեսփոխանութեան լուծման պատճառ ըլլալ։

Ես ալ կը հաստատեմ այդ խոսքը. և շատ հավանական է, որ թիերն [448]) ալ այս պատճառավ հրաժարի և Գաղղիացի հանրապետութեյունն ալ կործանի. արդեն օդերուն ալ անձրևոտ երեսալուն պատճառը՝ Սամաթիո կռիվն է կըսվի։

Վերջին խոսք մ'ալ։

Սամաթիացիք, ուրախացեք, ձեր թաղակոնաց հաշտվելուն վրա։ Ես ալ հուրախանամ, և կը փափաքիմ, որ մշտնջենավոր ըլլա այդ հաշտութիւնը։

Եվ որովհետև կռիվը խորհրդարանի մեջ ծագեցավ, և որովհետև հաշտութիւնը Հայկակաևի մեջ տեղի ունեցավ, թող մի առ իրենց մտնել խորհրդարանին ներս, որպեսզի չըլլա թե դարձյալ կռվին. ալ փակեցեք դիրենք Հայկակաև զրոսարանի մեջ ուր հաշտվեցան, և ուր կրնան միշտ սիրով և միութեյամբ վարվիլ իրարու հետ այդ թշվառական պարագաներուը։

Սամաթիացիք [449])։

1872

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐՈՒՆ ԾԵԾ

Ժամանակավ վարժապետները աշակերտին կը ծեծեին, հիմա ալ թշդ. խորհրդո անդամները վարժապետ կը ծեծեն կոր։

Եվ շատ տղեկ կրնեն կոր. թող վարժապետները քիչ մը ծեծ ուտեն, որ վարժապետ ըլլալը սորվին։

Բայց ինչո՞ւ համար ծեծ կերեր են սոսկը։

Լսածնուս նայելով՝ առաջինը մնացած ամսականը ուզած ըլլալուն համար ծեծ կերեր է, և արժանի է, որովհետև վարժապետը ազգին հացը կուտա, որովհետև վարժապետը ազգին զերին է, հոգաբարձուներուն առջև ծռնկի չդնելու է, գեռևեն թեմեցնա ընելու է, ի պահանջել հարկին քանի մը թախտակ ալ նետելու է, երբեմն հոգաբարձուներու տունը մխա տանելու է, ամսական չտրված միջոցին ուզելու չէ, ընտանիքը անոթի պառկելու է։

Երկրորդինն ալ իր վարժապետ ըլլալը մոռնալով՝ իրեն ուղղված չլսած հայհոյութեյանց կարճ պատասխան մը տալն է. ասալ արժանի է ծեծի, որովհետև վարժապետ մը ազգին հացը կուտա կոր, ինչ որ ըսեն, համբերելու է, եթե անարգեն՝ չնորհակալ ըլլալու է, եթե հայհոյեն՝ գոհ ըլլալու է, եթե ծեծեն՝ երախտապարտ ըլլալու է։ Ինչո՞ւ.—որովհետև ազգին հացը կուտան եղեր։

Զարկեք, սա թշվառականներուն, ամենուս ալ հացը կուտանե՛ն կոր սա որկրամոլները. ահ, այս օրերս ձեռքս չանցնիր կոր հատ մը, որ վայտի հարվածներով ոսկորները ջարդ ու բուրդ ընեի։

Ջըսեք ամենուն, բայց շատերուն կարծիքն սա է գժբախտաբար։

Վարժապետաց հարգն ճանչցող լուսավորյալներն անդամ կարծես կը քաշվին դասատվայ հետ վարվիլ այնպես, ինչպես որ կը վարվին իրենց հավասար մարդոց հետ։ Իրենց անպատվութեյուն կը համարեն անոնց պատիվ ընելը, մինչդեռ անոնք ամեն պատիվ արժանի են։

Չեն ուզեր գիտնալ անոնք, որ դասատուները չեն, որ ազգին հացը կուտեն, այլ ազգն է, որ անոնց հացը պիտի ուտե։ Չեն ուզեր համոզվիլ անոնք, որ ամենափոքր դասատու մը ամենամեծ հարուստեն ավելի, շատ ավելի կը ծառայե ազգին և անոր համար ավելի պատվո և հարգանաց արժանի է. անոնց պարծանապատվութեյանը կը դպչի կոր հասկնալը, թե դասատուները ազգին ծառաները չեն, այլ տերերն են։

Իբրև զարձանաթս թերթ ասկից ավելի չենք կրնար գրել մենք, այլ կը խնդրենք մեր լուրջ լրագրներեն, որ դասատվայ վիճակին վրա երկարօրեն գրեն, ամեն օր գրեն, ամեն ճիգ թափեն անոնց վիճակը բարվոքելու. որովհետև եթե օր մը ազ-

զերնիս լուսավորվի՝ ոչ թաղական ազայի մը, ոչ սերվիս էֆենտի է մը սլիտի լուսավորվի, այլ այսօր ծնծղող դասատուներեն սլիտի լուսավորվի[447]։

1876

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԹԱՏՐՈՆԻ

Նկատելով՝ որ Բարակեոմբյուկի եկեղեցւոյն լուսարարը կաթսաներս ըլլալուն պատճառավ դանձանակին առաջ իր դերը պանը կը տեսնէ կոր և ուխտավորներեն առած սմակը ամբողջ դանձանակին մէջ նետելու տեղ յատը գրպանը կը նետե կոր, հարկ եղավ ի պաշտոնե ծանուցանել ջերմեռանդ ուխտավորներուն, որ սակից եաքը իրենց լուման լուսարարին չհանձնեն և իրենց ձեռքովը դանձանակին մէջ ձգեն։

Սուրբ ծանուցման հակառակ վարվողին ուխտը ընդունական սլիտի չըլլա[448]։

1876

ՆԱՄԱԿԱՆԻ

Առ Տ. էֆենտի Հ.[449]

Մարդս որչափ որ պարտաւոր է ինքզինքը ճանչնալ՝ նուչնչափ և թերևս ավելի պարտաւոր է դիմացինը ճանչնալ, որովհետև դիմացինը ճանչնալը իր չափը ճանչնալու մեծ դյուրութիւն կուտա մարդուս։

Եվ որովհետև դուք ալ մարդ ճանչցված եք, կարծեմ պարտաւոր եք այս երկու պարտականութիւնց գոնե մին կատարել։ Բայց ցավ ի սիրտ կը տեսնեմ, որ այս երկու պարտականութիւններեն և ոչ մին կատարելով՝ ձեր հասակին բաւթը բանեցուէիք և ամենուն ծաղու նշաւակ կըլլաք։

Ձեր աղնվութիւնը (՞) կը հիշե անշուշտ, որ անցյալ շաբթու դիս կանչել տված էր... ահա դիմացինդ չճանչնալուդ անհերքելի ապացույց մը։

Ձեր աղնվականութիւնը (՞) կը հիշե անշուշտ, որ հրավերնիդ քաղաքավարութիւնեմբ ընդունելով գալուս պես ինձի բաներկամաբար խրատ տալ սկսաք... ահա ինքզինքդ չճանչնալուդ անժխտելի փաստ մը։

Էֆենտի, իմ բարեկամներուս խրատներն ու կարծիքները միշտ կընդունիմ, բայց երբ գաճաճ մը, որ ինքզինքը քաջ կեղեւակայէ, երբ հասարակ մարդ մը ինքզինքը լրտի մը կամ ֆռնքի մը պես ազնվական կը կարծէ և չգիշնիր յուր հավատարմներուն և շատ անգամ թե արժանյոք և թե ազնիվ սըրտով իրմէ բարձր եղողներուն բարև տալ, երբ բժիմիա մեկը բաժանորդ գրված լրագրին խմբագրին վրա ազդեցություն ունենալ կը կարծէ, և երբ այսպիսի մեկը առանց իր արժեքը գիտնալու հանուն բարեկամության խրատ տալ կ'ելնե, իր ենթադրական ազնվականությամբը լինձի հրահանգ տալու իշխանություն ունենալ կը կարծե և իմ անկախությանս վնասել կուզե, այնպիսվույն խրատը ավղին հետ կը մերժեմ։

Ըսեք, էֆենտի, Թատրոնին պարունակությանը մասին մեզի խրատ տալու իրավունքն ճշմիկց ունենալ կարծեցիք։ Բարեկամութենի՞ն—Դանի՞ անգամ տեսնված եք հետս, ինչ բարեկամություն ըրած եք ինձի, երբ Թատրոնին բարիք ուզած եք։ Ձեր տաղանդին.—ուր է այդ ըսածնիդ. հասցեն ալ եք իմացած, գտնամ։ Ձեր իշխանութենի՞ն։—Տպագրական տեսչության անդամ չեք։ Թատրոնն... վաճառականության վերաբերյալ լրագիր չէ։ Ուսկից առիք ուրեմն այդ իրավունքը. կարծեմ դուք ալ չիյտեք ուսկից ատած ըլլալնիդ և արդեն չունիք, որ տեղ մը առած ըլլաք. ուստի այն մարդը, որ յուր չունեցածն ունենալ կը կարծե ամենեն ծաղրվելու արժանի է։

Էֆենտիս, պետք է սորվիլ ինչ՝ խմբագիր կա, խմբագիր ալ կա։ Խմբագիր կա, որ իր լրագրուչն միջոցավ ազգիս հատմար հարուստներուն տներուն մեջ շողոքորթություն կընե, ձեռի պես էֆենտիներուն գետնին բարև կուտա, խրատ տաս նե՝ կընդունի, չլսես նե՝ չբարկանար. խմբագիր ալ կա, որ իր լրագրուչն միջոցավ մի մխայն քեզի պես մարդիկը ծաղրելով հաճույք կզգա, որ ժողովրդական է, որ հարուստ, էանափ, աղքատ, ամենը հավասար բռնելով՝ բարին կը սիրե, կը գովե, որ ձեռի պես ազնվականներե շողոքորթիվ կուզե, որ ձեռի պես էֆենտիներուն շատ բարձրեն թռչտիլը տեսած ժամանակը խնդալեն կը ճաքի, և դուք ալ դժբախտաբար սասկի խմբագրի մը խրատ տալու ելաք. մեղք, որ դիմացինիդ ճանչնալու մասին այսքան տկար եք եղեր։

Էֆենտիս, դուք որովհետև ազնվականության սուրբը կը քաշեք առանց ազնվական ըլլալու, թող կուտաք, որ ազնվական անվանյալ մը խմբագիր մը գետնե գետին զարնե ու ապանեն,

դուք ալ հանդիսատես կըլլաք. և երբ խմբագիրն գլուխը քիչ մը վեր առնե ու աղնվական անվանյալին քար մը նետե, խուրձն կը փրթիլիք ոճերը, եղերն... կը պոռաք: Ըստ ձեզ, խմբագիրը մը ոչ այս աշխարհին և ոչ ալ հանդերձելուն մեջ ձեզի պես աղնվական անվանյալներուն վրա բան մը գրելու չէ:

Իփենամ, ձեր այդ կարծիքը սխալ է և ես ալ արդեն ձեզմե ուղիղ կարծիք մը չեմ սպասեր, որովհետև ձեր խելքը, տաղանդն ու արժանիքը ինչպես նաև ձեր աղնվականութիւնը ձեր հասակին վրա չափված են դժբախտաբար:

Ափսոս, որ ինքզինքնիդ միշտ ձեր քթին վրա կը չափե՛ք, և դիմացիննիդ ձեր հասակին վրա:

Առ այժմ երթաս բարով [450]:

ԹՒՏՐՈՆ

1876

ՄԵՂՈՒԻ ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Տիկին.

Երդում ըրած էի, որ կանանց հետ չխոսիմ. բարով խերով չընեի, որովհետև կինիները համբերն իսկ խոսիլ կուտան:

Պատճառ եղաւ, որ ըրած երդումս մոռնամ, մեղքը ձիտըդ ըլլա:

Ի՞նչ էր ինձի դրած նամակդ, տիկին, ինչ անեծքներ էին, որ թափեր էիր գլխուս, դեռևին տակը անցնիմ եղեր, լեզուս չօրնա եղեր, պապանձիմ եղեր, ձեռքերս կտրտին եղեր, վիճաւտս վերնա եղեր, թրամվայի հշմին օդրամիշ ըլլամ եղեր, աչքդ չհանանան եղեր (դես), խուլ ըլլամ եղեր, մեռնելես ետքը ոտքս քար մը կապած ծովը նետելու է եղեր, ապրած առենս ուտելու հաց չգտնամ եղեր, այդին անդին թափառական պատիմ եղեր, կամուրջի վրա մուրամ եղեր, քուվին դնեն հաց մուրալու եմ եղեր, ինչու համար, տիկին, ինչու, ինչ ըրի ես քեզի, ինչո՞ւ դեռևին տակը անցնիմ:

Բամբասեցի՞ քեզի, բնավ առն չնսուիլդ և առաքվնե մինչև իրիկուն անոր ասոր առնը երթալդ էրկանդ իմաց տվի, պոթին մը առնելու համար էրկանդ հորմեն ինացած քհէրիպարը ծախելդ իմացուցի. դրացվուդ առնեն պոչայի խոթին գողնալդ իմացուցի:

Ըսե՛, տիկին, ինչ ըրի ես քեզի և ինչո՞ւ լեզուս չորնա. մյուս լրագրնեղուն լեզուն չորնա, ինձ ինչ կուգես։

Տիկին, այսչափ անհնձք թափելեդ վերջը՝ կը հանդգնիս նաև ըսելու, որ եթե քաղվածքները [451]) մեյ մ'ալ հրատարակելու ըլլամ, առանդ առջևին անցած առենս գլուխս վրա տաք ջուր պիտի թափես եղեր. թափե՛, տիկին, կուգես նե՝ կատր մ'ալ սապոն նետան, որ գլուխս լվացվի։

Ի՞նչ է հանցանքս, տիկին, որ բերանդ բացիր, ականջներդ պոցցիր. պատվույս դպչելիք խնդ մը խոսքեր ըրեր ես. խըմպըլ եմ եղեր, բաչաներս չեմ կրնար կապել եղեր, գլուխս կախած կերթեմ եղեր, ֆեսը գլխես գողնալու ըլլան նե՝ չեմ իմանար եղեր, ընավ կուսքիս չունիմ եղեր, բանթալոնս լայն է եղեր, բալթոս երկար է եղեր, քրավաթ չվայլեր եղեր, քրավաթս մեջքս կապելու եմ եղեր, շապիկիս յախանները քովե քով չեն գար եղեր, մոսախքրայի խանութէ կարծեցիր պիս, տիկին, ալ բավ է, բերանդ ժողվե. ամեն մարդ քուկին մասնարադ չէ. և թե որ Ընդհ. ժողովո [452]) մեջ ընկեր այս խոսքերդ՝ կը տեսնեին թե ինչպես կը բողոքեի։

Եվ արդեհետև այսպես կը նախատես պիս, քաղվածքները ամեն թերթի մեջ պիտի դնեմ, ուզածիդ չափ պուռա։

Տիկին, ինձի պես երեսասպզի մը սանկ անարգական խոսքեր ուղղելը գիտես ինչ ըսել է, ամբողջ երեսասպզուեթյունը վիրավորել ըսել է, ասկից ավելի չեմ խոսիր և կը խնդրեմ, որ ուրիշ անգամ չսոխկեք պիս խոսելուս։

Հաճեցեք տիկին, ընդունիլ խորին զղվանացս հավաստիքը [453])։

1872

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՄԵՂՈՒԻ

ՆԻՍՏ ԱՌԱՋԻՆ Ի ՁԱՄԼԸ ԽԱՆ

Նախագահ . . . Մասիս
Ատենապետ . . . Օրագիր

Օտապաշլին ուշանալուն պատճառավ՝ ատյանը ժամը 3-ին բացվեցավ ի ներկայության ներկա եղող անդամոց։

Ատենապետ.—Մնդրոց կարգն անցնելեն առաջ պարտավոր եմ դիտնալ, թե մեծագույն մաս գոյացած է, թե չէ։ Ասիկա հասկնալու համար կառաջարկեմ, որ ներկա եղողները իրենց բացակա չըլլալն ապացուցանեն։

(Ներկա եղողները կը հաղան)

Ատենապետ.—Շատ աղեկ։ կառաջարկեմ նաև, որ բացակա եղողները փոքնգտան։

(ոչ ոք կը փնդտա)

Ատենապետ.—Ըսել է, որ բացակա չկա։ Անցնենք ուրեմն խնդրոց կարգը, և ձեռք առնենք Այվազին վավերացումը։

Փունջ.—Քանի որ ժողովը դեռ վիճաբանութեյան չմտավ, չեմ կրնար կարծիք մը հայտնել, հիմակուհիմա սանկ կը բողոքեմ։ Բայց իրավունք է, որ Օրագիր իր դինը 10 փարայէ իջեցնեն և իմ տունիկս փլցնեն։

Նախագահ.—Մնդիրեն շեղեցար, խնդիրը Այվազին վավերացման վրա է։ Ինչպես որ ծանօթ է մեծ. անդամոցդ, այս խնդիրը այլ և այլ կերպարանքներու տակ մտավ։ Մեկը բեզութեք դազեթաը ըսավ. մյուսը խայտառակ ըսավ, ուրիշ մը բարակեռզ ըսավ, չորրորդ մը ավանակ ըսավ։ Այս խոսքերուն դեմ իրավամբ կը բողոքե Այվազը, և կուզե դիտնալ՝ թե ասոնցմե ո՞րն է ինք, որպեսզի ինք ալ հետաքրքրութեյուն ազատի։ Եվ արդարև անօրոշ վիճակի մեջ մնալու պես գեշ բան չկա աշխարհիս երեսը. ուստի կը հրավիրեմ, որ ասոր վրա կարծիք հայտնեք։

Մամուլ.—Այո, այո, ինձի ալ մեղք է։

Մեղու.—Որ և է մեկու մը անուն տալու համար նախ պետք է անոր գործերը քննել։ Օրինակի համար, մարդ մեռցնողին մարդասպան կըսեն, բան չգիտցողին տգետ կըսեն, տան մեջ կերակուր տանող բերդողին Այվազ կըսեն ևն, ևն. ուստի կառաջարկեմ ժողովին, որ անոր գործերը նախ քննվին և վերջը անունը դրվի։

Ախա.—Ես կառաջարկեմ, որ նախ անունը դրվի և վերջը գործերը քննվին։

Հայրենիք.—Բայց գործերը անուններին չհամապատասխանեն նե՞։

Մամուլ.—կրնա ըլլալ՝ որ անունս գործերուս համապատասխանե։

Նախագահ.—Պետք է որ քվեի դրվի։

Ատենապետ.—Պետք է որ ախոռը դրվի։

Նախագահ,—Կաղաչեմ որ առանց կէսքի խոսիք։

Ատենապետ.—Դուն ինձի չես կրնար աղաչել. բերանդ ժողվե, Պրուսայի խնդիրը դեռ չմոռցվեցավ։

Նախագահ.—Լուե, անպիտան։

Ատենապետ.—Անպիտանը դուն ես։

(Ժողովը կը խանդաբրի. դուրսեն բոժոժի ձայներ կը լսվին)։

(դողալով)

Ասիա.—Ի՞նչ ձայն է սա։

Մեղու.—Մի վախնաք, Այվազները կանցնեն կոր։

(Ժողովը կը խաղաղի)։

Նախագահ.—Ի կարգ կը հրավիրեմ անդամները. և կառաջարկեմ, որ ուշի ուշով մտիկ ընեն Այվազին գործերը։ Այս Այվազն երբեմն սուրը սեղանը պլոյտի կը նմանեցնեն, երբեմն տաթածյալ ձեռք ընդ ձեռացը լիրը քահանայի մը սրիկայությանն կը հարմարցնեն, երբեմն անոր ասոր ընտանեկան պատմուչն վրան կը հարձակի, և վերջապես ասոնք և ասոնց նման բաներ են գործերը. ուստի ըսե՛ք, ասանկ մեկու մը ինչ անուն տալու է։

Մամուլ.—Ես ձեր խոսքեն դուրս չեմ ելներ։

Մեղու.—Ավանակ անունը տալու է։

Ատենապետ.—Կը բողոքեմ, այդ անունը շատ է անոր համար, և ավանակ ըլլալը իրեն մեծ պատիվ մ'է։

Հայրենիք.—Կուզեք նե՝ ավանակ անունը փոխենք, էշ դնենք։

Մանգուսի.—Մը բողոքեմ, աբջի պես քար նետող դնենք անունը։

Փունջ.—Ախ խիստ երկար է, այդ չափ բանը չը կրնար դուց ընել Այվազը, հետևաբար իր անունը կը մոռնա։ Ճարտասանության մեջ կանոն մը կա, որ շատ անգամ պարունակողը պարունակյալին տեղ կը դրվի. այս կանոնին համեմատ՝ փոխանակ աբջի պես քար նետող ըսելու՝ աբջ ըսելու է։

Մամուլ.—Բայց առջի անունս ալ թող վրաս մնա։

Փունջ.—Առջի անունդ աբջի փոխվեցավ ահա։

Մամուլ.—Հիմա ես աբջ եմ։

Փունջ.—Չէ՛, ճանըմ, մերաք մ'ըներ, պարունակողը պարունակյալին տեղ դրված է։

Մամուլ.—Անանկ է նե՝ վնաս չունի։ Ես կարծեցի, որ աբջ

պիտի ըլլամ ան՝ որ թագի մեջ պիտի խաղամ տեյլ պիտի հարցնեի. ես ալ գործս դիանալու չեմ մի յար։

Նախագահ.—Էյ Սյվաղ, այս խնգիրն ալ ահա այսպես լուծվեցավ։

Մամուլ.—Ոչ, չեմ ընդունիր, ես եշ եմ, իմ անունս չեմ փոխեր։

Ատենապետ.—Բնդի բարիք մը ընելու համար դրնիք այս անունը։

Մամուլ.—Չեմ ընդունիր։

Փուճ.—Ծո խմնդ ես, ինչ ես, պարոնակողը պարոնակյալին տեղ դրված է, կըսեմ կոր քեզի։

Ատենապետ.—Բնդի կըսեն կոր քի պարոնակողը պարոնակյալին տեղ դրված է։

Մամուլ.—Բնք ազնկ, ապրիք ըրնք, որ պարոնակողը պարոնակյալին տեղ դրվեցավ, չէ նե՝ ես չեի ընդունիր։

Ատենապետին եղբայրը.—Առաջ քիչ մը զոռ կընես ամմա, վերջը կընդունեի, դիտեմ ես, պարոնակողը պարոնակյալին տեղը հա, հա, հա, պարոնակողը պարոնակյալին տեղը հա, հա, հա, պարոնակողը պարոնակյալին տեղը հա, հա, հա։

Ժամացույցը չքալելուն համար առյանը ժամը 3-ին դոցվեցավ։

Պարոնակողը պարոնակյալին տեղը հա, հա, հա...

ԱՄԻՍ ՄԸ ՁՊԻՏԻ ԽՈՍԻՍ

Հիվանդություն մը կա՝ որ բժիշկները բուժելու համար չկոսիլ կը պատվիրեն նաւյն հիվանդություններն ունեցողներուն։

Կերևի թե լապգիրներն ալ ունին այս հիվանդությունը՝ զոր բուժելու համար չկոսիլ կը հրամայեն լապգյական ռեսչությունը հիշյալ հիվանդներուն։

Մանզումեն այս անգամ դարձյալ բռնվեցավ այս հիվանդութենեն. բայց թեթև կերպով բռնված ըլլալու է. որովհետև ամիս մը չկոսիլը պիտի կրնա գինք բժշկել։

Այս լապգիրները տղու պես են։ Խոսք չեն հասկնար. սա բանը մ'ըներ կըսես նե՝ դարձյալ կընեն։ Թեպետև Մանզումե-

յին այս անգամվան ըրածը չենք գիտեր, բայց կրնանք դուշակել, որ կամ կրոնական սահմանին դուրս ելած պիտի ըլլա, և կամ քաղաքական սահմանին մէջ մտած պիտի ըլլա։ Ինչպես որ կը տեսնվի ելնե՝ ալ հանցանք, մտնա՝ ալ։—Ի՞նչ ընելու է ուրեմն—զգուշութեամբ մանելու ելնելու է. զգուշութեան ընողներն ալ հիշյալ հիվանդութեենեն բնավ չեն բռնվիր, այս ըսածիս վկա է Մասիսը [454]։

1872

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏՐԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԷՇՆ ՈՒ ԱՅՎԱԶԸ

Է շ ը

Ի՞նչ երանելի հանդիպում. երկար ժամանակէ է վեր Ձեր մեծապատուվութիւնը բոլոր ախոռներու. մէջ փնտռելի եաքը, վերջապես հաջողեցա զքեզ հոս գտնելու։ Արդյոք ձեր մեծապատիվ համբաւութիւնը կը հաճի քիչ մը մեր ախոռը դալ և քանի մը վայրկյան մեզի հետ տեսակցիլ։

Այվազը

Ես զքեզ ճանչնալու պատիվը չունիմ։

Է շ ը

Ես խիստ ադեկ կը ճանչնամ ձեր ազնվութիւնը։

Այվազը

Անդին գնա, անպիտան, ես մարդ եմ, ես չարխվարի կը գրեմ. մեկդի գնա, ըսի, ես զքեզ չեմ ճանչնար։

Է շ ը

Մի բարկանար, կեցիր պատմեմ, որ համոզվիս։ Երբ նախանամութիւնը էշերը տեղծեց՝ ասոնք սկսան մեկեն ի մեկ աճիլ ու բազմանալ, և երկիրս զանոնք սնուցանելու չափ խոտ չկրցավ բուսցնել։ Ասոր վրա էշերը բողոք բարձին, և նախախնամութիւնը անոնց բողոքն իրավացի դատելով՝ անոնցմէ մաս

մը առավ և մարդու հեղափոխանք տվավ։ Դուն ալ անոնցմե՛ն ես, ով եղբայր իմ, եկուր փարիմ քեզի, եկուր համբույր մը տամ քեզի։

Այվազ

Զարմանալի բան... էյ, ինչպես եղավ որ դիս ճանչցար։

Է շ ը

Գիտի մը ամիսե ի վեր զուարճ ձայն մը կառնեի. հետաքրքրությամբ սկսա դիպի ձայնը մոտենալ. և ահա մոտենալով հասկցա զքեզ գտնել։

Այվազ

Էհ, ինչ կըսեի զուարճով։

Է շ ը

Ինքնասպան Հաստունյան վարդապետին համար՝ էշ նահատակ եղավ՝ կըսեիր, Օրագիրն իր ընտանեկան պատիվն ձրի կը ծախե կըսեիր։

Այվազ

Իրավ որ էշ ըլլալուս բնավ հավատալիքս չդար կոր։

Է շ ը

Իրավ որ, մարդ ըլլալուդ՝ ամենևին հավատալիքս չդար կոր իմին ալ։

Այվազ

Էյ, ինչ տարբերություն կա իմ և քու մեջտեղդ։

Է շ ը

Տող մը։

Այվազ

Էյ, դուք ալ շարխվաքի կը գրվի՞ք։

Է շ ը

Ինչ շուտ մոռցաք. Մամուլի հոդվածները գրողները մենք չե՞նք մի յա։

Այվազ

Անանկ է նե՛ եկուր Մեղուի դեմ ալ զռանք։

Է 2 Բ

Բայց անիկա անցյալները «էշերուն հալածումը» մակագրելով հոդվածովը զմեզ պաշտպանած էր, հիմա անոր դեմ գալու ըլլանք նե՝ ապերախտությունն մը ըրած կըլլանք կարծեմ, եկուր այս անգամ չզրանք ու՝ չիֆտեա մը նեռնենք։

Այվազը

Չէ, չէ, առաջ, զրանք, գրալը աղեկ է, և իմ գրալուս ձայնը ամեն մարդ կը ճանչնա։

Է 2 Բ

Միթքդ իննչ է, ինչ հիման վրա պիտի հաստատես խոսքերդ։

Այվազ

Ծռաքերս հիմ չպիտի ուննենան, անհիմն պիտի ըլլան։

Է 2 Բ

Էյ, վերջը ուր պիտի կապես։

Այվազ

Ո՞ւր կապենք նե՝ աղեկ կըլլա։

Է 2 Բ

Ինձի մնա նե՝ քեզի ալ մեր ախորը կապենք նե՝ աղեկ կըլլա։

Ասոր վրա Այվազը զոաց, էշը գրեց, և իրենց գրալովը հաստատեցին այն խոսքը թե՝ մի զարմանաք, մարդիկ, թե ոը Բաղաամու էշը բոլոր կենացը մեջ անգամ մը մարդու պես խոսեցավ, անդին կը տեսնենք շատ մարդիկ, որ ամեն օր իշու պես կը խոսին [455]։

1872

ՍԽԱԼՄՈՒՆՔ

Մարդս սխալական է։

Այս խոսքը երկինքեն ընդունված ճշմարտություն մը և Պապեն մերժված ուսուցյուն մ'է[456]։

Այս խնդրույն մեջ երկինքն ու երկիրը իրարու հակառակ-ած են։

Մեղու՝ որ երկնից և երկրի մեջտեղն է, կըսե թե՝ ոչ միայն մարդ այլ նաև ընութիյունն ալ սխալական է. և իբր ապացույց մեջ կը բերե երկու գլխով, վեց մատով, երկու սեռով հայկն արարածներ. եթե աստնք չըավեն՝ մարդու կերպարանքով իր Աչխարը իբր օրինակ հառաջ կը գչե։

Սա հիմը դնելնես եաքը դառնանք մեր բուն խնդրույն։

Ոսկեդեն դարու մեջ մարդիկ նվազ սխալական էին, ներկա երկաթյա և արծաթյա դարուս մեջ ավելի սխալական են. ասոնցմե կը հետևի թե, մարդիկ աղքատության մեջ ավելի կը սխալին քան թե հարստության մեջ։

Չես հավաար նե մարիկ ըրե։

Կեղ երթալու համար չոգենավ կը մտնես. պիլեթճին կուզա, քառորդ մեճիա մը կուտաս, որ ճնացածը առ։ Պիլեթճին՝ քսա որում մարդ է, ըստ որում սխալական է, հինգ բալա պակաս կուտաս կերթաս։ Կը կանչես դինք և հինգ բարեկ կուգես։

— Ներեցեք, պարոն, սխալեցա։

Րեժիին[457]*) հաստատավելեն ի վեր չատերը ծխախոտ առնելու սովորությունը թողած են, բայց ծխելու սովորությունը՝ աչ։ Գանի մը բարեկամաց քով ծխախոտի տուփ կը հանես, որ սիկար մը շընես. սիկարդ խմլեն և քիչ մ'ալ նստելեն եաքը կելնես և դռնեն դուրս ելած ժամանակդ կը նայես, որ տուփդ քովդ չէ. ետ կը դառնաս և բարեկամացդ կը հարցնես։*

— Առնք, պարոն, իմս կարծեր, ճեպս դրեր եմ, սխալեցա։

Զբոսարան մը կերթաս, և սուրճ մը կը խմես, մանչուկին ֆրանք մը կուտաս, որ ճնացորդը բերե. մանչուկը կերթա ու չգար, կսոխվիս դուն անոր քովը երթալու և ստակդ ուզելու։

— Ներեցեք, ֆրանքը իմս կարծեր եմ ու սխալեր եմ։

Երեկուչթի մը կը հրավիրվիս, դուրս ելած ատենդ կը տեսնես, որ քուկին նոր ոտքի ամաններդ ուրիշ հրավիրյալ մը հագեր կերթա։ Գովը կերթաս և ոտքի ամաններդ կուգես։

— Ներեցեք, իմս կարծեր եմ ես՝ հագեր եմ, սխալեր եմ։

Դիշեր առեն Պոլսո մեկ փողոցին անցած ժամանակը մեկը կը մոտենա քեզի և ձեռքը երկարել խոթելով՝ կսկսի աղաչերով առնել։

— Ի՞նչ կըննեք։

— Խալթ մ'ըներ, սխալեցար։

Աոհնք գրկովիդ ինչ օգուտ կրնաս ընել, կարող ես աղքատությունը վերցնել։

— Ներե՛, ընթերցող, ես սխալեցա [458])։

1872

ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԵՌԵԼՈՑ ՕՐԱԳԻՐ [459]), ՀԱՅՐԵՆԻՔ [460])

Օրագիր.—Ի՞նչ կը տեսնեմ, Հայրենիք, դու՛ ես։

Հայրենիք.—Ես եմ։

Օրագիր.—Մյուս [illegible]լրագիրներն ինչու համար հետդ չբերիր։

Հայրենիք.—Ինչ օրեն անոնք ալ կուգան։

Օրագիր.—Ի՞նչ լուր կա նայինք, ապակեդրոնացականությունն [461]) վրայոք բան մը լսեցիր։

Հայրենիք.—Ապակեդրոնացականությունները դեռևին ուակին անցնին. հոս գալուս պատճառը չիս ուզեր հասկնալ։

Օրագիր.—Դուն ալ ինձի պես մյուրեճավիզացնե բան մը լսիր, ինչ ըրիր։

Հայրենիք.—Ալքընճը տայլեն՝ Բերայի գերեզմանատունը հասարակաց պարտեզ շինելու համար՝ մեր ձեռքեն առնելու եկավ, ես ալ զորը ուժովս դեմ կեցա [462])։

Օրագիր.—Ապակեդրոնացականաքար դեմ կեցար, չէ նե՞ կեդրոնացականաքար։

Հայրենիք.—Իրավ որ միտքս չէ, միայն սա գիտեմ, որ դեմ դնելուս համար՝ չորս ամիս դատաստարմիցաս Հիմա այս չորս ամիսը անցնելու համար ձեր օգնությունը պետի խնդրեմ։

Օրագիր.—Հոժար կամոք պատրաստ եմ ձեզի օգնել. հոս իմ քովս կառնեմ քեզի, ասանկ հայոց ազգը պակաս չընեն, հոս ազատ կրնաս հանգիստ եկնել պառկիլ. փառք աստուծո, հոս ամեն բան կա, միայն ուտելու հաց չկա։

Հայրենիք.—Շիտակը մեծապես չնորհակալ եմ ձեր մատուցած ծերութենեն։

Օրագիր.—Չէ, այդ խոսքը չեմ ընդունիր, ամենուս ալ պարտքն է իրարու օգնել. ասով ես ալ իմ պարտքս կը կատարեմ, թե որ չհակացար՝ կեցիր տրամաբանորեն բացատրեմ։

Մարդս պարտավոր է իր ընկերին օգնել։

Օրագիր.—Իր ընկերեն օգնեց։

Ասպա ուրեմն Օրագիր իր պարտքը կատարեց։

Հայրենիք.—Եղրակացութիւնը ուղիղ է, սակը ըսելիք չունիմ. սա ուտելու հաց չկա ըսիր նե՝ ապակիզբոնացականաբանք հաց չկա, չէ նե՝ կեդրո... հայլն. աբար չկա։

Օրագիր.—Հասկցա միթոք։ Ես այդ խնդիրը հուզելով՝ ազգիս ծառայութիւն մը ընել ուզեցի. քանի մը լրագիրք իմ կարծիքներս հարվածեցին և ըսին թե ապա...

Հայրենիք.—Եվայն մը դիր, անցիր։

Օրագիր.—Թյունը՝ անմիաբանութիւն ըսել է։ Միաքս լավ չհասկցան. ես ալ չկրցի լավ հասկցնել և սկսան ըսել թե՝ Օրագիր անմիաբանութեան որոմն կը ցանե ազգին մեջ։ Տգիտ ժողովրդեդ մը հետ խոսելու պես դժվար բան չկա աշխարհս մեջ։

Հայրենիք.—Երբեմն ալ առանց իրավունքի անոր ասոր վրա կը հարձակիր։

Օրագիր.—Այ, առանց իրավունքի կը հարձակիր, որովհետև իրավունքը չէր ուզեր հետս գալ։

Հայրենիք.—Երբեմն ալ սուտ լուրեր կը հրատարակեր։

Օրագիր.—Ճշմարիտը չգտնված առեն՝ ինչ պիտի ընեի հապա, լրագիրս գոցելո՞ւ էի։ Վաճառականներն ալ՝ ապրանքնին հառնի նե՝ գնդը ազգին տեղ չե՞ն ծախեր, և ասով հանցավոր եղած կըլլան։ Բայց այդ խոսքերովդ ինչ ըսել կուզես։

Հայրենիք.—Ըսել կուզեմ, որ այդ անիրավութեանցդ համար՝ հիմա առանց հացի մնացիր։

Օրագիր—Անանկ է նե՝ դու ինչ բանի համար առանց հացի մնացիր։

Հայրենիք.—Ես ալ իրավունքը պաշտպանելուս համար։

Օրագիր.—Ենթադրելով, որ ըսածներդ ուղիղ ըլլան՝ կը վերջացնեմ խոսքս ըսելով թե՝ երկուքնուս վիճակը մեկ է. այսօր դուն իրավունքը պաշտպանելուդ համար անոթի ես. ես ալ չպաշտպանելուս համար անոթի եմ. հետևապես ցավալի ճշմարտութեյուն մ'է, թե մեր առաքելին մեջ աշխատողնելուն ամենն ալ միևնույն վարձատրութեյունը կառնեն՝ անոթութեյունը [463]։

1873

ԽՄԲԱԳԻՐՆ ՄԵՂՈՒԻ
ԱՌ ՏԵՐՆ ՄԵՂՈՒԻ

Այն բանը՝ որուն համար պատվիրեցիր, ըրի, ով քաջ [464]*։ Հայոց մոլութիւնց համար հրամայած էիր, որոնց մէջ արդեն կը գտնվինք ես ալ, դուն ալ, հարուստներն ալ, աղքատներն ալ, թագաւորներն ալ, Պատրիարքարանն ալ, Պատրիարքարանի ձիերն ալ։*

Հաղար ու մեկ եղանակի բաժնեցի և դեռ բաժնելու վրա եմ ու դարձյալ վերջը չգար։ Ինչու որ՝ մեկ կողմեն գործված մոլութիւնները ծաղրած առնենիս, մյուս կողմեն նուշն մոլութիւնները չդիտցողնելուն ալ սորվեցուցած կըլլանք կոր, անոնք ալ կսկսին կոր։ Ասանկով հարյուր հաղար եղանակի ալ բաժնելու ըլլանք՝ դարձյալ չպիտի կրնանք մոլութիւնց վախճանը հասնիլ։ Ինչ ընելու է, չիմանամ։

Առաջինին մեջ դրի Մանզումեի և Օրագրի պատերազմը [465]*, և Մանզումեին՝ Օրագրին վրան ուչխուրով հարձակելը։*

Երկրորդին մեջ դրի անկե ծագած երկպառակութիւնները, Օրագրի բալթոյին յուր ասթառուն բաժնվիլը և մինչև այսօր չմիանալը և առիւ վերջն ալ չմիանալիքը։

Երրորդին մեջ՝ Մասխի կողմեն պատահումն իրաց այս վիճակին։

Չորրորդին մեջ՝ Այվազին այս պատերազմին մեջ մտնելն և ջուրը տեսնելով՝ վախեն ետ դառնալն։

Հինգերորդին մեջ՝ մարդոց թշվառութիւնը և թրամվեյի ձիերուն երջանկութիւնը։

Մյուս եղանակներուն ամենն ալ հոս հիշելու հարկ չկա։

Այս ամենը գրեցի, որ կարդաս, մեր վիճակին տեղեկանաս։

Այլ դուն, ով մեծ ի գիտութիւնս մոլութեանց, միշտ աղեկ բաներու կը հրամայես, զոր աննենգ սիրտեն գիտնալով, հրաժեշտ տվինք մեր ծուլութեան և մեր ծանր հազուստներովն նամանավանդ առանց պալտոնի բարձրաթռիչռ եղյալ Ասիային [466] *անցնելով՝ մինչև Մասխի* [467] *գագաթը ելանք, բայց տեսնելով՝ որ Մասխի գագաթը շատ պաղ է, անկե վար իջանք և Այվազին* [468] *վրա նստանք։*

Եվ որովհետև սիրով ընդունեցիք ձեր հրամանը և սկսանք

ուսկից որ արժան էր, շարունակենք մեր դործը, թեպետև ոչ նվազ արտասվոք կը խնդանք մեր աղդին մոլութեյանց վրա որոց շաւեղուն ականատես և ականջալուր իսկ ենք։

Հայեր, ավելցուցեք մոլութեյուններիդ, որ ես ալ զանոնք դրելով քաջալերվիմ, և թե որ Մեղուի մխօրինակութենե ձանձրացաք, փոխեցեք մոլութեյուններիդ, որ ես ալ ծաղրելու եղանակ փոխեմ [469]։

1872

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԻՍԸ [470]

Երբոր Մամուլը [471] կը խոսի մամլո դեմ կը հայհոյե
Մ. Չերազ [472]

Մարդիկ կան, որք խօսքերը կը բաթձրացնեն, խոսքեր ալ կան, որ զմարդիկ կը բարձրացնեն։

Շատ անգամ ոչինչ խոսք մը նշանաւոր մեկու մը բերնեն ելած ըլլալուն համար իբրև պատգամ կընդունվի. և շատ անգամ նշանաւոր խոսք մը աննշան մեկե մը ըսված ըլլալուն համար կարևորութեյուն չառնե։

Մ. Չերազ էֆենտիի այս խոսքը՝ որով մամուլը կը հանձնարարե հասարակութեյան, բոլոր լրագրաց Մամուլի հայհոյութեյանց նկատմամբ ըսած խոսքերուն մեջ ամենեն բարձր տեղ մը բռնելուն՝ սիրով կը հյուրընկալենք զայն մեր թերթին մեջ և կը դառնանք անոր վրա հինիլ մեր խոսքերը։

Այվազը տեսնելուս պես, իսկույն միտքս կուգա այն աղանդը՝ որ կընդունի թե՝ մարդոց հոգիները անասուններու կը մտնեն. և շիտակը խոսելով հավատալիքս կուգա թե՝ անասնոց ալ սովերները մարդոց կը մտնեն, ինչու որ տեսա մարդիկ, որք իրենց անձին վրա մեյ մեկ անասուններ կը ներկայացնեն։

Այս էակը ինքզինք մարդ կեղծելով սխալմամբ լրագրական ասպարեզ իջած օրեն ի վեր, ամենեն ալ ապտակ կերած և քանիցս ասպարեզեն վռնտված՝ մեկ խոսքով խայտառակված ըլլալովը հանդերձ՝ դեռ չէ կրցեր հասկնալ՝ որ երկու տող գրել

չկրցող մեկը չկրնար այս առաքելին մեջը գտնվողներու հետ քայլ առնել. և փոխանակ իր տարիքին և առդանդին հարմար գործով մը զբաղելու՝ իր երկայնականջ առաջնորդութեամբը ան ու աս իր գրասենյակը կը տանի, զանոնք դեղին և կլորիկ հարդով մնուցանելով անոնցմե ի վնաս իրեն և ի նպաստ յուր հակառակորդացը հոգվածներ առնելով՝ լրագրականն առաքելը լրբութեամբ կը պղծե։

Որու հետ որ վիճաբանութեան բռնվի՝ շուռտալ չուր ականջները ցուցց կուտա։

Ժամանակավ Մանդումեի հետ վիճաբանած առեն, Մանդումեն ձգեց և բասքըմայի վրա հարձակեցավ [473]), Մասխի հետ վեճի բռնվեցավ և անոր բալթոյին վրա հարձակեցավ, Օրազքի դեմ խոսել ուզեց և օղիի տակառներուն վրա քալեց։ Մեր գրածներու դեմ չկրնալով հարձակիլ, Էսերներեն քաշերին [474]) հետ կը կռվի։

Տեսակը անհայտ եղող այս էակը՝ ինչպես որ Մանդումեի, Օրազքի, Մասխի և շատերուն պատվույն դեմ հարձակելով խայտառակութիւնները իրեն և փառքն ու պատիվը իր թշնամյաց թողուց, այնպես ալ հիմա զմեզ արատավորելու հիմարութեամբ անուշ հայհոյութիւններ կը տեղա մեր վրա և զմեզ կը փառավորե։

Ի ծննդենն մինչև այսօր խոսքերու սովի մեջ ապրող Այվազը իրեն ականջները քաշելնուս համար կը պռատ թե՝ ուրիշի պարտք ունինք և թե անոր համար խմբագիր անօրեն Այվազին ականջները քաշող սատրագլուխ ենք։

Մարգարեութեյուն ալ ունինք, ով Բաղտամու ոտքը վիրավորող. եթե Այվազի ականջները քաշելը ուրիշի պարտք ունենալ կնշանակե, ապա Այվազին վրա նստիլը անանկանալ պիտի ենթադրե։ Եվ արդյոք Բաղտամն ալ իր պարտատերներուն ձեռքեն խալսելու համար էր, որ կռնակդ առած կը տաներ [475])։

Աքաղաղեն ձայնին չհավնող լաֆոնթենի հիշած մեր գեղեցկաձայն Այվազը [476]) կըսե թե «Մամուլ հասարակութենեն ընդունելութեյուն գտնելուն համար, Մեղու նախանձեր է»։

Եթե ծաղկի հիվանդութենեն նոր ելած աղջիկ մը ըսելու ըլլար ախիտասարդներըը զիս սիրելուն համար մյուս աղջիկները կը նախանձին» ճիշտ Մամուլին այս ըսածին պիտի նմաներ։

Կրնա ըլլալ որ Այվազն ալ իր Մեկենասը [477]) ունենա, իր

պաշտողը ուշնենա, զարմանալու չէ մի թե, հին Եգիպտացիք Ապիսը չէի՞ն պաշտեր։

Հայերը լրագրական մասին մեծավ մասամբ խիստ մոլորված են. իրենց ճշմարիտ աստվածը՝ Արևելյան Մամուլը [478]) ժողովը՝ Այվազին մամուլը կը պաշտանն։

Մամուլը լրագրական դյուցազնութեյան Ապիսն է այսօր։ Բազոն [479]) է միշտ, և քիչ ժամանակին Մորփեոսը [480]) պիտի ըլլա և յուր ընթերցողները պիտի քնացնե։

Օ՛ն անդր, խաղցո՛ւր նայիմ ականջներդ, սկսի՛ հայհոյել. անցեալն մեջ անով խայտառակվեցար, ներկայիս մեջ անով կը խայտառակվիս, և ապագային մեջ ալ անով պիտի խայտառակվիս։ Մեղուն ալ միշտ վրադ նստած՝ լրագրական աստղերը պատեղով՝ պիտի զբոսնու և օր մ՛ալ ջուրեն պիտի անցուն քեզի [481]) [482])։

1873

ԿՈՆԴԱԿԻՆ ԽՈՐՇՈՒՐԴԸ

Կամ էջմիածնա վեհափառ կաթողիկոսը Օրագրին բերանն է (և սիրտը չէ) կամ Օրագիր վեհափառ կաթողիկոսի բերանն է կամ երկուքը մեկ բերանն են։

Օրագիր Ա. Պ Ա.
կ
ե
դ
ր
ո
ն
Ա.
ց
ո
ւ
մ

կը քարոզեր ազգին։ պլխուն։

Վեհափառ կաթողիկոս ալ ա՜պ՜ա՜կ՜ե՜դ՜ր՜ո՜ն՜ա՜ց՜ո՜ւ՜ց՜ո՜ւ՜մ (ճիշտ մեկ ու հես բուսլ) կը դործածդրե ազգին մեջ։

Ըստ մեզ ապակեղբոնացուցականութիւն (ընթերցող, շունչդ հատավ նե՝ կանգ առ)։

Բաժանում ըսել է՝ վեհափառ կաթողիկոս աղգային Ընդհանուր ժողովին տիրել ուզեց ու չկրցավ, հիմա անի կաթը կաթը ընելով՝ անոնց ամեն մեկուն զատ զատ տիրել կուզե։

Ուստի անգամ մը փորձ փորձեց և Պրուսայի ժողովուրդին հետ ուղղակի հարաբերութեան մտավ, տեսավ որ մարդ ձայն չհանեց։ Այս անգամ ալ Բերայի ժողովրդին հետ ուղղակի հարաբերութեան մտավ։ Բերայի քարոզիչ Ամբրոսիոս վարդապետին [483]) կոնդակ մը ղրկեց, որ եկեղեցիին մէջ կարդար։ Ան ալ աս կիրակի կարդացեր էր։

Ոմանք կըսեն՝ թէ Ամբրոսիոս վարդապետին պարտքն է, որ այդ կոնդակը կարդալեն առաջ տաներ սրբազան պատրիարքին ցուցնելը և անոր հրամանը առնելեն ետքը կարդար. ամանք ալ եկեղեցական իշխանութեան օրինաց խորերը երթալով՝ կըսեն թէ պարտքն էր, կոնդակը վեհափառ կաթողիկոսին դարձնել և անկե խնդրել, որ պատրիարքին ղրկե։

Այս ըսողները իրաւունք չունին, վասնզի Ամբրոսիոս վարդապետ տեսնելով, որ վեհափառ կաթողիկոս զինքը մարքուս տեղ դրեր, Բերայի քարոզիչ անվաներ ու կոնդակ ղրկեր է՝ չէր կրնար զանկ ետ դարձնել՝ առանց վեհափառին այս համարումը ջնջելու։

Մանաւանդ՝ որ կըսեն թէ՝ վեհափառը իրեն հնազանդելու խոնարհամտութեան ունեցողները անարժան չթողուր։ Վարդապետը մեղի պես ամեն օրվան ապրուստը հոգալու չէ՛ յա, անոր մտմտուքը աբեղա է նե՝ ծայրագոյն ըլլալ, ծայրագոյն է նե՝ եպիսկոպոս ըլլալ, եպիսկոպոս է նե՝ ֆօր ըլլալ, ւայլն, ասոնք ամէնն ալ կաթողիկոսն է։

Ուրեմն Ամբրոսիոս վարդապետ հանցանք չունի, վկա են բոլոր զինքը բամբասող դրացիները... հանցանքը զանկ ձեռնադրողինն է։

Երթանք հիմա վեհափառ կաթողիկոսին. նորին ընդհանրական վեհափառութեան կոնդակին այսպես մանրական ըլլալուն մեկ պատճառը՝ բաժանելով տիրելն է նե՝ ուրիշ շարժառիթ մ'ալ ունի, որ սա է. ասով սրբազան պատրիարքը կասկածելի ցուցնելով կուզե ժողովրդին, իբր թե անհատանելի կամքն աստուծու հասկցած էր, որ Հայրիկ [484]) անոր կոնդակը կարդալ չպիտի տար, ուստի ստիպված էր ուղղակի Ամբրոսիոս

վարդապետին դրկել, որ կարդայ, մինչդեռ կոնդակին նյութը իբեն ամողը սրբազան պատրիարքն էր։

Բայց ասով կաթողիկոսական կոնդակ մը փոխանակ Պոլսո ամեն եկեղեցիներուն մեջ կարդացվելու՝ մինակ մեկ եկեղեցիի մը մեջ կը կարդացվի եղեր. դուն արդյունքը նայե, կաթողիկոսական կոնդակին նվաստանալեն ինչ կըլլա եղեր։

Բայց Մեղուն իր կոնդակը, որ գրված է առ նորին վեհափառութիյուն՝ այնպես մինակ մեկ եկեղեցիի մը մեջ կարդացնելու չդիջանիր. հապա ընդհանուր աշխարհի առջև պիտի կալդա [485]։

ՄՈՒՇԵՂԻԿ. ԹԵՐԹՈՎ.

1872

ԿՈՆԴԱԿԻՆ ԽՆԴԻՐԸ

Մեղուն իմացուցեր էը թե Ամբրոսիոս վարդապետ՝ կաթողիկոսին ուղղակի իբեն դրկած կոնդակը ուղղակի կարդացեր էր։

Մասիս կիմացներ անցյալ շաբաթ օրվան թերթովը, թե կրոնական և քաղաքական ժողովները այս լուրն առնելով խառն նիստ մը ըրեր են. այսինքն, որը քովընտի, որը կես պառկած, որը ծունկ չդքած, որն ալ պաղտաղ ըրած նստեր են, եղելությունը խնդրոց առարկին են ըրեր. անոր վրա խոսեր, վիճաբաներ, բարկացեր, կրակ կտրեր և ահագին ցասմամբ և խիստ կծու նամակով մը Ամբրոսիոս վարդապետը ժողովին ներկայանալու հրավիրեր են։

Ահա նամակին օրինակը։

Էջմիածնա գահիցն վերապատվյալ աստվածարյալ Տյառնդ Սրբազնասուրբ Ամբրոսիոսի և ծայրագույն վարդապետիդ խնդալ։

Ստորագրյալքս հանուրց հյուսիսականաց վեհագույն հայոց մեծաց ազգային վարչության կրոնական և քաղաքական ժողովոց անարդ, նվաստ, սինկլթոլ, անպետ, կույր, խուլ, համբանդամք՝ երեսանկյալ աղաչեմք զքարձր սրբազանությունդ ձեր զի հաճեսիք առնել խոնարհամտությունն և զիջանիլ ընդունիլ գհրավեր մերո նվաստության և հրամայել ի պատրիարքարան ի ժողովս մերո ատորնեության ուր ներկայությունդ ձերդ բարձր սրբազանության կարևոր համարեցաք վասն ինչ ինչ տեղեկության։

Հայտ առնենք նաեւ այսու խոնարհական գրութեամբ զի զատարտայալ եմք ձեզ տեղւոյ հատենի ժողովո մերո ի վերա գլխո մերո [486]։

Այս նամակը պատրիարքն ալ ստորագրեր է երկու ժողովներուն կողմեն։

Ամբրոսիոս վարդապետը այս նամակը առնելուն պես՝ բահանեհաճեր է ազգային վարչութեան իմացնելու իր չկրնար երթալիքը և ըսեր է. կինե՞ ածի կալ զիս արաժարյալ [487]։

Մասիս կըսե թե, այս պատճառը չէ ցուցցեր, հապա հիվանդ եմ, չեմ կրնար գալ պատասխաններ է։

Ասոր մենք ալ կը հավատանք. վասնզի լսածնուս նայելով՝ Ամբրոսիոս վարդապետը իր եղբորը հարսանիքին մեջ անհանդիստ ըլլալով՝ հարսանիքին երկուշաբթին, երեքշաբթին, չորեքշաբթին, հինգշաբթին, ուրբաթը, շաբաթը տանը մեջ փակվելը, անշուշտ դուրս չէր կրցեր ելնել խեղճ հարսնուկն ալ իր տաքերոջը հիվանդութիւնը գալմանելու գործեր է, իր խնդալու և ուրախանալու օրերը ցավով և սպասավորութիւնով անցնելով։

Կերևա թե, Ամբրոսիոս վարդապետը հարսանիքին հետևյալ շաբթուն երկուշաբթի, երեքշաբթի. չորեքշաբթի, հինգշաբթի, ևայլն օրերն ալ հիվանդ ըլլալով տանը մեջ փակվեր է, դուրս չէ կրցեր ելնել, որ պատրիարքարանն կանչած տանն՝ հիվանդ եմ, չեմ կրնար գալ պատասխաններ է։

Մնայն թե, սա չափը խելք է ըրեր, որ կաթողիկոսն իրեն գրկված կոնդակին հետ նուէրն նյութին վրա կոնդակ մ՚ալ պատրաստեր կա եղեր, որ առաջ հարսնիքին բաժըրտրովը օրերն գրկելու մտածեր էր, այս անգամ տասնուհինգ քսան օր եռքը՝ օրը օրին անմիջապես գրկել փութացեր է։

Հիմա լսածնուս նայելով՝ ազգային վարչութիւնը պիտի տպաւոր եղեր, որ Ամբրոսիոս վարդապետը տունն դուրս ելնի ու բարեհաճի ի պատրիարքարան շնորհ բերելու և իրմե խնդրված տեղեկութիւնները շնորհելու [488]։

1872

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԽՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Սա կրոնական ժողովն ալ ամենևին չափայի չգար։ այնչափ անաչառ է, այնչափ խստապահանջ է, որ աստված մարդս հանցավոր ընելով՝ անոր ձեռքը չձգե, զարկ, ըսես նե՝ կը մեղայնե։

Ամբրոսիոս վարդապետը կատակ մը ըրեր՝ կաթողիկոսին եկած կոնդակը պատրիարքին չէ բերեր, ելեր ինք իր գլուխն կարդացեր է ժողովրդին։

Կատակ մ'ալ ըրեր է՝ պատրիարքին ալ դրված կոնդակ մը կա եղեր, ան ալ սխալորը չէ ղրկեր։

Կատակ մ'ալ ըրեր՝ ու Ազգային Ժառն ժողովը դինքը հրավիրած առեն առաջնորդյուն ընելով՝ հիվանդ եմ ըսեր՝ ու չէ գացեր։

Հիմա այս կատակներուն համար ինչ պատիժ տալու էր Ազգային կրոնական ժողովը։—Ինձի հարցնեն նե՝ ես կըսեմ թե Ամբրոսիոս վարդապետ երկրորդ հրավիրին հնազանդելով՝ պատրիարքարան գացած առեն կրոնական ժողովը կատակ մ'ալ ինք ընելու էր ու լմնցնելու էր։

Բայց՝ Ազգային կրոնական ժողովը Հայաստանյայց եկեղեցվո կարգաց և կանոնաց պահպանութեյան նախանձախնդիրի չափազանց սրտմտութեյամբ՝ սոսկալի և անտանելի պատիժ մը տվեր է Ամբրոսիոս վարդապետին, պատիժ մը՝ որ մինչև անգամ մարդասպանին համար ծանր է։

Ամբրոսիոս վարդապետին թե հայանի և թե՛ գաղտնի հանցանքները ինչ ալ ըլլային՝ Ազգային կրոնական ժողովը խնայելու էր այդ անձին՝ հիշելով անոր այլ բարեմասնութեյունները և ազգին մատուցած մեծամեծ ծառայութեյունները։

Բայց մեր կրոնական ժողովը առանք նկատողութեյան չառնելով՝ մինակ արդարութեյունը տեղը առնելու կը նայի, առանց իր տված պատժուն խստութեյունը չափելու։

Ուստի երբոր Ամբրոսիոս վարդապետ իրեն կը ներկայանա, կը հարցնե.

— Ի՞նչ կուգաք, ինչո՞ւ եկաք։

— Ես կանչեր էիք, եկա. ինչ պիտի ընեք։

(Դուն խոսե, Հմայակ վարդապետ)։

— Ոչինչ, հայր սուրբ, կը ցավինք, որ զձեզ հոգնեցուցինք. նեղեցինք։

— Ես չեմ կրնար ներել, ուստի ինչ պիտի ըսեք։

— Նստեցեք, հայր սուրբ, հոգնութիւննիդ առեք։

(Սրդեն անի նստած է տեր եղբայր, ձեր հրամանին չսպասեր)։

— Ըսեք նայիմ, շուտ ըրեք, ինչ պիտի ըսեք։

(Ինչ մ'ալ դուն խոսե, պե՛)։

— Ի՞նչ ըսենք, հայր սուրբ, ձեր մեկ գործը քննեցինք և տեսանք, որ սխալվեր եք...

— Չեմ ընդունիր...

— Ներեցեք, որ ըսենք. դուք սխալմունք մը գործեր եք...

— Չեմ ընդունիր...

— Ներեցեք, հայր սուրբ, ուստի ձեր այդ սխալման ի պատիժ...

— Պատիժ մի...

— Ներեցեք, հայր սուրբ, մենք որոշեցինք որ...

— Չեմ ընդունիր...

— Որոշեցինք որ այսուհետև ձեր խալըախը քիչ մը վարդք դնեք ու այնպես պուլհնուդ վրա ենիչէրիի [489]) խալաթաթի պես չկենա։

— Չեմ ընդունիր. ես իմ խալըախս տերն եմ. ինչպես ուզեմ՝ անանկ կը դնեմ։

— Բայց մենք այնպես որոշեցինք։

— Ես որոշում մորոշում չգիտեմ, չէ նե՝ հիմա ես ալ ձեզ կորոշեմ։

— Եկու, հայր սուրբ, եկու ախրտ հանդարտեցու քիչ մը Ամբրոսիոս վարդապետ դուրս ելավ. կրոնական ժողովն ալ՝ ես իմ գործս լննցուցի ըսավ ու իր առյանը գոցեց։

Մեծ մարդիկ, կըսեր մամիկս, մեկ աչքերնին կույր ընելու են, որ պզտիկներուն ամեն ըրածը չտեսնեն։ Ակե կը հետևի, որ մեծին մեծը նղող մարդիկ երկու աչքերնեն ալ կույր ընելու են։ Մեր կրոնական ժողովի անդամներն ալ մեծին մեծը ըլլալե վար ձեալու ինչ տեղ ունին։

Բարեկամ, ատոնք կը գրես, բայց չե՞ս մտածեր, որ կրոնական ժողովի անդամներն ալ վարդապետ են, հիչ էանաֆ էանաֆը վար կը զարնե՞։

— Ի՞նչ, ամեն էանաֆ մեկ մեկ լունճա օտաստ ունի ու իր էանաֆին մեջի հանցավորը կը գտաե ու կը պատժե. քույսուֆիներուն լունճային չափ ալ չկա այս կրոնական ժողովը։

— Հասկցանք, բայց այս էանաֆը ուրիշ էանաֆներու չնմանիր։ Ատոր պաշը պոզուք էանաֆի կըսեն։

— Էհ, ատանկ է նե՝ ատոր ըսելիք չունինք [490]);

1872

ՀԵՐԻՔ ԽՆԴԱՑԻ

Ասված թշնամիս Մասխին բերանը չտա։

Մասխ կըսեմ նե՝ չըլլա որ խմբագիրը հասկցվի։ Իւ-թիւճյան էֆենտին բարի ու խաղաղասեր մեկն է, իսկ Մասխը չար ու խռովասեր։

Իւթիւճյան էֆենտիին խաթերն համար մոռնանք պահ մը «ամենայն ծառի պաղ յուրմա ճանաչին» ըսենք. Իւթիւճ-յան էֆենտին Ումմզիի ծնունդ է, իսկ Մասխը՝ Արհմենին [491]։

Այս թշվառական թերթն երբ երկու հոգի կռվի բռնված տեսնի՝ առանց զանոնք իրարմե բաժնելու աշխատելու, երկու մղոն հեռուն, մի՛ ընկեր, եղբայրներ, ամոթ է ձեզի, չվայլեր, տեսողները ի՞նչ կըսեն, հայլն, կըսե ու կը մեկնի. և երբ կռվողն կթակը քիչ մը մարի՝ շուտով քիչ մը ձեթ կառնե ու հոն կը վաղե։

Երեքշաբթի ավուր Մասխին մեջ Ա. ստորագրությամբ մեկը՝ Մանզումեի և Օրագրի մեջ տեղի ունեցած կռվողն վրա հոդված մը գրելով ըսած էր թե՝ երկու կողմանց մին թշնա-մանք չունայ որ չթափե ժողովրդյան գլխուն «Բարուց Ապակա-նությունն» հոդվածովը հայլն։

Մասխ ալ այս տողերուն համար ծանոթություն տալով կըսե. այս հոդվածուն մեջ Մանզումեին ալ ծանր ակնարկու-թյուն մը եղած է, ապրի, Մասխ. եթե այս ծանոթությունը չտար՝ ոչ ոք պիտի կրնար հասկնալ, թե այդ տողերը որո՛ւ կը վերաբերին։ Ադեկ թափանցիկ է այդ տողերուն գաղտնյայ խորը և յուր տեսությամբը տեսեր է՝ որ Մանզումեի ալ ակ-նարկություն կա եղեր։

Գիտեմ ընթերցող, ինչի կը նմանի ասիկա, կեցիր ըսեմ։

Փատ մ՚առնեմ և Մանզումեի գլխուն իջեցնեմ, Մասխ ալ տեսնե աս ու ըսե. աս հարվածը Մանզումեի ալ դպավ։

Բայց ա՛ Մասխ, այդ հարվածը արդեն Մանզումեին ուրիշ մեկուրը դպած չէ որ. Օրագիրինը զատ է։

Բայց, կըսե Մասխ, ընթերցողք լավ գիտեն՝ թե Մանզու-մեի այս անպատկառ հրատարակությանց Օրագիր պատճառ ըված է.

Այս փառասիրության առջև համբերը կլուծի։

Ձեռ առ ու ինչի կը նմանի։ մարդ մը մեռցնեմ և կախաղան ելած տեսնես ըսեմ. թեպետև թեպետև ես սպաննեցի այդ մարդը՝ բայց ան մարդն ալ ինձի դեղ խոսքեր ըրավ, և պատճառ եղավ իր մահվան։ Այս մելոդրին ալ Մասիս անկե անցնելուս պիտիները կրծելով և ըսելուս է։ վար առնք այդ մարդը՝ որովհետև ուրիշ մ'ել այդ գործին պատճառը։ Շուտով դիս վար կառնեն և երկու օրեն լուսրաց մեջ կը կարդանք.

Իւթիւճյան կաթոլիկ էֆենտի Զապթիեի բաշա անվանվեցավ, հա, հա, հա, հա, հա, հա, հա։

Հիմա Մասիս Մանդումեն պաշտպանելու համար դրեց այդ տողերը, ան, որովհետև այդ պաշտպանությունը պաշտպանյալին կը վնասեր։

Օրագի՞րը վար պարտնելու համար դրեց. այո, որպեսզի Օրագիրը սրգոզի այդ հոդվածին դեմ գրե, պատճառը դուն ես, ես եմ ըսելով Մանդումեմ ալ խոսի, կռիվը սկսի։

Կռիվը սկսելուն պես Մասիս գրիչը կառնե ու կըսե.

Ցավոք սրտի կը տեսնենք որ Օրագրին Մանդումեմի մեծ խմբագիրները գործակից վիճաբանությանն բռնվելուն և ողջամիտ հաստատակությանն հուսը ի դերև հանեցին։

Հա, հա, հա, հա, հերիք խնդացի։

Պ. Գոզլես Իմեր[492] *կոչումն հետևյալ իմաստասիրական հոդվածը ղրկված է մեզ ի հրատարակություն, որուն վրա հաստատակության ուշը կը հրավիրենք։*

Խմբագիր

Զուսքշալության օրվան թերթերուն մեջ մարդոց ծիծաղության ու անառնոց երջանկության ամենամեծ ու կաշկանդամիտ խնդություն վրա ճառած տեսնելիք մեր ալ կարծիքը հարցուցեր եք։

Գոզլես իմն շատ աղեկ ըրեր եք, վասնզի Փառքին, Լընտընին, Վիենն հասարակաց տեղերուն մեջ սուցած երկար ատենդա վիս յուժիչ ըրած է այն ծանր ու անլուծանելի խնդրություն, որովհետև ուրիշ փիլիսոփաները գոզլես իմն շրջհասյաց տեսության չեն գտած անոր ճիշտ ու լուսլի խորհուրդը վերեն դնակը։

Մեր կարծիքը ձերինն անհուսապես կը տարբերի, վասնզի մարդոց թշուառութեան պատճառը ուրիշ բան չէ՝ բայց եթե նուէն թշուառութեան իրականութիւնը։

ՄԱՍԻՍԻ ՈՒՂԵՂԸ

Ընթերցող, բնաւորութիւն մ'ունիմ, որ բանի մը չեմ հաւնիր Մասիսի պես— Ինչո՞ւ— Որովհետև աշխարհս երեսը տակն ավիլի դուբլին բան չկա. բնաւորութիւն մ'ալ ունիմ դարձեալ Մասիսի պես, որ բան մը չեմ կրնար հավնեցնել— Ինչո՞ւ— Որովհետև աշխարհս երեսը բան մը հավնեցնելու պես դժվար բան չկա։ Ինչ ընեմ, արվեստս ուրիշը ծաղրել է, այս արվեստն է, որ կտիպի դիս աչքիս վերանը չտեսնել և ուրիշի աչքին շյուղը հանել. ուստի թողունք մեր աչքին վերանը և Մասիսի աչքին շյուղը հանենք առանց ցավցնելու։ Թողունք վերջապես փիլիսոփայութիւնը և խնդանք։

Կարպացիը, ընթերցող, Մասիսի քան և մնկերորդ տարի — թիվ 1305— երկշաբթի 24 Հոկտեմբեր— 1872— Գաղատքանան, Բանասիրականն, Ազգային, Տնտեսականն և Հնախոսականն լուսերին առաջին երեսին երկրորդ սյունակին 33 և 34-րդ տողերը. եթե կարդացիր՝ հայտնի է, որ բան մը չհասկցար, և եթե պիտի կարդաս՝ հայտնի է, որ բան մը չպիտի հասկնաս. ուրեմն աշխատ մ'ընենք կարդալու կամ հասկնալու. ես կարդացի, հասկցածս քեզի ալ կը հասկցնեմ։

1851 դեկտեմբեր 2-ին ոստիկանութեան տեսուչ մը պ. Թիվերը [493]) ձերբակալել ուղել է եղել. պ. Թիվերը շատ ապառնացել է եղել, անձնատուր ըլլալ չէր ուզել եղել, և ճարը հատնել է եղել և բսել է եղել. պ. տեսուչ, եթե ձեր ուզեղն այրիմ...

Ես հասկցա, որ պ. Թիվերը տեսուչին ուզեղն այրելով «պետին թավասը» պիտի ընար և պիտի ուտեր. որովհետև տեսուչն ալ պատասխանել է՝ թե ես անոր դեմ պատրաստութիւններ ըրած եմ. այսինքն թե քավա և սայալը բերել եմ, կը տապկենք և կուտենք։

Այս է իմ հասկցածս, ընթերցող. հիմա դառնանք պ. Գոգոյես Իճիի հասկցածին։

Այս Գազգես Իշմը Փարիզ գացեր է ժամանակավ՝ դերձակության վրա կատարյալ գաղափար մը առնելու համար. ամեն մը հոդ ճուտին վերջը ճամբա ելած է և չոզնոալին մեջ բաղդը հաշտեր փառաբան եղեր է։

Գ. Գազգես Իշմը լավ հայերեն և գաղղիերեն գիտե կըսե ինք. և փառաբանությենն ավելցած ժամերը գրպետության կը գոհե. այսինքն Հայկազյան բառարանը կը թղթատե, քանի մը ավարտած բառեր կը սորվի անկե, և իրիկունը դեմը ելլողին կը հարցնե զանոնք։

Այս առաջածն առջի օրը Մասիսի կը հանդիպի ու կըսե։

— Բենե բոլորովին պատեցա։

— Ինչու։

— Որովհետև այս շաբթվան ըլած մեկ թարգմանությունդ ո՛չ թե միայն հայերեն չէ, այլ նաև գաղղիերեն չգիտցողներուն անհասկնալի է։

— Ո՛րը։

— «Ծը վու պռիլ լա սերվիլ» խոսքը «ատրճանակ մը կը պարպեմ վրադ, զքեզ կը մեռցնեմ» ըսել է, մինչդեռ դուն ալ գաղղիերեն չես գիտեր եղեր, ալ այսուհետև հոդ չեմ տեսնըդիր։

— Ըսել է որ հետս չպիտի խոսիք։

— Ո՛չ, չպիտի խոսիմ։

— Շատ գոհ կըլլամ, վասն զի վու մը քանե լա թեթ։

— Տե, ասիկա հայերենի գարձուր նայիմ։

— Գրաբառ կը կոտրես։

— Անոր թարգմանությունը սա է՝ Գազգես Իշմ վիշտ իշմ հայթայթես գլխո իմո. տեսա՞ր հայերենը, լուսանոգի Հովհաննես կաթողիկոսի [494]) ոճն է այս... ուղեզդ այրեմ, ըլլալու բան է ատ. ուղեզդ այրեմ... սըվոր նայե մեկ մը։

— Գոգգես Իշմ, սըվոր նայե մեկ մը։

Սա ըսելով սկսան իրարու նայիլ։

Անցյալները Մասիս վ. Էմմանուելին համար ըսած էր՝ թե կանկառը մինչև վերջին տերը կերալ, այն տուներն ի վեր շատերը հետաքրքիր են գիտնալու թե՝ վ. Էմմանուել այդ կանկառը միանվ կերալ, թե ձեթով. ասիկա մենք ալ չգիտենք։ Միայն սա չափ բերկրությամբ սրան իմացանք, որ վ. Էմմանուել կանկառին տերևներն ուտելեն հետը կտկն ալ Մասիսին ղրկեր է [495])։

ԱՊՏԱԿՔ

Մասխի ընթացքին մարդու խելք չհասնիր. լրագիր կըսես, լուր չունի. բանասիրական եմ կըսես, բան չսիրեր ոսկիին գատ. տնտեսական եմ կըսես, ինք ուրիշներուն շռայլություն կը սովրեցունե (վորձը յուր բաժանորդագիններուն վրա է), նոր գրքերուն վրա հոդված գրել կառաջարկե, և այն հոդվածներուն գեմ գրվածն ալ կը ապե։ Դիրք մը կելնե, այն գիրքին վրա արջու շարական գովասանություններ կընդունի, կը հրատարակե, օր մըն ալ, ամիս չանցած միևնույն գրքին վրա պարսավաբանություն մը կընդունի, չէ չըսես, այն ալ կը հրատարակե։

Մասխ, քու կարծիքդ ինչ է։

— Պատասխան չկա։

Ընթերցող, քու կարծիքդ ինչ է Մասխի վրա։

— Թե՝ Մասխ ապուշ է...

Չէ նե մի ընթերցողները ապուշի տեղ կը դնե...

— Սաթուշը կարդացիք։

— Ո՞ր թուշը։

— Իշաե Սաթուշը Լուսյին մեջի...

— Վա՛յ, Լուսյա [496]) Սաթուշի վրա ալ կգրե՞...

— Ի՞նչ խոսք չհասկցող մարդ ես, թուշի՛ վրա չէ, Սաթուշի՛ վրա։

— Մարդ ապուշի տեղ ես դրեր, աա խաղերը մենք պըղտիկուց կըհնինք, իմ անունս ինչ է ըսելու։

— Ես քեզի ապուշի տեղ չեմ դներ, դուն խոսք չես հասկընար, սաթուշը այս թուշը ըսել է, ինչպես որ սա թաթը, սա ուղը, կայնե Փառք աստուծո, քեզի չաի ալ հայերեն գիտենք։

— Բանդ գնա, մեկ սաթուշը չիմացար տե՛... խմաստակ։

— Բերանդ քեզի ժողվե... հիմա՛...

— Ի՞նչ է սա, բարեկամներս, ահա ամոթ է, անվայել։

— Պ. Թաթուլ, այս պարոնը խելքին տարած ըլլալու է. եկեր սաթուշ մը ձեռք առեր, մարդ կը ծաղրե։

— Ինչ կըսեք, հա, պարոն էֆէնտիմ այսինքն Սաթուշ-նազըծիով՝ ձեզ, օհ, իրավ խնդալու, ծիծաղելու բան, գիտուԹյունը՝ գեղանի, հրապուրիչ է, ձեզ սաթուշնացուց. երանի որուամ կարդա (և հազար երանի որ կը կարդա)։

Ան քեզի փորձանք մ՚ալ.

— Ահ, եւալ գուշակուԹյունս, ես սաթուշնի նկատմամբ խոսիլ կամենալով, ըստ որում, պահ մը հետո պարտաւորած պիտի տեսնեմ գիս գինոց հետ, նորա էուԹյան որակուԹյունը անտուզուԹյան մԹնշող քողին տակ ձգել նա, իմ նեբա և տպագրուԹյան մը հառաջաբան կարևոր էր — գրեցի այդ բանը, բայց հիմակ, կը տեսնեմ, որ գուք գեհկուԹյուն եք, կը հայհոյեք, քրքիչ կը բառնաք իմ դեմ... [497]) և...

Եվ սաթուշնը չհասկցող մարդը վերջապես ավելի փորձանքներու չհանդիպելու համար կծիկը կը դնե կրկի մը չելած և մինչև հիմա չհասկցած, որ սաթուշնը ըստ պ. Թաթուլ բժըշկացուի, եղեքարականուԹյուն կը նշանակե, որ երբեմն ալ շփոթ կոչվեցավ Ռուսինյան [498]) էֆենտինին։

Սաթուշնի հոգվածը հրատարակող լուսյի խմբագիրին կը խնդրվի եկեղեցվո մեջ ծանուցում մը ընել, որպեսզի կրկիները մի պատահեսցին։ Պ. Թաթուլին ինչ ըսեմ, որ գիտնական հոգվածներու մեջ անգամ բանաստեղծական ձևերը չթողուր, և ոտանավորը ոտանավոր մուկը կերավ» կսկսի փոխանակ ըսելու միայն Թե, «կատուն մուկը կերավ» կսկսի մուկին կազմակերպուԹենեն խոսիլ, ըստ սովորուԹյան խեղճ հայ գրագիտաց։

Պարսից շահը յուր ուղեվորուԹյուն Եվրոպա գրքեն մեկ մեկ օրինակ ոսկեզօծյալ Փարիզ և ուրիշ գլխավոր քաղաքներ գրկեր է։ Հայրենիք, Թիվ 260։

Պարսից շահը, ըսել կուզե հայրենիք, յուր ուղեվորուԹյուն գրքին մեջ է, չգիտցվիր ուր, մեկ մեկ տառ ոսկիով զօծած Փարիզ քաղաքը (պատկեր ըլլալու է) և ուրիշ ոսկեզօծյալ քաղաքներ գրկեր է։ (ուր գրկելը գիտցված չէ ըսինք)։

Օրագրի շաբաթ օրվան Թերթին մեջ մոռցված է հետևյալ աղդը։

— Այսինքն ինչ անուն կը դնեիր։

— Գլխգոլ, Մարկոս, ինչ կելնես անկից. անունի վրա չէ խնդիրը։

— Շատ ազեկ, շարունակե։

Սառագլխեցիս նաքը իմ սրտակից և հավատարիմ գործակիցս կուտայի պոռնոն, աղաչելով որ ըրած ուռնեցող դատաստաղին տանի և կոտրել տա։

Գործակիցս՝ որ ինձմե քիչ մ'ավելի սատանա և, պոռնոն առնելուն պես շիտակ դատ ուռնեցողին սենյակը կերթար։

— Բարև, էֆենտի։

— Աստծա բարին էֆենտիս։

— Պոռնո մը ունիմ քովս, տտակի ալ պետք ունենալուս՝ ձեզի կոտրել տալու եկա։

— Լավ, բայց ես պոռնո կոտրող չեմ, ես սեղանավոր չեմ։

— Այո, բայց որու պոռնոն ըլլալը գիտնաք նե՝ կարծեմ թե սիրով կը կոտրեք։ Ահավասիկ պոռնո, տատրագրութիւնը կարդացեք։

Մարդը պոռնոն կառնե, կը կարդա, և իմանալուն պես, որ ժողովի մը անդամներուն մեկուն կողմեն ղրկված է, խղճմտանքին կը դպչի և պոռնոն կը ծալլե և բերողին կուտա ըսելով

— Այս տատրագրութիւնը պատավավոր է, իրեն դիմեցե՛ք տտակնիդ առեք։

— Դուք տայիք նե՝ շատ ազեկ կըլլար։

— կը ցավիմ, որ չեմ կընար տալ։

Գործակատարս այս պատասխանին վրա շնչատպառ կը վազեր, պես կը գտներ և պոռնոն ինձի դարձուելով քմծիծաղով մը կըսեր ինձ կամացուկ մը.

— Առեք, պահեցեք, չբռնվեցայվ։

Գործակատարիս բերած այս լուրին վրա որչափ ուժ ունեի նե՝ կը բարկանայի և կըսեի ինքնիրենս.

— Վազվան նիսային մեջ կը տեսնես դու, թշվառական, նայե՛, ինչ ձյուն պիտի բերեմ գլխուդ։

Հետևյալ օրը կելնեի կանուխ ժողովին կերթայի։ Ժամանակը կուգար, ժողովը կը բացվեր։ Ամբաստանողն և ամբաստանյալն կը ներկանային ժողովին։ Ժողովը մեծամասնութեամբ գատին վճիռ տալ կը պատրաստվեր ի նպաստ իմ պոռնոս չկոտրողին։ Ես ոտքի վրա կելնեի և կըսեի.

— կը բողոքեմ, մի վճռե՛ք, մինչև որ գործը աղեկ մը

261.- Անուշտ ակնարկում է ցարական Ռուսաստանը։

262. Թատրոն, 1876, հունիս 26։

263. Ժորժիկ.— Հունաց Գեւորգ I թագավորը (1845—1913)։

264. Թատրոն, 1876, հունիս 26։

265. Լուգիր.— Օրաթերթ Կ. Պոլսոյ (1875—1880) խմբ. Նիկ. Թյուրպենտճյանն։

266. Նորագիր.— Տես № 178։

267. Պեյուտեան.— Պոլսի մի թաղը՝ Բոսֆորի եվրոպական ափին։

268. Մենմուա.— Տես № 103։

269. Լույս.— Տես № 192։

270. Թատրոն, 1876, հուլիս 24։

271... Կը հասնի կոր.— Տես № 256։

272... Զոնուխսաճ ալ.— Լորը կրկնակի սուր

273. Լոռ Տերպի.— Տես № 102։

274. Թատրոն, 1876, սեպտ. 29։

Փաշագեղի կամուրջ.— Ոսկեղջյուրի վրա ձգվող կամուրջի մասին է խոսքը մի ծայրը Գալաթա թաղում գտնվելու պատճառով։ Կամուրջի մյուս ծայրը գտնվում է Էմին Էնյու (№ 183) թաղում։

276. Լոռ Բրսլ.— Անգլիական պետական գործիչ։

277. Լոռ Կլատսրրցն.— Անգլիական պետական գործիչ. լիբերալների պարագլուխը (1809—1898)։

278. Պիզմարհ.— (Օտտո Բիսմարկ), Գերմանական պետական կանցլեր, կայսրի պրուսական մեկնաբանությամբ (1815—1898)։

279. Բուլմուհցուրոս.— Հույն պետական գործիչ։

280. Կոչակով.— Տես № 101։

281. Թատրոն, 1876, հունիս 2։

282... Տուս.— Շան... իրաց արդի վիճակ... վհատոդով .. ինքնավարութիւն...պարլամենտ... զինադադար ..պատուհիքն... ըրիվըմ... պետութեան...

283. Լիպերթաթիմ.— Ինչու ես դատում երբ դատելի չէ։ Երկրորդ մասը անհնար եղավ թարգմանել թնգզրի աղավաղված լինելու պատճառով։

284. Թատրոն, 1876, հունիս 6։

285. Զերճայեն.— Սերբական պետական գործիչ։

286. Թիեր.— (Ադոլֆ Տիեր), Ֆրանսական պետական գործիչ հանրապետության նախագահ 1871 թվին, կոմունարների դահիճը (1797—1877)։

287. Թատրոն, 1876, հոկտ. 9։

288. Պիլոգ.— Պոլսի մի քաղք՝ Բոսֆորի ասիական ափին. Աբրահամ փաշա Եռամյանն ունեը այդտեղ ընդարձակ կալվածներ։

289. Այվազյան.— (Մատթեոս), խմբագիր «Արարատ» շաբաթաթերթի Կ. Պոլիս (1869—1872 թ.)։

290. Ի Ցաթիեն.— Տես № 72։

291. Թատրոն, 1876, հոկտ. 13։

292 .. Ընդ ա.— Բաց մեզ, տեր, ողորմութեյան դուռը, ողբալով խնդրում ենք թեզնից... մեղ չեմ ճանաչում... որովհետև աս տիրոջ դուռն է և արդարներն են մտնում այստեղից։

293. Նոռ.— Ֆրանսական լրագիր։

294. Թատրոն, 1876, հոկտ. 16։

295. Թատրոն, 1876, հոկտ. 20։

296. Թատրոն, 1876, հոկտ. 23։

297. Թատրոն, 1876, հոկտ. 23։

298... Վասելոս.— Ես եմ, պարոն հուլն Քոմունատուրոս (տես № 279), Փևորդ (տես № 263) թագավորի մինիստրը։

299... Ամենիա — Ես հայերեն չգիտեմ։

300. Բե մի ռամիա — Հունարեն խոսիր։

301. Թի լես,— Ինչ ասեցիր։

302... Հոգիոս,— Չեմ հավանում, ես ունեմ հարյուր քսան հազար պահեստի զորք, հիսուն հազար եռնատնից քառասուն տարեկան, եռնատուն հազար՝ քառասնից հինսուն տարեկան, դումարը՝ 200.000 հոգի։

303. Շարլը Հոհենցոլերց.— Ռումանական իշխանը. որը գերմանական Հոհենցոլերն արքայական ընտանեքից էր։

304. Տյուր Տրգազ.— (Դուվս Դրկազ), Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը, 1873—1877 թվականներին։

305. Մարգարյան, Մելիքյան,— Առաջինը արտոնատեր է. Հայրենիք «օրաթերթի, իսկ երկրորդը՝ խմբագիրը Մենմուայր Հավատիս հայոց ազգային օրաթերթի։ Ամենամեմ է 222 և 227 էջերում հազորդված Դրապիզոնի դեպքերին։ Հիշյալ թերթերի այս երկու պատասխանատուները Դրապիզոն պիտի մեկնեն լուրեց հազորդած լուրը տեղի վրա ստուգելու համար (հմմտ. էջ 300)։

306. Թատրոն, 1876, հոկտ. 27։

307. Փալաս.— Անհայտ։

308. Թատրոն, 1876, հոկտ. 30։

309. Լարս Պիհոնաեֆլտ.— (Բիկոնաեֆլտ), այս ախտորոն ստացավ Բենիամին Դիզրայելին, անգլիական նշանավոր քաղաքական գործիչ, պահպանողական կուսակցության ղեկավարը (1804—1881)։

310. Անտեասի.— Տես № 100։

311. Նաւվել Բրես Լիպր.— Տես № 253։

312. Թատրոն, 1876, նոյ. 6։

313. Ասլանյան Ստեփան փաստ.— Տես № 49։

314. Մամուլ.— Երդիճական շաբաթաթերթ (1869—1882) խմբ. Գ. Այվազյան։

315. Միմոս.— Երդիճական հումոր թերթ (1875—1877) խմբ. Հ. Մ. Հ.։

316. Թատրոն, 1876, նոյ. 10։

317. Կր մնա.— Այս հատվածն մեկնությունը հետևյալն է.— Հարուստ կինը, Անգլիան է, (այս ժամանակ անգլիական թագավորական գահի վրա էր գտնվում Վիկտորիա թագուհին), աղջիկ՝ ցարական Ռուսաստանն է, մուշտակագործներից Թ.Թուրքիան է, Ա. Ավստրիան, Հովիվի խրճիթը՝ Սերբիան։

318. Հասան.— Տես № 305։

319. Թատրոն, 1876, նոյ. 17։

320. Սիոն.— Երուսաղեմի հայոց վանքի պաշտոնական օրգանը, (1866—1877)։

321. Շոտոռեի.— Անհայտ։

322. Մարիի տը Մալիզպերն.— (Մարլիեզ տը Մալըզբըրն), անգլիական դիվանագետ պահպանողական կուսակցության ղեկավար։ Անգլիայի, ինչպես և եվրոպական մյուս մեծ պետությունների ներկայացուցիչները հավաքվում են Գլխ՝ արյունի սերը—տոհմական կռվին վերջ տան։ Այս ժողովին է ան, որ հաղորդում է ռուսատահական պատերազմը (տմմտ. № 235)։

322. Թատրոն, 1876, նոյ. 20։

324. Ֆրանց Ժոզեֆ.— Ավստրիայի կայսրը (1830—1916)։ Այստեղ ակնարկվում է 1866 թվին Ավստրիայի կրած պարտությունը՝ Գերմանիայից Սադովայի դաշնադրությամբ՝

Բխմարիը Հաբսբուրգներից վերցրեց գերմանական գեղերի վրա ունեցած ազդեցությունը և հանձնեց Հոհենցոլերններին։

325.— *Թատրոն, 1876, նոյ. 24։*

326. *Թատրոն, 1876, նոյ 27։*

327... Ժամանակավ.— *Թե ինչ քաղաքական դպրոցների է վերաբերում այս ակնարկությունը՝ անհայտ է։*

328. *Թատրոն, 1876, դեկտ. 1։*

329. Ճանուս.-- *Առասպելական անձնավորություն, ուներ երկու դեմք։*

330. *Թատրոն, 1876, դեկտ. 4։*

331. *Թատրոն, 1876, դեկտ. 8։*

332... Պենզեմիյոր.— *Կատյրի նեռությունը չի՞ նմանում*

333. Դուռ.— *Տես № 260։*

334. Կոչամոֆ.-- *Տես № 101։*

335. *Թատրոն, 1876, դեկտ. 11։*

336. Սահմանադրություն— *Օսմանյան սահմանադրության մասին է ակնարկությունը (Տես № 87)։*

337. Ընդհ. ժողովի անդամ-Նորը բացվելիք օսմանյան երեսփոխանական ժողովի անդամ։

338... Մտիվ ըսեհ.— *Ակնարկությունը ամիսարանական այն առասպելին, թե Քրեատոս էշի վրա նստելով Երուսաղեմ մտավ։ Հայերի եկեղեցին այս առասպելական դեպքը տոնում է այսպես կոչված «Վարդավարդի կիրակի» օրը։ Ահա կիրակի առավոտյան եկեղեցական երգ է։*

339. *Թատրոն, 1876, դեկտ. 15։*

340. Հեռի էլիոթ.— *Անգլիական դիվանագետ։*

341. Զեհնայեֆ.— *Տես № 285։*

342. Տոն, Քաուլոս.— *Սպանական իշխանապուն։*

343. Տոն:— *Սպանական պետականության ոխերիմ Տաճկերին տոն նշանակում է վարմեր։*

344. *Թատրոն, 1876, դեկտ. 25։*

345. Իկնաթիեֆ.— *Տես № 72։*

346. *Թատրոն, 1877, հունվ. 5։*

347... Դեսպանուհյանց.— *Իկնաթիեֆը անմխիթար սուգի մեջ էր գտնվում*

դեսպանաժողովի ցրվելու պատճառով, և վշտից դեպանությունը հրան թվում էր չարաբաստիկ (Այսպես է սկսվում Ֆենելոնի «Թելեմաքի զրույց թարգմանության մեջ Գալիտսոի հոգեկան տրհ խուր վիճակի նկարագրությունը՝ Ողիսևսի հետաքնելու առթիվ)։

348... Կրաճ.— Հյուրը մտագրածը չի ուտում, գտածն է ուտում ասում էնք։

349... Ցցուճեի.— Տան բառի հետ երեք իմաստով բառախաղ է կատարված.— Ապահական աղնվականության տիրոջ տաճկերեն՝ վարտիք և հայերեն՝ տունտատրություն։

350. Լեվրնր Հերոս.— Անգլիական լրագիր։

351. Միտեար փաշա.— Սամանյան սահմանադրության հվլինակը, պետական գործիչ, որին Մուլթան Համլետ աքսորեց և ասպանել տվեց։

352. Հավաս և Պարհիսեո.— Հեռագրական գործակալության անուններ։

353... Վախ.— Առանց փողի մեայինքվախ, վախ, վախ։

354. Նաբեկ.— Ժամ. գրքում հրատարակված Գրիգոր Նարեկացու մահկանացու ցրվածքը։

355 .. Աճ խալաճաղրզ.— Առանց փողի մեայինքվախ, վախ,վախ... Առանց փողի էլ պիտի մնանք... ոչ միայն առանց փողի պիտի մնանք... այլ նաև անոթի պիտի մնանք։

356...Զբալլագ խալաճաղրզ—Մեբզ պիտի մնանք։

357. Մուհիլը էեսլ.— Բարոյականությունը խախտող։

358. Թատրոն, 1877, հունվ. 29։

359. Լրագիր.— Տես № 265։

360... Դեմ.— Այս մասին տես էջ 204։

361. Մարկոս Ալաբեկյան— Արևմտահայ հասարակական գործիչ, ժուռնալիստ. Թբլիսիի ֆրանսիկ հայոց աշխարհի» ամսագրի խմբագիրը։

362... Զխաբեր.— Տես հատոր VIII, էջ. 78։

363. Թատրոն, 1877, մարտ 26։

364. Թատրոն, 1877, ապրիլ 6։

365. Թատրոն, 1877, ապրիլ 9։

366. Թատրոն, 1877, ապրիլ 23։

367. Թատրոն, 1875, սեպտ. 27։

368. Թատրոն, 1877, փետրվար 19։

369. Թատրոն, 1877, փետրվար 23։

370. Թատրոն, 1877, ապրիլ 27։

371. Թատրոն, 1877, ապրիլ 30։

372. Դերձմանական խնդիր.— Տես № 131։

373. Հայրենիք.— Օրաթերթ, Կ. Պոլիս (1870—1896), խմբ. Մկրտիչ Մելիքյան և Մինաս Գաբամաճյան, թերթը հայանի դարձավ Արփիար Արփիարյանի խմբագրության ժամանակ, իբրև հայկական նացիոնալիզմի և կղերամտության արտահայտիչը, (հմմտ. № 305)։

374... Ազիմներ».— «Մեր զպրոցի անվանը մի ոսկի շնորհելու համար մեծ շնորհակալություններ» Մանգումեի խմբ. Կ. Փանոսյանը տեր-տնօրենն էր Ազգային վարժարանին, որին եղած դրամական նվիրատվությունների առթիվ Փանոսյանի հայտնած երախտիքն է հիշեցնում։

375. Մեղու, 1873, հունվ. 3։

376. Խաոն ժողով.— Կրոնական (տես № 44) և քաղաքական (տես № 116) ժողովների միացյալ ժողովն այսպես էր կոչվում։

377. Պողոս վարդապետ.— Տես № 106։

378. Պետրոս առաքյալ.— Ըստ կաթոլիկ եկեղեցու հավատալիքների՝ Պետրոս առաքյալը արքայության դռնապանն է, (հմմտ. № 245)։

379. Խաչատուր սրբազան— Տես № 40։

380. Թատրոն, 1875, օգոստոս 2։

381. Մեղու, 1872, նոյ. 8։

382. Վարչություն.— Տես № 219։

383. Թատրոն, 1875, նոյ. 8։

384. Թատրոն, 1875, օգոստոս 30։

385. Օրագեղ Բարեսեր ընկերության թատրոն— Տես № 111։

386. Ներսես Եպիսկոպոս — (Նարպեյ, Լուսինյան, Գալֆայան), բանաստեղծ, ճարտասան, թարգմանիչ, Պարոնյանի «Ազգային ղոչներից մեկը (տես հատ. Գ.-րդ., էջ 13)։

387. Տիգրան Զուխաճյան— Աբիմահայ երաժշտագետ. հեղինակ մի շարք օպերետների։

388. — Թատրոն, 1875, օգոստոս 30։

389. Ամբռոսիոս վարդ. — Ասրևն եպիսկոպոսի եղբայրը (տես № 386), վենետիկի Մխիթարյան նախկին վարդապետ. հետո լուսավորչական վարդապետ, ի վերջո աշխարհական՝ Գվիտոն Լուսինյան անունով, գրել է ֆրանսերեն հայ բառաբան։

390. Իզմիրլյան վարդ. — Տես № 223։

391. Բրիսսոսստար. — Տես № 32։

392. Բաբաջյան. — Տես № 13։

393. Մեղու Հայաստանի. — Կովկասյան լրագիր, Թիֆլիսի (1858—1886) համ. Պետրոս Սիմոնյան։

394. — Թատրոն, 1875, դեկտ. 27։

395. Օճախ. — Տես № 30։

396. — Թատրոն, 1876, հունվար 10։

397. — Թատրոն, 1876, հունվար 17։

398. Սամարիա. — Տես № 6.

399. Սելամսըզ. — Տես № 7։

400. Բերբռոպանայր կատակերգակ. — Այս տիպագրով Պարոնյանը սովորաբար պատվում է Աբելատոֆանին (համմա. 97)։

401. — Մեղու, 1872, դեկտ. 8։

402. Բում հափու. — Պոյսի մի թաղը՝ Մարմարա ծովի եվրոպական ափին, Բում քափու կամ Ռում խարույ

403. — Մեղու, 1872, դեկտ. 13։

404. Բարակյոմրուկ. — Պոյսի մի թաղը՝ եվրոպական ցամաքամասի վրա։

405. Վարազդատյան ընկերություն. — Անհայտ։

406. — Թատրոն, 1875։

407. Վասպուրական ընկերություն. — Անհայտ։

408. Սալմաթմրուկ. — Պոյսի մի թաղը՝ եվրոպական ցամաքամասի վրա։

409. Գարագեղի կամուրջ — Տես № 275։

410. Ղալաթիո խմբակ. — Տես № 30։

411. — Թատրոն, 1875, նոյ. 22։

412. — Թատրոն, 1876, հունվ. 17։

413. — Թատրոն, 1876, հունվ. 24։

414. Տեր Եղիսկոպոս.— Տես № 386։

415. Աբեղայեան.— (Աբշարայեան Արտաշեան), կղերամիտ օրագիր, Ջմյուռնիա (1840—1887), խմբ. Ղուկաս Գալթազարյան.

416. Մանիս.— Տես № 50։

417. Մամուրյան.— (Մատթեոս), Ջմյուռնիայում հրատարակվող ամբևեյան Մամուռ թերթի խմբագիրը

418. Մամուլ.— Տես № 314։

419. Մեղու, 1872, նոյ. 18։

420. Մեղու, 1872, դեկտ. 2։

421. Մուսա.— Ըստ հույն պետքարանության՝ այս անունով ինը բույրեր, որոնցից յուրաքանչյուրը տարբեր արվեստների ներշնչողն ու պաշտպանն էր։

422. Պատասխանական խորհուրդ.— Պատրիարքարանի կից՝ ամուսնական խնդիրները կարգադրող մարմին

423. Պուռ.— Տես № 260։

424. Նարպեյ.— Տես № 386, 414։

425. Թատրոն, 1876, փետրվար 19։

426. Թատրոն, 1876, մայիս 29։

427. Մատթեոս Հանանայասյանց.— Իզմիրլյանին (№ 223, 390) է ուղղված հեգնանքը. նա քահանայապետ եղավ 1908 թ.

428. Թատրոն, 1876, հունիս 26։

429. Թատրոն, 1876, հուլիս 24։

430. Աստեփան Վարդ.— Աստեփան Վարդ Ալանյան (տես № 49, 319)։

431. Թատրոն, 1876, սեպտ. 29։

432. Հոր Եռաճելի.— Աստվածաշնչական առասպելական անձնավորություն, խորհրդանիշ ծաղրագրի թշվառության և համբերության։

433. Թատրոն, 1876, հոկտեմբեր 6։

434. Թատրոն, 1876, հոկտեմբեր 16։

435. Թատրոն, 1876, հոկտեմբեր 29։

436. Թատրոն, 1877, փետրվար 2։

437. Նուրայի տեվիեր.— Պետական խորհուրդ։

438. Թատրոն, 1877, ապրիլ 16։

439. Թատրոն, 1877, ապրիլ 20։

440. Բ[illegible]տ[illegible]ս[illegible]ր.— Տես № № 32, 221, 391։

441. Թաւրեզ, 1875, օգոստոս 23։

442. Մեղու, 1872, դեկտեմբեր 2։

443. Սամաթիա.— Տես № 6։

444. Օգսեն էֆ. Խոճասարյան.— Թեմական ժողովի անդամ, «Ազգային ջոկերի հերոսներից մեկը (տես հատ. Դ–րդ, էջ 225)։

445. Թիեր.— Տես № 286։

446. Մեղու, 1872, դեկտեմբեր 13։

447. Թաւրեզ, 1876, հոկտեմբեր 2։

448. Թաւրեզ, 1876, դեկտեմբեր 22։

449. Տ. Էֆենեսի Ե.— Ազնիւ։

450. Թաւրեզ, 1876, հունիս 26։

451. Քաղվածքներ.— Ազնիւ։

452. Ընդհանուր ժողով.— Տես № № 31, 118։

453. Մեղու, 1872 դեկտեմբեր 27։

454. Մեղու, 1872, նոյ. 11։

455. Մեղու, 1872 նոյ. 18։

456. [illegible]ստություն ունի.— Կաթոլիկ եկեղեցու կողմից պապերը հայտարարված են անսխալականներ։

457. Բեժի.— Ֆրանսական մի ընկերություն, որը Տաճկաստանում ստանձնել էր ծխախոտի մենաշնորհը։

458. Մեղու, 1872, դեկտ. 6։

459. Օրագիր.— Տես № № 178, 195, 444։

460. Հայրենիք.— Տես № 305, 373։

461. Ազգակեցդրոնացական նուբյուռք.— Տես էջ 442։

462. [illegible]դեմ կեցա.— Տես № 131, 372։

463. Մեղու, 1873, դեկտ. 12։

464. [illegible]ով Հաջ.— «Բանն գոր պատմիրեցիք մեզ՝ արաբի, ով քաջ, այսպես է սկսում Եղիշեն (տես № 3) իր Վարդանանց պատերազմի պատմությունը. Պարոնյանի այս ամբողջ հատվածը պարոդիան է Եղիշեի ներբածականի։

465. Պատերազմ.— Այս մասին տես էջ 181, նույնպես հատ. Դ–րդ, էջ 80։

466, Աախա.— Ակնարկում է Աախա քեռքը, Կ. Պոլիս (1872) խմբ. Հ. Բիճյանի։

467. Մասխս.— Ակնարկում է Մասխս քեռքը (տես № 50)։

468. Այվազ.— Ակնարկում է Մամուլի խմբ. Գ. Այվազյանին (տես № 314)։

469. Մեղու, 1872, դեկտ. 16։

470. Ապիս.— Հին եկեղեցիների պաշտամունքի առարկա սբերաձան եղը։

471. Մամուլ.— Տես № № 314, 468։

472. Մ. Չերազ.— Աղդային հասարակական գործիչ, գրականագետ

473... Հարձակեցավ.— Մանդումեի խմբագիրը Կ. Փանոսյանը կհասարացի էր. կհասարյան համբավավոր է «Բասարմա» կոչված երշիկով։

474. Չեիրենի Իսեե.— Էսիրենն (Աթրիանապոլիս) հայտնի է իր «քաշելը» կոչված պանիրով։

475. ... կը տանիր.— Պարոնյանը Այվազյանին նմանեցնում է էշին, որը, ըստ հրեական առասպելի, իբր կախարդ Բաղաամին կռնակին առած տանում էր, հանկարծ տեսնում է հրեշտակին, խրտչում է, պառին է քաշում և վիրավորում է իր սերոջ սաբը։

476. Այվազը.— Տես № 468։

477. Մեկենաս.— Հարձակում հռոմայեցի, որ հովանավորից զրկանքներ կրելուց ու արվեստը։

478. Աբեզյան Մամուլ —, Տես № 417։

479. Բազաս.— Հռոմայեցիների դիմում և աբբեցդության աստվածը։

480. Մարփեոս.— Ըստ դիցաբանության՝ քեռ աստվածը։

481. Պիտի աճցուն ինգի.— Այվազյանին նմանեցնելով էշի ակնարկում է հետեվյալ առակը.— էշը երբ կռնակին առած մի բեռ ալուրգ Լբից անցնում է, պատրում է Լբի մեջ, այն հուսով, որ բեռը պիտի քեքենա, ինչպես որ մի այլ անգամ ադով բեռնավորված Լբի մեջ ընկնելիս՝ բեռը քեքենալը էր։ Բայց այս անգամ հաշիվը սխալ դուրս եկավ, բեռն ավելի ծանրացավ, չկարողացավ բարձրանալ և խեղդվեց։

482. Մեղու, 1873, դեկտեմբեր 16։

483. Ամբոսիոս վարդ.— Տես № 389։

484. Հայրիկ.— (Մկրտիչ եպիսկոպոս Խրիմյան), այդ թվին պատրիարք Կ. Պոլսում։

485. *Մեղու, 1872, նոյ. 11։*

486. ... Գլխո սերո.— *Սոսրագրյալներս բոլոր հյուսիսային ազգերից մեծ՝ հայերի ազգային վարչության կրոնական և քաղաքական ժողովների անարդ, աստր, սինլրսը, անպետր, կուլր, խուլ և համր անդամները, երեսի վրա ընկած աղաչում ենք ձեր բարձր սրբազնության, որպեսզի կամենա գիշանիլ և ընդունիլ մեր նամաստության հրավերը և գալ պատրիարքարան մեր ատրության ժողովին, ուր ձերդ բարձր սրբազնության ներկայությունը կարևոր համարեցինք մի քանի տեղեկությունների համար։*

Այս խոնարհ գրությամբ հայտնում ենք, թե ձեզ համար պատրաստել ենք տեղ մեր ժողովում՝ մեր գլխի վրա։

487. ... Հրաժարյալ.— *(Տունս) կին բերի, հրաժարվում եմ։*

488. *Մեղու, 1872, նոյ. 18։*

489. Եպիչերի.— *Այսպես էր կոչվում սուլթանի այն պահակազորքը, որը կազմված էր անպատրաստ քրիստոնյա երեխաներից։ Սրանց քոնութիւնն ու իշխանութիւնն անսահման էր, նույնիսկ սուլթաններ գահընկեց ընելու և գահ բարձրացնելու ասպետան։ Սուլթան Մահմուտ Բ-ը 1826 թ. սրանց բոլորին կոտորել տվեց Գալսի հրապարակներից մեկում։*

490. *Մեղու, 1872, նոյ. 22։*

491. Ո՛միզդ. Աւհմճ.— *Բան հին Պարսկական կրոնական հավատալիքի՝ Որմիզդը՝ բարու աղբյուրն էր, իսկ Աբրիմը՝ չարն։*

492. Գոզլես Իմճ.— *Տես № 149։*

493. Թիեր.— *Տես № 286։*

494. Հովհաննես Կարդ.— *(Դրամախնամակիրջի), X դարու հայ պատմիչ։*

495. *Մեղու, 1872, նոյ. 4։*

496. Լուս.— *Տես № 192։*

497. կը բառնամ իմ դեմ.. և ...— *Այս և նախորդ հատվածով ծաղրվում է հիշյալ Գ. Թաքուլի գրության անիմաստ ոճը։*

498 Ռասիճաճ.— *Տես № 51։*

499. ...; չէր ուզած.— *Ծաղրվում է Օտազի անիմաստ ոճը։*

500. Ապտակող.— *Տես № 199։*

501. *Թատրոն, 1875, օգոստոս 16։*

502. *Թատրոն, 1875, նոյ. 8։*

503. Թատրոն, 1875, նոյ. 22։

504. Նարդոգոնոսոր.— Խալուպական քաղաքը (VI դարում մեր թվակա-նութեյունից առաջ)։

505. Թատրոն.— «Թատրոն տղայոց» անունով մի ամսագիր ևս հը-րատարակեց Պարոնյանը 1877 թվին։

506. Թատրոն, 1876, փետրվար 19։

507. Պոռոտախիկ ավազան. Բան ավետարանական առասպելի՝ այս ավազանը մտնող բոլոր անդամալուծներն ու ախտավորները բժշկված էին դուրս գալիս։

508. Վենապեհին չվերա-գրենք.— Համառոտն ամփոփում է սուլթան Ազիզին։

509. Թատրոն, 1876, մայիս 29։

510. Հրեշտակաեաս.— Տես № 475։

511. Կենդանի աստվածա-կիր.— Տես № 338։

512. Ժյուլ Սիմոն.— Փիլիսոփա, ֆրանսական լուսավորության մենեխտը (1814—1896)։

513. Գեր ի վեռ անցած եմ։ Տես № 338։

514. Ցուցնելու համար.— Տես էջ 204։

515. Թատրոն, 1876, հուլիս 24։

516... Գալղար.— Ընկնող հերոսը գետնից կը բարձրանար

517. Չամմաճըլար.— Գոլթը շուկանեղից մեկը, ուր դանվում են մեծ մասամբ զրահանութենները ու տպարանները։

518. Թատրոն, 1876, սեպ. 29։

519. Նուրյան.— Հասարակական գործիչ, երկար ժամանակ քաղա-քական ժողովի ատենապետ (1839—1900)։

520. Նոր դար.— Օրաթերթ, կ. Պոլիս (1874—1879)։ Խմբ. Օգսեն Յոճաասլյան։

521. Թատրոն, 1876, նոյ. 13։

522. Աբգարյան Աբարտյան. Տես № 415։

523... Աև ի կենդինարն.— Բամբակը հանգարտ վիճակի մեջ է գտնվում, Ի-վրթռելից հատած անննպատ լուրերի պատճառով, հետևաբար այս շաբթու մէյմը 1300 հակ վաճառվեց, ցենտները՝ 390 գնով։

524. Չերազ.— Տես № 472. թե ինչ կապակցությամբ է Չերազն այստեղ հիշատակվում՝ անհայտ է։

525. Պիցաբանուրյան մեջ. — Քան հին դիցաբանուրյան Արշալույսն առավոտյան աստվածուհին էր, որի պարտականուրյունն էր առավոտները բանալ արեգելքի դռները արեգակի առջև։

526. — Թատրոն, 1877, ապրիլ 9։

527... Ձաստկել.— Զգիտեմ, այս միայն գիտեմ, որ (ոչինչ չգիտեմ), չեմ կարող ուտել։

528... Ի օրջագյից.— Ինձ թվում է, թե անհամ, ըղձանելուց մեզ հատած Քուլլ ոչխարների պատճառով։

529. Քան Հմաց իմց.— Գարուն, ես քաղմատեսակ ճաշակ ունիմ, բայց այս լեղուն իմ քիմքին չի համապատասխանում։

530... Ա՞յսչ առնես դու — Վայ ինձ,վայ ինձ, դու ծաղրում ես երկնքի արեգակից 37 տարեկան ազջկան (տես №525), որը ձեր բոլորիցդ առաջ բացեց մամուլի դռները և լուսավորեց հայերին, որոնք խավարումն էին։ Ծաղրում ես դու...

531. ...ինչա Արշալուսա.— Մրմնե ես Թատրոնի մատռվակն եմ. ոհ, այլևս չեմ կարող դիմանալ սրա բերնից ելած խոսքերին... ինձ մատռվակ համարել... դրանք անկլանելի են Հոլլունդի դեղամասերի նման, որոնց հայտարարուրյունը այլ ես չի երևում Արշալույսի էջերում։

532. ... չամաչես դուն.— Ինչ ես ասում, ինչ ես խոսում... ինչ եմ ասում քեզ, և ինչ ես պատասխանում և ասում ինձ. չեմ ամաչում։

533... Ընդ փայտուին.— Աֆիոնն էլ փայտուի հետ հանգարտ է։

534... Առնտրականի իմո.— Ով այժմ հարձակվում ես իմ առևտրականի (քաժին) վրա։

535...իմնջ Արշալուսո.— Ինձ թվում է՝ քե նա անհամ է Արշալուսի մեջ հրատարակված բոզոտնած լուրերի պատճառով։

536. — Թատրոն, 1877, ապրիլ 13։

537...Ի Ցդգեմ Մանգումեի. — Համբերական նկարագրուրյունների այս ամբողջ պարտիան նուիրուրյամբ, բառերի ընտիր փոփոխուրյամբ միասին, փոխագրված է «Ազգ. Հոլլեռնդ մեջ (Տես հատոր Գ-րդ, էջ 80—82)։

538. Մատա. — Տես № 421։

539. Արշալույս.— Տես № 525։

540. Հնիհատոս.— Տես № 227։

541. Արամազդ. — Հայկական անունն է հունական Զևսի։ Աստվածների հայրը։

542. Միլլես.— Համերոսի «Իլիականի հերոսը—քաղաքյան մաքմնացուածը։

543. Մեղու, 1872, նոյ. 4։

544. Նոր դար.— Տես № 520։

545. Մասիս. – Տես № 50։

546. Եվիար.— Տես № 1։

547. Քրիստաուր.— Տես № 32։

548. Օճախ.— Տես № 30։

549. Թատրոն, 1877, մայիս 18։

550. Փոմի իոճ խսճ.— Պոլսի Եվրոպական ցամաքամասի վրա է գտնվում այստեղ է բոլսան։

551. Ղալաթիա.— Ներսական ցամաքամասի վրա մի քաղ՝ ուր գլխաւոր են բանվոնները և առևտրական խոշոր հիմնարկները։

552. Թատրոն, 1875, սեպտ. 27։

553. Թատրոն, 1875, հոկտ, 18։

554. Կյուրքնեպեկ.— (Գուտենբերգ). տպագրության գյուտարարը (1397—1468)։

555. Թատրոն, 1876, հոկտ 9։

556. Թատրոն, 1875, սեպտ. 20։

557. Թատրոն, 1875, հոկտ. 18։

558. Եվի ճամի.— Պոլսի շուկաներից մեկը՝ Եվրոպական ցամաքամասի վրա։

559. Թատրոն, 1876, մայիս 28։

560. Շեհրէքի խայրիե.— Նավայի ընկերության անուն։

561. Խաս գյուղ.— Տես № 8։

562. Թոփ ճաճե.— Տես № 171։

563. Թատրոն, 1876. հունիս 26։

564. Թատրոն, 1877, փետր 12։

565. Չերիճճե.— Նշանավոր է դժվար, անասելի իսկ գարատապրնեների մայրաքաղաքն էր Չինաստանի, Բուսաստանի։

566. Թատրոն, 1877, փետր. 12։

567. Գասիրեթ.— Տես 177։

568. Մուլթան համամ.— Գոլսի թաղերից մեկը՝ հվրոպական ցամաքամասի վրա։

569. Թատրոն, 1877, ապրիլ 27։

570. Ժամանակագրություն Երևելի անցից.— Այս վերնագրով մի հատված տպագրված է Ա-ի հատորում (էջ 254)։

571. Ապակեգործություն.— Տես էջ 442։

572. ... չտվիլենք ի վեր.— Տես № № 131, 372։

573. Օսմանեան թատրոն.— Կեանքի փաշա Թաղում՝ Հ. Վարդովյանի հիմնած թատրոնն այս անունով ևս կոչվում էր (տես № 85)։

574. Մեղու, 1872 դեկտ. 16։

575. Նի՛ոդոս մարգարե.— Տես № № 265, 359։

576. Թատրոն, 1877, ապրիլ 27։

577. ...ուղղությենեն.— Իմիրի առաջնորդ եղեսյան եպիսկոպոսի և տեղի հայ հասարակության մեջ ծագած վեճերը սը հայտնի են ի՛միմ. խնդիրը անունով, երկար ժամանակ զբաղեցրել է արևմտահայ հասարակական կարծիքը։ Այս խնդրին մեջ մեծ մասնակցություն ունի տեղի հարուստ վաճառական Սպարթևյանը։ Այս խնդիրը շատ է գրգռել և Պարոնյանին (տես հատ. 9-րդ, էջ 91, 100, 108, 115, 126. հատ. 8-րդ էջ 122)։

578... Միևնույնը կլինենք.— Պարոնյանի գրական կարծիքը Սիմոն Ջևդեկյանի մասին (տես հատ. Գ-րդ էջ 239), իսկ բացասականը Բրիստոսատուր Ղազարոսյանի մասին է (հատ. Գ-րդ էջ 156. սույն հատորում № № 32, 221, 391, 440), որոշ է երևում էլ գրոցնների անօրենները են։ Ուրեմն «անօրենը» Ջևդեկյանն է, իսկ «անօրենը»՝ Բրիստոսատուրը։

579. Թատրոն, 1875, օգոստոս 2։

580. Ռուսինյանի մտրուը.— Բացի «Նանոնագիրից» (տես № 51, 498) Ռուսինյանը գրել է հայոց լեզվի և մի այլանդակ քերականություն, որը չընդունվեց դպրոցներում։

581. Խավյար խան.— Տես № 71

591. Զալարիո Ալի օճախ.— Տես № № 30, 68, 280, 395, 410, 548։

585. Կաթողիկոս է եղեր.— Ակնարկում է Ամիամարա Նաչատուր Քաթողիկոսին (տես № № 40, 69, 105, 379)։

584. Սովուդ.— Իսրայելի թագավորներից մեկը։

585. Վանցի Պողոս.— (Վարդապետ), տես № № 106, 377։

586. Ապտակող.— Տես № 199, 500։

587. Թատրոն, 1875, օգոստ. 23։

588. Ար մի առագաստիկ առնե.— Այս մասին «Հայքի»ածքներում հետևյալն է գրված «Օտագիր» անցյալ շաբթու ըսած էր, որ Լեթ 250 ռակի ունենար և անով արագասլիկ մը ծախու առներ, յուր Թերթը Փաշոսյանի մեծաւթյամբ առաք քաղաքի պիտի կրնա ծախել» (հատ. 9-րդ.էջ 17)։

589. Ձվեցաբեր.— Բողոքական հայերի պաշտոնական օրգանը, Կ. Գոլիս (1855 թ.)։

590. Լույս.— Տես № 192.

591. Առամյանց.— Հայոնի ձուլիչ, տպարանատեր, հայկական տառերի մեջ մտցրեց որոշ ձևափոխություն. Առամյան տառեր։

592. Հայրենիք.— Տես № № 305, 373, 460։

593. Իզմիրլյան.— № № 223, 390, 427։

594. Եղեայան.— Տես № 577։

595. Ռուսինյան.— Տես № 580։

596. Չեռազ.— Տես № № 472, 524։ Չերազը պնդում էր, որ բոլոր գոյականների սեռական հոլովները պետք է կազմվին ի ոտառով։

597. Թատրոն, 1865, սեպտեմբեր 6։

598. Թաֆխիմ.— Թաղամաս՝ եվրոպական ցամաքամասում։

599. ,,. Փունջիկ.— Նախորդ ռուանավորում նաւն մխրճն այսպես էք արտահայտած,—

Փունջիկին երազում լինչ կը տեսնեմ,
Թե վարվան թերթին լինչ այուս ընեմ,
Ասես երազում լինչ կը տեսնեմ,
Ե՞րբ Հայամավուրքյան հոգվածներ գրեմ։

600. Թատրոն, 1875, սեպտեմբեր 20։

601. Թաթավյա.— Գոլոի քաղքից մեկը եվրոպական ցամաքամասի վրա։

602. Կալաթա Սեռայ.— Բերայի եզերքը շուկայի մի մասը։

603. Աբտարակ Բաբելոնյան.— Հառնակություն, անհամակցողություն։

604. Թատրոն, 1875, սեպտեմբեր 27։

605. Եղիազարճ ու չուխաճիկ.— Կազմված է ազգային և աղվեսի հայոնի առակի հետևողությամբ. բայց թե ամ է վերաբերում անհարկությունը՝ անհայտ է։

606. Թատրոն, 1875, սեպտեմբեր 20։

607. Բարայեան առակ.— *Այս աշխատանքան ստանձնումէն հիշատակված կենդանիներէն առաջինը՝ Ներսես պատրիարք Վարժապետյանն է, ինչպես որ «Միծաղ»ում (հատ. V-րդ) ևս որպես առյուծ հանդես եկած թռչուններէն արծվին՝ Մկրտիչ Եպիսկոպոս Տերեանն է. որը Վարագա վանքում իր հրատարակած «Արծվի Վասպուրական» թերթի կապակցութեամբ, ինչպես ուրիշներից՝ նուիրական և հաճախ Գարեգինյանից ներկայացվել է իբրև արծիվ. (հմմտ. հատոր Զ-րդ էջ 239, հատ. VII-րդ էջ 131). Մյուս կենդանիներն ու թռչունները անշուշտ ներկայացնում են Գոլոս օրոշ կղերականներին, որոնց ինքնութիւնը սակայն անհայտ է։*

608. Քեհիճ Դեսպետ.— *Նշանակում է կրոնապետ, գերագ է հասկնալ հքոնական ժողովի ատենապետ։*

609. *Թաւրէն, 1876, դեկտեմբեր 25։*

610. Ջալամ.— *Հ. Գարեգինեան կեղծ ստորագրութիւնը։*

611. Ռուսինեան.— *Տես № № 580, 595։*

612. Նարպեյ.— *Տես № № 386, 414, 424։*

613. Հայր Առսեն.— *Տես № 11։ Այստեղ Գարեգինեան ակնարկում է Արսեն Բագրատունու զրաբար լեզուով գրած «Հայկ Դյուցազն» էպոսը։*

614. Վարչութիւն.— *Տես № № 219, 382։*

615. Բասաղյան.— *Անհայտ։*

616. Ապակերոնցագործութիւն.— *Տես էջ 442, № 571։*

617. Եղեյան.— *Տես № № 577, 594։*

ԲԱՌԱՐԱՆ

Ա.

Ալաուրմա—սառնական, ասխական
Ալածռանկա—եվրոպական
Ալբենի յայիւեն—վերնբերդ գրասենյակ
Անսյիպ—գործանատի. տերօրինակ
Անապա—արդյոք
Ամի—բարեկամ
Անկարիա—անվարձ աշխատող
Անիրիթ սչոմ—աչքն առանց թաքնելու
Ասր-գար—
Ատրպխ միջնադք
Ատպանի—բայլպան
Ատբելո—ապրնցած
Ատզրնալ ըլնել—գիմում տալ
Ատրքս—դեհ, ուրեմն, այլևս
Ախիճ—գործողություն, փոխառություն տոմս
Աչ ընել—նեբնել

Բ.

Բաբալ—տերաեր
Բաբանճ—հողաթափ, (չուստ)
Բաբոր—աղմուկ, իրարանցում
Բանքալոն չալվար
Բանկալ—մոմ ծախելու տեղ (եկեղեցում)
Բաչս—սրունք (շալվարի սրունք)
Բառդ-բառըլ—փայլուն
Բասըրմա—ապուխտ
Բաւ—փաթա, փող
Բաւախլըղ—բազրիք
Բաւալը—կաղրով (գինուկ)
Բենկե—վարդապետ
Բեւ—եգերք
Բեռի—գեվ, սատանա
Բեռւմա—կնդծ մազ
Բեմ—շատ
Բիանգո—վիճակախաղ
Բիացա—արժեք
Բիլին—վաճառկ
Բյուսյալ—ծոզ (գլխաբկեր)
Բոլա—եվրոպական պարի տեսակ
Բուրբուպապուճ—ճամպարանք
Բրենս—իշխան
Բուլ—մարգա
Բռեծա—թղթախաղի տեսակ
Բրի Ֆիս—վերջին գին
Բոզբոռլ—արձանագրություն

Գ.

Դրեխ—կլիմա

Դ.

Դեամ—ծանրության նվազադույն չափ

Ջ.

Ջաներ—ի հարկե, անշուշտ, բանէ չ քե
Ջասլրիե—ոսմիկան
Ջավալը—խնդիր
Ջավզավար—կանաչեղեն
Ջենապ—արհեստ
Ջերե—որովհետև

Է.

Էմանեթ—ավանդ

Ը.

Ընծեցնալ—առողջանալ
Ըստ կարի—կարողության չափով

Ժ.

Ժախլախ—գլուխ կոնծի
Ժախրը—քնջուք
Ժանչի—վոգհարություն
Ժարաժ—կողմ
Ժելաւ—մոմառաք
Ժեմնենա—բարեկեցուկ ձև
Ժենթե—աբևից պաշտպանվելու վարագույրը
Ժեննիւե—կաթսա (կերակուր եփելու)
Ժեվեհիլլի—մխամիտ
Ժերիպ—սովորություն, կանոն
Ժեռս—հակառակ
Ժեւնե—տաշտ
Ժրնել—տունկել
Ժոդաժ տաբօրինակ
Ժոհաժենի—պերճանքի առարկաներ վաճառող
Ժուրկալ—սոսինձ
Ժուլում—տիկ
Ժուլումպաճի—հրշեջ
Ժուրպ—բոդկ

Ի.

Ի գիլ—գլորվելով
Իլաճ—դեղ
Իլամ—գաղտնիքս
Իլավե—գրպարտություն, հավելված
Իլմուհապաե—պարտամուրհակ, մեռելիկական
Իխթիպար վստահություն
Ինճե սազ—քրքջալան նուրբ հնչակ երաժշտություն
Իօտե—ահա
Իքթիճաճ—լուծողական
Իօտոճի—վարպետ
Իտարե Ֆիթիլի—ճրագի պատթույլ

Լ.

Լախրդը—գրույց
Լասթիկ—կալոշ
Լեճե—բիծ, արատ
Լոհում—լոհում (քաղցրեղեն)

Խ.

Խարու—դուռ
Խաբուլ ընել—համաձայնվել, քնդունել
Խագրխ—ցից
Խաբր—որպիսություն
Խալբախ—կրծնամորի գործակ
Խալսիլ—ազատվել, զորքը վերջացնել
Խամսյուր—կուզ
Խայխանի—մանուկ լավոր
Խայրլը—բարի
Խայլ—հավան լինել
Խաճ—բանվանասեայ, պահեստի
Խաճար—հշիռ
Խապահար—հանցանք
Խասըմ—մարտ ամիս
Խավես—վանդակ
Խել մը խոմեր—մի շարք խոսքեր
Խմպլ—հասարակ, դեհնիկ
Խրխճի—կոտրվածք կապող
Խշշլզլ—դյուրանյութ (հետաքրքրվելիք բաներին)
Խիյաճեք—ապերախտ
Խլավուզ—ճանապարհ ցույց տվող մինոթոր

Խոբճա—կրունկ (կոշիկի)
Խոյթուխ—թևի տակ (անուրթ)
Խոլյամիշ ըշել—դարձան մտնել, հեռանալ

Խուրի—տուփ
Խուլը—կանթ, կոթ
Խումաշ—կերպաս
Խպճել—ամաչել
Խախանմիշ ըլլալ—նախանձել

Ծ.

Ծեխծեխուճ—կոտրտուճ

Կ.

Կազ — նավթ
Կապտել — թալանել
Կելիճ — հարս
Կեռնիլլի — կամավոր
Կուսակալ — նահանգապետ

Հ.

Հարտա — մինչդեռ, չնայած
Հախ — իրավունք
Հախ ու ճանախ — իրավ-անիրավ
Համար — դաս, դիր
Համարակալ — հաշվապահ
Հաշ — դնդանատ
Հավտախ — լուր
Հավու — խավիլ, (ցամքոց)
Հելպերթե — ի հարկե
Հեմ ալ — և քե
Հեմեն — իսկույն
Հոզր կուզա — հաճելի կլինի

Ղ.

Ղաձի — դատավոր

Մ.

Մազպաթա — հանրագրություն
Մախպուլ — հարգի
Մախսուս — դիտմամբ
Մաշալլահ — կեցցես
Մաշխա — պլաշէ
Մահանա — պատրվակ
Մաղազա — խանութ, վաճառատուն
Մավի — կապույտ
Մեք ըցել — ժամին խոսել, ղռվիլ
Մենյուր — հնրք
Մեննիսին — աթոռի դրամ (1 ռ. 60 կ.)
Մյուզերեի — հաճախորդ
Մեյտան — հրապարակ
Մեռամ — վիշտ, հոգս
Միգներ — քղխախոզի տեսակ, քշվառ
Միսեթիր — հյուր
Մոպիլիզասիոն — զորահավաք
Մոճեռնա — սիրելիս

Մոսիպրա — դերձակուհի
Մունալլեպի — կաթնեգներ (կերբակուր)
Մուպաշիր — կարգադրիչ
Մուսաբան — քանգաբան
Մուհավա — իսուվաքար
Մախալ — չափ (ծանրության)

Ջ.

Ջախա — օձիք
Ջամա — կարկատան
Ջանդիմիշ — սխալվել
Ջապանճի — օտարականո
Ջաֆթա — հայտարարություն
Ջուհուրնախ — զբոսդ, դեվ

Ն.

Նազարաթ — հանգչերդ
Նասըլ — ինչպես

Շ.

Շախա — կատակ
Շահիվարի — գրական անարժեք բաներ (հոդվածագրություն, պատմվածք)
Շեհիր — քաղաք
Շեհնա — բեմ
Շեօմաճ — դեր
Շիրինկա — կլիզմա

Ո.

Ոսկի — մեկ ոսկին 8 ռ. 64 կ.
Ուլթիմաթում — վերջնագիր
Ուտաք — տոպա (խանութի ծաոայող)

Չ.

Չանթա — պայուսակ
Չարշի — շուկա
Չեյրուկ — քաոորդ
Չինկյանե — գնչու, ցիկան
Չիրիճ — տգեղ
Չիրոզ — չորացրած ձուկ
Չինքե — ածաչի

Ձյունի—որովհետև
Ձյուրիկ—կեղծ, փոսած
Ձոճուխ—երեխա

Ղ.

Ղազի—երբեմն
Ղաիսալ—նեպարավաճառ
Ղաղտաշ բրած նսեիլ—ծալապատիկ նստել
Ղանգա—թղթախաղի տեսակ
Ղաշխղոզում—անկանոն զորք
Ղաշխիշ—նվեր
Ղասթռև—զավազան
Ղարի—գոնե
Ղարիբ—անցած, հին
Ղելա—պատիժ, պատուհաս
Ղեյուզյուր ընել—տաղտկացնել
Ղեյնի բավասի—տաղտկած ուղեղ
Ղեյնամազ—անհանգստացող
Ղենզ—գուլպ
Ղիբ բազար—հին հագուստների չուկա
Ղիլերնի—տոմսավաճառ
Ղիրսենպիրե—մեկին ի մեկ, հանկարծ
Ղիւրիննիկ—մեկհատիկ
Ղոբին—դռնիկ
Ղոնձա—կապոց
Ղոյա—նեղուկ
Ղոնո—մուրհակ
Ղոշպողազ—շատախոս

Չ.

Չախել—հանդիմանել
Չրհանելիր—հրշեջ

Ս.

Սանմի—այսինքն, իբր թե
Սայր—համբերություն
Սարաֆ—դրամափոխ, տեղաշավոք
Սբառմաչեր—մոմի տեսակ
Սելիս—ձիապան
Սեպեպլենմիշ ըլլալ—պառաճառ գտնել,
Սերիո—լուրջ
Սերսեմ—ցնդած
Սըռ—գաղտնիք
Սիվիլիզե—քաղաքակրթված
Սիւս—զարդարանք
Սիւռենեի—ձիապան
Սոլսիս—գռնեպտ
Սուաբե—երեկույթ
Սուճի—ջրկիր
Սուիտյա—ոսպրե
Սպրջանալ—զղջալ
Սրտճա—հիվանդության տեսակ

Վ.

Վաեկա—վաստին
Վարպես երթալ—արհեստ սովորել
Վարտա—ճամբա ավելք
Վիզիթա—այցելություն
Վինուս—մարմին
Վիսթ—թղթախաղի տեսակ

Տ.

Տալմիշ ըլլալ—անձնատուր լինել
Տալղունություն—մտազբաղություն
Տաղ—երգ
Տարոս—բախտ
Տելի—գլիժ
Տելիխանչի—երիտասարդ
Տյոնյում—չափ (երկարության)
Տերպեսեր—թափառական, մոլորական, անանուխ
Տոլաճորճի—խարեբա
Տոնճուրմա—պաղպաղակ
Տուտու—ծխելին

Ր.

Ւեզգալեք զազեքասը—հայտառակ քեզ

Ւենկ—գուլպ

Փ.

Փախցնել—խեղթեցնել
Փաճաս—գեղ, գաւառ (ամենամեծ)

Ք.

Քարթաճ—նավապետ
Քալեմ—գրիչ
Քաշեր ճաշալը—պանիրի գլուխ
Քայմե—թղթադրամ
Քասա—դրամարկղ
Քասապ—մաագրթ
Քավազ—դռնապան
Քաւիլ—հովոսպական պարկ առանձ
Քեհրիպար—սաթ
Քեշ—պղանդ
Քերլեճ-պաճարլի—ծուռ սաքով
Քյարիպ—դրացիը
Քյասե—աման, պատիւ
Քյոր—կուրը
Քյոսեէ—կաշի (պատոգ)
Քյաւլահ—գլխարկ (քրդական)
Քամիսրոճ—մի չնորդնէը
Քոնդրաս—պայմանագիր
Քոնսոլիս—պարտաւորում
Քորթե—սիրեկան
Քոֆոզ—հպատակ, ղիջ
Քուզում—գառն, սիրելիս

Օ.

Օխա—ծանրութեան չափ
Օղլաճ—տղա, մանչ
Օդուսմիշ լլլալ—զբաղվել
Օտապաշի—անհեկապետ

Ջ.

Ջայիզ—տուրս
Ջասլ րնել—բամբասել
Ջեներ—լապտեր
Ջես—գլխարկ (տաճկական)
Ջիսանե—շրջագգեստ
Ջրչա—խոզանակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Ձեռնին վիճակը 7
Մենք Թիկարն ալ ապրեցանք է եղեր 8
Գործ չը մնաց ալ 11
Հինքրին վիճակը 13
Թոհաֆեի բժիշկը 14
600 Ռուբլի խնդիրը 16
Հաբյուրին Տասը 18
Երկու վարդապետներու տեսակցությունը 19
Բաբլոնի մեջ եղած հանդրդռության մեջ Թիկարին հանդրդռությունը 20
Մեկ մլիճն ցավերու դեղ 22
Տատ... Տատ... Տատիս... 24
Զըլլա որ կաղ գործածենք 26
Կեսիկ Բաշայի եկեղեցին 27
Քաղաքականության և օղին 29
Նոր Քրնել մ'ալ 30
Անխոթապիը էշեր 31
Ալեքինացը, անուանի ու Թիկարը 33
Ծոսակցությունը լուսնի վրա 35
Գաղրիաբքցու մը 36
Թատերական ագռ մը 37
Գաղաք ունցդոնները հարդիվու են 38
Եմբաղիրներու մոժռունքը 39
Թիկարին հետ 41
Ջահիտական Քերթի մը վճռանքը 43
Ագռ. Էքսպեդիտական ժողովը 45
Կանոնավորներուն անկանոնությունը 47
Թիկարն Վ...ին հետ 49
Անխոթապիը էշնը 51
Մանր լուրեր 52
Հոգամտություն 57
Ինդրոց մեռյալն ի տեսլյանն մեզուկ 59
Հելվաճիին լապտերը 61
Գեուշակությունք մոտալեց 64

Բերինների ծանուցումը 65
Աղջկանց պահվըտելը 66
Հանպատրաստից մը 66
Կանայք և արձրև 67
Գործքով բարոյական 98
Գործակ խոսակցութիւն մը 69
Անխորագիր էջեր 70
Քանի մը խնդրոց լուծումը 73
Անխորագիր էջեր 74
Խոսակցութիւն կանանց մէջ 76
Քաղաքավարութիւն 77
Աղջիկ տես մը 79
Փչել բաղին առումները 81
Շահին չվատեփած մը Ջոցին ծախանն կը վատկին 82
Գիշերները առանց լապտերի պտըտողները պիտի բռնվին 83
Քաղաքական 84
Նեբբին լուրեր 86
Շաքարն ու ժողովը 87
Ակնավաճառներ. կնիկներուն զգուշացնէ 89
Թաղեռա ազային ջուրերը երթալը 89
(Մանավոր թղթակցութիւնք Թատրոնի) 91
Նամակ առաջին 97
Կանայք ծովու բաղնիքին մէջ 100
Պատերազմական 101
Անխորագիր էջեր 102
Առևտրական 103
Ծեղ սրբահար մը 105
Սարաֆ Բարպին գնպերը 106
Անխորագիր էջեր 107
Իրավունքը կանխիկ չառնող խաղավաղը վերջին բացը կը մնա 109
Թաղումի սակաւութիւն 111
Ընկերութիւն մը տեսուչը 112
Աղջկանց համար ծանուցում 114
Զուգախ մը կրակին վրա կախ մը 115
Համարակիներուն պատմութիւնը 119
Վարչական մեբենա 122
Երկաթի տեղ թել 125
Թրնեբու կաշին 126
Մինասյանց առեղտրանութիւնը 128
Այմանեայի փոթորիկը Իսլիմյային բռդալ 129
Շնորհավոր նոր փոքձառը և բարի համբերութիւն 131
Կայանդային ծանուցում մը 132
Նոր աղդաբարութիւն մը 132

Կեղծիքն զգուշացիք 132
Հերեսկովինի վրա օտար լեզուաց անհասկանալի կարծիքը 134
Թագաւորություն ամենեցուն 135
Կախ 135
Հասկացամմմմատաաանք 138
Կովկասյան խնդիրը 138
Քաղաքական 141
Անխորագիր էջեր 142
Մեկզի բաշվե, ընթերցող 143
Անխորագիր էջեր 144
Ճանապարհորդություն խմբագրից 162
Եկուր, սա սիկառա վառեմ 162
Անխորագիր էջեր 163
Մարդ մարդու հալը չէյտե կես գիշերվան ժամ կը կանչէ 205
Անխորագիր էջեր 206
Ընթերցվածս ի Նիկողոս մարգարեէ 224
Լուսցրի գրասենյակին մեջ 225
Ջարն ու ծառը 226
Պատերազմական 229
Անխորագիր էջեր 230
Հեռագրությունք 231
Վերջին լուրեր 232
Անխորագիր էջեր 233
Նոր տարի 236
Կեղծիքն զգուշանալու է 238
Զըլյա որ խենդնոր 241
Քաղ. ժողովին վիճակը հարցապնդումին ետքը 243
Ազդային անուսուին անձնական տկարությունը 244
Պարզեվարձախոսյուն 246
Մայր սխտին իւղավունքները 246
Իջմիածնա իրավունքը օձախին շանը 247
Թե քահանայք ուր գնովյու են 248
Սամսթիա կռիվը 251
Քուժ Քաբալի գոլոսի Թագականը 253
Քարակեմյանի կռիվը 253
Վասպուրական ընկերության հայածվիլն 255
Մենձլիկնը մեռ ձնծվեցանք 256
Անուանյանց մեծամասնությունը էնփիեձյանց բարկությունը 256
Թուրն եպիսկոպոսի հարցմունքը 258
Թագականի մը հաշիվը կամ հաշվո մը Թագականը 260
Ամենական դատ մը և անոր պաշտպանը 262
Տարագրած 262
Քահանայապետ ընտրվեցավ 263

Պատրիարքարանին դրած հնարագիրները ինչով զացին 264
Իրիկը ամիս ադոթք 265
Ճանապարհ բարի 266
Հոհմանությունը համբերության է, թե համբերությունը հոհմանության 267
Անոր ալիք եմ ալ կուգամ 268
Աղջային անասուն 269
Աստուց փուշի վարդ չբլլար 270
Գնդոյի մը պատմյոր 271
Վարժապետներու ապագան 273
Դռնին դուրս եղնելն արգիլյալ է 275
Ջուրս մը պղտորիր 277
Սամաթիա Թադեանները 278
Ատենաբանություն Մեղուի առ սամաթիացիս 279
Վարժապետներուն ծնծ 280
Պաշտոնական ծանուցում Թատրոնի 282
Նամակնակի 283
Մեղուի բարկությունը 284
Ընդհանուր ժողով Մեղուի—Նկատ առաջին է Ճամլը կան 286
Ամիս մը չպիտի խոսիս 288
Բանասիրական տրամախոսության էշն ու այվազը 289
Մխայմունք 292
Ընտակցության մեռելոց Օրագիր Հայրենիք 293
Ծմբաշիրն Մեղուի առ տերն Մեղուի 295
Լրագրական դիցաբանության ապիսը 296
Կոնդակին խորհուրդը 298
Կոնդակին խնդիրը 300
Կրոնական ժողովին խաուրյունը 302
Հերիք խնդացի 304
Մասխի ուղիղը 306
Ապտակը 308
Մասխս մեղքը քավեց 310
Մասխս դարձյալ սահմանին դուրս 311
Փունջին բանկամությունը 312
Գրաահնչյան ու կարծիքը 315
Ներքաշնակությունը ավրվեցա՞վ 316
Ախանաին է որ կը խոսի 318
Ծմրագիրն է որ կը խոսի 319
Նկատելով որ 321
Զվարճալիք 321
Ծամ մը արշալույսին 323
Ճախատամաբատ Օրագրու ընդդեմ Մանդամնի 326
Ընտակցության Նոր-Դար, Մասխ 328
Դրամական 329
Դրամական պատյար մը 329

Դրամական 331
Ամենեն ազնիւ գրաման ալրն է 332
Մեկ միլիոնի առաջարկութիւն 333
Թղամվելի անօրենութիւնները 336
Տեսնողին մեծ վարձատրութիւն 337
Օգտակար գիտելիք 338
Թիկարին երազանքը 340
Ժամանակագրութիւնք եղելի անցից 341
Առածներու բացատրութիւնները 343
Հարցական առակ 351
Իմ քանասեղծութիւնս 354
Ծանօթութիւններ 357
Բառարան 391

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Պատ. խմբագիր՝ պրոֆ. Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆ
Տեխն. խմբագիր՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ/Ճ 02273. Պատվեր № 610, տիրաժ 4000, տպ. 25, մ.
Հանձ. 22 մայ. հանձնված է տպագրության մարտի 2-ին
Ստորագրված է տպագրության 1 ապրիլի 1947 թ.

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և
Հրատ. վարչության № 1 տպարան. Երևան
Լենինի № 65, 1947 թ.

(2n 204)

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0638621

Ума
2405